42

Ltn
1911

1999

2000

Типография МАСТЕРСКАЯ
А. Шеръ-Аракеліанцъ

ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ

ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀ

ԱՃԵԼՈՒԹԵԱՆ

ԳՐԵՑ

ԿԻՒՐԵՂ ՎԱՐԴԱՊԵՏ ՍՐԱՊԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐՔԵԼԵԱՆ ՓՈՂՈՑ, Տ. 1|2
1886

Дозволено цензурою С.-Петербургъ, 5 Іюля 1886 г.

38. 1918 4 1911-60

Типографія И. Мартиросіанца, Орб. у., № 1/2.

Типографская мастерская
И. Мерч-Зракеліанцъ
Կազմարարի արհեստանոց
Թ. ՄԵՐ-ՄՈՒՔՍԵԼԵԱՆՑ

Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

ՆՈԻԷՐ

ԱՒ ՄԵԾԱՊԱՏԻՒ ՍԱՐԳԻՍ ԱՂԱՅ

ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ ՔԻՍՏԵԱՆՑ

ՄԵԾԱՐԵԼԻԴ ԻՄ ՍԱՐԳԻՍ ԱՂԱՅ

Առաջին պատեհի ծանօթութենէս մինչև այսօր տեսնելով Ձեր կեանքն ու գործը և այս խոհական կենցաղավարութեան ու մի շարք օգտակար գործոց արդիւնքէն խելամուտ լինելով Ձեր անվեհեր հոգւոյդ մշտեռանդն ջանասիրութեանը, անձնական կատարեալ արիութեանը, անդուլ ժրաջանութեանը, անվհատ տոկունութեանը, համբերատար ժուժկալութեանը, իմաստուն տնտեսավարութեանը, ուղղակշիռ չափաւորութեանը, աստուածապղեցիկ առատաձեռնութեանը, խելամուտ լինելով՝ կասեմ՝ այս նշաններուն, և աչքի առաջ տեսնելով Ձեր աստուածապարգև զաւակաց խմբակը, կը յորդորուիմ ի սրտէ, որ Ձեր անուանը նուիրեմ ՈՂՋԱՀՈՒԹԻՒՆԸ — ՈՒՂԻՂ ՁԱՆԱՊԱՐՀՆ ԱՃԵԼՈՒԹԵԱՆ.

Յորում՝ Աստուծոյ շնորհացն ապաւինելով՝ ըստ կարի բացատրեցի Հայաստանեայցս սուրբ Եկեղեցւոյ պատուիրած ու սորվեցուցած ողջմտութեան սկզբունքներն ու նպատակը, և նորա արդարացուցած առաքինական վարքն ու բարքը, և հանապազօր ար-

ժանի գործերը, որ միայն հոգեպարար են ճշմարիտ քրիստոնէին՝ այս աշխարհիս սակաւաժամանակեայ հոգևոր կենաց օրերումն, և վարձուց ակնկալութիւն՝ հանդերձեալ աշխարհում:

Արդ կը նուիրեմ Ձեզ, Ձեր սուրբ հայեացքին, որով նշմարել էք, թէ ամենայն մեծաբարոյ բարեբարութիւն և երկնագանձ առատաձեռնութիւն կը յաջողին մարդուն՝ միայն կատարեալ աշխատասիրութեան արդար արդիւնքով ու վաստակով, որուն կը վկայեն Ձեր ժիր ձեռքի հաստատած գործարանները՝ որոնք ի գործ կը հրաւիրեն այն ամեն նորահասներին, որ անգործ կը շրջին վաղոցներում ու հրապարակներում, և որ չեն գիտեր՝ թէ այն պատարկաքայլ և ունայնավաստակ ընթացքը՝ որ գահավէժում պիտի դադարի, թէ այն ապարդիւն կեանքը՝ որպիսի չարատանջ կարօտութեան պիտի մատնուի, թէ այն հպարտութեան հողմատար, սին ու խաբուսիկ հեշտութիւնները՝ որպիսի անվայել բղջախոհութեանց որոգայթներուն կառաջնորդեն, որպիսի ճանկերում ու ճիրաններում պիտի բռնուին, որպիսի ժանիքներում, անագորոյն ժանիքներում պիտի յօշատուին:

Ընդունեցէք այս նուէրը: Եւ ինչպէս գործով, գործարանով և անձնական օրինակով, նոյնպէս և սուրբ Գրոց պարզաբանած այս խրատով, յորդորակով, **ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆՈՎ — ԱՃԵԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ**, թող Ձեր ձեռքով սատարելով՝ հրաւիրուին հայ պատանիները՝ արդար գործի, չափաւոր վաստակի, ճշմարիտ ընկերասիրութեան, առողջարար ու կաղդուրիչ աշխատութեան, երիտասարդական կատարելատիպ արիութեան, տևողութեան, ուժոյ պընդութեան, ուղղախոհ իմաստութեան, իրական պատմութեանց՝ ճշմարիտ հմտութեան, կատարեալ ինքնաճանաչութեան, առաքինի վարուց, հոգևոր կենաց վայելչութեան, ճշմարիտ բարեպաշտութեան, մարմնոյ ողջութեան, հոգւոյ ողջութեան, կատարեալ ողջախոհութեան, ճշմարիտ զարգացման, երկիւղած Աստուածաճանաչութեան, ընտիր հաւատոյ, յուսոյ յարութեան:

Թող Ձեզմով հրաւիրուին հայ ծնողները՝ իրենց զաւակները խնամելու կատարեալ սիրոյ, և կատարեալ լրջմտութեան, որ կրթեն պատանիներին՝ մարդկային կենաց խելամտութեան կատարեալ զգաստութեամբ. անսայթաք յառաջացնեն երիտասարդներին՝ քրիստոնէական կատարեալ ողջախոհութեան անխոտոր շաւիղներում. որով և արժանանան Աստուծոյ օրհնութեանը — բազմասիւն զաւակաց հարստութեամբ, — և հոգեկան պարարտութեամբ, երկնային արքայութեան մարգարիտը գնելու պատրաստական հանապազորդ բարերարութեամբ:

Ընդունեցէք այս նուէրն ի հաճոյս: Աստուած՝ որ աջողութեանց տէր է՝ թող աջողէ Ձեզ հանապազօր գործերում, իւր հրեշտակի պահպանութեամբ պահելով ձեր անձն ու առողջութիւնը՝ ողջախոհութեան ճանապարհներում միշտ անխոտոր և յառաջադէմ:

ԿԻՒՐԵՂ ՎԱՐ. ՍՐԱՊԵԱՆՑ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Մարդկային աճելութիւնն՝ ինչպէս հանապազօրեայ յառաջադիմութիւնն ու անցեալ ժամանակի պատմութիւնները կը ցուցնեն՝ մի բնական օրէնք ունի. և այն բնական օրէնքի պահպանութիւնն ու զգուշութիւնն որչափ ճիշտ լինի, նո՛յնչափ ևս կաճին աշխարհիս երեսին զանազան ազգեր: Եւ այն օրէնքէն խոտորող ազգերն՝ հետզհետէ խոտորման չափովը կը նուազին, և մինչև խսպառ կը պակասին ու անհետ կը վերջանան երկնքի տակ օդ շնչելէ:

Ի նկատի ունենալով այն զգալի նուազումն, որ տեղ տեղ մեր ազգայնոց մէջ յայտնի կերևի, և որ միայն աճելութեան բնական օրինաց ճիշտ պահպանութեան կամ զգուշաւորութեան հակառակ՝ տեղի ունեցած զանցառութեան, և ուղիղ շաւղէն խոտորուած գնացքի հետևանքն է:

Իրքովհիս միջոցաւ մեր ազգին արդի հայրերուն, մայրերուն, և ծնելութեան արբունքի տարիքը մրտնող երիտասարդներուն և կուսաններուն կրնծայենք՝ մարդկային աճելութեան բնական օրէնքը, և նորա ճիշդ պահպանութեան անհրաժեշտ շահերնիը՝ խնդրելով, որ ծնողք ուշադրութիւն դարձնեն իրենց կենացը, և գնացքնին ուղղեն դէպ այն բնական օրինաց անխոտոր շաւիղները, որ մարդկային սերունդն անհետ աճելութեան

կը տանին. մեւնոյն ժամանակ՝ ուշադրութիւն դարձնեն և իրենց զաւակաց գնացքին՝ որ ի մանկութենէ մինչև երիտասարդական կատարեալ արբունքն՝ անխոտոր ընթանան նոյն բնական օրինաց ուղիղ շաւիղներում:

Կը յուսանք, թէ մեր այս խնդիրն հաճոյ կը լինի այն ամեն ծնողաց՝ որ մի անգամ զգացել են, թէ քանի՛ քաղցր է որդւոց կեանքը՝ երբ առոյգ կապրին, ու կաճին, և թէ քանի՛ դառն է՝ երբ հիւանդ կապրին, ու չեն աճիր, և թէ քանի՛ տաժանելի է ծնողաց սրտին՝ տեսնել իրենց որդւոց մահը, տարաժամ մահը: Սրտի այս տաժանելի և դառն ցաւերն առհասարակ՝ յառաջ կուգան աճելութեան բնական օրինաց զանցառութենէն, և նորա ուղիղ ճանապարհին զգալի կամ անզգալի խոտորումներէն, որոնք հետզհետէ սաստկանալով, ընդհանուր անզաւակութիւն կսպառնան, մինչև իսկ բարձումն ազգատոհմի:

Բնական օրինաց շաւիղներում ծնած և աճած զաւակներն՝ այն համը կուտան իրենց ծնողաց քիմքին, ինչ որ դարնան ծաղկած ու ողկուզացած, ամառուայ եփած և աշնան օրերումն բարեխառնած խաղողը՝ իւր այգեպանին: Ընդհակառակն՝ բնական օրինաց զանցառութեամբ ծնած և աճած զաւակներն՝ այն համը կուտան իրենց ծնողաց քիմքին, ինչ որ դարնան ազոխը կամ ամառուայ զկեռը՝ անժուժկալ ճաշակողին: Բնական օրէնքէ դուրս ծնած ու աճած զաւակները կը նմանին այն պտուղներուն, որ ժամանակէ յառաջ որդնակեր կը լինին—կը վիրաւորին,

կամ քամիէ կը զարնուին, կը թառամին, կը զառամին, կը չորանան, և տակաւին չհասունացած կը թափին ու կը փճանան:

Խօսքերնիս միշտ կուղղենք ճշմարիտ քրիստոնեայ եղող հայրերուն ու մայրերուն, և նոցա ուղիղ շաւիղներուն հետևել ցանկացող երիտասարդներուն ու կուսանններուն, որոց եթէ կարելի լինի բոլորական ուշադրութիւն դարձնել **ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ — ՈՒՂԻՂ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ԱՃԵԼՈՒԹԵԱՆ**, կը յուսանք, թէ այսուհետև ևս կաճին իրենց նախնեաց աճեցման չափով, և Աստուծոյ օրհնութիւնը կը ժառանգեն իրենց որդւոց և թոռներու և սերնդոց երամներով:

Կ. Վ. ՍՐԱՊԵԱՆՑ



ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆ

ՈՒՂԻՂ ՁԱՆԱՊԱՐՀ

ԱՃԵԼՈՒԹԵԱՆ

Ա. ԱՇԽԱՐՀԻ ԱՐԱՐԱԾՈՑ ԲՆԱԿԱՆ ԱՃԵԼՈՒԹԻՒՆԸ

Թելահաս լինելով, կը տեսնենք աշխարհիս երեսումն աճեցող բոյսերը, տունկերը և կենդանիները, որ անդադար կաճին անհուն տարիներու և դարերու շրջաններումն, իւրաքանչիւրն իրենց առանձին օրէնքով և շրջանական լուծեան պայմանով։

Այս երեք կարգի աճեցականներն՝ թէև սեռով իրարմէ կը զանազանուին, բայց աճեցական կէտէն նայելով, որ մի հոգին է շարանայ, և փուրէն է մեծնայ, իրարու նմանութիւն մի ունին։ Այս երեք կարգի աճեցականներն՝ իրենց զանազան տեսակներն ունին, որոց ամենքն էլ իրենց յատուկ կեանքն ունին, ոմանք շատ կապրին, և ոմանք քիչ։ Ողջախոհութեան ճառին նպատակին հասնելու համար հարկաւոր է ի նկատի ունենալ աճեցականներու այն հանգամանքը՝ որ մինչեւ պետութի աճեցականներն՝ ամէնուն հաւասար չեն ունին, և մինչեւ ժամանակ նորին աշխարհի երեսուն։

Բոյսերը՝ տարեկան կեանք ունին. և իւրաքանչիւր տեսակն իւր բնութեանն չարմար կլիմայում՝ գարնան օրերումն կը ծլի, կը կանաչի, կը ծաղկի. և ամառուայ տաքերումն՝ իւր հունտերը կը հասունացնէ, առատօրէն

շատանալով, խորշակներուն կը թառամի, կը չորանայ, և աշնանային քամիներուն ձեռքն ինկած՝ այս ու այն կողմերը կը ցրուի. և ձմեռնային լացուկեան թափառներուն՝ հողին կը խառնուի կը վերջանայ։

Միևնոյն տեսակի պատկանող բոյսերը՝ տիևնոյն հողերու ընտելացած՝ տիևնոյն չափով՝ տիւրքի, տիուրի ծառանալ կարենան, տիուրի իջնեն, տիուրի կտրին, տիուրի իջ ծառչին, տիուրի իջ պտղաբերեն, և տիուրի նոյնեն լուսմիլ։ Միայն անպտուղ իջ ծառն, երբէք չպտղար և ասոնք խորշակի հանդիպին, և փշերնի խոնաւութենեն խոպան ցամաքի։ Նոյնպէս և եթէ գարնան սկզբան՝ սաստիկ ցուրտէն վնասուելի նոցա ծիլը կամ ծաղիկը։

Բոյսերու տեսակները կան, որ իրենց պտղոյն վերայ տիւրք կաթնեղ կտրչեալ իջ կտրնեն, երբէ իրենց հանդերձն հասունցնելէ յառաջ խուղարկեն։ Տեսակներ էլ կան, որոց պտղոյը շրջունակ փեթակաձև ծառով, իջ կտրնալի ամէնուն կաթնեղ և հասունցնէ, բ'ոչ ծառնալ էլ ու խուղարկ չխուղարկի։

Բոյսերու աճելութիւնը կամ չատանալն այնքան առատ է, որ ճշդիւ համրելը գրեթէ անկարելի կը լինի։ Մի հատիկ մանանեխի վերայ մի հատ բազմոստեան ցօղուն կը բարձրանայ, և որ հազարէն աւելի հունտեր կը հասունցնէ։ Մի հատ գարնի վերայ երեսուն, քառասուն... մինչև ութսուն հասկ կը բարձրանայ, և իւրաքանչիւր հասկումն՝ քառասունէն մինչև վաթսուն, և աւելի ևս հատիկներ կը հասունանան. (համրուած է մինչև $80\times60=4800$ հատիկներ մի՛ հատ գարնի վերայ)։ Մսրացորենի (գօգօրոզ) մի հատին վերայ մի ամբողջ եղէգ կը բարձրանայ, և տասը, տասներկու, մինչև իսկ տասնհինգ եղջիւրներ կը հասունցնէ, որոց իւրաքանչիւրին վերայ վեց հարիւրէն աւելի հատիկներ կը լինին. ($15\times600=9000$)։ Ծնանոտի մէկ հատիկ հունտին վերայ՝ միլիոնէն աւելի հունտեր կը հասունանան։

Բոյսերու աճելութեան պահանջն է չափաւոր ջերմութիւն օդոյ, չափաւոր խոնաւութիւնն գետնի, և իւրաքանչիւր հունտի երկարաձգութեանց անհրաժեշտ ընդունելիութիւնը. եթէ այս երեք բնական

պահանջները կատարեալ լինին, հունտն արդէն աճած կը համարուի իւր բնական չափով։ Բայց եթէ այս երեք պահանջներէն մին սահմանէն դուրս ելլէ, զոր օրինակ ջերմութիւնը բոլորովին պակասի, հունտն այլ ևս չաճիր, խափան կը մեռնի. նոյնպէս՝ եթէ խոնաւութիւնը բոլորովին պակասի կամ չափազանց սաստկանայ, նոյնպէս և եթէ հունտին երկրագործները մէկմէկէ բաժանուած լինին։ Խոնաւութեան և ջերմութեան բարեխառնութիւնն, ու հունտի երկրագործներուն անբաժան մնալիքն՝ եթէ անվրէպ պատահին, այս երեք հանգամանքներու մնալիքն է բոյսերու աճելութեան բնական օրէնքը, զոր սահմանել է Աստուած բնութեան արարիչը, և կաճին անընդհատ։ Սերմանական աճելութեան ներքին բուն գաղտնիքին գիտել՝ անհնար է. այսչափ միայն կարող ենք գիտել և զարմանալ։

Տունկերն՝ իրենց աճելութեան նայելով, երկու կարգի կը բաժնուին. պղպտու տունկեր, և անպղպտու տունկեր. պղպտու կոչուին այն տունկերը՝ որոնք մի անգամ պղպաբերութեան գարուն տեսնելէ ետքը՝ ամեն տարի անընդհատ կը պղպաբերեն։ Անպտուղ կոչուին այն տունկերը՝ որոց առաջ պղպաբերութեան գարունը՝ շատ աւելի կը հասնի. և այնուհետև ևս շրջանաւորը ժամանակաւ՝ այսինքն տասնհինգ, քսան և այլն տարիներ մինչև անցունելէ ետքը՝ դարձեալ կը պղպաբերեն։

Պղպտու տունկերն՝ շատ տեսակի կը բաժնուին. որոցմէ ոմանք տասնեակ տարիներ կեանք ունին, ոմանք մի քանի տասնեակ տարիներ, ոմանք ամբողջ մի դար, և աւելի ևս երկու, երեք դարեր...։

Պտուղը՝ ծառին հունտն է, որուն մէջ կը գտնուի աճելութեան սերմանական ամբողջ և լրական զօրութիւնը։ Պտուղը՝ աշնան օրերում ծառին վերայ հասունացած գետին կընկնի, կը գլորի, կամ քամիներէն կը մղուի, ու կերթայ իւր բնութեանն չարմար մի խոռոչի

մէջ կը տեղաւորուի։ Գարնան հալքը կընկնի, և ըստ բնութեան կը վտեղնէ պտուղի պատեանը, և երկուռեակները կը զարթնուն՝ երբ առաջին անգամ գարնանային կենդանական ջերմութենէն ներգործուին, կը ծլին, գետնին խոնաւութիւնը ծծելով կարմատանան դէպ ի գետնին խոր ծոցը, կը կանաչին դէպ ի վեր, և օդոյ ջերմութիւնը ձգելով կաճին, կը բարձրանան դէպ օդային ջերմութեան կեդրոնը, կաճին, կը մեծանան, աշնան օրերում տերևաթափ կը լինին, ձմեռը՝ քուն կը լինին... այսպէս կաճին անպտուղ տարիներում, և սահմանաւոր գարնան՝ բողբոջելուն հետ միասին կը ծաղկին, կը պտղաբերեն, աշնան կսկսին քուն մտնել, և պտուղները թափել։

Իւրաքանչիւր տեսակ պտղատու ծառ՝ իւր բնութեան պատշաճ կլլմայումմ կաճի։ Պտղատու ծառերու տեսակներէն ոմանք՝ միայն առաջին տարին անպտուղ կը մնան, և երկրորդ տարումմ կսկսին պտղաբերել՝ ոմանք՝ երրորդ տարիէն կը պտղաբերեն, ոմանք՝ չորրորդէն,... մինչև տասը տարիէն ետքը պտղաբերողները կան. բայց դարձեալ իւրաքանչիւր տեսակի ամեն ծառերն էլ միասին կը ծլին, միասին կաճին, և միասին կսկսին ծաղկիլ ու պտղաբերել. և գրեթէ միաչափ ժամանակամիջոց կապրին։

Նորածիլ տունկերն՝ որչափ որ կանուխ պտղաբերող են, այնչափ ևս քիչ տարիներ կեանք կունենան. և որչափ որ ուշ սկսին պտղաբերել, այսչափ տարիները անցնելէ ետքն սկսին առաջին անգամ պտուղ տալ, այսպիսիները՝ համեմատաբար աւելի երկար տարիներ կապրին։

Պտղատու տունկերու կեանքն՝ ուրիշ մի համեմատութիւն ևս ունի. պտղաբերութեան տարիներումմ աւելի քիչ պտուղներով բեռնաւորուող ծառերն՝ համեմատաբար աւելի երկայնակեաց կը լինին, քան թէ

շատ պտղով բեռնաւորուողները։ Բայց դարձեալ իւրաքանչիւր տեսակի ծառերն՝ միևնոյն չափով տարիներ կապրին, և ասա կը ծերանան, եթէ բնական պատահարներու չհանդիպին։ Այսպէս ուրեմն պտղատու տունկերուն այն տեսակը՝ որ համեմատաբար աւելի ուշ կսկսի պտղաբերել, և միևնոյն ժամանակ աւելի քիչ պտուղ կը բերէ՝ միւս տեսակներէն աւելի երկայնակեաց է, և աւելի շատ տարիներ կապրի. մինչև իսկ դարեր կանցունէ։ Պտղատու ծառերն՝ երբոր պտղաբերութեան տարիներն ու դարերն անցունելէ ետքը՝ փոր կընկնին, կը ծերանան, և այնուհետև գրեթէ մի կամ երկու տարի միայն կիսակենդան ապրելով կը չորանան, կը փտին, և հող կը դառնան։

Պտղատու ծառերուն աճելութեան չափն անհուն է։—Մի թթենիի վերայ հազարաւոր թութ կը հասնի. և ամեն մի թութի մէջ երեսնաւոր, քառասնաւոր հունտեր կաճին կը հասունանան։ Մի նռենիի հարիւրաւոր պտուղ կը բերէ, և մի նուռն՝ հազարաւոր հունտ կը բովանդակէ։ Մի թզենի հարիւրաւոր թուզ կը պտղաբերէ. և մի թուզը՝ հազարաւոր հունտ կը բովանդակէ։ Ընկուզենին՝ իւր բնութեան պատշաճ կլլմայումմ՝ բիւրաւոր ընկոյզ կը պտղաբերէ՝ մինչև երկու հարիւր տարիները. որովհետև եթէ իրենց բնութեանն համեմատ հետզհետէ աճելութեան թողուին, երկրագունդը կը ծածկեն քիչ ժամանակումմ։

Թէ բոյսերուն և թէ պտղատու տունկերուն աճելութեան բնական օրէնքը միևնոյն է. այսինքն ջերմութեան և խոնաւութեան չափաւոր քանակութեան, և հունտի երկրաքնութեան անքակտ պատճառներն եթէ անթերի լինին, կաճին, կը ծաղկին, ու կը պտղաբերեն։ Թէ բոյսերու և թէ ծառերու հունտերն՝ եթէ իրենց արմատին վերայ հասունանալէ յառաջ քաղուին, և սերմանուին, ոչ կը ծլին, և ոչ կաճին։ Նոցա սերմանական զօրութիւնը կը լրանայ՝ եթէ պտուղն արմատին վերայ հասունանայ։

Նոյնպէս եթէ պտղատու ծառերուն բունը ծակենք, և միջին ծուծը կտրենք, թէև այն ծառը դարձեալ կը ծաղկի, և կը պտղաբերէ, բայց նորա պտուղն այլ ևս աճեցականութիւն չունենար։ Նոյնպէս և մէկը վոր կենկած ծառերու պտուղներն աճեցականութենէ կը դադարին։

Ուրեմն երկար տարիները ապրող և պտղաբերող ծառերու անընդհատ զբաղմունքն այսինքն աճեցականութիւնն անվթար պահպանելու համար՝ հարկաւոր է նաև ծառին բոլորական ողջութեան անեղծ պահպանութիւնն. այսինքն նորա ներքին ծուծին (մարդու կազմուածքին համեմատելով սրտի երակներուն և ոսկորներու ծուծին) առանց որևէ վէրքի անխուզելի պահպանութիւնը, և պտղոյն հասունութիւնը, ու սերմնական երկուորեակներու անբաժան մնութիւնը։ Հունտերը՝ կամ նոցա սերմանական զօրութիւնն այս ներքին վտանգներէն ապահովելէ ետքը՝ եթէ արտաքին օրէնքն՝ այսինքն ջերմութեան և խոնաւութեան բաբեխառնութիւնն ևս անթերի լինի, հունդերն արդէն իսկ կաճին, ու կը բազմանան առանց կասելու, եթէ արտաքին պատահարն չպատահին։ Բոյսերու և տունկերու աճեցութեան բնական օրէնքն՝ այսչափ միայն կարող ենք դիտել, աւելի խոր գաղտնիքին հասնել անկարելի է։

Անպտուղ ասուած տունկերն՝ իրենց ուշ ուշ և քիչ քիչ պտղաբերելուն համեմատութեամբ՝ աւելի երկար տարիները ու դարերը կապրին, ու կաճին։ Որոց սերմանական կամ աճեցական զօրութիւնն ևս պտղատու ծառոց բնական պահանջներն ունին։

Կենդանիները՝ երկու տեսակի կը բաժնուին. Զուածին, և Ընդհանուր։

Զուածին կենդանիները խիստ շատ կը բազմանան։ Մի ձուկն՝ արուի զուգաւորութեամբ՝ հարիւրաւոր, հազարաւոր ու բիւրաւոր ձուեր կածէ ըստ ժամանակի. և այնչափ ձագեր կունենայ։ Մի զոյգ ագռաւն՝ երկու ամսական լինելէ ետքը կսկսին զուգախառնիլ (հարաւային երկրներում), և ամեն ամիս մի մի զոյգ (արու և էգ) ձագեր կը հասցնեն։ Այնպէս որ մի զոյգ ագռաւն՝ եթէ արտաքին պատահարներէ ապահովուին, մի տարուայ մէջ ոչումն՝ 377 զոյգ կը դառնան. երկու տարուայ ընթացքումն՝ 121,390 զոյգ կը դառնան. երեք տարուայ ընթացքումն՝ 34,084,836 զոյգ կը դառնան. արու և էգ՝ անվրէպ կարգով աճելով։

Կենդանածին կենդանիներու տեսակները շատ են, և ամեն տեսակներն էլ արուի և էգի զուգաւորական ներգործութեամբ կաճին։ Բազմածին կենդանիները խառնակեաց են, և առանձինն արուի և էգի զոյգ չունին։ Այն կենդանիները՝ որ մի մի հատ կը ծնանին, ընդհանրապէս մի մի արու և մի մի էգ առանձին կը զուգաւորին, խառն զուգաւորութիւն չունին, և երկայնակեաց են. մինչդեռ բազմածինները՝ սակաւակեաց են։ Մի մի հատ ծնանող կենդանիներէն որոնք որ առանձին զոյգ են, և արու և էգ հաւասար թուով կը չատանան, նոքա համեմատաբար աւելի երկայնակեաց են։ Կենդանածիններէն որոց որ ողնաշարը վնասուի, նոցա զուգաւորութենէն ծնունդ չլինիր։ Շրջանաւոր ժամանակ չառած զուգաւորուող կենդանիներու սերմնական զօրութիւնը՝ կը խանգարուի, և աճեցականութենէ կը դադարի։

Կենդանածիններէն՝ մի զոյգ ոչխար՝ տարուայ ընթացքումն երկու անգամ մի մի գառն տալու հաշուով, (հարաւային երկրներումն երկու տարուայ ընթացքումն հինգ անգամ կը ծնանին), տասներկու տարուայ ընթացքումն 2430 ոչխար կը դառնան. տասնեհինգ տարուայ ընթացքում՝ 10326 ոչխար կը դառնան. տասնեւութ տարուայ ընթացքումն՝ 43764 ոչխար կը դառնան. քսան տարուայ ընթացքումն՝ 114508 ոչխար կը դառնան։

Աստուածաշունչ մատենում կը պատմուի ցակովբ նահապետին հարստութիւնը՝ ոչխարի աճեցութեան այս

գաղտնիքին հմտութեամբ։—Յակովբ՝ տասնեւչորս տարիներէ աւելի՝ ոչխարաց հովուութիւն կանէ անվարձ. այնուհետեւ քիչ տարիներ ևս կը ծառայէ այն պայմանաւ, որ խայտաւորը ծնած գառներն իրեն վարձ համարուին։ Յակովբ արուեստաւոր ճարտարութեան մի խաղ կը հանձարէ մաքիներուն, և գրեթէ բոլորն էլ խայտաւոր կը ծնին, ու քիչ ժամանակի մէջ չափազանց շատ վարձք կստանայ։ Այս ծառայութիւնը կատարեց Յակովբ Միջագետքում, ուր երկու տարուայ ընթացքումն՝ հինգ անգամ գառն կուտայ ոչխարն ընդհանրապէս։

Թէ բոյսերը, թէ տունկերը, և թէ կենդանիներն՝ իրենց բնական օրէնքէն չշեղելով, այսպէս չափազանց աճելութիւն մի ունին աշխարհի երեսում. սոցա աճելութեանն համեմատութեամբ՝ մարդկային աճելութիւնն այժմու մեր տեսածէն շատ աւելի պիտի լինի, բայց խիստ շատ նուազ է։ Այս համեմատութենէն կերևի, որ մարդկային աճելութեան բնական օրէնքը չի պահպանուիր ազատական մարդոցիներէն, և աճելութենէ կը նուազին. միևնոյնեւ անշունչ բոյսը, տունկը, և անբան կենդանին առանց խոտորելու իրենց բնական օրէնքէն՝ այնպէս առատելութեամբ կաճին։ Որպէս զի այս համեմատութեան վերայ աւելի պայծառ գաղափար մի ունենանք՝ աչքէ անցունենք մարդկային բնական աճելութեան սերունդը։

Բ. ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՃԵԼՈՒԹԻՒՆՆ ԸՍՏ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆԱՑ ԵՒ ԸՍՏ ԲՆԱԿԱՆ ՕՐԻՆԱՑ

Արդի աշխարհագրական ցուցակներուն նայելով, մարդիկ ընդհանրապէս կապրին մինչև եօթանասուն տարի. եօթանասուն տարիէն պակաս ապրողները՝ տարաժամ մահու զոհեր են, որ և հետզհետէ կը շատանան անբնական հիւանդութեանց շատանալուն չափով.

եօթանասուն տարիէն աւելի ապրողները՝ բնական մահուամբ մեռնողներ համարելի են. որոց թիւն արդէն սկսած է վտքրանալ, այս դարու առաջին կէսի և վերջին կէսի աշխարհագրականներու համեմատութեան նայելով։ Իսկ հարիւր տարի, և աւելի ևս ժամանակ ապրողներն՝ իսկապէս բացառութիւն համարելի են. և դուն ուրեք կերևին բնական կեանք վարող ընտանեաց մէջ, որոնք երկրագործութեան, հովուութեան կը պարապին, և ըստ մեծի մասին երկնքի տակ կապրին։

Առողջ կենաց եօթանասուն տարիներէն առաջին քսան տարիներն՝ արբունքի տարիներ են, վերջին քսան տարիներն էլ ծերութեան տարիներ են. և այս քառասուն տարիներում ծնունդ չկնիր։

Ծերութեան տարիներումն՝ մանաւանդ յիսունէն մինչև վաթսուն տարեկան հասակում եղած ծնունդներու բացառութիւնները շատ կան։ Արբունքի յոման տարիէն յառաջ եղած ծնունդներու բացառութիւնները ևս շատ կան, և որոնք ընդհանրապէս մանկութեան ու պատանեկութեան տարիքում տարաժամ մահերու կը պատահին. այս արբունքի յոման տարիէն կանուխ պատահած ծնունդներումն՝ շատ անգամ ծնողաց կեանքը կը վտանգուի։

Բազմածին ծնողաց ամենաշատ ծնանողներն՝ ամեն տարի մի մի զաւակ կունենան. մինչև կարգի բազմածիններն՝ ամեն երկու տարին՝ մի մի զաւակ կունենան. իսկ ստորին կարգինը՝ ամեն երեք տարին՝ մի մի զաւակ կունենան։ Կան ծնողներ՝ որոց ծննդեան շրջանն երեք տարիէն աւելի կերկարի. սոքա՝ բազմածիններու կարգը չեն համարուիր։ Կան նաև ծնողներ՝ որոց ծննդականութեան շրջանը՝ տարիէն աւելի, և երկու տարիէն պակաս կը լինի, որոնք մինչև կարգի բազմածիններուն շարքումն կը համարուին. իսկ երկու տարիէն աւելի և երեք տարիէն պակաս ժամանակի՝ շրջանա-

ւորներն՝ ստորին կարգին բազմածիններու չարքումն կը համապատասխանէ։

Մարդկային բնական աճելութիւնը՝ բոյսերու, տունկերու և անբան կենդանիներու աճելութեան հետ համեմատելու համար, հարկ է, որ այժմ անցունենք մի անգամ՝ բազմածին ծնողաց բնական աճելութիւնը, թէ վերին կարգի բազմածիններուննը, և թէ միջին ու ստորին կարգիններուննը։

Մարդկային առողջ կենաց եօթանասուն տարիներէն հանելով արբունքի քսան տարին, նոյնպէս և ծերութեան քսան տարին, ծննդականութեան տարիները կը լինին երեսուն տարի, որ քսաներորդ տարիէն մինչև չիսներորդ տարին է, բուն արիութեան և այրութեան տարիքը մարդուն։

Ստորին կարգի բազմածին ծնողք՝ իրենց հասակի 21-րդ տարիէն կսկսին ծնունդ ունենալ, և 21. 24. 27. 30. 33. 36. 39. 42. 45. 48. տարեկան հասակումն մի մի զաւակ ունենալէ ետքը՝ ծնունդէ կը դադարին։ Որ ասել է, թէ իրենց 50 տարեկան հասակումն արդէն տասն զաւակները կունենան։

Այս տասն զաւակներն՝ իրև իրենց ծնողաց հարազատները, մինոյն սերմանական զօրութիւնն, հետևաբար և մինոյն կարգի աճելութիւնը պիտի ունենան։ Ըստ այսմ ստորին կարգի բազմածին ծնողներն՝ իրենց եօթանասուն տարեկան հասակումն՝ իրենց թոռներն, ու թոռանց որդիները ևս կը տեսնեն հետևեալ չափով։

Ծնողաց 42-րդ տարիումն՝ անդրանիկ որդին կսկսի զաւակ ունենալ մինչև ծնողաց 70-րդ տարին՝ հետևեալ տարիներում. 42. 45. 48. 51. 54. 57. 60. 63. 66. 69։ Անդրանիկ որդիէն մէկ ծննդական շրջան ետքը կսկսի զաւակ ունենալ և երկրորդ որդին. որմէ ևս մէկ շրջան ետքը՝ երրորդը..... Հետևաբար ծնողաց 70-րդ տարիումն անդրանիկ որդին 10 զաւակ կունենայ, և միւս-

ները կարգաւ մէկ մէկէ՝ մի մի զաւակ պակաս ունենալով, 10-րդ որդին մի զաւակ միայն կունենայ. որոց բոլորին գումարը կը լինի $\frac{(10+1)\times 10}{2}=55$ թոռներ։

Այս թոռներէն մին (ամենամեծը՝ իւր մեծ հօր 63-րդ տարիումն կսկսի զաւակ ունենալ. նորա յաջորդ երկու հատը՝ 66-ումն, սորա յաջորդ երեք հատը՝ 69-ումն։ Հետևաբար՝ առաջին—ամենամեծը կունենայ 3 որդի. սորա յաջորդ երկուքն ևս կունենան երկերկու (4 որդի). և սորա յաջորդ երեքը՝ կունենան մի մի հատ (3 որդի). որոց գումարը կը լինի 10 թոռնորդիներ։ Այսպէս ուրեմն ստորին դասակարգի բազմածին ծնողք՝ իրենց եօթանասուն տարեկան հասակումն կը տեսնեն իրենց սերունդը՝—10 որդիք, +55 թոռներ, +10 թոռնորդիներ, ընդ ամենը=75 հոգի, իրենց աճելութիւնը։

*Եթէ այս ծնողք՝ մինչև մի դար տարին, պիտի տեսնեն իրենց սերունդն՝ 10 որդիք, 100 թոռներ, 375 թոռնորդիներ, և 126 թոռանց թոռներ. ընդ ամենը՝ 611 հոգի։ *)*

Միջին կարգի բազմածին ծնողք՝ իրենց 21. 23. 25. 27. 29. 31. 33. 35. 37. 39. 41. 43. 45. 47. և 49-րդ տարիներումն մի մի զաւակ կունենան. ընդ ամենը 15 զաւակ։ Եւ այս հարազատ զաւակներէն թոռներ կունենան իրենց 42-րդ տարիէն սկսած մինչև 70-րդ տարին՝ $\frac{(15+1)\times 15}{2}=120$ հատ թոռներ։

Այս թոռներէն մին (ամենէն մեծը) 63-րդ տարիումն՝ ծննդականութեան շրջանը կը մտնէ. սորա յաջորդ երկու հատը՝ 65-ումն, և հետևորդ երեք հատը՝ 67-ումն, և հետևորդ չորս հատը՝ 69-ումն։ Եւ առաջին

---

*) Այս աճելութեան մի դիւրըմբռնելի ցուցակը կը գտնենք գործոյս վերջումն, որպէս զի հետաքրքրուողներն յայտնի տեսնեն։ Տես ցուցակ Ա.։

մի Թոռն՝ 4 շրջանումն կունենայ չորս զաւակ. նորա յաջորդ երկու Թոռներն՝ 3 շրջանումն կունենան երեք երեք զաւակ. սոցա հետևորդ երեք Թոռներն՝ 2 շրջանումն կունենան երկերկու զաւակ. սոցա հետևորդ չորս Թոռներն՝ 1 շրջանումն կունենան մի մի զաւակ. որոց գումարն ընդ ամենը կը լինի 4+6+6+4=20 Թոռնորդիք։ Այսպէս ուրեմն միջին կարգի բազմածին ծնողք՝ իրենց եօթանասուն տարեկան հասակումն կը տեսնեն իրենց սերունդը՝ 15 որդիք, +120 Թոռներ, +20 Թոռնորդիներ=ընդ ամենը 155 Ճետ, իրենց աճելութիւնը։

Եթէ այս ծնողք մինչև մի դար ապրին, իրենց 100 տարեկան հասակումն պիտի տեսնեն իրենց սերունդը, 15 որդիք, 225 Թոռներ, 1270 Թոռնորդիներ, 495 Թոռանց Թոռներ, ընդ ամենը՝ 2005 Ճետ։ *)

Վերջին կամ ամենաբարձր կարգի բազմածին ծնողք՝ իրենց 21-ը տարիէն սկսած մինչև 50-ը տարին՝ ամեն տարի մի մի զաւակ կունենան. ընդ ամենը 30 զաւակ։

Այս զաւակներէն անդրանիկը՝ իւր ծնողաց 42-ը տարիէն սկսած մինչև 70-ը տարին՝ ամեն տարի մի մի զաւակ կունենայ՝ ընդ ամենը 29 զաւակ. երկրորդ որդին կունենայ 28 զաւակ. երրորդը՝ 27..... քսանևմիներորդ որդին կունենայ 1 զաւակ. որոց բոլորին գումարը կը լինի $\frac{(29+1)\times 29}{2}=435$ Թոռներ։

Այս Թոռներէն մին՝ (ամենամեծը) ծնած է իւր մեծ հօր 42-ը տարիումն. երկու հատը՝ ծնած են 43-ը տարիումն, երեքը՝ ծնած են 44-ը տարիումն. չորսը՝ ծնած են 45-ը տարիումն. հինգը՝ ծնած են 46-ը տարիումն. վեցը՝ ծնած են 47-ը տարիումն. եօթը՝ ծնած են 48-ը տարիումն. ութը՝ ծնած են 49-ը տարիումն.

*) Տես վերջումը, միջին կարգի բազմածին ծնողաց աճելութեան ցուցակը։

որոց ամեն մէկն իրենց հասակի 21-ը տարիէն կսկսին զաւակ ունենալ։ Ամենամեծը կսկսի զաւակ ունենալ իւր մեծ հօր 63-ը տարիէն. և մինչև 70-ը տարին կունենայ 8 զաւակ. սորա հետևորդ երկու Թոռները կունենան եօթն եօթն զաւակ, $2\times 7=14$. սոցա հետևորդ երեք Թոռները կունենան վեց վեց զաւակ, $3\times 6=18$. սոցա հետևորդ չորսն՝ կունենան հինգ հինգ զաւակ, $4\times 5=20$. սոցա հետևորդ հինգն՝ կունենան չորս չորս զաւակ, $5\times 4=20$. սոցա հետևորդ վեցն՝ կունենան երեք երեք զաւակ, $6\times 3=18$. սոցա հետևորդ եօթը՝ կունենան երկերկու զաւակ, $7\times 2=14$. սոցա հետևորդ ութը Թոռները՝ իրենց մեծ հօր եօթանասուն տարեկան հասակումն կունենան իրենց անդրանիկներն՝ մի մի զաւակ, $8\times 1=8$. որոց բոլորին գումարը կը լինի $8+14+18+20+20+18+14+8=120$ Թոռնորդիներ։

Այսպէս ուրեմն վերջին կարգի բազմածին ծնողք՝ իրենց եօթանասուն տարեկան հասակումն կը տեսնեն 30 որդիք, 435 Թոռներ, և 120 Թոռնորդիներ, ընդ ամենը 585 Ճետ, իրենց աճելութիւնը։

Եթէ այս ծնողք ապրին, և մինչև 100 տարեկան հասակնին հասնին, պիտի տեսնեն իրենց սերունդը՝ 30 որդիք, 900 Թոռներ, 9520 Թոռնորդիներ, 4845 Թոռանց Թոռներ. ընդ ամենը 15295 հոգի։ *)

Այժմու աշխարհագրական ցուցակներով կասկածուի, թէ բազմածին ծնողաց այս երեք դասակարգութիւնը կայ մարդկային սեռի մէջ. բայց նորա աճելութիւնը՝ այս ներկայացուցած բնական յառաջադիմութիւնը չունի. այլ վերին կարգի բազմածին ծնողք՝ հապա թէ ստորին դասակարգի աճելութեամբ կաճին։ Այն էլ լինչպէս կասկածուելու դարձեալ նոյն իսկ աշխարհագրական ցուցակներով, ծնած զաւակներուն մի

*) Տես վերջումը, վերին կարգի բազմածին ծնողաց սերունդոց աճելութեան ցուցակը։

մասը՝ ծնողքին յառաջ կը մեռնին. այնպէս որ մի ամբողջ քաղաքում հազիւ թէ կերևին ծնողք՝ որ իրենց որդւոյն մահը լացած չլինին։ Ինչպէս ծառին վերայ ածիւն զարնուած պտուղն՝ այնպէս է և ծնողաց առջև մեռնող զաւակը, և այսպիսի մեռելներուն խստ շատերը՝ ոչ թէ արտաքին բնական պատահարներու կը զոհուին, այլ նոյն իսկ ծնողաց՝ գործած յանցանքին կը զոհուին. ծնողաց՝ ողջախոհութեան ուղիղ ճանապարհէն խոտորելն է, որ իրենց որդւոց կեանքը կը կարճացնէ։ Ինչպէս որ ծնողական ողջախոհական զուգութիւնն՝ ինն ամիս և ինն օրեր անցնելէն ետքը՝ իւր պտուղը կը ծրնանի, այնպէս էլ ողջախոհական զուգութեան խոտորումն՝ երկու, երեք... հարիւր օրերէն ետքը, տարիէն ու տարիներէն ետքը՝ իւր վէրքը կը բանայ, ցաւը կը խստացնէ, և ծնողաց լացն ու թացը կը չատացնէ։

Որպէս զի զգալի լինի, թէ ո՛րչափ կը հարուածուի այսօր մարդկային սերնդոց աճելութիւնը՝ ողջախոհութեան ուղիղ ճանապարհէն խոտորումներէն, կարող է ամեն ոք համեմատել վերևում դրուած բնական աճելութեան յառաջադիմութիւնն՝ այժմու երևցած աճելութեանց հետ. միշտ ի նկատի ունենալով իրենց շրջակայ ընտանեաց և ժողովրդոց աճելութիւնը։ Թող յիշէ ամեն ոք, թէ այսօր տէրութիւններէն ո՞մանք՝ կը վարձատրեն տասներկու զաւակներ ունեցող ծնողքներուն, եթէ տասներկուքն ևս մեռած կենդանի են՝ վերջին զաւակի ծննդեան ժամանակ։

Աւելի ևս զգալի կը լինի, եթէ վերևը դրուած ցուցակի մէջ յայտնուած յառաջադիմութիւնն՝ համեմատենք նախընթաց գլխում ցուցուած բոյսերուն, տունկերուն և կենդանիներուն աճելութեան հետ. յորում ակներև կը լինի պարզապէս թէ ինչքան նուազ է մարդկային աճելութիւնը՝ անշունչ ու անբան արարածոց աճելութեան համեմատութեամբ։ Եւ թէ ինչքան ևս աւելի նուազած է ողջախոհութեան խոտորումներով.

որոց պատճառաւն է միայն, որ հարիւրամեայ կենաց բազմաթիւ սերնդեան վոխանակ, հազիւ թէ մէկ կամ երկու որդի կը թողուն մարդկանց խստ մեծագոյն մասը։ Այս ակն յայտնի նուազումն զգալէ ետքը՝ կը մնայ զգուշանալ ողջախոհութեան խոտորմունքներէն։

Այժմու մարդկային կենցաղավարութեան մէջ՝ ողջախոհութեան՝ կամ աճելութեան ուղիղ ճանապարհի գլխաւոր խոտորմունքներն են.

ա) Աշխատասիրութեան պակասութիւն, կամ ծուլութիւն, որ ծնողաց կազմուածքն հետզհետէ կը թուլացնէ։

բ) Կատարեալ արբունքէ յառաջ կրկին բորբոքում, և զուգաւորութիւն, որ կը հիւանդացնէ ծնողներին՝ ներքին հիւանդութիւններով։

գ) Ժամանակէ յառաջ արբունքը կանխել չարաչար խորհուրդներով, խօսակցութիւններով և գործերով, որ կսպառէ ծնողութեան սերմանական կամ սերմնառական զօրութիւնը. և կը լինին ամուլ, անգաւակ։

դ) Յղութենէ ետքը՝ զուգաւորութեան կրկնութիւն։

ե) Մինչեոյն վնասը կը պատճառէ խառնակեցութիւնը։

Եթէ այս խոտորումները չլինէին, ու մարդկային աճելութեան ուղիղ ճանապարհին ընդհանրապէս զգուշանային, բազմածին ծնողաց երեք դասակարգի ծնողքներն էլ հարիւրամեայ կենաց ընթացքումն հարիւրաւոր, ու հազարաւոր ու բիւրաւոր սերունդ պիտի տեսնէին այս աշխարհում. մի հարստութիւն, մի աճելութիւն, որ աշխարհիս ամեն հարստութենէն աւելի գերազանց է. զոր խսպառ կորսնցուցած, կը հետևին մարդիկ հարստանալ՝ միայն զարդարանքով, վողով, ամպարներով, կռուով, և կաւելցնեն իրենց հառաչանքները, ցաւերը, հիւանդութիւնները, ախտերը. և ի զուր կը զոհուին տարաժամ մահերու։ Եւ իրենց հետ իրենց

Թողուցած սերունդը ևս կը դատապարտեն սուգի, լացի, կոծի, և սրտի ամեն տեսակ դառնութեանց։ Այս ամեն տեսակ զրկանքներէն պիտի ազատուի մարդկան սերունդը, և Աստուծոյ օրհնութեանն համեմատ աճելով պիտի վայելեն աշխարհի բարութիւնները, եթէ միայն կատարեալ մարդիկ լինին ծնողք, և ծնելութեան հասած երիտասարդներն ու կուսանքն։

Գ. ԹԷ Ո՞ՐՆ Է ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴԸ

Մարդկային խելքով խորհելով, այսպէս կը սահմանուի կատարեալ մարդը։—Կատարեալ մարդ է այն մարդը՝ որ լման մը գիտէ, Թէ ինչ է մարդը—։ Մարդուն ինչ լինելը լման մը գիտնալու համար պիտի գիտնալ նախ՝ Մարդս ընդոյ ինչութիւն—իւր ծնունդէն մինչև մահը. երկրորդ՝ Մարդս անցաւոր—ծնունդէն յառաջ, իւր ծնողաց ծնունդէն էլ յառաջ ունեցած վիճակը. երրորդ՝ Մարդս ապագայ—մահուանէն յետոյ ունենալիք վիճակը։ Եթէ գիտնանք, Թէ մարդն ինչ է այս երեք ընդարձակ ժամանակներու մէջ, լման մը կարող ենք գիտնալ, Թէ ինչ է մարդը. և այն ժամանակ կարելի է յուսալ, Թէ լինինք նպատակեալ մարդ։

Այժմու գիտուններէն շատերը, և նոցա հետ առհասարակ ժողովրդեան խիստ մեծագոյն մի մասը՝ մարդուս վերայ փոքրիկ աչքով նայելով՝ մի փոքր բան կը համարեն. և այս աչքով նայած ժամանակ, Մարդս անցաւոր ասելով, կիմանան երեկուայ օրը, կամ աւելի ընդարձակ որ առնուն, կիմանան մինչև նորա ծննդեան օրը. նոյնպէս և Մարդս անցաւոր ասելով, կիմանան վաղուայ օրը, կամ մինչև մեռնելու օրը. աննկից անդին գիտնալ չուզեն։

Բայց որպէս զի լման մը գիտնանք, Թէ ի՛նչ է մարդս, պէտք է աչքէ անցուցնել և գիտնալ այն ընդարձակ ու գրեթէ անհուն անցեալը՝ իւր ամեն հանրական պա-

տահարներով. նոյնպէս պէտք է նայել այն ընդարձակ ապագային՝ որ մի անեզը հեռաւորութեան ծայրումն կը նշմարուի. որպէս զի գիտնալով անցելոյն սկիզբը, և ապագային վախճանը՝ որ ներկայ կենաց երկու հեռաւոր ծայրերու կէտերն են՝ կարողանանք խելամուտ լինել՝ նոյն երկու կէտերուն մէջ գծուելիք ուղիղ ճանապարհէն չխոտորելու կշեռքին. և եթէ պատահմամբ խոտորած ևս լինինք, ուղղելու կողմը գտնելու հնարաւորութիւն ունենանք։ Կարելի՛ է արդեօք ընդունել, Թէ մարդ՝ իւր ծնունդէն յառաջ ևս իւր ծնողաց երաննեբումն կեանք ունի՞։ Օրինակ.

Առնունք մի ընկոյզ. եթէ գիտենք ընկուզի անցեալը, կը տեսնենք, որ այս ընկուզին մէջ մի մեծ ծառ ամփոփուած կայ. կը գիտենք և այն ծառը՝ որ հարիւրաւոր գարուններուն կանաչելիք տերևներն ևս ունի իւր հետ ամփոփած, (կամ գոնէ այն աճելութեան բուն զօրութիւնն ունի), ունի նաև այնքան տարիներուն ծաղկելի ծաղիկները, հասուցանելիք պտուղները, նոցա պատիճները. և ոչ միայն այսչափ. այլ այս պահուած պըտուղներուն մէջ ևս կան նորանոր ծառեր, տերևներ, ծաղիկներ, պտուղներ, և նոցա մէջ ևս....։ անհուն շարայարութեամբ։ Ո՞ւր կը հասնինք ամենէն վերջը։— Մեր մտքին հասած տեղումն (իբրև ծայր նկատելով,) կը տեսնենք և խելամուտ կը լինինք, որ նորէն նոր, ընդարձակէն ընդարձակ, Թարմէն Թարմ կաճի ու կը նորոգուի. ծառէն կընկնի, պատառ խոռոչում կը պահուի, գարնան օրերում կը կենդանանայ, ծառ կը դառնայ, կը ծաղկի, կը կանաչի, կը պտղաբերէ..... նորա կեանքն անծայր վերանորոգութիւն է՝ աւելի և աւելի ընդարձակութեամբ. և մնացեալ ապագային ծայրը չենք կարողանար հասնել։ Կը դառնանք մի փոքր, և նոյն ընկուզին անցեալը կը մտաբերենք, Թէ ընկոյզը՝ ծառէ էր, ծառն ընկուզէ. այս ընկոյզն ևս ծառէ է եղել, և այս ծառն ևս ընկուզէ,..... այս մեւնոյն փոփո-

խուճեան շարայարուճեան սկզբումն՝ անհուն խորուճիւն մի կը նշմարենք, որուն յատակն հասնել անկարելի է։ Այս անյատակ խորուճիւնն լմանալով, կը դադարինք. և կը դառնանք կը հարցունենք մեր հօրը, մեր մեծ եղբօրը—գիտունին,— պատմուճեան. կը հարցունենք,— ճէ ուստի է սորա սկիզբը, և ո՞ւր կը հասնի վախճանը։ Սորվեցնել ուզողը՝ մեզի կը պատասխանէ— Աստուած է ստեղծել, և հրամայել, որ աճի. ընկուզին սկիզբն էլ վերջն էլ՝ Աստուած միայն գիտէ. մարդս գիտնալ կարող չէ։—Այս մեր հարցումին՝ մեր պատմուճիւնն էլ կը վկայէ ընդհանուր աւանդուճեան համաձայն.— ճէ Ամէն բան Ածոնճէ է, և Ածոնճուն է։ Օտար ազգաց պատմուճիւնները ևս միևնոյն կերպով կը պատասխանեն, ճէ Աշխարհս ամէն բաներէն, և նոյն իսկ աշխարհս իսկապէս՝ Ածոնճէ են, և Ածոնճուն են։ Երկնային կամարէն՝ դէպ ի մի առանձին ժողովրդեան բանակ երևցած լուսաւոր, հրեշտակն ամպերու մէջէն յայտնուած յայտնութեանը որ կը դառնանք, կը սովորինք, ճէ Ածոնճ ասաց, և եղաւ, Այս յայտնուճեան մատեանը՝ ճէ ընկուզի և ճէ բոլոր աշխարհի սկզբան համար այսպէս պատասխանելէ տասխանէ, ճէ Ածոնճ՝ մարդուն պարտուցեց հողէն, և երեսին չէնպանի շունչ փչեց, և մարդը՝ չէնպանի հոգի եղաւ։ Այս միևնոյն յայտնուճեան մատեանը կը պատուիրէ մարդուն՝ որ սպասէ այն Իշխանին գալստեանը՝ որուն իրենն է բոլոր ազգաց (ամեն արարածոց և մարդուն վախճանը), և նա է հեթանոսաց ևս ակնկալուճիւնը։

Կը դիմենք այս սպասուած Իշխանին յայտնուճեանը, և մարդոյ վախճանին կամ ապագայի մասին կը պատմէ մեզ.

«Պիտի գայ ժամանակ, երբ ամենքը՝ որ գերեզմաններուն են՝ պիտի լսեն նորա (Աստուածորդւոյն) ձայնը, և դուրս պիտի գան. որոնք որ բարիք գործեցին՝ յարուճիւն պիտի առնուն ապրելու (կենաց) համար, և որոնք որ չարիք արին՝ յարուճիւն պիտի առնուն դատապարտուելու համար»։ (Յվհ. Ե.)։

Այս դատաստանի մասին այլ ևս կը պատասխանէ մեզ նոյն յայտնուճիւնը՝ նկարագրելով վերջին կեանքն ու դատապարտուճիւնը։

«Երբ Որդին մարդոյ (Քրիստոս) գայ իւր փառքովն, ու բոլոր հրեշտակները նորա հետ, այն ժամանակ կը նստի իւր փառաւորուճեան աթոռը, և նորա առջևը կը ժողովուին ամեն ազգերն. և զանոնք մէկ մէկէ կը բաժնէ, ինչպէս հովիւ մի՝ ոչխարները կը բաժնէ այծերէն. ոչխարներին կը կեցուցէ աջ կողմէն, և այծերին՝ ձախ կողմէն։ Այն ժամանակ թագաւորը՝ (Քրիստոս, Աստուածորդին,) պիտի ասէ աջ կողմն եղողներուն,— Եկէք Հօրս օրհնածները (Աստուծոյ օրհնածները), ժառանգեցէք այն թագաւորուճիւնը, որ աշխարհի սկզբէն պատրաստուած է ձեզ։ Այն ժամանակ ձախ կողմն եղողներուն էլ պիտի ասէ.—Գնացէք ինձմէն անիծեալներ, գնացէք դէպ ի յաւիտենական հուրը, որ պատրաստուած է սատանային, և նորա հրեշտակներուն համար»։ (Մատթ. ԻԵ. 31 –34. 41.)։

Մարդկային բանականուճիւնը կամ հանճարը՝ ձիշդ այս ոճով կը հետևի մարդկային կատարելուճեան, և մարդու անցեալն անյատակ խորուճիւնը կը նշմարէ իւր լմնաստուճեամբ, և առանց այն սկիզբին հասնել կարողանալու՝ երբ այլ ևս կը չոգնի, դարձեալ կը դառնայ աւելի փորձառու մարդկանց. և որոց մի միայն պատասխանը կը լինի.—Ամեն բան Աստուծմէ է։

Ամենահին պատմուճիւններէն վկայուճիւններ ունինք, որ կը հաստատեն, ճէ ամենուն բերանէն միաձայն լսուած այս պատասխանը՝ ամենահին մարդէն—նախամարդէն—նոյն իսկ Աստուծոյ ձեռքէն ստեղծուած մարդէն—Ադամէն՝ մինչև մեր օրերը՝ բերնէ բերան շարունակ աւանդուճեամբ կրկնուած մի պատասխան է, և ոչ ճէ մարդկային խորհրդոյ գիւտ կամ հանճար։

Գերագոյն սքանչելիքներով ապացուցուած աստուածային յայտնութենէն ևս այսպէս պատասխան կառնունք. և այսօր եսկ ամենայն ազգաց ընդհանուր մեծամասնութիւնն՝ այսպէս կընդունեն, և իւրաքանչիւրն իրրև հայր՝ իրենց որդւոցն այսպէս կը պատասխանեն, ու այսպէս կը սորվեցնեն։

Նոյնպէս և ապագայն կատարուածին համար իրրև մարդ կը դիմենք փորձառուներուն, և նոցա պատասխանովն կը տեղեկանանք, Թէ մեր տեսած գերեզմանը՝ մարդուս մնայն ներկային վախճանն է. Թէ մարդուն ապագան՝—գերեզմանի կատարածը՝—անվերջ անմահութիւն մի է։ Եւ այսպէս տեղեկացած կը լինինք, Թէ մարդոյ անցելոյ ⸗⸗ջին ⸗ղբ⸗⸗ն՝ Աստուած է. նոյնպէս և ապագայի վերջին վերջ⸗⸗ն՝ Աստուած է։ Եւ

Այս երկու կէտերուն մէջ երկնցած ուղիղ գիծը կամ ձանապարհը՝ մարդոյ կեանքն է. այս էլ մարդկային բանական մտքի ուղիղ եզրակացութիւնն է։ Որով և խելամուտ կը լինինք, Թէ մարդուն՝ առաջին օրէն—Աստուծմէ սկսուած օրէն՝ մինչև Աստուծոյ հասնելու օրը—այն անմահական կատարածի օրն՝ եղած ժամանակն՝ մարդուն անցուելու վիճակն է մարդու կեանքը՝ այս աշխարհի մէջ։

—Մենք ի՞նչպէս կանցուենք այս աշխարհի ներկայ կեանքը։

—Մարդկային փորձառութեամբ՝ կարելի է այսպէս պատասխանել, Թէ Մինչև խելահաս որ կը լինինք, մեր անցեալէն ոչինչ չենք գիտէր. խելահասութիւնիս էլ կը նմանի՝ կէս գիշերէն եռքը սկսող արշալուսին, որ հետզհետէ զգալի կերպով կը լուսաւորուի մինչև արևածագը կը հասնի. կը լուսաւորինք, կը հասկանանք, կը խորհինք, կը խօսինք, կը գործենք. աշխարհի վայելչութիւնները կսկսենք վայելել. մթութիւնը չենք սիրեր, արևմուտին կը թմրինք, քուն կը լինինք. արշալուսին զարձեալ կը զարթնինք. կուտենք, կը լմնենք, և

կը սնանինք. կը խաղանք, կը շարժինք, կը գործենք, և կը կազդուրուինք, և այսպէս օրէ օր, ամսէ ամիս, տարուէ տարի կաճինք ու կը զօրանանք. գոյները կը տեսնենք ու կը ձանաչենք, ձայները կը լսենք ու կըմբռնենք, բուրմունքները կհոտոտենք ու կը զանազանենք, համերը կը ձաշակենք ու կընտրենք, կը շօշափենք ու կգգանք, Թէ սրն է խիտ, սրն է մեղմ. որով և խելամուտ կը լինինք հետզհետէ, կը հասունանանք. խաղերը՝ գործի կը փոխենք ու կը ջանանք, որով մեր պիտոյքները կը պատրաստենք. փորձով ու խրատով՝ աջողակ ու ճարտար արուեստաւոր կը լինինք, ու մեր վաստակը կը դիւրացնենք, կը թեթևցնենք, կարագացնենք։ Խմաստուններու փորձերովը խրատուած, պատմութիւններով հմայացած՝ աւելի ևս խելահաս կը լինինք, ու մարդու անցելոյն՝ անհուն հնութիւնը, և ապագային՝ անեզր յաւիտենականութիւնը կը նշմարենք. հետամուտ կը լինինք, որ Թէ անցելոյն սկիզբը, և Թէ ապագային կատարածը գիտնանք. կը պնդենք, կը փընտռենք, ու ⸗⸗⸗⸗ծ ⸗⸗ ⸗⸗⸗⸗⸗։ Յայտնութիւնները կը կարդանք, Աստուծոյ կը հաւատանք, կը կնքենք զմեզ Յանուն Հօր, և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. մտքի ամբոխումներէն կը հանգչինք, կատարեալ կը լինինք։ Աստուծոյ երկիւղովն զգօնացած՝ պիտանիին կը հետևինք, անպիտանէն կը հրաժարինք. չարը կը մերժենք, բարին կընտրենք. աճած, մեծացած, չափահաս եղած՝ արբունքնիս կզգանք, ու կամուսնանանք,—հայր մայր կը լինինք։ Աստուած կուտայ նոր զաւակ, զաւակ՝ որ կատարեալ մարդու տիպն է բոլորովին, բայց տկար ու անգէտ ամենևին. և որ իւր տկար զօրութիւնովն ու անխօս ձայնով, և գաղտնի մի մագնիսականութեամբն կը գրաւէ զմեզ բոլորովին, և նորա խնամքովը կը զուարճանանք. և այս զուարճութեան սիրահարուած՝ մեռնել չենք ուզեր, անմահութիւն կը փնտռենք. և զոր Աստուծոյ մէջ կը գտնենք՝ վասն որոյ և նորա սիրովը

վառուած և յարուԹեան յուսով լցուած՝ յաւիտենականին կը դիմենք, գերեզմանէն անդին եղած ՃանապարհորդուԹեան պատրաստուԹիւններով, վառ Ճրագներով ու ջահերով և անհատ ուղով լուսաւորուած։—Այս է կատարեալ մարդուն ներկայ կեանքը՝ զոր կանցունէ աբեգական տակ. և Աստուած՝ այս կեանքը կը պահանջէ Ճշմարիտ քրիստոնեայէն։ Այսպէս կը սորվեցնեն ԹԷ աստուածային յայտնուԹեան օրէնքները, և ԹԷ Աստուծոյ Որդւոյն Յիսուս Քրիստոսի խրատները ու շնորհքն։

Դ. ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՅԱՅՏՆՈՒԹԻՒՆՆԵՐԷՆ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՆԵՐ

1. Աբրչփոքծո-Լէ-. Ե Ադամ. «Աստուած սկիզբէն ստեղծեց երկինքն ու երկիրը։ Երկիրն աներեւոյԹ ու անպատրաստ էր. և անդունդներուն վերայ խաւար էր. և Աստուծոյ հոգին ջրերուն վերայ կը շրջէր։ Աստուած ասաց.—Թող լոյս լինի—.և լոյս եղաւ։ Ասաց.—Թող բաժանուին ջրերը, և հաստատուԹիւն լինի ջրերուն մէջ—.և այնպէս եղաւ, և հաստատուԹիւնն՝ երկինք անուանեց։ Ասաց—Երկնքի տակի ջրերը Թող մի տեղ ժողովուին, և ցամաքն երեւի—.այնպէս եղաւ. ցամաքն երկիր անուանեց, ջուրը՝ ծով։ Ասաց—Թող երկիրը՝ բոյսեր բուսցնէ, ու պտղատու ծառեր, ամեն մէկին սերմն իրեն վերայ—.և այնպէս եղաւ։ Ասաց—Լուսաւորները Թող լինին երկնքի հաստատուԹեան մէջ—.և այնպէս եղաւ։ Ասաց—Շնչաւորները Թող լինին ծովերում, և Թռչունները՝ երկրի վերայ—.և այնպէս եղաւ, և Աստուած օրհնեց շնչաւորներին, որ աճին, բազմանան։ Ասաց—երկիրը՝ Թող հանէ տեսակ տեսակ կենդանիները, սողունները, չորքոտանիները, գազանները—.և այնպէս եղաւ։

«Աստուած՝ մարդն էլ ստեղծեց իւր պատկերին համեմատ. արու և էգ ստեղծեց. և օրհնեց ու ասաց.

—Աճեցէք, բազմացէք, երկիրը լցուցէք. տիրեցէք դորան. և իշխեցէք ծովի ձուկերուն, երկնքի Թռչուններուն, և բոլոր երկրին, բոլոր անասուններուն, և բոլոր սողուններուն—։Աստուած՝ մարդուն կերակուր լինելու սահմանեց բոլոր սերմանելի բանջարները ու պտղատու ծառերը։ Անասուններուն ու Թռչուններուն էլ կերակուր սահմանեց բանջարները, պտուղները, և ամեն կանաչ խոտերը։

«Աստուած ստեղծեց մարդուն դեմքի հողէն, և նորա երեսին կենդանի շունչ փչեց. և մարդն եղաւ ։Էնոքմէ հոգի։ Աստուած արեւելքումն Եդեմի մէջ տնկեց դրբաքատը, և ստեղծած մարդը՝ այն տեղ դրաւ, որ աշխատի և պահէ։ Աստուած պատուիրեց Ադամին՝ և ասաց.—Այդ դրախտին մէջ կեցած ամեն ծառերէն կրնը. բայց՝ բարին ու չարը գիտնալու ծառէն մի ուտէք. զի ո՛ր օր էլ որ ուտէք, կը մեռնիք։—Ադամ ու նորա կինը նեայ՝ մերկ էին և չէին ամաչէր։

«Առաջին կինն Եւայ՝ օձէն խաբուեցաւ, ու Աստուծոյ արգելած ծառին պտուղէն կերաւ. և Ադամին էլ կերցրուց. և ուտելնուն պէս՝ յանկարծ աչքերնին բացուեցաւ, և գիտցան, որ մերկ էին, և ամչցան, ու Թուզի տերևներէ սփածանելի կարեցին իրենց։ Աստուծոյ ոտնաձայնը՝ որ լսեցին, վախան, պահուեցան։ Կանչեց Աստուած Ադամին, և հարցուց—ո՞ւր ես—։

—Ոտքիդ ձայնը լսեցի, վախցայ, որովհետև մերկ էի, պահուեցայ։

—Ո՞վ ասաց Թէ մերկ ես. միԹէ այն ծառէն՝ որմէ միայն չուտել պատուիրեցի՝ կերար։

—Այս կինը՝ զոր ինձ տուիր, սա տուաւ, և կերայ։

«Կինն էլ ասաց.—Օձը խաբեց զիս, և կերայ։

«Աստուած բարկացաւ Եւային, և ասաց.—Բազմացնեմ քո տրտմուԹիւնն ու հեծուԹիւնը. տրտմուԹիւնով ծնիս զաւակներ, և քո երկանդ դառնաս, ու նա տիրէ քեզ—։

«Աստուած Ադամին էլ բարկացաւ, ու ասաց.—Որովհետև այդ կնկանդ խօսքին մտիկ արիր, և կերար այն ծառէն, որմէ չուտել պատուիրեցի, անիծեալ լինի երկիրը քո գործերումդ, տրտմութիւնով ուտես զայն քո բոլոր կեանքումդ, երեսիդ քրտինքովն ուտես քո հացը, և որ հող էիր, հողին դառնաս—: Աստուած՝ Ադամին ու Եւային կաշկէ հանդերձ հագցուց, դրախտէն հանեց, որ երկրագործութիւն անեն»:

Կատարելութեան ցանկացող մարդն՝ արարչագործութեան այս պատմութիւնը կարդալով, կը հմտանայ.—Թէ բոլոր աշխարհին՝ երկինքին, երկրին, և նոցա մէջ գտնուած ամեն բաներուն արարիչն Աստուած է. Թէ այս ամեն արարածները կաճին Աստուծոյ հրամանովն ու օրհնութիւնովն, և իրենց օրէնքին մէջ անփոփոխ կը յարատևեն: Եւ Թէ մարդուն ստեղծեց Աստուած հողէն, և երեսին փչեց, ու կենդանի հոգի տուաւ. օրհնեց, որ աճի, բազմանայ և երկրին տիրէ, ու բոլոր կենդանիներուն իշխէ. Թէ Աստուած՝ Ադամին՝ դրաւ բազմաջուր ու բազմաբեր դրախտին մէջ, որ պահպանէ. Թէ Աստուած պատուիրեց՝ որ մեռցնող ծառին պտուղէն չուտեն, որ չմեռնին. բայց նոքա՝ Աստուծոյ այս մէկ հատիկ արգելքին չհնազանդեցան, ու ամչցան. Թէ Աստուած՝ բարկացաւ Ադամին ու Եւային վերայ, անիծեց նոցա գործը, որ այնուհետև քրտինքով, դժուարութիւնով, և տրտմութիւնով ապրին, մինչև որ մեռնին, հող դառնան. Թէ Աստուած՝ դրախտէն դուրս հանեց Ադամին ու Եւային, որ երկրագործութիւն անեն. և Թէ մարդկան կեցակուրն էր բանջարեղէն, հնտեղէն, և մրգեղէն:

2. Աբրահամ առաջին որդին. «Ադամ որ առաջին զաւակն ունեցաւ, անունը Կայէն դրաւ, որ ասել է Ստացուած: Երկրորդ որդին որ ունեցաւ, անունը Հաբէլ դրաւ: Կայէն երկրագործ էր, և Հաբէլ՝ ոչխարի հովիւ էր: Կայէն ընծայ բերաւ Աստուծոյ՝ երկրի բերքերէն, Հաբէլ՝ իւր ոչխարներու անդրանիկներէն ու պարարտներէն. Աստուած՝ Հաբէլին ու նորա ընծային հաւնեցաւ, իսկ Կայինին ու նորա ընծային չհաւնեցաւ: Կային այս դէպքին վերայ տրտմեցաւ, և վեր չէր կարողանայ նայել: Աստուած ասաց Կայինին.

—Ինչո՞ւ այդքան երեսդ կախուեցաւ, ո՞չ ապաքէն Թէ որ ուղիղ ընծայես, ու ուղիղ չբաժանես, յանցանք գործած ես: Գնա, եղբայրդ քեզ կը հնազանդի, Կայինի նախանձը՝ քանի գնաց, սաստկացաւ. Հաբէլին դաշտ տարաւ, սպանեց: Աստուած հարցուց Կայինին, Թէ—Ո՞ւր է եղբայրդ—:«Չեմ գիտեր, ասաց Կային, մի՞թէ ես եղբօրս պահապանն եմ: Աստուած բարկացաւ Կայինին և ասաց.—Այդ ի՞նչ գործեցիր, ահա եղբօրդ արիւնին ձայնը՝ գետնէն կը բողոքէ ինձի. անիծեալ լինիս դուն այն երկրի վերայ, որ իւր բերանը բացաւ եղբօրդ արիւնն ընդունելու քու ձեռքէդ: Գործես երկիրը, և նա այլ ևս իւր զօրութիւնը չտայ քեզ. երերեալ ու տատանեալ լինիս երկրի վերայ: Կային՝ այս անէծքը որ լսեց, ասաց Աստուծուն:

—Պատիժս մեծ է՝ զիս ձգելու չափ: Եթէ այսօր զիս հանես երկրի երեսէն, և քո երեսէդ պահուիմ, և երկրի վերայ երերեալ ու տատանեալ լինիմ, կրնայ լինել, որ զիս տեսնողը՝ զիս սպաննէ:

—Ո՛չ, պատասխանեց Աստուած. Կայինին սպանողը՝ եօթնապատիկ վրէժ պիտի լուծէ: Եւ Կայինին վերայ նշան դրաւ Աստուած, որ ոչ ոք նորան չսպաննէ. և երերեալ ու տատանեալ մնայ»:

Առաջին մարդուն այս երկու առաջին որդւոց պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացող մարդուն կը հմտացնէ. Թէ մարդու ամենագլխաւոր արհեստները են երկրագործութիւն և կենդանաբուծութիւն: Եւ Թէ մարդու ձեռքին գործն՝ Աստուած կը յաջողցնէ երկրի վերայ. վասնորոյ և մարդիկ՝ շնորհակալութեան պատարագ—ընծայ պիտի մատուցանեն Աստուծոյ. և ով որ իւր ձեռքի վաս-

տակին լաւերէն առաջին երեխայերնեերէն մատուցանէ ուղիղ սրտով, Աստուած նորա վերայ և նորա ընծային վերայ կը նայի օրհնութեամբ. իսկ ով որ ժլատութեամբ և ագահութեամբ մատուցանէ, նորա ընծային չնայիր։ Եւ թէ Աստուած՝ անպատրա տեղն սպանուածներուն արիւնին բողոքի ձայնը կը լսէ, և սպանող ընկերէն վրէժ կը խնդրէ. անիծելով նորա ձեռքի գործը, որ բնաւ աջողութիւն չտեսնէ երկրի վերայ։

3. Աաջին մարդոյն ծերութիւնը. Նահապետներ։ Ադամ նախահայրը՝ մի որդի ևս ունեցաւ, և անունը դրաւ Սէթ, որ ասել է Աստուած ուրիշ զաւակ հատեց ինձ։ Կայինի՝ իւր եղբայրասպանութեան պատճառաւն Աստուծոյ օրհնութենէն զրկուեցաւ, նորա տեղը Սէթ՝ Ադամայ անդրանիկն համարուեցաւ։ Սէթայ անդրանիկն էր Ենովս։

Ադամ երկու հարիւր երեսուն տարեկան էր, երբ Սէթ անդրանիկը ծնաւ. այնուհետև եօթն հարիւր տարի ևս ապրեցաւ, շատ մանուկներ և աղջիկներ ունեցաւ և 930 տարեկան մեռաւ։

Սէթ՝ 205 տարեկան էր, երբ Ենովս՝ անդրանիկը ծնաւ. 707 տարիներ ևս ապրեցաւ, աղջիկներ և տղաներ ունեցաւ, 912 տարեկան մեռաւ։

Ենովս՝ 190 տարեկան էր՝ ծնաւ իւր անդրանիկը՝ Կայնան. 715 տարիներ ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ, 905 տարեկան մեռաւ։

Կայնան՝ 170 տարեկան էր, ծնաւ Մաղաղայէլ, 740 տարի ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ, ու 910 տարեկան մեռաւ։

Մաղաղայէլ 165 տարեկան էր, ծնաւ Յարեդ. 730 տարի ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ, և 895 տարեկան մեռաւ։

Յարեդ՝ 162 տարեկան էր, Ենոք ծնաւ. 800 տարի ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ, և 962 տարեկան մեռաւ։

Ենոք 165 տարեկան էր, Մաթուսաղայ ծնաւ. 200

տարի ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ, և 365 տարեկան էր, երբ Աստուծոյ հաճոյ երևցաւ, և Աստուած վերցուց նորան։

Մաթուսաղայ 187 տարեկան էր, Ղամեք ծնաւ. 782 տարի ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ, 969 տարեկան մեռաւ։

Ղամեք 188 տարեկան էր, Նոյ ծնաւ. և ասաց Ղամեք. սա պիտի հանգչեցնէ գմեզ մեր գործերէն և մեր ձեռքի տրտմութիւններէն, և ցեղս Աստուծոյ անիծած երկրէն։ Ղամեք 565 տարի ևս ապրեցաւ, աղջիկներ ու տղաներ ունեցաւ. և 753 տարեկան մեռաւ։

Նոյ 500 տարեկան էր, և երեք որդիք ունէր՝ Սեմ, Քամ, Յաբեթ։

Կայինի՝ որ Աբելին սպանեց՝ առաջին անգամ քաղաք չինեց և իւր որդւոյն անունովն կնոք անուանեց։ Կայինի սերունդէն Լենգերոդը՝ (Թոռանը՝ Թոռին որդին) Ղամեք՝ երկու կին առաւ։ Սորա որդիքն էին Յովբէլ, Յովբաղ, Թորբէլ։ Յովբէլ՝ խաչնարածներու վրանարնակութիւնն սկսեց։ Յովբաղ՝ երգ ու քնար յօրինեց։ Թորբէլ՝ դարբնութիւն և պղնձագործութիւն սկսեց։

Ադամայ սերնդոց այս նահապետական հնախօսութիւնը՝ կատարելութեան ցանկացող մարդկանց՝ այն հմտութիւնը կուտայ. թէ նահապետներն ամէնքն էլ 900 տարիէն աւելի երկայն ժամանակներ կ՚ապրէին։ Եւ թէ Նոյն ծնած ժամանակն արդէն իսկ՝ աշխարհի մարդկանց բարքն ուրուած էր, և Նոյն ծնողքը ցանկացան, որ նա՝ հանգչեցնէ իրենց չար գործերէն և իրենց ձեռքի տրտմութիւններէն։ Սրտի այս հառաչանքն ունեցող Ղամէք նահապետը՝ իւր նախահայրերէն 100 տարիով աւելի ժամանակ կանուխ մեռաւ։ Եւ թէ Աստուծոյ հաճոյ վարք ու կեանք ունեցող կնոքին փոխեց Աստուած ծչաը մարդկանց մէջէն։ Եւ թէ Կայինի սերունդէն եղող Ղամէքն առաջին մարդն է, որ երկու կին առաւ՝ խառնակեաց անասուններու օրինակին հետևելով,

4. Սէթ. Զրհեղէն. Նոյ։ Երբ նահապետաց որդիքը բազմացան, Կայինէ սերնդոյ մէջ աղջիկները չատացել էին. Սեթայ որդիները սկսեցին Կայինէ սերնդեան աղջիկներէն իրենց ուզածն առնուլ, այս (կրկին և աւելորդ) զուգութենէն ծնեցան ու առաջացան Սէոնները՝ որ իրենց հայրերու շաւղէն դուրս ելնող մարդիկ էին։ Աստուած բարկացաւ մարդկանց ապականութեան վերայ, և ասաց. «Իմ հոգին դոցա վերայ Թող չմնայ՝ դոցա մարմին լինելուն համար, (այսինքն Թէ բանական հոգւոյն մտաց չէին հետևեր, այլ սոսկ անբան մարմնոյ ցանկութիւններուն կը հետևէին.) և պիտի լինին դոցա կենաց օրերն հարիւր քսան տարի միայն»։ Նոյ միայն արդար էր և հաճոյ Աստուծոյ. Աստուած հրամայեց Նոյին մի տապան շինել, և իւր ընտանիքովն և ամեն տեսակ անասուններու և Թռչուններու և սողուններու զոյգերով և եօթնեակներով մտնել այն տապանին մէջ, որովհետև պիտի ջնջէր Աստուած աշխարհի բոլոր մարմինները։ Նոյ հարիւր տարի շարունակ այս տապանը շինեց, վեց հարիւր տարեկան էր, տապանը մտաւ Աստուծոյ հրամայածին համեմատ և ամեն տեսակ անասուններէն ու Թռչուններէն ունէր իրեն հետ։

Երկնքի ու երկրի դռները բացուեցան, և քառասուն օր ու գիշեր սաստիկ անձրև եղաւ. ջրերը չատացան. և բարձր լեռներէն տասնհինգ կանգուն վեր բարձրացան. այնպէս որ երկրի վերայ եղող ամեն կենդանիները մեռան և ջնջուեցան։ Աստուած սաստիկ քամիները հանեց. և երկրի երեսէն ջրերը ցամքեցան ու պակսեցան. Նոյի տապանը՝ Արարատայ լեռները նստաւ։

Նոյ՝ տապանէն ելաւ, Աստուծոյ սեղան շինեց, սուրբ անասուններէն ու սուրբ Թռչուններէն ողջակէզ արաւ. Աստուած ընդունեց Նոյի պատարագը՝ և օրհնեց Նոյան և նորա որդիքը. և ուխտ արաւ որ այլ ևս ջրհեղեղ չանէ. այլ քանի որ երկիրը կայ, գարունն ու ամառը, ցուրտն ու աշունը՝ անխափան լինին. նոյնպէս

սերմանելն ու հնձելը։ Աստուած օրհնեց Նոյին և նորա որդւոցը՝ և ասաց. «Աճեցէք ու բազմացէք, երկիրը լեցուցէք, և երկրին տիրեցէք. բոլոր կենդանիները ձեր ձեռքին կամ իշխանութեան տակը լինին. գազաններն էլ վախենան ձեզմէ. և ձեռուն կենդանիներու միսը ձեզ կերակուր լինի ինչպէս բանջար, միայն Թէ չնչովն ու արիւնովը միասին չուտէք»։ Աստուած սպառնացաւ արիւն Թափող մարդուն և գազանին, և ասաց. «Որովհետև Աստուծոյ պատկերին համեմատ ստեղծեցի մարդուն, նորա արիւնը պիտի խնդրեմ ամեն սպանողէ. այնպէս որ ամեն սպանողն արիւնը պիտի Թափուի»։

Այս պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացող մարդկանց կը հմտացնէ. Թէ Աստուած՝ ապականեալ մարդկին ջնջելու ժամանակ՝ դարձեալ կողոմն արդարին, և նորա սերունդը կազատէ։ Թէ Աստուծոյ հրամանէն կամ օրէնքէն դուրս ելնող մարդիկն իրենց բարքը կապականեն, երկու կին առնուլը՝ մարդու բնութենէն դուրս ապականութիւն է։ Թէ Աստուած արդարին ընծան կընդունի ու կօրհնէ։ Թէ Աստուած օրէնք տուաւ մարդկանց ջրհեղեղէն ետքը, որ կենդանիի միս ևս ուտեն՝ արիւնը Թափելէ ետքը. և մարդկան կերակուրի տեսակն աւելցաւ, այն է, քաղցրենէն, ընդեղէն, տիեղէն և հողեղէն։ Դարձեալ կը սորվեցնէ այս պատմութիւնը, Թէ քիչ ապրելն ևս Աստուծոյ պատիժն է մարդկանց վերայ, իրենց չարութեանը համար դրուած։ Թէ մարդասպանէն և գազանի բնութեամբ վարուողէն վրէժ պիտի խնդրէ Աստուած։

5. Նոյի ներքնաքը. Սեմ. Քամ. Յաբեթ։ Նոյ երկրագործ էր. այգի տնկեց, և մի օր գինիով հարբած, ու մերկացած պառկիլ էր. Քամ որ տեսաւ, ծիծաղեցաւ, և պատմեց եղբայրներուն. նոքա մի ծածկոց առին, և դէպ ի յետ երեսնալով ծածկեցին իրենց հօր մերկութիւնն առանց նայելու։ Նոյ որ իմացաւ, օրհնեց իւր որդիքն ու ասաց. «Աստուած օրհնէ Սեմին, ընդարձակութիւն տայ

Ցաբեթին՝ որ բնակի Սեմայ Երկրումը. անիծեալ լինի Քանան մանուկը, և ծառայ լինի իւր եղբայրներուն»։ Ցաբեթ աճեցաւ որդւոց որդի. սորա որդին է Գամեր, և ուրիշները. Գամերի որդին՝ Թորգոմայ։

Սեմ 100 տարեկան էր ծնաւ Արփաքսադ. 500 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 600 տարեկան մեռաւ։

Արփաքսադ 135 տարեկան էր, ծնաւ Սաղայ. 330 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 465 տարեկան մեռաւ։

Սաղայ 130 տարեկան էր, ծնաւ Եբեր. 330 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 460 տարեկան մեռաւ։

Եբեր 134 տարեկան էր, Փաղեկ ծնաւ. 270 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 404 տարեկան մեռաւ։

Փաղեկ 134 տարեկան էր, Ռագաւ ծնաւ. 209 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 343 տարեկան մեռաւ։

Ռագաւ 132 տարեկան էր, Սերուք ծնաւ. 207 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 339 տարեկան մեռաւ։

Սերուք 130 տարեկան էր, Նաքովր ծնաւ. 200 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 330 տարեկան մեռաւ։

Նաքովր 79 տարեկան էր, Թարայ ծնաւ. 122 տարի ևս ապրեցաւ, աղջիկները ու տղաները ունեցաւ, և 201 տարեկան մեռաւ։

Թարայ 70 տարեկան էր, Աբրամ ծնաւ. 135 տարի ևս ապրեցաւ և 205 տարեկան մեռաւ։

Այս պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացող մարդկանց կը հմտացնէ, թէ Հօր օրհնութիւնը՝ որդւոյն՝ տէր կանէ և ազատ. իսկ անէծքը՝ ծառայ։ Եւ թէ Աստուծոյ օրհնութեամբ՝ քիչերը մարդիկը շուտով կը բազ-

մանան։ Եւ թէ Աստուծոյ հրամայածին պէս մարդկանց կեանքն հետզհետէ նուազելով, կը հասնի դէպի 120 տարիներուն։ Նոյն օրհնութիւնը մի գուշակութիւն է. Սեմայ սերունդը տէր պիտի լինի. Ցաբեթը խիստ պիտի ընդարձակի, և Սեմայ տունը բնակի։ Քամի սերունդը՝ Սեմայ և Ցաբեթի սերունդին ծառայ պիտի լինի։— Մի գուշակութիւն որ այսչափ դարերէ ի վեր մինչև այսօր կը կատարուի։ Քանանու սերունդէն են սևամորթի և սևադէմ ազգերը՝ բազմացած հարաւային երկրներում։

6. Բաժանումն երկրաներու. Սեմայ Թոռանը Թոռին Փաղեկի օրերը՝ Սեմայ, Ցաբեթի և Քամայ որդիքը երկիրը բաժանեցին, և Արարատայ երկրէն ցրուեցան, դէպի արևելք, հարաւ և արևմուտք։ Հարաւային կողմերն անցնողները՝ Սենաար կոչուած ընդարձակ դաշտը՝ որ հասան, այն տեղ խորհեցան, որ մի քաղաք և մի բարձր աշտարակ շինեն, որոյ ծայրը մինչև երկինքներն հասցնեն. և իրենց անուն Թոզուն իրարմէ բաժանուելէ յառաջ։ Մինչև երկինք հասնելու ձեռագործ շինուածքով իրենց անունն անմահացնելու այս խորհուրդին՝ բարկացաւ Աստուած. և խառնակեց նոցա լեզուն, որ այլ ևս իրարու չհասկանալով ցրուեցան գնացին և գործը կիսաւեր մնաց, և տեսակ տեսակ լեզուներով շատ ազգեր բաժանուեցան։

Այս պատմութեան մասին հին պատմիչները կասեն. Թէ Մարդիկ վոխանակ Աստուծոյ հրամանին համաձայն երկրի վերայ աշխատելու և ապրելու, իրենց սրտի յօժարութիւններուն կը հետևէին. և վախենալով, որ մի գուցէ Աստուած նորէն ջրհեղեղ անէ և կորսուին, այս աշտարակը շինել խորհեցան, որ ջրհեղեղէ ազատ մնան։ Բայց մարդիկ ազատ և ապահով կը լինին միայն Աստուծոյ հրամանները պահելով, և նոցա համեմատ ապրելով։

7. Աբրահամ հայրապետը. Սեմայ որդիներէն Նոյի տաս-

ներօրդ սերնդեան անգրանիկին Աբրամ՝ իւր Հօր հետ Փադդէացւոց (Սենաար) երկրէն ելլաւ և Խառան կը բնակէը։ Այն ժամանակ երկրի բնակիչներն ամենքն ալ Աստուծոյ երկիւղը սրտերնէն հանած և գազանի պէս կապրէին. Աստուած Աբրահամու արդարութեանը համեցաւ, և կանչեց նորան դէպի Քանանու երկիրն ասելով. «Ելլիր քո երկրէն, քո ազգէն և հօրդ տունէն, և եկուր այն երկիրը՝ որ ցուցնեմ քեզ. և քեզի մեծ ազգ կանեմ. կօրհնեմ, անունդ կը մեծցնեմ, և օրհնեալ կը լինիս... և աշխարհի բոլոր ազգերը քեզմով օրհնուին»։ Աբրամ՝ որ զաւակ չունէր ամենևին, և իւր կինը Սարա ամուլ էր, հաւատաց Աստուծոյ այս խոստումին և ելաւ տնով տեղով՝ գնաց Քանանացւոց երկիրը։

Աստուած Աբրամու հաւատքն ընդունեց, և երկրորդ անգամ խոստացաւ Աբրամին՝ Քանանացւոց երկրումն, Թէ «Քո զաւակին պիտի տամ այս երկիրը». Աբրամ որ անզաւակ էր, դարձեալ հաւատաց Աստուծոյ խոստումին, և Սեղան շինեց Աստուծոյ երևցած տեղումն։ Աբրամ սովէն նեղուելուն կրելով Եգիպտացւոց երկիրն անցաւ. Եգիպտոսի Փարաւոնը՝ (Թագաւորը) երբ իմացաւ Սարայի գեղեցկութեան մասին, իրեն կին առաւ. և Աբրամին շատ պատիւ տուաւ։ Աստուած մեծ պատիժ ու չարիք հասցուց Փարաւոնին և նորա տանը, մինչև արձակել տուաւ Սարային, յայտնելով նորան, Թէ Սարան երիկ ունեցող կին է։ Փարաւոն կանչեց Աբրամին և նեղացաւ, որ սուտ էր ասել Սարայի համար՝ Թէ քոյրս է. և պատուեց նորան ու Ճամբեց։ Աբրամ ներողութիւն խնդրեց Փարաւոնէն, որ վախենալով, Թէ մի գուցէ զինքը մեռցնեն, Սարային համար ասել էր, Թէ քոյրս է։ Աբրամ Եգիպտոսի մէջ շատ հարստացաւ։ Եկաւ Քանանացւոց երկիրը իւր շինած Սեղանին տեղն. ու Աբրամ կանչեց, և Աստուծոյ անունը իրեն սպաւէն ընդունեց։ Աստուած երրորդ անգամ ե-

րևցաւ Աբրամին և ասաց. «Նայիր այդ երկինքը չորս կողմէդ, հիւսիսէն, արևելքէն, հարաւէն և արևմուտքէն, քեզ պիտի տամ այդ տեսածդ բոլոր երկիրը, և քո զաւակին, մինչև յաւիտեան, և քո զաւակդ երկրի աւազին չափ պիտի բազմացնեմ»։ Աբրամ հաւատաց Աստուծոյ խոստումին, և զաւակ չունէր։ Այնուհետև Աբրամ՝ լսեց, որ արևելքի չորս Թագաւորները եկեր և Յորդանանու սահմաններու հինգ Թագաւորաց յաղթեր, նոցա ժողովուրդը գերի առեր և գնացեր են, և իւր եղբօրորդին Ղովա՝ գերի է բռնուել, Աբրամ իւր 318 ծառաներովն այն չորս Թագաւորաց ետևէն հասաւ մինչև Դամասկոսի սահմանները, գերիներն ազատեց, և աւարները դարձոյց իրենց տէրերուն։ Մելքիսեդեկ քահանայն Աբրամին դիմաց ելաւ և օրհնեց նորան, և Աբրամ տասանորդ տուաւ։ Սոդոմայ Թագաւորն էլ ընդառաջ ելաւ Աբրամին։ Չորրորդ անգամ հրևեցաւ Աստուած Աբրամու. և ասաց. «Մի վախենար, ես քեզ վերակացու պիտի լինիմ, և քո վարձդ խիստ շատ պիտի լինի»։—Ի՛նչ պիտի անես ինձ տէր, ահա ես անզաւակ կը կորսուիմ, Թող Մասիկայ ընդոծնիս որդին ինձ ժառանգ լինի։—Չէ, նա պիտի չժառանգէ քեզի, այլ քեզմէն ելնելիք զաւակը. Բէլ, երկինքին նայէ, ու համրէ աստղերը, կարող ես համրել, այնպէս անթիւ պիտի լինի քո զաւակը»։ Հաւատաց Աբրամ և այս արդարութիւն համարուեցաւ։ Աբրամ ընծայ տուաւ Աստուծոյ՝ երեք տարեկան մի երինջ, երեք տարեկան մի այծ, և երեք տարեկան մի ոչխար. տատրակ և աղաւնի. Թռչունները ողջ ողջ, և միւսները մանրած դէմ ու դէմ դրաւ. արևը մտնելու ժամանակ Թմրութիւն եկաւ Աբրամին վերայ. և ասուեցաւ իրեն. «Գիտցիր որ քո զաւակն օտար երկիր պիտի մնայ, և չորս հարիւր տարի պիտի չարչարեն ու նեղեն. և իրենց չորրորդ ազգը (սերունդը) պիտի դառնան այս տեղ. և ես պիտի դատեմ նոցա չարչարող ու ծառայեցնող ազգին. իսկ դուն բա-

ըլ ծերուԹեամբ պիտի վախճանիս». և ահա տեսաւ Աբրամ, որ հնոց մի կը ծխար, և բոցեր ու ճառագայԹներ մանրած մսերուն միջը կը մտնէին։ Հինգերորդ անգամ երևեցաւ Աստուած Աբրամին, և ասաց. «Ես եմ քո տէր Աստուածը. հաճոյ եղիր իմ առջև, ու անարատ եղիր, և քեզի կը բազմացնեմ շատ շատ։ Քեզի շատ ազգերու հայր կանեմ. անունդ այսուհետև Աբրամ չ. և Սարային անունը Սարրայ։ Դու և բոլոր տանդ մէջ գտնուող արուներն Թլփատուեցէք. և այս նշան լինի իմ ուխտին, որ կընդունիք. ամեն նորածին մանուկ ուԹօրեայ կը Թլփատես. և ահա Սարրան որդի կը ծնի քեզ, և կօրհնեմ նորան»։ Աբրահամ լննսուն և ինը տարեկան էր և Սարրայ լննսուն տարեկան։ Աբրահամ հաւատաց և Թլփատեցաւ, ու Թլփատեց իւր տան բոլոր արուները։ Վեցերորդ անգամ երևեցաւ Աստուած Աբրահամու Մամբրէի կաղնիին մօտ. երեք հոգիներ կային վերևումն, Աբրահամ ընդ առաջ վազեց, իւր վրանը հրաւիրեց, մեծարեց. հարցուց տէրը Աբրահամին.—Կինդ ո՞ւր է. և կոդ տարի այս ժամանակ դարձեալ կուգամ, և Սարրային զաւակ կը լինի». Աբրահամ հաւատաց և կսպասէր Աստուծոյ խոստման կատարուելուն։ Աստուծոյ խոստացած ժամն հասաւ, և Սարրայ ծնաւ. Աբրահամ՝ Իսահակ կանչեց անունը և ուԹօրեայ Թլփատեց. կաԹէն կտրելու որ հասաւ, մեծ ուրախուԹիւն արաւ։ ԵօԹնեղորդ անգամ երևեցաւ Աստուած Աբրահամու, և ասաց որ իւր սիրելի որդին Իսահակը ողջակէզ անէ։ Հնազանդեցաւ Աբրահամ և գնաց Աստուծոյ նշանակած լեռը. սեղան շինեց, փայտ կոտրեց, Իսահակին կապեց վերան, և Թուրը քաշած որ պիտի յօշէր, կանչեց հրեշտակը, և արգելեց. Աբրահամ աչքը վերցուց տեսաւ որ մի ոչխար կախուած կայ ծառէն. առաւ այն ոչխարն ողջակէզ արաւ. և այն տեղին անունը Տէր Եհռ կանչեց։ Աստուծոյ հրեշտակն երկնքէն երկու անգամ կանչեց Աբրահամին, ու ասաց. «Իմ անձին վերայ երդումն արի

կասէ՝ Աստուած. որովհետև դու այդ բանն արիր, և իմ համար չխնայեցիր և քո սիրելի որդւոյն, այն չատ պիտի օրհնեմ քեզի, և չատ բազմացնեմ քո զաւակն՝ ինչպէս երկնքի աստղերը»։

Այս պատմուԹիւնը՝ կատարելուԹեան ցանկացող մարդկանց կը հմտացնէ. Թէ Աստուած իրեն օրէնքները պահող արդարին կը պահպանէ ամեն դէպքում. չարերուն մէջէն կը հանէ և առանձին երկրում կը զօրացնէ. սովի ժամանակն անգամ կը հարստացնէ. ծերուԹեան ժամանակը զաւակի հայր կանէ. Թշնամի Թագաւորներու վերայ յաղԹող կանէ. իւր քահանային կը խրկէ հօրհնէ. ակար Թագաւորներուն պատուելի կանէ. և ինչ որ մարդկային խելքով ու հնարքով անկարելի է, Աստուած այն ամենը կարելի կանէ։ Կրկին և կրկին անգամներ, եօԹն անգամ կերևի և ուխտով ու երդումով իւր խոստումը կը հաստատէ։

8. Իսահակ։ Սարրայ՝ Աբրահամու կինը մեռաւ. Աբրահամ խորհեցաւ ամուսնացնել Իսահակին, և ինքն ծերացել էր. կանչեց Աբրահամ իւր ասագ ծառային, և երդումն անել տուաւ, որ երկայ Խառան՝ Աբրահամու ազգի տունը, և այն տեղէն հարսնացու բերէ իւր որդւոյն Իսահակին. և չլինի, Թէ Քանանացի կին առնու Իսահակին, կամ Քաղդէացւոց երկիրը տանի Իսահակին, եԹէ այն տեղէն հարսնացուն գալ չուզէ։ Աբրահամու ծառայն պատրաստուեցաւ և Ճանապարհորդեց դէպ ի Խառան. երբ քաղաքն հասաւ, ջրհորին մօտ կանգնեցաւ, ուղտերը նստեցուց, մինչև որ իրիկուան ջրուորը ջրի կը գային։ Ահա եկաւ հասաւ մի գեղեցիկ կոյս. և իջաւ ջրհորն, ամանը լեցուց ու դուրս եկաւ։ Խնդրեց Աբրահամու ծառայն, որ մի ջուր խմցնէ իրեն. կոյսն իսկոյն երկնցուց սափորը, և խմցուց. և ապա ասաց. «ԵԹէ կը կամիս, իջնեմ ուղտերուդ ևս ջուր հանեմ», և այս ասելով, սափորն աւազանը պարպեց, իջաւ նորէն ջուր հանեց, մինչև բոլոր ուղտերուն խմցուց։ Աբ-

բահամու Ծառայն հարցուց.—Ո՞րու աղջիկն ես դու։—Բաթուելի աղջիկն եմ Ռեբեկայ։—Ձեր տան մէջ լջեվանի տեղ կայ։—Կայ, մենք ուղտերուդ էլ տեղ ունինք. և խոտ ու յարդ շատ ունինք։ Աբրահամու Ծառայն ուրախացաւ և հանեց մի ոսկի գինդ՝ նորա ականջն անցուց, և մի ոսկի՝ ապարանջան՝ ձեռքերն անցուց։ Վազեց աղջիկը և պատմեց հօրն ու եղբօրը. և Բաթուելի որդին Լաբան եկաւ տուն հրաւիրեց Ծառային. Աբրահամու Ծառային սերով հիւրընկալեցին. ուղտերուն լջեցուցին յարդ ու խոտ ձգեցին, ըրեն ոտքերը լուացին և սեղան ձգեցին։ Աբրահամու Ծառայն ասաց, Թէ Ձեմ ուտեր, մինչև որ գործս խօսիմ։ Եւ սկսաւ ասել.

«Ես Աբրահամու Ծառայն եմ. Աստուած օրհնեց իմ տէրոջս շատ, և մեծացաւ. և տուաւ նորան կով, ոչխար, արծաթ և ոսկի, ծառաները, աղախինները, ուղտեր և էշեր։ Եւ կինը Սառա՝ ծերութենէն ետքը մի որդի ծնաւ տէրոջս, և ամեն ունեցածը նորան տուաւ։ Տէրս զիս երդուընցուց, ու ասաց.—որդւոյս Իսահակին կին չես առնուր այս տեղի քանանացիներու աղջիկներէն, այլ կերթաս հօրս տունը՝ իմ ազգին, և այն տեղէն կառնուս որդւոյս համար կին—.և ասացի տէրոջս.—Թէ գուցէ կինն ինձ հետ չգայ.—և նա ասաց ինձ.—Տէր Աստուածս՝ որուն ես սկսելի եղայ, իւր հրեշտակը կը խրկէ քեզ հետ, և նա քո ճամբան կը յաջողեցնէ, և իմ ազգէն, իմ հօր տունէն կին կառնուս իմ որդւոյս։ Եւ երբ իմ ազգին երթաս, և չտան, դուն երդումէդ ազատ կը լինիս—։Այսօր որ աղբիւրն հասայ. ասացի ես.—Տէրոջս Աբրահամու աստուած. եթէ աջողեցիր ինձ եկած ճանապարհս, ահա ես աղբիւրին հասել եմ, և այս քաղաքի մարդկանց աղջիկները ջուր առնելու կելլեն. մի կոյս լինի, որուն ես ասեմ. մի վոքը ջուր խմցնուր ինձ սափորէդ. և նա ինձ ասէ. խմիր, ուղտերուդ ալ ջուր հանեմ, այն է կինը, զոր պատրաստեց Աստուած իւր Ծառային Իսահակին. և որով կը գիտնամ, Թէ ողորմութիւն արիր իմ տէրոջս Աբրահամին։ Դեռ այս խօսքս մտքումս չլմնցուցած, ահա կուգար Ռեբեկան, և սափորն ուսին վերայ. աղբիւրն իջաւ, ջուր հանեց. և կասեմ նորան. խմցնուր ինձ. շուտով իջեցուց սափորն ու ասաց. խմիր դուն, ուղտերուդ ալ խմցնեմ. խմեցի. ուղտերուս էլ խմցուց։ Եւ հարցուցի նորան, Թէ—Ո՞րու աղջիկն ես, պատմէ ինձ.—Նաքովրայ որդւոյն Բաթուելի դուստրն եմ։ Եւ նորա ականջները գինդ դրի, և ձեռքերն ապարանջան. ուրախացայ, երկրպագութիւն արի Աստուծոյ. և օրհնեցի տէրոջս Աբրահամին Աստուածը որ այս ճշմարիտ ճանապարհումն աջողեց տէրոջս եղբօրն աղջիկը՝ նորա որդւոյն կին առնելու։ Այժմ եթէ արդարութիւն և շնորհք անելու էք տէրոջս, ասացէք ինձ. ապա Թէ ոչ ցոյց տուէք ինձ, որ կողմն երթամ։—Բաթուել և Լաբան պատասխան տուին և ասացին.—Այդ բանն Աստուծմէ եղաւ. մենք էլ բարին չար չենք կարող ասել. ահա Ռեբեկան առաջդ է, առ ու գնա. և տէրոջդ կինը լինի. ինչպէս որ տէրը խօսեցաւ։—Աբրահամու Ծառայն այս որ լսեց, ինկաւ երկրպագութիւն արաւ Աստուծոյ. հանեց ոսկեղէն ու արծաթեղէն անօթները ընծայեց Ռեբեկային. ընծայ տուաւ նաև նորա եղբայրներուն և մօրը. և ապա կերան, խմեցին։

Միւս օրն Աբրահամու Ծառայն կշտապէր ճանապարհ ելլել, և կարգելուին նորան, խնդրելով, որ սպասէ կոյսը մի տասն օր. բայց Ծառայն աղաչեց որ չխափանեն տէրոջը աջողածը. և նոքա ասացին, Թէ կանչենք աղջկանը հարցնենք, Թէ կուզէ երթալ. և կանչեցին, հարցուցին.—Թէ կերթաս այս մարդուն հետ. և ասաց —կերթամ. և յուղարկեցին իրենց քոյրն ու Աբրահամի Ծառայն և նորա մարդիկը. և ասացին Ռեբեկայի եղբայրները. «Բոյր մեր, հազարներ ու տասնհազարներ լինիս, զաւակդ՝ թշնամիներուդ քաղաքները ժառանգէ»։ Եկան հասան Իսահակայ սահմանը. Իսահակ եկեր դաշտում կը քալէր. Ռեբեկայ իջաւ ուղտէն ու հարցուց Ո՞վ

է նա՝ որ գաշտումն մեզի դէմ կուգայ.—Ծառայն պատասխանեց. «Իմ տէրն է նա». և Ռեբեկայ վերան առաւ իւր ձորձը։ Ծառայն պատմեց բոլոր եղածը. և Իսահակ իւր մօր Սառայի տունը մտաւ, ու ընդունեց զՌեբեկայ, և նորա կինն եղաւ, և մխիթարուեցաւ Իսահակ իւր մօր սուգին։

Այս պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացողին լեզամուտ կանէ, թէ մարդոյ ամուսնութիւնն էլ Աստուծոյ աջողութեամբ և օրհնութեամբ կը լինի մխիթարական, և ոչ մարդկան տկար տեսութեամբ. եթէ միայն մարմնական ցանկութիւններու սկզով ձանապարհ ելնեն։

9. Ելից ՚ Կբ՚՚ե. Իսահակայ կինը Ռեբեկայ՝ ամուլ էր, և զաւակ չունէր. Իսահակ աղաչեց իւր Հօր Աստուծոյն, և բացաւ Ռեբեկայի արգանդն ու յղացաւ. և նորա մէջ մանուկները կը խաղային. և կասէր Ռեբեկայ. «Այս ինչ կը լինի ինձ». և գնաց Աստուծմէ հարցնելու. և ասաց Աստուած. «Երգանդումդ երկու ազգ կայ. և քո որովայնէն պիտի զատուին երկու ժողովուրդներ. մինը միւսէն յառաջ անցնելու պիտի աշխատին և երէցը կրտսերին պիտի ծառայէ»։ Եկաւ ժամանակը և երէցը կրտսերին պիտի ծառայէ»։ Եկաւ ժամանակը և երկուորեակ ծնաւ Ռեբեկայ. ծնաւ առաջինը մազոտ, զոր անուանեցին Եսաւ. երկրորդը նորա ոտքէն բռնած դուրս եկաւ, լերկ ամենևին, և զոր անուանեցին Յակոբ։ Եսաւ մեծացաւ, որսորդ եղաւ. Յակոբ ընտանի գործերու կզբաղէր։ Մի օր Եսաւ դաշտէն եկաւ, և քաղցած էր. Յակոբ ոսպնաթան եփած էր. Եսաւ ուզեց, որ ուտէ. Յակոբ առաջարկեց, որ անդրանկութիւնը ծախէ. և երդուեցաւ Եսաւ, ծախեց անդրանկութիւնը Յակոբին, և առաւ կերաւ ոսպնաթանը։ Իսահակ ծերացաւ, աչքերը չէին տեսներ. կանչեց Եսաւին ապսպարեց, որ երթայ որսայ և խորոված չինէ բերէ, որ ուտէ ու օրհնէ զինքը. Եսաւ իսկոյն որսի գնաց։ Ռեբեկայ որ Յակոբին կը սիրէր, ասաց. Գնա չուտ երկու ուլ բեր, խորոված

չինեմ, տար Թող հայրդ ուտէ, ու քեզի օրհնէ։ Յակոբ վախցաւ. Թէ գուցէ հայրս զիս չօշափէ և լմնանայ, ու զիս անիծէ. մայրն ասաց. անիծքն իմ վերայ Թող լինի, դուն գնա բեր։ Գնաց բերաւ Յակոբ. և Ռեբեկայ պատրաստեց խորովածը. և ուլերու կաշիները վիրատեց Յակոբայ վիզն ու ձեռքերը, և Եսաւի ընտիր պատմուճանն հագցուց և տարաւ խորովածն Իսահակին՝ իւր Հօրը. և ասաց. «Հայր իմ, ահաւասիկ ինչպէս որ ասացիր՝ արի. վեր կաց, նիստ, ու կեր, և օրհնէ քո անդրանիկ որդին։ Իսահակ լմնացաւ, որ այս Յակոբին ձայնին կը նմանի. կանչեց մօտը, հոտոտեց և չօշափեց. տեսաւ որ Եսաւի հանդերձին հոտը կը գայ, և ձեռքն ու վիզը Թաւ է, կերաւ խորովածն ու օրհնեց. «Ահա որդւոյս հոտը Աստուծոյ օրհնած լեռուն արտի հոտերուն կը նմանի. Աստուած տայ քեզի երկնքի ցօղէն, երկրի պարարտութենէն՝ լիութիւն ցորենի, և գինիի. ազգեր ծառայեն քեզի, իշխաններ երկրպագութիւն անեն քեզի, եղբօրդ տէրը լինիս, հօրդ որդիքն երկրպագեն քեզի, քեզ անիծողն անիծեալ լինի, և օրհնողն՝ օրհնեալ»։ Նոքը եկաւ Եսաւ. և իւր որսը խորտիկ չինեց Իսահակայ՝ իւր հօր քիմքին համեմատ. և տարաւ որ հայրն ուտէ, ու օրհնէ զինքը։ Իսահակ զարմացաւ։ Եսաւ երբ լմնացաւ որ անդրանկութեան օրհնութիւնն առել է արդէն Յակոբ, նստաւ, լաց եղաւ. բայց ինչ օգուտ. ոխացաւ Յակոբին դէմ, և կը խորհէր, որ հօրը վախճանէն ետքն սպանէ։

Այս պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացողին լեզամուտ կանէ. Թէ զաւակը՝ իւր ծնողքէն յառաջ կուգայ, բայց Աստուծոյ պարգեւն է. և ոչ առանց Աստուծոյ։ Ըստ որում Աստուած է որ ամուլին կը ծնուցանէ, և ամբողջ ազգեր իրենց երաններումն ունեցող զաւակ կը ծնուցանէ։ Որդւոյ կատարելութեան և յառաջադիմութեան սէրն՝ մօր արգանդէն իսկ յայտնի է։ Անդրանկութիւնն այնչափ նշանակութիւն չունի Աս-

տուծոյ առջև, այլ վտքրին ընտիր հոգին աւելի ևս արժանաւոր է և օրհնուած։ Վայրագ բնութիւնն՝ Աստուծոյ հաճոյ չէ, այլ իմաստուն տնտեսութիւնը միայն, և հեզահամբոյր հոգին։

10. Զբնաւ Աբրաամ. Քանանացւոց երկիրը մեծ սով եղաւ. Իսահակ ժողովեց իւր տունը որ իջնէ Եգիպտոս. Աստուած երևեցաւ նորան, արգելեց Եգիպտոս իջնելէ, և Փղշտացւոց երկիրն իջեցուց. և խոստացաւ օրհնել նորան, նորա հետ լինել միշտ, նորա հօրը Աբրահամին համար, որ Աստուծոյ երաւունքն ու օրէնքը պահեց միշտ։ Սերմ ցանեց այն տեղ Իսահակ, և հարիւրաւորը հնձեց գարին. շատացաւ նորա ոչխարը, արջառը, և ամեն սեռ մանիքը. կը բարձրանար, կը մեծանար և յառաջադէմ կը լինէր։ Նախանձեցան փղշտացիները, և նորա ջրհորները լեցուցին, փակեցին. կանչեց Թագաւորը, և ասաց. Ել, հեռացիր մեզմէն, ահա մեզմէն աւելի զօրացար. ելաւ Իսահակ, ձորը քաշուեցաւ։ Իսահակ դարձեալ բացաւ այն լեցուցած ջրհորները, և ձորին մէջ ևս փորեց մի ջրհոր, ու կենդանի (վազուկ) ջուր գտաւ. Գերարացւոց հովիւները կը կռուէին Իսահակայ հովիւներուն հետ ու կասէին. «Մերն է ջրհորը»։ Իսահակ այն ջրհորին անունը դրաւ ընդոծ, և հեռացաւ։ Ուրիշ ջրհոր փորեց, նորա վերայ ևս կը կռուէին, նորա անունն ալ դրաւ ընդոծուին։ Ուրիշ ջրհոր փորեց, և նորա վերայ չէին կռուիր. և որուն անունը դրաւ անդրդուին։ Երդման ջրհորին մօտ եկաւ. ուր երևեցաւ նմա Աստուած, և ուխտեց, թէ Աբրահամու համար պիտի բազմացնէ նորան։ Սեզան չինեց Իսահակ. և զԱստուած ապաւէն կարդաց։

Այս պատմութիւնը լսելմուտ կանէ զմեզ, թէ Աստուծոյ օրհնութեամբ եղած աջողութիւնը՝ մարդկանց թշնամութեամբը չարգելուիր. Աստուծոյ օրհնած մարդը կռուի կը վախչի, հակառակութեան մէջ չմեռնի, և չանհանգստութեամբ կը հետևի իւր գործին. և Աստուած

կը յաջողէ նորան, թշնամիները կը նուաղեցնէ. զրկանաց վտանգները կաւելցնէ։ Սովի օրերումն հարիւրապատիկ հունձք կուտայ. թէ երկնքէն և թէ երկրէն ամենայն պարարտութեամբ կը լեցնէ. միայն ճշմարտութեամբ հաւատացող արդարին։

11. Մարմնոյն ամառնութիւն. ուխտաւոր ամառնութիւն. Եսաւ քառասուն տարեկան էր, Բեթացւոց աղջիկներէն երկու հատ կին առաւ. որ սրտի դառնութիւն կը բերէին թէ նորա հօրը՝ Իսահակին, և թէ մօրը՝ Ռեբեկային։ Ռեբեկայ լսեց Եսաւայ ոնը՝ Յակոբին դէմ, և վախցաւ. կանչեց Յակոբին, և յորդորեց, որ երթայ Խառան իւր քեռին մօտ. մինչև որ Եսաւայ բարկութիւնն անցնի։ Ռեբեկայ գնաց Իսահակին էլ ասաց. «Այլ ևս ձանձրացել եմ Բեթացւոց աղջիկներէն, եթէ Յակոբն էլ նորա աղջիկներէն կին առնու, այլ ևս ինչու պիտի ապրիմ։ Իսահակ կանչեց Յակոբին, օրհնեց նորան, պատուիրեց ու ասաց. «Այս տեղի Քանանացւոց աղջիկներէն կին չառնուս. վեր կաց, գնա Ասորւոց մինդագետքը, մօրդ հօր տունը, և այնտեղէն մօրեղբօրդ աղջիկներէն կին առ քեզի։ Եւ իմ Աստուածս օրհնէ քեզի, և աճեցնէ, և բազմացնէ. և հօրս Աբրահամին օրհնութիւնը քեզ, և քեզմէ ետքը քո զաւակին վերայ լինի, որ ժառանգես քո պանդխտութեան երկիրը, որը որ Աստուած Աբրամին տուաւ»։ (Այս խօսքերը լսեց Եսաւ, տեսաւ որ իւր կանայքը չար կերևին հօրը աչքին, գնաց Իսմայէլի աղջիկներէն մին ևս կին առաւ, դարձեալ առանց հօր օրհնութեանը)։ Յակոբ Խանապարհ եկաւ մինակ, եբեկոյին մի տեղ հասաւ. մի քար դրաւ գլխին և քուն եղաւ։ Տեսիլ տեսաւ. և ահա մի սանդուխ կանգնեցուցած էր, որոյ գլուխը մինչև երկինք կը հասնէր. հրեշտակները կելլէին կիջնէին, և Աստուած վերն էր. և ասաց.—«Ես եմ քո հօր Աբրահամին Աստուածը, և Սահակին Աստուածը. մի վախնար, այդ երկիրն՝ ուր կը ննջես, քեզ պիտի տամ, և քո զաւակին. քո զաւակ-

նեըդ երկրի աւազին չափ սիտի լինին և տարածուին չորս կողմը. քեզմով սիտի օրհնուին երկրի բոլոր ազգերը. և ահա ես քեզ հետ եմ, բոլոր գնալիք ճանապարհներումդ. և կը դարձնեմ քեզի այս տեղ. ձեռքէ չեմ թողուր քեզի, մինչև որ բոլոր այս ասածներս կատարեմ քեզ»: Արթնցաւ Յակոբ ու կանչեց. — Աստուած կայ այս տեղ, և ես չէի գիտեր. վախենալու բան է այս տեղը. և այն տեղին անունը դրաւ Բեթէլ—տուն Աստուծոյ: Գլխուն դրած քարն առաւ, կանգնեցուց, վերան լուղ լեցուց: Եւ ուխտեց, ու ասաց. «Եթէ Աստուած հետս լինի, և գնացածս ճանապարհում պիտ ապրեցնէ, և ինձ ուտելու հաց տայ, և հագնելու հանդերձ, և ողջութեամբ Հօրս տունը դարձնէ, և ինձ Աստուած լինի, այս արձան կանգնածս վէմը՝ ինձ տուն Աստուծոյ լինի: Եւ ինձ տալիքդ ամեն բանէն տասանորդ տամ քեզ»: Գնաց Յակոբ, հասաւ Խառանայ դաշտը, մի ջրհոր տեսաւ, և երեք խումբ ոչխարի, որ եկել էին ջուր խմցնելու. և ջրհորին բերանը մեծ քար մի կար: Հարցուց Յակոբ.—Եղբայրներ, ուստի՞ էք:—Խառանէն ենք:—Նաքովրայ որդի Լաբանին կը ճանաչէ՞ք:—Կը ճանաչենք:—Ողջ է:—Ո՛ղջ է. ահա նորա աղջիկը՝ Ռաքել ոչխարներուն հետ կը գար:—Տակաւին օր շատ կայ, խմցուցէք այդ ոչխարներուն, և գնացէք, արածեցրէք:—Չնար չունինք որ այս ոչխարները ջրենք, մինչև որ բոլոր հովիւները չժողովին և այդ ջրհորի բերնին քարը չտապալեն: Այս խօսքը խօսած ժամանակին հասաւ Ռաքել՝ իր հօր ոչխարներուն հետ. Յակոբ յառաջ անցաւ, քարը ջրհորին բերնէն գլորեց. և իր մօրեղբօր ոչխարները ջրեց: Եւ Հռաքելին համբուրեց: Հռաքել լաց եղաւ. Յակոբ պատմեց, թէ ինքը Ռեբեկայի որդին է: Հռաքել վազեց, իր հօրը պատմեց: Լաբան երբ այսպէս լսեց իր քրոջ որդւոյն անունը, դիմացը վազեց, նորան գրկեց համբուրեց. և տուն տարաւ: Մի ամիս ետքը, Լաբան վարձք առաջարկեց Յակոբին: Եւ Յակոբ եօթը տարի ծառայութենէ ետքը նորա դուստրն Ռաքելը՝ կին ուզեց: Եւ Լաբան խոստացաւ:

Այս պատմութիւնը՝ մեզի խելամուտ կանէ, թէ առանց Աստուծոյ կամաց և օրհնութեան եղած ամուսնութիւնն, Աստուծմէ աջողութիւն չգտնէր: Ընտիր է ամուսնութիւնը, որ միևնոյն ազգի սերունդէ լինի, և ոչ օտարազգիներէ: Ամուսնանալու տարիքին հասած երիտասարդն՝ Յակոբայ հոգին զգեցած մի երիտասարդ լինելու է, Աստուծոյ երկիւղը նորա սրտին մէջ տպաւորուած, Աստուծոյ օրէնքին և իրաւունքին հաւատարմութիւն ուխտած, կատարեալ հաւատով զօրացած լինելու է, որ արհանայ ամեն փորձանքի մէջ, և հաստատ յոյս ունենայ սպասած աջող ակնկալութիւններուն: Իր Աստուծոյ օրհնութեամբն ու նոցա կամքը կատարելու մտադրութեամբ քաջալերուած լինելու է, որ նոցա մշտամռունչ ազօթքն աջողութիւն լինի իր հեռաւոր ապագաներուն, և բոլոր ունենալիք որդւոցն ու սերնդոցը ևս: Պիտի ուխտէ Աստուծոյ՝ իր վաստակոց և աջողութեանց տասանորդը տալ, և պիտի կատարէ ուխտը ճշտութեամբ. պիտի քաջանայ մի հսկայէ չափ, և շատ հովիւներու հապճեպ վերցուցած քարերն՝ միայնակ՝ իր երիտասարդական անեղծ ուժովն վերցնէ և մի կողմ թաւալէ. որով և շատ զժուարութեանց յաղթէ, և արհանայ:

12. Հարցուրիւն. Յակոբ ծառայեց եօթը տարի, և խնդրեց Լաբանէն, որ Ռաքելը կնութեան տայ. Լաբան հարստնէք արաւ, փոխանակ Ռաքելին՝ Լիա աղջկանը տուաւ կին. Յակոբ երբ լմցաւ, այս խաբէութեան պատճառն հարցուց. Լաբան պատասխանեց. — Թէ մեր երկրումն օրէնք չէ, որ մեծէն յառաջ փոքրն ամուսնացնենք. եօթը տարի ևս ծառայէ, Ռաքելին ևս կուտամ քեզ կնութեան: Յակոբ զարձեալ ծառայեց եօթն տարի և Ռաքելին կին առաւ: Մինչև տասնևմէկ որդիք ունեցաւ Յակոբ և ապա խորհեցաւ Հանապաբ-

հորդել գառնալ իւր հօր տունը. և Թոյլատուրթիւն խընդրեց Լաբանէն։ Լաբան չէր կամեր արձակել Յակոբին և հակառակեցան. և վերջէ զիջաւ Լաբան, որ արձակէ Յակոբին. և վարձք առաջարկեց. Յակոբ բնաւ վարձք չկամեցաւ. և պայման դրաւ, որ Լաբան՝ ոչխարներուն և այծերուն մէջէն բոլոր Ճերմակները ու խայտաւորները հանէ, մնացեալները գարձեալ արածեցնէ Յակոբ. և որչափ որ կապոյտ, ալեսակ և խայտաւոր լինին այնուհետև հօտին մէջ, այն ամենը Յակոբին վարձք լինին։ Ընդունեց Լաբան այս պայմանը. և հօտին մէջ եղած խառնագոյներն զատեց իւր որդւոցն յանձնեց, ու երեք աւուր Ճանապարհ հեռի խրկեց. և մնացոյն ոչխարներն ու այծերն յանձնեց Յակոբին։ Յակոբ գալար ծառերու Ճիւղեր կտրեց, կեղևներն հանեց, ու լերկ փայտերը տեղ տեղ քերեց. և քերածները նկարածի նման կերևէին. այս փայտերը ոչխարաց ջուր խմելու աւազանին մէջ կը ձգէր. ոչխարները կը նայէին և կզկզէին. այնուհետև խայտախարիւ, ալեսակ ու կապոյտ կը ծնէին, և որոնց կը զատէր Յակոբ առանձին հօտ կը կազմէր՝ երբև վարձ։ Եւ այսպէս քիչ ժամանակի մէջոցում խիստ շատ հարստացաւ Յակոբ։ Դարձաւ իւր հօր տունը մէջտ Աստուծմէ հովանաւորուած. և ուխտը կատարեց։

Այս պատմութիւնը կատարելութեան ցանկացողին կը սորվեցնէ. Թէ Ճշմարիտ հարստութիւնը խմաստուն և չանասէր անձինքը կունենան Աստուծով. ունայն հարստութիւնները մարդուն չեն օգնէր։ Թէ այս Ճշմարիտ հարստութիւնն՝ ինչպէս հոգեկան չանաչելութեամբ վաստակեց Յակոբ, նորա խօսքերը լսելու է, որ կասէր Լաբանին. «Գիտես, Թէ ծրչափ ծառայեցի քեզի. ծրչափ ոչխար ունէիր ինձ մօտ. ինձմէ յառաջ մի քիչ բան էր, և աճեց մեծացաւ. և Աստուած օրհնեց քեզի իմ ոտքիս աղօղութեամբ... այս քսան՝ տարի է, որ քեզ հետ էի, ոչխարներդ ամենևին ստերջ չմնացին, և ոչ էլ այծերդ. քո գառներուն որձերէն չկերայ, և գազաններու պատառածը՝ քեզի չբերի. այլ ես ինքս կը տուժէի նաև ցերեկուայ գողցուածներն ու գիշերուայ գողցուածներն. ցերեկը տօթէն այրուած էի, գիշերը ցուրտէն, քունը աչքէս կտրած էր. տասնևչորս տարի աղջիկներուդ համար աշխատեցայ, և վեց տարի ոչխարներուդ համար աշխատեցայ, և զիս վարձիս մէջ խաբեցիր. Թէ որ Հօրս Աստուածը՝ Աբրահամին Աստուածը՝ և Իսահակին երկիւղն հետս չլինէր, կարելի է ձեռնունայն կարձակէիր զիս. բայց Աստուած տեսաւ իմ նեղութիւնն ու իմ վաստակը, և երէկ յանդիմանեց քեզ»։

13. Յակոբայ տասն և մէկկերորդ որդին էր Յովսէփ՝ Ռաքելի անդրանիկը. իւր այս որդւով բաւական էր Յակոբ, և կը սիրէր միւսներէն աւելի, և Ծաղկեայ պատմուճան հագուցած էր, և տասնևմէկ եղբայրներնատելին նորան։ Յովսէփ մանուկ էր, և երազ պատմեց.—Թէ մի դաշտում որայ կը կապէինք, և իմ որայն ուղիղ կանգնեցաւ, ու ձեր (եղբայրներուն) որաներն եկան իմ որային երկրպագութիւն արին։—Մրմէ՞ մեր վերայ պիտի Թագաւորիս, ու տիրիս մեզի։ Եւ աւելի ևս ատեցին։ Երկրորդ անգամ պատմեց իւր հօրն ու եղբայրներուն՝ ուրիշ մի երազ.—որպէս Թէ արեգակն ու լուսինը և տասնևմէկ աստղեր ինձ երկրպագութիւն կանէին։ Հայրը սաստեց նորան.—այն ինչ երազ է որ տեսար, մրմէ՞ ես ու մայրդ և եղբայրներդ պիտի գանք ու երկրպագութիւն անենք քեզ։ Յովսէփ տասնևուէմ տարեկան էր, երբ մի անգամ խրկեց Յակոբ, որ դաշտ երթայ, և եղբայրներէն մի համբաւ բերէ. եղբայրները որ տեսան, ատացին. «Ահա երազատեսը կուգայ, եկէք սպանենք սորան ու տեսնենք, Թէ ինչ պիտի լինին իւր երազները»։ Բռնեցին անջուր ջրհորի մը մէջ ձգեցին Յովսէփին (որ կուլաը ու կը խնդրէր). և ծաղկեայ պատմուճանը ուլերու արեան մէջ Թաթախած ղրկեցին իրենց հօրը։ Հայրը սգաց Յովսէփ-

վին մահը և չէր մխիթարուէր։ Յովսէփին հանեցին գուբէն, մազիանացի վաճառականներու ծախեցին. Աստուած Յովսէփի հետ էր։ Մազիանացիք Յովսէփին Եգիպտոս իջուցին, և Փարաւոնի դահճապետին տունը գերի ծախեցին։ Յովսէփ ծառայեց իւր տիրոջ տանը ամենայն հաւատարմութեամբ. տէրը սիրեց Յովսէփին, զմայլած էր նորա շնորհքին ու ձեռքի աջողութիւններին. նորան հաւատաց իւր տան տնտեսութիւնն ու բոլոր ստացուածոց վերակացութիւնը. դահճապետն ինքը ոչինչ բանի տեղեակ չէր, տունը լցուեցաւ բարութեամբ, վասն զի Յովսէփ հաւատարիմ էր, և Աստուած նորա հետ էր։ Դահճապետի կինն անզգամ էր, Յովսէփի ողջախոհութիւնը խախտել կը խորհէր. Յովսէփ հագիւ թէ վերարկուն ձգեց ու փախաւ ձեռքէն։ Կինը նորան զրպարտեց. դահճապետը բարկացաւ և Յովսէփին բանտ դրաւ. Աստուած Յովսէփին հետ էր, նա բանտին մէջ էլ վերակացու էր։

Փարաւոն երազները կը տեսնէր, բոլոր գիտուններին կը կանչէր ու կը հարցնէր, ոչ ոք նորան չէր մեկնէր. և կը խռովէր։ Փարաւոնի տաճարապետը՝ կը ներկայանար, և Յովսէփին շնորհքն ու գիտութիւնը կը հանդիսացնէր. թէ նա մեր երազը պատմեց մեզ, և բառ առ բառ կատարուեցաւ ցոյց տուած օրը՝ զիս պաշտօնիս կարգեցիք, մատակարարին կախեցիք, ձիշդ նորա մեկնածին պէս։ Փարաւոն հրամայեց, բերին Յովսէփին բանտէն. վերան մաքրեցին, Փարաւոնի գիմացն հանեցին։ Մեկնեց Յովսէփ Փարաւոնի երազը,—թէ եօթը տարիները՝ խիստ չափազանց առատութեան տարիները պիտի լինին. անմիջապէս եաքը եօթը տարիները էլ սաստիկ սով պիտի լինին, այնպէս որ այն եօթը տարիներու լիութիւնը հագիւ թէ պիտի բաւէ։ Երազներուն երկուքը մէկ է. Աստուած Փարաւոնին կը յայտնէ, որ կարգէ իմաստուն վերակացու, և ամբարէ անվրդով եօթը տարուայ լիութեան աւելորդը, որ կարողանայ սովի տարիներուն պահպանել ժողովուրդը։ Աստուած մատնահարեց Փարաւոնի սրտին. նա բոլորովին հաւատաց այս մեկնութիւնին. և գիտուն ու կատարեալ տեսաւ Յովսէփին. մատանին հանեց, հագցուց Յովսէփին, և հրատարակեց որ և իշխան բոլոր Եգիպտոսի՝ երկրորդը Փարաւոնին, որպէս չի նորա խօսքերը բան և գործը չընկնին։ Յովսէփի եղաւ վերակացու սպառնացեալ սովի նեղութիւններուն դէմ։

Եկաւ, հասաւ ահեղ սովի առաջին տարին, սերմերը ցանեցին, հունձք բնաւ չառին. քաղցած անսուաղ Փարաւոնին դիմեցին. բացաւ Յովսէփ լիք ամբարները, կը վաճառէր ամեն եկողին։ Քանանու երկրէն տասը հովիւները հասան յԵգիպտոս, իջուցին էշերը, Յովսէփին եկան, արծաթը ձեռքերնին երկրպագեցին. ճանաչեց Յովսէփ իւր եղբայրներին, յիշեց երազը նախկին օրային. պնդեց ինքզինքը, խոտացաւ քիչ մը, հարցուց ուստի էք, և որո՞ր որդիք. ո՞ղջ է հայրերնիդ, ունի՞ք ուրիշ եղբայր ձեզ։ Մխսում տարին յայտնեց զինքն Յովսէփ իւր եղբայրներին, որ սառեցան, մնացին, պատ գոյն դարձան. նորա ներելովն՝ հագիւ թէ կենդանացան։ Յակոբ որ լսեց Յովսէփին կեանքը, Յովսէփին փառքը, գարմացաւ, թէ չվհթուեցաւ. չէր կարող հաւատալ. «Աստուած իմ» կանչեց, խոտացաւ հոգիովը, մանկացաւ ճերմակ մօրուքովը, իջաւ յԵգիպտոս, որդւոյն փարեցաւ, մխիթարուեցաւ, սովէն ապրեցաւ։

Այս պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացող երիտասարդին խելամուտ կանէ. թէ Աստուած արդարին հովանի է միշտ իւր հրեշտակի պահպանութեամբ. նորան կը ցուցնէ իւր ապագան՝ տեսիլներով. նորան կատարէ իւր նախանձորդներու սպանութենէն, կը փառաւորէ գերութեան մէջ, կը մեծացնէ բանտերու մէջ անգամ. նորա ողջախոհութիւնն ու շնորհքն յայտնի կանէ թագաւորին առջև, տէր և իշխան կանէ հաւատարմութեամբ, և պահապան ու ապաւէն, պաշտպան կը հանդիսացնէ իւր ազգին։ Ողջախոհը միայն կը ձանձնայ

Աստուծոյ զօրութիւնը և կգգուշանայ իւր անմեղութեան. ողջախոհութիւնը՝ մարդու կատարելութիւնն է Աստուծոյ առջև։

14 Մովսէս. Յակոբայ որդիքը՝ որ իրենց հօր հետ Եգիպտոս իջած էին Յովսէփի իշխանութեան օրերումն, աճեցան Գեսեմի մէջ և բազմացան. և քանի որ Յովսէփին չնորհքն ու անունը կը յիշուէր՝ հանգիստ կապրէին. գարեր անցնելէ ետքը Փարաւոնի պալատումն մոռացուեցաւ Յովսէփին յիշատակը, և սկսան կասկածել Իսրայէլի որդւոց աճելութենէն. շատ հնարքներ հնարեցան, որ նոցա աճելութեան առաջը փակեն. մինչև հըրովարտակ հանեց Փարաւոն, որ նոցա նորածին արուներըը՝ խեղդեն և ջուրը ձգեն։ Ղևիի ցեղէն մի մարդու որդի ծնաւ, և կայտառ էր, ծնողքը չդիմացան ջուրը ձգելու. երեք ամիսներ պահելէ ետքը, որ այլևս հրնար չունէին ծածկելու, մի ծեփած տուփի մէջ դրին, և գետի մին Ճիւղումը ձգեցին. նորա քոյրը կը քալէր այն տեղերը, տեսնելու, թէ ինչ կը պատահի մանուկին։ Ահա Փարաւոնի աղջիկն իջաւ լուացուելու, տեսաւ տուփը, և հանել տուաւ. բացին տեսան, որ մի մանուկ է մէջնին, և լաց կը լինի։ Փարաւոնի աղջիկը՝ խանգաղատեցաւ մանկան վերայ։ Մօտ եկաւ մանկան քոյրը և հարցուց,—կը հրամայիք որ երթամ երթայեցի տնտուս կանչեմ, և այդ մանուկին սնուցանէ ձեզ համար։ Եւ երբ հրամայեց, գնաց մանկան մայրը կանչեց. և որ սնոյց մանկանը մինչև կաթէն կտրեցաւ, և տարաւ Փարաւոնին աղջկանը, որ անուն դրաւ նորան Մովսէս—ջրէն հանեցի։ Մովսէս իբրև որդեգիր Փարաւոնի աղջկան՝ մեծացաւ արքունիքումն։ Պալատին մէջ կը նախատէին Մովսէսին Իսրայելացի լինելը. և արհամարհանօք կը կանչէին։ Մովսէս չափահաս երիտասարդ եղաւ, ցանկացաւ տեսնել իւր ազգը և եղբայրները. անցաւ Գեսեմի մասը. և տեսաւ, որ մի եգիպտացի կը զրկէը մի Իսրայէլացիին, սպանեց եգիպտացւոյն և աւազի տակն ա-

րաւ։ Երկրորդում օրը տեսաւ երկու Իսրայէլացի որ կռուէին. խաղաղութիւն անել ուզեց, և ասաց. մարդիկ, դուք եղբայրներ էք, ինչո՞ւ մէկզմէկ կը զրկէք.—Զրկողը՝ պատասխանեց.—Ո՞վ դատաւոր դրաւ քեզի մեր վերայ. մի՞թէ և դու սպանել կուզես՝ ինչպէս երեկուայ եգիպտացին։ Մովսէս հեռացաւ. երբ բանն յայտնուեցաւ Փարաւոնին, փախաւ Մովսէս Մադիամու երկիրը. կեցաւ մի ջրհորի մօտ, ուր եօթն հատ հովիւ աղջիկները ջուր կը հանէին իրենց խաշները ջրելու. և ահա տեսաւ Մովսէս՝ որ ուրիշ հովիւները եկան, աղջիկներին մէկզմէկ քշեցին, և իրենց խաշները կը ջրէին. ելաւ Մովսէս վրանց այս հովիւներին, և աղջկանց խաշները ջրեց։ Այս աղջիկներն Հառագուելի՝ մադիանացւոց քրմին աղջիկներն էին. հարցուց հայրերնին, թէ ինչ եղաւ, որ այսօր արևով եկաք. և նոքա ասացին. թէ մի եգիպտացի մարդ մեզի ազատեց հովիւներուն ձեռքէն, և ջուր հանեց, ու մեր խաշները ջրեց։ Քուրմը կանչել տուաւ Մովսէսին և կերակրեց. և իւր Սեպփորայ դուստրը նորան կին տուաւ։ Չաւակ եղաւ Մովսէսին և անունը Գերսոմ կոչեց, որ է «Պանդուխտ եմ ես»։

Այս պատմութիւնը՝ խելամուտ կանէ մեզ, թէ մարդս որչափ որ մեծ և իշխան լինի, դարձեալ իւր ազգը ձանաչել կը սիրէ. իւր ազգի նեղութիւնը վերցնել և հանգչեցնել կը խորհի։ Բայց գերին մատնիչ է իւր եղբօրը, կը զրկէ իւր եղբօրը, նեղութեան վերայ նեղութիւն կաւելցնէ իւր եղբօրը։ Ազատ հոգին՝ աւելի կընտրէ անապատի հովուութիւնն ու անմեղ կեանքը, քան արքունի պալատականութեան պատիւը խղճահարութեամբ։

15. Աստուծոյ երկրպագութիւնը. Մովսէս իւր աներին Յոթորի խաշինքը կարածեցնէը. գնաց անապատ և հասաւ ի Քորեբ։ Քորեբում յանկարծ այքին լինկաւ, որ մորենին կը վառէր հրով, և չէր այրէր, զարմացաւ Մովսէս և մօտ գնաց որ տեսնէ։ Ահա բոցէն ձայն. Տէրոջը հրեշտակը՝

հրամայեց Մովսիսին որ մօտ չերթայ, այլ հանէ կօշիկները. վասն զի կեցած տեղը սուրբ է: Եւ ասաց Աստուած. «Ես եմ քո Հօր Աստուածը, Աբրահամին Աստուածը, Սահակին Աստուածը և Յակոբին Աստուածը. տեսայ իմ ժողովրդեան չարչարանքն Եգիպտոսի մէջ, և լսեցի որ վրկեմ զանոնք Եգիպտոսէն և տանիմ ուրիշ երկիրը, աւելի ընդարձակ ու բարի, երկիրը՝ որ կաթն ու մեղր կը բղխէ»: Մովսէս վախցաւ Աստուծոյ երեսէն: Բայց Աստուած քաջալերեց նշաններով, և խրկեց Փարաւոնին, որ արձակէ ժողովուրդը: Մովսէս առաւ իւր գաւազանը և ընկերացած իւր եղբօրն՝ Ահարոնի, գնաց Եգիպտոս, յայտնեց Իսրայէլի ծերակոյտին՝ Աստուծոյ հրամանը, և հաստատեց նշաններով, թէ Ը֊ն Աստուած խրկեց զինքը: Ներկայացաւ Փարաւոնին, և խնդրեց Թոյլատուէիլն Իսրայէլին, որ երթան զոհ անեն իրենց Աստուծոն: Խստացաւ Փարաւոն, մերժեց Աստուծոյ հրամանը, և սաստկացուց Իսրայէլի ժողովրդեան վաստակն ու նեղութիւնը: Դարձեալ ներկայացան Փարաւոնին, որ այս անգամ նշան խնդրեց, որ ցուցնեն թէ Աստուած խրկեր է նոցա: Ահարոն գետին ձգեց Մովսէսի գաւազանը, և վիշապ դարձաւ. եգիպտական կախարդներն ալ ձգեցին իրենց գաւազանը և վիշապ դարձան, բայց Մովսիսի գաւազանին վիշապը կուլտուաւ եգիպտացւոց վիշապները. և խստացաւ Փարաւոն, ու չլսեց Աստուծոյ հրամանին: Առաջին անգամ Հարուածեց Տէրը իւր մարգարէին ձեռքով, որ Փարաւոնի խստասրտութենէն դէմ իւր գաւազանն երկինքէն գետի ջուրերուն վերայ, և արիւն դարձան ամեն տեղ, սատակեցան բոլոր ձկանները, և գետը նեխեցաւ. այնպէս արին և կախարդները, և խստացաւ Փարաւոն: Երկրորդ անգամ Հարուածեց Աստուած, և գորտեր հանեց բոլոր եգիպտացւոց տները. կախարդներն ալ հանեցին գորտեր. և Փարաւոն խնդրեց Մովսէսէն աղօթք, որ գորտերը վերնան, և արձակէ Իսրայէլին. աղօթեց Մովսէս, և սատ-

կեցան գորտերը. ու բոլոր եգիպտացւոց տներն ու ամբողջ քաղաքը նեխեցաւ. Փարաւոն դարձեալ խստացաւ և չլսեց Աստուծոյ հրամանը: Երրորդ անգամ Հարուածեց Աստուած եգիպտացիներին. Ահարոն գաւազանը գետին զարկաւ, և ասաց որ մուն (մժեղ, մլակ) ելլէ բոլոր երկիրը. կախարդները փորձեցին և չկարողացան հանել. և խոստովանեցան, թէ Աստուծոյ մատը կայ այս հրամանին մէջ. խստացաւ Փարաւոն և ժողովուրդին չարձակեց: Չորրորդ անգամ Հարուածեց Աստուած, և չանճաճանճ հանեց բոլոր երկրումը: Նեղուեցաւ Փարաւոն, և հրամայեց, որ Իսրայէլի ժողովուրդը զոհեն իրենց Աստուծոն Եգիպտոսի մէջ. մերժեց Մովսէս՝ թէ Աստուծոյ հրամայածին համեմատ պէտք է երթան երեք աւուր ճանապարհ և սուրբ երկրում զոհեն. խոստացաւ Փարաւոն արձակել. և երբ Մովսիսի աղօթքով դադրեցաւ չանճաճանճը, դարձեալ խստացաւ Փարաւոն և չարձակեց: Հինգերորդ անգամ Հարուածեց Աստուած, և սատակեցան եգիպտացւոց բոլոր անասունները, և մնացին միայն Իսրայէլացւոց անասունները: Խստացաւ Փարաւոն, և չարձակեց ժողովուրդին: Վեցերորդ անգամ Հարուածեց Աստուած. մոխիր ցանելով դէպի օդը Մովսէսի ձեռքով, և անհնարին փուչ եղաւ Եգիպտոսի բոլոր երկրում. և ամեն մարդու և անասնոց վերայ խոցեր ու վէրքեր դուրս եկան. խստացաւ Փարաւոն և ժողովուրդին չարձակեց: Եօթներորդ անգամ Հարուածեց Աստուած բոլոր Եգիպտոսի երկիրն հրեղէն կարկուտով, և ջնջեց ամեն դալարն և ծառ, և ամեն մարդ և անասուն՝ որ դաշտումն էին մնացել: Աղաչեց Փարաւոն Մովսէսին, և խոստովանեցաւ, թէ այսուհետև Իսրայէլի Աստուածն է Տէրը. և մենք անհատատ ենք. աղօթեցէք, որ դադարի որոտումն, կարկուտն ու հուրն: Աղօթեց Մովսէս, դադարեցաւ Հարուածը, և խստացաւ Փարաւոն և չարձակեց ժողովուրդին: Ութերորդ անգամ Հարուածեց Աստուած. Մովսէս օդին մէջ երկնցուց ձեռ-

քը, և սաստիկ մարախ եկաւ, և հասկի չեկած ցորենը՝ որ կարկուտէն զարնուած չէը, կերան և ոչնչացուցին։ Փարաւոն՝ Տէր՝ կանչեց. Մովսէս աղօթեց, և Աստուած քամիով քշեց մարախին դէպի կարմիր ծով. խստացաւ Փարաւոն, և ժողովուրդին չարձակեց։ Իններորդ անգամ հարուածեց Աստուած, խաւար ու թանձր ամպ տարածելով բոլոր Եգիպտոսի վերայ. Փարաւոն խստացաւ ու չարձակեց ժողովուրդին, և սպառնացաւ Մովսիսին, որ զգուշանայ իւր անձին, և չերևի այլ ևս իրեն։ Տասներորդ անգամ հարուածեց Աստուած բոլոր Եգիպտոսն. ու կէս գիշերին սատակեց նոցա բոլոր անդրանիկները՝ Փարաւոնի անդրանիկէն սկսած մինչև չետին աղախիններու և գերիներու անդրանիկը, և անասնոց անդրանիկները. լաց ու կոծը բռնեց բոլոր Եգիպտոս։ Փարաւոնը գիշերով կանչեց Մովսէսին և հրամայեց, որ բոլոր իսրայէլացիք և իրենց արջառները ևս երթան և զոհեն իրենց Աստուծոյն, ինչպէս որ կը հրամայէ. և խնդրեց, որ իրեն ևս օրհնեն։ Առաւօտով Հանասպարշ եկան իսրայէլացիք. միայն հետևակն էր 600,000 մարդ։ Եւ Աստուած հովանի կանչը ցերեկը ամպով, և գիշերները լուսաւոր ամպով, ու այնպէս կառաջնորդէր ժողովրդին դէպի Կարմիր ծովի անապատը։ Սարջացաւ Փարաւոն որ արձակեց Իսրայէլին, և մեծ բանակով ու սպառազէններով եհաննէն եկաւ, հասաւ մինչև Կարմիր ծովի մօտ։ Մովսէս Աստուծոյ հրամանաւ՝ գաւազանը ծովին վերայ երկնցուց, և հարաւային սաստիկ քամին պատառեց ծովը, և ջուրը մի կողմը դիզեց մինչև առաւօտ, և իսրայէլացիք անցան ծովէն ցամաքով, և ամպէ սիւնը յետ կեցաւ Իսրայէլի և Փարաւոնի բանակին մէջ տեղը և մթնեցոյց։ Փարաւոն իւր բանակով ծովը մտաւ Իսրայէլի եահէն. և Մովսէս Աստուծոյ հրամանով երկնցուց իւր ձեռքը ծովի վերայ, և ջուրը մնացաւ, ու Աստուած բոլոր եգիպտացիներին ծովն ընկղմեց՝ ամբողջ բանակով ու կառքերով։ Իսրայէլացիք տեսան եգիպ-

տացւոց մեռելները ծովեզերքում, և Հանչցան Աստուծոյ բարձր բազուկն. ու հաւատացին թէ նա է Աստուած, և թէ Մովսէս նորա ծառան է։ Եւ երգեցին Մովսիսի հետ։

Այս պատմութիւնը՝ խելամուտ կանէ զմեզ, թէ Աստուած անշունչ տարրներով ևս կը յաղթէ անօրէններին, չնչին կենդանիներով կը նեղէ, կը տագնապէ գերողներին. մնայն թէ զրկուողներն հաւատով Հանչնան իրենց Աստուածը, և թէ նա է փրկիչ աշխարհի, և կեանք մարդկան. և թէ նորա հրամանին անսասող, մանկ չանող Փարաւոնի խստասրտութիւնն՝ ուրիշ ոչնչ չշահեցաւ, եթէ ոչ գլխուն գալիք փորձանքներն աւելցուց։ Եւ թէ Աստուած այսպիսի սքանչելիքներով յայտնուած է աշխարհի մարդկան, երբ նորա խոպառ մոռացել էին այլ ևս նախահարց պատմութիւնը, կայէնի պատիժը, և նորա սերնդոց դատապարտութիւնը և թէ ընդհանուր եղող չարութեան հետ՝ չրհեղեղը չնչեց ապականուած ժողովուրդին, և արդարին ազատեց։

16. Դհհ-ԼԷՀՆ ԷրՓ.

Օրհնեենք Տէրը, որ փառքով է փառաւորուած.
Նոցա ձիերն ու հեծնողներն ծովը ձգեց։
Զիս ընդունող, օգնականս, Փրկիչս է Տէրն.
Սա՝ Աստուածս է, փառաւորեմ ու գովեմ.
Հօրս Աստուածն է, հընազանդիմ, բարձրացընեմ։
Տէրը է անունն, կը խորտակէ պատերազմներն.
Ծովն ընկղմեց Փարաւոնի զօրքն ու կառքերն,
Ընտիր հեծեալ—ձիաւորներ, քաջ զինուածներն
Ծովը ձգեց, Կարմիր ծովում խորասուզեց։
Քարերի պէս ընկղմեցան, տակով եղան,
Անդունդներում, խոր անդունդքում թաղուեցան։
Տէր, քո Աջը փառաւորուեց իւր ուժով,
Մեծ ուժով՝ թշնամին խորունկ թաղեց.
Մեծ փառքովդ ջախջախեցիր հակառակորդն,

Բարկութիւնդ՝ եղկգի պէս լափեց գանոնք։
Սրամտութեանդ սաստիկ հողմով պատառուեց ջուրն,
Պարիսպի պէս պինդ պաղեցան, սառեցան
Ջուրն ու ալիք ծովուն մէջը պատ դարձան։
Մաքուսն ասաց Յշնամին. «Օ՛ն հալածեմ,
Հասնիմ, կապտեմ, բաժնեմ աւարն. ու աւարով
Հարբսառնամ, կուշտ կուշտ ուտեմ, լիանամ.
Քաշեմ սուրըս, սատկեցնեմ, Թող տիրէ ձեռքս»։

Սաստիկ հողմով հրաման տուիր ալիքներուն,
Հնազանդուեցաւ ծովն, ու ձածկեց Յշնամւոյն.
Աբճիճի պէս խոր խրըուեցան ջրերուսն։
Ո՞վ կայ երբէք Աստուածներուս մէջ նման Տէր,
Ո՞վ քեզ նման է, որ փառաւոր ես Սրբոց մէջ.

Տէր, որ սքանչելի ես վարքով,
Որ նշաններ ու հրաշքներ կանես, Տէր,
Հէնց մի անգամ շարժեցիր ձեղ, երկնցուցիր,
Երկիրն անոնց միանգամայն կուլ տուաւ։
Աջդ արդարութեամբ առաջն լինկար ժողովրդիդ,
Հէնց այս փրկած, նորոգ փրկած ժողովրդիդ,
Եւ մխիթար եղար նորան, քո գօրութեամբ,
Սփոփեցիր քո սրբութեան բանակեցողում։
Ձորս կողմն համբաւդ առին ազգերն, խռովեցան.
Երկունքն առաւ քանանացի բընիկներին.
Եղամ, Մովաբ տագնապեցան այն ժամուն
Իշխաններով, դատաւորով միասին.
Հալոց մաղոց ու ղողղողոց և դալուկ
Բռնեց ամեն բընիկներին քանանացւոց։

Նոցա վերայ ընկնի երկիւղ, ահ անպակաս,
Մինչև անցնի քո ժողովուրդս այս Իսրայէլ,
Մինչև անցնի այս ժողովուրդ, զոր փրկեցիր.
Տանիս, տնկես այն քո հաստատ ժառանգութեան
Լեռան վերայ, Քեզ բնակարան պատրաստել,
Բընակարան՝ զոր Սրբութիւն արիր Տէր,
Սրբութիւն. զոր քո ձեռքդ պատրաստեց։

Թագաւոր է Տէրն յաւիտեան, յաւիտեանս
Յաւիտենից ժամանակները, աւելի և՛ս։
Զի ձիերն Փարաւոնի՝ ծովը մտան իւր կառքերով,
Հեծեալներով, սպառազէն զօրքերովն,
Եւ Տէր Աստուած ծովը բերաւ նոսկոյն վերայ,
Որը Իսրայէլն անցոյց ծովէն ցամաքով։

Օրհնեմք Տէրը, որ փառքով է փառաւորուած,
Նոցա ձիերն ու հեծեալներն ծովում խեղդեց։

17. Սմուէլ. Արեմաթէմ քաղաքում մի բարեպաշտ մարդ կար Եղկանայ անուն. որոյ կինն Աննա ամուլ էր։ Սա ամեն տարի երկանը հետ Սելով կերթար Աստուծոյ տապանակին առաջ իւր ուխտը կատարելու։ Մի անգամ սրտով լիք վշտացած, լինկաւ Աննա տապանակին առջև և խնդրուածք կ՚անէր երկար ժամանակ. նորա ձայնը չէր ելնէր, այլ միայն թէ շրթունքը կը շարժէին։ Քահանայապետն Հարբած կարծեց ու յանդիմանեց Աննային։ Բայաւ Աննա իւր բերանը և ասաց.— Ես ժանտ կին չեմ, Տէր, ես վշտացած կին եմ, և սիրտս կը բանամ Աստուծոյ առջև, և շիտիմած եմ մինչև հիմա։ Քահանայապետն ասաց նորա.—Գնա՛ ճանապարհդ, Իսրայէլի Տէր Աստուածը, նա կատարէ խնդրուածքդ, ինչ որ խնդրեցիր։ Ուրախ եղաւ Աննա, և իւր տրտմութիւնն խափաւ գնաց երեխէն։ Յղացաւ Աննա, և ծնաւ արու, անունը կոչեց Սմուէլ, որ ասել է Աստուծմէ խնդրեցի։ Աննա իւր խոստացած ուխտը ձշդիւ կատարեց. Սամուէլ դեռ երեք տարեկան էր, երբ բերաւ ի Սելով, Աստուծոյ տապանակին առաջը ծառայելու ընծայեց, որ ծառայէ մինչև իւր մահը։ Աշխարհահռչակ մի գոհութիւն կարդաց Աննա տապանակին առջև. Թէ «Սիրտս հաստատեցաւ Տէրով վերայ. եղջիւրս բարձրացաւ Աստուծով . . . . Աստուած է գիտութեանց տէր. Աստուած կը պատրաստէ իւր արուեստները։ Հզօրաց աղեղները տկարացան, տկարները զօրացան. հացակերները նուաղեցան, քաղցածները ապրեցան. ամուլը եօթը

ծնաւ, բազմածինը դադարեց . . . Տէրը կը խոնարհեցնէ, կը բարձրացնէ ուխտաւորին՝ ուխտը կուտայ. . . . . Թող չպարծի իմաստունն իւր իմաստութեամբ, հզօրը՝ իւր զօրութեամբ, մեծատունը՝ իւր մեծութեամբ։ Պարծենցողը Թող պարծենայ, թէ կը ճանչնայ զՏէր, թէ կը գործէ երկրի վերայ»։ Սաւուղ ու արդարութիւն կը գործէ երկրի վերայ»։ Սամուէլ՝ ուխտի մանուկը՝ կըսպասաւորէր Աստուծոյ տապանակին Հեղի քահանայի առջեւ։ Աստուած հաճեցաւ Սամուէլի սրտի սրբութեանն ու վարուց մաքրութեանը, և Հեղիի տան սպառնալեաց յայտնութեան մէջ՝ յայտնեց Հեղիին, թէ այլ ևս պիտի չնայի Ղևիի ցեղին, այլ զինքը փառաւորողին պիտի փառաւորէ։ Երկար ժամանակ էր տեսանողները պակասել էին իսրայէլէն։ Աստուծոյ հրեշտակը Սամուէլին յայտնուեցաւ, և բոլոր իսրայէլի երկիրներն համբաւ հասաւ, թէ Սամուէլ Աստուծոյ հաւատարիմն է։ Եւ դառեց իսրայէլի ժողովուրդին մինչև իւր ծերութիւնը, և ոչ ոք զրկուեցաւ նորա ձեռքէն։ Սամուէլ Ղևիի ցեղէն չէր, ու փառաւոր եղաւ Աստուծոյ Քահանայութեան մէջ սրբութեամբ և արդարութեամբ։ Նորա խօսքէն գետին չընկաւ և ոչ մի խօսք։

Սամուէլի որդիքն՝ զօշաքաղ դուրս եկան. ժողովուրդը ձանձրացած նոցա վարքէն, ժողովեցան Սամուէլի մօտ, և թագաւոր խնդրեցին։ Ժողովրդեան այս խօսքը՝ չար թուեցաւ Սամուէլին. և տրամեցաւ։ Աստուած յայտնուեցաւ Սամուէլին, և ասաց.—Ի՞նչ տրամիլ ես, մտիկ արա՛ ժողովրդի ասածին, լենչպէս որ խօսեցան, որովհետև ոչ թէ քեզի անարգեցին, այլ զիս անարգեցին, որ այլ ևս չթագաւորեմ նրանց վերայ. թագաւոր դիր նոցա, բայց յառաջմանէ վկայութիւն տուր, և պատմէ նոցա, թէ ինչ իրաւունք ունի թագաւորը։ Սամուէլը հասկացուց ժողովրդին թագաւորի իրաւունքը, և թագաւոր տուաւ նոցա, ու առանձնացաւ իւր հայրենի գիւղը և սրբութեամբ կատարեց իւր բազմամեայ կեանքը. իրաւարար և արդար էր ժողովրդեան դատաստանում, հաւատարիմ և ամբիծ Աստուծոյ առջև։

Այս պատմութիւնը՝ մեզ խելամուտ կանէ, թէ գաւակաց ծննդեան պատճառ՝ մեայն ծնողք չեն։ Այլ Աստուած է, որ զօրութիւն կուտայ ամուլ ուխտաւորին. Աստուած է, որ մեյն ևօթը կը հատուցանէ։ Թէ թագաւորներն՝ անօրէն ժողովրդեան դատաւորներն են, և նոցա թերութիւններն պիտի ուղղեն դատաստանով և պատժով։

18. Աղաւաձաւոր երիտասարդ—Դաւիթ. Բեթղահեմացի Յեսսէի երեք որդիքը պատերազմի գնացել էին և Սաւուղայ բանակն էին։ Յեսսէ իւր կրտսեր որդւոյն Դաւիթին հետ հաց և կերակուր խրկեց բանակն, որ եղբայրներէն մի համբաւ բերէ, թէ ողջ են։ Դաւիթ առաւօտուն կանուխ ձանապարհ ելաւ, հասաւ բանակը. տեսաւ, որ իսրայէլի և այլազգեաց բանակն մէկմէկու դէմ կեցել են. և մի այլազգի՝ Գողեադ անուն՝ որոյ հասակը՝ վեց կանգուն և մի թիզ էր և վերայի երկաթէ և պղնձէ զրահներուն կշիռը՝ հինգ հազար սիկղ, մէջ տեղ անցած կը հայհոյէր այս այլազգին՝ իսրայէլի բանակին, և կառաջարկէր, որ մի մարդ մեյն հանեն դիմացը, և մենամարտեն, և յաղթողին կողմը տանի յաղթանակը. այս քառասներորդ օրն էր որ Գողեադ այսպէս կառաջարկէր և կը հայհոյէր։ Բանակի զօրքերն կը վախչէին Գողեադին տեսնելէն։ Դաւիթ՝ որ լսեց Գողեադին հայհոյանքը, բարկացաւ, տաքցաւ. «կսպանեմ ես այն այլազգին, ինչ պիտի լինի նա» կանչեց։ Նորա մեծ եղբայրը՝ որ լսեց, նեղացաւ վերան, բայց Դաւիթ անցաւ ուրիշ կողմ, և կը զայրանար։ Դաւիթ խօսքը պատմեցին Թագաւորին առջև, և Սաւուղ կանչեց զԴաւիթ երեն մօտ։ Դաւիթ ասաց Սաւուղին,—Թող տէրոջս սիրտը չթուլնայ. քո ծառայն կերթայ կը մենամարտի այն այլազգւոյն հետ։ —Գուցէ չկարողանաս երթալ կռուիլ այն այլազգւոյն հետ, դի դուն տղայ ես, և նա պատերազմող մեծ մարդ՝

իւր մանկութեան օրերէն։—Ո՛ն Աստուած հօրը ոչխարները կարածէր. և երբ որ առիւծ կամ արջ կուգար ու ոչխար կը յափշտակէր, եաւէն կելլէր, կը գաղնէր, և ոչխարը բերնէն կը խլէր. և թէ որ վերաս յարձակուէր, փողէն (պողազէն) կը բռնէր, կը գարնէր, կսպաննէր։ Ծառայդ առիւծն ու արջը կը սպաներնէր, թող այն այլազգին էլ նոցա՛ն մէկին պէս լինի. արջէն ու առիւծէն ազատեցնող Աստուածը՝ այն այլազգի՛ն ձեռքէն էլ կազատեցնէ զիս։ Այժմ չերթամ, չսպաներնե՛մ այն անթլփատը, և նախատինքը վերցնե՛մ իսրայէլէն։ Եւ Սաուղ ասաց.— Գնա՛, Աստուա՛ծ քեզի հետ։

Մանուկն Դաւիթ մերժեց Սաուղայ հրամայած զրահն ու վահանը, և հովուական ցուպն առած, իջաւ դէպ ի վար հովիտը, և ձորի մէջէն հինգ հատ ողորկ քար ընտրեց։ Գողեադ կը գար նախատելէն, և կ՚սպառնար՝ Դաւիթ մարմինը թռչնոց կերակուր անել. որոյ ամեն խօսքերուն այսպէս կը պատասխանէր Դաւիթ.— Դու իմ վերայ կը գաս սուրով, գեղարդով, և աստղարով, իսկ ես կը գամ իսրայէլի բանակին զօրութիւն Աստուծոյն անունովն, որուն նախատեցիր դուն այսօր։ Աստուա՛ծ զքեզ ձեռքերուս մէջ պիտի վակէ այսօր, պիտի սպանեմ քեզի. և հինգ այսօր քո լեշն ու այլազգիներուդ բանակի լեշերը կերակուր պիտի ձգեմ երկնքի թռչուններուն և վայրի գազաններուն. և գիտնայ բոլոր աշխարհ, թէ իսրայէլի մէջ Աստուա՛ծ կայ. և գիտնայ այս ժողովուրդն էլ, թէ Աստուա՛ծ սրով ու գեղարդով չփրկեր, զի Աստուծոյ է պատերազմը, և այսօր մեր ձեռքը պիտի մատնէ զձեզ»։ Եկաւ Գողեադ մօտեցաւ Դաւիթին. Դաւիթ աճապարեց և մինանգամ պարսպաքարեց, զարկաւ Գողեադի ճակատին, և քարը ճակեց սառաւարտը, ու ճակատը մտաւ. և ահագին Գողեադը փլաւ, գետինն լնկաւ երեսին վերայ։ Վազեց Դաւիթ, վերան եկաւ. ինքը սուր չունէր, նորա սուրն հանեց, գլուխը կտրեց։ Այլազգիները՝ որ տեսան, թէ իրենց

զօրաւորն լնկաւ, փախան. իսրայէլացիք էլ նոցա եւ՛ւէն կանչեցին ու վազեցին. մինչև Ասկաղոնի դռները յարձակեցան ու զարկին։ Սաուղայ առաջն հանեց զօրապետը՝ Դաւիթին, որ Գողեադու գլուխը ձեռքին բռնել էր։ Սաուղայ որդին Յովնաթան սրտանց սիրեց Դաւիթին. ուխտիւք կապուեցաւ նորա հետ. իւր զէնքերն ու զգեստները մերկացաւ Դաւիթին հագուեցուց այն օրն։ Պատերազմէն դառնալուն՝ իսրայէլի պարաւորները կերգէին.

«Սաուղ հազար սպաննեց.

Դաւիթ տասն հազար»։

Այս պատմութիւնը՝ կատարելութեան ցանկացողին լեղամուտ կանչ, թէ մարդ իր մանկութենէն պիտի ունենայ իւր սրտին մէջ Աստուծոյ սուրբ անուան նախանձաւորութիւնը, և նորա սքանչելիքները՝ զոր գործել է Արարչագործութենէն մինչև այսօր։ Աստուա՛ծ՝ իւր անուան նախանձաւորին՝ և իւր ուխտին դիմող ամեն անարատին՝ փրկութիւնն է, և կը քաջալերէ անմեղն՝ անվրաւին դէմ, ակարը՝ զօրաւորին դէմ, աղքատը՝ մեծատունին դէմ, խոնարհը՝ ամբարտաւանին ու հպարտին դէմ, Դաւիթին՝ Գողեադին դէմ։

19. Պարբերութիւն Ա՛ստուծոյ. «Ամսոյս տասնին ամենքն էլ՝ երդ գլուխ՝ առնուն մի մի կատարեալ արու ոչխար կամ այծ, և պահեն մինչև տասն և չորսն ամսոյն. և բոլոր բազմութիւնը մեսեին մօրթեն իրիկուան դէմ, և այն արիւնէն դնեն իւրաքանչիւր երեց տան բարաւորին և երկու չեմերուն վերայ, ուր որ ուտեն, և գիշերը ուտեն միսը խորոված, և բազարջ՝ եղեգի հետ. և այն մսէն՝ հում կամ ջրով խաշած՝ չուտէք, և ոչինչ չաւելցնէք, և ոսկորը չփշրէք. և մինչև առաւօտ ինչ որ մնայ, կրակով այրեցէք։ Եւ Ե՛ւ Ե՛ւ Ե՛

անգրանիկները գարնեմ. և այդ արիւնը լինի ձեզ ի յիշատակ, և ձեր սերունդներուն տօնեցէք Էբէլ Աստուծոյ տէն, յաւիտենական օրէնք»։

Այս պատուէրով կը պատուիրէ Աստուած իւր իսրայէլին, որ երբեմն փրկութեան յիշատակին անմոռաց կատարեն ամեն տարի որդւոց յորդի։

20. Տէն պատուիրեաց. Աստուած Սինայի լեռն էջաւ և խօսեցաւ այս տասն պատգամները Մովսիսի ձեռքով։ ա. Ես եմ քո տէր Աստուածը, որ քեզի հանեցի եգիպտացւոց երկրէն, ծառայութեան տունէն. ինձմէ զատ ուրիշ աստուածներ չլինին քեզ։ բ. Քեզի կուռք չշինես որ և է բանի նմանութեամբ, ոչ երկնային և ոչ երկրային և ոչ ջրային բաներու նմանութեամբ. և երկրպագութիւն չանես նոցա, որովհետև ես եմ քո տէր Աստուածը, նախանձոտ Աստուած, որ հայրերուն մեղքը՝ որդւոց վերայ չէ հատուցանեմ մինչև երրորդ, չորս սերունդներն՝ ինձ ատողներուն, և ինձ սիրողներուն մինչև հազարերորդ սերունդը՝ ողորմութիւն կանեմ, որոնք որ իմ հրամանս պահեն։ գ. Սնոտի բաներու վերայ քո տէր Աստուծոյդ անունը բերանդ չառնուս. Աստուած պիտի չսրբէ այն մարդուն՝ որ իւր անունը սնոտի բաներու վերայ բերանը կառնու (և կերդուի)։ դ. Միտդ բերես միշտ՝ թէ շաբաթ օրերը սուրբ պահելու է։ Վեց օրն աշխատիր, արա բոլոր գործդ, եօթներորդ օրը քո Տէր Աստուծոյն հանգիստն է. այն օրը չգործես քո որ և իցէ գործը, ոչ դուն, ոչ որդիդ, ոչ աղջիկդ, ոչ ծառադ, ոչ աղախինդ, ոչ եզդ, ոչ էշդ, և ոչ որ և է անասունդ. ոչ եկաւորն, և ոչ պանդուխտը՝ որ քեզ մօտ են։ Զի վեց օր ստեղծեց Աստուած երկինքն ու երկիրը, ծովը և բոլոր նոցա մէջ եղածները, և եօթներորդ օրն հանգչեցաւ. նորա համար ես օրհնեց Աստուած եօթներորդ օրը, և սրբեց։ ե. Հայրդ ու մայրդ պատուէ, որ քեզ բարի լինի, և երկայն ապրիս բարելից երկրի վերայ, զի կուտայ քեզ Աստուած։ զ. Մի սպանաներ։ է. Մի չնար։ ը. Մի գողանար։ թ. Մի վկայեր

սուտ վկայութիւն ընկերիդ վերայ։ ժ. Մի ցանկանար ընկերիդ տանը, և մի նորա արտին, և մի կնոջը, և մի ծառային, և մի աղախնոյն, և մի եզին, և մի էշուն, և մի որ և է անասունին, և մի որ և է ունեցածին»։ (Ելք Ի. 1—17.)։ Այս պատգամները տուած ժամանակ բոլոր ժողովուրդը լեռան տակը կեցած, կը լսէին ձայնը, և փողի բարբառը, կը տեսնէին ճառագայթը և լեռան ծխալը, և վախեցան ու ասացին Մովսիսին. Դուն խօսիր մեզ հետ, և ոչ Աստուած. գուցէ կը մեռնենք։

21. Խորհուրդ Քրիստոսի գալստեան. Որերբ ժողովուրդին ժամանակը կատէք լինէ, թէ այլ ևս չտեսնէք մեր տէր Աստուծոյ ձայնը, և չտեսնենք այդ մեծ կրակը, որ չմեռնենք. և Աստուած ասաց լինէ, թէ ուղիղ է բոլոր ասածնին։ «Նոցա եղբայրներէն քեզի նման մարգարէ յարուցանեմ, և իմ պատգամներս նորա բերանը դնեմ, և նա խօսի նոցա հետ՝ ինչպէս որ պատուիրեմ նորան։ Եւ եթէ լինի մարդ՝ որ չլսէ՝ լինչ որ խօսի այն մարգարէն՝ իմ անունովը՝ վրէժը ես կառնեմ նորանէն»։ (Բ. օրէնք. ժը. 16—19)։

«Բայց մարգարէն՝ եթէ անհաւատի, և խօսի իմ անունով՝ լինչ որ ես չհրամայեցի խօսել, կամ թէ խօսի ուրիշ աստուածներու անունով, մեռնի այն մարգարէն։ Ապա թէ ասէք ձեր սրտումն, թէ լինչպէս գիտնանք խօսքը, թէ Աստուած խօսեցաւ,—այսպէս պիտի գիտնայք. լինչ որ խօսի մարգարէն, Աստուծոյ անունովն և չկատարուի, այն խօսքն է, զոր Աստուած չխօսեցաւ։ Եւ անհաւատութեամբ խօսեցաւ մարգարէն, մի ծողուք (ներէք) նորան։» (Բ. օրէնք. ժը. 20—22)։

22. Հանգիստ Քրիստոսի գալուեան. «Ահա կոյսը պիտի յղանայ, և որդի ծնանի, և նորա անունը պիտի կանչեն ընդ մեզ Աստուած՝ եղ և մեղը պիտի ուտէ, դեռ բան մի չճանչցած, կամ մի չարութիւն չախորժած, բարին պիտի ընտրէ»։ (Եսայի. է. 14, 15)։ «Մեզի Մանուկ ծնեցաւ, որդի տրուեցաւ, որոյ իշխանութիւնը՝ իւր ուսե-

ըուն վերայ եղաւ. և նորան անուն դրուեցաւ—Հրեշտակ մեծի խորհրդոյ. Սքանչելի խորհրդակից. Աստուած. Հզոր. Իշխան. Հայր հաւիտենից աշխարհի: Եւ ես նորա իշխաններուն վերայ խաղաղութիւն պիտի բերեմ, և նորան առողջութիւն. նորա իշխանութիւնը մեծ է, և նորա խաղաղութեան սահման (կամ վերջ) չկայ: Դաւթի աթոռը պիտի նստի, և նորա թագաւորութիւնն ամրացնէ, և զօրացնէ իրաւունքով ու արդարութիւնով՝ այսուհետև մինչև ժամանակներու վերջը»: (Եսայի. Թ. 6, 7.): «Ահաւասիկ պիտի Հասկանայ մանուկս, պիտի վերանայ, բարձրանայ, և ա վեհանայ: Որպէս զի զարմանան շատերը քո վերայ, այնպէս՝ քո տեսքը պիտի անչքանայ մարդկներէն, և քո վեհքը՝ (մեծամեծներէն) մարդկանց որդիներէն: Այնպէս պիտի զարմանան քո վերայ շատ ազգեր, և թագաւորները պիտի կարկեն իրենց բերանը (չխօսելու կերպով բերաններն բացած պիտի մնան ապշած). վասն զի որոնց որ չպատմուեցաւ՝ պիտի տեսնեն, և որոնք որ լսած չեն՝ միտքը պիտի հասկանան»: (Եսայի Ծբ. 13—15): «Մի մարդ՝ հարուածներու մէջ, և գիտէ ցաւերու համբերել. դարձոյց երեսը, և անարգուեցաւ և ոչինչ համարեց: Նա մեր մեղքերը կը վերցնէ, և մեր համար կը չարչարուի. և մենք կարծեցինք, թէ ցաւերու, հարուածներու և չարչարանքի մէջ է իրեն թէ Աստուծմէ: Բայց նա մեր մեղքերուն համար վէրք առաւ, մեր անօրէնութեանց համար պատժուեցաւ. մեր խաղաղութեան խրատը նորա վերայ է. և նորա վէրքով բժշկուեցանք: Ամենքն ոչխարի պէս մոլորուած, ամեն մարդ իւր ճանապարհումը մոլորեցաւ, և Աստուած մեր մեղքին պատճառաւ մատնեց նորան: Նա՝ այն վշտին համար իւր բերանը չբանար: Ոչխարի պէս մորթելու քշուեցաւ. գառի նման իւր խուզողին առջև անմռունչ կանգնած է, այնպէս չբանար բերանը: Նորա խոնարհութեանը պատճառաւ վերցուեցաւ նորա դատաստանը, նորա ազգատոհմն ով գիտէ. նորա կեանքը կը

վերցուի երկրէն, ժողովրդիս անօրէնութենէն մահու քշուեցաւ: Նորա գերեզմանին փոխանակ չարեր՝ պիտի տամ, և նորա մահուան փոխանակ մեծամեծները, որ անօրէնութիւն չգործեց, և նորա բերանում նենգութիւն չգտնուեցաւ: Տէրը կը կամի սրբել նորան այն վէրքէն»: (Եսայի Ծգ. 3—10):

Այս աստուածային պատուիրաններն ու մարգարէական յայտնութիւնները եթէ ուղիղ մտօք և խոնարհութեամբ, և Աստուծոյ երկիւղը մեր սրտումն ունենանք ու կարդանք, կը տեսնենք բացորոշապէս թէ Աստուած ինչ կը պահանջէ մեզմէն. և թէ ինչ կը խոստանայ մեզ անել: Կը տեսնենք, որ Աստուած կը պահանջէ ճշմարիտ հաւատք, և սէր. և թէ ընկերը ընկերի չվնասել: Եւ կը խոստանայ, որ այլևս այն Սինայի գլուխն երևցած փառքովն չերևի մեզ, որ նախկին ժողովրդեան սարսափելի և զարհուրեցուցիչ երևեցաւ. այլ այնուհետև մարգարէ յարուցանէ մեզ, և նորա բերանով խօսի իւր օրէնքը. և թէ նորա անունը՝ ըստ տեղ Աստուած պիտի լինի. նա պիտի նախատուի, չարչարուի, և անմռունչ պիտի կենայ, ըստ որում մեր մեղքին համար պիտի յանձն առնու, և մենք նորա վէրքովն (նորա արիւնովն) պիտի փրկուինք, ինչպէս որ Եգիպտոսում կատարուած առաջին զատկի արիւնով ազատեցան և փրկուեցան իսրայէլի անդրանիկները: Եւ թէ Մարգարէն թէ որ Աստուծմէ չլինի և սուտ խօսի, չընդունինք, և այս պիտի հասկանանք՝ եթէ նորա ասած խօսքը չկատարուի: Իսկ եթէ նորա խօսածը կատարուի, հասկանանք, թէ Աստուծմէ է նա. և պահենք նորա խօսքը. եթէ ոչ Աստուած վրէժխնդիր պիտի լինի մեզ:

Ե. ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏՈՒԻՐՆ ՈՒ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ.

Յիսուս Քրիստոս Որդին Աստուծոյ՝ որ աշխարհ եկաւ մարդկիներուն սորվեցնելու, թէ ո՛ր գործերն են

Աստուծոյ հաճոյ՝ այն մարգարէն է, որ Աստուած խոստացաւ Մովսիսի բերանով, թէ նա պիտի սորվեցնէ Աստուծոյ պատուիրաններն՝ առանց ահացուցիչ նշաններու. այն մարգարէն է, որուն լսօսքերուն կատարումէն պիտի հասկանայնն իսրայելացիք՝ թէ Աստուծոյ խօսքերը կը խօսի. այն մարգարէն է, որուն համար կասէ Նայլ մարգարէի բերանով, թէ կոյսէն պիտի ծնի, անունն Աստուած ընդ մեզ պիտի կանչուի, այսինքն թէ «Աստուած մարդացել է». թէ նա բնաւ չարութեան չմիտած, բարին պիտի ընտրէ, պիտի նախատուի, պիտի սպանուի, նորա վէրքին արիւնը՝ վերկութիւն պիտի լինի, նա՝ իւր մահուամբ մեր մեղքերը պիտի քաւէ, մեր անօրէնութիւնները պիտի վերցնէ. այն մարգարէն է, որուն համար Դաւիթ բերանով յայտնուած է. «Նորա մարմինն ապականութիւն պիտի չտեսնէ. պիտի յարութիւն առնէ, և նորա բոլոր թշնամիները պիտի ցրուին». այն Փրկաւորն է Յիսուս՝ որոյ թագաւորութիւնն յաւիտենական պիտի լինի, տէր հանդերձելոց։

Յիսուս Քրիստոս որդին Աստուծոյ՝ որ եկաւ մարդկներուն կատարելութեան ճանապարհը սորվեցնելու, այսպէս կսկսի իւր վարդապետութիւնը՝ կամ ուսումը.

«Երանի՛ հոգւով աղքատներուն, զի նոցա է Աստուծոյ թագաւորութիւնը։ Երանի՛ սգաւորներուն՝ զի նոքա պիտի մխիթարուին։ Երանի՛ հեզերուն՝ զի նոքա պիտի ժառանգեն երկիրը (երկրի վայելչութիւնը)։ Երանի՛ նոցա՝ որ արդարութեան քաղցածն են և արդարութեան ծարաւին, զի նոքա պիտի յագենան։ Երանի՛ ողորմածներուն, զի նոքա ողորմութիւն պիտի գտնեն։ Երանի՛ սրտով սուրբ եղողներուն, զի նոքա զԱստուած պիտի տեսնեն։ Երանի՛ խաղաղարարներուն, զի նոքա որդի Աստուծոյ պիտի կոչուին։ Երանի՛ նոցա՝ որ արդարութեան համար հալածուած լինին, զի նոցա է երկնքի թագաւորութիւնը։ Երանի՛ ձեզ, որ ժամանակ որ նախատեն զձեզ և հալածեն, և չար ու սուտ ամեն

բան ասեն ձեր վերայ իմ պատճառաւ։ Ինդացէ՛ք և ուրախ եղէ՛ք, զի ձեր վարձերը շատ են երկինքում. և զի ձեզմէն յառաջ եղող մարգարէներուն ևս այսպէս հալածեցին»։ (Մատթ. Ե. 1—12)։

Յիսուս այս երանութիւններու վարդապետութեամբ կը սորվեցնէ, թէ այն մարդիկը՝ որ հոգւոյ կարօտութիւնները լեցնելու կը հետևին, և այս ճանապարհումն սուգի կը հանդիպին, նոքա երկնքի թագաւորութեան ժառանգները պիտի լինին և պիտի մխիթարուին. նոյնպէս հեզերը, արդարութիւն սիրողները, սրտով սուրբ եղողները, ողորմածները, խաղաղարարները, երենց կարօտութիւնը պիտի լեցնեն, երկնքի թագաւորութիւնը պիտի ժառանգեն, և Աստուծոյ որդիք պիտի լինին։ Նոյնպէս և արդարութեան համար հալածուածները և Քրիստոսի անուան համար զրպարտուածներն ու հալածուածները՝ երկնքի թագաւորութիւնը պիտի ժառանգեն։ Յիսուսի քարոզած հոգևոր կենաց պիտոյքներըն էին այս ընկերսիրական առաքինութիւնները. և նոր օրինակ կը թուէր ժամանակի իսրայելացւոց ուսեալներուն, որոնք օրէնքի կամ Աստուածային տասն պատուիրանաց բուն ոգին մոռացած, նորա արտաքին երևութի նշանախեցներովը կը պարապէին. և արդէն իսկ երենց հաճոյքներն աւելի կը կատարէին, քան թէ օրէնքը։ Այս օրէնսգէտները՝ Յիսուսի վարդապետութիւնը քննելու ելան. կարծելով, թէ Յիսուս իւր վարդապետութիւնը օրէնքէն չառնուր, հետևաբար Աստուծմէ եկած չէ՝ պիտի կարողանան ասել։ Այս քննութիւն որ, աչքէ անցուննենք, կարող ենք տեսնել, թէ Յիսուս ի՛նչպէս կը սորվեցնէր Աստուծոյ օրէնքները։

Սադուկեցիները՝ որ «մեռելոց յարութիւն չկայ» կսկսին՝ Յիսուսի քարոզած յաւիտենական կեանքը, կամ երկրնքի արքայութիւնը մերժելու մտքով, հետևեալ հարցումն առաջարկեցին.

—Վարդապետ, Մովսէս ասաց՝ «Թէ որ մեկը ան-

զաւակ մեռնի, նորա եղբայրը կին առնէ նորա կինը, և իւր եղբօրը զաւակ յարուցանէ: Մեզ մօտ եօթն եղբայրներ կային. նոցա մինը կին ունեցաւ, ու անորդի մեռաւ, երկրորդը կին առաւ ու անորդի մեռաւ. նոյնպէս երրորդը, չորրորդը, մինչև եօթներորդը, և անորդի մեռան. ամենէն ետքը կինն էլ մեռաւ. արդ մեռելոց յարութեան ժամանակ այն եօթնէն որո՞ւն կինը պիտի լինի. վասն զի ամենքն էլ նորան կին ունին»:

Յիսուս պատասխան տուաւ. Մոլորեալնե՛ր, ոչ գիրքը գիտէք, և ոչ Աստուծոյ զօրութիւնը. որովհետև յարութեան ժամանակ ոչ կին կառնուն, և ոչ առն կը լինին. այլ հրեշտակներու նման են երկինքումն: Բայց մեռելոց յարութեան համար՝ Աստուծմէ ձեզի ասուածները կարդացած չէ՞ք. «Ես եմ Աբրահամու Աստուածը, Իսահակայ Աստուածը, և Յակոբայ Աստուածը»: Եւ Աստուած մեռելներու Աստուած չէ, այլ կենդանիներու: (Մատ. իր. 23-31):

Սադուկեցիները այսպէս պատասխանելէն ետքը փարիսեցիները կուգան և կը հարցանեն.

—Վարդապետ, ո՞ր պատուիրանն է մեծ օրէնքի մէջ:

—Յիսուս պատասխան տուաւ. «Սիրես քո Տէր Աստուածը բոլոր սրտովդ, բոլոր անձովդ, և բոլոր մտքովդ». այս է մեծ ու առաջի պատուիրանը: Երկրորդն էլ սորա նման է. «Անձիդ պէս սիրես ընկերդ». բոլոր օրէնքն ու մարգարէները՝ այս երկու պատուիրաններէն կախուած են:

Փարիսեցիները յարութիւն մեռելոց կ՚ընդունէին, և Յիսուսի Աստուած կամ որդի Աստուծոյ լինելը չէին ընդունէր: Յիսուս նոցա կարծիքն յանդիմանելով, կը հարցանէ.

—Քրիստոսի համար ի՞նչպէս կը կարծէք. որո՞ւ որդին է:

—Դաւթի որդին է:

—Հապա Դաւիթ ի՞նչպէս Տէր կը կանչէ նորան Հոգւով, ու կասէ. «Տէրը՝ Տէրոջս ասաց. Նստի՛ր աջ կողմէս, մինչև որ քո թշնամիները ոտքերուդ պատուանդան դնեմ». եթէ Դաւիթ նորան Տէր կը կանչէ, ի՞նչպէս նորա որդին կը լինի: Եւ ոչ ոք չէր կարող պատասխան տալ նորան մի բան, և չէին իշխէր հարցանել ևս: (Մատ. իզ. 41—46):

Թէ սադուկեցիք և թէ փարիսեցիք մարմնասէր աչքով կը դատէին օրէնքը. նոքա Աստուծոյ օրէնքներն այնպէս կը համարէին, որ որպէս թէ այս աշխարհի մէջ Հրէից ազգն ուրիշ ազգաց վերայ յաղթող պիտի աներ, և ամենէն մեծ թագաւորութիւնը պիտի լինին. իսկ Աստուծոյ այն խօսքը՝ թէ «Մարգարէին խօսքը չլսողներէն՝ ես պիտի վրէժխնդիր լինիմ», բնաւ չէին մտածեր. նոյնպէս օրինաց պատուիրած քաւութիւններուն կատարածը, և հանդերձեալ աշխարհի Տէրոջ գալուստը բնաւ միտք չէին բերեր:

Յիսուս՝ փարիսեցւոց հարցմանը պատասխանելով, ասաց առաջին և մեծ օրէնքը.—Սիրես քո տէր Աստուածը բոլոր սրտովդ, բոլոր անձովդ ու բոլոր մտքովդ. և յաւելցուց ասել, թէ երկրորդ էլ սորա նման է.—Սիրես ընկերդ քո անձիդ պէս. որոց առաջինը կը պահանջէ բուն Աստուածամտութիւն, կամ Աստուծոյ հաճոյքներուն տեղեկութիւն, որով և Աստուծոյ կրկին ունենանք մեր սրտումն՝ որ այս աշխարհի կեանց մէջ մեր հոգեկան կեանքը պիտի լինի, և երկրորդը կը պահանջէ մեր ամեն գործերն մի նպատակի ուղղել, և որ մեր հոգեկան կենաց բուն երևոյթը պիտի լինի: Իսկ մարմինը՝ որ միշտ հակառակ կը ցանկայ հոգւոյն, միջոց պիտի լինի միայն ընկերասիրութեան պահանջներն անթերի կատարելու, և այն՝ հոգեկան զգացմանց ու իմացմանց հետևելով: Մարդուս հոգւոյն իմացումն է հոգւոյ անմահութիւնը՝ որով և նորա ցանկութիւնը կը լինի հանդերձեալ կենաց փառ-

քը. և որուն հասնելու մէջտեղ կը սորվեցնէր Յիսուս Ճշմարիտ Աստուածպաշտութիւնն ու կատարեալ ընկերսիրութիւնը։ Հանդերձեալ դատաստանի նկարագրութիւնը կը վայելեցնէ ընկերսիրութեան վարդը՝ ասելով.

«Եկէք՝ Հօրս օրհնածները (Աստուծոյ օրհնածները), ժառանգեցէք ձեզ համար իսկզբանէ պատրաստուած արքայութիւնը, ըստ որում երբ քաղցեցայ, կերցուցիք, երբ ծարաւեցայ, խմցուցիք, երբ մերկ էի, հագուեցուցիք. օտար էի, ընդունեցիք, եւլն. եւլն. Հիւանդ էի, զիս տեսայք, բանտումն էի, ինձ եկայք»։ Ընդհակառակն՝ այս ընկերսիրութիւնը չունեցողներուն կասէ. «Գնացէք ինձմէն, անիծեալներ, յաւիտենական կրակին գնացէք, զի քաղցեցայ, չկերցուցիք, ծարաւ էի, չխմցուցիք, մերկ էի, չհագուեցուցիք, հիւանդ էի, բանտումն էի, ինձ մօտ չեկայք»։ Այս տեղ մասնաւորապէս կաւելցնէ, թէ նոքա պիտի զարհուրին և հարցնեն Տէրոջը. թէ Տէր, ե՞րբ քաղցած տեսանք քեզի, և չկերակրեցինք, ե՞րբ ծարաւ տեսանք, ու չխմցուցինք, ե՞րբ մերկ տեսանք, ու չհագուեցուցինք, ե՞րբ հիւանդ տեսանք զքեզ, կամ բանտումն, ու չծառայեցինք. և Տէրը պիտի պատասխան տայ նոցա. «որովհետև այս վերջիններէն ոչ մէկին չարիք, ինձի էլ չարիք»։

Յիսուս իւր աշակերտներուն միտքն այս նպատակին ուղղած կը սորվեցնէր իւր վարդապետութիւնը, մանրամասնութեամբ խօսելով այն մարդոց ահաւորին, որ կը ցանկանայ յաւիտենական կենաց հասնել։

Մի անգամ մի մեծատուն կը մօտենայ Յիսուսին, այն մարդով որ սորվի, թէ ի՞նչ պիտի անէ, որ չմեռնի։ Մեծատունին այս ցանկութիւնը՝ բուն հոգւոյ ցանկութիւնն է, որ արդէն անմահ է, և մարմնոյ անհանգստութիւններէն դուրս հանգիստ կը փնտրէ. բայց այս մեծատունն՝ ինքը մարմնական հաճոյքներու և աշխարհային վարքերուն կապուած մէկն էր, և կը հարցնէր։ Որուն հեզութեամբ կը պատասխանէ Յիսուս օրէնքին. այսպէս.

—Բարի վարդապետ, ի՞նչ բարի գործեմ, որ յաւիտենական կեանքն ընդունիմ։

—Ի՞նչու ինձ կը հարցնես բարի գործոյ մասին. բարին մի հատ մին է. եթէ կուզես յաւիտենական կեանքը մտնել, պատուիրանները պահէ՛։

—Ո՞ր պատուիրանները։

—Այս պատուիրանները. «Մի՛ սպանաներ։ Մի՛ շնար։ Մի՛ գողնար։ Մի՛ սուտ վկայեր։ Հայրդ ու մայրդ պատուէ՛։ Ընկերդ՝ անձիդ պէս սիրեա։»

—Այդ ամենը պահեցի ի մանկութենէ. այժմ ինչո՞վ պակսեմ։

—Եթէ կուզես կատարեալ լինել, գնա՛, բոլոր ունեցածդ վաճառէ, աղքատաց տուր, և երկնքում գանձեր կունենաս, և իմ ետևէս եկուր։

Այս տեղ կաւելցնէ աւետարանիչը. թէ պատանին որ այս լսեց, տրտմած գնաց. և Յիսուս ասաց. թէ Մեծատունը դժուար կը մտնէ երկնքի թագաւորութեան մէջ։ Այս վերջին բացատրութենէն կը տեսնենք, որ այս մեծատունը՝ իւր մարմնական սոսկացուածքներուն կապուած, և անմահութիւն կը փնտրէր, բայց իւր հոգւոյն աղքատութիւնը կամ կարօտութիւնը տակաւին զգացած չէր։

Ուրիշ անգամ մի օրինական ևս այս միևնոյն հարցումն կանէ Յիսուսին. և Յիսուս կը հարցնէ նոյնն, թէ օրէնքումն ի՞նչպէս գրուած է, ի՞նչպէս կը կարդաս։ Այս տեղ մէջ կը բերէ օրինակը՝ «Սիրես քո տէր Աստուածդ բոլոր սրտովդ, բոլոր անձովդ, բոլոր զօրութիւնովդ, ու բոլոր մտքովդ։ Եւ ընկերդ սիրես քո անձին պէս»։ Եւ Յիսուս կասէ.—ուղիղ պատասխան տուիր. այդ արա, և կապրես յաւիտենական կեանքում։ Այս տեղ օրինականը՝ զինքն արդարացնելու համար կը հարցնէ. թէ ո՞վ է իմ ընկերն։ Յիսուս կը պատասխանէ մի առակով. —թէ մի մարդ Երուսաղէմէն Երիքով կիջնէր. աւազակները յարձակեցան վրան, մերկացուցին, վիրաւորեցին,

և կիսամահ Թողուցին, ու գնացին: Այն Հանըէն մի քահանայ անցաւ, տեսաւ ու բանի տեղ չդրաւ: Մի վոք յետոյ մի ղեւտացի ևս անցաւ, նոյնպէս բանի տեղ չդրաւ. յետոյ մի սամարացի անցաւ, տեսաւ, մօտեցաւ վէրքը կապեց, վերան ձէթ ու գինի լեցնելով ձիուն վերայ առաւ մի պանդոկ հասցուց. և միւս օրը երբ կերթար, պանդոկապետին յանձնարարեց, Թէ դարման արա՛ այս մարդուն, և ինչ որ ծախք անես, միւս անգամ գալուս կը վճարեմ—: Այս առակէն եաքն Հարցուց օրինականին, Թէ ի՞նչպէս կը Թուի քեզ, այն երեքէն ո՞րը մերձաւորը է աւազակաց ձեռքն ընկնողին: Օրինականը կը պատասխանէ, Թէ ողորմութիւն անողն է մերձաւորը. և Յիսուս կասէ. գնա դուն էլ այնպէս արա:

Յիսուս այս պատուիրաններն աւելի մանր բացատրելով սորվեցուցած ժամանակին, այսպէս Համառօտեց.

«Ինչ բան որ կը կամենայք, Թէ մարդիկ անեն ձեզ, նոյնը դուք էլ նոցա արէք. դի օրէնքն էլ այս է, մարգարէութիւններն էլ այս են: Նեղ դռնէն մտէ՛ք, քանի որ լայն դուռը և համարձակ Հանապարհը՝ կորստեան կը տանեն, և շատերը կան, որ դայն կը գտնեն: Նեղ դռնէն մտէ՛ք, քանի որ նեղ դուռը և անձուկ Հանապարհը՝ դէպի կեանքը կը տանեն, և քիչերը կան, որ գայն կը գտնեն: Ամեն ոք որ այս խօսքերըս կը լսէ, ու կը կատարէ, կը նմանի այն իմաստուն մարդուն, որ իւր տունը Հաստատ վէմի վերայ շինեց: Անձրևներն եկան, գետերը բարձրացան, քամիները փչեցին, և տունը ձեռնեցին, ու չկործանեցաւ. վասն զի Հաստատ քարի վերայ Հաստատուած էր: (Ղուկ. է. 12, 13, 24, 25):

Ինչպէս Թէ՛ պատուիրաններէն և Թէ՛ բացատրութիւններէն կը տեսնենք, Աստուծոյ պահանջած կատարելութեան օրինաց բուն հիմքն է ՃշմարիտՀոգեւոր սէրը ԱստուածԱյն է մարդկան միրաը սիրելը: Եւ այս սէրն այն

աստիճան անկեղծութեամբ պէտք է ունենալ, որ մինչև անգամ մեր Թշնամուն չար չկամենանք. մեզի ատողին բարի անենք, մեզի անիծողին օրհնենք, մեզի չարչարողին վերայ աղօթք անենք: Աստուծոյ այս պատուէրն եԹէ միակողմանի դիտենք (ինչպէս այսօր մեր սովորական դրութեան մէջ կը դիտենք ամեն բան), չենք կարող տեսնել այս սիրոյ վախճանը, վասն զի աչքերնուս տեսութիւնն անմիջապէս կը պատահի մի վարագուրի, որուն վերայ կը տեսնենք.—Թէ միայն ես ընկերասէր լինելով՝ ի՞նչպէս կարող եմ վերցնել այսքան մարդկան կարօտութիւնը, մինչդեռ ոչ ոք այս օրէնքը չպահէր—: Այս վարագոյրը մեր տեսութեան առաջէն վերցնելու Համար, պիտի ուշադիր լինինք և իմանանք, Թէ Աստուած այս պատուէրը միայն լինձի չպատուիրեր, այլ ամեն մարդու կը պատուիրէ. և ամեն մարդ Հաւասարապէս պարտական է այս պատուէրին պահպանութեանը, որ Հաւասարապէս ապրինք: Ինչպէս ամեն մարդ պարտական է իւր անձին Հոգալ, այնպէս պարտական է և այս պատուէրի մասին ունեցած պարտականութիւնն ևս Հոգալ. որովհետև այս ևս իւր անձին բարեյոյս կամ լաւութեանը պիտոյք է, և մեծ պիտոյք:

Ճշմարիտ կեանքի առաջնորդող այս սիրոյ պատուիրանին վախճանն իմացողը՝ չէ կարող այս պատուիրանի կատարումը զանց առնել. այլ միայն իւր բաժինը կը կատարէ անԹերի: Եւ ուրիշներն եԹէ չեն կատարեր, նորա օրինակովն ևս դիւրութիւն կունենան տեսնելու իրենց բռնած Հանապարհի վերջին կորստականութիւնը, և կատարեալ մարդու բռնած Հանապարհին վերջին կեանքն, և Թերևս կը գառնան իրենց կարստական Հանապարհէն, և կը մտնեն այն նեղ դռնէն, որոյ նեղ Հանապարհը՝ կեանքի կը տանի կը Հաստնէ: Աստուած՝ լինքն իսկ կը սորվեցնէ մեզ, Թէ քիչերը պիտի լինին այս Հանդուն Հետևող. իսկ կորստական Հանապարհին Հետևող խիստ շատերը կան: Գիտ-

նալով թէ այս ինչ Ճանապարհն վաճառանը կորստական է, և շարունակենք նոյն Ճանապարհը, անշուշտ պիտի հասնենք մահուան, որմէ փախչել անկարելի պիտի լինի. մանաւանդ թէ պիտի հասնենք տարաժամ մահուան։ Տեսնելով, թէ շատերը կերթան տարաժամ մեռնելու, ես ինչ պարտական եմ նոցա հետ այն մահուան Ճանապարհը գնալու։ Ես կը դառնամ, և կենաց տանող Ճանապարհով կը գնամ։ Այս կենաց տանող Ճանապարհն Ճանապարհորդութիւնը՝ ոչ ոքի չարգելուիը. ամեն ոք ազատ է նոյն Ճանապարհը գնալ, բաւական է որ ինքը կամենայ գնալ և յաւիտենական կենաց հասնել։

Նոյն իսկ Յիսուսի քարոզութեան ժամանակ կային քիչ, տկար, աղքատ և անգէտ մարդիկ էին, որ կորստական Ճանապարհը ձգած, ընկերսկրութեան անձուկ Ճանապարհը գնացին. որոց եթէ միայն այս մարմնական աշխարհում ունեցած վաճառանը տեսնենք, այն ևս ապացոյց է կենաց հասնելու։ Յիսուսի պատուիրած ընկերսկրութեան Ճանապարհն ընտրողներէն միայն Հրէաստանում գտնուողներն՝ ամբողջ Հրէից ազգին յայտնի եղան. սկրով և մխաբանութեամբ զօրացած, իրենց վերայ յարուցուած ամենայն նեղութեանց ու թշուառութեանց յաղթե լին. ամբողջ աշխարհի բոլոր ազգերուն մէջ իրենց հետևողներ ունեցան. հետզհետէ բազմացան, տուարացան, ըստ այնմ և զօրացան, ու կորստական Ճանապարհի կործանեցեալ փառքին ու մեծութեանն հետևող ու խարուած մեծ բազմութեան կարօտութիւնն ու նեղութիւնն անգամ կը վերցնէին. այնպէս որ մարդ չկար աշխարհի երեսում, որ չզարմանար նոցա կենաց սրբութեանը վերայ, նոցա արիական հոգւոյն, Աստուածազօր ընկերսկրութեանը և ամենապարզ վայելչութեանը վերայ. որոնք մինչև անգամ իրենց հակառակ ելլող աշխարհի զօրութիւններուն յաղթեցին. յաղթեցին այն թագաւորներուն, որոնք ինքզինքնին աստուածներ կը համարէին, և բոլոր մարդիկն իրենց

արարածը, և այնպէս կը վարուէին մարդկանց հետ։ Այն աստուածացած թագաւորներն՝ իրենք իսկ զարմացան, սաստանեցան, երբ տեսան, որ իրենց հրամանը զօրացնող ամբողջ զինուորական բանակներն իսկ՝ այն առաքինութեան՝ մարդկային կատարելութեան բուն Ճանապարհին, յաւիտենական կենաց տանող նեղ ըռան և անձուկ Ճանապարհին Ճանապարհորդները էին գրուած։

Մարդկային աչքերու անակնունելի այս յաղթանակէն ետքը նա և նոյն ընկերութիւնը՝ կարի ընդարձակութեամբ ծաւալեցաւ ամեն կողմ. կապրէին հանգիստ հոգւով (արդարութեան միայն ծարաւի), որպէս թէ ոչ ոք նոցա թշնամին չլինէը. այնպէս որ թշնամական հոգին՝ ամբողջ բազմութիւններէ հեռացած, կապրէին անմեղութեան ամեն վայելչութեանց մէջ կատարեալ, առանց այն անտանելի ցաւոց, զոր կը յաւելումք այսօր մենք ամեն ոք մեր վերայ՝ սնոտի փառասիրութեանց հետևելով և մարմնական հաճոյքներն՝ որ րոպէական են՝ անմահութեան հաղորդող յօժարութիւնները համարելով, ու խաբուելով կը խաբենք մէկ գմէկ և կը զրկեմք. ցաւ ցաւի վերայ կաւելցնեմք, և հիւանդութիւն հիւանդութեան վերայ. և նոցա ծանրութեան տակ ճնշուած, կը նուաղինք, կը նուաղինք, և ընկերսկրութեան ամեն պատուիրաններուն դէմ պատուիրանազանց՝ տարաժամ մահուան կը պատահինք, ու հոդ կը դառնանք. թողլով մեր եաևէն՝ մի հիւանդ և կիսահոգի սերունդ, որ բնաւ նշմարած չեն կենաց Ճանապարհի ոչ սկիզբը, ոչ մէջը և ոչ կատարածը. այլ միայն կորստեան Ճանապարհին դռները կը ծեծեն, որ բացուի իրենց. և արագ արագ պիտի կորսուին։

Դառնանք պահ մի այս կորստեան Ճանապարհէն, և մի մի դիտենք Աստուծոյ պատուիրանները, որոց մով միայն փրկութիւն խոստացուած է մեզ, և յարու-

Թիւն՝ գերեզմանի մեռելութենէն։ Եթէ չունինք հաւատք Աստուծոյ կատարած փրկութեանը, եթէ չունինք յոյս յարութեան, եթէ չունինք հանդերձեալ յաւիտենական անմահութեան ակնկալութիւնը, եթէ չունինք Աստուծոյ զատաստանին երկիւղը, և այն երկիւղին հետևութիւնն եղող գգօնութիւնը, այն ժամանակ բանական հոգի ունեցող մարդուն աւելորդ է բոլորովին այս աշխարհի կեանքումն ապրելը. ըստ որում առանց այս հաւատքին, առանց այս յուսոյն և ակնկալութեան և առանց այս երկիւղածութեան, մարդուն կեանքը կը հաւասարի բոլորովին անասնոց կեանքին. այն է՝ երկու օր օգ շնչել և ապա ընկնել մեռնել և վերջանալ. մինչդեռ բանական մարդուն բուն պիտոյքն է ապրել այս աշխարհում կամ այս մարմնում, որպէս զի յաւիտենականութեան մէջ երանութեան արժանանալու գործերը գործելու աւելի միջոց ունենանք։ Եթէ վոքը ինչ խորհենք անբողջ մտքով, և ուղիղ դատենք, կը գանենք, որ բանական հոգւոյ ցանկութիւններն արհամարհողը՝ անբան մարմնոյ անբանական բուռն ցանկութիւններն են, որ մարդուս ոտքը կատարելութեան շաւղէն կը խոտորեցնեն, որոց կատարումն՝ բոլէական հեշտութեանց անմիջապէս ետևէն անվերջ ցաւերը կը բերեն կը հասցնեն. և դժբախտաբար բանական զօրութենէն տկարացած մարդկիկը գերի կը գնան այն յօժարութեանց, կարծելով, թէ նոցա բոլէական հեշտութեանց հետևութիւնն առողջութիւն է և կեանք. առանց բնաւ տեսնելու այն հեշտութեանց խոցերէն վիրաւորուած երեսները, խանգարուած ուղեղները, հաշմանդամ սերունդը, տեսակ տեսակ զազրալի ախտերն ու հիւանդութիւնները, հառաչանքները, տարաժամ մահերն ու լացերը, և թէ որչափ տներ և ընտանիքներու ցեղեր մինչդամայն բնաջինջ եղած են աճելութենէ դադարելով։

Աչքէ անցուննենք պահ մի Աստուծոյ պատուիրան-

ները, և տեսնենք, թէ նոցա ճիշդ պահպանութիւնն՝ ինչպիսի երջանկութեան կը հասցնէ զգուշացող անձին, տունին, ժողովուրդին, ազգին և աշխարհին։ Եթէ մի անգամ միայն լմանանք Աստուծոյ պատուիրանաց պահպանութեան հետևորդ երջանկութիւնն ու երանութիւնը, և տեսնենք հոգւոյ աչօք՝ ինչպէս տեսան առաջին դարուն քրիստոնեաները, այն ժամանակ անկարելի կը լինի Թողուլ այն երջանկութեան տանող ճանապարհը, և խարխափել ուրիշ անյայտ ճանապարհներուն. եթէ ունենանք միևնոյն ժամանակ՝ բանական հոգւոյ այն կատարելութիւնը՝ որ չզոհէը հոգւոյն ցանկութիւնը՝ մարմնական ցանկութիւններուն։ Եթէ կարողանանք ճանաչել մեր հոգւոյն ցանկացած երանութիւնը, և կարողանանք զանազանել, թէ որքան կառաւելու մարմնական ցանկութեանց հեշտութիւններուն համեմատութեամբ, այն ժամանակ մարմնական կենաց մէջ ևս բանականութեամբ կառաւելունք։

Զ. ԹԷ ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՏՈՒԻՐՆԵՐՆ Ի՞ՆՉ ԵՐՋԱՆԹԻՒՆ ԿԸ ԲԵՐԵՆ.

Ցիսուսի սորվեցուցած (մեծատունին սորվեցուցած) դասին մէջ առաջին տեղը կը բռնէ «Մի՛ սպաներ» պատուիրանը։ Ամեն մարդ կը հասկանայ, թէ այս պատուիրանի պահպանութիւնն երջանկութիւն միայն է, և ոչ երբէք թշուառութիւն կամ որ և է նեղութիւն. ըստ որում՝ չմեռնել ցանկացող մարդկիկներուն Թերևս պատահելիք տարաժամ մահերուն մէկ տեսակն՝ այսինքն մարդկանց ձեռքով եղած մահը կը վերցնէ, ու կեանքը այս տեսակ մահու կասկածներէն ևս կապահովէ։ Ասել է որ այս պատուիրանի պահպանութիւնը մարդու կեանքը կապահովէ մի տեսակ մահուան դէմ, որ միայն երջանկութիւն է։

Յիսուսի տուած դասին մէջ՝ երկրորդ տեղը կը բռնէ «Մի՛ չնար» պատուիրանը։ Այս պատուիրանին մէտքը՝ կ'ին մի՛ ունենար ասել չէ. այլ ասել է, թէ քո կ'ինն ունեցիր, և մեայն բնական օրինաց համեմատ զաւակ ունեցիր. և ուրիշի կ'նոջը վերայ ծուռ մի նայիր։ Մարդ՝ արու և էգ կը ծնանի. պատմական աշխարհագիր մատեաններն կ'ստուգեն, որ արու և էգ զաւակները միշտ հաւասար թուով կը ծնանին (քիչ տեղերում երևցած բացառութիւնները դարձեալ բնական օրէնքէ դուրս եղած դեղծումներու հետևանք է)։ Ամեն արու՝ մի էգ ընկերի կարօտ է. և ամեն էգ՝ մի արու ընկերի։ Այս բնական կարօտութիւնը լեցնելու համար՝ այր և կ'ին շինելու բնական օրէնքը նուիրագործուած է, և այն օրէնքով՝ ամեն այր՝ իւր կ'նոջմէն հաւատարմութիւն կը պահանջէ, և իւր կողմէն հաւատարմութիւն կուտէ. նոյնպէս և ամեն կ'ին՝ իւր այրէն հաւատարմութիւն կը պահանջէ, և իւր կողմէն հաւատարմութիւն կուտէ. և այս երկու կողմանէ հաստատուած ու պահանջուած խոստումներով՝ կապահովուի որդեծնութեան բնական օրէնքի անխառն սրբութիւնը, որոյ ճիշդ պահպանութեամբ կարի շատ կաճի մարդ որդւոց յորդի, և ազգէ յազգ. ինչպէս որ բնութեան արարիչն Աստուած սահմանել է, և օրհնել. «աճեցէ՛ք, բազմացէ՛ք և երկիրը լեցուցէ՛ք»։ Այլ չնութեան հանապարհէն չդարժանուող վաւաշոտները՝ թէ արուները և թէ էգերն՝ ոչ երբէք կաճին որդւոց յորդի. այլ ինչպէս պատմութիւնը կը ցուցնէ, նոքա կամ անզաւակ կը մնան, կամ երեք կամ չորսում սերնդեան վերայ կը դադարին ու կը վերջանան. այն էլ՝ ինչպէս որ Աստուած կասկ պատգամներուն մէջ, երբեմն հայերուն գործած չարիքներուն վրէժը լուծելու համար միայն։—Անօրէնները զաւակները տարաժամ (դեռ պէտք եղածին չափով չապրած) մահով պիտի վերցուին)։

Ուրեմն Աստուծոյ պատուիրած այս պատուիրանին պահպանութիւնը՝ կը վերցնէ մարդկներէն՝ այսպիսի և այս պատճառներով չառաջանալիք անզաւակութիւնն ու սերնդոց պակասութիւնը. և կապահովէ մարդկային աճելութիւնը։ Դարձեալ՝ երբեմն ուխտած հաւատարմութեանը դրժող այրերն ու կ'ինեներն՝ սպանութիւններու պատճառ եղած են շատ անգամ, որոց օրինակները մեր օրերում ևս յայտնուած են շատ դատաստաններում, և շատերն ևս կաւանդէ պատմութիւնը։ Աստուծոյ պատուիրանին հակառակող չնութիւնն աճելութեան վնաս բերելէ զատ՝ շատ անգամ էլ մահաբեր կը լինի։ Ահա այս կարգի մահերն ևս կը պակասին մարդոց սերունդէն, եթէ այս Մի՛ չնար» պատուիրանին պահպանութեանը պէտք եղածին պէս զգուշանան մարդիկ։

Յիսուսի ցոյց տուած պատուիրաններուն մէջ՝ երրորդ տեղը կը բռնէ «Մի՛ գողանար» պատուիրանը։ Թէ այս պատուիրանին պահպանութիւնն երջանկութեան և մխանգամայն կեանքի ապահովութիւն է, գողերն անգամ կը հասկանան։ Եթէ ընդհանուր պահպանութիւն այս պատուիրանը՝ պիտի վերնայ գողերու սրտին դողը, կախաղանը, և կառափնարանը. և ամեն մարդու վաստակն ու պաշարն իւր պիտոյքին մեայն պահուած լինելու հաշիւներն ու ակնկալութիւնները ճիշդ պիտի իրագործուին, և այն անակնկալ քաղցը պիտի վերնայ, որ շատ անգամ թշուառ կանէ ամեն կարգի մարդուն՝ և այն՝ բնութեան ամենախիստ եղանակներումն։ Ահա այսպէս և այս պատուիրանի պահպանութիւնը՝ թէ մի տեսակ մահու տագնապ կը վերցնէ, և թէ կենաց պիտոյքը կապահովէ. հետևաբար և երջանկութիւնը պահպանող պատուիրան է։ Եթէ գողութիւնն իրաւունք համարի մի գող, պիտի խորհի, որ երբեմն ևս գողցողներ պիտի լինին. և այսպէս ամեն օր գողանալով, պիտի հանին յետին ծուլութեան և չարչարութեան,

որ բոլորովին մահաբեր է այն ժամանակ, և այնուհետև գողանալէ ուրիշ որ և է զբաղմունքի մէջտեղ պիտի չըգանեն, մինչև մէկզմէկ սպառեն։

Յիսուսի ցոյց տուած կենաց Ճանապարհին մէջ չորրորդ տեղը կը բռնէ «Մի սուտ վկայեր» պատուիրանը։ Այս պատուիրանը՝ մեծ և ընդհանուր երջանկութիւն կը խոստանայ ամեն մարդու, զոր կը տեսնենք, եթէ ուշադրութեամբ քննենք վկայութեան կարօտ եղող գործերու քննութեան սկզբունքն ու նպատակը։ Սորա պահպանութեամբ մարդիկներէն կը վերնայ անօրէնութիւնն ու չարագործութիւնը. և այն ամեն գործերը, խօսքերն ու խորհուրդները՝ որ հասարակաց ատեաններուն ամօթ կը բերեն մարդուս։ Որով և կը վերնան այն ամեն զրկանքները՝ որոնք միմիայն սուտ վկայութեան չնորհիւ կը յաջողին՝ մինչև իսկ դատաւորները ու դատաստանական ատեանները սխալեցնելով, և իրաւունքն՝ անիրաւին կուտան։ Այս պատուիրանին պահպանութիւնը՝ կընդհանրացնէ արդարութիւնը, կը վերցնէ խաբէութիւնը, որով և ամեն մարդու միատեսակ օգտակար կը լինի։ Սուտ վկայութեամբ աջողութիւն գտնող անիրաւութիւնները առհասարակ կարելի է ասել, թէ մի տեսակ այլակերպեալ գողութիւններ են, որոնք շատ անգամ մահու և տարաժամ մահերու պատճառ կը դառնան։ Այս տեսակ մահերը վերցնող պատուիրանը՝ կենարար պատուիրան է։

Յիսուսի ցոյց տուած Ճանապարհումն հինգերորդ տեղը կը բռնէ «Հայրդ ու մայրդ պատուէ» պատուիրանը։ Այս պատուիրանի պահպանութիւնով կապահովի մարդուս մէկ հատիկ վտանգը՝ որ ունի այս աշխարհի կեանքում։ այն է՝ ծնողաց իրենց որդիներէն ստացած վտանգը ու պատիւն, որով միայն կը մխիթարուի հոգին, երբ իւր կեանքը՝ իւր որդւոյ սրտումն պատուական տեսնէ։ Ծնողք ի բնէ որդեսէր կը լինին, և կը խնամեն իրենց զաւակները բոլոր սրտով և հոգւով. ծնողք կը

քաջալերուին իրենց որդիքը խնամելու ամենադժուար աշխատանքներուն ու տքնութիւններուն, միայն նոցա ապագայ ծնողասիրութեան ակնկալութիւնով։ Եթէ չափահաս որդւոց սրտէն վերնայ ծնողաց պատիւը, պիտի պակասի և պիտի վերնայ նոյնպէս և ծնողաց սրբտէն՝ որդեսիրութեան ոգին. որոյ հետևանքը կը լինի դարձեալ անպատակութիւն և սպառումն ազգի և սերունդի։ Աստուծոյ այս պատուիրանին պահպանութիւնը կապահովէ ծնողաց գոյութիւնն է տակաւ և անգիտ ծննդոց գոյանալուն և աճելուն, որմէ եաքը. միայն կը հասնին իրենց պահպանելու ամեն մի գործին և միջոցին։ Իսկ եթէ ծնողք անտես անեն իրենց նորածին մանկանց, և չխնամեն այն ակնկալութեամբ, որ նա ապագայումն իրենց կենաց տկարութիւնները պիտի գօրացնէ, այլ ևս ոչ պիտի աճի և մեծանայ։

Յիսուսի ցոյց տուած կենաց Ճանապարհի երրորդին մէջ վեցերորդ տեղը կը բռնէ «Ընկերդ անձիդ պէս սիրես» պատուիրանը։ Եթէ լաւ ուշադրութիւն դարձնենք այն պարտականութիւններուն վերայ՝ զոր այս պատուիրանը կը դնէ մեր վերայ, կը տեսնենք, որ առաջին հինգ պատուիրաններով մեր վերայ դրուած բոլոր պարտականութիւնները՝ այս պատուիրանի դրած պարտականութեանց գումարումը կը լինին։ Այսինքն եթէ մարդ իւր ընկերը սիրէ իւր անձին պէս, այն մարդը՝ ոչ սպանող կը լինի, ոչ շուն, ոչ գող, ոչ սուտ վկայ, և ոչ հայրն ու մայրն անարգող. այլ որչափ որ իւր անձը կը սիրէ, այնչափ էլ ընկերինը. որչափ զգուշանայ իւր իրաւունքին, այնչափ ևս իւր ընկերինին, որչափ պահպանէ իւր ունեցածը, այնչափ ևս իւր ընկերինը. որչափ սիրէ իւր զաւակին, այնչափ կը սիրէ և ընկերի զաւակին, որչափ պատուէ իւր ծնողքը, այնչափ ևս իւր ընկերին ծնողքը. որով և ամենայն մարդ միևնոյն պարտքը կունենան, այն է՝ աշխատութիւն — գործել

զերկիը և պատուղ բերել. և մեևնոյն իրաւունքը կունենան, այն է՝ վայելչութիւն—ապրել երկրի բերքերով և իրենց ձեռքի վաստակով. և այսպէս ամենայն մարդ՝ մեևնոյն սրտով և մեևնոյն զօրութիւնով կը դառնան իրեև մի մարդ. մեաալս մէկ մէկու օգտակար ու օգնական, և ուրախութիւն և մխիթարութիւն. որով կը վերնայ մարդէն ամեն տեսակ վնաս և վտանգ, կը վերջանայ բոլորովին սրտի հառաչանքը, բերնի վայը, և աչքի արտասուքը. և կը քաղցրանայ աշխատութիւնն ու վայելչութիւնը, որով կսկսին սրտի ուրախութիւնը, բերնի գոհութիւնը և աչքի հաճոյական հայեցուածքը.— սէր ընդհանուր, և հանդոյր սիրով. որ արդարև նախընթաց նշան է անմահական կենաց։ Ո՛վ չցանկացաւ այս նշանը տեսնել իւր ընտանիքին վերայ, իւր ազգին վերայ, բոլոր մարդոց վերայ։—Պատմութեան յիշած այն ամեն երևելի անձինքն, որոնք ըստ ժամանակին բանական կատարելութիւն ցոյց տուած են իրենց կեանքումն՝ այն ամեն երևելի անձինքն այս ցանկութիւնը ցանկացել են բուռն բաղձանքով։

Աստուած՝ մեր ստեղծողը, արդէն անմահ ստեղծեց զմեզ և մենք պատուիրազանցութեամբ դատապարտուեցանք մահու, և դեռ առաջին մահը չեղած, մարդասպանութիւնը կատարուեցաւ մարդու ձեռքով. որ կը նշանակէ, թէ մարդ իւր ձեռքով կը կանխեցնէ մահը, և այն՝ ատելութեան կամ անսիրելութեան անտեղի կերպով մեայն։ Այսպէս կը սորվեցնէ մեզ Աստուածային յայտնութեան ամենահին պատմութիւնը՝ առաջին մարդոյն առաջին որդւոյն մարդասպանութիւնը պատմելով։ Աստուած՝ մեր այս մեռնելու մարմնական կեանքին դատապարտելէ ետքն ևս պատուիրեց մեզ մեր կենցաղը. այն է՝ «աշխատել երկրի վերայ և վայելել»։ Այս պատուիրանադրութենէն ետքը մարդկային կենաց շարայարութիւնն ու նոցա կենցաղն այսպէս անցած կը սորվենք։—Աշխատեցանք,

վայելեցինք, աճեցանք, բազմացանք, Հպարտացանք (ընկերսիրութեան հակառակ), նախանձեցանք, բարկացանք, ծուլացանք՝ ագահացանք, որկրամոլ եղանք, և չնուիթեան սկսեցինք։ Աստուած մէկէնմէկ ջնջեց այս բոլոր չնացողները, արդարին մեայն պահեց, և օրհնեց, որ դարձեալ «աճեն, բազմանան, երկիրը լեցնեն, երկրին տիրեն, աշխատեն և վայելեն»։

Դարձեալ աշխատեցանք, վայելեցինք, աճեցանք, բազմացանք, և դարձեալ Հպարտացանք, և ընկերսիրութեան հակառակ ամեն չարեաց մէջ շաղախուեցանք, և որպէս զի Աստուծոյ պատժէն ազատուենք, ինքզինքնիս աստուածները հրատարակեցինք, աստուածները ստեղծեցինք, և հաւատացուցինք ու հաւատացինք, թէ մենք զմեզ կազատենք, կամ թէ մեր չինած աստուածները զմեզ կը պահեն. խաբեցինք ու խաբուեցանք, բոլորովին անբանացանք. մէկզմէկ ոչընչացնելու ելանք, եղբայր եղբօր դէմ, ընտանիք՝ ընտանիքի դէմ, ցեղ՝ ցեղի դէմ, և ազգ՝ ազգի դէմ։

Աստուած խսպառ անտեսեց այս անօրինողները, որ իրենց տրուած գործելու և պահելու օրէնքը թողած, առանց գործելու տիրապետութեան եռևէ ինկած էին, մէկմէկու մահ պատճառելով։ Աստուած պաշտպանեց այն արդարին՝ որ չէր խառնուած այս անօրէնութեանց մէջ. օրէնք տուաւ Նոյան Աստուածսիրութեան և Աստուածավախ հոգւոյ. առանձին երկիրը խոստացաւ Նոյան և Նոյա զաւակներուն. օրհնեց, որ աճեն, բազմանան. օրէնք տուաւ, որ մէկմէկու իրաւունք չվնեն, արդար դատաստան անեն. հաւստացուց, զօրացոյց, մարգարէներով խրատեց, և Աստուածային փրկագործութեան խորհուրդները ցուսացուց։ Մինչև իսկ մարդացաւ, սիրոյ Ճանապարհը սորվեցուց խոնարհութեան քաղցրութիւնով. սաստեց չարերին, օրհնեց ու գթաց անմեղ մանուկներին, խաչուեցաւ, մեր մեղքը վերցուց, յանցանքնիս մեզ չնորհեց, մեռելներէն յա-

զուլթիւն առաւ, և անմահական կենաց յարուլթեան յոյսն հաստատեց այն ամեն մարդոց սրտերուն, որ ընկերսիրուլթեան ճանապարհն անխոտոր կը գնան։

Աշդ կատարեալ մարդ կասենք այն մարդը, որ կը հասկանայ, թէ ինչ է մարդը, և սկզբանէ մինչև և կատարած. և թէ ճշտիւ կը ճանաչէ ներկայ մարմնաւոր կեանքի կարճ ճանապարհի ուղղուլթիւնն, այսինքն ճշնդեան օրէն մինչև գերեզմանի դուռը գնալու ուղիղ ճանապարհը, նկատելով՝ թէ ինչով կապահովի մահերը։ Աշդէն խմ տեսանք, որ տարաժամ մահերը կը վերնան մարդկիկերէն՝ Աստուածայնին պատուիրաններու պահպանուլթիւնով. և թէ կեանքը կը պահուի աշխատուլթեամբ և վայելելով։ Եւ որպէս դի թէ աշխատուլթիւնը և թէ վայելչուլթիւնը միապէս քաղցրանան մարդու սրտումն, ընկերսիրուլթեան օրէնքը՝ պարտաւորիչ ալիսի լինի ամեն ընկերի սրտումն և գործումն, և հաւասարապէս ալիսի պահպանուի երկու կողմն ամեն Աստուածայնին պատուիրաններու։ Ուրեմն պիտի ընդունենք՝ թէ ընկերսիրուլթեան օրէնքը ձիշդ պահպանողն ի նպատակ մարդ։

Է. ՈՂՋԱԽՈՀՈՒԹԻՒՆԸ՝ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՆ Է.

Աստուածայինն պատուիրանաց պահպանուլթեան հետևանքներուն վերայ ուշադրուլթիւն դարձնող ամեն մարդ՝ պարզապէս կը տեսնէ, թէ այն պատուիրանները կենաց ճանապարհը կը մատնեն մարդուն, և մարդկայինն կեանքը՝ որ յաւիտենական կենաց հասնելու գործոց լեստ կարճ մնջոց է՝ կապահովեն մահերու դէմ. այս կեանքին կը ցանկանան ամեն մարդիկ, երբ որ խորհեն։ Բայց մարդկիկներէն լեստ շատերը՝ շատ անգամ մատց այս խորհուրդը Թողած, սրտի յօժարու-

Թիւններուն կը հետևին. այս յօժարուլթիւնները շատ անգամ կը մոռացնեն մարդուն՝ ընկերական պարտականուլթիւնը, և միայն իրաւունք վնտրելու կը հանեն։ Այն յօժարուլթեանց հետևող մարդիկը չեն կարողանար խորհել, թէ առանց պարտականուլթիւն կատարելու՝ իրաւունք չենք ունենալ. և երբ դադարենք պարտականուլթիւններս կատարելէ, նոյն ժամուն կը դադարենք և իրաւունք ունենալէ։ Մտաց խորհրդէն ապրստամբող սրտի այս յօժարուլթիւնը՝ կը թելադրէ մարդուն՝ որ իւր չունեցած իրաւունքը պահանջէ ընկերէն. այս պահանջելու յօժարուլթիւնը՝ որ ընկերսիրուլթեան ճանապարհէն դուրս ելլող առաջին խոտորումն է՝ կասուի Հպարտուլթիւն։

Հպարտուլթեան բոյն դարձած սիրտը՝ կենաց ճանապարհումն հետզհետէ կաւելցնէ իւր այն յօժարուլթիւնը, և կը ցանկանայ իւր ընկերին մօտ առաւելուլթիւն ունենալ. և երբ կը տեսնէ, որ իւր չկատարած պարտականուլթիւններն՝ ընկերը կը կատարէ, և այնպէս կառուելու քան զինքն, կսկսի այնպիսի մի յօժարուլթիւն ունենալ, որ ընկերին առաւելուլթիւնը պակսեցնէ. այս յօժարուլթիւնը՝ որ ընկերսիրուլթեան ճանապարհէն դուրս երկրորդ կարգի մի խոտորումն է՝ կասուի Նախանձ։

Նախանձողը կսկսի իւր ընկերին աջողուլթեանց առաջը վակելու աշխատել. այնքան կը յառաջանայ այս ջանքին մէջ, և այնքան կը տևէ, որ մինչև նպատակին հասնելը՝ բովանդակապէս յետ կը մնայ իւր աջողուլթեան գործերէն. և մինչ կը յուսար, թէ տեսնելով ընկերին ձախողուլթեան սկիզբը՝ պիտի սկսի հանգչել, և իւր աջողուլթեանն հետևել, ահա կը տեսնէ, որ լեստ շատ յետ է մնացել իւր ճանապարհումն, և կը տեսնէ նոյնպէս՝ որ ձախողուլթեան սկսած ընկերը դարձեալ երմէն շատ աւելի յառաջ և աւելի իրաւանց տէր է՝ իւր կատարած պարտականուլթիւններով, այն ժամանակ նախանձողն ուրիշ մի յօժարուլթիւն ևս կզգայ,

այն է՝ սպանել ընկերին, որ ոչ ևս ունենայ աջողութիւն իւր առջևն. այս սպանելու յօժարութիւնը՝ կասուլ բարկութիւն։

Բարկութիւնը՝ բոլորովին կը խառնէ և կը շլոթէ նորա խորհուրդը, և կը տկարացնէ նորա ջղերը, և որ չետ մնացած Ճանապարհին երկայնութիւնը տեսնելով՝ կը յուսահատի այլ ևս իւր սեպհական յառաջադիմութեան կէտն հասնելէ, և կսկսի յօժարիլ, որ մի վրդը դադարի և չունչ առնու. այս ընչաւութեան մէջոցին ևս առաջ կերթան իւր ընկերներն, և ինքն աւելի և աւելի չետ կը մնայ, ու չկարողանար ոտքի ելլել և իւր գործին ձեռք զարնել. այս նստելու յօժարութիւնը՝ կասուլ ծուլութիւն։

Ծուլութիւնը՝ բոլորովին կը դադարեցնէ մարդուն նոր վայելքներէ, և ակներև կը տեսնէ հետզհետէ սնընդեան նուազութիւն. որմէ ազատելու համար կը հետեւի ունեցածը չափսեցնելու, մինչև անգամ քաղցած մնալու և չուտելու. այս յօժարութիւնը՝ կասուլ ափսոսութիւն որ ունի է փողութեան։

Ագահութիւնը՝ անձին սեպհականն ուտելէ կը վախնայ, ուրիշինը ուտելու դիպուածումն էլ՝ չափէն դուրս կելլէ. այս յօժարութիւնը՝ կասուլ որբոտութիւն, որ շարունակութիւնն է գողութեան։

Որկրամոլութիւնը՝ մարմնական անբան ցանկութիւնները կաւելցնէ, ջղերը կարգէ դուրս կը գրգռէ, և մարդկային ննդականութեան գործողութիւնը չարաչար գործածելու կը յօժարեցնէ. այս յօժարութիւնը՝ կասուլ շնութիւն, որ վերջին աստիճանի խոտորումն է ընկերասիրութեան կենաց բուն Ճանապարհէն։

Հպարտութենէ մինչև ի շնութիւն աճեցող սըրտի յօժարութիւնները՝ որ մարդու ոտքը կը խոտորեցնեն ընկերասիրութեան ի կեանս տանող Ճանապարհին ամեն մի շաւիղներէն՝ միասին առնելով կասուլն ա՛չ աղջախտութիւն կամ ախտաղջախտութիւն, որ այժմ սովորական բարբառում դարձած է եղջերութիւն։

Աստուածային պատուիրանները Ճիշդ պահպանող Ճանապարհին հետևել ցանկացող աշակերտներուն սերտը վերի հօթն խոտորմունքներուն տանող յօժարութիւններէն զերծ պահելու համար՝ բարուց մանրամասն կանոնները կուտայ Յիսուս իւր վարդապետութեան մէջ. որոց միասին ամփոփումն՝ կասուլ աղջախտութիւն. այն է՝ ընկերասիրութեան ոչ խորտուբորտ։ Տեսնենք Յիսուսի սովորեցուցած աղջախտութեան Ճանապարհը։

Մի անգամ Յիսուսի աշակերտները կը հարցնեն Երմէն.

—«Մեզմէն ո՞վ մեծ պիտի լինի երկնքի թագաւորութեան մէջ»։

Յիսուս մի մանուկ կը կանչէ, նոցա մէջ կը կանգնեցնէ ու կասէ.

—«Ճշմարիտ կասեմ ձեզ, թէ որ չդառնանք, ու մանուկներու նման չլինիք, երկնքի թագաւորութիւնը մտնելու չէք։ Ուրեմն ով որ իւր անձը խոնարհեցնէ այս մանուկին պէս, նա է մեծ երկնքի թագաւորութեան մէջ»։ (Մատթ. ժը. 1—4)։

Աստուծոյ թագաւորութիւնն հաւատացող և ընդունող կատարեալ մարդն՝ իւր ընկերներուն մէջ փոքր մանուկ պիտի տեսնէ զինքը. և Աստուած պիտի բարձրացնէ նորան՝ իւր խոնարհութեանը համար։ Այս խրատը լսող և ընդունող մարդու սրտումն տեղի չգտնէր ամենևին այնպիսի յօժարութիւն, որ դէպի հպարտութիւն կածէ. այլ ընդ հակառակն՝ խոնարհութիւնը կը զօրանայ այն սրտում, որ միշտ ուրախ սրտով և զուարթ հոգւով կը նայի երմէն մեծին առաւելութեանցը և նորա օրինակին կը հետևի. նաև երմէն փոքրին առաւելութեանցը վերայ ևս կը բերկրի, ինչպէս մի առատասիրտ հայր մի անգօր մանկան կատարելութեան առաջին և շարունակ քայլափոխը տեսնելով կը բերկրի։ Սրտի այս բերկրութիւնը՝ կասուլ հոգևոր աղքատութիւն, որ կը հարստանայ և կը ճոխանայ հոգւով՝ նաև

ընկերին կատարելութիւնները տեսնելու ժամանակ. և կը ցանկայ մի՛շտ այնպիսի տեսնել իւր ընկերը։

Փարիսեցիները՝ Յիսուսի կատարած բժշկութիւնները կը տեսնէին, և նախանձով լեցուած, կաշխատէին ցուցնել ամենուն, թէ նա դիւական իշխանութեամբ կը կատարէ այն բժշկութիւնները. և շաբաթ օրերում բժշկելուն համար՝ կը գայթակղեցնէին բոլոր ժողովուրդը ասելով, թէ Յիսուս Աստուծմէ չէ, ըստ որում շաբաթը սուրբ չպահէր։ Յիսուս՝ փարիսեցւոց այս պատճառաբանութիւնն հերքեց ասելով. թէ ո՞վ է այն մարդը որոյ էշը կամ եզը ջրհորն ընկնի, և չհանէ ջրհորէն. կամ թէ չէ՞ն արձակեր էշն ու եզը և տաներ ջուր լմցներ շաբաթ օրերը։ Այսպէս կ՚ասէր. հիւանդն էլ սատանայէն կապուած է. կարելի է շաբաթ օրը բժշկել, և բարի անել. ըստ որում՝ Մովսէս օրէնքին մէջ յատուկ կը հրամայէր, որ ջրհորն ընկած էշը կամ եզը հանեն ջրհորէն, եթէ շաբաթ օր ևս պատահի. փարիսեցիք ամէ ի բերան կը լինէին։ Նոյնպէս և երբ Քրիստոսին՝ Աստուած կամ որդի Աստուծոյ լինելուն հակառակ կը խօսէին, կը լռեցնէր Մովսիսի և ուրիշ մարգարէից պատգամներով, որոնք կը հաստատէին, թէ Քրիստոս Աստուած է. և թէ պիտի Ճանչնան Քրիստոսին, եթէ Աստուծոյ գործերը գործէ, և խօսածները կատարուին։ Բայց փարիսեցիք դարձեալ լրեցոյ նախանձու հակառակութիւնը կը շարունակէին։ Այն ժամանակ այս նախանձու դէմ այսպէս խօսեցաւ Յիսուս.

«Պղիրներն ու փարիսեցիները նստան Մովսիսի աթոռը. ինչ որ ասեն ձեզ (գրքերէն), ամենը կատարեցէք, բայց նոցա արածին պէս մի՛ անէք. վասն զի կասեն, ու չեն գործեր։ Ծանր ծանր բեռները կը կապեն և մարդկանց ուսերուն վերայ կը դնեն, ու մատով անգամ շարժել չեն կամիր. և լրեցոյ բոլոր գործերը մարդկանց ցուցնելու համար միայն կանեն.— գրապանակները կը լայնցնեն, հալաւներուն քղանցքները կերկընցնեն, ընթրիքներուն առաջին տեղը կը փնտրեն, և ժողովներուն՝ առաջին աթոռը. հրապարակներուն՝ ողջոյնները, ու մարդիկներէն կանչուիլ՝ վարդապետ, վարդապետ (գիտուն, ուսուցիչ). բայց դուք մի՛ կանչէք վարդապետ և ոչ մէկին. որովհետև ձեր ուսուցիչը մի՛ հատ է, և դուք ամենքդ եղբայր էք»։ (Մատթ. Ի. 1—8)։

Այս խօսքերն ուշադրութեամբ կարդացող քրիստոնեան՝ այլ ևս տեղի չտար որ նախանձ աստուած յօժարութիւնը իւր սիրտը մտնէ, և լաւ ընկերին լաւ շրնորհացը վերայ չար աչքով նայի. մինչև անգամ վարդապետը, քահանայն, վարժապետը, և ուրիշ որև է փորձառու մարդ՝ ոչ միայն լրենց հաւասար չեն նախանձեր ընկերին, այլ և լրենց տակը և անփորձ աշակերտին՝ լրենց եղբայրը կը համարեն, նորա լաւութիւնը կը խորհին, և լաւութեան կառաջնորդեն, ու կօգնեն։

Յիսուս՝ իւր վարդապետութեան մէջ կը սորվեցնէ տկարին խնդրել, թախանձել. և կարողներուն ու ձեռնհասներուն կը սորվեցնէ երես չդարձնել, մինչև անգամ վնաս տալ այն մարդուն, որմէ որ չեթ ստանալու յոյս չունի։—Եթէ դուք ձեզի սիրողներուն սիրէք, ինչ շնորհք արած կը լինիք, որդին մեղաւորներն էլ կը սիրեն լրենց սիրողներուն։ Եթէ ձեզ բարիք անողներուն միայն բարիք անէք, ինչ շնորհք արած կը լինիք. մեղաւորներն էլ նոյնը կանեն։ Եթէ վնաս տայք այն մարդկանց՝ որոցմէ որ աչքերնիդ կը կարէ թէ կստանայք, ինչ շնորհք արած կը լինիք. քանզի մեղաւորներն էլ մեղաւորներուն վնաս կուտան, որ եաքը կշնաքովին առնուն։ Բայց դուք սիրեցէք ձեր թշնամիներին, բարի արէք ձեզի ատողներուն, և վնաս տուէք այն մարդկանց, որոնցմէ որ առնելու ակնկալութիւնը չունիք, որպէս զի ձեր վարձքը շատ լինի, և բարձրելոյն որդիքը լինիք.

ըստ որում նա քաղցը է թէ չարերուն վերայ և թէ ապերախտներուն։ Գթած եղէք, ինչպէս որ ձեր Հայրը գթած է։ (Ղուկ. Զ. 31—36)։

Փրկչի վարդապետութեան այս խօսքերն եթէ ուշադրութեամբ կարդանք, արդարև մեր սիրտը կը թեթեւանայ նախանձու ծանրութենէն և նորա պատճառած չար խորհուրդներէն. մինչև անգամ և բարկութենէ, որ շատ անգամ մահաբեր իսկ կը լինի նախանձողին։

Բարկութեան կիրքէն զերծ մնալու համար կը պատուիրէ Յիսուս, որ զուր տեղը բնաւ չբարկանանք. և եթէ մէկը իւր եղբօրը՝ չիմ կամ տղա ասէ, գեհենի հրոյն պարտական կը վճռէ։ Այս պատուէրը կուտայ Յիսուս՝ հին օրինաց «Մի սպանաներ» օրէնքին վրանակ, ըստ որում ամենայն սպանութեան գործ՝ սրտի բարկութենէն մնայն յառաջ կուգայ. և Յիսուս բարկութիւնն՝ սպանութեան հաւասար կը դատապարտէ։ Այս խրատն ուրիշ բացայայտ ոճով ևս կաւանդէ Յիսուս, սորվեցնելով, թէ ինչպէս պիտի վարուի մարդ իւր յանցաւորը եղբօր հետ։

«Եթէ եղբայրդ մեղանչէ քեզ, գնա, յանդիմանէ (արածը ցոյց տուր) նորան, երբ դուն ու նա մնայն լինիք. եթէ մտիկ անէ, եղբօրդ շահեցար։ Հապա թէ որ քեզ մտիկ չանէ, հետդ մի մարդ ևս առ կամ երկու, որովհետև երկու կամ երեք վկաներու բերնէն կը հաստատուի ամեն բան։ Իսկ եթէ նոցա ևս չլսէ, ժողովքի մէջ ասա. եթէ ժողովին ևս չլսէ, թող լինի այնու հետև քեզ համար իբրև հեթանոս և մաքսաւոր»։ Այս խօսքին վերայ Պետրոս կը հարցնէ Յիսուսին.

—Տէր, քանի՞ անգամ ներեմ եղօրս մեղանչածին, եօթն անգամ։

—Չասացի քեզ, եօթն անգամ. այլ եօթանասուն անգամ եօթը։

Յիսուս՝ մեղանչող եղբօր յանցանքը ներելու համար այսչափ դիւրումն և եղբայրսիրութիւն պատուիրելէ

զատ, առակ մի ևս կաւելցնէ՝ երկնքի թագաւորութիւնը ժառանգելու օրինակով, այսպէս.

«Երկնքի թագաւորութիւնը նմանեցաւ մի թագաւորի, որ ուզեց հաշիւ առնել իւր ծառաներէն։ Եւ երբ սկսեց, բերուեցաւ մի պարտապան, որ տասն հազար քանքար պարտական էր. երբ որ հատուցանելիքը չունէր, նորա տէրն հրամայեց որ վաճառեն զինքը, կինը և որդիքը, և ամեն ունեցածը, և հատուցանեն. և ծառայն գետնին ինկած, երկրպագութիւն կանէր ու կասէր. ժամանակ տուր ինձ, և բոլորը կը հատուցանեմ։ Տէրը գթալով ծառային, արձակեց նորան, և փոխ ողջոյն էլ բաշխեց։ Այս ծառայն դուրս ելաւ, իւր ծառայակիցներէն մէկը գտաւ, որ հարիւր դահեկան պարտական էր նորան (մի քանքարն՝ հինգ հարիւր դահեկան է). բռնել էր նորան, կը խղդէր ու կասէր. պարտքդ վճարէ։ Այժմ էլ ծառայակիցը նորա ոտքն ինկած կաղաչէր ու կասէր. ժամանակ տուր ինձ, և բոլորը կը հատուցանեմ քեզ. և նա չեր կամենար, գնաց բանտը ձգեց, մինչև որ պարտքը վճարէ։ Նորա ծառայակիցներն երբ եղածը տեսան, եկան իրենց տէրոջն յայտնեցին։ Տէրը կանչեց նորան, և ասաց.—Չար ծառայ, որովհետև աղաչեցիր, բոլոր պարքդ բաշխեցի քեզ. այժմ քեզ էլ պէտք չէր որ ողորմէիր քո ծառայակցին (ընկերին)՝ ինչպէս ես քեզ ողորմեցայ։ Եւ բարկացաւ տէրը, մատնեց նորան դահիճներուն, մինչև որ բոլոր պարտքն հատուցանէ։ Նոյնպէս պիտի անէ ձեզ և իմ Հայրը, որ երկնքումն է, եթէ ամեն մէկդ ձեր եղբօր յանցանքը սրտանց չներէք»։ (Մատ. ԺԸ. 23—25)։

Եղբօր յանցանքին ներողամիտ չեղող քրիստոնէին կը համեմատէ Յիսուս այս ծառային, որ 10,000 քանքար պարտական էր, և աղաչելուն համար տէրը բաշխեց նրեն։ Բայց երբոր այս ողորմութիւն գտնողն ինքը չբաշխեց իւր աղաչող ընկերին $^1/_5$ քանքար, զրկուեցաւ իւր տէրոջ ողորմութենէն, և դահիճներուն

յանձնուեցաւ, մինչև որ բոլորը վճարէ։ Այսպէս երկնաւոր Հայրն յիսուն հազար անգամ աւելի կը շնորհէ մեզ. և երբ մենք չշնորհենք մեր ընկերին 100 դահեկանի պարտքն ու չողոքենք, այն ժամանակ և Երկնաւոր Հայրն յետ կը պահանջէ իւր շնորհածը։ Հարկաւ դահեկանի փոխին դէմ Երկնաւոր հօրմէն ընդունելիք հինգ միլիոնի ակնկալութիւնը՝ մեր ձեռքէն բռնած յետ կը դարձնէ զմեզ բարկութեան Ճանապարհէն, և կը տանի դէպի գիջման և եղբայրսիրութեան Ճանապարհը, որ Թէպէտ մեզի նեղ կերեւի ի սկզբան, բայց դորա վախճանը՝ կեանք է յաւիտենական։

Յիսուս ազահութիւնը մարդու սրտէն խլած դուրս հանելու համար մարմնական պիտոյից հոգսերէն շատ աւելի կը համարի ողորմածութիւնը, և մարմնական պիտոյից համար ևս կասկ միասին.

«Երկրի մէջ գանձեր մի գանձէք ձեզ. ուր որ ցեցն ու ուտիճը կապականեն, ու գողերն ական կը փորեն և կը գողանան. այլ գանձեր գանձեցէք ձեզ երկինքում, ուր ոչ ցեցն և ոչ ուտիճը կապականեն, և ոչ գողերն ական կը փորեն ու կը գողնան, որպէս զի ձեր սրտերն էլ ձեր գանձերուն եղած տեղը լինին։ Մարմնոյ ճրագը՝ աչքն է. եթէ աչքդ առատ է, բոլոր մարմինդ լուսաւոր կըլինի, իսկ եթէ աչքդ վատ է, բոլոր մարմինդ խաւարային կը լինի. եթէ այդ լոյսը վերագ է, ու խաւար է, խաւարն քանի աւելի սիտի լինի. ոչ ոք չէ կարող երկու տէրերու ծառայել. կամ մինը սիտի ատէ, միւսը սիրէ, և կամ մինը մեծարէ ու միւսն արհամարհէ. չէք կարող ծառայել Թէ Աստուծոյ և Թէ մամոնային»։ (Մատթ. Զ. 19—24)։

Յիսուսի սորվեցուցած բարձրագոյն առաքինութեան՝ այս այլաբանական յորդորակը՝ պարզ և պարզոյ այսպէս պիտի կարդանք. —Ձեր հարստութիւնը գետնի մէջ մի թաղէք, այլ ընդերկնքում՝ յորում եղող ողորմածութեան ճանապարհով պահեցէք ձեզ երկնքում, և սրտերնիդ ևս լինի ձեր գանձին մօտ, ուր որ ոչ ցեցերը կապականեն, և ոչ գողերը կը գողանան։ Հարստութիւնը մարդուն համար արդէն իսկ կայ իւր անձին զօրութեամբ. եթէ աչքդ առատ է, շատ կը տեսնես. եթէ ձեռքդ ժիր է, շատ կը քաղես. եթէ ոտքդ արագ է, շատ տեղ կը հասնիս. երբ այս շնորհքն ունիս, ու կը վաստակիս, կը հարստանաս, այնուհետև աչք չունեցողին, ձեռք չունեցողին, ոտք չունեցողին ողորմութիւն արա, և այն ողորմութեան Ճանապարհովն՝ հարստութիւնդ երկնքում գանձէ։ Իսկ եթէ աչք ձեռք, ոտք, ունիս, ու չես հարստանար, որ կարողանաս ողորմութիւն անել, և այնպէս երկնքում գանձել, կը նշանակէ՝ լոկ աչքդ վատ է, և աչքդ վերագ լինելու հանգերձ մթութեան մէջ միայն կը քալես կամ կը պառկես. նոյնպէս ձեռքդ ծոյլ է, և անվաստակ կը խաղաս. նոյնպէս և ոտքդ չար է, և զուր կը քալես։ Աչք որ ունիս ու մթնումն ես, աչք որ չունենաս՝ լոյս պիտի լինիս, քանի՞ անգամ աւելի մթութեան մէջ պիտի մնաս։ Իսկ եթէ աչքդ՝ լուսաւոր է, ձեռքդ զօրաւոր, և ոտքդ ուղիղ և հաստատուն, այսինքն կը վաստակիս, և գարձեալ երկնքումը չես գանձեր, գիտցիր, որ մարդ երբ լուր հարստութեան ծառայն է, Աստուծոյ ծառայն լինել չէ կարող։

Յիսուսի այս յորդորակին դէմ Թերևս առարկողներ եղան. Թէ—Այսպէս որ մեր բոլոր հարստութիւնը ցրուենք, երկնքում գանձելու համար ողորմութիւն տանք, վաղը կամ միւս օրը մենք ինչ պիտի ուտենք, ինչ պիտի խմենք, ինչ պիտի հագնենք։ Այս առարկութեանց կը պատասխանէ Յիսուս.

«Դորա համար կասեմ ձեզ. ձեր անձին համար մի հոգայք՝ Թէ ինչ ուտելու էք, կամ ինչ խմելու էք. և ոչ ձեր մարմնին համար՝ Թէ ինչ պիտի հագնիք։ Չէ՞ որ հոգին կերակուրէն աւելի է, և մարմինը՝ հանդերձէն։ Երկնքի Թռչուններուն նայեցէք, որ ոչ կը ցանեն, և ոչ կը հնձեն, և ոչ ամպար կը դնեն, և ձեր

երկնաւոր Հայրը կը կերակրէ նոցա. չէ՞ որ դուք նոցա-
մէն աւելի էք։ Հիմա ո՞վ կարող է ձեր հոգալովն մի
կանգուն աւելցնել ձեր հասակը։ Հագուստի համար ինչ
կը հոգայք. վայրենի շուշանին նայեցէք. ինչպէս կաճի.
ոչ վուշ ունի և ոչ կը մանէ, կը գործէ։ Կասեմ ձեզ,
որ Սողոմոն անգամ իւր բոլոր փառքովն՝ նոցա մէկուն
պէս չհագուեցաւ. թէ որ Աստուած՝ վայրենի խոտին՝ որ
այսօր կայ, վաղը թոնիր կը ձգուի՝ այնպէս կը հա-
գուեցնէ, ո՛րչափ աւելի պիտի հագուեցնէ ձեզի, թե-
րահաւատներ։ Այսուհետև մի՛ հոգայք ու ասէք, թէ
ինչ ուտենք, ինչ խմենք, ինչ հագնենք, վասնզի այդ
ամենը հեթանոսները կը խնդրեն։ Ձեր երկնաւոր Հայրը
գիտէ, թէ այդ ամենը պէտք են ձեզ։ Նախ Աստուծոյ
թագաւորութիւնը խնդրեցէք, ու նորա արդարութիւ-
նը. և այդ ամենը կաւելնան արդէն ձեզ։ Այսուհետև
վաղուան համար մի՛ հոգայք, վաղը՝ իւր համար կը հո-
գայ։ Աւուր չարն չարը բաւական է։ (Մատ. Զ. 25—34)։

Յիսուսի այս խօսքերն ուշադրութեամբ կարդացող
քրիստոնեայն կամ պիտի ընդէ աստուածասիրութիւնն
ու արհամարէ մամոնայի—հարստութեան հանգիստը,
կամ պէտք ընդէ մամոնայի փառքն ու չհանդչէ Աս-
տուծոյ պատրաստած յաւիտենական կենաց հանգստա-
հը։ Այս խօսքերէն գատ ագահ մեծատունին մէկին ևս
մի առակ կասէ Յիսուս, որ ագահութեամբ ձեռնուած
հարստութեան ունայնութիւնը կը ցուցնէ, և թէ ագա-
հին ուրախութիւնը քանի՛ րոպէի համար է։

«Մի մեծատունի արտերը, կասէ, հունտեր տուին, և
նա մտքումը կը խորհէր, թէ ինչ անեմ, որ արդիւնք
ժողովելու տեղ չունիմ։ Գիտեմ, ասաց, ինչ կանեմ.
ամպարներս կը քակեմ, և աւելի մեծերը կը շինեմ. և
այն տեղ կը ժողովեմ ցորենն ու բոլոր բարիքս. և կա-
սեմ ես ինձ՝ անձն իմ, շատ բարիք ունիս ամպարած՝
որ շատ տարիներու հը բաւէն, հանգստացիր, կե՛ր, խմէ՛,
ուրախ եղիր։ Եւ Աստուած կասէ նորան.—Անմիտ, այս

գիշեր հոգիդ քեզմէն մէկդի կառնուն, իսկ պատրաս-
տածդ ո՞ւմ պիտի լինի։—Նոյնպէս է և իրեն համար
գանձողը, թէ որ Աստուծով մեծանալու չէ»։ (Ղուկ. ԺԲ.
16—22)։

Այս առակն ուշադրութեամբ կարդացող քրիստո-
նեայն՝ աստուածային իմաստը ճշտութեամբ և լման կը
հասկանայ և այս աշխարհումս ունեցած կեանքին կար-
ճութեանը վերահասու կը լինի. և թէ Աստուած կը
տեսնէ մարդու սրտին գաղտնի պատրաստութիւնը, և
թէ մարդու մեծութիւնն ու հանգիստն Աստուծով մի-
այն կը յաջողի, մարդու յօրինած մեծութիւնն՝ եթէ
առ Աստուած երթալու ճանապարհով չէ՝ ունայն է բոլո-
րովին, և կարի վաղանցուկ։ Այս ճշմարիտ եզրակացու-
թիւնները մտքով հետևցնող մեծատունն ինչ պիտի ա-
նէ.—կամ պիտի տրտմի, կամ ուրախութեամբ՝ երկնի-
քում գանձելու առատաձեռնութիւնը պիտի սկսի։ Եթէ
միայն տրտմի, և երկնքում գանձել չմտաբերի, պիտի
չգիտնայ էլ, թէ ո՞վ պիտի ուտէ իւր գանձերն՝ ցեցերն,
թէ գողերն, թէ իւր որդիքն արդեօք։ Ճշմարիտ քրիս-
տոնէի սրտումն ագահութիւնը տեղ չգտնէը ամենե-
ւին։ Յիսուսի խրատներով կրթուած միտքը՝ լուսափայլ
կը տեսնէ արծաթասիրութեան ծնած և ծնանելիք չա-
րիքները. նոյնպէս և առատաձեռնութեան անկաշռո-
տութիւնն ու առ Աստուած ունենալիք մեծութիւնը։
Նա կը տեսնէ, որ այս աշխարհի կենաց ամեն օրերն
էլ իրենց հացն ու ջուրն ունին, քանի որ աչք և ձեռք
ունի մարդ։ Եւ բնաւ չմտածէը, թէ վաղը կամ միւս օ-
րը քաղցած կանցունէ. մինչև անգամ սովի ժամանակ
ևս առանց հացի ապրելու յուսովն կը զօրանայ Աստու-
ծոյ խօսքերով։ Առատաձեռնութիւնը՝ երկնային հարըս-
տութիւն է, զոր անշուշտ կունենայ ամեն աստուա-
ծասէր։ Առատ հոգին՝ առատ աչք կունենայ, և ժիր
ձեռք. տալով չհատներ նորա արդիւնքը. այլ գալով
շուգան ու կաւելանան. ճշմարիտ հարստութիւնն Աս-

տուճոյ յաջողութենէն է։ Դաւթի մարգարէն կասէ. Թէ Մանուկ էի և ծերացայ, արդարին արհամարհած չտեսայ. և ոչ նորա զաւակը, Թէ հաց մուրանար։ Դարաւոր աւանդութիւններու բերած առակ մի ևս կասէ. Թէ ուղիղ մարդոց մէջ քաղցած չտեսայ, ծուռ մարդոց մէջ կուշտ չտեսայ։

Աստուածասէր մեծատունին աչքերն համարձակ կը տեսնեն, որ Աստուած անխտիրաբար օրհնութիւններով հաստատած է, Թէ հոգւոյ և Թէ մարմնոյ պիտոյքները, ոնք որ բուն հարստութիւններն են այս կեանքում. կը տեսնէ որ նորածին մանուկը՝ իւր մարմնական պիտոյքը կը լեցնէ միայն իւր մօր սեպհական կաթովն. և այս բնական լուութեան մէջ չկայ ամենևին բունաբարութիւն, այլ մանուկը կը դիէ, կը յագենայ, նեթքին գոծարանները կը սրբուին, և մայրը կը հանգչի իւր կուրծքի ծանրաբեռնութենէն. օրէնք մի բնութեան, զոր կը կատարէ անգէտ մանուկը և որոյ խափանումն (հակառակ է ամենայն զգացմանց) վնասակար կը լինի Թէ մանկանը, և Թէ մօրը մխալէս։ Աստուած այսպիսի անխտիրաբար օրէնքի տակ վիճակած է մարդուն մարմնական պիտոյքը՝ իւր առաջին օրերէն։ Աստուածասէր մեծատունի աչքերը կը տեսնեն նոյնպէս, Թէ նորածին մանուկն երբ այլ ևս կրզգայ իւր տեսութիւնը, հոգեկան սիրով կը նայի իւր չորս կողմը. նա սիրով կը վիրի իւր ծնողաց կուրծքին, եղբօր վզին, ու երեսին. նա ոչ ոքէ չհրաժարիր, եԹէ սիրով երեն նայեն։ Աստուած այսպիսի անխտիրաբար օրէնքի տակ վիճակած է մարդու հոգեկան պիտոյքը՝ իւր սկզբան օրերէն։ Եթէ այսպէս է մանկութեան օրերում՝ որչափ ևս աւելի պիտի լինի չափահասութեան օրերումն, երբ տեսնեն ու խմանան, Թէ Աստուած գարուն է սահմանել ամեն պիտոյից կանաչելուն և ծաղկելուն. ամառն է սահմանել՝ որ ամեն հունաերն աճեն և հասնեն. ամառան մէջ ցօղ և անձրև է սահմանել, որ արմատներն իրենց հիւթը գտնեն. աշուն է սահմանել, որ պտուղներն ելնեն և բարեխառնին, հասունանան. օրհնել է նոցա աճելութիւնը, և կաճեն, ու կը ծածկեն բովանդակ գետնին երեսը՝ որոնց չեն կարող սպառել մարդիկ հնձելով և քաղելով։ Աստուծոյ այսչափ բարեաց անխտիրան լուութեան շնորհիւ կը հայածուի ամեն կարօտութիւն, և կը հեռանայ առատ աչքի տեսութենէն ու ժիր ձեռքի շարժումներէն։ Եւ ամեն տեղ հաց, իւղ, քաղցու և ամեն տեսակ բարիք՝ չափէ դուրս առատութեամբ կը դիզուին, կը քամուին, կամփոփուին, և մինչև նոր արդեանց աշունն անպակաս կը լիացնեն ամենուն, եԹէ գիտնան ցեցակերը չանել, չփտեցնել, և ոտքի կոխան չանել։

Ահա այսպէս առատ է Աստուծոյ սիրած լուութիւնը, որ անկարօտութիւն է ամենևին լուսաւոր աչք ունեցող մարդոց համար. և այս անկարօտութեան մէջ կը պահանջէ Աստուած՝ որ առատ աչքով նայենք, և առատապէս ձեռքով վարուենք։ Այս ամենը՝ մարմնական պիտոյից աննուազ լուութիւններն են այն մարդկանց համար, որ Աստուծով մեծանալ իրենց վիճակ կը համարեն. Աստուծով մեծանալ՝ որ միայն Ճշմարիտ ընկերսիրութեան ամբողջ և լրական ողջախոհութիւն է. և որոյ մէջ միայն կաճի հոգւոյ հանգիստը, զուարթութիւնն ու անմոռնալ լուսաւորութիւնը։ Հոգւոյ խաղաղութիւն՝ կատարեալ ողջախոհին անկասելի պարգևն է, որ կը ջնջէ մարդու սրտէն ամեն տեսակ հառաչանք ու ցաւ։ Եթէ մէկը չունենայ հոգւոյ այս խաղաղութիւնը, և զարմանալի աջողութիւններով օդերուն մէջ թռչի և ամպերու վերայ քայլէ, նորա հոգին դարձեալ հիւանդ է։ Այսպիսի մի կեանք է Աստուծոյ պահանջած առատաձեռնութիւնը, կամ աչքի առատութիւնը, որ միայն խաղաղարար է։

Այստեղ կարծ պատշաճ կերևի, որ մի իրական

վանձան մէջ բերենք՝ աշխարհի երկու տեսակ հարուստներու՝ հոգւով և մարմնով հարուստներու։

Այս երէ քաղաքում կային երկու անձնաւորութիւն՝ Մամաջան անուն, և Դառչին կամ Դոռչոյ անուն։ Մամաջանը վաճառական էր, և բոլոր իւր քաղաքակիցներուն յայտնի՝ իւր հարստութեամբ, որ ժամանակ-ժամանակ իրեն դիմող աղքատներուն կոգնէր, տոկոսով փող կուտար, իւր գործերում կը բանեցնէր, անգործութեան ժամանակներումն օրական կուտար, նեղութիւնին կը վերցնէր, ինքը պերճ հագուստներով և ազդեցիկ հրամաններով քաղաքում կը քայլէր. և հասարակաց գործերումն միշտ կը հրամայէր. նորա յայտնած կարծիքին՝ հասկացողներն անգամ՝ իրենց հակացողութեանն հակառակ՝ «յո՛», կասկին, գլուխ կը խոնարհէին. այսպէս վառաւորուած էր ամենէն՝ քաղաքի բոլոր բնակիչներէն։

Դառչոն՝ մի հասարակ այգեգործ էր, իւր այգին կը մշակէր, իւր անասունները կը դարմանէր. մշակ որ վարձէր, նոցա հետ ինքն էլ կաշխատէր, ու կաշխատեցնէր, ոչ մի օր պարապ չէր անցուներ. իւր քաղաքացիէն այնպէս յայտնի փառք ու պատիւ տեսած չէր. հասարակաց պաշտօնէութեան՝ ոչ մի անգամ ընտրուած կամ կանչուած չէր. քաղաքի հասարակ ժողովրդեան դասուն հագուստովը կը հոգուէր. մեծ ուրախութեամբ իւր այգելուներին կընդունէր. ընդհանուր ժամանակներում իւր ազգականներուն և դրացիներուն և առհասարակ մանկութեան մտերիմներուն ինքն կայցելէր. հիւրերուն կը մեծարէր ոչ պերճ՝ այլ լի սեղանով. իրեն դիմողներին՝ ձեռնունայն չէր դարձնէր։ Ամեն տեղ ողջունի արժանի էր ամեն դասակարգի աչքին. և իւր ողջունը՝ գետին չէր ընկներ։

Մամաջանը մեռաւ. նորա որդիքն հանդիսաւոր յուղարկաւորութիւն սարքեցին. եկեղեցւոյ զանգակները՝ ժամերով ողբացուցին. բոլոր քահանայից դասն ու հա-

սարակաց պաշտօնեաները հրաւիրեցին, իւր ազգակիցները էլ սոցա հետ յուղարկաւոր էին, ընդ ամենն հարիւրի չափ մարդիկ։ Հողը գրին, Աստուած հոգին լուսաւորի ասացին. դարձան տունը և կխսահանդէս մը ճաշեցին, ու գնացին։

Դառչոն ևս մեռաւ, նորա որդիքն իրենց հօր մահը սգալէն ժամանակ ևս չունեցան՝ որ յուղարկաւորութեան հանդէս խորհէին. քաղաքացին բերնէ բերան լսեց Դառչոյ մահը։ Մխատէր քահանայն հրաւիրեց քահանայից դասն, որ եկեղեցին ելած դէպի Դառչոյ տունը կերթային, ճանապարհում (300 քայլափոխ տեղ) դիզուած բազմութենէն չետ կը մնային. Դառչոյն բակը լիքն էր բազմութեամբ. տան սանդուղքներէն վեր ելլելու՝ հազիւ ճանապարհ գտան քահանայք, և մեծ ճնշումներու մէջ անցան. սրահներումն ու սենեակներումն այնքան բազմութիւն կար, որ պատուհանները՝ շնչառութեան համար քիչ կուգային։ Մի օտարական քահանայ՝ որ այն քաղաքը պատահելով, քահանայից դասում ընկերացած էր՝ չկարողացաւ ճանաչել թէ ո՞րն էր Դառչոյ ընտանիքը, ո՞րն է որդին, կամ ազգականը. բովանդակ բազմութիւնը՝ սգաւոր էր և յուղարկաւոր՝ տխուր դէմքով, արտասուակաթ աչքերով և օրհնող ու գովող բերանով։ Ինկեղեցւոյ զանգակը շատ ուշ հնչեց Դարչոյի մահը, երբ արդէն ամբողջ քաղաքացին խռնուած ու բռնած էր նորա տունն ու դուռը, բակն ու ճանապարհը։ Ընկեր՝ ընկերին, ծառայն՝ տէրոջը կը պատասխանէին. թէ այգում կաշխատէի, մեր երեխան եկաւ, թէ Դառչոն մեռաւ է, բահը ձեռքս ինկաւ, վազեցի. միւսը՝ թէ ձեռքս գործն էլ չգնաց։—Ինչո՞ւ։—Դառչոն լաւ մարդ էր։ Դառչոն՝ նեղութիւն ունեցողին տէր ու օգնականն էր։ Դառչոն՝ քաղցածին ալիւր կուտար, մերկին՝ բուրդ ու մուշտակ կուտար. պարտապաններուն փոխ կուտար, առանց

տակոսի ժամանակ կուտար։ Դառոյին ոչ պարտական չէ որ. երթանք գոնէ դագաղին ծառայենք։

Այս տարբերը վախճանն ունեցող Մամաջանի և Դառոյի կենցաղավարական տարբերութիւնն էլ այսպէս էր։ Մամաջանը՝ ցերեկները կը քնէր, գիշերները քէֆ կանէր, ուտող խմողներու հետ միայն ժամանակ կանցուցանէր. շաբթէ շաբաթ կամ ամսէ ամիս իւր ծառանեըէն հաշիւ կառնէր. վարձուորներուն նիստ աժան կը գնահատէր, մանաւանդ նոցա անգործ մնացած ու նեղուած օրերուն. հազար մանէթանոց մուշտակ կը հագնէր, ամեն մարդու բարև չէր տար. և իրեն չբարեւողները՝ մի վնասի կը հանդիպէին անպատճառ։

Իսկ Դառոյն՝ ցերեկները կաշխատէր, իրիկուանները հաշիւները կը տեսնէր. վարձաւորին վարձը չէր կորչեր. գիշերը քուն կըլլար, կարօտին օգնելու միշտ ձեռըն հաս էր, և կը վերցնէր իրեն դիմողին կարօտութիւնը։ Երեք մանէթանոց մուշտակ կը հագնէր, ու բնաւ չէր մրսեր. իրեն բարեւը գետնին չէր ընկներ. և առանց բարեւելու ոչ ոքի ճամբան չէր կտրեր։

Այս վախճանը պատահել է 1883—ին. քաղաքին ամբողջ քաղաքացին վկայ է այս հետեւանքին, այս վիճակին։ Ոմանք կը հետեւի, թէ ցուցամոլութիւն չունեցող առատաձեռնութիւնը վերջ ի վերջոյ կը վատաւորուի ու կօրհնուի։ Իսկ թէ գերեզմանէն անդին ինչ վիճակի պիտի հասնի, այս մասին Յիսուսի աւետարանը կը կարգացուի ամեն տեղ 1886 տարիներէ ի վեր։

Յիսուսի խրատներուն ճշմարիտ վախճանն հաստատող այս կենցաղական անցքերուն ականատես և ականջալուր լինելէ ետքը՝ որ ճանապարհով գնալ կրնար բանական միտքը։—Ի հարկէ անանցանելի վիճակը, անմահ կեանքն ու յաւիտենական երանութիւնն աւելի նախանձելի են բանական մարդուն։ Այս նախանձելի երանութեանց հասնելու բուն ճանապարհն է ընկերասիրութիւնը, կատարեալ ընկերասիրութիւնը. և ո-

րոյ հարստութիւնը՝ ողորմութեան կամ առատաձեռնութեան (առանց ցուցամոլութեան) միջոցաւ կը գանձուի հրկինքումն անկասկած, և յաւիտեան։

Յիսուս իւր վարդապետութեան մէջ ազօթասիրութիւն և ծոմապահութիւն կը հրամայէ ճշմարիտ աստուածասէրներուն. որով որկրամոլութենէ ազատ՝ Աստուծոյ բերնէն ելած խօսքերովն ապրելու յոյսը և կը զօրացնէ։ Որուն եթէ ուշադրութեամբ լսենք, որկրամոլութիւնն այնպիսի մի սիրտ պիտի երևայ մեզ աչքին, որմէ ծրքան որ հրաբել լինի, այնքան հեռի պիտի փախչենք, և այնքան շուտ պիտի փախչենք։

Որկրամոլութեան ախտաւորութեան վնասակարութիւնն այսպէս կարելի է նկատել։ Ուտելը՝ բնական պահանջ է կշտանալու համար. կշտանալը բնական պահանջ է մարսելու համար. մարսելը բնական պահանջ է սնանելու համար։ Մարսողութեան գործարանը՝ իւր մարսելիք կերակուրին ամանն ունի, որ մի չափ է. այս չափին լեցուելն արդէն կշտանալ է, պարպուելն էլ քաղցեալ։ Այս չափէն աւելի ուտելը՝ մարսողութեան գործարանին չարակից գործարաններուն կը վնասէ, և մարսողութեան նկ կը վնասէ, որ ներքին հիւանդութիւններու սկիզբն կը լինի։ Խմելը՝ բնական պահանջ է՝ պովանալու (ծարան անցունելու) համար, պովանալը՝ բնական պահանջ է՝ բերանի ցամաքութիւնն անցունելու և ստամոքսի խառնարանին պիտոյքը լեցնելու համար. այս խառնարանին լեցուելը՝ պովանալու չափն է. այս չափէն աւելի խմելը՝ ներքին գործարաններուն վնաս կը պատճառէ։ Կերածը և խմածը մարսելու համար ժամանակ հարկաւոր է. մարսողութեան գործարանն իրեն ընթացք ունի, ինչպէս ժամացուցի ճոճանակը. այս ընթացքն ստիպելով սնունդ չաւելնար, այլ միայն արտահոսումներն կը յաճախեն. վասնորոյ և մարսողութիւնը չկմնցած, այսինքն դեռ չքաղցեցած ուտելը՝ որկրամոլութեան մի կերպն է. միշտ անօգուտ և վնասակար է։ Որկրամոլութեան մի տեսակն էլ այն

է որ անպատճառ այս ինչ կամ այն ինչ կերակուրն ուտել կը խորհենք և կը հետևենք· ամեն կերակուր սնունդ է. երջանիկ մարսողութիւնն այն է, որ ամեն տեսակ բնական ուտելիքի հաւասարապէս վարժուած է։ Ամենապարզ հացով կշտացող և սոսկ ջրով գոհացող մարդիկն աւելի ևս առողջ են, քան թէ այն արքունականները՝ որ ամենատեսակ կերակուրներով և իրենց ցանկացած տեսակներով մէշտ կը շարունակեն ուտել. և մասնաւոր ու թեթև փոփոխութեանց պատահելով՝ իսկոյն կը հիւանդանան. կերակուրներու ամեն տեսակին էլ իրենց բնական օգուտներն ունին. անսովոր կերակուրներն ու չափազանց ուտելը մեայն կը վնասեն. եթէ ոչ վնասակար կերակուր չկայ՝ ոչ բանջարներում, ոչ խաւարտներում, ոչ արմտիքներում, ոչ հունտերում, ոչ մրգերում, ոչ կաթնեղէններում, ոչ մսեղէններում, որոնք առհասարակ սովորական կերակուրներն են մարդուն։ Ուտելու և լմնելու չափաւորութիւն ունեցող մարդը՝ իւր տարեկան ուտելիքը՝ տասն աւուր աշխատութեամբ կարող է շտեմարանել՝ ամեն տեսակին ևս ժողվելով և պատրաստելով. որկրամոլը՝ իւր տարեկան ուտելիքը չէ կարող պատրաստել և ոչ ամբողջ տարիում, և մէշտ դժգոհ է կերածէն։ Նա առանց գիտնալու թէ կշտացած է, դեռ այս ինչ ուտելիքի համը կը մտածէ, և ձեռք չբերելուն պատճառաւ, կը նեղուի։ Չափաւորութիւն սիրող մարդը՝ կշտանալէ ետքն երբէք չյիշէը որևէ կերակուրի համ. նա՝ հազիւ թէ կերակուր պատրաստելու ելած ժամանակը կը յիշէ այս ինչ կամ այն ինչ կերակուրի համը։ Աշխատիլն այս աւուր դրութեան նայելով՝ որկրամոլ մարդուն դրութիւնը խիստ թշուառ է։ Կարմիր ձուկ ուտելու մոլի եղողը՝ մի օր տասն ռուբլիով չէ կարող կշտանալ. և իւր վաստակին որ նայես, խելքդ չկտրէը, թէ նա մի օրում գոնէ մի ռուբլի վաստակ ունենայ. խեղճ մարդը՝ իւր ախորժակի գըրգռմունքին այնքան կը նեղուի, որ մի քանի օր անցնե լէ

ետքն այլ ևս չդիմանար, իւր տան սեղանէն դուրս հազիւ ձեռք կը ձգէ մի կտոր և կը կըծէ. եթէ մի ուրիշը պատահի, նորա ընկերանալու հակամետութեան կասկածներով ևս կը տանջուի։ Կարծեմ թէ չափաւորին երջանկութիւնն ու որկրամոլին թշուառութիւնն այսչափ նշմարելը բաւական է հասկանալու համար, թէ Աստուծոյ պատուիրաններն ինչու՞ չափաւորութիւն կը պահանջեն։

Յիսուս՝ իւր վարդապետութեանց մէջ՝ մարմնական ցանկութեանց հետևողներին կը խրատէ, որ չընութեան խորհուրդներէն անգամ հեռի կենան. գատապարտելի յանցանք կը գըտ մարդու այն հայեցուածը՝ որ ցանկութեան պատճառաւ կը նայի որ և է կնոջ։ Այս ցանկութեան հետ հաւասար յանցաւոր կը համարի և այն այրերին որոնք իրենց կինն առանց չնութեան յանցանքի՝ արձակել կը մտաբերեն, և որոնք որ յանցանքի դատապարտութեամբ արձակուածն՝ իրենց կինն կանեն։

«Լսեցէք, որ առաջիններուն (իսրայէլացւոց) ասուեցաւ (Հին օրէնքում).—«Մի չնար».—բայց ես կասեմ ձեզ. թէ ամեն ով որ մի կնոջ նայի ցանկալուն համար, նա արդէն տեղն ի տեղը չնացաւ նորա հետ իւր սրտումն։ Եթէ աչ աչքդ կը գայթակղեցնէ, խլէ և ձգէ քեզմէն . . . . ։ Եթէ աջ ձեռքդ կը գայթակղեցնէ քեզի, կտրէ և ձգէ քեզմէն. զի լաւ է քեզ, որ մի անկի կամ կաղ լինիս և բոլոր մարմինդ գեհեն չըձգուի։ Արդէն ասուեցաւ, թէ «ով որ իւր կինն արձակէ, տայ նորան». —բայց ես կասեմ ձեզ, թէ ամեն ով որ արձակէ իւր կինն առանց պոռնկութեան յանցանքի, նա է որ նորա չնալուն պատճառ կը լինի. և ով որ արձակածը կինն կանէ, կը չնայ»։ (Մատթ. Ե. 28 – 32)։

Յիսուսի այս պատուիրանն ուշադրութեամբ կատարող չափահասները՝ բոլորովին հեռի և ազատ կը

սահեն լնքզլնքնին ցանկական ամեն տեսակ գործերէ, խօսքերէ և խորհուրդներէ. կը վտիտին երենց աչքը՝ որ չտեսնեն այնպիսի պատճառներ, կը կտրեն երենց ձեռքը՝ որ չշօշափեն այնպիսի կիրքեր։ Եւ երենց ամուսնոյն հետ երբև մի մարմին անբաժան միացած՝ զաւակները կը ծնանեն Աստուծոյ օրհնութեան օրէնքով, և երենց սերունդը կօրհնեն։ Իսկ որոնք որ անլուր այս հոգւոյս ձայնին, և կը շարունակեն երենց խառնակեցութիւնը՝ նոքա նոյն իսկ այս աշխարհի կեանքում ևս կը գտնեն շատ անգամ երենց պատուհասը։ Այսպէս շատերուն պատուհասը տեսել ենք և շատերունը լսել. թէ ոմանք կուրացել են, ոմանք խլացել, և ոմանք կաղացել. ոմանց քլեղն է լնկել, ոմանց ձայնը կտրել, կամ կոկորթը վտակուել. ոմանք մտաթափ են եղել, և խելագարուել, և ոմանք՝ մինչև իսկ տեսակ-տեսակ դիւահարութեանց ենթարկուել. ոմանք հիւանդութեանց են պատահել, ոմանք ախտերու, և նոյն հիւանդութիւններում մնռել են. անվերջ հեծեծանքով, անդարման ցաւով, և որ անբժշկելին է՝ երենց սերունդին ժառանգեցուցել են այն ապականութեան ախտերը, հիւանդ ծննանելով, և կիսամարմին ու կիսակենդան մեծցնելով։

— Ինչու՞— Վասն զի ամուսնութեան սրբութիւնն ու օրհնութիւնը չեն ընդունել, կամ ամուսնութեան խորհուրդը չեն պահպանել. և չնութեան գործերուն երազուած հաճոյքն առողջութիւն ու կեանք են համարել, և այնպէս մեղա խառնակեցութեամբ չաղախուել ու գրգռուել։

Այս տեսակ հիւանդներուն ամենքին էլ կը բժշկէը Յիսուս, Աստուծոյ ամենակարող զօրութեան հաւատքը հաստատելով. և կը պատուիրէը, որ այլ ևս չմեղանչեն։ Վտանգուածներն ամեն տեսակ վտանգէ կազատուէին Աստուծոյ զօրութեանն հաւատալով և կընդգրկէին Յիսուսի պատուիրանաց պահպանութիւնն մինչև երենց մահը։ Սուրբ աւետարանի այս պատմական կտորները

կարդացող քրիստոնեայն՝ կը սոսկայ և կը փախչի այս ախտերու ճանապարհէն. և կը պատուէ ամուսնութեան խորհուրդը՝ եկեղեցւոյ սահմանած օրէնքովն, որ մեայն է ընդհանուր աճելութեան ճանապարհ, և առանց հիւանդութեան կը կենցաղավարեն երենց ամբողջ կեանքում։ Կամ թէ Պօղոս առաքելոյ օրինակին կը հետևեն, և երբև անմեղ մանուկ կապրեն երենց բովանդակ կեանքը, մանաւանդ՝ եթէ բազմութեան և ժողովրդոց ուսման և օրինակ տալու պաշտաման մէջ կը գտնուին։

Յիսուսի Քրիստոսի այս կատարելութեան խրատներն ու պատուէրները ուշադրութեամբ կարդացող քրիստոնեայն՝ բոլորովին պերճ կը լինի՝ հպատութեան, նախանձու, բարկութեան, ծուլութեան, ագահութեան, որկրամոլութեան և չնութեան ախտերէն, և նոցա պատճառով մտածուած չարահոգի խորհուրդներէն, ու խօսքերէն. նա կը ջանայ միայն իւր պարտականութիւնը կատարելու, և կը վայելէ ընկերութեան անկեղծ սէրը. կը պայծառանայ առատ աչքի հայեցուածքով, աջողակ ձեռքի ժրաջանութեամբ, և ուղիղ շաւղէն չխոտորող անսայթաք ոտքերու յառաջագիմութեամբ. կը հարստանայ աչքով ու մտքով, կը զեղուամարներով. և այս անկարօտութեան վիճակում ընկերներու սիրովը վառուած, և նոցա օգնելու աշխուժով թեւաքրուած, սակաւապէտ կը լինի և սակաւակարօտ, և սննդի ալէտքերն ամենևին հոգածութիւն չեն բերը նորան։ Երկրին ամենէն առատ բերքովն էլ կշտանալ կը սովորի, ամենառատ տեսակի նւդովն կը պարարուի, և ամեն առատ համեմներովն կը բաւականանայ, կը սնանի անընդհատ, կաճի և կը զօրանայ անվթար։ Աստուծոյ պատուիրաններուն ունկնդրութեամբ և երկիւղածութեամբ՝ կգգօնանայ, կը պարկեշտանայ։ Որկրամոլութիւն և չնութիւն՝ նոցա խորհուրդներում տեղիք չեն գտներ։ Իրբև կատարելութեան հետևող Աս-

տուածապաշտը՝ կը վայելէ նոր գործերով, կաճի և կը բազմանայ Աստուծոյ օրհնութեամբ. նոր ամբողջ կեանքումն ամենևին անկարօտ որ և է մարմնական պիտոյքի, և հոգւով կը կարօտի՝ մեռելոց յարութեան, Աստուծոյ անաչառ դատաւորին՝ նոր աչ կողմն հրաւիրելու ձայնին։

Այս հոգեկան կարօտութեանց հաշակն առնելու ակնկալութեամբ և յուսով կը հետևի աստուածային պատգամաց ուշադիր ընթերցուածոց, և կատարեալ ուսման. և ըստ ուսմանն ճշմարտութեամբ կը հաւատայ Աստուծոյ գերմարդկային նախախնամութեան, մարգարէութեանց ուսմամբ կը հաւատայ և նոյն իսկ Աստուծոյ որդւոյն Յիսուսի Քրիստոսի աշխարհ գալուն և կերկրպագէ. և նորա խրատներուն մտադիր ունկնդրութեամբ կրնդունի սուրբ աւազանին Հոգւոյն Սրբոյ մկրտութիւնը, և գինքը կը կնքէ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. այսպէս Յիսուսի Թաղման և յարութեան օրինակաւն՝ յարութեան յուսով լցուած, զօրացած, և անմահութեան կենաց սերովը վառուած, կը հանապարհորդէ այս աշխարհի մարմնական երևոյթին մէջ՝ հոգևոր կենաց հանապարհներն ու շաւիղներն անսայթաք և առանց գայթակղութեան. կը թեթևանայ աշխարհի ամենատեսակ դառնութեանց հոգսերէն. և երբև կատարեալ հոգւով աղքատ՝ կը ցանկայ յաւիտենական կենաց. և երբև կատարեալ ճշմարիտ քրիստոնեայ՝ կը բեռնաւորուի միայն ընկերսիրութեան պարտականութիւնները անթերի կատարելու ջանքով և աշխատասիրութեամբ. և որոյ ամենամեծ ծանրութիւնը կը լինի՝ այն ընարութիւնը՝ թէ «արդեօք այս մարմնէն ելլել և Քրիստոսի հետ լինել ցանկանայ, թէ այս մարնուման երկար մնալ և ընկերներուն երկար ժամանակ օգտակար լինել»։ Եւ որչափ որ ապրի, այնչափ ժամանակ հս անդադար օգնական կը լինի օրինակով, երբատով, գործով և ողորմութիւններով. կը դիզէ իւր

բովանդակ հարստութիւնն երկնքում, և կոչման կէտն որ կը հասնի, կը փոխուի առ Աստուած ի հանգիստ. անջինջ արձանագրելով իւր կեանքը իւր սերնդոց և ընկերներու սրտերումն. և իւր աղգի պատմութեան էջերում։

Այս մարմնական աշխարհի մէջ Յիսուսի պահանջած և երանած հոգևոր կեանքն՝ այս խորհուրդներուն, խրատներուն և օրինակելի գործերուն համեմատ անցուցնող քրիստոնեաներն՝ աղջախո կոսուին, և այս ոգին ու այս կեանքը՝ աղջախոհութիւն, որ բուն իսկ հանապարհն է անմահական կենաց։ (Այժմու փիլիսոփայական բացատրութիւններումն քրոյական լեռ կասեն՝ ողջախոհութիւն ասելու փոխանակ)։

Ը. ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆ ՋԳՈՒՇՆԱԼ ԻՐԵՆՑ ՄԱՆԿԱՆՑ՝ ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ, ՀԱՆԱՊԱՐՀՈՒՄՆ ԱՀԵԼՈՒՆ.

Աստուածային յայտնութեան հին պատմութիւններէն կը սորվինք, որ Աստուծոյ պատուիրաններու պահպանութիւնը՝ կատարելութեան բուն հանապարհի շարունակութիւնն է. յորում մնալն կերևի մարդու կատարեալ ողջախոհութիւնը։ Այսպէս խելամուտ կը լինինք, երբ տեսնենք, որ Աստուծոյ օրհնութիւնը հս կատարուած է այն անձանց վերայ՝ որոնք Աստուծոյ պատուիրաններու հանապարհը բռնած են և կը պահեն։

Մարդուս առաջին անհնազանդութենէն ետքը՝ Աստուծոյ պատուէրն եղաւ. «փորձել չերկիր և պահել», որ կը նշանակէ աշխատել երկրի վերայ, և նորա պտուղը վայելել։ Թէ այս պատուիրանին պահպանութիւնն անհրաժեշտ է՝ մեր ամենօրեայ պահանջն անգամ կը հաստատէ. ուրեմն մարդու առաջին պարտքն է, լսել

այս պատուէրը, Ճիշտ ըմբռնել սորա վախճանը՝ որ է կերակուրը ունենալ իւր Ճեռքի պատրաստութեամբ. և հաստատ դնել մտքումը, թէ՝ իւր այս պատուիրանի պահպանութեան պարտակութիւնն անխուսափելի է։

Այս պատուիրանի պարտաւորիչ եղածը՝ Ճիշտ ըմբռնող մարդիկ՝ անգամ մը Յիսուսի մօտ գնացին, կանխաւ խորհելով, որ իրենց վերայ Թագաւորը հրատարակեն Յիսուսին, և նա անպակաս հաց տայ իրենց, և արևի տակ աշխատելու ծանրութենէն ազատուին։ Այս բաղձանքով լեցուած մարդիկներուն՝ բոլոր մարդկանց անհրաժեշտ եղող երկրորդ պատուիրանը կուտայ Յիսուս, ասելով.

«Գնացէք, աշխատեցէք ոչ այն կորստական կերակուրը, այլ այն կերակուրը, որ կը տևէ մինչև յաւիտենական կեանքը»։ Այս պատուէրին հրամայած կերակուրը՝ որ պիտի տևէ մինչև յաւիտենական կենաց հասնելնիս՝ է նոյն իսկ Յիսուսի սորվեցուցած աղջխոհութիւնը, որ մարդու հոգւոյն կերակուրն է. մինչդեռ առաջին պատուիրանի գտած կերակուրը՝ մարմնոյ կերակուրն էր։

Մեր օրական պիտոյքները (մարմնոյ պիտոյքները միայն) մեզ գգալի կանեն, թէ առաջին պատուիրանի պահպանութիւնն անհրաժեշտ է. ըստ որում առանց կերակուրի մարդ չապրիր. և կերակուրը (հացը, մրգը, կանանչին, կաթը, միսը) երկրի պարարտութենէն միայն կունենանք. սրեմն պիտի աշխատիմ պարպտանելու։ Այս Ճշմարիտ խելամտութիւնն անողը՝ մարդն է. բայց ոչ թէ սոսկ մարմնով մարդը. եթէ սոսկ մարմինը լինէը այս խելամտութեան հասնողը, նա պիտի չխելամտէը, թէ պիտի աշխատիմ պարպտանելու, այլ պիտի խելամտէը միայն, թէ ուտելու եմ երկրի պարպտուելիքը. (ինչպէս կը տեսնենք սոսկ մարմին երևցող անբան կենդանիները, որոց մի քանի տեսակները իրենց ուտելիքի պատրաստութեան և շտեմարանելու եղանակին մէջ

մարդէն աւելի իմաստուն կերևին, և բնաւ քաղցածութիւն չեն տեսներ)։ Պիտի աշխատիմ երկրը պարպտանել՝ խելամտութիւնը՝ սոսկ մարմնոյ խելամտութիւն չէ. այլ Հոգւոյ՝ բանականն Հոգւոյ խելամտութիւն է, որ մինչևնոյն ժամանակ և մարմնոյ պիտոյքն կը խելամտէ աւելի հեռաւոր սահմանով։

Բանական մարդը, որ Հոգւոյ և մարմնոյ միութիւնն է, եթէ կզգայ մարմնոյ պիտոյքը, կզգայ և Հոգւոյ պիտոյքը, եթէ կը խելամտէ մարմնոյ պիտոյից պատրաստութիւնն, կը խելամտէ և Հոգւոյ պիտոյից պատրաստութիւնը. և ինչպէս որ խելամտեց, թէ պէտ է աշխատիմ երկրը պարպտանելու, նոյնպէս և կը խելամտէ, թէ պէտ է աղջխոհ լինիմ, պէտ է աղջխոհութեան ճանապարհորդ անուանուիմ, յաղ չամչեմ չխոտորիմ. պէտ է աղջխոհութիւնը սիրեմ, և որպէս անպակաս ունենամ, որ հոգեւոր ներքինի է։

Այս երկու խելամտութիւնները՝ որ զոյգ երթան, կատարեալ մարդոց խելամտութիւն են, և մարդս կաճի. կը բազմանայ Աստուծով բուն իսկ կատարեալ մարդ լինելու ձանապարհումն։ Յիսուս կասէ, թէ «Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեցէք, և նորա արդարութիւնը, մնաց մարմնական պիտոյքներն արդէն աւելի կուգան ձեզ»։ Եթէ այս խօսքին կրհաւատանք, արդարև Հոգւոյ պարարտութիւնն ոչ երբէք կը նուազի մարմնական պիտոյից սակաւութեան պատճառով։ Հոգւով զօրաւոր եղող մարդիկը՝ չափաւորութիւն ունին, որ անսպառութեան աղբիւր է մարմնական պիտոյքներու։ Որմէ կը հետևի, թէ մինչև Հոգւոյ կերակուրի մասին որ հետեւինք, զարձեալ կապրինք. ըստ որում՝ Աստուծոյ խոփաւորութիւնը և Աստուծոյ արդարութիւնը՝ ողջախոհութեան միմիայն Հոգեկան բաղձանքներն են։ Բայց եթէ այս ողջախոհութեան խելամտութիւնը թողած, յարգինք միայն մարմնական պիտոյից խելամտութիւնը, այն ժամանակ ոչ միայն չաւելնար մեզ մեր Հոգւոյն կերակուրը, այլ խսպառ կը սակասի. կը նուազինք, և մարմին կը դառ-

նանք. որով հետևանքն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ ուժ չունեցած ժամանակ մուկերու նման ուտել գողութեամբ. և զօրացած, ուժովցած ժամանակ՝ առիւծի պէս ուտել պատառելով: Այս են անհոգի մարմին եղող կենդանիներու վախճանական վիճակը. որոց ստորին տեսակէն է սոդոմը, բարձր տեսակէն՝ գազանը:

Արդ մարդոյ պահելիք աստուածային պատուիրանքներն են.

ա. մարմնական ախտոյից համար՝ նելլերը բռնելնել, պղծագործելնել:

բ. հոգեկան ախտոյից համար՝ ողջախոհութիւն պահել:

Եթէ ծնողք իրենց պարտականութիւնը ճիշտ կատարած լինին այս երկու պատուէրներուն նկատմամբ, նոցա ծնողութիւնն արդէն իսկ կատարելութեան գծին վերայ է: Այսպիսի ծնողաց պարտականութիւնն է, որ իրենց մանուկներուն՝ ծնունդէն մինչև արբունքի հասած օրն անթերի ջամբեն նոցա՝ թէ մարմնոյ ախտոյքը, և թէ հոգւոյ ախտոյքը. և այս ջամբումն ախտի լինի դարձեալ բնական կարգաւ: Ինչպէս մարմնոյ կերակուրը մայրական կաթէն իսկսի, և հետզհետէ աստիճանաբար հաստատուն կերակուրի կը հասնի, նոյնպէս հոգեկան կերակուրը՝ մանուկին զգացումն սկսելուն հետ մէկտեղ՝ ծնողաց ողջախոհութեան արդիւնքն եղող բարեպաշտութեան արտաքին նշաններէն ախտի սկսի, և Աստուծոյ երկիւղին ախտի հասնի: Երբ մանուկը կաճի և իսկսի հաստատուն կերակուրի, ծնողք պարտական են զգալի անել մանուկին, թէ մեր կերակուրըն երկրի երեսը կը բուսնի, և մարդիկ կը ժողովեն, ու իրենց պաշար կը պատրաստեն. սորա հետ մէկ տեղ՝ զգալի պիտի անեն, թէ երկիրը կը կանաչի և կը պըտղաբերէ մինչև Աստուծոյ հրամանովն, որպէս զի մարդիկ առանց կերակուրի չմնան: Ծնողք՝ երբ կերակրոյ պաշար պատրաստելու կզբաղին՝ մեծ պարտականութիւն մի կատարելու համար, պէտք է որ ոտքի ելած

մանուկներին ևս իրենց հետ զբաղեցնեն, որչափ որ կարելի է, նոցա զգացումներուն հաճոյ եղած տեսակներէն սկսելով. զոր օրինակ ծաղիկ ժողվելէն, բանջար գըտնելէն, սունկ ժողվելէն, ելակ կամ ուրիշ մանր պտուղներ քաղելէն. և այլն: Միևնոյն այս միջոցումն պիտի հետևեն սովորցնել, որ մանուկն ինք զինքը խաչակնքէ: Մանուկը՝ երբ կսկսի աւելի զօրանալ և վազվազել, այնուհետև աւելի ստէպ գործի զբաղեցնելու է. ծնողաց հրամայած գործերն այնքան մանր լինելու են, որ մանուկները՝ լմնցնելէ առաջ ձանձրութիւն չգգան, և գործը կիսատ չձգեն երթեն: Ամեն մի գործ լմնցնելուն, պէտք է արձակել և թողուլ իւր կամքին. մինչև որ աւարտած գործին չափ ժամանակ անցնի, և ապա դարձեալ մի գործի հրամայել: Մանուկն՝ այս գործակատարութեան վարժուելուն հետ մէկտեղ պիտի կըթուի նաև իրմէն մեծերուն մտիկ անել, նոցա հրամայածն առանց ձանձրանալու կատարել, որ առաջին ճանապարհն է խոնարհութեան:

Մանուկներն երբ այլ և այլսին այս աւուրը լսածը՝ միւս օրն յիշել անմոռաց, այնուհետև սկսելու, հարցնելու է նոցա ամեն իրիկուն, թէ այսօր ինչ է արել, ինչ է սորվել երբկ ինչ էր արել, ինչ էր սորվել: Եթէ կարօղանայ մանուկն անթերի յիշել և պատմել թէ այս աւուր և թէ երէկուայ արածներն ու սորվածներն, այն ժամանակ ծնողք խոստանալու են մի նոր գործ ևս վաղուան համար. իսկ եթէ չկարողանայ անթերի պատմել արածն ու սորվածը, ոչինչ չխոստանալ, և միւս աւուր համար ևս կրկնել միևնոյնը և կրկնել տալ:

Մանուկներն՝ երբ այլ և այլ տան մէջ գտնուած ատեն մարդոց անունները կը սովորին, այնուհետև սկսելու է ճանչցնել իւր երկրորդ կարգի ազգականներին, որոնք որ տունէն դուրս կը գտնուին. զոր օրինակ՝ հօրեղբայրը, մօրեղբայրը, հօրաքոյրը, մօրաքոյրը, հաւը,

տատը, Հանին, մամին։ Երբ այս ծանրութիւնեն անմոռաց կը մնայ մտքերումն, ու այն ազգականներուն այլ ևս կը ճանաչեն ու անուններըը կը յիշեն, և չեն մոռանար, այնուհետև սկսելու է ճանչցունել իրենց տան պատմութեանը հետ. հօրմէն սկսելով դէպի վեր տանել, սկզբում միայն անուններըը սովորցնել, և ապա դառնալ նոցա արհեստներըը ևս միասին կրկնել, այսպիսի մի ոճով.

Նախ հարցնել մանուկին, Թէ—Հօրդ անունը ինչ է։

Նա կը պատասխանէ զոյօրինակ Թէ—Սարգիս է։

Ապա հարցնել Թէ—Սարգիսը՝ քո ինչն է։—Հայրս է։

—Դուն Հօրդ ինչն ես։—Ես հօրս որդին եմ։—Հօրդ հայրն ով է։—Մարկոս է։—Մարկոսը՝ քո ինչն է։—Հաւս է։

Այս ոճով մէկ քանի ազգ սորվելէն ետքը դառնալ և հօրմէն սկսելով, արհեստներն ևս հարցնել, և պատասխաններն ասել տալ։

Այս մրջոցներումն սկսելու է մանուկներու լաղն արհեստական սկզբունքներու վերածել. զորօրինակ, տուն շինել, ճանապարհ շինել, ջրհոր շինել, պատուհան շինել, վառարան շինել։ Եւ հետզհետէ տուն շինելու աղիւսներն գրաւոր աղիւսի դարձնել, և նոցա վերայ գրերը ճանչցունել, նոյնպէս թուանշանները։

Կատարեալ զգուշութիւն հարկաւոր է, որ խօսակցելու սկսող մանուկները լաց չլինին. կամ եթէ պատահի և լաց լինին ու թեթև խօսքով կամ յանդիմանութիւնով չդադրին, թողնուլ այնպէս, որ լաց լինին, մինչև որ ինքնիրենց լռեն. խօսել սկսող մանուկին որևիցէ կամքը պիտի չկատարուի, եթէ լաց լինելով կը պահանջէ. (լաց լինելով իրենց կամքը կատարել տուող մանուկներն ընդհանրապէս հպարտ ու վիթխարտ մարդ կը լինին և ոչօքին օգտակար չլինելէ զատ՝ իրենց ամ-

բողջ կեանքումն անպատճառ ծանրաբեռնութիւն կը լինին ուրիշին, և իրենց ծնողացը կամ ազգին տրամութիւն միայն կը պատճառեն. աւելի լաւ է բնաւ զաւակ չունենալ, քան թէ լաց լինելով պահանջող զաւակ ունենալ, կամ թէ այնպէս պահանջել սովորցնել)։ Մանուկներու պահանջն ընդհանրապէս մրգեղէն կը լինի, զոր փողոցներում տեսնելուն պէս կը պահանջեն. այսպիսի դէպքում ծնողք պիտի չկանգնեն փողոցում, և նորա կամքը լմնցնեն. այլ պիտի հասկացնեն, Թէ այն մրգեղէնն իրենցը չէ, այն ուրիշինն է. և Թէ մեր մրգեղէնը՝ մեր տունը կը լինի, երբ տուն երթանք, մրգեղէն կուտամ քեզ և եղբայրներուդ։

Մանուկներուն կերցնելու է ընդհանրապէս տեղական մրգեղէնները միայն (և ոչ օտար երկրի մրգեղէն), և այն՝ եթէ կարելի է, մանուկը՝ ծառին վերայ տեսնելէն ետքը կերցնել։ Եթէ մանուկը ծառին վերայ տեսնէ և նաև մրգեղէն ուզէ, խօսքով հասկացնելու է, Թէ այն չուտուիը, քանի որ նաև է, և Թէ բերանն աղու կանի, և կը հիւանդացնէ. պտուղն հասունանալէ ետքը միայն կարելի է ուտել։ Եթէ մանուկն այսպիսի խօսքերով չհամոզուի, և դարձեալ շարունակէ պահանջել, այն ժամանակ մի հատ միայն կերցնելու է, և երբ ճաշակէ, ու դադր Թողուն, կամ տրիալը, նա չարժէ. այն ժամանակ՝ ձեռքէն առնելու, մէկդի դնելու, և հասկցնելու է, Թէ նա պատճառ եղաւ ծառին պտուղը չհասած վրցնելու, և Թէ ծառը կը ցաւի, կը հիւանդանայ, և եկող տարի այլ ևս չատ պտուղ չտայ։ Այսպիսի դէպքերում պէտք է սորվեցնել տղայոց, Թէ պտուղն ծառը կը տնկեն մարդիկ, և Աստուած կուտայ պտուղ։ Պարտէզին մէջ չգտնուած պտուղներ պահանջած ժամանակները կարելի է ասել, Թէ մեր պարտէզում չկայ այն պտուղը. և Թէ երբ նոքա մեծանան, իրենք պիտի տնկեն, որ ունենան. այս ասելով ցուցնելու է հետզհետէ իրմէն մեծ մարդկանց ձեռքով տըն-

կուաճ ծառերը. և հասկացնելու է, որ կարիճ տղաները, և չնորհալի տղաղերն եթէ ծառ տնկեն, այն ծառին պտուղը նման շատ կը լինի, և գեղեցիկ, եթէ նոքա լաւ մարդ լինին, և Աստուած օրհնէ զանոնք։

Մանուկներն՝ հինգ տարեկան հասակը մտնելէ ետքն այլ ևս լինքզինքնին բաւական մեծացած կը կարծեն, և իրենցմէ մեծերուն հետ նստել կը սկսին. այս սիջոցումն սկսելու է. համբանք սորվեցնել, գիր կարդալ և գրել սորվեցնել. (գրքերը վայտէ տղուսներով ձևացնելով.). մինչևնոյն ժամանակ սկսել տան գործերում մանր մանր աշխատեցնել. զորօրինակ մանր կարասիները տեղաւորցնել տալ. մի աթոռ կամ մի բարձ և այլ պէտք եղած բան բերելու խրկել. կերակուր պատրաստելու գործերում ևս աշխատեցնել. սեղանի վերաբերեալ մանր գործերը պատրաստել տալ. և այսպէս շարունակել անխափան։ Մանուկներն իրենէ կայտառ և աշտաշարժ կը լինին. ծնողք պէտք է ուշադրուԹիւն դարձնեն, որ նոցա շարժումները միշտ կամ մրչալի որ կարելի է պէտք եղած մի զբաղմունքի վերայ կատարել տան. որով նոքա կը վարժուին տնային ամեն տեսակ մանր գործերում, և մինչև իմահ իրենց աշխատասիրուԹեան ոգին կունենան իրենց մէջ. և բնաւ հիւանդուԹիւն չեն տեսներ, եթէ կանոնաւոր օդի մէջ և երկնքի տակ ևս աշխատեն. (մինչ տունի մէջ փակուած մանուկներն հիւանդոտ կը լինին և աշխուժէ կընկնին)։ Այս շարժումներն և աշխատուԹիւնները առհասարակ մանուկին մարմնոյ և ուղիղ գործարաններուն զօրանալու կանոնաւորուԹեան պահանջներն են. այս շարժումներն արգելելը՝ վնասակար է, բնաւ արգելելու չէ մանաւանդ Թէ առիԹ տալու է, որ շարժին, բայց մինչևնոյն ժամանակ՝ նոցա շարժումն օգտակար ու պիտանի աշխատուԹեան դարձնելու է հետզհետէ։

Մանուկներուն՝ այս հասակին մէջ պիտի զգուշա-

նան ծնողք, որ նոքա ամենևին չսովորին վատ կիրքերու վերաբերեալ խօսքեր ու ցոյցեր. զգուշանալու է, որ նոքա հայհոյուԹեան խօսք չհանեն իրենց բերանէն, մեծը՝ պզտիկին վերայ չհայհոյտանայ. այս դէպքումն իսկոյն խոնարհեցնելու է հայհոյողին։ Զգուշանալու է, որ նոյնպէս նախանձելու խօսք կամ ցոյց չլինի, սորվեցնելով, Թէ ինչպէս կարող են իրենք ևս ունենալ ուրիշին ունեցածին պէս։ Զգուշանալու է նոյնպէս, որ բարկուԹեան խօսք կամ նշան վերաները չերևի. բարկացող մանուկին կը խրատեն, Թէ այնպիսի բնուԹիւն ունեցողն ատելի կը լինի. և խրատէն հետն եթէ տեսնեն, որ ամչցաւ մանուկը իւր արածէն, գովել նորան, Թէ նա խոհեմ պիտի լինի, ուրիշ անգամ պիտի չանէ այնպիսի պահաստուր բան. իսկ եթէ մանուկը՝ խօսքով և յանդիմանուԹիւնով չամչնայ, երեսէ ձգել այն օրը, եթէ դարձեալ արածին սարջանալ չերևի, կերակուրի ժամանակ հասարակաց սեղանէն արգելել նորան, և ամենէն վերջը՝ կերակուրի մնացորդով Թողուլ, որ կերակրուի. եթէ դարձեալ չամչնայ, այնպիսի մանուկը՝ ծեծել պիտի Ճաշակէ ուղղուելու չափով, և ոչ բարկուԹիւնով։ Ծնողք պիտի չանան, որ մանուկն ամչնայ իւր բարկուԹեան վերայ, և միտքը գնէ, Թէ այն ձև բարկուԹեան խօսքը կամ ցոյցը՝ պատիժ ունին։ Զգուշանալու է, որ մանուկները ծուլուԹեան տանող խօսք չարտասանեն ամենևին, ամչցնելու է այն խօսքին վերայ. նոյնպէս Թոյլ տալու չէ որ իրեն յանձնուած գործը կիսատ Թողուլ և ուրիշն սկսի, Թող հանգչի, և շարունակէ, հանգչի և շարունակէ, մինչև որ լմնցնէ. եթէ բոլորովին չետ քաշուի, և չլմնցնէ, կերակուրի ժամանակ՝ նորան մի կտոր քարտու հաց, ու երեք հատ չկոտրած ընկոյզ տալու է՝ հասարակաց սեղանէն առանձին. նա մինչև հացը կակուղցնէն ու ընկոյզները կոտրել և փեճեկիլը՝ բաւական աշխատուԹիւն կը կատարէ. այս գործնական խրատը՝ ծոյլ մանուկներին

աշխատասէր անելու գրեթէ մէկ հատիկ բնական Հա-
նապարհն է. ըստ որում դժուարին է սիրելի անել աշ-
խատութիւնն, եթէ նեղքին զգացմունքները գրգռու-
մը չօգնէ ծնողաց կամ խրատողին: Այս հանգամանքում
խրատուող ծոյլ մանուկներին հասկացնելու է, թէ Աս-
տուած հրամայած է, որ միայն աշխատասէր մանուկ-
ները կերակուր ուտեն՝ երբ որ քաղցենան. իսկ
ծոյլ մանուկները՝ որ չեն սիրէր աշխատել՝ նոքա քաղ-
ցած պիտի կենան. նոցա կերակուր տալը մեղք է և
չանցանք: Ծոյլ մանուկներին հասկացնելու է, թէ մա-
նուկները ծուլութիւնը՝ նոցա համար աղքատութիւն կը
պատրաստէ նոցա բոլոր կենաց օրերուն համար. այն-
պիսի մանուկներին կերակուր տուող մայրերն անգամ
քաղցածութեան օրեր պիտի տեսնեն այն պատճառաւ
միայն, որ իրենց որդին աշխատասէր չեն սորվեցու-
ցեր: Այս օրինքը՝ Աստուած գրել է բոլոր մարդոց վե-
րայ, և իրաւունք: Այսինքն թէ՝ «իրաւունք է, որ
աշխատասէր մանուկն ուտէ, և ապրի. նոյնպէս իրա-
ւունք է, որ ծոյլ մանուկը չուտէ, և չապրի, քաղցա-
ծութեան մէջ չարաչար տանջուի, ու մեռնի»:

Կարի մեծ զգուշութեամբ զգուշանալ պէտք է,
որ մանուկներն ագահութեան որ և իցէ օրինակ չտես-
նեն իրենցմէ մեծերուն վերայ. և թէ երբէք երևի մա-
կանց վերայ ագահութեան նշան, զգուշանալ է այնպիսի
մանուկին և չափաւոր բաժնէն: Այս զգուշութիւնն՝ հին
Հայոց մէջ այնչափ մեծ էր, որ ամենատեսակ հանգա-
մանքներում կարգելէին մանուկներին և միջոց չէին
թողուլ որ նոքա դէպի ագահութիւն սրտնան իրենց
մտքումն: Այս զգուշութեան բուն կէտերն էին նոցա
կերակուրը կերցնել միշտ ըստ ժամանակի միասին հա-
ւասաքաձ նստեցուցանելով, իւրաքանչիւրի բաժինն առան-
ձին առանձին իրենց փոքր ամաններուն մէջ լեցուցած:
Նոցա մրգեղէն տալու ժամանակ թոյլատրել՝ որ իրենց
ափերովն առնուն կարողացածնուն չափ: Նոցա հագուստին

վերայ ձեռ չընել բնաւ, որ չսովորեն ուտելիքը կամ
մրգեղէնը ժամանակին չուտել և պահել. նոցա ափերն
իրենց որովայնի չափերն են. այն չափէն աւելի չեն կա-
րող ուտել, և այն չափէն պակաս որ լինի՝ յագուրդ չեն
զգար, և դարձեալ կը պահանջեն: Նոյնպէս զգուշու-
թեան մի գլխաւոր կէտն էր, որ երբ կիմանային, թէ
մանուկն իրեն մրգեղէնը ժամանակին կերած չէ, և ու-
րիշ մանուկներու ցոյց տուած ու պարծենցած է, այն
ժամանակ՝ չունեցող մանուկներուն մրգեղէն տալ, և
ունեցողին չտալ, որովհետև ունի արդէն. նա իսկոյն
կիմանայ, թէ իւր ագահութիւնը՝ պատճառ եղաւ, և
նոր բաժինէն զրկուեցաւ, մինչդեռ ուրիշները թէ ա-
ռաջին բաժինը վայելեցին և թէ երկրորդ բաժինը, և
ինքը տակաւին չէ կարող վայելել և ոչ առաջին բա-
ժինը. այս զգացումէն խիստ զարնուած մանուկները
լաց կը լինին (այն կորուսեալ բաժինին վերայ է լացը).
Թող լան, մինչև որ իրենց ձեռքումն եղածովը բա-
ւականանան: Մանուկներուն զգուշանալու է, որ չափէն
աւելի չուտեն. այս զգուշութիւնը՝ խիստ դիւրին է, որ
չափով ուտելիք միայն առաջը դնելով կը կատարուի: Մա-
նուկներուն զգուշանալու է, որ ամենևին չլշոնց և որևէ
հայհոյութիւնք չլսեն: Նե եթէ երբէք պատահեն մի վայ-
րենի մարդու լշոնցները լսելու (զրկանքն և բռնութեան
տակ ճնշուած ժողովուրդներն այս պակասութիւնը կունե-
նան.) և դառնան հարցնեն, թէ ինչ կասէ այն մարդը.
այն ժամանակ հասկացնելու է, թէ նա վայրենի մարդ
է, նորա լեզուն ամեն մարդ չհասկանար, և թէ վայ-
րենիները միայն կը հասկանան:

Եթէ ծնողք անվրէպ ուշադրութեամբ կարողա-
նան այս վերոգրեալ զգուշութիւնները ունենալ մանուկ-
ներուն վերայ մինչև նոցա եօթը տարեկան հասակն,
այնուհետև զգուշանալու է միևնոյն զգուշութիւններու
հետ միասին, անպարապ զբաղեցնել նոցա մինչև տաս-
ներկու տարեկան հասակը: Երբ նոքա այլ ևս առան-

ձեն գործ վճարելու չափ հմտացած կը լինին, թէ ընտանի գործերում, և թէ գրել կարդալու ուսման մէջ։ Նոցա զբօսանքը պիտի լինի այնուհետև դաշտերում ծաղիկ ժողվել. պարտէզներում մանր կանաչ դարմանդել. և թռչուններու ու թիթեռնիկներու հետևէն վազել. մերձակայ առուակներում ձուկ որսալ. ծառերու վերայ բարձրանալ, և պտուղ քաղել. այգեկութներում և հասկաքաղներումն անճանճրոյթ աշխատել. երմէն մեծերու ընկերութեան մէջ լուռ մնալ, և լսել ու սովորել. երեկոյեան վրայ մանուկներուն երեկոյ գիտցած արհեստներովն զբաղեցնել։ Ծնողք երեկոյ այս պարտականութիւնը ճշտիւ կատարելով մնայն՝ յոյս պիտի ունենան, թէ դէպի անթերի կատարելութիւն աճելու ճանապարհին հասուցել են երեկոյ մանուկը, և պիտի տեսնեն նորան երբեք կատարեալ պատանի. հետզհետէ աւելի մեծաքայլ յառաջադիմութիւն տեսնելով նորանում՝ թէ պատմութեան հմտութեան մէջ, և թէ արհեստներու կատարելագործութեան և աջողութեան մէջ և թէ երբեք կատարեալ ողջախոհութեան սրտով՝ մարմնական աճելութեանը չափովն՝ Աստուծոյ երկիւղին զգօնանալու մտաւոր զարգացմանը մէջ։

Թ. ԹԷ ԾՆՈՂՔ Ի՛ՆՉՊԷՍ ՊԱՐՏԱԿԱՆ ԵՆ ՁԳՈՒՇԱՆԱԼ, ՈՐ ԻՐԵՆՑ ՊԱՏԱՆԻՆԵՐԸ ՈՂՋԱԽՈՀՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՒՄՆ ԱՆԽՈՏՈՐ ԱՃԵՆ.

Ինչպէս մանկութեան օրերումն՝ նոյնպէս պատանեկութեան օրերումն պարտական են ծնողք՝ հոգեկան սիրով և յատուկ մարմնական խնամքով զգուշանալ երեկոյ որզւոց, որ ինչպէս մարմնական կատարելութեամբ, նոյնպէս հոգեկան կատարելութեամբ աճեն երեկոյ հասակումն, զօրանան ու զարգանան թէ իմաստութեամբ և

թէ շնորհքով. և երբեք կատարեալ մարդոյ տիպ և գաղափար՝ սերեալ լինին ամեն մարդու, և հաճելի Աստծոյ։ Ծնողք երեկոյ պարտականութիւնն անթերի կատարելու այս գլխաւոր նպատակին անթարթ աչօք պիտի նայեն. և երեկոյ պատանիներն այս կատարելութեան ճանապարհումն առաջնորդելու հոգածութենէն (խորհելէն և գործելէն) ամենևին պիտի չվերջանան։ Եւ որպէս զի անխոտոր առաջնորդեն ողջախոհութեան ճանապարհումն, միշտ երեկոյ ձեռքում պիտի ունենան այն կշիռը՝ որով նժարներէն մէկումն կաճեն և կառաւելուն մարնական պիտոյքներն, և միւսումն՝ հոգեկան պիտոյքներն. և որոյ հաւասարութիւնը՝ դրոշմն է կատարելութեան, և թէ առանց գայթակղելու գնացքին՝ ապահով ու անսխալ ուղեցոյց։

Պատանեկութեան հասակն՝ այն տարիքն է մարդուն, յորում առաջին անգամ կսկսին ընձիւղ և արմատ արձակել մարդկային կատարելութեան ոգին։ Եթէ այս ընձիւղներն որ և է օտար պատուաստի հանգիպեն, և արմատներն՝ անսովոր ջրի և քարի պատահեն, այնուհետև մարդկային կատարելութեան հոգին ոչ ևս կը շարունակէ իւր աճելութիւնն, այլ մէկէն ի մէկ կը նուազի, կը չորանայ և անպտուղ կը լինի։ Օրինակով մ'ասենք ըմբռնելի անելու համար։

Մանկութեան խնամքն ու խրատը կը նմանին պտղատու ծառի մը սերմին, զոր կը ցանէ այգեպանը՝ արգաւանդ հողում. ժամանակը կը գայ և սերմը կը ծլի, մէկ հատիկ սրմատ կը ձգէ դէպ խոր արգաւանդ երկիրը, և մէկ հատիկ ծիլ կը բարձրացնէ դէպի վեր ջերմութեան կեդրոնը. այս տունկը կը նմանի իւր այս վիճակումն՝ այն մանուկին՝ որ մինչևոյն ծնողաց խնամքով և խրատով կը հասնի տասներկու տարեկան հասակը։ Այգեպանն՝ այս տունկն աւելի բազմաբեղուն անելու համար, կը հանէ տերէնն, և առանձին շրջանակի մէջ աւելի ևս արգաւանդ ու կակուղ գետ-

նում կը տնկէ. այստեղ կաճէ տունկը եւ ամէն մի տերևներու գոգերէն մի մի ընձիւղ ևս արձակելով, և արմատին վերայ՝ ևս նոյնչափ թուով արմատային շառաւիղները արձակելով. որչափ անսայթաք աճէն արմատին շառաւիղներն ծածուկ երկրի մէջ մի-ևնոյն հողի երակներումն՝ այնչափ ևս վառաւոր և ուժեղ կաճէն ընձիւղներն օդի մէջ. ընդհակառակն որչափ որ արմատի շառաւիղներն հողի տակ օտար և անարգաւանդ երակներու պատահէն, այնչափ ևս կը նուազեն և կերպարանափոխ կը լինին ընձիւղները: Չմոռանալ այգեպանի բոլոր աշխատութիւնն այն է, որ հողն արգաւանդ անէ և զօրանան արմատներն ու ընձիւղները՝ իւր ակնկալած պտուղներն հասնելու նպատակաւ: Եթէ արմատները միևնոյն պահանջուած արգաւանդութեան մէջ աճէն, և ընձիւղն վերայ օտար պտուղ պատուաստեն, ծառը կաճի, բայց օտար պտուղ կարդադրէ: Այս տեղափոխուած տունկը՝ կը նմանի այն պատանիին՝ որ ծնողական խնամքով և խրատով աճելէ մինչև տասներկու տարեկան հասակը. տունկին արմատները կը նմանին՝ այն պատանիի հոգեկան կարողութիւններուն՝ որ նոր սկսած են բացուել և աճել դէպի բովանդակ աշխարհի լեզումտութիւնը. տունկին ընձիւղները կը նմանին այն պատանիին զգայարաններուն, որ նոր սկսած են իւրաքանչիւրն իւր յատուկ շարժումներուն գործն գործել. ծնողական խնամքն ու խրատը կը նմանին երկրի արգաւանդութեանը. ինչպէս երկրի արգաւանդութեանը կը զօրացնէ տունկին արմատները, ու բազմաբեղուն կանէ ընձիւղները, այնպէս և ծնողական խնամքն ու խրատը կը զօրացնեն մանկան հոգեկան կարողութիւնները, և անդուլ գործօն կանեն նոցա զգայարանները ըստ ամենայնի. տունկին պտուղը՝ կը նմանի այն պատանիի գործերէն յառաջ եկած արդիւնքին, որ է նպատակ: Տունկին ընձիւղին վերայ պատահած օտար պտուղը, կը նմանի ծնո-

ղական խնամքի և խրատի պակասելուն և նորա վնասանակ յաջորդած օտար խրատին և օտար օրինակին. ինչպէս որ թթու խնձորի ընձիւղին վերայ անոյշ խնձոր կը պատուաստեն, ու անոյշ խնձոր կը պտղաբերէ, այնպէս էլ պատանին աւելի կատարեալ և քաղցր արդիւնք կարտադրէ, եթէ ծնողական խնամքին և խրատին վնասանակէ մի-ևնոյն հոգւով լեցուած և միևնոյն սիրով վառուած և աւելի ևս կատարեալ խրատ ու օրինակ. իսկ եթէ ծնողական խնամքին և խրատին վնասանակէ ոչ նոյն հոգւով և սիրով խրատ և օրինակ, այն ժամանակ պատանին՝ աւելի դառն արդիւնք կարտադրէ, ինչպէս որ եթէ անոյշ խնձորի ընձիւղին վերայ՝ թթու խնձոր պատուաստեն:

Խարխ և կատարեալ ծնողաց պարտքն է զգուշանալ իրենց որդւոց պատանեկութեան հասակին, որ նոքա կատարեալ մարդու ճանապարհումն անխոտոր շաւիղներով յառաջանան: Կատարելութեան բուն պարտքն է՝ սորվեցանք, [illegible] որ մարմնոյ պիտոյքներն ու սնունդն առատանան և վայելէ բաւականութեամբ. և երկրորդ պարտքն էր, որ ընդերքին [illegible] ղեպուշեներուն խոտոռել չլինի, որ միանգամայն կատարեալ ողջախոհ հանդիսանայ: Ծնողք՝ իրենց այս երկու տեսակ պարտքերն անվերկ կատարելու համար, պիտի հետևին, որ իրենց պատանի զաւակները կատարելագործուին մի որևէ արհեստում՝ որ իրենց հայրենիքում սնունդ և ուրիշ մարմնական պիտոյք յառաջացնելու և առատացնելու միջոց է. նոյնպէս պիտի հետևին, որ պատանիները խոնարհութեան, առատասրտութեան, հեզութեան, արիութեան, ողորմածութեան, չափաւորութեան և ժուժկալութեան չնորհքներովն վայլին իրենց կեանքումն: Այս երկու տեսակ պարտքերն՝ եթէ կատարեն ծնողք, այնուհետև հաս-

տատ յոյս կարող են ունենալ, թէ երբեմն պատանեակը պիտի խնդացնէ եւ ծնողքը՝ եւ կատարեալ երկատարդութեան ողջախոհութեան արդիւնքներով։

Ծնողք երբեմն այս երկու տեսակ պարտականութիւնը կատարելու ժամանակ աւելի ուշադրութիւն պիտի դարձնեն այն հոգեկան առաքինութեանց արմատները՝ պատանիներու սրտերուն աւելի խոր արմատացնելու. այս ուշադրութեան հետ միասին պիտի հետեւեն նոցա կարդալ գթելն կատարելագործելու, որպէս զի փորձառական հրահանգիչ խրատները լսելէ ետքը՝ կարողանան կարդալ եւ անցեալ ժամանակի պատմութիւններն, ու նոցա պատկերներուն՝ հայելիի մէջ նայածի պէս տեսնեն նախնի առաքինիներու կատարելութեանց արդիւնքներն, եւ նոցա օրինակովն ևս թելադրուին կատարեալ առաքինութեան շաւիղներու մըն աւելի ևս յառաջադէմ լինելու բաղձանքին, եւ այնպէս ջանասէր փութով հետեւեն։ Պատանիները՝ կարդալ պիտի սորվին այնչափ, որ երբեմն նախնեաց չշատախօսները լրիւ եւ բոլորական իմաստովն հասկանան։

Պատանեկաց ուսումն՝ այժմու շատ ծնողք՝ երեք չեն կարող աւանդել. վասնորոյ եւ սխալուած կը յանձնեն ուսուցչաց։ Ծնողք այսպիսի դէպքում պիտի զգուշանան յանձնել երբեմն որդիքն այնպիսի ուսուցչի, որ կատարեալ ուսման հետ միասին՝ հմուտ լինի եւ ծնողական հոգւոյ բաղձանքին, թէ նոքա ինչպէս կուզեն տեսնել երբեմն պատանին։ Այն ամեն ծնողք՝ որ երբեմն չափահաս որդիներէն չեն խնդար, սխալմունքն այս օտար ուսման սկզբնաւորութեան ժամանակ կը սխալին առաջի անգամ, որ չեն կարող տեսնել, թէ երբեմն պատանին ծր ուսման մէջ աճելու է, որ համապատասխան լինի երբեմն հոգեկան բաղձանքին։ Ընդհանրիկ են այն ծնողք՝ որ երեք իսկ ձեռնհաս լինին երբեմն որդւոց սէրք համարձակին ուսումն աւանդելու. շատ

ծնողք՝ ձեռնհաս են այս շնորհքին, բայց աւելիի ցանկութեամբ միայն պատճառ կը լինին երբեմն որդւոց բերելիք կատարելութեան արդիւնքը՝ թերեւցնելու և անախորժ ու տեղի անելու։ Շատ ծնողք ևս ձեռնհաս են ու կը ճանրանան, միայն չզվիզվիութիւններէ չզերծանելով։

Ողջախոհութիւնը կատարեալ կը լինի՝ հոգեկան և մարմնական սիտոյքներու անկաթօտութեամբ. հետեւաբար և պատանիներու ուսումն պիտի լինի այն պիտոյից մատակարարութիւնը դիւրացնող և առատացնող գիտութիւններ։ Պատանիները պիտի կարդան այնպիսի պատմութիւններ, որոնք մարդու որ և է կատարելութիւնը կը պատկերացնեն։ Զորօրինակ. պիտի կարդան Սողոմոնի տաճարկու տարեկան հատակում թագաւորելու պատմութիւնը, և թէ նա ինչպէս խնդրեց իւր հոր օրհնութիւնը, Աստուծոյ շնորհքն ու իմաստութիւնը. և թէ նա ինչպէս կը դատէր երեն տեառնն եւած հակառակորդներու դատաստանը։ Պիտի կարդան Դանիէլի կեանքն ու անմեղութիւնը. և թէ նա ինչպէս կը յայտնէր ստախօսներու զրպարտութիւնը. պիտի կարդան թէ անմեղ և խոնարհ մանուկներուն ինչպէս կը սիրէ Աստուած և կօրհնէ. և կը պահանջէ որ ամենայն քրիստոնեայ՝ մանուկի պէս խոնարհ լինի։ Պիտի կարդան Սուրբ աւետարանի երանութիւնները, և սովորեն, թէ Աստուած որ կարգի մարդկիկը կընդունի։ Պիտի կարդան Սուրբ աւետարանի բոլոր խրատներն ամենայն մտադրութեամբ, թէ ինչ ձանապարհով կարելի է կատարեալ մարդ լինել, և Աստուծոյ հաճելի։ Պիտի կարդան բոլոր աշխարհի հին պատմութիւնները, նոյնպէս նոր ժամանակի պատմութիւնները, և թէ այժմու մեր գործերն այն պատմութեանց մէջ երեւցած պատկերներուն հետ ինչպէս կը համեմատեն։

Պատանիները՝ պիտի կարդան, թէ հին ժամանակներուն՝ հացն ու զգեստն ինչպէս կը մշակէին, և ինչ-

պէս կը պատրաստէին. Թէ հին ժամանակներուն տներն ինչ ձեւով կը շինէին, և ինչ նկատէին. պիտի կարդայ նաև Թէ այժմու ժամանակին օտար երկիրներուն օտար ժողովուրդներու կեանքն ինչպէս է, նոցա մէջ ու առաքինութիւնը կը գովուի, նոքա ինչ տեսակ զգեստ կը հագնին: Պիտի կարդան, Թէ կատարեալ երիտասարդներն ինչ քաջութիւն պիտի ունենան, ինչ տեսակ գործեր պիտի կատարեն. Թէ ու կարգի պատանիներն երեւելի արհեստաւոր կը լինին և ըմատուն. ու կարգի պատանիներն ուրախութիւն կը պատճառեն իրենց ծնողաց: Պիտի կարդան, Թէ մարդս ընդհանրապէս ինչ պիտոյք ունի. և այն պիտոյքներն ինչպէս կը պատրաստուին. Թէ կերակուրն ինչու համար է, հագուստն ինչու համար է. Թէ տեսակ-տեսակ կերակուրներն ինչու համար են, տեսակ-տեսակ զգեստներն ինչու համար: Պիտի կարդան, Թէ մեր հայրենիքում քանի՛ տեսակ կերակուրի նկատեր կան. քանի՛ տեսակ բանջարեղէն, խաւարտեղէն, մրգեղէն, կաթնեղէն, մսեղէն. Թէ այս կերակուրներուն նկատելէն ու տեսակն աւելի չատ է մեր հայրենիքում, և ու տեսակը քիչ. Թէ մեր հայրենիքի բերքերն ինչու աւելի չատ են. Թէ մեր երկիրն ինչու այս ինչ տեսակ պատուղներ չբերեր: Թէ մեր երկրում կամ հայրենիքումն քանի՛ անգամ և ինչ սաստիկ սով եղած է. և Թէ ու երկիրներում սով չլիներ. սովն ինչէ՞ն յառաջ կը գայ. և Թէ սովին առաջն ինչպէս կը փակուի:

Պատանիներու ուսանելիքը՝ որոշ գծով չափել չլիներ. նոքա պիտի ուսանին գլխաւորաբար, հայրենիքում ընդհանուր եղած լեզուն, ազգային լեզուն, այնչափ մնայն, որ կարողանան կարդացածնին հասկանալ, և խօսելիքնին գրել: Համրանք պիտի սորվին չորս գործողութիւններով և պիտի հանճարեղանան նորա խառն խնդիրները պարզելով: Աղօթք պիտի սորվին ջերմեռանդութեամբ, և առաքինութեանց օրինակներ ու

խրատներ՝ սուրբ աւետարանի պատուէրներէն, օրինակներէն, առակներէն. և պիտի սորվին նոյն իսկ քրիստոնէութեան հիմքն Աստուածաշունչէն և ընթերցարանէն: Պիտի սորվին հանճար, այսինքն հասկանալ խօսքի զարդուածները, հետևութիւնները, պատճառները, նմանութեանց համեմատութիւնները, և հակառակներուն անհամեմատութիւնը:

Այս սկզբնական ուսմանց հետ պիտի սորվին նաև արհեստներու սկզբունքներ. և նոյն իսկ կարևոր արհեստներ. ուսման աշխատութիւնը՝ պիտի լինի արհեստի գործին զբօսանքը. նոյնպէս արհեստը՝ պիտի լինի ուսման զբօսանքը: Պատանիներու սորվելու արհեստը պիտի լինի ընդհանրապէս հայրենեաց բերքերուն վերաբերեալ արհեստներ.—երկրագործական, պատրաստական, մետաղագործական, և երկրին մէջ սովորական եղած ուրիշ ընդհանուր արհեստներ. նա մանաւանդ ամեն մի պատանի սորվելու է իւր հօր արհեստը, և մօր տնտեսութիւնը, իրենց տան մէջ:

Պատանիներուն հարկաւոր եղած այս ուսումն՝ եթէ ծնողք իրենք աւանդելու ձեռնհաս և բաւական լինին, յուսացուած արդիւնքը կիսէն աւելի անվրէպ է և ակնառնելի. իսկ եթէ իրենք բաւական չեն աւանդելու, և ուրիշի պիտի յանձնեն, այն ժամանակ ծնողքն ուրիշ պատասխանատուութիւն ունին կատարելու, որպէս զի յոյս ունենան իրենց նպատակին հասնելու: Ծնողաց այս պատասխանատուութիւնն է.—գտնել այնպիսի մի ուսուցիչ, որ մեւնոյն ծնողական գգուանքն ու հայեցուածքն ունենայ պատանիին վերայ. և մեւնոյն ակնկալութեանց կանխահոգ խրատներն ու օրինակները մատակարարէ նորա մտքին և զգայարաններուն: Եթէ պատահած ուսուցիչն այս խնամքն ու խրատը՝ ծնողական սրտի բաղձանքին ճանապարհվը չպարունակէ, իսկոյն կը փոխուի պատանին. և Թողած այնուհետև ծնողասիրութիւնն, կը հետևի մի ուրիշ ճանապարհի, որ առանց

ծնողաց խնամոցն իրեն աւելի դիւրին կերևի. եթէ այս ընթացքին մէջ մեանգամ մ'իայն գթէ հոգեկան առաքինութեանց հակառակ որևէ անբան կրից հակամիտելով, կը մեծանայ այնուհետև այն պատանին՝ հեւանդ և կիսահոգի, և արդիւնք կարտադրէ մ'իայն անբան մարմին, և ոչ երբէք բանական հոգի: Այս սխալանքն է մ'իայն, որ շատ ծնողներու աչքէն արտասուք կը քամէ այսօր, և սրտերէն արիւն: Այգեպետը խնձոր կսպասէր, այգեպանը դառնիլ հասուց:

Ժողովրդական ուսումնարաններն իրենց պարտականութիւնն արդարութեամբ պիտի կատարեն, եթէ հետևեն մ'իևնոյն ժամանակ աշակերտաց զբօսանքն իրենց ծնողաց արհեստին վերաբերեալ գործերու փոխակերպել: Գիւղական աշակերտներն՝ եթէ ուսումնարանի պարտիզումն օրական զբաղմունք ունենան իբրև զբօսանք՝ շատ աւելի առողջ և կայտառ պիտի աճեն, քան թէ այժմու ձևով մ'իայն մի քանի տառ կարդալով, և արհեստական կամ արդիւնական որ և է գործ չուենենալով: Ուսանող պատանիները եթէ օրական չորս ժամ աշխատեն ուսում սորվելով, և չորս ժամ աշխատեն մարդկային պիտոյից անտեսական զբաղմունքով, թէ պիտի ժրանան մարմնական անդամներով և վարժուին պիտանի և արդիւնական գործերում, և թէ պիտի սորվեն անձանձրոյթ հարկաւոր եղածին չափ կարդալ, գրել, հաշուել, հասկանալ, հասկացնել, ուղիղ խորհել, ուղիղ խօսել և պիտանի գործել: Բայց այժմու դպրոցներում՝ այս հարկաւոր գործնական պարապմանց փոխանակ կարևորութիւն տրուած է տեսակ տեսակ մարմնամարզական ձևերու և շարժումներու, որոնք ապագայ երիտասարդութեան կեանքում ոչ մի բանի պէտք պիտի չգան: Մինչդեռ եթէ գործեն մի որ և է արհեստական զբաղմունքի մէջ, այն ժամանակ թէ մարմնամարզական շարժումները կը կատարուին, և թէ պատանիները կը վարժուին մի կարևոր արուեստի գործ-

ծերում, որը թերևս շատ օգտակար պիտի լինի նոցա կեանքումն: Ծնողք պարտական են ուսումնարանի այս թերութիւնն իրենք չեցնել տան մէջ՝ զբաղեցնելով պատանիներին նոյնպիսի գործերում:

Ծնողք պարտական են կանխաւ որոշել իրենց նըպատակն իրենց որդւոց ապագայի մասին, թէ նոքա ինչ տեսակ գործով պիտի ապրեն աշխարհում: Ամեն մի քաղաք և գիւղ՝ երկրի բերքերուն նկատմամբ այս ինչ կամ այն ինչ գործով կամ արհեստով կը պարապեն ընդհանրապէս. թէ քաղաքացի և թէ գիւղացի ժողովուրդն՝ հոգս պիտի անեն, որ իրենց որդիքն՝ ծնողական ուսումնարանի ընթացքն աւարտելու տարիքներումն վարժուին և այն արուեստի սկզբունքներում և գործերումն՝ որ իրենց մէջ ընդհանուր է. զորօրինակ երկրագործութեամբ պարապող գիւղացին՝ պիտի հոգս անէ որ իրենց որդիքն ուսումնարանումն զբօսանքի ժամերումն պարապեն պարտիզպանական մշակութեամբ. և ուսման տարիներումն հմտանան՝ գետինը պարարտացնելու գործին, նոյնպէս փորձեն շատ անգամ, թէ ո'ր տեսակ սերմանիքը՝ աւելի լաւ ցանելով կը բուսնին, և ո'ր տեսակները՝ չեն բուսնիր լաւ ցանելով: Թող սորվին փորը մանուկները՝ թէ ինչո'ւ երկրագործը նախ կը հերկէ գետինը, ապա կը վարէ, և ապա կը ցանէ. և թէ ինչո'ւ ուրիշ մի երկրագործ մի անգամ միայն կը վարէ և ապա կը ցանէ. Թող սորվին, թէ ցանած արտն ինչո'ւ համար կը տափանեն, և թէ ինչո'ւ ոմանք չեն տափաներ. Թող փորձով քննեն, թէ ո'ր սերմանիքն աւելի առատութեամբ կաճեն, և թէ ո'ր սերմանիքն աւելի նուազ և սակաւ կաճեն. և այս փորձերն կատարեն գիւղի պատանիներն իրենց ծնողաց սովորական սերմանացանութեան սերմերու գործումն. և եթէ միջոց լինի, Թող փորձեն նաև դրացի գաւառներու սերմերն՝ որ իրենց անդերումն չեն իրևիր: Այսպէս քաղաքացի աշակերտաց դպրոցներումն՝ Թող կրթուին նոյն իսկ

քաղաքում շատ սովորական եղած արուեստի սկզբունքներով, և մանը գործերով։

Աբհեստ սորվելու այս եղանակին այնքան բնական է որ շատ անգամ մանուկներն ինքնին կը յօրինեն այսպիսի խաղեր, և մի երկուքն եղի տեղ լծուած մին մինն իրրև մահկալ կը վարէ խարազանով, եթէ մանկական՝ այս ձկտումը՝ զպրոցական զբօսանքներում մշակուի, կորուսեալ ժամանակները կը վաստակուին. և մանուկներն այնուհետև միշտ կարող կը հանդիսանան իրենց ծնողաց սեպհական արհեստին մէջ օգտակար և յառաջադէմ լինելու։

Ամառնային արձակուրդները՝ սահմանուած են, որ աշակերտները մէջոց ունենան, և իրենց ծնողաց շատ գործերուն օգտակար լինին, և միևնոյն ժամանակ հետզհետէ իրենց հասակի աճելուն հետ կատարելագործուին. բայց այսօր բոլորովին հակառակ կերպով աշակերտներն այնքան սառն աչքով կը նային իրենց ծնողաց արհեստին, որ ծնողք հազիւ թէ կը հնազանդեցնեն նոցա՝ ջուր տանել անդը կամ կերակուր, կամ երթալ տեղեկութիւն բերել եղբայրներէն. նոքա երկրագործութիւնն ստորին դասակարգի մարդկան արհեստ կը համարին, և որպէս թէ իրենք ազնուացել են, ու չեն զիջանիր նուաստ արհեստին։ Մինչդեռ քահանայ ըլլալը՝ որ կեանք սորվեցնող է, կը սորվեցնէ, թէ Աստուած այն արհեստը՝ որ պիտանի է մարդուն ի նոցա. և ըստ այսմ երկրագործութիւնը կը լինի աստուածարուեստ, և ագռամանդ յեռուլը կամ շարիլը՝ կը լինի աստուածարուեստ պուչ։ Ուսումնարանը՝ պիտի չսխալի այսպէս. ուսումնարանի այս սխալն է որ պարապորտ և դատարկաշրջիկ երիտասարդներու մի խումբ ստուարացուցել է շատ ազգերու մէջ, որոնք միայն մեծամեծները բարևելու և նոցա մօտ քիչ շատ նստել ելլելու ոճը գետեն, և պարահանդէսներում մի քանի րոպէ կաքաւել գիտեն։ Այս կարգի ուսեալներէն ոմանք իրրև վաստաբան՝ ապարդիւն և անգործ

կը մնան հեզահամբոյր ժողովրդոց մէջ և կսպասեն մի խոշոր գատի, որ մի քանի րուբլի շահեն մի քանի րոպէ խօսելու կամ գրելու փոխարէն. նոյնպէս ոմանք իրրև բժիշկ՝ հիւանդաց հրաւէրի կսպասեն, որ իրենց ապրուստ լինի։ (Արդարև՝ թէ բժիշկը, և թէ վաստաբանը՝ պիտանի պաշտօնեաներ են. բայց թէ հիւանդութիւնը և թէ կռիւը՝ բնաւ ցանկալի խնդիրներ չեն։ Ուրեմն բժիշկը պիտանի պիտի լինի եթէ առողջութիւնը պահէ, և վաստաբանը պիտանի պիտի լինի, եթէ հաշտութիւնը պահէ. բայց դժբախտաբար մեր բժիշկները շատ անգամ հիւանդի հրաւէրի կսպասեն, և վաստաբաններն անգադար կռիւներու։ Եթէ մեր բժիշկներն՝ իրենց մանկութեան օրերումն—մինչև տասնեւութ տարեկան հասակնին՝ ուրիշ մի որևէ Ճարտարութիւն ևս սորվէին, որ կարելի լինէը իրենց հիւանդի չհրաւիրուած ժամանակնին՝ զբաղել և գատարկ չանցունել, նոքա խնայած երեւելի բժիշկները պիտի հանդիսանային, և հիւանդութիւնն իրենց բնակութեան երկրէն պիտի հալածէին՝ առողջապահութեան ուժգին զգուշանալով։ Նոյնպէս և վաստաբանները պիտի անէին՝ հաշտարար լինելով միայն և ոչ գատաստանի պաշտօն ստանձնելով։ Միևնոյն գատի մէջ անկրաւ կողմն էլ մի վաստաբան կանգնած է, իրաւացի կողմն էլ։ Եթէ վաստաբանն իրաւունք հաստատող միայն լինէը, անկրաւի կողմը փաստաբան պիտի չկանգնէը. քանի ախտոտալի է մարդկութիւնը, երբ շատ անգամ կը տեսնենք, որ իրանց տէրը փաստաբան չունի՝ և անկրաւ կողմէն վարձուած վաստաբանը՝ կաշխատի անկրաւ հանել իւր գիմացի գատաստանին, վստահելով միայն, թէ նա թէև իրաւունք ունի, բայց օրինաց բուն վճռող յօդուածները բացատութիւններէն չեն կարող զանազանել։ Այս փորձերը կը համոզեն, որ վաստաբանն էլ շատ անգամ շահելու նպատակաւ միայն կը խօսի։—Ինչու։—Վասնզի ուրիշ տեսակ Ճարտարութիւն չունի, որով իւր ապրուստը

դիւրացնէ. և դատաստաններուն մէյն Ճշմարտութիւնը պաշտպանէ)։ Այս սխալ կեանքը՝ դպրոցներուն՝ մինչ-այն բանաւոր պարապմունքներու կարևորութիւն տալէն յառաջ եկած է։

Որպէս զի այս սխալ հետևանքէն ազատ յառաջանայ մատաղ սերունդը՝ պէտք է դպրոցի ու ըստ օրէնքին ծրագիրը՝ աղջախոհական ունել։

Ժ. ՈՂՋԱԽՈՀԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ.

Կատարեալ մարդու Ճիշտ գաղափարը կը տեսնենք մանկան վերայ, որ թէ հոգեկան կարողութեամբ, և թէ մարմնական ուժով և կազմուածքով հաւասարապէս կաճի անընդհատ։ Ինչպէս որ մանուկը իւր խելահասութեան առաջին վայրկենէն կսկսի ամեն տեսածը և լսածը սորվելու և վարժելու ձգտել, այնպէս էլ ամեն մարդ՝ երբ մինանգամ ըմբռնէ, թէ ինչ է մարդու կենսական (հոգեկան և մարմնական) պիտոյքը, կը ձգտի այն ամեն պիտոյքին ձեռնհաս լինել։ Մարդ՝ իւր ամեն տեսակ պիտոյքին լինքնին ձեռնհաս կը լինի բնական պարզ կենաց ձևին մէջ. բայց այժմու բաղադրեալ ձևին մէջ՝ անկարելի է որ մէկը կարողանայ իւր ամեն պիտոյքին լինքնին ձեռնհաս լինել. այս բաղադրեալ ձևին մէջ անհրաժեշտ է ընկերականութեան փոխադարձ առնւտուրը, որով միայն կարելի է որ ամեն ոք իրենց պիտոյքն անկարօտութեամբ վայելէ։

Այն ուսումնարանը՝ յորում 12—15 տարեկան պատանիները պիտի ուսանին՝ այնպիսի մի ծրագիր պիտի ունենայ, յորում թէ ընկերական փոխադարձ յարաբերութեան օրէնքն աւանդուի պարզութեամբ, և թէ պարզ կենաց օրէնքը. պարզ կենաց օրէնքն է ամեն մարդու իւր պիտոյից լինքնին ձեռնհաս

լինելը։ Այս կարգի ուսումնարանները ունենալու են այս ծրագիրն, ըստ որում 12—15 տարեկան հասակում դեռ կը վառուի այն մանկական ձկտումը որ և ամեն բանի սորվել կուզէ և ամեն բանի վարժուել։ Մանկական այս ձգտումը՝ որ մանկանց ընդհանուր խոնարհութիւնն է, միևնոյն ժամանակ նոցա հասնելու ամենավերին բարձրութեան տանող սանդուխքն է, որոյ առաջին ոտքը խիստ խոնարհ է, և ուր անմիջապէս կը բարձրանան մանուկները. իսկ եթէ այս խոնարհութեան պատեհ ժամն մի անգամ անցնի՝ առանց այն առաջին աստիճանը բարձրանալու, նոցա աչքէն կանհետի այլ ևս այն աստիճանը, և երկրորդ աստիճանը մէկէն ի մէկ չեն կարող բարձրանալ. այսպէս նրչափ որ ուշանայ, այնչափ ևս կը դժուարանայ։ Վասնորոյ և այս անդառնալի ժամանակն երբէք կորսնցնելու չէ. այլ իւր ժամանակին պատշաճապէս վարժեցնելու է մանուկները պարզ կենաց ամենատեսակ պիտոյքներու աշխատութեան։

Պարզ կենաց պիտոյքներն են.

ա. Ուտելիք—բանջարեղէն, ընդեղէն, մրգեղէն, կաթնեղէն, և մսեղէն ունենալ, և ուտելու յարմարցնել։

բ. Հագնելիք—բանբակեղէն, կտաւեղէն, բրդեղէն և մորթեղէն ունենալ, և հագնելու պատրաստել։

գ. Բնակարան—հիւղ, խրճիթ, վրան, տուն ունենալ՝ շինելը գիտնալ, բնակութեան պատշաճեցնել։

դ. Այս երեք տեսակ պիտոյից զրկելքները շինել։

ե. Խորհել, լսել, սորվել, սորվեցնել, և ընկերանալ։

Պարզ կենաց այս հինգ գլխաւոր պիտոյքներն ամենքն էլ ամեն մարդու անհրաժեշտ են. որոց առաջին չորսը ձեռքի գործով կը լինի, որոյ ծանրութեան և դժուարութեան խիստ մեծագոյն մասն Աստուծոյ նախախնամական օրէնքովը բնութեան մէջ լինքնաբոյս և լինքնաբեր կաճեն. մարդուն կը մնայ միայն ցանել, տնկել և քաղել. արածել՝ խուզել և կթել. կտրել, կա-

սել, հովանի անել. հանել, հալել, ձուլել և կռանել: Իսկ հինգերորդ մասն՝ հոգեկան կարողութեան գործ են. և որ կը լինի ընկերութեան հոգեկան սիրոյն անընդհատ, լեզուահատութեան առաջին վայրկենէն սկսած մինչև ի մահ, կատարելագործելով առողջ խորհրդոց մէջ, առողջ դատողութեան մէջ, առողջ խոսակցութեան մէջ, և առողջ ուսուցչութեան մէջ, բարւոյ և չարի ճիշդ ընտրութեան մէջ, չարէն հեռի ի բարիս յաճախելու կատարելութեան մէջ, յորում միայն ամբողջ կը լինի, և կը լրանայ մարդկային ընկերութեան նպատակը:

Եթէ մէկին ունի հոգեկան կատարելութիւնները, և չունի գործ ու դատարկ է բոլորովին աշխարհի գործերէն, այնպիսին՝ կամ քառասնօրեայ ծոմապահութեան և անապատի բնակութեան և կամ Աստուծոյ խոսքով միայն ապրելու շնորհացն արժանի պիտի լինի, որ կարողանայ ողջախոհութիւնը կատարեալ և ամբողջ պահել. ապա թէ ոչ նա չէ կարող լինել ողջախոհ: Ջըրկանքը՝ որքան ևս փոքր լինի, կը ջնջէ բոլորովին զբօսողին ունեցած ողջախոհութիւնը. ըլնաս ասելով պիտի չհասկանանք միայն գողութեան պէս գործերն, այլ նոյն իսկ ինքնահաւանութիւնը՝ որով կամբարհաւանի մէկին՝ իւր ձեռքի մի օրեայ գործն՝ ուրիշին՝ երկու կամ երեք օրեայ ձեռագործին փոխանակել: Օրինակով մը պարզենք այսպիսի մի գրկանք. Փերեզակը՝ հինգ վայրկեան ժամանակի մէջ կը գնէ մի բուրլի ասեղ և մատանի հասարակ թելից. որոց իւրաքանչիւր տասներկու հատ ծրարին կը վճարէ մի մի կոպէկ գին. և կուներկայ իւր ձեռքումն 600 ասեղ և 600 մատանի. կը փոխանակէ սոցա ամեն մի հատը մի մի կոպէկի: Այս դէպքին մէջ մի ժամ միայն ի՛աշխատել փերեզակ՝ երկու խոսք խոսելով, գրպանէն մի բուրլի հանելով, և հազար կանգնաչափ Ճանապարհ քալելով. և մի ժամու մէջ կատարած այս անարժէք աշխատութիւնը կը փոխանակէ տասն և մէկ բուրլի, մինչ դեռ այն տասն

և մէկ բուրլին՝ ամբողջ ամսական աշխատութեան վարձ է այն գնողին: Ահատասիկ մէկ զրկանք՝ որոյ մէջ բնաւ չկայ հոգեկան ողջախոհութիւն. և որոյ հետևանքն է, որ փերեզակը ի՛տպրի հիւանդ, և իւր գանձին վերայ գլուխն ու սիրտը դրած, կը մեռնի քաղցած, իսկ այն զրկուած աղքատը, որ հոգւոյ հանճարէն զուրկ լինելուն համար միայն ինքնին զրկուեցաւ, կը տագնապի իւր կենաց մի ամիս ժամանակումն: Ա՛յս է Աստուծոյ արդարութիւնը, որ զրկողը քաղցած մնայ և տագնապի, և անհանճար զրկուողը՝ տուժէ մարմնով, երկու կողմն էլ ա՛ղ ողջախոհութեան ցաւ է, որ անշուշտ ի մահ կը տանի, կամ մահահրաւէր է մարդուն:

Որպէս դի մարդ՝ իւր վերայ այս տեսակ տարաժամ մահ կամ մահառիթ ցաւ չհրաւիրէ, անհրաժեշտ է ողջախոհ լինել: Որպէս դի մարդ ողջախոհ լինի և կատարեալ ողջախոհ, անհրաժեշտ է անկարօտ լինել: Որպէս դի մարդ՝ անկարօտ լինի, անհրաժեշտ է մարդկային պիտոյքների պատրաստութեան գործերուն ձեռնհաս լինել, և իրրև բանական՝ հանճարեղ լինել: Հանճարն ա՛ չեռնհասութիւնն է՝ որոյ միութիւնն է կատարեալ բանաւորութիւն՝ մահէն և մահաբերներէն կազատէ իւր անձը և ընկերին անձը, և ընտանիքին անձը, և ամբողջ ժողովրդեան անձը: Հանճարն ա՛ չեռնհասութիւնն երբ էլ միանայ, ողջախոհութեան ներքո է նոյա արտադրած ինդրոյը:

Այսչափ խելամտութիւններէն կը հետևի, թէ ուսումնարանի ծրագիրը պիտի ունենայ իւր սկզբան կէտը՝ մարդկային ողջախոհութիւն, և նպատակը՝ գործեալ մարդկային ողջախոհութիւն. որոյ մէջ գծելիք ուղիղ Ճանապարհը՝ շատ կարճ է, և դիւրագնաց: Խոսքերնիս ընդհանուր ժողովրդոց պարզ կեանքին նկատմամբ միայն է: Մեծամասնութեանց բարձրագոյն ուսումնարաններն՝ որ առանձին արհեստներու նորանոր կատարելութեանց կը հետևեն հասուցանել՝ նոքա առանձին ծրագիր ունին:

Վասնորոյ և ժողովրդական ուսումնարանները օրական ծրագիրը պիտի լինի, մարդուն բնական շարժմանցն համեմատ։ Այս բնական շարժումն այսպէս կը բաժանուի աւուր 24 ժամերուման. աւուր ութ ժամը կը տրուի պիտոյից պատրաստութեան, որ բուն վոտք ա-նուն կրող գործին մէջողն է. մեւնոյն աւուր միւս ութ ժամը կը տրուի ընկերականութեան, որ բուն իսկ հոգեկան կարողութեանց աճելուն ժամանակամիջոց է. և գոր կանուանին զբօսանք. և միւս ութ ժամը կը տրուի գիշերային քնոյ՝ որ բուն իսկ ջղային յոգնութեան հանգստանալու ժամն է։ Այս՝ այսպէս բաժանմունքով վեց օրեր անցնելէ ետքն յաջորդող եօթներորդ աւուր թէ վաստակի ութ ժամերն և թէ զբօսանքի ութ ժամերն միանգամայն կը տրուին ընկերականութեան, որով և միջոց կունենայ մարդ մի եօթներորդ անգամ աւելի աճել հոգեկան կարողութեանց գործունէութեան մէջ։ Ըստ այսմ և ժողովրդական ուսումնարանների օրական ծրագիրը պիտի լինի՝ [illegible] և քանոյութեամբ. և [illegible] պարտականութեան. այնպիսի պարտականութեան, որմէ մարդկային պիտոյիներն արդիւնաւորին։ Ուսումնարանի այս ծրագրին պիտի հետեւի նաև տան կեանքը, որում զբօսանաց կոչուած ութ ժամերուն [illegible] պիտի արուին օգտակար պարտականութեան։

Եթէ մանուկները լրենց 12—15 տարեկան հասակի կայտառութիւնն այս վարժութեամբ անցունեն, նոքա այնպէս աշխուժիւ կը մեծանան, որ ոչ երբէք կը ճանճրանան գործէ, և ոչ երբէք կարհամարհեն օրևիցէ պիտանի գործ։

Անձնական պիտոյից ապահովութիւնն ու հարստութեան առատութիւնն՝ արդիւնք են միայն քնական գործերու, և թեթև՝ գործերու. թեթև գործեր, որ միևնոյն ժամանակին առողջութիւնն ևս ամրողջ կը պահեն. որով ողջախոհութիւնն անեղծ կը պահպանեն ըստ ամենայնի։ Երկրագործը մի անգամ միայն մի ծառ

կը տնկէ, և հարիւրաւոր տարինեը նոցա պտուղը կը քաղէ։ Երկրագործին մէկ ամառան մէջոցին հասուցած բամբակն ու կտաւը տասնեակ տարիներու հագուստի կը բաւէ։ Կենդանաբոյծին՝ միևնոյն մի տարուայ արդիւնքն՝ արդէն իսկ լիութիւն է ամբողջ, և միւս տարին կրկնապատկին յառաջ կը գայ։ Այսպէս է աշխարհի պետանի հարստութիւնը, որոց և ոչ մէկին աշխատութիւնը դառն կամ անկարելի չէ մարդուն, այլ առողջարար և զբօսացուցիչ մի[illegible]. բայց ծոյլ անձինք, որ լրենց 12—15 տարեկան հասակնեերումն կսկսին պղերգանալ, արդէն հիւանդ են նոքա առանց մահիճի, նոցա մահն ասլաժաման է, և քրտինքը՝ չունչ կտրող։ Ուսումնարանի այս ծրագրի գործադրութեան հետ մէկտեղ՝ կատարեալ ուշադրութիւն պետի դարձնուի ուսուցիչն՝ աշակերտաց ներքին կեանքին— հոգեկան կեանքին. այս ուշադրութեամբ պետի զգուշանայ ուսուցիչը, որ աշակերտաց թէ սրտում և թէ մրտքումն անընդհատ և միատեսակ աճի չարունակ ողջախոհութիւն՝ նոցա հասակի աճելութեան չափով։

Ողջախոհութիւնն անընդհատ և չարունակ աճեցնելու օրէնքը՝ կատարի [illegible]*. որոյ առաջին պայմանն է, կարատել աշակերտին, թէ ինչ է խռովկոտութիւնը, ինչ է հեղութիւնը, ինչ է եղբայրսիրութիւնը, ինչ է արիութիւնը և ծրութիւնը, ինչ է ատոտոտութիւնն ու ատոտ ուշը, ինչ է չափաւորութիւն նմ ոսիստոտելեսեան, և թէ ինչ է պարկեշտութիւն կամ նուաստութիւն անձնեղութիւնը։ Իսկ երկրորդ պայմանն՝ է յանդիմանել այն ամեն մոլի կիրքերն՝ որոնք վերոյշեալ ողջախոհական եօթն առաքինութեանց հակառակըն են. յանդիմանել այս մոլութեանց ամեն մինը՝ հայելւի մէջ պատկերացնելու կերպով՝ երբ առաջին անգամ նոցա մէկին կամ միւսին նշանը կերեւի մի որ-

*) Դատոիարակութիւն բառը՝ Պարսից լեզուի [illegible]—ձեռնարկի աբհատատուր բառէն ելած է։

Լինչէ աչակերտի դէմքին վերայ կամ խօսքին ու շարժուածքին մէջ։ Յանդիմանել աչակերտին վերայ առաջին անգամ երևեցած հպարտութեան նշանը, պարզապէս ցուցնելով, թէ հպարտութեան վախճանն ուր կը տանի մարդուն, ինչպէս կը զրկէ ընկերականութեան հոգեկան զուարճութիւններէն։ Յանդիմանել նոյնպէս առաջին անգամ յայտնուած նախանձու նշանը՝ թէ նախանձող մարդուն վախճանն ինչ է, թէ որչափ չեռաղմ կը մնայ նախանձողը ամեն բարութեննէ։ Յանդիմանել նոյնպէս առաջին անգամ յայտնուած բարկութեան նշանը, թէ բարկութիւնը արգիլի գազանութեան կը տանի կը հասցնէ։ Յանդիմանելու է նոյնպէս առաջին անգամ յայտնուած ծուլութեան նշանը, թէ ծուլութիւնը՝ արգիլի հիւանդութեան և կարօտութեանց կը հասցնէ, և թէ քանի բիւր վայելքներէ կը զրկէ։ Յանդիմանելու է նոյնպէս առաջին անգամ երևեցած ագահութեանց նշանը, թէ քանի չարաչար կը տանի մարդուն սիրտն ու միտքը միանգամայն. և թէ պահուած ապրանքներն ինչպէս կը վճանան՝ երբ պիտանի դէպքերում չգործածուին։ Յանդիմանելու է նոյնպէս առաջին անգամ երևեցած որկրամոլութեան նշանը, թէ քանի վնասակար է նեղքին գործարաններուն, և թէ քանի քանի չարիք և կարօտութիւն և քաղց միանգամայն ընկերացած են որկրամոլութեան։ Յանդիմանելու է նոյնպէս առաջին անգամ երևեցած անպարկեշտութեան նշանը, թէ պոռնկութիւնն ու նորա խորհուրդը մինչև անգամ քանի ազգութեանց և զազիր ախտերու կենթարկէ. և թէ քրիստոնէութեան բուն իսկ պահանջած սրբութեանը՝ որքան հակառակ է, որքան կը նուազեցնէ մարդկային սեռի աճելութիւնը, մարդու կանխագոյն ծագումէն սկսելով իւր խանգարմունքն. և թէ քանի կռիւներու և չարեաց պատճառ է։ Այս եօթն մոլութեանց հետևանքն եղող չարիքներն յանդիմանելու միջոցին՝ անմիջապէս ցոյց

տալու է և հակադարձ առաքինութեան հետևանքն եղող բարիքը։

Այս երկու պայմաններու ճիշդ պահպանութեամբ միայն կարելի է զգուշանալ ուսումնարանի պատանիներու ընկերակցութեան ողջախոհութեանը։ Եթէ ոչ արդէն իսկ այն չարիքէն կսկսին մարմնական մոլութեանց զգալատել. և մինչեայն խորհրդակցութեամբ և լոկ խօսքերով՝ շատ անմեղ պատանիները՝ բղջախոհութեան ճիւրաններում կը բռնուին, և կը քամուին, կը դալկանան, և տարաժամ մահու չարատանջ հիւանդութիւններէն չեն կարող փախչիլ։ Ականջ կախողը՝ թող լսէ։ «Այս վտքը մանուկներէն մէկուն՝ եթէ մէկը գայթակղեցնէ՝ նորա պատասխանատուութիւնը՝ շատ ծանր է հանդերձեալ դատաստանում»։ (Գայթակղեցնել՝ ըստ բուն իմաստին կը նշանակէ՝ Աստուծոյ պահանջած ողջախոհութեան—խոնարհութեան, հեզութեան, եղբայրսիրութեան, առատութեան, չափաւորութեան և պարկեշտութեան ճանապարհէն խոտորելու օրինակ տալ մանուկներուն, որոնք ի բնէ ողջախոհ են, և ողջախոհութեամբ կաճեն մինչև արբունքը)։

Դարձեալ կասեմք, թէ ծնողք՝ կարող են երաշխաւորել կամ յոյս ունենալ իրենց որդւոց ողջախոհութեանը, եթէ կարողանան այնպէս զգուշանալ, որ իրենց պատանի զաւակները մինչև տասնևհինգ տարեկան հասակի լցուելը՝ դատարկ կամ անգործ ժամանակ չանցունեն, և զբօսանքի ժամերումն պարկեշտ և առաքինական խօսակցութեամբ ու խորհրդով ընկերանան ուրիշներու հետ, և միջոց ու առիթ չունենան կեղտոտ բերան և մոլեխորհուրդ մարդկանց ընկերանալու։ Ծնողք պարտական են հսկել իրենց որդւոց այս զգուշութեամբ՝ մինչև լսկ ուսումնարանի մէջ անցունելու ժամանակները։ Ապա թէ ոչ արդէն իսկ վտանգի գահավէժին հասած կը տեսնեն իրենց որդւոյն. այն գահավէժին, ուստի ելոտ քիչերը կարող են ապրեցնել իրենց որդւոյն։

ԺԱ. ԹԷ ԸՆԿԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԶԱՓԱՀԱՍՆԵՐՆ ԱՌՀԱՍԱՐԱԿ Ի՛ՆԶՊԻՍԻ ՕՐԻՆԱԿ ՊԻՏԻ ԼԻՆԻՆ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ.

Ասացինք, թէ ողջախոհութիւնը՝ հոգեկան առաքինութեանց լրական ամբողջութիւնն է. և թէ ողջախոհ է այն անձը՝ որոյ բոլոր գործոց մէջ կը փայլին հոգեկան առաքինութիւնները։ Այս հոգեկան առաքինութեանց գործերում կը կրթուին մարդիկ՝ տան մէջ ծնողաց օրինակէն և խրատէն, ուսումնարանումն ուսուցչի օրինակէն և խրատէն, ընկերաց օրինակէն և խօսքերէն. և առհասարակ ընկերականութեան մէջ՝ ամեն կարգի չափահասներու և մեծերու օրինակէն և խրատէն։ Ինչպէս առաքինական գործերում՝ նոյնպէս և մոլեկան գործերում կը վարժուին մարդիկ՝ իրեցմէ մեծերուն վերայ տեսած վատ օրինակներէն և նոցա բերնէն լսած անտեղի և չար խօսակցութիւններէն. այս վատ օրինակը ոմանք կառնուն տան մէջ, ոմանք ուսումնարանում, և ոմանք առհասարակ արտաքին ընկերական շրջաններում։

Ծնողք իրենց մանուկներուն ողջախոհութեանը կարող են զգուշանալ. տան մէջ՝ ուղղակի իրենց հոգեկն թելադրուած խրատներով, նոյնպէս կարող են զգուշանալ պատանիներուն՝ նաև ուսումնարանում այնպիսի ուսուցիչ ընտրելով, որ հոգեկան կատարելութիւնն անթերի ունենայ. այս ընտանի և դպրոցական զգուշութիւններն որչափ էլ որ ճշտութեամբ պահպանուին, տակաւին պատանիներու ողջախոհութիւնն ապահովուած չէ։ Այս երկու յաջորդական և նախկին զգուշութիւններէն ետքը՝ երրորդ զգուշութիւն մի ևս կայ, զոր պիտի զգուշանան բովանդակ մի ժողովրդի բոլոր չափահասներն ու կատարեալ մարդիկը։ Այս զգուշութիւնը կը դիւրանայ, եթէ մի օրինակ պարտականութիւն մի ճանաչեն իւրաքանչիւր անհատ իրենց անձին՝ և մեծ փութով ու անկեղծ սիրով այս պարտականութիւնն անթերի կատարելու յօժարին։ Այս պարտականութիւնը կանուանենք Ա֊հասարակ չափահասներու և մեծամեծներու օրէնք։

Մանուկները՝ մանկութեան տարիքներում, և պատանիները՝ պատանեկութեան տարիքներումն՝ շատ անգամ կը պատահին այլ և այլ չափահաս և մեծ մարդկանց ընկերութիւններում. և այս պատահմանց ամեն մի րոպէում մի օրինակ կամ մի որևիցէ խելամտութիւն կընդունին. այսպիսի օրինակը կամ խելամտութիւնը՝ միշտ ողջախոհական լինելու է, որ պատանիներու ողջախոհութիւնն ապահովուի։ Այս ապահովութիւնն ունենալու համար հարկ է, որ ամեն ոք չափահաս երիտասարդ և մեծ մարդ՝ իրենց հոգեկան թելադրութիւններէն պարտաւորուած ողջախոհական օրինակ տան, և ողջախոհական խօսքեր և խորհուրդներ արտաբերեն այն ամեն ընկերակցութեանց մէջ, ուր որ մի մանուկ կամ մի պատանի կարող է պատահել։ Եթէ ճշտիւ դիտենք քրիստոնէութեան բուն պարտականութիւնները, չափահասներու և մեծերու ընկերութիւններումն ամեն ժամանակ ևս ողջախոհական խորհուրդներ և խօսքեր պիտի յայտնուին, խօսուին, մինչև իսկ մանուկ կամ պատանի չպատահած ժամանակներում ևս. ըստ որում կատարեալ մարդը միշտ կատարեալ մարդու պէս պիտի խորհի, պիտի խօսի և պիտի գործէ։ Այս ընկերականութեան պարտականութիւնը ճիշդ կատարող մեծերն և չափահասներն ևս կատարեալ ուսուցիչ կը համարուին իրենցմէ փոքրներուն, եթէ միշտ ողջախոհական օրինակ տան և ողջախոհական խելամտութիւն հաղորդեն. և ընդ հակառակը՝ վատ ուսուցչի չարիքէն աւելի չարեաց պատճառ կը լինին, և խիստ շատերուն կը չարացնեն, եթէ այս ողջախոհութիւնը չպահպանեն։

Ընկերակցութեան մէջ պահուելիք կատարեալ ողջախոհութեան զգուշութիւնն ապահովուած կը լինի որ և է քրիստոնեայ ժողովրդի մէջ, եթէ նորա ծէսերը խոհեմ լինին, և այս պարտականութիւններն կատարելէ չթերանան։ Մերոց օրինակը կը տարածուի և նոցայ յետնորդ կատարեալ հայրերու վերայ. հայրերու օրինակն էլ կը տարածուի երիտասարդներուն վերայ։ Իսկ եթէ մի անգամ թերանայ մի ծէս, նորա այն թերութեան օրինակը կը տարածուի նաև երկու հայրերու վերայ. և որոց օրինակը կը տարածուի աւելի շատ թուով երիտասարդներու վերայ. և եթէ կրկնուին այսպիսի թերութիւններն, հետզհետէ օրինակ առնողներն ևս կը բազմապատկուին. և բազմապատիկ երիտասարդներու մոլեկան օրինակներն ու խելամտութիւնները կը տարածուին պատանիներու վերայ այնպէս արագ, որ շատ անգամ խափան կոչնչացնեն թէ ծնողական խրատները, և թէ ուսումնարանի կատարեալ դաստիարակութիւնը։

Մի ժողովուրդ՝ որ մի եկեղեցիում կը գումարուին երբեմն Աստուծոյ Ճանապարհը գնացող քրիստոնեաները, ամենքն էլ միապէս հայրեր և որդիներ են. ինչպէս որ մի տան մէջ ծնողք հոգեկան պարտականութիւն մի կզգան իրենց որդուց մինչ ողջախոհութեան օրինակ տալու, և այնպէս խրատելու, այնպէս էլ միևնոյն եկեղեցին, միապէս կը պատուիրէ ամեն հայրերուն՝ որ միապէս ողջախոհութիւն ազդեն ամեն վոքրներուն՝ երբեմն մի տան հայրեր՝ մի տան որդիներու։ Մեր եկեղեցին՝ այս ողջախոհութեան պարտականութիւնը կատարել կը պատուիրէ ամեն քրիստոնեայ մարդու, սուրբ աւետարանի հետևեալ խօսքերը կրկնելով ու սորվեցնելով. «Կատարեալ եղէք, ինչպէս որ Ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»։ «Ով որ մի բան աւրէ այս պատուիրաններէն (Աստուծոյ յայտնածներէն) վոքրիկներէն, և այսպէս սորվեցնէ ուրիշ մարդիկներուն, նա՝ վոքր ըսուի երկնքի թագաւորութեան մէջ։ Իսկ այս պատուիրանէն անողն ու սորվեցնողը՝ մեծ ըսուի երկնքի թագաւորութեան մէջ»։ «Ո՛ր մէկը որ այս վոքրիկներէն (մանուկներէն) ինձ հաւատացնողներէն մէկին գայթակղեցնէ, աւելի լաւ է նորան՝ թէ վզէն էշու երկան մի կախուի, և ծովի խորքումն ընկղմի»։

Առհասարակ մարդկան ընկերակցութեան մէջ մանուկներու և պատանիներու ողջախոհութեանն զգուշանալ կարելի կը լինի, եթէ միայն ունենան մեծերը՝ առաքինի մարդկանց առաքինական գործերը պատմելու և գովելու, իմաստուն առակները բացատրելու, կենաց ապահովութեան և ամեն տեսակ բարեգործութեանց աջողութեան ճանապարհները ցոյց տալու, արդարութեան և արիութեան և ամեն տեսակ բարեբար Ճարպիկութեան օրինակներ տալու, և յորդորներ ու քաջալերական խրատներ խօսելու։ Եւ եթէ երբէք պատահեն ձախող օրինակներ, նոցա պակասութիւնն ու վնասակարութիւնն յանդիմանելու պիտի հետևեն մեծերն առհասարակ։ Հպարտութեան, նախանձու, բարկութեան, ծուլութեան. ագահութեան, որկրամոլութեան և շնութեան ցոյցեր կամ խօսքեր ամենևին պիտի չներեն, և իրենց վերայ ցոյց պիտի չտան։ Պարկեշտութիւն կոչուած առաքինութիւնը պիտի փայլեցնեն իրենց վերայ թէ խորհուրդներում, թէ զրոյցներում, և թէ ամեն գործում և շարժուածքում։

Աչխարհիս ամեն ազգաց մէջ համեստ ընտանիքներում միատեսակ սովորութիւն է, որ մարմնոյ ամեն անդամներու գործողութեանց մասին կը խօսեն մանուկներու հետ, և կը սորվեցնեն նոցա, թէ ինչ է աչքին գործը, բերանին գործը, ձեռքին գործը, սրտին գործը ... Բայց ծննդական գործարաններու աճեցական գործողութեան մասին՝ խորհրդարանական լռութիւն մի կը պահեն. այնպէս որ գրեթէ ոչ մի ծնողք՝ իրենց որդուց չեն խօսիր այս մասին։ Այս լռութիւնը կը պահպանեն ամեն մեծերը՝ որ կատարեալ ողջախոհ

են՝ մինչև երիտասարդութեան կատարեալ արբունքն հասունանայ, և լցուի։ Այս խորհրդարանական լռութիւնը՝ որ ժողովրդի մէջ որ ճշտութեամբ պահուի, այն ժողովրդին մէջ երիտասարդները չեն մեռնիր (ե՛թէ ոչ՝ միայն անակնկալ պատահարներում). իսկ որ ժողովրդի մէջ որ այս խորհրդարանը բաց է և շատ կը գբօսցուի, նոցա մէջ հազիւ թէ մի կամ երկու ծեր մարդիկ կարելի է գտնել. նոցա գերեզմանատան արձանագրականները կը ցուցնեն, որ նոցա մեռելներուն մեծագոյն մասը երեսուն տարեկան հասակէն առաջ մեռած են. մանաւանդ թէ մանկութեան առաջին տարիներում մեռնողները.(վիճակագրական ցուցակներում չեն նշանակուիր, որ դարձեալ շատ կը պատահի արբունքէ յառաջ անպարկեշտացած ժողովուրդներում)։

Թէ պատմութիւնները, և թէ արդի կենդանի ժողովրդոց կենդանի օրինակները խելամուտ կանեն զմեզ, թէ պարկեշտութիւնը և ընդհանրապէս կատարեալ ողջախոհութիւնը՝ կը զօրանայ մարդկանց սրտումն ու մըտքումը ոչ այնչափ բնական պայմաններու տակ, որչափ որ բանական պայմաններու տակ կաճի և կը զօրանայ. կատարեալ ողջախոհութեան պահանջած պարկեշտութիւնը զօրացնելու այս բանական պայմանները՝ մարդկային ընկերականութեան բանական խորհուրդներէն, բանական խօսակցութիւններէն և բանական օրինակներէն ծագումն կառնուն և կը զօրանան ու կը պարարին։ Նոյնպէս և ընդ հակառակն եղող հոգեկան մոլութեանց ամենավնասակարը՝—մոլի շուայտութիւնը, անպարկեշտութիւնը կաճեն և կը զօրանան բանական պայմաններու տակ, այսինքն մարդկային ընկերականութեան մոլեկան խորհուրդներէն, մոլեկան խօսակցութիւններէն, և մոլեկան օրինակներէն ծագումն կառնուն, և արագ արագ ընդհանրանալով կը շաղախեն մինչև իսկ փոքր մանուկներին զանազան

ախտերու և հիւանդութեանց սկզբներուն մէջ։

Պարկեշտութիւնն ու միանգամայն ողջախոհութիւնն անվթար պահպանելու այս զգուշութիւնն անթերի կարող է պահպանել մարդկային ընկերութիւնը՝ աւելորդ կամ անօգուտ ու վնասակար խօսքէ և գործէ զգուշանալով միայն։ Այս նպատակաւ ևս երևելի լմատասէրները իրենց աշակերտներուն կը պատուիրեն «լռութիւն»։ Լռութիւն՝ ոչ թէ բնաւ չխօսել, այլ բարին և պիտանին սովորել։ Աւելորդ և անօգուտ խօսքեր խօսողը միայն կը հրաւիրուի «ի լռութիւն» ամենատեսակ ընկերութիւններուն, եթէ նոյն ընկերութեան անդամներուն մեծամասնութիւնը՝ կատարեալ բանականութեան հաղորդ են հոգւով։

Պարկեշտութեան զգուշանալու այս բանական պայմաններն աւելի պարզելու համար, մարդկային ընկերականութեան գլխաւոր կարգերը բաժանենք, իւրաքանչիւրին իրենց պատշաճ բանակցութիւնն ըստ կարի նշանակելով։ Մարդկային ընկերականութեան գլխաւոր բաժանմունքը.

ա. Մանուկներու ընկերութիւնը՝ պատանիներու հետ։

բ. Պատանիներու ընկերութիւնը՝ երիտասարդներու հետ։

գ. Երիտասարդներու և մանկամարդ օրիորդներու ընկերութիւնը՝ կանամբէ մարդկանց և արամբէ կանանց հետ։

դ. Արամբիներու և կանամբիներու ընկերութիւնը՝ ծնողաց հետ՝ որ արդէն իսկ զաւակներու հայրն և մայրն են։

ե. Հայրերու և մայրերու ընկերութիւնը՝ ծերերու և պառաւներու հետ։

Այս հինգ գլխաւոր կարգերէն առաջնոյն մէջ, այսինքն մանուկներու ընկերութեան մէջ՝ պատանիները կատարեալ հոգեկան հեզութիւն մի պիտի վայելեցնեն

իրենց վերայ, աննախանձաբար սորվեցնելով իրենց գիտցածը, ինչ որ մանուկները ցանկանան սովորել՝ թէ խօսքով, և թէ օրինակով։ Պատանիներու բովանդակ օրինակը պիտի լինի մանուկներու մէջ՝ խոնարհութիւն և հեզութիւն սորվեցնող պատկերները և արարմունք։ Պատանիներուն այս զգուշութիւնը պիտի թելադրուի ծնողաց և ուսուցչի յատուկ հրահանգէն և խրատէն։ Պատանիները՝ մանուկներուն պիտի տան նաև արհեստի օրինակ, վերցնելու, դնելու, արագելու և վուրթացնելու։

Մանուկներու ընկերութեան մէջ եթէ պատահին երիտասարդները, օրիորդները, արամբի կանայք, և կանամբի մարդիկ, հայրերը, մայրերը, ծերերը և պառաւները, սոքա ամենքն էլ պիտի փոքրանան և պատանեկանան ոգով, այսինքն խոնարհութեամբ և հեզութեամբ պիտի վարուեն նոցա հետ, նոցա խելամտութիւնը քննելով մանը մանը հարցասիրութիւններով և կարևոր պատասխանները մանը մանը սորվեցնելով, և այս՝ առանց ձանձրանալու, մինչ գանալով սիրելի անել մանուկին ամբողջ խօսք, և ամբողջ գործ։ Մանուկներու ընկերութեան մէջ՝ թէ պատանիներու և թէ առհասարակ մեծերու մինչև իսկ ծերերու տուած օրինակները ու խրատները պիտի լինին կատարեալ խոնարհութեան և հեզութեան ցոյցերով ու ներողամտութեամբ։ Պատանիները միայն պիտի սկսեն և արհութեան օրինակ տալ։ Այս ընկերութեան մէջ՝ մեծերն (երիտասարդէն մինչև ծերը, օրիորդէն մինչև պառաւը) բարկութեան ցոյց կամ զրոյց ամենևին պիտի չանեն։ Մանուկներու ընկերութեան մէջ յայտնուած ամեն մի մոլեկան կիրք և ցոյց և զրոյց՝ աննկերելի է ողջախոհ մարդիկներուն, որոնց միայն մի սխալանքը չարաչար վտանգներ և մահեր կաճեցնէ մանուկներու սրտերուն ու մտքերուն։

Երկրորդ կարգի՝ այսինքն պատանիներուն՝ իրենցմէ մեծ երիտասարդներու ընկերութեան մէջ՝ երիտասարդները նոյնպէս կատարեալ խոնարհութիւն, հեզութիւն

և արհութիւն պիտի ցուցնեն իրենց ամեն խօսքին և շարժմունքներուն մէջ։ Երիտասարդները ընդհանրապէս ուսուցիչ և օրինակ պիտի լինին պատանիներուն՝ գործի և արհեստներու կատարելագործութեան վարժութիւններուն։ Այս դէպքերուն՝ եթէ մի պատանեկի վերայ տեսնեն դանդաղութիւն և կամ վեհերոտութիւն, նոցա ձանապարհ պիտի ցուցնեն արհնալու. մանը մանը վարժութիւններէն սկսած և անզգալի կարգաւ դէպ ի խոշոր վարժութիւններու մէջ կրթելով. զորօրինակ ծանրութիւնները վերցնելու համար խիստ թեթև գրեթէ անկշիռ բեռներու և գործիքներու փոխադրութիւններէն սկսելով, անզգալի կերպով յառաջ տանելու է դէպ ի ծանր բեռները. տասը փունտանոց մի բեռ տասը անգամ տեղափոխելէ ետքը պատանեկի ջղերն այնքան կը կազդուրուին, որ այնուհետև տասնուկէս փունտանոց բեռին ծանրութենէն զանազանութիւն չզգար. տասնուկէս փունտ ծանրութեան վարժուելէ ետքը՝ տասն և մէկ փունտ զանազանութիւնն ևս չզգար։ Այսպէս սանդուխքի առաջին աստիճանէն վար ցատկող մանուկին ոտքն առաջին անգամ միայն ցաւ կզգայ. երկրորդ անգամին այն ցաւի զգացումը կը նուազի. տասներորդ անգամին հազիւ թէ ցաւ կզգայ՝ եթէ երկրորդ աստիճանէն վար ցատկէ։ Երկրորդի վարժութենէն էլ ետքը երրորդէն ցատկելը կը դիւրանայ. այսպէս հետզհետէ թեթևէն դէպի ծանրը, ցածէն դէպ ի բարձրը մանը մանը վարժուելով (թէ մանուկները) և թէ պատանիները կը հասնեն կատարեալ ուժոյ վարժութեան. և այս ուժոյ մէջ կատարեալ լինելու ցանկութիւնն այնքան վսեմ և բորբոք է պատանիներու մէջ, որ շատ անգամ առանց մեծերէն առաջնորդուելու, ինքնիրենին կսկսին այս օրինակ վարժութեան։ Պատանին միշտ կը ցանկայ որ կատարեալ երիտասարդի հաւասար արժանիք ունենայ. նոքա գիտեն, որ երիտասարդին հասակին մեծութիւնը միայն արտաքին երևոյթ

է, երիտասարդին բուն կատարելութիւնն ու վաստքն՝ ուժն ու կարողութիւնն է, և կը հետևեն մեղմ պատանիները՝ որ ուժեղ լինին ամեն պատանիէ աւելի, երիտասարդի չափ ուժեղ լինելու կը մղցեն իրենց սրտերումն. և այս մղցումն է, որ հասակակից ընկերքն աւելի ուժեղ պատանիներուն հպարտութենէ վերջ կը պահէ. պատանեկական այս բորբոք եռանդը մեղմ վաստ պիտի պահեն երիտասարդները՝ գործասիրութեան մէջ հրահանգելով, իրենց ընդարձակ գործերումն ընկերացնելով, և ծանրութիւնը թեթևացնելու, դժուարութիւնը դիւրացնելու իրենց հանճարն աննախանձաբար հաղորդելով նոցա՝ թէ խօսքով և թէ օրինակով մեանգամայն կրթելով։

Երիտասարդները մեղմ պիտի զգուշանան, որ պատանիներու ընկերութեան մէջ՝ որ և իցէ հպարտութեան, նախանձու, բարկութեան, ծուլութեան, ագահութեան և որկրամոլութեան օրինակ չտան՝ ոչ խօսքով և ոչ ցոյցով։ Երիտասարդները խստաս լռութիւն պիտի պահեն մարդկային ծննդականութեան գուգաւորութեան մասին, և ոչ երբէք պիտի խօսին ոչ պատանիներու ընկերութեան մէջ, և ոչ նոյն իսկ հասակակից երիտասարդներու ընկերութեան մէջ։ Երիտասարդները եթէ այս անհրաժեշտ զգուշութենէն չվրիպեն, այն երիտասարդաց գիւղի կամ քաղաքի ժողովրդին մէջ ամենևին պիտի չերևին ներքին հիւանդութիւնները և ախտերը։ Երիտասարդները եթէ այս զգուշութիւնը ճշտիւ պահպանելու զգաստութենէն պակասին, նոքա ընդհանուր մահ կը սփռեն իրենց ապագայ սերնդին աճելութեան վերայ. և որոնք հետզհետէ չը հայրացած, չմայրացած, երիտասարդութեան կատարեալ վաստքին չհասած, մինչև իսկ պատանեկութեան տարիքներուն չհասած պիտի մեռնին իրենց ծնողաց՝ այն անզգաստ երիտասարդներուն (որ որպէս թէ հայը եղած են) սուգ և ցաւ միայն պատճառելով։

Պատանիները գտնուած ընկերութիւններումն՝ երիտասարդաց այս մեղմոյն զգուշութիւնները պիտի պահեն և կանամբիներն, և հայրերն, և առ հասարակ կանայք և մայրերը. իրրև երիտասարդ՝ կատարեալ գործունէութեան օրինակ պիտի տան պատանիներուն, և իրրև հմուտ արհեստաւորներ՝ կատարեալ խելամտութեամբ պիտի հաղորդեն իրենց հանճարը. որով մէկ մեայն պիտի զգան պատանիները, թէ հայրերն ինչով— ինչպիսի հանճարով կառաւելուն քան զերիտասարդները։ Նոցա բերնէն ամենևին պակաս խօսք կամ յիշոց ու հայհոյանք պիտի չլսեն պատանիները. նոքա մեղմ յանդիմանող պիտի լինին պատահած աւելորդ և անօգուտ խօսքերու, և պիտի չներեն այնպիսի խորհուրդներու անգամ՝ որ տեղի գտնեն իրենց սրտերումն։

Եթէ մարդկային ընկերութիւնն այս ոճով վարուի մանուկներու և պատանիներու հետ առ հասարակ, այն ժամանակ ապահովուած է պատանիներու ողջախոհութիւնը նոյն ժողովրդի մէջ։ Եւ ողջախոհ պատանիները մեղմոյն ժողովրդեան մէջ կաճեն դէպ ի կատարեալ երիտասարդութիւն. որ մեմիայն պարծանք է ազգի. և իսկական նշան կամ սկզբնաւորութիւն յառաջադիմութեան, այսինքն երկրի բարիքներն աննուաճ պայմաններում վայելելու, և անմահական յիշատակներով պերճանալու, և մտաւոր կատարելութեան հանճարով իրենց ապագայ անմահութիւնը տեսնելու, և նոցա յուսովն իրենց կեանքը անմահացնող յարութեան ակնկալութեամբ Աստուծոյ տեսլեան սպասելու։

Երրորդ, չորրորդ և հինգերորդ կարգն ընկերականութեան մասին կը խօսենք երիտասարդական կենաց պայմաններու կարգումն. այժմ անցնենք կատարեալ պատանեկութեան պայմանի լրման արտաքին երևոյթին։

Ժ.Բ. ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ՏԵՍԻԼՆ ՈՒ ՉԱՐԴԸ.

Կատարելութեան պահանջած ողջախոհութեան անխոտոր Հանապարհումն աճած և զարգացած պատանիները մխիթարն իրենց երևութովն ու չարժուածքովն կը յայտնուին հասկացող մարդուն: Սողոմոն իմաստուն կը կասէ. թէ «Մարդուն հանդերձները, երեսին ծիծաղը, և ոտքին քայլերը՝ նորա վերայ պատմութիւն կանեն»: Այս դիտողութիւնը՝ մանաւանդ պատանիներու վերայ այնպէս պարզ կը տեսնուի, որ նորանոր ուսման և հըմտութեան բնաւ կարօտութիւն չունի: Ամեն աչքի յայտնի է, թէ ուրախ մարդուն դէմքը և տրտում մարդուն դէմքն իրարմէ կը զանազանին. նոյնպէս անհոգ և հոգած մարդոց դէմքն իրարմէ կը զանազանին: Խորհուրդ մարդը՝ հոգած մարդու դէմքը կուննենայ, երբ իւր խորհուրդները մխիթանց եաւէ յաջորդաբար կընդարձակին, և չեն պարզուիր: Խորունկ մտածող մարդուն խորհուրդներն երբ իւր մաքուն պարզուին, դէմքը կը փոխուի ուրախութեան կերպարանք կառնու: Աչքցող կամ պատկառող մարդուն կերպարանքն ամեն կերպարանք աւելի սիրուն է. ոչ մի գեղեցկութիւն՝ պատկառանքի տեսիլին չհասնիր: Խաղաղ հոգի, և գոհ սիրտ ունեցող մարդուն դէմքը՝ ուրախ մարդու և պատկառող մարդու կերպարանքներուն խառնուրդը կը ներկայացնէ. այս դէմքը՝ որ խաղաղ հոգւոյ և գոհ սրտի երևոյթն է՝ հաճոյ է ամեն աչքի: Ողջախոհութեան Հանապարհումն աճած պատանին իւր դէմքին վերայ կը բերէ միշտ այս հաճոյականութիւնը, որ մանկական անմեղութենէն կը տարբերի միայն խորհող մտքի հոգածութեան թեթև նշանով: Պատանիի ողջախոհութեան առաջին վկայութիւնն է դէմքին հաճոյականութիւնը: Դէմքի հաճոյականութիւնը՝ չխոթելու չէ գե-

ղեկցութեան հետ. կան շատ գեղեցիկներ, որոնք հաճոյականութիւն չունին. կան շատ տգեղներ, որոնք հաճոյականութիւն ունին: Հաճոյականութիւնը հոգւոյ և սրտի գուտ երևոյթն է միայն: Գաւակի գոյնը չէ, որ նորա դէմքն ու անձը բոլորովին հաճոյ կանէ ծնողքին:

Հոգեկան առաքինութիւններէ չթերացած հոգին՝ անբաժան ունի ներքին հանգիստը. հետևաբար նորա յայտարարն եղող ուրախ դէմքը: Ողջախոհութեան մէջ կատարեալ եղող միտքը՝ մտութեան մէջ վառուած Հրագի կը նմանի. նա խորհուրդներու մէջ անգամ չտանջուիր. նորա տեսութիւնն առատ է, ձեռքը ժիր, և ոտքն արագ. նա ամեն մի հանգամանքի մէջ ակներև կը վայելի. ուսանելու մէջ դիւրիմաց է, և չմոռացող. չարժուածքումն անդադար և արագ, գիւտերու մէջ յաջողակ, գժուարութեանց դէմ հնարագէտ և Հարստասը, ուսուցանելու մէջ աննախանձ և պարզախօս: Մարդկային հոգին պատանեկութեան տարիքումն՝ ամեն տեսակ չնորհաց ընդունակ է, և դիւրընկալ, միայն թէ ողջախոհ և ողջամիտ ծնողաց զաւակ լինի: Աբբեցող ծնողաց սերունդը մերթ ընդ մերթ արթուն, և մերթ ընդ մերթ թմրած հոգի կը հանդիսացնեն:

Ողջախոհ պատանիին հանդերձն իրեն վերայ այնպէս կերևի, ինչպէս թէ բնական լինի. նորա հանդերձը կոկիկ և կօտեպինդ կը լինի, որ ոչ մի չարժուածքի արգելք չլինիր: Ողջախոհութեան մէջ կատարեալ չեղող պատանին չրջահայեաց չէ ամենևին. նորա գօտին ղողող պատանին չրջահայեաց չէ ամենևին. նորա գօտին մէջքէն կընկնի, և նա չիմանար. հանդերձը ցեխերու մէջ կը թաթխուի դարձեալ չիմանար: Ողջախոհ պատանին կօշիկները այնչափ չեն ցեխոտիր անձրևային եղանակներում, որչափ որ կը ցեխոտի անմաքուր պատանիներու կօշիկները ամառուան տաք և չոր եղանակներում: Ողջախոհ պատանին եթէ պատահի անակընկալ դէպքի, և հանդերձը պատռի, չէ կարող այնպէս անխռով քալել. նա կը պատկառի ամեն անգամ որ

մարդու հանդիսին, և մինչև որ չկարկատէ պատռածը, չհանգչիր սիրտը։ Ողջախոհութենէ պակասած պատանին՝ ամենևին հոգ չանիր, նորա համար՝ միևնոյն է թէ պատռած է հագուստը, և թէ չէ. նա չզգար, թէ մարդուն անզգուշութեան նշանն է այն։ Ողջախոհին վերայ հին հանդերձն այնքան վայելուչ է, որ շատ անգամ անխոհեմ պատանին հագած նոր հանդերձէն աւելի կը հանդիսանայ աչքին։ Հագուստի վայելչութիւնը՝ յատուկ ուշադրութեամբ կարգադրելէն չէ, այլ բնական կերպով մէօրինակ հագուելէն է, որուն մի անգամ կը վարժուի հագնողը իւր մանկութեան վերջին տարիներում, որոյ ամեն ուղղութեանը վարժուած է այլևս պատանեկութեան տարիներում։ Ժրաջան պատանին արշալուսին կը զարթնի, կը հագուի առանց Ճրագ վառելու, և կանոնաւոր կը հագուի. իսկ պճնասէրը՝ որ մինչ դանդաղ պիտի լինի, կսպասէ արեգական ծագելուն, կանցնի կրկնակ հայելիներու մէջ տեղը, մանր ու մանր կը կարգադրէ աւելորդ ծամերն, ու քամի լսաղալիկ եղող հանդերձի քղանցներն, և դարձեալ անկանոն կը հագուի. և ամեն աչքի կը զարնէ, թէ տակաւին հագուել ևս չգիտէ։ Տեսակ տեսակ հանդերձներով հագուելն ևս նշան է հոգեկան այն պակասութեան, յորում չէ կարող չզգալ մարդ, թէ մարդ՝ հանդերձէն աւելի է, և թէ հանդերձը միայն մերկութիւնը ծածկելու համար է, և կամ ցրտէն պաշտպանուելու։

Կատարեալ պատանին սիրահար է թեթևընթաց և դիւրասահ կօշկի. վազելուն արգելք չեղող վարտիք, չփորուող գօտի, չարձակուող Ճարմանդի, ամփոփ բաճկոն, և պիրկ բազպանի և պաճոյճի. և Ճակատարաց խուզուած գլուխ, և ձմեռները՝ կռնակը տաքցնող կրկնոցի։ Նորա բովանդակ զարդարանքն է իւր ծննդեան ընծայն, զոր նուիրած է հայրը՝ մի գործիք որ և է արհեստի, զոր ի ծածուկ կը կրէ իւր սրտին կամ բազկին վերայ, երբև յուշարար ծնողաց ակնկալութեան. կամ թէ ծնողական բարեպաշտութեան լի զգացմանցն ի ցոյց կանած է մի խաչ դարձեալ սրբատին վերայ հանդերձներու ներքևէն, որպէս զի յամենայն ժամ լիշէ, թէ իւր ծնողքը նուիրել են զինքն Աստուծոյ Յիսուսի Քրիստոսի խաչելոյն. յուսալով, որ երբեմ մանուկն Յիսուսի Քրիստոսի յատուկ չնորհքովն պիտի զարգանայ, և լինի կատարեալ մարդ՝ կատարեալ ողջախոհութեամբ։

Ծնողք՝ երբեմ ներքին զգացմանց յայտարար եղող այս զարդարանքը կընծայեն երբեմ նորածին մանուկին՝ նորա անուանակոչութեան օրը. և ծնողասէր Հայերն՝ մինչև ի մահ երբեմ ծնողաց ակնկալութիւնն յայտնող այս նշանն երբև զարդ յուշարար կը պահեն երբեմ սրտին վերայ կամ բազկին վերայ։ Նոյնպէս մանկամարդ օրիորդներն՝ երբեմ անուանակոչութեան օրն սահացած այն ընծայն, զոր ծնողք կընծայեն երբև երբեմ ակնկալութեանցն յայտարար՝ երբև անգին զարդարանք ունին մինչ գլխոմն մինչև ի մահ։

Ոչ պատանին, և ոչ մանկամարդ օրիորդը՝ չունին որ և է զարդարանք՝ Հայոց ազգի մէջ։ Նոցա բովանդակ զարդարանքն է երբեմ հասած հին աւուրց ազգային սովորական հանդերձը՝ որ ամեն կերպով թեթևաշարժութեան և մարմնոյ առողջութեան կը յարմարի, և այն ծնողական ընծայն՝ որ ծնողաց ակնկալութեան քարոզն է՝ մկկուն գլխուն վերայ և մեսին սրտին վերայ ցմահ հաստատուած։

Պատանին որ իւր հասակի տասն և հինգերորդ տարուն լրմանն հասած է, և ի մանկութենէ մինչև այս հասակը՝ ծնողական խնամքէ և խրատէ զրկուած չէ, և ողջախոհութեան Ճանապարհումն ըստ բնութեան ա-Ճած է ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, նորա համար այլ ևս վկայական հարկաւոր չէ. նորա տեսիլը՝ նորա մասին կը պատմէ, թէ ինչ պատանի է. նորա անմեղութիւնը կը փայլի դէմքին կայտառութեանը վերայ. սրա-

մտութիւնն ու հասկացողութիւնը կը վայելի գուարթութեանը վերայ. ժրութիւնը կերևի կազմուածքի բնական դիրքին և հագուստի պատշաճութեանը վերայ. նորա հոգւոյ անվեհերութիւնը և արիութիւնը կերևի նոյն իսկ նստելու և կանգնելու, քայլելու և գործելու շարժուածքումն: Եթէ բերանն էլ բանայ և խօսի, նորա սիրտը՝ իւր բոլոր բաղձանքովն յայտնի կը լինի. որոց ամենքն էլ մխանգամայն գուշակութիւն մի են, թէ այն պատանին ուր պիտի հասնի

Ինչպէս կատարելութեան հասնելու պատանին, նոյնպէս գայթակղած և խոտորագնաց պատանին միևնոյն նշաններու հակառակ երևութովն կը գուշակէ իրեն համար, թէ ինքն արդէն իսկ զրկուած է ծնողական խնամքէ և խրատէ, նոյնպէս և պատանեկութեան ամեն վայելչութիւններէ. թէ նա խոտոր ճանապարհում մոլորուած ու հոգնած է, հանգիստ կը փնտռէ և չհասնիը, վասն զի ուղիղ ճանապարհէն մոլորուած է. թէ նա դատարկաշրջիկ է, անիծոք կենաց գործերում, խաղ է դարձել մոլեկան պահանջներում, թէ հպարտացել է, չէ կարող խոնարհիլ, և բարձր օդերում չէ կարող կերակրուիլ, նախանձէն կը բորբոքի և կը հալի, բարկութենէն կը կատղի, ուժէն կտրած ու դադրած գետին կընկնի յանկարծ, չէ կարող շարժիլ, կը ծուլանայ, ուտել կուզէ, կը մուրանայ. քանի կառնու, կազահանայ. չէ կարող դիզածը վայելել և կը փճանայ. կուտէ, չկշտանար, որկրամոլ կը դառնայ, կը շուայտի, կը մոլեգնի. ինչպէս անբան մի կենդանի, այնպէս անհոգի է նա: Զուրկ Աստուածսիրութիւն, չունի ընկերասիրութիւն. աջողութիւն որ հանդիպի, կը յանդգնի. ձախողութեան որ պատահի, կը յուսահատի. չունի չափաւորութիւն: Պղերգ աղուէսի պէս կը շրջի, հաւնոցները կը վազէ կը կերակրուի, և հաւնոցում կսպառնալի: Բանական մարդոյ կերպարանքումն՝ լոկ անբան մարմինը՝ կը վազէ մարմնոյ ցանկութիւններին, և նոցա օրօգայթը կը բռնուի:

Ծնողական խնամքը, ուսուցչական դաստիարակութիւնը, հասարակական բնտիր ընկերականութեան օրինակը, Աստուծոյ ամենակալ կարողութեան ձչմարիտ և աներկբայ հաւատքը, Քրիստոսի խաչին հեզահոգի թեթև աբեռնութեան սէրը՝ և անմահ հոգւոյն մարմնական մեռելութենէ յարութիւն առնելու հաստատուն յոյսը, այս հոգեկան կարողութիւններն ամենքն միասին՝ ողջմտութեան ճանապարհում կը զօրացնեն ողջախոհ պատանիներին և չնորհաց մէջ կաճեցնեն. երկրի վայելչութեան ժառանգը կանեն, և վերահաս երիտասարդութեան կատարեալ հասակում Աստուծոյ երկնաւոր թագաւորութեանը կը գլխաւորագրեն:

Ժ.Դ. ԿԱՏԱՐԵԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴ.

Թէ պատմութիւնները և թէ ներկայ խելամտութիւնները՝ կը ցուցնեն, որ շատ հին ժամանակներէ հետէ Երիտասարդի անձին լիութիւնը տարիքէն չէ ափսիը. այլ զանազան երիտասարդներ՝ իրենց հասակի զանազան տարիներումն կը հասնին երիտասարդական լիութեան անձնաւորութեան: Կան երիտասարդներ՝ որ հազիւ թէ քսաներկուերորդ տարիում կը հասնին իրենց աճելութեան վերին աստիճանին. կան նաև երիտասարդներ՝ որ արդէն իսկ տասնեւութերորդ տարուումն հասած են աճելութեան վերջին տարին, և այլ ևս դէպ ի վեր չեն բարձրանար հասակով: Անօսր են այն երիտասարդները՝ որ մինչև քսան և հինգ և քսան և վեց տարեկան կը լինին, և տակաւին կաճեն դէպ ի վեր հասակի բարձրութեամբ. որոնք բացառութիւն կը համարուին: Վասնոյ և մինչին համեմատութեամբ՝ երիտասարդական լիուլի հասակը կարելի է համարել քսան կամ քսանըմէկերորդ տարին.

Պատանիները ընդհանրապէս տասնեւվեց կամ տասնըեօթերորդ տարիքի լրանը կսկսին երիտասարդութեան հասակը մտնել։ Երիտասարդութեան առաջին տարիքին նշանները կերեւին պատանեկին վերայ, որ են հասակի չափաւոր բարձրութիւն. թիկունքի չափաւոր հաստութիւն. բարձերու և բազուկներու չափաւոր հաստատութիւն, որ գործի մէջ յոգնելու չափ տոկունութեամբը կը յայտնուի. և երեսին վերայ ընչացքի առաջին նշանն —աղուամազ։ Պատանիներու վերայ երեւցած և յայտնուած այս նշանները՝ կը ցուցնեն պատանեկութեան լուռի հասակը, և երիտասարդութեան տարիքի առաջին մուտքը։ Ամելութեան, արիութեան և այրութեան այս երեք նշանները ընդհանրապէս մէսսին կսկսին առաւելուլ, և մէսսին կամբողջանան, որ կասուի էրէնէ երիտասարդութիւն. իսկ եթէ մէսսին չամբողջանան, կասուի անչէնէ երիտասարդութեան։ Երիտասարդութեան անկիութիւնը՝ բնական չէ, այլ մէմիայն երիտասարդական առաջին տարիներուն պատահած խոտորումներու հետեւանքն է։

Կատարեալ պատանիները՝ երիտասարդութիւն անթերի նշաններով հասնելու համար, երիտասարդութեան տարիներուն՝ ողջախոհութիւնն անեղծ պահող, կենաց Ճանապարհումն անխոտոր պիտի քալեն և ածեն, և ահա կատարեալ լրութեան կը հասնեն։ Երիտասարդութեան լրութեան հասնելու պայմաններն են.

Ա. Ուտելու, խմելու չափաւորութիւն, և ուտելեաց ու ըմպելեաց բնականութիւն։

Բ. Ողջախոհ ընկերակցութիւն.

Գ. Պիտանի գործերում արիական տևողութիւն.

Դ. Խոհեմութիւն—մտաւոր կատարելութիւն.

Այս պայմանները իրենց ուրոյն ուրոյն դրոշմը կը դնեն երիտասարդին վերայ, որ կը լինին նորան կատարեալ բանականութեան նշանը։

Երիտասարդութեան լրութեան հասնելու պայմանները զգուշանալու են ծնողք քանի կան և կը շնչեն. միևնոյն ժամանակ նոյն իսկ երիտասարդները ընչացս չափահաս մարդիկ՝ պիտի զգուշանան իրենց անձին և գնացքին, որ անթերի կատարելութեան հասնեն։ Երիտասարդական բուն կատարելութիւնը՝ նորա արտաքին լրութեան հետ միասին աճեցող ներքին արբունքն է, որով մէսսին հասուն և պատրաստ կը լինի երիտասարդն երկրի վերայ։ Երիտասարդը՝ կատարեալ արբունքի հասնելէ ետքն ևս դեռ կը խորհի աւելի ևս կատարեալ լինել. բայց նորա կատարելութիւնն ակներև է ամենուն, և կը սիրուի ամենէն։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդին օրհնել է Աստուած իսկզբանէ, կօրհնեն և մարդիկ յաւիտեան։ Նա կը նմանի պարտիզում մեծացած այն ծառին, որ այլ ևս ծաղկելու գարնան հասած է, և կը ծաղկի, և բազմաբեղուն պտուղներու խոստումներով զարդարուած է. նորա վերայ կը նայեն ծնողաց աչքերն անհամեմատ բերկրութեամբ, և ամենաուսեալ բարութեանց հաստատուն յուսով։

ԺԴ. ՈՒՏԵԼԵԱՅ ԵՒ ԸՄՊԵԼԵԱՅ ԶԱՓԱՒՈՐՈՒԹԻՒՆ.

Երիտասարդութեան տարիքներումն՝ ողջախոհութիւնն ամբողջ և անթերի պահպանելու բնական պայմաններէն առաջինն է ուտելեաց և ըմպելեաց չափաւորութիւն։ Սնունդը՝ որ աճելութեան անհրաժեշտ պայման է՝ կը յառաջանայ ուտելէ. կանոնաւոր աճելութիւնը՝ կանոնաւոր սննդեան հետեւանք է. և կանոնաւոր սնունդը՝ չափաւոր ուտելու և չափաւոր խմելու արդիւնք է. ուտելեաց և ըմպելեաց չափաւորութեան հետ եթէ զոյգ ընթանայ և ուտելեաց ու ըմպելեաց բնականութիւնն, այնուհետև բնական և կանոնաւոր աճելութիւնն անվրէպ է։

Թէ ուտելեաց և թէ ըմպելեաց չափը՝ չեն չափուիր կշռքով և լտերքով, և ոչ ժամանակով. այլ՝ ուտելու ժամանակը կորոշուի քաղցածութեան զգացումով. և չափը՝ կորոշուի կշտանալու զգացումով. ըստ որում ուտելու սկզբնաւորեալ պատճառն է քաղցենալը, և բուն նպատակն է կշտանալը: Նոյնպէս խմելու ժամանակը կորոշուի ծարաւի զգացումով, և չափը՝ նեղքին գովութեան զգացումով: Այսպէս և ուտելեաց և ըմպելեաց չափաւորութիւնը կը գործածուի և կը պահուի ճշտութեամբ, եթէ քաղցած ժամանակը ուտենք, և կշտանալնուս պէս դադարինք. նոյնպէս ծարաւ զգալով խմենք, և գովանալնուս պէս դադարինք: Քաղցած լինել, և չուտել՝ կշտացած լինել, և դարձեալ ուտել՝ մեծաւոյ վնասակար են. կշտանալէ ետքը կերուած մի պատառն անգամ վնասակար է, նոյնպէս գովանալէ ետքը խմուած մի ումպը վնասակար է, և արտաքոյ կարգի արտաթորումները միայն կը պատճառեն, ու նեղքին գործարանները բնական սահմանէն դուրս կը ճնշեն ու կը վնասեն:

Մարդու բնական ուտելիքն է. բանջարեղէն, խաւարտեղէն, պտուղ և մրգեղէն, կաթնեղէն և մսեղէն: Ուտելիքներն ընդհանրապէս կը ճանաչէ մարդ՝ առաջին ճաշակով, և կընդունի կամ կը մերժէ. փոքր մանուկին բերանն եթէ սոխ դնես, ճաշակն զգալուն պէս՝ դուրս կը թքէ. նոյնպէս խակ մրգեղէնը չյարմարիը մանուկի ճաշակին, և չընդունիր: Մանուկին չսերած կանաչին ու պտուղը՝ միատեսակ անյարմար են բնական ճաշակի, և օգտակար չեն. մանաւանդ թէ շատ անգամ վնասակար են:

Բնական ուտելիքներու կարգումն՝ առաջին տեղը կը բռնէ բուսեղէնը և մրգեղէնը: Ձեն պատճառութեան վկայութիւնը կը հաստատէ, թէ մարդ միայն բուսեղէններով վերակրուելու յարմարութեամբ ստեղծուած է. և թէ բուսեղէններով ապրող մարդն աւելի երկայնակեաց կեանք

ունի և աւելի առողջ: Օրական ընդհանուր փորձառութեամբ ևս կը տեսնենք, որ քիչ անգամ մսեղէն կերակուր գործածող շինականներն՝ աւելի առողջ, ուժով, և երկայնակեաց ու բազմածին կը հանդիսանան իրենց կեանքում. նոցա մէջ շատերը կան, որ հիւանդութիւն չեն տեսներ, եթէ ոչ բնական պատահարներու միայն պատահելով:

Այս բնական ուտելիքներն՝ ինչպէս ասացինք կընարսուին և կը ճանաչուին ճաշակով կամ համտեսով. Այս բնական ընտիր ուտելիքներու պակասութեան դէպքերումն՝ մարդու հանճարն աւելցուցած է ուտելեաց տեսակները՝ նոցա անճաշակ բնութիւնը՝ փոխելով և ճաշակելի անելով. և այս՝ միայն եփելով ու նոցա թոյնն դառնութիւնը նուազեցնելով կամ չնչելով: Առանց եփելու՝ ճաշակի յարմարուող բուսեղէնները աւելի ևս բնական են ուտելեաց կարգում. իսկ եփելով յարմարցուածներն՝ երկրորդական են ուտելեաց կարգում:

Այս երկու կարգի ուտելի բուսեղէններու պակասութեան դիպուածներումն սկսուած է և կաթնեղէնի կերակուրը, որ կերպով մ'աւելի մօտիկ կը յարմարի մարդու կաթնակեր մանկութեանը: Կենդանեաց վերայ կը տեսնենք միշտ այն բնական յատկութիւնը, որ այծի ձագը՝ ոչխարին չծծեր, և թէ առաջը դնենք երկու աման կաթ, ոչխարի կաթին համն առնելուն պէս՝ յետ կը քաշուի, չխմեր. իսկ այծի կաթին համը որ առնու, այլ ևս դունչը յետ չքաշեր, այլ կը խմէ, մինչև սպառելը, կամ մինչև կշտանալը: Ոչխարը՝ այծին կը ծծէ, և այծի կաթն առանց դանազանելու կը խմէ: Մարդիկ կան, որ ճաշակի կատարեալ զգացումն ունին, և համէն կը զանազանեն ամեն մի անասունի կաթը: Մարդ՝ որքան խառնակեր լինի, այնքան կը կորսնցնէ ճաշակի նրբութիւնը, որ մի կատարեալ յատկութեան պակասութիւն է: Կաթնեղէն

կերակուրները՝ սննդարար են, բայց մարդկային բանական կատարելութեան յատկութիւնները կը նուազեցնեն։ Բուսեղէնի սնունդն աւելի զուարթարար է, կաթնեղէնի սնունդը՝ քնաբեր, որ թմրեցուցիչ է մեղմ գործածողին։ Ընդհանրապէս կաթնեղէնով միայն երբեմն հազն համեմող հովիւները՝ թանձրամիտ կը լինին և թմրած։ Կաթնեղէնը՝ ուտելեաց կարգումն երրորդ տեղը կը բռնէ. և առաւելապէս կը գործածեն այն մարդիկը՝ որոնք որ ակռայի պակասութիւն ունին և կամ ստամոքսի տկարութիւն։

Բուսեղէնի և կաթնեղէնի պակասութեան դիպուածներուն սկսուած է և մսեղէն կերակուրը. որոյ համար Աստուածաշունչ գրոց պատմութիւնը կը վկայէ, թէ մսակերութենէն ետքը մարդու կեանքը պակասեցաւ։ Առաջին դիպուածում ամեն տեսակ միս սկսեցին ուտել. յետոյ որոշուեցաւ ուտել միայն ընդակերը թռչնոց միսը, թեւիամորթ ձկները, և առհասարակ այն կենդանիները՝ որ եղջերաւոր են և մլանգամայն կճղակաբաշխ։ Այժմու ազգերէն շատերն այս խորութեան չեն նայիր, և ընդհանրապէս կուտեն ամենատեսակ ձկներ, սողուններ, և ամեն կարգի խոտակեր անասուններ, մինչև իսկ շաղղակեր խոզը։

Մսակեր թռչուններու կտուցը կեռ կը լինի, և գազանները՝ ժանիք կունենան, որ սանտերքի նման մէկ մէկու մէջ կանցնին. որ պատառելու և բզքտելու յարմարութիւն են մսակերին. մարդն այս յարմարութիւնը չունի ամենևին ոչ ակռաներումն, և ոչ եղունգներում. բայց կերակուրի պակասութեան ժամանակ, մարդը՝ դանակ և թուր հնարել է միսը կտրատելու։ Մսեղէն կերակուրն՝առանց եփելու չեն ուտեր մարդիկ. կան գիշակեր ազգեր՝ որ հում հում կուտեն. այս կարգի մարդիկն աւելի անագորոյն են, և գազանաբարոյ։

Մարդոյ բուն կերակուրն է բուսեղէն, այսինքն քանջարները, խաւարտները, հունտեր, պտուղները, և նոյա երկրորդական տեսակները՝ որ առանց եփելու չեն ուտուիր։ Դարձեալ մարդոյ բնական կերակուր դարձած է կաթնեղէնը, այսինքն խոտակեր անասնոց կաթը, մածունը, պանիրը, իւղը, և ուրիշ տեսակները, որ կաթէն կը պատրաստեն։ Կաթնեղէնը՝ թէ եփած և թէ չեփած կը գործածեն։ Դարձեալ մարդոյ բնական կերակուր դարձած է մսեղէնը։ Այս երեք տեսակ կերակուրներն էլ սննդարար են, և որոց առանձին ներգործութիւնը կամ ազդեցութիւնը կերևի մարդոց վերայ. միայն բուսեղէններով կերակրուողները՝ զուարթամիտ կը լինին, և լրջամիտ և առողջ ու երկայնակեաց։ Կաթնեղէն շատ գործածողները՝ տղայամիտ կը լինին և թմրած։ Միայն մսեղէն գործածողները՝ մանաւանդ հում հում ուտողներն՝ անագորոյն կը լինին և գազանաբարոյ. և շատ անգամ հիւանդոտ և ախտաւոր։

Այս երեք կարգի կերակուրներուն բարեխառնութիւնը կը լինի, բուսեղէնները՝ կաթնեղէնի և կամ մսեղէնի հետ խառնելով։ Բնական կերակուրներն ընդհանրապէս սննդարար են. և ոչ ոքի չեն վնասեր, եթէ գործածուին չափով և ըստ բնութեան, կամ ըստ տեղւոյն։ Երկրագունդի երեսին ամեն կլիմայի տակ գրեթէ առանձին յատուկ ուտելիք կը կանաչի և կաճի առատութեամբ։ Տաք կլիմայի տակ յառաջացած ուտելիքը շատ անգամ վնասակար կը լինի ցուրտ երկրի բնակչաց. նոյնպէս և ցուրտ կլիմայի բերքերն՝ տաք երկրի բնակչաց։ Իւրաքանչիւր կլիմայի բնակիչներուն աւելի ևս կը յարմարի նոյն երկրի բերքն իբրև յատուկ կերակուր. որոց սովորական գործածութիւնը՝ բնութիւն կը դառնայ տեղացւոյն։

Կերակուրները կը համեմին ընդհանրապէս աղով և եփելով։ Կան և ուրիշ համեմներ, բուսայինն և ջեռուցիչ ու զովարար։ Ցուրտ ժամանակներում կը համեմին ընդհանրապէս ջեռուցիչ համեմներով, իսկ տաք ժամանակներում՝ թթու և զովարար համեմներով։

կծու, այբեղոզ և քնարեը համեմներն առհասարակ վնասակար են շատ դիալուածներուն։

Կան թունաւոր կանաչեղէններ և սունկեր, որոնք ուտելի չեն լինիը որ և է համեմով, որոց կերակուրները վնասակար են և կը ցնորեցնեն. մինչև իսկ մահաբեր կը լինին։

Մարդու բնական ըմպելիքն է ջուրը, որ ծարաւը կանցունէ։ Գինի կամ օշարակ կը լմնեն միայն առժամանակեայ մի արտմութիւն փարատելու համար, և ոչ երբեք ուրիշ նպատակաւ։ Երկար ժամանակ ցուրտ բռնուելով վնասուած մարդկանց օգնելու համար միայն հնարուած են ոգելից ըմպելիները, և այն՝ միայն առաջ գործածելու համար։ Թէ չափազանց կերպով ջուր խմելէն կըվնասուի մարդ, հակացնելու հարկ չկայ. ջրգողութիւնը, և չարաչար քրտինքն արդէն յայտնի են ամենուն, թէ վնասակար են մարդուն։ Ջուր խմելու ժամանակն է, երբ մարդ ծարաւ զգայ. խմելիք ջրին չափը կլմնայ խմողը՝ ներքին զովութեան զգացումով։ Շատ ուրախանալու համար շատ գինի կամ շատ օշարակ խմել՝ ի չարէն է ամեն ժամանակ, և դէպ ի չարը կը տանի. թէ արբշռութիւնն ինչ անտանելի չարիք է մարդկային ընկերութեան, ամեն մարդ գիտէ, կամ անձամբ փորձն առել են, կամ ուրիշին պատահած ամենատեսակ չմարութեանցն՝ անբանական չմարութեանցն ականատես եղած են. խումառները խիստ շատ անգամ սպանող լինելէ եաքն սթափած են, և հազիւ ուրեմն զգացած, թէ ինչ են արած։ Ախորժակ բանալու համար օղի կամ որևէ ոգելից ըմպելի խմել, և հետզհետէ շատ խմել՝ ի չարէն է, և դէպ ի չարն կաճի. որոյ առաջին նշանն է, խորհրդոց խանգարումն, մտաց պակասութիւն, գլխոյ ցաւ՝ որ բոլոր փափուկ զգայարանները կը թմրեցնէ. փսխոն, որ ներքին գործարանները կը խանգարէ. տեսակ տեսակ հիւանդութիւններ, որ չարաչար մահիճի

կը գամատպարտեն, և շատ անգամ կաթուածահարութեան կը հանդիպեցնեն, ու անդամալուծ կը ձգեն։ Ոգելից ըմպելիներու սովորութիւնն արդէն իսկ հիւանդութիւն է, և մարդկային անկարօտութեան չնորհքը կը կորսնցնէ, ու կարօտութեան մէջ չարաչար կը տանջէ։

Ամենայն կլիմայի տակ՝ երկիրն իրեն բնական ըմպելին ունի և կը պտղաբերէ անպատ. տաք երկրի ըմպելին շատ անգամ վնասակար է ցուրտ երկրում, նոյնպէս և ցուրտ երկրի ըմպելին տաք երկրում։ Արբեցնիները և որկրամոլներն առ հասարակ՝ մի կարգ առակներ յօրինած են, որոց ունկնդրութիւնը շատ անգամ կը քաղցրացնէ խմիչքի գոյնն ու համը, և այն՝ միայն լսողի ականջներուն. բայց ականջով խմացուած համը քիչ ժամանակէն կը կորսնցնէ մարդուն գլուխը. որոց առջև ցեխն ու ջուրը՝ քարաժայռն ու գահավէժը՝ մի օրինակ ճեմարաններ են, և շատ անգամ վըտանգն՝ անփախուստ։

Թէ ուտելը և թէ խմելը՝ ինչպէս սնունդ՝ ներգործութիւն ունին ամբողջ անձին աճելուն վերայ. նոյնպէս ազդեցութիւն ունին և ողջախոհութեան վերայ։ Զափազանց ուտելը և խմելը՝ կը գերացնեն և կատուսրացնեն մարդուն միայն մարմինն ու ճարպը, որոց թանձրութեան մէջ շատ անգամ ջղերն ու ոսկորներն անշարժութեան կենթարկուին, և կը տկարանան։ Զափէն քիչ ուտելն ու խմելը՝ կը վատուժցնեն, որ գարձեալ տկարութիւն է մարդուն։ Զափազանց կերուխումը՝ կը մոլորեցնէ մարդուն ողջախոհութեան ճանապարհէն, և կը զակատեցնէ գեղեցութեան ու շռայլութեան, և անասնաբարոյ կրքոտութեան։ Չեղխութիւնն ու շռայլութիւնն հիւանդաբեր լինելէ զատ՝ անարի և վատ կանեն մարդուն, որ նոյնպէս խոտորումն է ողջախոհութեան ճանապարհին։

Կերուխումի չափաւորութիւնն ու բնականութիւնն է

մեայն բնական անունդը, որով կոչի մարդ թէ մարմնով և թէ հոգեկան կարողութեամբ մեանգամայն, և կը յառաջանայ հետզհետէ կատարելութեան տանող ճանապարհումն։ Կատարելութեան տանող ողջախոհութիւնը պահող պատանին՝ բնականաբար կը պահէ կերուխումի չափաւորութիւնն ու բնականութիւնը՝ նաև երիտասարդութեան տարիներումն, ու կոչի ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ, և կը լինի այր կատարեալ. և ոչ մի բանով չնուազեը։

Ձափազանց ուտելը մարդու անզգուշութենէն կը պատահի, և որկրամոլութեան ախտէն. իսկ չափէն պակաս ուտելը կը պատահի մեայն ագահութենէն, և դուն ուրեք սովէն, Ողջախոհութեան ճանապարհումն անխոտոր շաւիղներով յառաջացած երիտասարդն՝ եթէ ուտելեաց և ըմպելեաց չափաւորութիւնն ու բնականութիւնը ճշտիւ պահած է՝ արդէն կանոնաւոր և լի կազմուածք պիտի ունենայ՝ անթերի տեսլով, տակաւին արբունքին չհասած։ Երիտասարդն՝ եթէ այս չափաւորութիւնը պահած չէ, նորա կազմուածքը թերի կը լինի, և չկատարելագործուիլ՝ արբունքն հասնելէ ետքն ևս. այսպիսի երիտասարդները կը նմանին այն պտղատու ծառին, որոնք թէև կը ծաղկին, բայց արմատներին քարաժայռի վերայ լինած է, չեն աճեր, և պտուղ չեն բերեր. և եթէ պտղաբերեն էլ, նոցա պտուղը՝ այգեպանին քիմքը չպարարեր։

Վերջապէս՝ կազմուածքի թերութիւն և անհետևութիւն ունեցող երիտասարդները՝ շատ անգամ ուտելեաց և ըմպելեաց անչափաւորութեան կը զոհեն իրենց բարեկազմութիւնը. որով ոչ մի պատճառը բնական չէ նոցա վերայ. այլ միայն իրենց կրթութենէն և սովորութենէն ծագումն կառնուն։ Թէ սովի երեսէն քաղցածութեան պատահած երիտասարդներն անգամ՝ իրենք են յանցաւոր իրենց պատահած այն չար պատահարի դիպուածումն, զոր առանձին գլխով պիտի

ցուցնենք՝ երիտասարդի կատարելութեան պայմաններէն ետքը։ Այժմ անցնենք կատարելութեան երկրորդ պայմանին, որ է արեւական առողջութիւն։

Ինչ որ ասացինք երիտասարդին կատարելութեանը համար, նոյնը լմանալու է և օրիորդին համար այս բնական պայմանումն։

ԺԵ. ՋԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐԻԱԿԱՆ ՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ.

Մարկային բանական հոգւոյն մի կատարեալ յատկութիւնն է ջանասիրութիւնը. և այս յատկութեամբ անդուլ կը գործէ հոգին մարդուն մէջ՝ քնոյ ժամանակըն ևս անդադար։ Մարմինն է որ կը յոգնի, հոգին յոգնութիւն չունի։ Հոգւոյ այս յատկութիւնը՝ ողջախոհութիւնը կատարեալ պահող երիտասարդին վերայ կերևի՝ մարմնական ամբողջ ուժով, և տակաւնութեամբ, ու շարժուածքի կայտառութեամբ։ Ջանասիրութեան այս երեք նշաններն՝ այսինքն ՝ամբողջ այժ, ֆուռնուրիան ու յայտառութիւն անթերի կը լինի կատարեալ երիտասարդի վերայ՝ անընդհատ աշխատասիրութեամբ։ Անընդհատ աշխատասիրութիւնն՝ այսինքն օրական ութ ժամ մարմնական և հոգեկան պետոյից մասին հարկաւոր եղած գործերէն չդատարկանալը՝ կատարի ֆուռնուրիան. որ կը նշանակէ միանգամայն և այն զօրութիւնը՝ որ ամեն տեսակ դժուարութեանց կը յաղթէ, և ամեն մի ձեռնարկութիւնն ի կատար կը հասուցանէ. սկսուածքի կիսատ թողուլը՝ յուսահատ հոգւոյ ներգործութիւն է, և մարմինը կը ծուլացնէ։ Կատարեալ երիտասարդն ինչպէս սննդեան կանոնաւորութեամբն անթերի կունենայ մարմնոյ կազմուածքի նոյնպէս և անընդհատ աշխատասիրութեամբ՝ անընդհատ պետի ունենայ

իւր վերայ կատարեալ տէրդուԹիւն, ոչ միայն վառաւորը է երիտասարդուԹեան պատկերի վերայ։

ԱշխատասիրուԹիւնը՝ մարդուն այնքան բնական է, որ մինչև անգամ նորածին մանուկն անշարժ չէ կարող մնալ. մարդ պիտի մեռնի, որ անշարժ մնայ։ Մարդ քանի կենդանի է, բնականաբար կը շարժի, այս շարժումն՝ արդէն իսկ բուն աշխատասիրուԹիւն է, եԹէ պիտանի գործերում շարունակուի։

Մարդը՝ ձեռքով կատարելու պիտանի գործեր ունի. և այս գործերում ձեռքը կը վարժուի հետզհետէ մանկուԹեան առաջին օրերէն սկսած՝ անհրաժեշտ շարժումը շարունակելով. և այսպէս վարժ ձեռքն առանց յոգնելու կը կատարէ ամեն գործ՝ երիտասարդուԹեան տարիքում։ Մարդը՝ ոտքով կատարելու անհրաժեշտ գործեր ունի, մանաւանդ քայլելն առհասարակ. այս հարկաւոր քայլափոխներու շարունակուԹեան մէջ կը վարժուին ոտքերը՝ մանկուԹեան օրերէն սկսած հետզհետէ, և կատարեալ վարժուԹենէ եռքն երիտասարդուԹեան հասակումն առանց յոգնելու կը քալեն հարկաւոր Ճանապարհներ՝ մինչև ուժ ժամ շարունակ և աւելի ևս։ Մարդը՝ ուսով ծանրուԹիւն վերցնելու հանգամանքներ ունի իւր կենաց պիտոյքներում, նոյնպէս և կռնակով վերցնելու հանգամանքներ. որոց պիտի վարժուին հետզհետէ ուսերն ու ամբողջ ողնաշարը, և այնուհետև առանց բնաւ յոգնելու կատարեալ արիուԹեամբ կը գործէ երիտասարդն՝ այնպիսի դիպուածներում։ Մարդկային պիտոյքներու անհրաժեշտ եղած այս շարժուններն՝ հոգեկան ջանասիրուԹեան եռանդովն են և կելլեն կատարեալ երիտասարդի ներսումն, և նա չէ կարող դատարկանալ։ Դատարկ է այն երիտասարդը՝ որոյ հոգւոյ ջանասիրուԹեան եռն անցած է արդէն, ինչպէս անկեալ ծերերունը. այսպիսի երիտասարդն՝ կորուսած բոլորովին երիտասարդուԹեան փառքն՝ արդէն իսկ ծերացել է չերիտասարդացած.

և կը նմանի այն խնձորին, որ ծաղկիկէն նոր բաժանուած, և արևահիգ գարնուած, կը զառամի կընկնի գետին։ ԲնուԹեան պահանջը կը կատարէ հոգին երիտասարդին մէջ անդադար եռալով. երիտասարդները՝ միայն վոյԹ պիտի ունենան պիտանի գործերում իրենց շարժմունքները շարունակելու, որոյ հետևորդ արդիւնքը պիտի լինի որ քաջալերէ հետզհետէ հոգեկան ջանասիրուԹիւնը՝ և տէրդուԹիւն բերէ երիտասարդին։

Մարդուս՝ պէտքական և անհրաժեշտ գործերը՝ բազմազիմի շարժմունքներ ունին. որոց ամենքն էլ անհրաժեշտ հարկաւոր են, և որոց ամենուն մէջ վարժ պիտի լինի կատարեալ երիտասարդը՝ որ մարդկային կենաց ամենագերազանց հասակում կը գտնուի, որպէս զի լինի մարմնով ուժեղ և առոյն։

Աւելի ուժեղ և աւելի առոյն են միշտ այն երիտասարդները՝ որ ամենատեսակ պիտոյքներու ամենատեսակ գործերումն համարձակ կը մտնեն, և կը գործեն ամենայն արիուԹեամբ, և գործոյն մէջ կը տևեն առանց Թերատ ձգելու։ Կատարեալ երիտասարդի կատարեալ վաստակի գործերն են նոյն իսկ մարդկային անհրաժեշտ պիտոյքների պատրաստուԹեան գործերն. որ են.

ա. Ուտելեաց բանջարեղէններն ցանել, մշակել, քաղել, պահպանել, եփել և ուտելու յարմարցնել.

բ. Ընդեղէններն ցանել, ջրել, հնձել, մաքրել, ընտրել, մանրել, եփել, կերակուրի պատրաստել.

գ. Պտուղները՝ տնկել, խնամել (պարէտկներն ու այգիները մշակել), քաղել, պահպանել, հնձանել, կերակուրի պատրաստել։

դ. ԿաԹնեղէնները խնամել, անասունները դաբմանել, արօտի հանել, ջրել, ձմեռը խնամել, կԹել, մարել, մակարդել, պահել, պահպանել և կերակուրի պատրաստել.

ե. Մսեղէնները հոգալ, անասունները բուծել, դաբ-

մանել, մոլթել, աղել, ապխտել, պահպանել և կերակուրի պատրաստել.

գ. Երկիրը մշակել, բանջակ ցանել, քաղանել, քաղել, վեճհակել, կորզել, գզել, մանել, հինել, գործել, կարել, կարկատել.

է. Կանեփը ցանել, ջրել, քաղել, կեղևել, սանտրել, ոլորել, կտաւ գործել, կարել, կարկատել, թափել.

ը. Բուրդը խուզել, մաքրել, գզել, մանել, ներկել, գործել, կարել.

թ. Թուղթ ու շերամ մշակել, խնամել, մեռաքսն առնուլ, ոլորել, հինել, անկուածել, գործել, կարել, հագնելու պատրաստել։

ժ. Ջրհոր փորել, ջուր հանել, աղբիւր բանալ և ճանապարհ փորել.

ժա. Բնակարանի համար՝ քար կոտրել, տաշել, կոկել, սրբել, շարել, շաղախել, կիր վառել, մարել, բռնել, փայտ կտրել, գերան տաշել, տախտակ ճեղքել, քերել, սրբել, իրարու հագցնել, տուն շինել.

ժբ. Գործիք և գործարան պատրաստելու համար՝ հանք փորել, հանել, հալել, կռել, կռանել, ձուլել, թրծել և գործածելի անել.

ժգ. Ուսման համար՝ կարդալ, գրել, թուղթ շինել, մատեան կազմել, թանաք և գրիչ պատրաստել, տպել, սորվել, սորվեցնել.

ժդ. Ընկերական յարաբերութեանց համար ճանապարհ շինել, փլցնել, լեցնել, հարթել, գնալ, գալ, տանել ու բերել.

ժե. Արուեստները դիւրացնելու համար՝ ընտիր փորձառութիւնները ու փորձերն կրկնել, գիւտ անել և ուսուցանել։

Այս ամեն գործերն էլ մարդկային կենաց հարկաւոր գործեր են, որոց ամենապարզերն՝ որ աւելի նախնական են՝ ամենահարկաւոր են. և այս գործերուն կատարուելիք անձնական չարժումներն՝ առհասարակ օգտակար են մարմնական կազմուածքի զօրաւորութեան. եթէ մկիկը՝ սէտք եղած չափով գործէ այսպիսի գործեր պատանեկութեան օրերէն սկսած, նա՝ հոգւոյ ջանասիրութեան չափով ուժեղ ղէմք և ուժեղ մարմին ու ամուր ոսկոր կունենայ իւր բոլոր կեանքում. որ բուն իսկ անձնական հարստութիւն է, և մարմնոյ ամենամեծ արժանիքն՝ է երիտասարդութեան զօրաւորութիւնը, որ առիւծի սիրտ կը սնուցանէ, ոչ մի թշնամիէն չվախչիր, և ամեն արգելքներու ևս դիմագրաւ կը կենայ և կը յաղթէ։ Երիտասարդութեան այս փառքը՝ որ վողով չգնուիր՝ անկորուստ և անթերի աճեցնելու համար՝ պատանեկութեան առաջին ուժեղութեան նշաններէն սկսած՝ աւելու է աշխատասիրութեան մէջ, և այն՝ հարկաւոր գործոց աշխատութեան մէջ, և ամեն տեսակին մէջ, որ աւելի ուժեղ և աւելի ճարտար կանեն ձեռքերը։

Գործելու անվարժ, և երբեմն ժամանակն երբեմն հարկաւոր գործերուն պատշաճ կերպով բաշխելու անհմուտ մարդկին՝ եթէ մինանգամ աչքէ անցուցեն վերոգրեալ ամենահարկաւոր գործերու ցուցակը, մէկիկն ի մէկ այնպէս կը սոսկան, ու կասկին, որ յուսահատական հառաչանքով մը կ'ըսեն. «Ի՞նչպէս կարող է մարդ այսքան գործ կատարել մի տարուայ մէջոցում»։ Բայց գործելու վարժուած՝ և երբեմն ժամանակը պատշաճապէս բաշխելու հմուտ անձն՝ ամենևին չզարմանար. և նորա աչքին այնպէս կերևի, որ մի տարի ժամանակը շատ աւելի կը գայ մի մարդու՝ իւր ընտանիքին հարկաւոր գործերն աւարտելու. մանաւանդ թէ նորա աչքին կը դիւրանայ միշտ գործը՝ իւր հարկաւորութեան չափով միայն դիտելով, և ժամանակին այնպէս կը բաշխէ, որ ամեն եղանակին երբեն յարմարութեան գործերը կը գործէ և երբէք անգործ չանցուներ. այսպէս մէկ տարուայ կեսուն շաբաթներու վեց վեց օ-

բերումն անխուսափ աշխատելով, ամբողջ երեք հարիւր օրեր կը գործէ, և վաթսուն և հինգ օրեր ևս հոգեկան պետոյից աւելի մնայոց կունենայ։ Եւ մի մարդու 300 աւուր աշխատութեան արդիւնքն՝ արդէն իսկ լիապէս կը բաւականանայ նոյն մարդուն, և նորա ձեռքին նայող մանուկին և ծերին ամբողջ մի տարի, և աւելի ևս ժամանակ։ Անբան մրջիւնը՝ որ մի փոքր կենդանի է, իւր ժամանակը չիզօրսնդելով միայն՝ գալեան սկզբումն անմիջապէս կսկսի իւր տունն ու շտեմարանները մաքրել. հեռվհետէ կը մեծացնէ իւր բնակարանն ու շտեմարանը՝ քանի որ գետինը չէ ցամաքել. երբ գետինը կը ցամաքի, կսկսի իւր ձանապարհներն հարթել. անմիջապէս եռքը կսկսի իւր ուտելիքն շտեմարանել. ամարան անձրևային օրերում միայն կը փեչհեկէ իւր ընդեղէնները՝ և անձրևի գադարելէն եռքն՝ քանի որ գետինը չէ ցամաքել, կսկսի կչեպները և լեփիները դուրս կրել. գետինը՝ որ կը ցամաքի, գարձեալ իւր հունձքին կը հասնի. միայն ամարան օրերումն այնչափ շտեմարան կը լեցնէ, որ ամբողջ տարին եթէ ձիւնով ծածկուի երկիրը, նորա պաշարը գարձեալ բաւական է։ Մի մրջիւն՝ ամբողջ մի օրումն հազիւ թէ մի հատ ցորեն կարող է ուտել՝ իւր անձին կազմուածքին նայելով, բայց մի օրումն հարիւրին աւելի ցորեն հատ կամբարէ. և այս միայն գործի ժամանակը չվատնելով. և անկարօտ է իւր ամբողջ կեանքումն։

Եթէ անբան, մրջիւնն այսպէս անկարօտ է, որչափ ևս առաւել բանական մարդը, մանաւանդ ամենագեղացոյց տարիքին և աճելութեան հասած երիտասարդը՝ կարող է անկարօտ լինել, եթէ միայն հետևի իւր գործի ժամանակին ի գուր չանցնելու։ Եւ քանի պատիկ առաւել պետի գործէ և պատրաստէ իրեն պետոյքները, այն՝ ամեն մտքի ևս դիւրըմբռնելի է. միայն թէ պատանեկութեան օրերին սկսած չարունակ վարժութիւն հարկաւոր է որ կատարելութեան օրերումն կա-

տարեալ աշխատասիրութեան արդիւնք արտադրէ։

Մրթէ կարելի է, որ մի երիտասարդ իւր ամեն պետոյքն ինքնին իւր ձեռքով հոգայ տարւոր ընթացքումն։—Այո. մի երիտասարդ՝ եթէ կատարեալ մարդ է, կարող է իւր անձին ամեն պետոյքն ինքնին հոգալ և պատրաստել, և գերազանց երիտասարդութեան գօրութեանը և փառքին տիրանալ, և ամենայն դժուարութեանց յաղթել ուժով և ճարտարութեամբ։ Երկրի տարբեր կլիմաներում տարբեր բերքեր կարտադրէ բնութիւնը։ Կատարեալ երիտասարդն եթէ չկարողանայ գործել օտար բերքերու վերաբերեալ հարկաւոր գործեր, գոնէ պետի գիտենայ իւր հայրենիքի բերքերուն վերաբերեալ գործերը գործել։ Երիտասարդին որչափ որ ներէ իւր հայրենի երկրի բերքերն՝ այնչափ վարժ պետի լինի ամենատեսակ գործերում, որոյ մէջ միայն կը պահպանուի կատարեալ առողջութիւն մարմնոյ և հոգւոյ՝ իւր բոլորական նշանակութեամբ։ Հայրենի երկրի բնական բերքերուն յատուկ գործերումն վարժ եղող երիտասարդն՝ արդէն իսկ կատարեալ ուժոյ պնդութիւն կունենայ, և եթէ երբէք պատահի օտար երկրի բերքերու գործերուն՝ որոնց անծանօթ է ի մանկութենէ, դիւրաւ կը յարմարին իւր ձեռքերն ու ոտքերն. և դիւրաւ կը հմտանայ գործին բուն ճարտարութեանը. քան որում խիստ շատ գործեր՝ իրարու կը նմանին։

Զոր օրինակ սերմնացանութիւնն ու այգեգործութիւնը՝ միատեսակ գործ են մարդու համար. որոց պահանջած գիտութիւնն է երկիրը պարարտացնել։ Երկաթ և պղինձ՝ տարբեր երկիրներու և տարբեր կլիմաներու բերքեր են. որոց գործը միևնոյն է, և պահանջած գիտութիւնն ևս մի է.—պիտի փորես, որ խոնաշնայ, փոնի խոնաշ է, պիտի ծեծես, որ փորածոն. երբ որ պաղի, արբէն խործը է. իբ փործածոն, իբ փայլէ. անփործ իբ ծաղ, իբ ծանփորն։ Բամբակն ու կտաւը՝ այլ և այլ կլիմայի բերքեր են. որոց գործը գրեթէ միևնոյն է. խիստ փոքր զանազանութիւն ու-

նին։ Ուրեմն լրատու նման գործերէն մէկուն մէջ վարժ լինելն իսկ՝ երիտասարդական կատարելութիւն է բոլորովին՝ եթէ առողջութեան նկատմամբ միայն արժեցնենք, իսկ եթէ հարստութեան շնորհքին նկատմամբ ևս նայենք, այն ևս բաւական հմտութիւն է։

Երկրագործութեան վարժուած երիտասարդը՝ պատահմամբ բացօդեայ գիշերելով չհիւանդանար. երկաթագործութեան վարժ երիտասարդը՝ պատահական խորշակներուն չվտանգուիր. ձկնորսութեան վարժ երիտասարդը՝ պատահական ցուրտերուն չվնասուիր. հովուութեան վարժ երիտասարդը՝ գազանի տեսիլէն չսարսափիր. որսորդութեան վարժ երիտասարդը՝ գիտէ, թէ գազանաբարոյ աւազակի ձեռքէն ինչպէս կազատին. որ և է ձեռագործ արուեստի և խոշոր ձեռագործի վարժուած երիտասարդը՝ դիմացկուն և կաշմբուռն կը լինի։ Անարուեստ երիտասարդը՝ փափուկ կը լինի. ամեն մի օդային փոփոխութեանց մէջ դատ դատ հիւանդութիւններու և սէս սէս ցաւերու կը պատահի, կերածը չմարսեր. նեբքին հիւանդութիւններու կը բռնուի. բժշկի և դեղերու ամեն ժամանակ կարօտ է։ Փափկութիւնը՝ երիտասարդութեան այնպիսի մի արատն է, որ ատելի է ամեն մարդու. կատարեալ երիտասարդը՝ փափկութիւն պիտի չունենայ ամենևին՝ նորա տեսիլն ոտքէն մինչև գլուխը՝ միայն ոյժ պիտի ներկայացնէ. նորա կոխած տեղում՝ գետինը պիտի ճնշուի, քարը՝ քարի որ գարնէ, պիտի փշրուի. գահավէժէն պիտի ցատկէ, և չվնասուի. գլուխը պատի որ դիպչի, պիտի չցաւի, ճահիճներէն պիտի թռչի, կամուրջներու հաստատութիւնը պիտի լինի. ջուրը որ ընկնի, պիտի չխեղդուի։ Վերջապէս կատարեալ երիտասարդը՝ պատահական դիպուածներով պիտի չհիւանդանայ, հզօրի դէմ պիտի չահաբեկի, գժուարութեանց դէմ յաղթող պիտի հանդիսանայ. փափկութեան նշան ամենևին պիտի չունենայ՝ բաց ի Աստուծմէ վանենալու զգաստութիւնն

ու ընկերասիրութեան գթութիւնը։ Փափկութիւնը՝ երիտասարդին մահաբեր հիւանդութիւնն է, փափկութիւնը՝ երիտասարդին լերդը կրծող ցեցն է. փափկացած երիտասարդը՝ տղմաթաթախ խոզին աւելի գազիր է. ըստ որում խոզին մաքրելու յոյս կայ, բայց փափկացած երիտասարդին ապրեցնելու յոյս չկայ։ Փափկացած երիտասարդի հոգին միշտ դաւաճան յայտնուած է։

Թէ այժմու փափկութիւնն ինչպէս կը յառաջանայ, դիտենք մի երիտասարդի վերայ։

Պարոն Թորոսը՝ ժիր և կայտառ մի մանուկ էր, ինչպես նորա ծնողքը կը պատմեն. տակաւին ութը տարեկան հասակումն եղած ժամանակ՝ տան մէջ իւր մօր կատարած ամեն գործերն՝ անթերի կերպով կը կատարէր. միայն նորա չափ ճանըութիւն չէր կարող վերցնել, բայց՝ շարժելու, վազելու և գնալ գալու մէջ երեք անգամ աւելի արագ էր։ Գարնան օրերումն առաւօտէն մինչև երկուն թիթեռնիկներու եահէն կը վազվազէր, և շատ անգամ բոկոտն։ Երբ մօրը աչքէն հեռանար, իսկոյն ջրի առուին կը հասնէր, ձեռքով կը փորէր գետինը, առուէն ջուր կը վերցնէր, ցեխ կը շաղէր, փուռ կը շինէր, թոնիր կը շինէր, պատուհներ կը շինէր. տաշտներ ու կրկուտներ կը ժողովէր, փուռին ու թոնիրին մէջ կրակ կը վառէր, երբ ծուխը ծխնելոյզէն շիտակ վեր կելլէր, ուրախութենէն ծափ կը զարնէր ու կը ցատկտէր։ Ալիւրի տեղ հող կը մաղէր, կը թխէր, հաց կը ձեւացնէր, ու փուռին մէջ կեփէր. մի անգամ մօրմէն ծածուկ ալիւր առաւ, կոտրած կրեղանի տակին մէջ թխեց, հաց շինեց, ու իւր փուռին մէջ եփեց. երբ եփածը բերաւ, ու մայրն հաւանեց, ուրախութենէն սիրտը պիտի պատռէր։ Շատ ու շատ փորձեր փորձեց, որ իւր պատուհներուն մէջ բանջար եփէր, բայց ջուր որ լեցնէր, պատուհը կը փխրէր. մօրը կը հարցնէր, թէ ինչպես ամուր կը շինեն պատուհը, որ չփխրի. մայրը չէր գիտեր, որ պատասխանէր. հօրը՝ որ

հարցուց, նա էլ պատասխանեց միայն Թէ — բրուտը գիտէ։ —Բրուտն ինչ է։—Մարդ է։—Այս տեղ բրուտ կայ։—Կայ։ —Ո՛վ է։—Դէ այն փողոցի ծայրում մի կարմիր տուն կայ, որ կարմիր մագով մի տղայ ունին, այն տղուն հայրն է։—Թէ որ հարցնեմ, ինձի կը սորվեցնէ։— Կը սորվեցնէ։ Թորոսն առաւօտուն կանուխ որ եկաւ, այն փողոցի ծայրի տունն հասաւ, գնաց ու եկաւ մինչև կարմիր մագով Տիրանին տեսաւ. նորա հետ ընկերացաւ. աղիւս Թրծելու փուռ չինեցին մեհասին. բրուտի բանած հողէն առին պատուկ չինեցին, փուռը վառեցին ու Թրծեցին. վառելիքներն քիչ եկաւ։ Թորոսն ու Տիրանը փայտ ձի հեծած, բոլոր պարտէզներու անկիւնները վաղեցին, քալեցին մինչև երիկուն կրկուա ժողվեցին, Թրմնջուկ ու կարմիր բանջար քաղեցին. մինչև երեկուն պատուկները Թրծեցին։ Թորոսը՝ երբ տեսաւ, որ պատուկն գոյն եկաւ, վազեց մօրը պարծենցաւ, Թէ պատուկը չինեցինք, չատ լաւ եղել է. ես չինելը գիտէի, եւ ինձի էլ Տիրանէն սորվեցաւ։

Թորոս Տիրանի ընկերութենէն չէր կարող հեռանալ, այնուհետև մայրն հապիւ Թէ տան մէջ կը բռնէր, որ փոքր եղբայրներին զբաղեցնէ, նա ամեն մի պատեհում դուրս կը վազէր, դաշտերում երկար կերթային սունկ ու ծաղիկ ժողվելու, և ուրախութեամբ բեռնաւորուած կը գային, սունկն չարոցը, և ծաղկի կապոցը՝ նորա օրական աշխատութեան վարձն էին. նա գիտէր սունկերու տեսակները, և կը զանազանէր, անուններն կը տար, որ նոր կը սովորէր։ Ւոպմիր ՀԷՋ, ՃԷՐմակ ՀԷՋ, ՓԷՂՀ ՀԷՋ, Վրաստան, Հաւկեաց, Ինչպէ առնէ, Փայտի առնէ, Ւապրա Գայո Եւայլն։ Թորոսի բերած սունկը, մի անգամ ամբողջ երեկոյ տնեցւոց կերակուր դարձաւ։ Թորոս մէկ աւուր մէջ համբանք սորվեցաւ և մինչև հարիւր Թիւն անսխալ կը համրէր. գիտէր, Թէ 100-ին մէջ քանի 10 կայ, քանի 20 կայ. գիտէր, Թէ ժողոված սունկերնին որ բաժնեն, քանիկան հատ պիտի լինի։

Ապրիլի սկիզբներում Թորոսի մօր չերամն հունտէն արթնցել էր. Թորոս որ տեսաւ, կանչեց «մըջիւն, մըջիւն». մայրն իսկոյն եմացաւ, խրկեց Թորոսին, որ երթայ պարտէզէն Թուրթի փափուկ տերևները բերէ. գնաց բերաւ, ու սկիզբէն մինչև վերջն այբէ անցուց, Թէ մայրը չերամին ինչպէս փափկութեամբ տերևներուն վերայ կը ժողովէ, և առանձին չարշաւի վերայ կը տեղաւորցնէ. և Թուրթի տերևները մանրած վերայ կը ցանէ։ Թորոս ամբողջ չերամի ժամանակը՝ չերամի գործերում չձանձրացաւ. հունտի ծրարին վերջին մնացորդն էլ ինքը վերցուց, առանձին անկիւնում դարմանեց մինչև մօրը օրինակին հետևելով, մինչև չերամը մեծացաւ, Թրթուր դարձաւ, ու սկսեց բոժոժն հինուլ։ Թորոս կը հետևար չերամի բանուածքին վերայ, ժամերով կը նայէր, նորա բերնէն ելած Թելը տեսնել կուզէր, ու չէր տեսներ. մօրը կը հարցնէր, Թէ չերամն ուսկի կը գտնէ մետաքսը. այս հարցուփորձը կը խորհանար, մինչև «Աստուած գիտէ, Աստուած այնպէս ստեղծել է» կը վերջանար։ Թորոսի դարմանած չերամի բոժոժէն՝ հարիւր մսխալէն աւելի մետաքս դուրս եկաւ։ Նորա մայրն այս մետաքսն առանձին Թել քաշեց, և Թորոսին հետն առած՝ Սուրբ Խաչի տունն վանքը՝ ուխտ գնաց. Թորոսին ընծայեց Զարխափան Սուրբ Աստուածածնի տաճարին, և այն մետաքսը տալով, յետ առաւ Թորոսին։ Թորոսը կատարեալ մանուկ էր և իւր ձեռքի արդիւնքով նուիրուեցաւ Սուրբ տաճարին՝ իւր մօր անմռունչ ուխտովն ու պաղատանքով։

Թորոսն աճեցաւ հետզհետէ հասակով ու չնորհքով. տասը տարեկան էր, երբ սկսեց օրական երկերկու ժամ դպրոց գնալ. Տիրանին անբաժան ընկերն էր. նորա հետ աւելի կը սովորէր, ինչ որ դպրոցումը լսել էր. առաջին օրը բոլոր այբուբենը ճանաչեց։ Առաջին օրը տեղեկութիւն տուաւ հօրը, Թէ եօթանասուներկու տղաներ կային դպրոցումն, և Թէ ամենքն էլ իր-

մէն մեծ էին։ Հարցուց Հօրը, թէ ինչ ունի։ —Այն քո գիտնալու բանը չէ. ինչ պիտի անես դուն հիւանդը՝ որ գիտնալ կուզես։—Այսօր մի տղայ դպրոց եկած չէ եղեր. վարժապետն հարցուց ուրիշ տղայն, թէ ո՞ւր է, և նա պատասխանեց.—Թէ հիւանդ է։—Ուրեմն, ասաց Հայրը,—նա՝ խակ սալոր կերել է, սիրտը եփել է. վերան տաքուկիւն եկել է. մայրը օշինդը է խմցուցել, բերանը լեղցել է. առաւօտուն պառկած տեղէն չէ կարողացել ելլել. այսպէսնակ եղած տղային հէ՞նց է կասեն։ Թորոսը կայտառելէն կերթար դպրոց, և կայտառելէն կը դառնար միշտ Տիրանին հետ. պարտէզի ծառերուն վերայ կը բարձրանային մէկը միւսէն աւելի արագելով։ Տիրանենց պարտիզում Թռչունի բոյները շատ կային մեծ ու հին քարճենի ծառերուն վերայ, և Թիթեռնիներու փորերում. Թորոսենց պարտէզի ծառերը դեռ նորահաս էին. նոցա վերայ ճնճուղիները բոյն չէին դներ։ Թորոսին մեծ զբաղմունքն էր այնուհետև բոյները չինել և ծառերու ճիւղերումն հաստատել, որ Թռչունները գան, և մէջը բնակին։

Թորոս դեռ տասն տարեկան հասակումն էր, որ օրական երեք ժամ դպրոցում դաս կը սովորէր. վարժապետը կը վկայէր, թէ մէկ անգամ միայն լսելով կըմբռնէ, և երկու անգամ կրկնելէ ետքն այլ ևս չմոռանար. ամեն օր մի մի երգ կը սովորէր, ու կերգէր. նորա փոքր եղբայրներն ևս երգիչ դարձան դեռ իրենց տան մէջ։ Դիշերները քնած տեղն անգամ, երբեմն կը կարդար, երբեմն կերգէր, և երբեմն հաշուի վերայ կը վիճէր, ու Տիրանին հարցուփորձ կանէր։ Տասներկու տարեկան հասակումն արդէն իւր հօր հաշիւներում պատահած ամենադժուար խնդիրները ճշտութեամբ կը լուծէր, և հօրը կուրախացնէր։ Մէկ կը գործէր, երկու կը վազէր. պղերգութիւն ամենևին վերան չէր երևեր։

Թորոսը տակաւին տասնհինգ տարեկան չէր՝ երբ

դպրոցն աւարտեց, և տան կողքի այգումն ըստ կամի կաշխատէր. և տան գործերումն միշտ իւր մօր հրամանը կը կատարէր։ Եկեղեցումն ընթերցարար կսպասաւորէր, բուրվառ կը հասցնէր, գրակալ և մոմակալ և շարական ու սաղմոս կը դնէր, կը վերցնէր Ճիշդ պէտք եղած ժամանակումն։ Աւագերէցը Թորոսին մի նշանաւ կուտար ամեն պատարագի օրերում, և կը գովէր։ (Նորա չգտնուած օրերումն՝ գրակալ և մոմակալ ժամանակին պատրաստ չեն լիներ՝ կասէր աւագերէցը.)։ Թորոս՝ եկեղեցւոյ մէջ գալերներուն միաբանութեամբ երգած երգերն ամբողջ բերան գիտէր և կերգէր։

Մի կիրակամուտ երիկուն տակաւին ժամերգութիւնն սկսուած չէր, աշակերտները մտան աւանդատուն. և շապիկ կը հագնէին. մի տղայ Թորոսին ձեռքէն շապիկը քաշեց առաւ և մէջերնին վէճ բացուեցաւ. մայր դայեկը՝ որ մկրտելու երեխայ բերած էր և քահանային կսպասէր՝ հրամայեց, որ լռեն. Թորոս՝ շապիկը Թողուց ու լռեց, և ուրիշ մի շապիկ հագաւ, որ մի քիչ երկար էր։ Այս դէպքէն ետքը միւս շաբաթ երեկոյին մայր դայեկը՝ մի նոր կարած շապիկ բերաւ հագցուց Թորոսին. Թորոս դայեկին ձեռքը պագաւ, խնդա ուրախացաւ, երբ օձիքի վերայի նախշը կարդաց՝ —Հնոցանդ պղպէ ընծայ։ Թորոս՝ դայեկին ձեռքը մէկ մի ևս պագաւ, ու խնդրեց, որ Տիրանին էլ մէկ այնպէս շապիկ շինի. գովեց Տիրանին, թէ նա ինձ շատ բան սորվեցուցած է։ Դայեկը Թորոսի խնդիրը չմերժեց։

Թորոս ամենևին տխրած չունէր. մի անգամ տեսաւ, որ Տիրանն իրենց Հին հեծել է ու ջրելու կը տանի, այն իրիկունը խնդրեց Հօրմէն որ մի Հի գնէ։ Հայրը պատասխանեց, թէ մեր այգին մօտ է, մենք Հիւ պէտք չունինք։ Թորոս առաջին անգամ տխրեցաւ, երբ այս խօսքը լսեց. վասն զի Հի հեծնել շատ կը փափագէր։

Մի իրիկուն Թորոսին հարցուց Հայրը, թէ ինչ արհեստ տամ քեզ, որ սորվես։

Թորոս սկսեց իւր գիտցած արհեստները թուել. Նորա խօսքին մէջ և դէմքին վերայ բնաւ չերևցաւ որևիցէ հպարտութեան կամ պարծենկոտութեան նշան. նա մանկական գուարթութեամբ միայն կասէր.

—Ես փուռ չինել գիտեմ, տուն չինել գիտեմ. պտուկ ու պլպլակ (ջրի սափորակ) չինել գիտեմ. չերամ դարմանել գիտեմ, մեհաքս քաշել ու ոլորել գիտեմ. հինքի համբանքը գիտեմ, ձեռքս՝ որ հասնի, ոստայնանկելն էլ գիտեմ. կկոցը մի կողմէն կը նետես, ու սանտերքը կը քաշես, յետոյ միւս կողմէն կը նետես, դարձեալ սանտերքը կը քաշես, կըլինի շապկացու. ես հովուութիւն էլ գիտեմ, սրինգ որ կը փչեմ, ոչխարները կը խաղան. ամենէն շատ փախչող գառները ետևէն կը հասնեմ. մէկ անգամ օձ մը եկել էր, գառները չորս ոտքով վերան կը ցատկէին, կը կոխոտէին, քարով զարկի, սատկեցուցի. պանիր չինել գիտեմ, լուղ հանել գիտեմ։

Թորոս դեռ կը շարունակէր իւր գիտցած արհեստները համրել, հայրն ընդմիջեց ու հարցուց. այդ ամենը լաւ, դուն ինչ որ տեսնես, ու լաւ ուշադրութիւն դարձնես, կը հասկանաս ու կըսովրես. բայց թէ հիմա ինչ արհեստ տամ, որ լաւ սորվես, և շատ վաստակ անես. այն միայն ասա, թէ ինչ արհեստ սորվել կուզես։

Թորոս վերջացուց իւր թուումն, ու ասաց. արձակէ մեր այգեպանին, ու զես նշանակէ նորա տեղը, և լաւ կը նայեմ այգին։ Այս խօսքին վերայ բոլոր տեղը ծիծաղեցան։ Թորոս դարձեալ շարունակեց, թէ կարող եմ այգեպանութիւն անել, տնկիները՝ հանել և տնկել գիտեմ. ջրել գիտեմ, պատուաստը գիտեմ . . . ։

Հայրն ասաց, թէ դուն տակաւին պզտիկ ես. այգեպանութիւնը խոշոր ու ծանր գործ է. դուն տակաւին բահը չես կարող կարգին վերցնել. ծառերու չորերը չես կարող յօտել և մաքրել, յօտելու ճիւղերը չես ճանչնար. դուն այգեպան չինելու բաւական ուժ չունիս։

Թորոս դարձեալ կը պնդէր, թէ ինքը կարող է աւելի լաւ, և աւելի դիւրութեամբ այգին պահպանել ու բանեցնել. կասէր. ես ամենէն բարձր ծառերուն վերայ առանց սանդուղքի կելլեմ, այգեպանը չէ կարող ելլել։ Մեծ բահով չեմ կարող շատ փորել, բայց փոքր բրիչով աւելի շատ կը փորեմ. մէկ անգամ այգեպանին հետ ջուր կապելու գնացինք, նա սկսեց հեզհեզն լեցուած առուն բանալու, ես ուրիշ նոր մի առուակ բացի, և ջուրը մինչև այգին հասուցի. այգեպանը՝ որ տեսաւ, թէ ջուրը այգին հասաւ, զարմացաւ. բայց ասաց, թէ լզուր ես աշխատել. այդ ջուրը քիչ է, և այգին ջրելու չբաւեր. ես նորին գնացի իմ բացած առուին բերանէն մինչև ջրբաշխը՝ փոքր բրիչով խառնեցի, տակի տիղմերը քաշեցի, կողքը բարձրացուցի. ջուրը գալով գալով, առուակը մեծացել էր գիշերը. միւս օրը այգեպանն էլ տեսաւ, որ իմ առուին ջուրը՝ նորա բացած առուէն շատ է, նորին կասէր, թէ լզուր աշխատեցար. նա սուտ կասէր. իմ ջուրը նորա ջուրէն շատ էր. երբ որ ծառերուն տակը կապեցինք, նորա առուին ջուրը իմ ջուրէն աւելի ուշ կը լեցնէր ծառին տակը, Թորոսին այս խօսքերն օգուտ չարին, միայն խնդացուցին ամենքին։ Թորոսին մայրն ասաց, թէ շիտակ կասէ Թորոսը. առատ ջուր կուգայ դորա առուէն։ Թորոս վերջացուց խօսքը, ասելով. թէ որ չես հաւատար, վաղը ջուրն այգին կապած ժամանակ եկուր նայիր մի անգամ։

Թորոսին հայրն արդէն հաստատապէս որոշած էր իւր մտքում, թէ ինչ արհեստի պիտի տար նորան. և առանց յայտնելու, միւս օրը պազար տարաւ Թորոսին, մի կտաւ ծախողի յանձնեց, որ ծառայէ խանութին։ Թորոսին գործը խիստ թեթև էր. նա միայն կը բարձրանար և կտաւի այս ու այն թուխերը կը կիջեցնէր, ու դարձեալ իւրաքանչիւրն երեն տեղը կը շարէր խանութպանի հրամանին համեմատ. և խանութի դուռը կանգնած կը կենար։ Խանութպանը խանութում չեղած

ժամանակները մեկայն դրացի կանուխներու մանչերուն և իրմէն աւելի հասակաւոր երիտասարդներու և պատանիներու խօսակցութիւններուն ականջ կանէր, և լուռ կը մնար. (ըստ որում մինչ տանպէտք խօսքեր մեկայն կը լսէին). Թորոս այս ունկնդրութենէն ևս հրաժարեցաւ շուտով, և կանուխէն մեկայն կը մտածէր անգործ ժամանակներուն։

Տակաւին վեց ամիս անցած չէր, Թորոսին աշխոյժը կորաւ բոլորովին, և հետզհետէ կը նիհարնար. եօթներորդ ամսուն արիւն եկաւ քթէն մեծ քանակութեամբ. Թորոսն արդէն հիւանդ էր։ Կանուխէն հրամանին համեմատ տուն դարձաւ Թորոս. մայրը չճանաչեց իր որդւոյն։ Աղտաստւքը Թորոսին աչքը կոխեց, երբ լսեց մօրը հարցմունքը, թէ որո՞ւ տգան ես, ինչ կուզես. Թորոսին փոքր եղբայրները մեկայն վարեցան վզին, և շնիկը կը քծնէր, ու Թորոսին ծունկերը կը լիզէր։ Թորոսն հազիւ պատասխանեց մօրը հարցմունքին, թէ վարպետս կրկեց։

—Ինչ ձայնը կը լսեմ, Թորոս, այս ինչ ես եղել. կանուխ չեկաւ այսօր հայրդ. քանի օրեր է, որ գէշ երազներ կը տեսնէի։

Կրկին սկսեց արիւն հոսել Թորոսի քթէն. մայրը չփոթեցաւ նորա գլուխը լուանալէն, գլուխը ցնցելէն, արիւնը չէր դադարեր։ Դէորգին վազցուց, որ մայր գայեկին ձայն տայ, որ եկաւ շուտով, և անչփոթ կերպով ու զգուշութեամբ երկու մատին մէջ սեղմեց Թորոսի քթին և ցօնքերուն մէջտեղի երակները, արիւնը դադրեցաւ։ Մայր գայեկը նեղսրտեցաւ Թորոսի մօր վերայ. թէ ինչ խղճմտանք է, որ վեց ամիսներով աչքէ հեռի կը թողուք որդւոյն. այս ինչ հայրութիւն է, ինչ մայրութիւն է. մեր ազգին մէջ տեսնուած բան չէ, որ այս տարիքի տգան ծնողքէն հեռի ապրի։ Կեսուրս կասկը, թէ «ծնողքէն հեռի ապրող պատանիները կանուխ կը մարին։» Ո՛ր կտաւ ծախողը՝ կարգին մարդ է եղել

երբէք. ամենքն էլ իրենց արծաթին ցաւովն են. ոչ մէկին չտեսայ, որ այգեստէր լինէր, վարուցանքի հասնէր, ու լուրթիւն տեսնէր. նոքա իրենց գաւակներէն էլ խնդացած չունին. ուրիշին ձեռքը նայողին ապրուստն ինչ պիտի լինի»։

Թորոս ամբողջ ձմեռան ամիսները (նոյեմբերէն մինչև մայիս) հիւանդ էր. արեան հոսումն ժամանակ ժամանակ կը նորոգուէր։ Մարտի կէսերուն երբ գարնան հոտն ու տաքն սկսեց, Թորոս ինքնիրենը՝ այգին կիջնէր, մինչև տաքերն սկսեց ու Թորոս առողջացաւ։ Թորոսն առողջացաւ, բայց այն Թորոսը չէր. այլ ևս չէին լսուեր նորա բերնէն ոչ այն խորհրդոյզ հարցմունքներն, և ոչ այն կարճ ու կտրուկ պատասխանները։ Թորոս Տիրանին ընկերութիւնը կը վնտռէր, բայց նա ևս ուրիշ քաղաք էր։

Թորոս տեսաւ որ այգեպանը պատուաստ կը դնէր, սրեց իր գրչահատը, և այգիի մը անկիւնումն ուռճացած սերկևիլի բողբոջներէն մէկին վերայ տանձ պատուաստեց, ու միւսին վերայ խնձոր, և չորս կողմի կոյր ու բիճ բողբոջներն յօտեց պատուաստաններն անվրիպ կանաչեցան, և խիստ ուժով բարձրացան. սեպտեմբերի վերջերն այն ինչ տերևաթափն սկսել էր, Թորոս իր պատուաստի երկու ճիւղերն՝ ուրիշ մի ճաղատիկ սերկևիլի ճիւղի հետ հիւսեց մինացուց ու կապեց։ Թորոս հետզհետէ առողջացաւ ու կազդուրուեցաւ. այգեկութի գործերուն օգտակար եղաւ։ Հետևեալ գարնան երբ Թորոսին պատուաստները կանաչեցան ու ճաղկեցան, Թորոսի աշխոյժը կրկնակս սկսեց նորոգուիլ։ Սկսեց Թորոս մինչև որ ճաղկիկներն ամբողջ բացուեցան, և ապա պարծենալով մը ցոյց տուաւ հօրը՝ իր պատուաստները, որ զարմացաւ՝ երբ տեսաւ միևնոյն ճառն երեք գունեան ճաղկիկներով զարդարուած։ Պարտիզպանը մեկնեց. իր պատուաստած ճիւղերն են. և զարմանալով ասաց, թէ Թորոսի ձեռքն օրհնած ձեռք է,

լմ պատուաստները մինչ երեք տարի ետքը կը ծաղկին. և շատ անգամ կույր բողբոջներով կը կանաչեն. մինչդեռ Թորոսինը՝ մարդու հաստակով բարձրացել է մէկ ամառուայ մէջոցումն, ու առաջին գարնանը ծաղկել։ Պարտիզպանը՝ լսատ տուաւ Թորոսին, որ Հիւղերու հիւսուածքին մէջ մի քար հաստատէ, որ ծաղիկները պտուղ բռնելէ յառաջ չթափին։ Թորոս շատ հարցուփորձ արաւ, Թէ ինչ նշանակութիւն ունէր այն քարը, բայց նա ոչ մի պատասխան չուներ։ Թորոս մի քար ևս հաստատեց։

Թորոսին հայրը՝ պարտիզպանի գործանքին վերայ մնացը փոխեց. երիկունը խոստացաւ Թորոսին, Թէ այդեպան սլտի նշանակէ երեն. և ասաց, որ այգեպանի գործերուն լաւ ուշադրութիւն դարձնէ մէկ տարի ամբողջ։ Թորոս սկսեց աշխատել այգիում. քանի գնաց, զօրացաւ, բայց տակտունութիւնը կորուսած էր. նա՝ երբ մանուկ էր, և յոքնելն ինչ է չէր գիտեր, բայց այժմ մէջքը կը ցաւէր, և շուտ շուտ կը յոքնէր։

Թորոսի տարիքում՝ խանութի մէջ միայն նստելու կամ կանգնելու դատապարտուած երիտասարդները՝ խիստ շատ են, որոնք առհասարակ՝ հագիւ Թէ քսան տարեկան եղած, կը ցամաքին, կը դեղնին, և հիւանդութենէ բռնուած, հետզհետէ կը քամուին. որոց կեանքը կը նմանի՝ տարւի ոստայնի մէջ բռնուած ճանճի ջանքին, որ կը բզզայ, ու կոտնահարէ. բայց ինչ օգուտ. արդէն իսկ տարւը՝ նորա քիթն բռներ է, և արիւնը կը ծծէ։ Ինչպէս որ ապաժաման կը մեռնի ճանճը տարւի ոստայնում բռնուելով, այնպէս ապաժաման կը մեռնի և երիտասարդը՝ եթէ դատարկութեան կամ անգործութեան ցաւէն բռնուի։

Խանութներում կան նաև այնպիսի երիտասարդներ, որ մինչ ծանր ու թեթև գործերում դրաղուած, և շարժման մէջ կը լինին. նոցա վերայ Թէ և կերևի փոքը ինչ ուժ, բայց դարձեալ բնութեան օրէնքներու

պահանջքին համապատասխան աճած երիտասարդին ոչ արիւնութիւն ունին, և ոչ տոկունութիւնը. և տեսլ տեսլ կը հիւանդանան։ Փունեքնին՝ վախած, ախորժակնին՝ վակուած, դատարկ նստած կամ կանգնած, գլուխնին՝ Թմրած, ապարդիւն խորհուրդներում շփոթուած։ կուտեն, չեն մարսեր։—Հիւանդ չեն, հապա ինչ են։—Ամենևին առողջ չեն, մարդուն կապիկն են, ու ցորենի ոսկնը։ Մինչդեռ երկնքի տակ պարապելու սովոր եզող երիտասարդներն առհասարակ աւելի ուժեղ են, ու կայտառ. ախորժակով կուտեն, ու կը մարսեն, հանգիստ քուն կըլլան, անխոնջ կաշխատին, մինչև երիկուն տակուն կը տևեն, ու չեն հիւանդանար. Թէև քիչ կը խորհին, բայց խորհուրդնին կիրագործեն, արդիւնք յառաջ կը բերեն. երկրի բարիքներուն տէրն են, և կը վայելեն, մարմնով՝ ողջ, հոգով՝ ողջ, և երբև մարդ՝ խորհրդով ողջ—ողջախոհ։

Այժմու երիտասարդները՝ ձի հեծնելու կը վախնան, կառք հեծնելու կը փափագին. մինչևնոյն ժամանակ ձիուն սանձը չեն կարող գործածել, մի կառապան պէտք է, որ ձին սանձէ, կառքին լծէ, և կառավարէ։ Այսպիսի մի երիտասարդի բովանդակ վաստք յայնմ է, որ լծուլամարթի կանանց և կնամարդի մարդկանց ակումբներում՝ մանր ու արագ կաքաւել գիտէ. այն էլ՝ հինգ րոպէ միայն որ կաքաւէ, կը քրտնի, յոքնած դադրած, չունչը կտրած՝ կը նստի. հանգչելուն հետ՝ կը մրսի, միւս օրը կը հիւանդանայ, բժիշկը կուգայ, կը գնայ, ճամբու ծախքը կ'ստանայ, դեղ կը նշանակէ, և կեցուԹեան ու կենցաղի հրահանգ կուտայ. երիտասարդն հիւանդութեամբ կը սաստկանայ, կը Թեթևնայ, քաղցած, անմարս՝ կը նիհարանայ։ Եւ որպէս զի օրըստօրէ զօրանայ, բժիշկն իսկոյն հրաման կուտայ, որ դահլիճումն ամենայն օր տասն անգամներ գնայ, գայ. այն էլ՝ կամաց կամաց ոտնափոխը համբերով, որ չլինի Թէ ոտքը ցաւի, և ջղերը ծռմռին։ Կանցնին չուտով տաս-

նեակ օրեր, բժիշկն այլևս կը հրամայէ, որ քայլերը կրկնապատկէ։ Կանոնին շաւտով տասնեակ օրեր, բժիշկն նոյնն կը հրամայէ, որ քանի մ՚օրեր մարմնամարզութիւն ևս անէ. այսինքն երկու անգամ աջ ոտքը շարժէ մինչև կոճերը, և ապա երկու անգամ ձախ ոտքը. երկու անգամ աջ ձեռքը շարժէ վեր ու վար, և երկու անգամ ձախ ձեռքը, ապա երկու անգամ ևս երկու ձեռքը միասին վեր վար անէ, և տարածէ. դարձեալ կրկնէ, դարձեալ կրկնէ, դարձեալ կրկնէ, մինչև յոգնի, կամ ուրքան որ կը տոկայ։

Այն բժիշկն՝ եթէ այս հիւանդ երիտասարդին հայրը լինէր, այս մարմնամարզական շարժումները պիտի չհրամայէր. այլ՝ տան մէջ վարձած բանւորին հաշիւը պիտի տեսնէր, արձակէր, և երիտասարդին պիտի հրամայէր, որ առաւօտուն կանուխ ելլէ տեղէն, հագուի, լուացուի՝ շուտով երթայ ջրհորէն ջուր քաշէ, բերէ լուացարանը լեցնէ, երթայ ածուխ ջարդէ, բերէ կրակարանը կազմէ ու վառէ. վայտ կոտրէ, վեր բերէ. նորէն լուացուի, և հանգչի։ Նա՝ հիւանդ երիտասարդը՝ այսքան գործ միայն կատարելով՝ բժշկի հրամայած մարմնամարզական շարժումներն (որոնք իսկապէս օգտակար են կազդուրուելու), աւելի բաւականութեամբ և աւելի ևս համեմատական կանոնաւորութեամբ կատարած կը լինի. ըստ որում մինչև ածուխ ջարդելը՝ հարկ է որ կռանը մինչև քսան անգամներ գոյգ ձեռքով վերցնէ, և իջեցնէ. և կռանին ծանրութիւնն այնպիսի մի կշիռ կը լինի նորա ձեռքումն, որ ամեն մի շարժումն էլ միատեսակ և միահաւասար կը լինին. և ձեռքի շարժման հետ, ամբողջ իրանունքն ու բոլոր մարմինը ևս կը ցնցուին կանոնաւոր կերպով։ Այս կանոնաւոր մարմնամարզական շարժումներն պիտի կատարուին նաև վայտ կոտրելու և ջրհորէն ջուր քաշելու ժամանակ։

Բժիշկը՝ (մեր աշխարհումն) այս կազդուրիչ մարմնամարզութիւնը՝ կը հրամայէ այն երիտասարդներուն, որոց երիտասարդական արիութիւնն արդէն լսկ (մանկութեան օրերէն կամ պատանեկութեան օրերէն) հպարտութեամբ՝ ուռեցուորած է, նախանձով՝ այրած է և տոչորած, բարկութեամբ՝ գայրացած է և խոցուած, ծուլութեամբ՝ պղերգացած է և ժանգոտած, ագահութեամբ՝ ծանրաբեռնուած է և ճնշուած, որկրամոլութեամբ՝ հարբած է և լեզքը թառուցած, և ներքին վէրքերով ապականուած ու հոտած, և թերևս շնութեամբ էլ՝ բոլոր ոսկորներուն ծուծը քամուած է, և կը նմանի փոը լինկած ծառի. բժիշկն այսպիսի հրամանէն՝ այնքան միայն օգուտ կը քաղէն այսպիսիներն, ինչքան որ փոը լինկած ծառը՝ պարտիզպանի դարմանէն. նորա պտուղն այլ ևս անսերմն է, և անհամ. ոչ մի պարարտութիւն, և ոչ մի դարման չէ կարող ծառին ծուծը նորոգել, մինչև որ դայ այգուն տէրը, և հրամայէ կտրել այն ծառը, և նորա տեղը նոր տնկի տնկել։

Կատարեալ հայրն՝ այս կազդուրիչ շարժումներումն անխափան և անընդհատ կը խնամէ իւր որդուն՝ նորա մանկութեան օրերէն սկսած մինչև կատարեալ մարդ լինելը։ Կատարեալ հօր՝ բազդաւորութեան մէկ հատիկ օժիտն է իւր որդուն այն երիտասարդական կատարելութիւնը՝ որ միշտ խոնարհ է, միշտ հեզ է, միշտ եղբօր սիրովը վառուած, միշտ արի է, և հուժկու, և ոչ մի դժուարութենէ երես չդարձնող, և անդուլ գործօն է ամենատեսակ պիտոյքներում, միշտ առատ է, միշտ չափաւոր է, և միշտ պարկեշտ, և ոչ երբէք կը հիւանդանայ. այլ ժիր ձեռքով, արագ ոտքով, և լուսաւոր աչքով ու առատ սրտով միշտ արդիւնաւոր է, սիրով լի, և բարիքով հարուստ, Աստուծմէ երկիւղած, և մարդկանց հաճոյ։ Եւ կաճի որդւոց յորդի ջրաբխ ծառի պէս, որ միայն է կատարեալ ողջախոհութեան կեանք՝ որ չանասկր հոգւոյ թելադրած անընդհատ

աշխատասիրութեան՝ և բանական մտքի խորհրդոց ներգործած տեղղութեան՝ մխազոյգ հասունացուցած պտուղն է։

Ջանասէր հոգին՝ երիտասարդութեան այն ներքին կատարելութիւնն է, որ ամեն մի դիպուածում կարտայայտուի, թէ՝ ջանասէր հոգի սնուցանող երիտասարդը՝ կարող չէ երբէք դատարկութեամբ ժամանակ անցուցանել. մինչև անգամ քիչ ժամանակում կատարուելիք գործը՝ չէ կարող երկար ժամանակի համար երկնցնել և տևեցնել, եթէ ոչ՝ միայն կրկնելով աշխատութիւնը։ Ջանասէր հոգի սնուցանող երիտասարդին ամեն մի շարժումն արագ է, նորա տեսութիւնը՝ թափանցանց է, ճաշակն՝ անպատիը, հոտառութիւնը՝ սուր. չոշափումն՝ ընտրող, լսողութիւնն՝ ամենազգաստ և անվրէպ. նորա խորհուրդն առողջ է, գիւտը՝ գործառոյթ, հարցասիրութիւնը՝ խորայոյզ, պատասխանն՝ արմատական, հակիրճ, բացայայտ և ազացուցական. խօսակցութիւնը՝ պիտանի և քաղցրալուր, ընկերութիւնը՝ սիրով լի, նորա արիութիւնն անընկճելի է դժուարութեանց դէմ, անվհատ՝ խաչընդոտանեաց դէմ, աներկիւղ՝ հակառակորդաց դէմ, իրաւարար՝ զրկողաց դէմ, միշտ կը հատուցանէ իւր պարտքը և տկարներուն, քաջաց հետ՝ քաջ է, ճշմարտութեան բարեկամ, ստութեան թշնամի, մեծին՝ սիրելի, վհռքին՝ օրհնակելի, հասակակիցներուն համեմը, ամեն բերանէ գովուած, ամեն գործում աջողակ, բարութեամբ՝ հարուստ, անհրաժեշտ պիտոյքներում անկարօտ, հող կը բռնէ, գործ կը լինի, երբ կաւարտի, հաց կը լինի։ Ջանասէր հոգին՝ երկու ոտքով կաղ մանուկին մէջ՝ աւելի աջողակ և թեթև կը ճանապարհորդէ, քան թէ վատ հոգին՝ երկու ոտքով առողջ մարդուն մէջ։ Ջանասէր հոգին՝ ի ծնէ կոյր մարդուն մէջ՝ շատ աւելի որոշ կը ճանաչէ նկարագիրներն ու կեանքի պատկերներն, քան թէ վատ հոգին՝ աչքերովն առողջ մարդուն մէջ։ Ջանասէր հոգին՝ շատ աւելի

ճարտար և արագ կը գործէ ձեռնատ մարդուն մէջ, քան թէ վատ հոգին՝ երկու ձեռքով առողջ մարդուն մէջ։ Ջանասէր հոգին՝ շատ աւելի կը հասկանայ և կը հասկացնէ ի ծնէ խուլ և համր մարդուն մէջ, քան թէ վատ հոգին՝ առողջ ականջ և արձակլեզու մարդուն մէջ։ Երկու աչքով կոյր քնարերգակն՝ աւելի ևս աջողակութեամբ կը կազմէ քնարը, կը կարգադրէ ձիւերը, կը դասաւորէ թելերը, կը համեմատէ և կը նշանակէ աստիճանները, կը վոխէ կտրած թելերն, կուղղէ ծռուած աստիճաններն, և կը նուագէ սքանչելի նաև մուրթ գիշերներում, քան թէ երկու աչքով տեսնող մեր Կակոսը՝ որ մի թել կապելու համար՝ յետ կը քշէ ամբոխը՝ որ չվատիանեն արևը։

Երիտասարդութեան ամենաբարձր պարգևն է՝ Ջանասէր հոգւոյ արտաքին նշաններն—Աչխատանք և Տքնութիւն։

Ժ.Ջ. ՋԱՆԱՍԷՐ ՀՈԳՒՈՅ ՆՇԱՆՆԵՐՆ ՕՐԻՈՐԴԱՅ

ՎԵՐԱՅ.

Հասած օրիորդներուն աշխատասիրութիւնն ևս անընդհատ պիտի լինի, ինչպէս կատարեալ երիտասարդներունը. նոցա ամեն աշխատութիւնն էլ ըստ բնութեան՝ մարդկային կենաց պիտոյքներու պատրաստութիւնները պիտի լինին. որպէս զի երենց ամբողջ կեանքում՝ երենց ընտանիքին և ընդհանուր մարդկային ընկերութեանն պիտանի և օգտակար մի անձն լինին։ Ջանասէր հոգի սնուցանող օրիորդաց ամառնային գործերն են. անդրումն երկրագործութեան պարապող երիտասարդներուն կերակուրը պատրաստել, բամբակի և կանեփի արտերուն քաղհանքն ու գարմանը հոգալ և մշակել. ծռու-

ներում օրըստօրէական ուտելեաց հարկաւոր եղած հաՄեմունները, բանջարեղէնները, խաւարտեղէնները, ընդեղէնները մշակել, և գործածել. դաշտում ոչխարն ու կովերը կթել, լուզ ու պանիր պատրաստել, շերամը ժամանակին ձեռք առնուլ և մետաքս հասցնել. ոչխարաց կաուրքը, արմտեաց հունձքն, ու կալորայն, պտղոց այգեկութիքն ու հնձանահարութիւնն առհասարակ գործ են և օրիորդաց. ձմեռնային պաշարներու մաքրութիւնն ու ընտրութիւնը, աղելն ու ապխտելը, աղօնելն ու ամպարելը, քաղցրաւեններու և գինիներու դտելն, եփելը, և ամանելը, պտուղներու կախանելը, մրգերու շարոցները և բանջարեղէններու կապոցները, սոքա ամենքն էլ աշնանային գործերն են օրիորդաց: Բամբակին քաղը, կանեփին որայն օրիորդաց ձեռքով մեայն կը լրանան: Բամբակ վերձեկելը, կորզելը, գզելը, պատրուգելը, մանելը, հինելը, ոստայնանկելը, ներկելը, կարելը, թաւիլելը, նախշելը՝ ձմեռնային գործն է օրիորդաց: Կանեփին կձեւելը, սանտրելը, ոլորելը, հինելը, գործելը, թաւիլելը, կարելը և կարկատելն օրիորդաց ձմեռնային գործն է: Բուրդ լուանալը, չորցնելը, գզելը, սանտրելը, մանելը, ներկելը, հիւսելը, գործելը, և կարելը՝ օրիորդաց գործն է: Ընտանեկան ամենօրեայ հացթխութիւնը, հաց եփելը, կերակուր պատրաստելը, տան մաքրութիւնը, լուացքը, և կարկատանն ու հիւսուածքը՝ օրիորդաց սեռական գործերն են:

Ջանասէր հոգի սնուցանող օրիորդներն՝ աշխատութեան յատուկ օրերումն իրենց ձեռքում կունենան գզրարկ ազեղն ու չափը. մանելու բոքը կամ ձախարակը, կամ իւիկը. գործելու մեքենան, ներկին խալիները, կարկ մեքենան ու սեղանը. գործգի հինքն ու անկուածը, ընտանի և ազգային սովորական զարդարանքին նախշելու գործկալը (կէքլկէ). և արտադրած անկուածները: Նոցա համար սովորական զբօսանք է հաց և կերակուր պատրաստելու ամենօրեայ գործերն:

նասէր օրիորդներն երբէք պատարկութեան ժամ չունին. նոքա հազիւ թէ ժամանակ կը գտնեն իրենց մօր և նանին և ուրիշ ազգական պառաւներուն բերանացի աւանդած պատմութիւններն լսելու. մեայն կիւրակէ և տօն օրերը միջոց կունենան ընդարձակ ընկերակցական զբօսանքի, յորում կը կատարելագործեն իրենց բանական հմտութիւնը, եկեղեցական և անհետական պատմութիւններ և նրատներ կարդալով: Ջանասէր հոգի սնուցանող օրիորդները շատ անգամ իրենց երիտասարդ եղբայրներուն ևս թելադիր կը լինին՝ իրենց մեքենաներու պակասող կամ վնասուած մի պրկուն, կամ մի ատամը, կամ մի զսպանակը շինելու, նորոգելու, և խափանուած մեքենան գործածելի անելու:

Հայաստանի մէջ Հայ կանանց կեանքումն ընդհանուր երևոյթ էր, որ հագուստներու վերաբերեալ ամեն մի նախնական և լրացուցիչ գործերն՝ օրիորդաց և կանանց ձեռքով մեայն կը հոգացուին. երիտասարդներն այս մասում մեայն բամբակի և կանեփի արտերը կը վարեն, ոչխարի բուրդը և այծի մազը կը խուզեն, և հագուստի պատրաստութեան գործիքներն ու մեքենաները կը շինեն, կը նորոգեն: Մետաքսի սկզբնաւորութիւնն ու առաւտութիւնն Հայաստանի գաւառներում՝ Հայ աղջիկներու աշխատութեան արգիւնքն է: Մի քանի գաւառներում Հայ օրիորդաց գործած բարակաման և նրբաթել բրդեայ շալերն՝ երևելի և մեծատուն ընտանեաց մէջ ճոխութեան զգեստ կը լինին. որոնք առհասարակ եւրոպացի կերպասներու հաւասար փայլելով հանդերձ, տասնապատիկ անգամ աւելի դիմացկուն են նոցա համեմատութեամբ: Հայ օրիորդներու անկուածած գործերն՝ այժմ շատ տեղերում իրրև երեւելի զարդարանք կը գործածուին պատուաւոր հիւրեր մեծարելու ընդունարաններում, որոց վերայ փայլող բնական ամեն տեսակ գոյներու կենդանի փայլը՝ կը զարմացնէ շատ տեսնողներին: Հայոց վանքերում և

եկեղեցիներուն՝ տպագրութեան գիւտէն յառաջ՝ գրուած հին ձեռագիրներու նկարներն՝ ուրիշ ազգաց մէջ գտնուած շատ նկարներու գոյներէն աւելի կենդանի կը փայլին. այս ներկերն ալ Հայաստանի օրիորդաց ձեռքի զանգուածներն են, ծաղիկներէ և զանազան բոյսերէ քամած և եփած։ Հայաստանի ոչ մի գիւղում հայ եփողի խանութ չկայ. այն տեղ ամեն տուն իւր յատուկ փուռն ու թոնիրն ունի, և ամեն տան մէջ աղջկանց գործն է հայ թխելն ու եփելն ամեն ժամանակ։ Հայոց մայրերն ու աղջիկներն այնչափ գործ կը կատարեն, որ նոցա ամեն մինը մի առ մի թուելու համար՝ ամբողջ մի տարի պէտք է ժամանակագրելու մի մօր և մի օրիորդի գործերն, որ կարելի չինի անթերի մէջ բերել։

Հայ օրիորդներու արհեստական կենաց այս բազմադիմի գործունէութեան նկարագիրն անշուշտ անհատաւալի և անկարելի կը թուի այն օրիորդաց ականջին՝ որոնք մի անգամ քաղաքացիացել են, և հայութեան կեանքը մոռացել. որոնք զարմանալով կը հարցնեն, թէ —Այդչափ անհաւանելի չարչարանքի արդիւնքն ինչ է, և ինչ կը շահին այդպէս անհանգիստ և չարունակ տանջանքէն։—Այս չարչարանքի նմանող անգուլ գործունէութեան պայծառ արդիւնքն են նոյն իսկ Հայոց մայրերը. որոնք միշտ կատարեալ երիտասարդի վերին աստիճանի ուժն ունին. ծոյլ երիտասարդներին կը բռնեն կատաքէն վար կը նետեն. չարութիւն անող կովերուն ականջէն բռնած՝ երենց ուզած կողմը կը պտտցնեն. հօրեղբուն ականջէն բռնած՝ դիմացը կը նետեն. առանց տքալու՝ որդի կը ծնին. առանց երբէք հիւանդանալու՝ եօթասունէն աւելի տարիներ կ'ապրին. քառասունէն աւելի երենց որդիքն ու թոռները կը տեսնեն. քսան, երեսուն և աւելի ևս թագուոր ու թագուհի կօրհնեն. երենց նախնեաց բերանացի աւանդութիւններն՝ անմոռաց կաւանդեն երենց յետնորդներուն. խոր ծերութեան կը հասնին. առանց զառամելու, գուարթ սրտով, կայտառ հոգւով, կարմիր երեսներով, ժիր և անգուլ անձնաւորութեամբ՝ (շատ անգամ) առանց մահիճ ընկնելու՝ մանաւանդ Ճախարակին, կամ կաժարին, կամ մեռաքսոլոր բոլքն առաջ նստած տեղերնին հանգիստ կը մեռնին. մեռած տեղերը դեռ գործիքը ձեռքերնին ամեն եկողին կը վկայուին, թէ մինչև ի մահ ժիր էին, ջանասէր հոգի կը անուցանէին։ Նոցա գագաղին շուրջը հինգ հարիւրէն աւելի ազգականներ, և տասնաւոր բարեբաստիկ որբեր ու այրիներ կանգնած՝ նոցա յիշատակը կօրհնեն ու կը գովեն. նոցա տապանաքարերը՝ սուտ արձանագիր չեն ունենար ամենևին. այլ միայն մի խաչ, և մի գործիքի նշան, որնոր ձեռներումը մեռած կը լինին։ Ահա մի անմռունչ արձան, որ լռական պատկերով կը ներկայացնէ ամեն աչքերու, թէ սոցա տակ պահուած ոսկորներն՝ ջանասէր հոգւոյ գանձարան են եղել, որոց միմիայն յատուկ է ճշմարիտ աստուածապաշտութեան պահանջած բարեպաշտութիւնն ու գործը։

Այժմու օրիորդներն ալ շատ հետամուտ են գեղեցիկ տեսիլ ունենալու և ամենուն աչքն ու միտքը գրաւելու. որուն հասնելու համար մեծամեծ ծախուց կենթարկեն երենց ծնողքին կամ եղբօրը, և երենք իսկ չարաչար տանջանքներում կը ձնշուին. և այս ամեն ջանքն ի զուր կը ջանան. ըստ որում բնաւ չեն գիտեր, թէ բուն գեղեցկութիւնը՝ արհեստական աշխատասիրութեան ծաղիկն է, և ողջախոհական պարկեշտութեան ճայճը՝ որ կատարելապէս կը ծաղկի միայն ջանասէր հոգւի անուցանող գլուխներու դէմքերուն և ամբողջ տեսիլն վերայ։ Արհեստական և բնական գեղեցկութեանց տարբերութիւնն ու բնականին առաւելութիւնն ապացուցանող մի իրական դէմք դնենք այս տեղ, որով հաստատապէս կարելի է ուսանիլ, թէ բնութեան գեղեցկութիւնը՝ փոդով գնել կարելի չէ, այլ միայն բնութեան օրէնքներումն ձեռնող գլուխներու վերայ կը

ծաղկէ և կը փայլէ։ Ա.հաւասիկ նոյն դէմքէ նկարագիրը՝ ակնատեսի բերնէն։

Վանցի մի պառաւ կ'ըսի՝ եօթանասուն տարին անցած՝ 1863 Յուլիսին երուսաղէմ ուխտի գնալու ճանապարհորդութեան մէջ Կոստանդնուպոլիս կը հանդիպի և իւր որդւոյն մօտ կ'իջևանի՝ որ մի մեծատան մօտ կը ծառայէր տնտեսական գործերուն։ Մեծատունն երկու աղջիկ ունէր չափահաս. այս աղջիկները հիացմամբ կը նային վանցի պառաւի երեսին. կը մօտենան իրեն, և երկայն ու բարակ հարցուփորձեր կանեն, թէ ինչ տեսակ ներկ կը քսէ երեսին, որ այնպէս կարմիր կը ցոլայ։

—Վա՛յ մեղքիս, ոչինչ չեմ քսեր. մի՛թէ մարդու երեսին նո՛ր կը քսեն։

Պառաւին պատասխանն այս էր միայն, և ուրիշ ոչինչ. բայց մեծատան աղջիկները չէին կարող հաւատալ, թէ նորա երեսի գոյնը՝ բնական էր. և կպաչէին ու կսեղմէին պառաւին, որ սորվեցնէ իրենց այն ներկը. մինչև անգամ վախ կը խոստանային։ Որչափ որ մեծատան աղջիկները կը զարմանային պառաւի բնական դէմքին և տեսնելին, աւելի ևս կը զարմանար պառաւը՝ նոցա ոչ բնական վարքին և բոլորովին անպատկառ բարքին ու պատուած երեսներուն. և մին մին կասկը պառաւն ամչնալով, թէ «Սոքա մօրմէ ծնած աղջիկք չեն, սատանէք են»։ Աղջիկները ամենևին տեղեկութիւն անգամ չունէին, թէ այն պառաւի աղջիկները ինչպէս կը վարուէին նորա տարիքն ունեցող պառաւներուն հետ։ Ե՛ւ այսպէս ուժգին կը թախանձէին ու կսեղմէին պառաւին, որ յայտնէ իրենց, թէ ինչ դեղ կամ ներկ քսել է երեսին։ Վերջապէս Ճարերնին հատած խնդրեցին որ թոյլ տայ իրենց՝ որ վրձնեն, եթէ ներկ քսած չէ։ Այս խօսակցութիւնը քանի կերկարի, պառաւն ամօթէն հեռդհետէ կը կարմրի։ Մի երեսսրբիչ կը թացացնէ մէկը, և կուգայ. կը բռնեն պառաւի ձեռքէն,

պառաւն յետ յետ կերթայ, և մին մին կը ձեռայ «Հողս գլուխներդ»։ Աղջկանց մայրն էլ օգնութիւն կը հասնի, կը խնդրէ պառաւէն, որ ասէ, կատարէ նոցա խնդիրը. պառաւն աւելի ևս կը զարմանայ։ Մայր ու աղջիկներ՝ երեքը մէկ տեղ կը բռնեն պառաւին ձեռքերէն, և հազիւ թէ բազմոցին կը նստեցնեն. և թաց երեսսրբիչը պինդ պինդ պառաւին երեսը կը քսեն, որ տեսնեն թէ ինչ ներկ կամ իւղ պիտի դուրս գայ երեսէն. քանի կը քսեն, ու կը պնդացնեն, պառաւին կարմրութիւնը կաւելանայ, և ուրիշ ոչինչ դուրս չգար. և աղջիկներն իրենց մօրը հետ մինասին կը համոզուին, թէ պառաւին գեղեցկութիւնը բնական է, և քանի սրբեն այնքան կը պայծառանայ։ Խեղճ պառաւն ամօթէն ու նեղութենէն քրտինքի մէջ պաթած, հազիւ կը պրծնի ձեռքերնէն, ու կը փախչի։

Այսպէս կը համեմատի ժրագլուխ և չանասէր պառաւի գեղեցկութիւնը՝ Թուլամորթ, դատարկաշրջիկ, ու չաղփաղփ օրիորդներու տգեղութեան կամ չնծու գեղեցկութեան հետ։ Այժմու օրիորդներն՝ ու պառաւութիւն չմտաբերող կանայք կը սիրեն գեղեցկութիւնը, բայց միևնոյն ժամանակ չատերը կան, որ գեղեցկանալու շաւղէն դուրս կը քայլեն. գերե եղած այն կարծիքին, թէ գեղեցկութիւնը կարելի է գնել իրենց հայրերու կամ մայրերու հարստութիւնով. բայց գեղեցկութիւնը՝ չանասէր հոգւոյ նշանն է միայն, և պարկեշտութեան խայծը։ Հոգին ըստ ինքեան չանասէր է և միշտ եռանդոտ, բաւական է միայն տակալ պիտանի աշխատասիրութեան մէջ. և ահա բնական գեղեցկութիւնն արդէն իսկ բաւական է, առանց գոյներու խորութեան։

Ջանասէր երիտասարդին և օրիորդին աշխատասիրութեան՝ կարելի է այսպիսի մի սահման դնել.— Կատարեալ է այն երիտասարդի աշխատասիրութիւնն՝ եթէ նա կարող է իւր հայրենի երկրի բնական բերքերն արդիւնաւորել ըստ ամենայն արհեստականու-

թեան, և նոյն բերքերն, նոյն իսկ իւր անձին, իւր ընտանիքին, իւր աշխարհին, և բոլոր այն աշխարհներուն՝ որ նոյն բերքերուն կարօտութիւն ունին՝ բնական պիտոյքներուն գործածելի անել. կամ թէ ասել. Կատարեալ աշխատասէրը է այն երիտասարդը՝ որ իւր հայրենի երկրի բերքերը՝ մարդկային անհրաժեշտ պիտոյքներուն գործածելի անելու ամեն արհեստներուն հմուտ է, և նոցա մէջ պատահած ամեն մի ծանրութեանց և դժուարութեանց յաղթելու չափ արիութիւն և տոկունութիւն ունի։ Կատարեալ աշխատասէրը է և այն օրիորդը, որ հայրենի երկրին բերքերն իրենց տան մէջ բոլոր ընտանիքին գործածելի անելու ամեն գործերուն հմուտ է, և ինքնին կարող է կատարել, կամ իրմէն փոքրերուն սորվեցնելով առաջնորդել։

Այն կանայքն ու օրիորդները՝ որ միայն ծառաներու և աղախիններու հրամայելու վարժուած են, իրենց տան շահն ու օգուտը միշտ կը կորսնցնեն. և ոչ երբէք կը ձանաչեն պիտանին ու օգտակարը. այլ միշտ կը խաբուին չողոքորթութենէ, և իրենց տունը կաղքատացնեն։

ԺԷ. ՈՂՋԱԽՈՀԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ.

Երիտասարդներու ընկերութեան մէջ՝ ծերերն, հայրերն ու կանանց մարդիկ՝ առհասարակ խօսակցութեան նիւթ պիտի անեն իրենց բերանումն՝ նորանոր արուեստներու գիւտն, սկզբունքն ու գիտութիւնը. անցեալ ժամանակի մարդկային ընկերականութեան կատարեալ կեանքն ու համեստութիւնը. քրիստոնէական ս. կրօնի պահանջած առաքինութիւնները, ու նոցա գործերը. հին պատմութեանց մէջ երևելի եղած քաջ քաջ անձանց գործերն ու քաջութիւնները. և թէ քաջութիւն և արիութիւն

այնչափ աւելի արժանաւոր են, որչափ որ մեծաթիւ բագմութեան կեանքին օգտակար լինին. և թէ բնական ձիրք ունեցող և իրենց ազգին կամ ընդհանուր աշխարհին օգուտն ու կեանքն ինկատի չունեցող անձնասէր անձինքն՝ որչափ վնասակար եղած են իրենց հպարտութեան և նախանձու կիրքերովն մոլուած. և թէ բնական կամ կրթական ձիրք և շնորհ ունեցող այն անձինքն՝ որ իրենց անձը նուիրել են մարդկային ընկերականութեան օգտին ծառայելու՝ որչափ աւելի օգտակար եղած են և փառաւորուած ամեն ազգաց պատմութիւններուն. և թէ մեր օրերում մի գիւղական ժողովուրդ կամ մի քաղաքացի՝ ինչ տեսակ աշխատասիրութեան, և ինչ տեսակ ողջախոհութեան կարօտութիւն ունի. և թէ ինչ ձանապարհով կարող է լեցնել իւր կարօտութիւնը. և թէ մարդկային բուն կատարելութեան հասնելու համար որպիսի առաքինութիւններն աճեցնելու է մանուկներու և պատանիներու սրտերուն. և թէ որպիսի կենցաղավարութիւն պիտի ունենան չափահասներն՝ որ իրենց որդիքն օրինաւոր և բանական կենաց առաջնորդած լինին. և իրենց ազգը տեսնեն բարօրութեան հասած, և ոչ թէ անակնկալ սովերէ նեղուին. և անակնկալ հիւանդութիւններէ տանջուին։ Եւ թէ մեր ժողովուրդն ինչպէս պիտի կենցաղավարի, որ Աստուծոյ ամենակալի բոլոր պատուիրանները ձշտիւ կատարէ, և նորա օրհնութեանն ու նախախնամական շնորհացն արժանանայ, և յաւիտենական կենաց յոյսն ու ակնկալութիւնն հաստատուն ունենայ. և Աստուծոյ արքայութեան ժառանգորդ լինի։

Ծերերը՝ միայն կարող են հայրերու սիրտը որդւոց վերայ դարձնելու, և անհատ երիտասարդներին՝ արդարներու լմաստութեանը. որով և հետզհետէ Աստուծոյ պահանջած ժողովուրդը կը պատրաստուի, և այն հոգւով կը կազմուին ու կը լցուին ազգին ամեն անհերը, ինչ հոգի որ Աստուած կը պահանջէը իւր ժողովուրդ-

դէն՝ մարգարէները խրկելով, և նոցա բերանով խրատելով, և կզգեներու ժողովուրդն հաւհասարակ այն չնորհքը, զոր սորվեցուց Աստուծոյ Միածին Որդին՝ աշխարհ գալով։

Ներոց օրինակին պիտի հետևին և ամեն հայրեր՝ իրենցմէ վոքրներու և երիտասարդներու ընկերակցութեանց մէջ, նոյնպէս և իրենց որդւոց ու աղգակցաց վերաբերութիւնը. այնպէս որ նորահաս երիտասարդներն իրենցմէ վոքրերու ընկերակցութեան մէջ միևնոյն օրինակը ձեռք առնուն, ինչ որ իրենցմէ մեծերուն վերայ կը տեսնեն, ու նոցա խորհուրդներէն ու զրոյցներէն կը լսեն, կը տեղեկանան։ Որով և ամբողջ մի տան ընտանիք՝ մեծէն մինչև վոքրը՝ իրենց պարտիքն ուղղութեամբ կատարած կը լինին ողջախոհութեան ուղիղ ճանապարհի շաւիղներուն. և ամեն ընտանեաց միօրինակ զգուշութեամբն՝ անբողջ մի ժողովուրդ ողջախոհութեան ուղիղ ճանապարհումն իրեն մի ընտանիք կը բարգաւաճին, և Աստուծոյ օրհնութիւնն իրենց վերայ կատարուած կը տեսնեն, քիչ ժամանակում աճելով և բազմանալով, և ոչ երբէք նուազելով։ Աստուծոյ օրհնած մարդիկն՝ այսինքն Աստուծոյ պահանջած կատարելութեան պատուիրաններն անթերի կատարող ու պահող մարդիկն՝ արդարև այնքան կաճին, որ աստղերու պէս կը բազմանան, որ թիւ չունին. և ծովի աւազի չափ կը շատանան, որ՝ չափ ու կշիռք չունին։ Աստուած այսպէս խոստացած է վարձատրել այն ամեն ճշմարիտ աստուածապաշտ քրիստոնէին, որ ուշադիր է Աստուծոյ ճանապարհէն չխոտորելու, և այնպէս կզգուշանայ իւր ուխտին։

Ներոն ու այր մարդիկը՝ կարի մեծ զգաստութեամբ և համեստ երկիւղածութեամբ պիտի խօսակցին առն և կնոջ ընկերութեան կամ ամուսնութեան ամեն մի դէպքերու մասին. այնպէս որ ներոց խօսակցութեանն ունկնդիրը եղող արբունքի հասած կամ հաս-

նելու վերայ եղած երիտասարդներն՝ ըմբռնեն ամուսնութեան գաղտնիքն իրրև խորհուրդ, ինչպէս որ կը սորվեցնէ եկեղեցին սուրբ Պսակի պաշտաման մէջ։ Ներոն եթէ այս զգաստութիւնը չունենան և չզգուշանան, դժուարին է նոցա ընտանիքի որդւոց սրտերումն ողջախոհութեան սերմն աճեցնել և բարգաւաճել։ Ներոն՝ այս զգաստութիւնը պիտի պահեն ոչ միայն երիտասարդաց ընկերակցութեան մէջ, այլ նաև հայրերու և կանանց ընկերակցութեանց մէջ, որպէս զի կատարեալ լինի զգաստութեան զգուշաւորութիւնն, և արդիւնաւոր։ Ասա թէ ոչ, ինչպէս հին առակներումն ընդհանուր է. «Պատերն ականջ ունին» կամ թէ «Պատին եաևն ականջ անող կայ», և ի ծածուկ խօսուած ամեն խօսքերն հրապարակ կը հանեն։ Այս պատմանին ճշտութեամբ զգուշանալու համար ներոն զգօն պիտի լինին, և զգուշան. և երբէք դատարկ խօսք պիտի չհանեն իրենց բերանէն. այլ միշտ կրթիչ և կատարելութեան տանող խրատներով և խորհուրդներով պիտի բացուի նոցա բերանը։ Զգօն ներոց մխիթար օրինակն իսկ կատարեալ կրթութիւն է վոքրերուն, որչափ ևս առաւել նոցա բանական խօսակցութիւնն, ու կատարեալ յանդիմանութիւնը։

Բարկացող ներուն՝ լաւ ևս ասել անմիտ ներուն՝ իրենց բարկացած ժամանակներումն այլ ևս զգաստութեան ամեն հաչիներն մոռացած՝ տեսակ տեսակ չարշոնցները ու հայհոյանքները կը բանաստեղծեն. և այս անկարգ ու անմարդավայել շաղփաղփութեանց չղթան կը հիննն մարդկային ծննդեան գործողութեան վերայ շատ ագամ. բնաւ չեն յիշեր, թէ ծննդական գուգութիւնը՝ մարդոց որդիներու ծագումն է՝ Աստուծոյ օրհնութեամբը սահմանուած, և քրիստոնէական եկեղեցւոյ օրհնութեամբը սրբուած։ Ցիշոնցբերան և աղտեղախօս ներուն՝ այնպիսի այլաբանութիւնները, այնպիսի փոխաբերութիւնները կատարեբեն, իրենց բերնէն, որ այն-

պիսի կիւրք ոչ մի գազանի վերայ չյայտնուիր. ոչ մի գազան, ոչ մի անասուն, և ոչ մի սողուն այնպիսի չար կիւրք չսնուցանեը իւր ծննդական աճելութեան գործերում կամ զուգաւորութիւններում: Անթիւ ծերոց այսպիսի անխոհեմ և անմիտ արատաբերութիւններն անմիջական տպաւորութիւն կը գործեն երեխայիկ փոքր եղող ամեն հասակի մարդկանց վերայ. և արբունքի չհասած երիտասարդներին, պատանիներին և մանուկներին իսկ կը վիրաւորեն: Այս վատ օրինակի տպաւորութիւններն մեծէն փոքրին անդադար յառաջ կը գնայ և կընդհանրանայ ամեն կարգի մարդկանց բերանումն. և այնպէս էլ ամբողջ սերնդոց մէջ՝ սեռական կամ ծննդական զուգութիւնն երբեւ վատ և ստորնակարգ գործ կը տպաւորի մանուկներու մտքում, որ ընդհանուր վէրք կը բանայ ապագայ սերունդի ողջ կեանքին, և ապականած կը լինի: Եւ որոյ բացած վէրքն անբուժելի կը մընայ, և հետզհետէ բարոյական մաքերէ և կենսական խորհուրդներէ բոլորովին զուրկ կը ծննդին, և փոխանակ ապրելու և երկրի բերքն ու մարդկային ընկերակցութեան հոգեկան բերկրութիւններն վայելելու, հիւանդութեանց և ախտերու մահիճներ միայն կը վայելեն աղտեղի ցաւերով մէկտեղ. մինչդեռ մարդկային կենաց բուն փառքն, ու Աստուծոյ որդի լինելու ամեն միջոցներն՝ առողջ կենաց միայն չատուկ են:

Ըստ ամենայնի առաւել օգտակար է մարդկային ընկերութեան՝ համր մարդը, քան թէ խիստ խելօք և աղտեղախօս ու չիշողացբերան մարդը. որոյ տուած վնասքն ամբողջ սերունդները կը վիրաւորէ մինչև ի մահ, մինչդեռ նորա խելքէն թերևս ոչ ոք օգուտ չքաղէ: Աստուած՝ այսպէս կը դատապարտէ աղտեղախօս կամ անարգող մարդկանց. «Հայր ու մայր անարգողը՝ մահով թող մեռնի» (սաղմոս.), և թէ «ամեն մի դատարկ խօսքի համար հաշիւ պիտի տայք»:

Զգօն և իմաստուն ծերերն՝ երիտասարդաց ընկերակցութեան մէջ իրենց մարդկային պարտականութիւնքն անթերի ողջախոհութեամբ կատարելու համար, հոգածութիւն պիտի ունենան, որ երիտասարդաց մտաղրութիւնը գրաւեն անցեալ և ներկայ ժամանակներու պատմութեան վերայ, և մանաւանդ պիտի լինին միայն ողջախոհ և կրթիչ պատմութեան, զգուշանալով միշտ գեղծեալ ազգայ գեղծ և մոլի պատմութիւններէն: Պատմութիւնը՝ ծերերու զգօնութեան և կատարելութեան մատակարար դայեակն է: Պատմութիւնը՝ աշխարհի սկիզբէն մինչև այսօր եկած ու գնացած, և մնացած ու երթալու պատրաստուած բոլոր ծերերու՝ զգօն և ամենահմուտ ծերերու՝ միացեալ գումարն է: Պատմութիւնը՝ աշխարհի էութեան և կեանքին չարաչկոյ ամենայն պիտանի գիտութեանց չտեմարանն է: Ոչ մի ծեր կարող չ՝ այնքան փորձ և հմտութիւն ունենալ և աւանդել իրմէն փոքրներուն, որքան որ ունի և կաւանդէ պատմութիւնն ամեն հասակի մարդկանց: Սողոմոն կասէ. «Ոչ թէ բազմաժամանակեայ ծերութիւնն է պատուական, այլ՝ մարդուն իմաստութիւնն է պատուական ծերութիւնը»:

Իմաստուն մարդը՝ իւր անձնական փորձառութիւնները՝ բերանացի աւանդելով, իրականապէս ըմբռնելի կանէ նորահաս և անփորձ ունկնդիրներուն. և նոցա փորձառութիւնն հաստատուելէ ետքը՝ կառաջնորդէ դէպ ի նախնեաց պատմութիւնն, կամ մեր օրերէն սկսած դէպ ի վեր պատմելով կամ վերէն սկսած և դէպ ի մեր օրերն իջեցնելով: Ծերոց և ամեն մարդոց իմաստութեան յատկանիշն է. օրական փորձառութիւններն ու դէպքերն՝ որոնք առ հասարակ մարդկային կենաց բարգաւաճմանը վերաբերութիւն ունին՝ շարայարել նախնեաց պատմական արձանագրութիւններու շարքումն հանդերձ ժամանակագրութեամբ. որով միայն ապագայ սերնդոց բանականութիւնը կը պարարի և կը զարգանայ բուն ներքին մարդը: Պատմական ար-

ձանագրութեան անընդհատ չարաչարութիւնն է, որ գրագէտ պիտի անէ ընտանիքի բոլոր սերունդը։

Մանուկները գրագէտ պատրաստելու ընդհանուր նոր ձևեր՝ շատ ազգաց մէջ սկսուած են. բայց՝ մանուկները գրագիտութեան պատրաստելու ընտանեկան հին ու բնական ձևը՝ գրեթէ ամեն ազգաց մէջէն խափաւ վերցած է. թէ՛ և յայտնի ճշմարտութիւն է, որ ընտանեկան ձևի վարժութեան մէջոցին՝ մանուկներու սրտումն ծագումն առած լինքնայորդոր սէրն է միայն, որ կատարեալ գրագիտութեան ճանապարհին կը դարձնէ երիտասարդին ոտքը։ Գրագիտութեան պատրաստելու ընտանի ձև ասածնիս՝ այնպիսի մի թեթևագնաց և դիւրաստահ դրութիւն է, որ առանց որևիցէ արգելքի կարելի է ամեն ընտանիքում գործադրել, և արդիւնաւոր անել. որ մեւնոյն ժամանակ զբօսանք մի է ամբողջ ընտանիքի բոլոր անդամներուն, և ոչ միայն սոսկ զբօսանք, այլ մեւնոյն ժամանակ լի դուարճութեամբ, որ կը զուարթացնեն սրտերն ու կը պարարեն հոգիները անհամեմատ ուրախութեամբ. միայն թէ հայրութեան արժանի երիտասարդն ու մայրութեան արժանի օրիորդը՝ ծնողք դառնային. և ոչ թէ սոսկ մարմնով և մարմնական ցանկութեամբ լցուած հասակաւորները։

Եթէ երիտասարդաց ընկերութեան մէջ ծերերն՝ հայրերն, և կանամբլ այրերն զգուշանան ողջախոհութեան պահանջներուն ճիշտ կատարմանը, և չվրիպին ո՛չ օրինակով, ո՛չ խօսքով, և ո՛չ խորհրդով, երիտասարդութեան կատարեալ ողջախոհութիւնն ապահովուած է արդէն. յորում միայն կարող են յուսալ ծնողները լրեն բազմապատիկ աճելութեան, և ճշմարիտ ու կատարեալ մարդու վայելչութեան։ Ինչպէս երիտասարդներու ընկերութեանց մէջ ծերերն ու հայրերը՝ նոյնպէս և օրիորդաց ընկերութեան մէջ՝ պառաւները, մայրերը, և արամբլ հարսները պիտի զգուշանան միայն ողջախոհութեան ամեն պայմաններուն։ Նոյնպէս հայրերն ու մայրերն միայն պիտի զգուշանան և ամեն մի մասնաւոր ու ընդհանուր դէպքում, երբ երիտասարդներն ու կոյսերն և պատանիները ու մանուկները խառն կը գտնուին ընկերութեան մէջ. (հարսանիքներում, հանդէսներում)։

ԺԸ. ՄՏԱԻՈՐ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ ԽՈՀԵՄՈՒԹԻՒՆ

ԿԱՏԱՐԵԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ.

Երիտասարդութեան տարիքը մանող կատարեալ պատանին, եթէ ունենայ բնական ուսելեաց և ըմպելեաց մէջ հարկաւոր եղած չափաւորութիւնը, եթէ ջանասէր հոգւոյ պահանջքն ևս ունենայ՝ այն է մարդկային անհրաժեշտ պիտոյից գործերու աշխատասիրութեան մէջ կատարեալ արիութիւն և ժրութիւն, եթէ մարդկային ընկերակցութեանց մէջ երկնի վերջերուն լաւ օրինակ, ուղիղ խրատ, և ողջախոհ առաջնորդ լինի, և թէ երկնի մեծ եղող երիտասարդներէն, կանամբլներէն, հայրերէն և ծերերէն կատարեալ և լրջամիտ զգաստութեան օրինակ առնու, և նոցա խրատներու բուն ոգին ըմբռնելու փոյթ ունենայ, և եթէ կարողանայ ընտրել բարին՝ պիտանութեան կշիռքն անբաժան ունենալով նաև մտքումն՝ այն երիտասարդին մտաւոր կատարելութիւնն ապահովուած է արդէն։ Ով որ կարող է կացինով կամ ուրագով տաշել, սղոցով կտրել, նա գիտէ արդէն թէ կացինը կը տաշէ, ուրագը կը կտրէ, սղոցը կը կտրէ, եթէ հմուտ մարդու ձեռք ընկնին և գործածուին. նոյնպէս գիտէ, թէ մարդը գրիչով կը գրէ, բերանով կը խօսի, ականջով կը լսէ, աչքով կը տեսնէ, ու մտքով կը հասկանայ, կը տեղեկանայ։ Նոյնպէս կը

տեղեկանայ, թէ անընդհատ աշխատասիրութիւնը՝ գործ կը լմնցնէ. և թէ մարդուս խելքը հասած գործերուն կան գործեր՝ որ դժուարին են, բայց չկան գործեր՝ որ անկարելի լինին. և թէ դժուար գործերը տակուն տակողականութեամբ՝ դարձեալ կը լմննան ըստ ժամանակի: Այս խելամտութիւնն ունեցող երիտասարդը արդէն երկայնամիտ կը լինի և երբէք չվհատիր:

Երիտասարդի երկայնմտութիւնը՝ նորան աւելի ևս կարիացնէ և կը ժրացնէ, որ շատ գործերու բազմազիմի փորձերէ ետքն՝ մարդկային պետութեան անհրաժեշտ գործերուն մէկ կամ երկու և աւելի դժուարութիւնները դիւրացնելու գիւտեր կանէ: Երկայնմտութիւնը՝ ջանասէր ոգի ունեցող երիտասարդի մտքին մէջ յառաջադիմութեան յոյսն աւելի ևս կը զօրացնէ, մինչև որ յոյսն իրականանայ: Երկայնամիտ երիտասարդը՝ իւր ամենօրեայ աշխատութեանց մէջ յաճախ պատահած նորանոր դէպքերէն և խոչերէն առնէ առած, կը խորհի մի անգամ, թէ ինչ ձանապարհով կարելի է յաղթել այն արգելքներուն, և նպատակին հասնել. և այս խորհրդակցութեան մէջ կը գտնէ, որ այս նոր արգելքը նմանութիւն ունի մի հինաւուրց արգելքի, կը յիշէ միևնոյն ժամանակ թէ ինչ կերպիւ աջողեցաւ նորա դէմ, և կսկսի այնպէս փորձել. երբ աջողութիւնը տեսնէ, աւելի ևս կարիանայ. եթէ յանկարծ դէպքը խստանայ, և ձեռք առած փորձովն չաջողի աւարտել, մխաքը կը դարձնէ իւր յաջողութեան մասերին. և գործատորութեան առաջին օրերէն մինչև այն օրը պատահած այնպիսի դէպքերը մանը մանը կը գրէ կարգաւ: Եթէ գտնէ մի նմանութիւն անցեալ դէպքերէն մէկուն հետ, վերստին կսկսի յիշած փորձերը կրկնել. և մինչև վերջնականապէս աջողելը՝ կը շարունակէ: Եթէ իւր յիշած դէպքերուն և նոր պատահմունքին մէջ նմանութիւն չգտնէ, կը դիմէ երկրին աւելի փորձառուին, ընկերին, եղբօրը, հօրը, հօրեղբօրը, հարսին, և մի այլ ծերագոյն

հմուտ անձի, և կը հարցնէ: Եթէ այս հետամտութիւնները օգուտ չգտան, կը դիմէ փորձառու արուեստաւորաց, և նոցա գրուածքներուն. կը թերթէ բոլոր վերնագիրները, աչքէ կանցունէ ամբողջ ցանկերն ու համառօտ բովանդակութիւնները. և իւր դէպքին ու խընդրոյն նման բովանդակութիւն ունեցող գլուխներն ու հատուածներն ամենն էլ մտատութեամբ կը կարդայ. և կարդացած տեղեկութիւններէն օգուտ կը քաղէ, և այն տեղեկութեանց մէջ գտցած հնարներն իրեն դէմ ելած արգելքներուն դէմ գործածելով, կը յաղթէ, և նպատակին կը հասնի:

Երկայնամիտ երիտասարդը՝ տեսնելով փորձառու մարդկանց հմտութեանց օգուտն ու դիւրութիւնները նոցա արձանագրականներուն, կը հետևի օգուտ քաղել և ընդհանուր ազգաց պատմութիւններէն, և տարբեգիրներու արձանագրած աւելի հին և բազմազիմի անցքերէն. կը սերտհարի պատմութեան թերթերէն ընդունած ընդարձակ տեղեկութիւններուն և խելամտութիւններուն, և այնուհետև իւր հանգստութեան և միայնութեան ժամերուն մեծ մասն ևս սիրով կը նուիրէ ընթերցասիրութեան, և հետզհետէ հնոց և նորոց կենսական գործունէութեան տարբերութիւնները իրարու հետ համեմատելով, նոցա օգտակարն ու վնասակարը, դիւրինն ու դժուարը, առողջարարն ու ապականարարն իրարմէ կը զանազանէ: Երկայնամիտ երիտասարդն ընթերցասիրութեան այս ճաշակը միանգամ առնելէ ետքը՝ այնուհետև կսկսի ընթերցասիրել և ամեն տեսակ աշխարհավարական անցքերն՝ աշխարհի սկիզբէն մինչև մեր օրերը. կհմատասիրէ ամեն մի երևելի անձանց անցուցած վարքն ու բարքը, նոցա արարքն ու բովանդակ գործունէութիւնը, և թէ ինչ օգուտ տուած են այն անձինքն ընդհանուր մարդկային ընկերութեան, կամ մասնաւորապէս իրենց ազգին, իրենց ընտանիքին. կը համեմատէ փառաւոր անձանց

անցեալն՝ այժմու հասարակութեանց մէջ երևցած ու կարծուած փառքերուն հետ, և կը տեսնէ, թէ անոնցմէ ո՛րն է աւելի փառաւոր, մնայուն, կամ վաղանցուկ, և թէ որո՞ւն տուած օգուտն աւելի ընդհանուր է եղել։ Ֆաջաց պատմութիւնները ընթերցասիրելով կը քաջնայ, լմաստանոց պատմութիւնները ընթերցասիրելով կ'ևմաստանանայ. նոցա՝ հարիւրաւոր, հազարաւոր տարիներու ընթացքում ձեռք բերած փորձառութեանը՝ մէկայն ընթերցմամբ և մէկ փորձով կը հմտանայ։ Տնտեսագէտներու պատմութիւնները ու օրէնքները ընթերցասիրելով, կ'ելայդի տնտեսավար կը դառնայ. հանապազօրեայ գործոց պէտանիները ու օգտակարները կընդհանրացնէ. ուսնայն զբաղմունքներէն իսպառ կը հեռանայ։ Նահապետաց կեանքն ընթերցասիրելով՝ կը համոզուի, թէ մարդկային կեանքն ու աճելութիւնը՝ մէկայն Աստուծոյ օրհնութեան արդիւնքն են, և այն Հանապարհէն դուրս մարդկային կեանքը՝ մեռելութիւն է և անզաւակութիւն. և բոլորով սրտիւ կը նուիրի իւր անձն Աստուծոյ պատուիրաններուն ուղիղ և անթերի պահպանութեան։ Սուրբ աւետարանի վարդապետութեան բուն ոգին կըմբռնէ, ի՞ր ընդերը ի՞ր ոչնչութ պէտ չէ տիրէ. իւր ամեն քայլափոխքն այս օրէնքին Թոյլատրած իրաւունքին համաձայն կը շարժի և յառաջ կը խաղայ. կարօտներուն՝ խնամակալութեան ձեռք կերկնցունէ. անմոռաց կունենայ մարքումն Աւետարանի Ծայրագոյն առաքինութեան յորդորակը.—«Կատարեալ եղիք, ինչպէս որ ձեր երկնաւոր Հայրը կատարեալ է»։ Ընկերսիրութեան մէջ կը զարգանայ, ընկերներէն կը սիրուի. որ և իցէ գործ՝ չար է, թէ բարի, պատմութեանց փորձերուն և աստուածաշունչ պատգամաց պատուէրներուն համեմատելով՝ կընտրէ։ Մէկմէկու չհամոզուող ընկերներին դիւրաւ կը համոզէ, և իրարու չհասկացող բազմութիւնը՝ մէկ մարքի կը բերէ։

Երկայնամիտ երիտասարդի պատմական հմտու-

թիւնը կը փայլի նորա ամեն խօսակցութեան մէջ, մանաւանդ փորձերու ընկերակցութեան միջոցներումն. նորա այս չնորհը կը փայլի և իւր առանձին գործառնութեանց մէջ. նորա անվեհերութիւնը, երկայնմտութիւնը, հնարքմաց ու ճարտար ոգին՝ կը դիւրացնեն ամեն դժուարութիւն, կը թեթևացնեն ամեն ծանրութիւն. նորա ոտքին տակ կը փշրուի ամեն խոչընդոտն. նորա առջևն կը հարթուին խորտուբորտները, կը խոնարհին լեռները, կը լեցուին ձորերն ու փոսերը. գահավէժները՝ սանդուխք կը դառնան, անյատակ յորձանքները կամուրջներով կը կապուին. նորա առջևն հողմոց կործանիչ բռնութիւնն ու ջրոց խորտակիչ զօրութիւնը՝ մարդկանց ծանրութիւնը թեթևացնելու, և դժուարութիւնը դիւրացնելու օժանդակ կը դառնան։ Կիզիչ խորշակներում կը գնայ անվնաս ինչպէս զեփիւռաշունչ հովիտներում, ցրտաշունչ ու սաստկասառոյց ձմրան եղանակներումն՝ քուն կը լինի ջերմագին։ Գիշերային մթութիւնը կը փարատի նորա լուսոյ Հառագայթներում։ Վերջապէս պատմութեան հմուտ երիտասարդին համար չկայ ոչինչ անաջողութիւն. այլ ամեն դէպքում՝ դիւրութիւն, թեթևութիւն, աջողութիւն, լիութիւն և անկարօտութիւն, ողջախոհ կեանք՝ կատարելութեան Հանապարհում։

Պատմութեան հմուտ՝ և կատարելութեան Հանապարհումն ապրող երիտասարդին մտաւոր զարգացումը կը փայլի և այն դէպքում, որ նա աննախանձ ուսուցանող է կենաց օգուտներու և պիտոյքներու՝ ամեն տեսակ գործերում ծածկուած ամեն մի գաղտնեաց. առանց վարձուց ակնկալութեան կը կրթէ իրեն նայողներուն թէ օրինակով և թէ օրէնքով. նորա բերանէն՝ ցնծութեամբ և բերկրութեամբ կարտաբերուին ուսմանց գաղտնիքը պարզող վերծանական բացատրութիւնները. անմոռանալի կը տպաւորուին նորա արտաբերած սահմանները ու օրէնքները. գործով տուած օ-

բնականները որ ասես, միանգամայն վտիտ են և ապացոյց, և զօրանալու քաջալերութիւն կը բերեն տկարներուն։ Նա ընդունակ է իւր ընկերին մտաւոր կարողութեան չափը՝ մէկ կամ երկու և առ առաւելն երեք վտիտով՝ ճանչելու և իմանալու. և ըստ այնմ առաջարկելու նորան կարգաւ՝ կարևոր գործերու տեսակները՝ նոցա սկզբնական պարզ երևոյթներով և հետզհետէ միմեանց յաջորդող գաղտնիքներով. որոց գիտութիւնը կը լուսաւորէ և հետևորդ գաղտնեաց մթութիւնը։ Նորա ուսուցած ժամանակը նորա բերնէն ամենևին չեն լսուիր աւելորդ բառեր. նա կարի ախորժելով կը կրկնէ արուեստից ճշմարիտ օրէնքները ու գործածելու փորձերը. ամենևին չդանդաղեր որևէ հարցասիրութիւն գոհ անելու, որչափ որ ինքն հմուտ է։

Մտաւոր կատարելութիւն ունեցող և ուսուցանող երիտասարդն՝ ամենևին չերևիր յաճախել դատարկ և անօգուտ զբօսանքներուն. նորա զբօսանքն ևս ուսանելու շարայարութիւն մի է։ Դաշտերուն քալած ժամանակը կիմաստասիրէ մրջիւններու և մեղուներու աշխատասիրութիւնը. խլուրդներու ականահատութեան պատճառն ու նպատակը. թռչնոց ընկերականութիւնն ու կռիւը, տատրակին զուգասիրութիւնը. և առհասարակ ամենայն թռչնոց և կենդանեաց՝ ծնելասիրութիւնն ու մոռացութիւնը, և սուր ճանաչողութիւնը. պատառող կենդանիներու գազանութիւնն ու նոցա ընկերութեան խորշելութիւնը. օձին վնասակարութիւնները, և ամեն կենդանեաց՝ նորա դէմ սնուցած ատելութիւնն ու հակակրութիւնը. գիշատող թռչնոց յափշտակութիւնն, ու նոցա դէմ տկար թռչուններուն զգուշաւորութիւնը. մկանց գողութիւնն, ու կատուին որսորդութիւնն ու պատիւը. աղուէսին տուած վնասն ու նորա մուշտակը. գայլին գազանութիւնն, ու ձիերուն և գոմէշներուն՝ նորա դէմ բացած պատերազմը. առիւծին վեհութիւնը, և բոլոր գազանաց դէմ սնուցած հակա-

ռակութիւնը. ուղտին սակաւակերութիւնն, ու մարդկանց գործերուն կատարած օժանդակութիւնը. փիղին կաշին, ոսկորն ու բեռնակրութիւնը. չան տիրասիրութիւնն ու ծառայութիւնը, ձիոյն զգաստութիւնը։ Նա կը քննէ և կիմաստասիրէ իւր զբօսանքուն, թէ տկար ճնճղուկն՝ ինչպէս կը յաղթէ օձին, մրջիւնն՝ առիւծին, և մեղուն՝ արջին։

Նա՝ կը քննէ և կիմաստասիրէ իւր զբօսանքուն՝ երկրի մակերևոյթը, լերանց բարձրութիւնը, ձորերու խորութիւնը, ծովի ընդարձակութիւնն ու աղբիւրներու ծագումը, կղզիներու սահմանն ու նոցա բնակութիւնը, անապատներու ամայութիւնն ու հետզհետէ բնակութեանց յառելումը. մարդկանց աճելութիւնն ու նոցա ձեռքով եղած փոփոխութիւնները. նա կը քննէ չարունակ հրայրեացներ, պատերազմներ, աւերումներ, և նորանոր շինութիւնները, այգիներ ու դրախտներ, և ինքնաբոյս անտառներ, բնական ու պատուաստի պտուղներ, ծաղիկներ ու բուրումներ, բնութեան զարմանալիքն ու կենաց թարմութիւն. գարնանային նորութիւնը, ամառնային զօրութիւնը, աշնանային բազմաբեղուն աճելութիւնն, ու ձմեռնային ներութենական քնաւութիւնը. անհուն ժամանակի անընդհատ շարժման անսահմանի գարուններն ու աշուններ. չերամին թիթեռը, թիթեռին ձուերը, և ձուին չերամը. ամենուրեք երևցած բազմարձան և անարձան գերեզմանները, անհուն աճելութեանց ծանկեալ սկզբնաւորութիւնն ու ծածուկ վերջաւորութիւնը. Աստուածպետական նախախնամութիւնը, Աստուածայայտնութեանց ճշմարտութիւնը, կատարեալ հաւատք, անկեղծ սէր ընկերութեան, հաստատուն յոյս մեռելոց յարութեան. անաչառ դատաստան, անպատիժ ատեան. Աստուած դատաւոր. բարեգործին կեանք, չարագործին տանջանք. ճշմարիտ բարեպաշտութիւն, անմահ մարդ Աստուծով։

Պատմութեան հմուտ և բանականութեամբ զար-

գացած երիտասարդը՝ իւր ամեն մի քայլափոխում կը դիտէ, կը տեսնէ, կը քննէ, մինչև որ ճշդիւ կըմբռնէ ամեն դէպքերու պատճառները, ու ամեն գործերու նպատակն. և ամեն արհեստի բուն գաղտնիքը։ Նա՝ ամեն ժամանակ կուսանի ամեն դիպուածում, քանի որ կենդանութիւն կը շնչէ, և լրիւ կը սորվեցնէ ինչ որ գիտէ և ըմբռնել է։ Իւր մտաւոր քննութիւնները՝ բացայայտ խօսքերով կը յայտնէ ընկերութեանց մէջ. և հմուտ անձանց դիտողութիւններուն՝ ուշադրութեամբ ունկնդիր կը լինի։ Տարակուսական խնդիրներում՝ խիստ որոշ կէտերով կը հարցասիրէ իւր ուսուցիչին. և բաւականութեամբ կը լսէ, մինչև որ տարակոյսը վերնայ, մթութիւնը պարզուի։ Երախտագէտ ոգւով կը վերաբերի այն ամեն անձանց՝ որոց կամ օրինակին և կամ թէ մի ճառէն՝ մի բան սորված է մարդկային կատարելութեան առաջնորդող։ Սիրով կը վերաբերի այն ամեն ընկերներուն՝ որոնք դատարկութենէ հեռի, կը գործեն միշտ օգտակարը, և կը զբօսնուն ու կը հանգչին՝ կատարելութեան տանող օգտակար խօսակցութեամբ, և հաշուի, և արհեստի ճշդութեան առաջնորդող անվնաս խաղերով։ Պղերգութիւն և դատարկութիւն և ոչ մի վայրկեան ժամանակ չերևիր նորա վերայ, և ոչ նորա ընկերի վերայ, այլ միշտ խոհեմութիւն, ժրութիւն, կատարեալ արիութիւն, և ամեն բանում պատրաստականութիւն։

Այժմու մեր ուսումնարաններում գտնուող երիտասարդաց մեծ մասն՝ թէ՛ ուսուցիչ և թէ՛ ուսանող դուրս կը մնան և բոլորովին կօտարանան կատարեալ երիտասարդի բանականութեան զարգացման այս համեմատութենէն. սոքա միշտ կը յաճախեն հասարակաց անօգուտ խաղերու սենեակներն, և դատարկութեամբ ու անօգուտ խօսակցութեամբ ժամանակ անցունողներու ժողովարանները։ Եւ ամբողջ գիշերները անքուն կանցունեն անօգուտ խաղերու զբօսանքով և վնասով,

և ցերեկուայ ուսման կամ ուսուցման ժամերն կանցունեն կիսազարթուն քնաթաթախ յօրանջանքներով, և կարօտալիր կսպասեն դաս չլինելիք օրերու հասնելուն. ապրիլի կէսերէն մինչև մայիսի վերջերն տարեվերջի քննութեան օրեր են. յունիսի մէկէն մինչև օգոստոսի վերջերն՝ ամառնային արձակուրդի օրեր. սեպտեմբերի մէկէն մինչև կէսերն աշակերտաց և ուսուցչաց վերադառնալու և ի զուր նշանակուած կրկնաքննութիւններու անտեղի ժամավաճառութիւն. դեկտեմբերի կէսերէն մինչև յունվարի կէսերը՝ Ննդեան արձակուրդ. փետրվարի կէսերն էլ բարեկենդանի արձակուրդ։ Մարտի կամ ապրիլի կէսն էլ Զատկի արձակուրդ։ Ահա քեզ տարւոյն կէսէն աւելին օրինադրական արձակուրդ. մնացեալ փոքր մասումն ևս կան շատ անգամ հիւանդ ուսուցիչներու բացակայութիւն. և յունիսի մէկին կը տեսնես աշակերտի ձեռքին՝ չսորված դասին, կամ սորված ու մոռացած արհեստին կամ գիտութեանը՝ մի ունայն վկայութիւն. կամ թէ աշակերտին յանցաւորը անող մի ցուցակ. որոյ տակը գլխէ դուրս ստորագրութեամբ մի պարծենկոտութիւն, որպէս թէ իւր պաշտօնին անունն ու գործը չճանաչող մէկին էլ կարող է Տեսուչ ստորագրել։

Ուսումնական այսպիսի թերութեանց պատճառ են և կը դառնան մեմնայն ձնողք, որոնք չեն կարող ճշդիւ ճանաչել աշխատասիրութիւնն ու դատարկ ժամավաճառութիւնը։

ԺԹ. ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԼԻՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՓԻՆ

ՏԵՍԻԼ.

Երիտասարդական լուսնեակն վերջին տարին է արբունքի տարին, որ մինչև համեմատութեամբ կը հաշուի այժմ քսաներորդ կամ քսանևմէկերորդ տարին։ Երիտասարդական լուսնեակն առաջին նշանն է մարմնոյ ոսկորներու աճելութեան վերջին աստիճանը, ուր այլ ևս կը դադարի երիտասարդի հասակին բարձրանալը. այս հասակի ամբողջութիւնն կունենան այն երիտասարդները՝ որ առողջ և ողջախոհ ծնողաց զաւակ են, և մինչև երիտասարդական լուսնեակն վերջին տարին հիւանդութեանց չեն պատահիլ. (ծաղկի և կարմրուկի հիւանդութիւնները գրեթէ բնական են և հասակի լուսնեակնը չեն վնասեր)։ Այժմու մարդկան մեծամասնութեան նայելով՝ լի կատարեալ կը համարուին 2½—3 կանգուն բարձրացած հասակները։ Երիտասարդական հասակի բարձրանալը կը դադարի երբ դէմքին վերայ մօրուքի աղուամազն ամբողջապէս երևի։

Երիտասարդական լուսնեակն երկրորդ նշանն է մարմնոյ թանձրութեան բարեձևութիւնը, այսինքն ոսկորներու խոշորութեան չափով լուսնեակն մսի և ջղերու, ոչ նիհար, և ոչ ազման, որ մեկնոյն ժամանակ նշան է և առողջութեան և ուտելեաց ու ըմպելեաց չափաւորութեան և բնականութեան։ Չափաւոր ուտելեաց և ըմպելեաց կանոնաւոր և բնական սնունդը՝ բարեձև կաճեցնէ մարմնոյ կազմուածքը։ Պատահա-

կան քաղցածութիւնները ու տեսակ տեսակ հիւանդութիւնները են, որ նուազութիւն կը բերեն. և գեխութիւնն ու ուրիշ տեսակ հիւանդութիւնները են, որ գանգատկոտ ու գալկացած ազմանութիւն կը բերեն։

Երիտասարդական լուսնեակն երրորդ նշանն է, ոսկորներու խոշորութիւն, կուրծքի և կռնակի լայնութիւն, գանկի մեծութիւն, մկնքի, բազկի և ազդրի՝ ամրութիւն ու հաստատութիւն. ջղերու պնդութիւն և ճկունութիւն. մարմնոյ կարծրութիւն և յօդուածոց գիւրաթեքութիւն. մորթի հաստութիւն և դիմացկունութիւն. արեան եռանդ և գունոյ կայտառութիւն. կատարեալ ուժեղութիւն և թեթևագնաց շարժունութիւն։ Այս ամեն արտաքին նշաններն անթերի կերևին՝ աշխատասիրութեան մէջ տևողութիւն ունեցող երիտասարդներուն վերայ, որոնք պատանեկութեան վերջին տարիներէն սկսած, և շարունակ կաշխատեն արեգական տակ պարտիզպանական, երկրագործական, հովուական և այլ և այլ արհեստական գործերում. մինչ թեթևէն դէպի ծանրը, և գիւրինէն դէպի ի դժուարն յառաջ գնալու վարժութեամբ. և այս աշխատութիւնն է, որ նորահաս պատանիներուն և երիտասարդներուն արիւնը կը զօրացնէ, ջղերը կը պնդացնէ, մարմինը կը կազդուրէ. ըստ որում այսպիսի աշխատութիւններն են, որ մարդուս իրանունքն ու ողնաշարը, և նոցա ամեն մի հատուածները շարժման կը հանեն, և հեռզհեռէ վարժելով, ամբակուռ և կաշխմրուռն անձինք կը պատրաստեն։ Աշխատութիւնն է միայն մանուանդ երկրնքի տակի աշխատութիւնը), որ մեկոնէն աւելի կը քաղցրացնէ գիշերային քունը, և ամեն տեսակ համեմներէն աւելի ախորժելի կը համեմէ պարզ պարզ կերակուրներըը. և պարզ պարզ կերակուրներն հանդերձ ախորժակով՝ աւելի սննդարար և կազդուրիչ են, քան թէ արքունական բազմատեսակ համադամներն ու քաղցրաւենիներն առանց աշխատու-

թեան գարթեցուցած ախորժակին։ Սխալ են այն ամեն կարծիքները՝ որ անգործ մարդը՝ գործաւորէն աւելի երջանիկ կը համարեն. այս սխալանքն յայտնի կերեւի, երբ դիտենք, որ անգործ մարդն անբուժելի հիւանդի նման մեզմէ դեղերի կը կարօտի, և քուն չէ կարող լինել. մինչդեռ գործաւորը՝ որ օրական թէ կը չարչարուի, մեզմէ առաղջ է և ուժեղ. կուտէ ախորժակով, կաշխատի ուժով, կը հանգչի քաղցը քունով, և անմեղութիւն մի կը փայլեցնէ իւր վերայ իւր ամբողջ կեանքումն։ Զաւխաւոր աշխատութեան մէջ սիրելը՝ կատարեալ արիւթիւն է։

Երիտասարդական լուութեան չորրորդ նշանն է՝ դիմաց հաճոյական տեսիլը, որ բուն իսկ ողջախոհութեան ծաղիկն է, և պարկեշտութեան ծիրանին, որոյ հետ ամենևին չարաչարութիւն ունենալու չէ որևիցէ հիւծական նշան, կամ ներքին ախտերու արատ, կամ ջղային թուլութեան դալուկն ու մաղձ։

Երիտասարդական լուութեան հինգերորդ նշանն է՝ կատարեալ լռհեմութիւն ընկերական յարաբերութեանց մէջ (քաղաքավարութիւն կանուանեն քիչ մի անտեղի մաքով, որոյ մէջ խաբէութիւն ևս կը մտնէ և նենգութիւն). այն է վայելուչ դիրք նստուածքի և կեցուածքի, կատարեալ մտադրութիւն ունկնդրութեան ժամանակ. բացայայտ խօսք և չտակ արտաբերութիւն խօսելու ժամանակ. չհասկացած բանին վերայ վճիռ չտալ. աւելորդ խօսելու միտքեր չլսել. պիտանի խօսքն երբէք չլռել։ Երիտասարդական լուութեան այս վերջին նշանն՝ իսկապէս բանականութեան զարգացման արտադրութիւնն է. որ ակներև կերևի ամեն դիպուածում և չէ կարող թաքչել ուրիշ որևիցէ կիրքերու տակ, ինչպէս որ հասած նուռը կամ նորա ծաղիկը կարող չեն ծածկուիլ նորա մանր մանր և կանաչագոյն տերևներու տակ։

Երիտասարդական լուութեան առաղջ մարմնոյ և

ողջախոհ հոգւոյ այս սեռական հինգ տեսիլներէն զատ, կան և ուրիշ երկրորդական կամ պատահական երեւոյթներ, որոնք ևս թաքուն հոգւոյ արտայայտութիւններ են։ Ըստ Սողոմոնի.

«Հանդերձ մարդոյ, ծաղը երեսաց, և քայլք ոտից՝ պատմեն զնմանէ»։

«Մարդու հագուստը, երեսին ծիծաղը և ոտքին քայլերը՝ նորա վերայ պատմութիւն կանեն»։

Հագուստի բուն պատճառն է մերկութեան ամօթը. և երկրորդ պատճառն է մրսկոտութիւնը. հետևաբար և նպատակն է միայն մերկութիւնը ծածկել, և ցուրտին (իմ այրածէն) պաշտպանութիւն։

Կատարեալ երիտասարդի ժրութեանն յարմարող հագուստներն՝ ամեն մի կլիմայում առանձին ձև ունին. այս տեղ աչքի անցունենք միայն բարեխառն գօտիներու տակ բնակող ազգաց հագուստը. որոց սովորական և փառաւոր ձևը՝ թէ պատմական նկարագիրներում, և թէ հնութեանց տեսարաններումն յայտնի կերևի ամեն հետազօտող աչքերու՝ հետևեալ կերպով.

Խոշոր էլուխ, անուշ շուխի և բամբոն, պիտի փոխ մէջքումը, որով կամփոփուի շապկի և բամկոնի լայնութիւնը՝ մէջքի վերայ շուրջանակի փոթոթաւոր. ազդրամերկին չոյն, որ կամփոփուի մէջքին վերայ գօտիին կից՝ պիտի խոշոնով՝ շուրջանակի փոթոթաւոր. բայ սրտոտ, ոգրի ու ընդհա պրեի՝ մինչև կոճերն պատճառոր. բաց բազուկ նեղ ընդոց՝ որ ասպանդ տակ կը կոճկուի շապկի ուսին. մոխոշ և ընդ ուսընդանուիի աղ ու ձախ կողմն։ Այս ձևն ամառնային ձև լինել կերևի. որոյ վերայ կաւելցուի երբև ձմեռնային չաւելուած՝ մի ընդոց ընդոպրիկ (այժմու եաիրընձայի ձևով, կամ քահանայից վիշտնին կարճ տեսակը). կուրծքին վերայ ճպրնանդաւոր. բաղդան նեղ ու պիրկ, որ արմունկի մէջին կողմումն կը կոճկուի թևնոցին. և արմունկին վերայ չրթնանձև բաց կը մնայ. պիրկ պատյտ կամ նեղ ընդոպան սրուքներուն վերայ, որ ծունկերուն տակ

ազգըտվարտիքին կը կոճկուին. և ծունկին վերայ շրթնաձև բաց կը մնայ։

Այս ձև հագուստով՝ մարդ ամեն կերպ շարժման կը յարմարի, առանց նեղուելու. ըստ որում մարմնոյ գլխաւոր անդամոց շարժմանն յարմարցուած է. ահաւասիկ հագուստի մի ձև, որոյ նպատակին է դիւրաշարժութիւնն և միանգամայն հանգստութիւն։

Օրիորդաց հագուստն ևս այս միևնոյն ձևովն է, միայն շապիկը և բաճկոնն առանձին չրթել ունին, և ընտոպ ու բաղդատիկ վոհմանակ ամրողջ ընդունէ ունին. վերջինը կերկարի ծունկէն վար մինչև կոճերը. և չրթոպ վոհմանակ ունին սուտ (չարշաւ կամ շղարշ) գլխէն մինչև ոտքերը միապատող։ Եւ օրիորդաց գէսերն երբեմն յատուկ ծամիկալով կամ գլխուն վերայ կամփոփուին, և կամ թիկանց վերայ կախ կը ձգուին։

Վերգիլեոս իւր տաղերումն չոջափոխ կամ փոռեփոռ կանուանէ այն երեսատարգները՝ որոնք պատերազմներում քաջամարտիկ հանդիսացած են ի. թեթևընթաց։ Այսպէս կանուանէ Փասիսն և Նիասխայ հովիտներու բնակիչներն։ Իսկ Ախրիկէն ժողովուրդը կանուանէ անփոռ, որ վերջին, առիւրլ կամ անփոռծ կը նշանակէ։ Հին ազգերու հնախօսութիւններեն ևս կը հաստատուին, թէ գօտին պաշտօնաթուխ կամ փորձախոտոթուխ կը նշանակէ։ Աւետարանի առակներէն մէկին մէջ՝ «անպատրաստ գտնուող ծառային տէրը կը պատժէ» ասելու վոհմանակ կասէ. «Նիկեալ տէր ծառային . . . . ընդ մէջ կտրեսցէ զնա». այսինքն թէ չրթէն կը կտրէ. որ միևնոյն ժամանակ պաշտօնէն հանել ասել է։ Գօտին մեծ նշանակութիւն ունի արևելեան ազգերու մէջ. ցերեկ ժամանակ առանց գօտին մնալը՝ ծուլութիւն և զեղխութիւն կը նշանակէ. շատակեր մարդկին ընդհանրապէս սեղան նստելու ժամանակ գօտինին կը թուլցնեն։ Առանց գօտիի կամ թոյլ գօտիով որ ձի կը հեծնեն, մէջքերնին կը ցաւի, և երկար չեն դիմանար. բայց

պինդ գօտիով որ կը նստին կրկնապատիկ անգամ աւելի կը դիմանան։ Մի գօտևոր և մի անգօտի երիտասարդներ միասին կուռեն կը կշտանան, և իրենց ձանապարհը կսկսին երթալ. վեց ժամ գնալէ ետքը քաղց կզգան, բայց տակաւին կրնան հասնելու երկու ժամէն աւելի ձանապարհ ունին. գօտևոր երիտասարդը՝ գօտին կը պինդէ և ձանապարհը կը շարունակէ անվտանգ. անգօտի երիտասարդը՝ կը նքոյղ, կը նուազի, և ձանապարհում կը մնայ, մինչև որ գօտեպինդը՝ հաց կը հասցնէ։ Այս տեսակէտով՝ ասիական ազգաց մէջ ձանապարհորդութեան ամենէն գլխաւոր պատրաստութիւնն է գօտին ՀԷՋՏ-ն պինդ կապել։

Թէ հագուստն ինչ նպատակ է, և ինչ երկրի բերք, կամ ինչ ազգի ձեռագործ, այս հանգամանքը ևս պատմութիւն կանէ հագնողի բանական կատարելութեան մասին։ Կատարեալ բանականը՝ իւր հայրենիքի բերքը, և իւր հայրենակից օրիորդի, իւր քրոջ ձեռագործը միայն կը հագնի արևելեան ձևերում, միշտ գօտեպինդ։

Ինեռային երկիրներում ցրտի սաստկութիւնը՝ մուշտակի գործածութիւնն սոսկալական և անհրաժեշտ է արել։ Այրեցեալ գօտիի տակ խորշակի սաստկութիւնը՝ մետաքսեղէն կրկնոցի ու գլխանոցի գործածութիւնն սոսկալական և անհրաժեշտ է արել։ Խարեխառն գօտիներում ցուրտի առաջքն առնելու բաւական է միայն բրդեղէնը, և զովացուցիչ է կանեփը. բամբակեղէնի թանձրը՝ բրդեղէնի չափ ջերմութիւն կը պահէ. և բամբակը՝ կանեփի չափ զովութիւն. մետաքսեղէնը կը գործածեն միայն գլխանոցներու վերայ՝ կայծակէ ապահովելու մտօք։

Ցաք երկրում մուշտակ գործածելը՝ և ցուրտ երկրում մետաքսեղէն գործածելը՝ հագնողներուն միևնոյն աստիճանի բանականութիւնը կը պատմեն աշխարհագէտ աչքերու առաջ։ Մէկին երբև բեռնակիը բացօթեայ պիտի անցունէ, միւսն երբև բաղնեպան՝ կռնակը

մէկու բորբոքեալ հնոցին պիտի դարձնէ։—Նզբայը, հագուստդ օտար երկրի բեռք է, և օտարի հեռագործ, մերթէ ձեր երկրում բուրդ չկայ. մերթէ ձեր երկրում մանող, գործող, հիւսող և կարող ձեռքեր չկան. ձեր ձեռքերն ինչ բանի վերայ են. այս՝ ինչ մորացկանութիւն է։

—(Պատասխան տալու կամչնամ). Խոչբեր շատ ունիմ, բայց ո՛չ մինը չեն գիտեր ո՛չ մանել, ո՛չ գոը ձել ո՛չ հիւսել, ասեղ ալ որ բռնեն, կը վախնամ, թէ աչքերնին կը խոթեն. նոքա առհասարակ պիրկ ձեռնոցներ հագած, և երկու ձեռքերնին սրտերնուն վերայ մի մուշտակաբարձի մէջ ծրարած՝ ակացիներու չուքերում կը քալեն։

Մարդուն հագուստը՝ մարդուն վերայ այսպիսի պատմութիւններ կանէ. հանդերձը՝ լեզուով չխօսիը, այլ առանց լեզուի՝ բոլոր աշխարհում բան հասկացող մարդկանց յայտնի եղած մէկ պզտի իմաստութիւնով. սա հետևեալ կարճ խօսքով. թէ՝

«Հանդերձը՝ ցրտութենէ և խորշակէ պահելու համար է։

Հանդերձը՝ մերկութիւնը ծածկելու համար միայն է»։

Այս իմաստութիւնն ունեցող մարդիկը՝ երբ որ տեսնեն մի հանդերձ, որ իւր վերայ զարսած ունի զանազան երիզներ, ոսկեհատն կոճրներ, աստին անդին վոթոթած ու կախկախած կապերտներ, որ ոչ մերկութիւնը ծածկելու կը ծառայեն, և ոչ ցրտութենէ կամ խորշակէ պահպանելու զօրութիւնն ունին, իսկոյն իրենց մտքումը կը վճռեն, թէ այս հանդերձին գնողը կամ գործածողն՝ անկարօտութեան փառքը չճանաչեր։ Իմաստուն թագաւորին մէկը՝ որսորդներուն վերայ հարկ դրած էր, որ տարեկան հարկի փոխանակ արքունի գանձարանին վճարեն գայլի կաշի՝ ամեն մինը տասը տասը հատ։ Որսորդները քաջացան իրենց արհեստումն, ուրիշ արհեստաւորներ ևս սկսեցին ձմեռնային եղանակներում որսորդութեան պարապել, որ իրենց տալիք արծաթին փոխանակ գայլի կաշի տան, որ իրենց աւելի թեթևագին էր. այն թագաւորը մուշտակ հագնող չէր, այլ այս հարկը դրաւ այն նպատակաւ միայն, որ գայլերը պակասին, և պիտանի անասուններին չպատառեն. և հասաւ թագաւորը իւր նպատակին։ Իմաստուն թագաւորը՝ գանձարանին հասնելիք փողը, արծաթը պակսեցուց, որ գայլերը պակասին, և ժողովրդեան ձեռքի ոչխարներն անպակաս աճին. այսօր շատ հարուստներ՝ որ մեկայն ոչխարի կաշիով հարստացած են, խնամ թանկ գնով գայլենի մուշտակ կը հագնին, և իրենց հացն ու կերակուրը կը կորսնցնեն։ Այսպիսի մուշտակին ևս պատմութիւն կանէ մարդու բանականութեան վերայ։ Առիւծը՝ վնասակար կենդանի է, նոքա կաշին իմաստուն թագաւորաց բազմոցն էր, նոցա ձիերու թամբին գորգարանքն էր. առիւծի սերունդն այնքան պակասեցաւ, որ այժմ անմարդաբնակ երկիրներում մեկայն կարելի է յուսալ, թէ կայ, եթէ ոչ արդէն այնչափ պակասել է, որ այլ ևս ոչ մի երկրում չլսուիը, թէ առիւծը վնասել է որևէ իցէ պիտանի անասուն։ Աղուէսը՝ մեր հաւերին կուտէ ամեն ձմեռ, մեր երիտասարդներուն ձեռքերն կտկտել են որսորդութեան ուժէն. և մենք փոխանակ աղուէսի մորթին, ամենաթանգ գներով կը գնենք Սիպիրիայի աքիսներու մորթին, ու ծանրագին մուշտակները կը հագնինք. մեր այս մուշտակները՝ մեր հարստութեան հաշիւն հետ մէկ տեղ կը հրատարակեն ամեն մի հասկացողին, թէ մենք մեր հարստութիւնն աւելորդ և չնչին բաներու վերայ կը վճացնենք. որմէ և կը հետևցնեն հասկացողները. թէ մենք օգտակարը չենք ճանաչեր, հետևաբար և մեր կեանքումն օգտակար գործ չենք կարող գործել։ Բայց մեր վճռասկրութիւնն ինչով պիտի յագեցնենք, երբ միայն օգտակար գործելն է

վառաւորութիւն և բոլոր աշխարհում: Մարդուն կատարեալ վառքը աշխատասիրութիւնն է, և սիտանի աշխատասիրութիւնը, որով միայն կարող է մարդ բարեբար լինել: Ոչ ոք վառաւոր չէ, եթէ ոչ միայն բարեբարութիւն անողը:

Ասացինք, թէ հանդերձին առաջին և բուն պատճառն է Ղեւոնդեան-ը ծածկելը, որոյ գործածութենէն եաքը մարդկանց վերայ ծանրացաւ Ղեւոնդեան, ու այսուածքը. և հարկ եղաւ հագուստը թանձրացնել նաև այս պատահարներէն պաշտպանուելու համար: Աշխարհի սկիզբէն մինչև մեր դարը, պատմութիւնները ու հնութիւնները միասին կը ցուցնեն որ ամեն ազգաց մէջ՝ երեսունէ բաց են. և այս այն պատճառաւ, որ մարդուն լիսա հարկաւոր է գլխուն սաչալ լուացումը, որ թէ գլխուն և թէ ձեռքին՝ զովութիւն և ջերմութիւն միանգամայն կը պատճառէ. և միևնոյն ժամանակ՝ աւելի առողջարար և առողջապահ է լուացումը՝ քան թէ հագուստը: Աչքը, ականջը, քիթը, և բերանը՝ որ մարդու գլխուն վերայ ամենանուրբ զգայարանքներն են, միևնոյն ժամանակ ներքին աւելորդ կեղտերու ևս դուրս հոսելու ճանապարհ են. ականջէն դուրս կը հոսի մաղձային յաւելուած, աչքէն՝ աղային յաւելուած. քթէն՝ հարբուխի յաւելուած (պալղամ). բերանէն՝ լորձունքի յաւելուած, որոնք առհասարակ ներքին կենդանի գործարաններուն հարկաւոր եղած նիւթերու (կամ խղճի) յաւելուածներն են. այս յաւելուածներու հոսմունքներն մաքրել պէտք է ամեն օր, եթէ օրը՝ երկու, երեք և աւելի անգամ մաքրուի, աւելի ևս առողջարար է: Այս հարկաւոր մաքրութիւնը ձեռքի գործն է գլխուն վերայ. և այս սաչալ լուացման պատճառաւ կատարեալ մարդիկը՝ երեսներնին և ձեռքերնին բաց վարժեցուցած են, և այս վարժութեամբ ու շատ լուացումով՝ մարմնոյ ամենէն առողջ անդամներն են երեսն ու ձեռքը. որոնք կը մրսին միայն արտաքոյ կարգի սաստկասառոյց ցուրտերում: Այժմու նորահասները՝ թէ ամառնային և թէ ձմեռնային եղանակներումն ընդհանրապէս ձեռնոցները կը գործածեն. այս ձեռնոցին պատճառաւն էլ վաղը կամ միւս օրը՝ մի մարդ սիտի վարձեն, որ իրենց երեսը լուանայ:

Արտաքոյ կարգի սաստիկ ցուրտի պատահող ճանապարհորդներն՝ հանճարացած են ձեռնոցի գործածութիւնը, առողջութիւնը պահպանելու համար. նոյնպէս նոյն ճանապարհորդներն՝ առաջին անգամ սկսած են երեսնին փաթաթել, ծածկել, դարձեալ առողջութիւննին պահպանելու համար վտանգաւոր ցրտերու պատահարներում միայն:

Մեր դարումն՝ վիրաւոր երես և վիրաւոր ձեռք ունեցող մարդիկն՝ իրենց վէրքը ծածկելու համար ձեռնոցի և դիմակի գործածութիւնն սկսել են նաև տաք օրերում. որ սկսել է հասարակաց դառնալ: Դիմակը հարկաւոր է միայն այն մարդկանց՝ որ արեգական տակ եղած ժամանակնին ևս մթութեան մէջ գործելու յաւուկ գործեր գործեն, և չյայտնուին: Ձեռնոցն հարկաւոր է՝ այն մարդկանց՝ որ իրենց ձեռքին վէրքը ծածկեն: Ամեն յաւելուած իւր պատճառն ունի:

Աշխարհի երեսում մի ընդհանրացած գաղափար կայ, որով մարդիկ կը կարծեն, թէ անիծք տրուի ևս կան: Այս գաղափարի բացատրութեան մէջ անիծք բառը՝ չունեցող սիտի չհասկանանք. այլ՝ պէսպէս չարաչար վերայ չդատող միայն սիտի հասկանանք: Ամենէն անմիտ մարդն էլ, թէ և լինքնիրենը չմտածելը, բայց երբ մտածածը լսէ, կը հասկանայ, ճակատին վերայ խիստ ճանճին կամ մժեղին կը վարէ, չիողուը որ խածնէ: Մարդու հագած հանդերձին անլեզու խօսքերն՝ այսչափ բացատրական խօսքով խօսելէ եաքը, կը յուսամ, թէ անիծք—չդատող անգամ հասկացաւ:

—Հասկացուցի՞:

—Հասկացայ, տահա. ես վայտէ մարդ ի՞նչ եմ:

Ինչպէս որ հանդերձը կը պատմէ մարդուն վերայ, նոյնպէս և երեսին ծիծաղը կը պատմէ. երեսը՝ մարդու սրտին և մտքին ցանկութեանցը և խորհուրդներուն հանդիսարանն է։ Մարդու մտախոհութիւնը՝ և մտաց ամբոխութիւնը՝ որիշ որիշ գծերով և գոյներով կը նկարուին երեսին վերայ։ Դէմքի կամ երեսի այս յայտնութիւնը՝ նկարի կընմանի Ճիդի, որուն Ճղիւ Ճանաչող սրատես աչքեր չատ կան։ Մարդու ուրախութիւնն ու տրտմութիւնը, բերկրութիւնն ու բարկութիւնը, գուարթութիւնն ու տխրութիւնը, հպարտութիւնն ու խոնարհութիւնը, պատկառանքն ու լրբութիւնը, վեհմտութիւնն ու ցածութիւնը, արդարութիւնն ու անիրաւութիւնը, կարեկցութիւնն ու վրէժխնդրութիւնը, ընկերսիրութիւնն ու ինքնահաւանութիւնը, անկեղծութիւնն ու կեղծաւորութիւնը, համարձակ լեզուն ու շողոքորթը, ախորժանքն ու զզուանքը, անկաշտութիւնն ու կաշտութիւնը, բաւականն ու անբաւականը, խոհականն ու խելառը, սրաչուրն ու ծանրալուրը, սրատեսն ու վատատեսը, ողջախոհն ու բղջախոհը, հոգածն ու անհոգը, հասունն ու տհասը, այս ամեն տեսակ հակադիր կիրքերն ու յատկութիւններն՝ ուրոյն ուրոյն իրենց գոյնն ու գծագրութիւնն ունին ամեն դէմքի վերայ. որոց ամենամանը փոփոխութիւնն անգամ դիտող, տեսնող և զննող սրատես աչքեր կան։

Եթէ մէկը՝ հանդերձի պատմածն, և դէմքի ծիծաղին պատմածը՝ միանգամայն դիտէ մի որևիցէ մարդու վերայ, իսկոյն կը Ճանաչէ նորա ներսումը ծածկուած մտքին կամ լուսաւոր խորհրդարանը. որով և կը յայտնուի թէ նա առաքինական Ճանապարհներում քայլող է, թէ մոլեկան Ճանապարհներում։

Մարդու բարուցը վերայ պատմութիւն անող դէմքի փոփոխութիւնները՝ կամենալու և չկամենալու խորհուրդներու փոփոխութենէն յառաջ կուգան։ Մարմնական յօժարութիւններէն սաստիկ ներգործուող մարդկանց դէմքն՝ ուրիշ կերպարանք է, հոգեկան յօժարութիւններէ ներգործուողինն՝ ուրիշ։ Այս երկու տարբեր յօժարութիւններն ունեցող մարդիկ երբ իրենց բաղձանքին կը հասնին, դէմքերնին Ճշ վիճակ կը ներկայացնէ, այն տարբերութեամբ, որ հոգեկան բաղձանքին հասնողին գոհութիւնը տևական է, մինսինը՝ րոպէական։ Այս երկու տարբերը յօժարութեանց կուգուն ևս իւր տեսիլն ունի մարդու դէմքին վերայ։

Վերջապէս ծիծաղին կամ խնդալուն աննշանն անգամ՝ պատմութիւն կանէ մարդուն վերայ, թէ նա զգացմանց արժէքը կարող է Ճանաչել, կամ ոչ։ Մեռելի վերայ խնդալը, կախաղած մարդու վերայ սրտի հանգստութեամբ նայելը՝ կը ցուցնեն, թէ այն մարդուն միտքն ուրիշ առարկայով զբաղուած է, և աչքերը մեայն կը նային, ու չեն տեսներ։ Մարդու վախճանը մտածող մարդը՝ ոչ միայն մեռելի վերայ նայած ժամանակ՝ այլ մինչև իսկ հեռվէն մեռելի գանգակի հնչիւնը լսած ժամանակ՝ մկկէն ի մկկ խնդալէ կը դադրի. իսկ մանուկը՝ որ չգիտեր մարդու վախճանը և չխորհիր, իւր մօր դիակին մօտ ևս իւր խաղը կը շարունակէ, ինչպէս նորա կենդանութեան ժամանակին։

Դէմքը տխուր՝ մի մարդու կը պատահիս, ու կը հարցնես, թէ ինչ ցաւ ունի. կը պատասխանէ, թէ ոչինչ. և միևնոյն ժամանակ տխրութիւնը նորա դէմքէն կը բաժանուի։ Այն մարդուն դէմքի փոփոխութիւնը կը պատմէ քեզ, թէ այն մարդը՝ իւր սրտի նեղութիւնը քեզմէն Թաքուն պահել կուզէ։ Ուրիշ մի մարդու կը հարցնես միևնոյն հարցումը, և միևնոյն ոչինչ պատասխանը կուտայ. բայց՝ միևնոյն ժամանակ դէմքի տրտնութիւնը չփարատիր։ Այս շարունակուող տխրութիւնն էլ կը պատմէ քեզ, թէ այն մարդը քեզմէն որևիցէ դիւրութիւն և մխիթարութիւն չյուսար. և ակնկալութիւն ունի ուրիշ անձէ, որուն և կսպասէ։ Ուրիշ մի մարդու կը հարցնես միևնոյն հարցումը. և նա իւր նե-

զուլթիւնը կը պատմէ. ու միևնոյն ժամանակ ախորուժիւնը կսկսի Թեոդևանալ. կամ թէ նախ ախորուժիւնը կը վերանայ և ապա կսկսի պատմել։ Դէմքի այս վոլտոխուլթիւնն էլ կը պատմէ քեզ, թէ այն մարդը՝ մի կատարեալ մարդ համարեց գքեզ, և իւր նեզուլթեանը մի որևիցէ դիւրուլթիւն կսպասէ քեզմէն։

Այսպէս կատարեալ ողջախոհուլթիւն ունեցող մարդուն՝ մանաւանդ երիտասարդին վերայ պատմուլթիւն կանէ նորա դէմքի տեսիլը, թէ նա ինչ մարքի և սրտի կատարելուլթիւններ ունի. նոյնպէս և բղջախոհ երիտասարդին տեսիլը՝ կը պատմէ նորա մարքի և սրտի թերուլթիւնները։ Ողջախոհուլթիւնն անթերի պահպանող երիտասարդին տեսիլն ակնահաճոյ է ամեն ողջախոհ մարդկանց. թէև նա գեղեցիկ համարելու գոյնը չունենայ։ Իսկ սրտի չօժարուլթեանց և մարմնական ցանկուլթեանց կաղ եղած երիտասարդին տեսիլն՝ անհաճոյ է ողջախոհին, մանաւանդ թէ ատելուլթիւն և հակակրուլթիւն ևս կը գրգռէ ընդհանրապէս, թէպէտ նա՝ գեղեցիկ համարուած գոյնը ևս ունենայ։ Պատուհին հասունն ու համեղը, երիտասարդին ողջախոհը։ Գեղեցիկ տեսիլ ունեցող երիտասարդն՝ եթէ ողջախոհ չէ, նա իւր ցեղին կամ ազգին ամենաճանը պատուհասն է, ըստ որում կը վերաւորէ բոլոր իւր ընտանիքի կեանքը, և նորա սեռական օրէնքը ևս միասին. այնուհետև կսկսի զօրանալ նորա ընտանիքի սերունդին սրատումն՝ հսլարտուլթիւն, որ նախանձ կը ծնի, նախանձը՝ բարկուլթիւն, բարկուլթիւնը՝ ծուլուլթիւն, ծուլուլթիւնն՝ ագահուլթիւն, ագահուլթիւնն՝ որկրամոլուլթիւն, որկրամոլուլթիւնը՝ չնուլթիւն, որ դադարումն է ահեղուլթեան։ Քանի քանի դժբազտուլթիւններ ներս կը մտնեն ընտանիքի մէջ հպարտուլթեան առաջին քայլումն։ Մարդկային ողջախոհուլթիւնն առաջին անգամ կը հարուածուի հպարտուլթեան միտումէն, երկրորդ անգամ հոգւով կը վիրաւորուի նախանձու հակումէն. և երրորդ խոտորումն որ լինի դէպ

ի բարկուլթիւն, արդէն խիստ կսկսի մահը մարմնանալ։ Բարկուլթեան գործած մարմնական սպանուլթիւններն խիստ շատ են, որոց հաշիւը կը ներկայացնեն ամեն ազգաց մէջ՝ դատաստանական քննուլթիւններն ու այլ և այլ մանրագնին տեղեկուլթիւնները։ Ագահուլթիւնը՝ մարդուն հոգին կը գերէ. ծուլուլթիւնը՝ կենդանի մեռելներ միայն կը ներկայացնէ. որկրամոլուլթիւնը՝ մարդուն կը նմանցնէ սեղանատան մի խոզուվակ, և այնպէս կը գործածէ. որուն հետևորդ ցանկուլթիւնը՝ մարդուն մարմնական ամեն մի յօդուածներն խրտմէ կանջատէ։

Հանդերձի և դէմքի ծիծաղի պատմածին չափով կը պատմեն մարդու վերայ նաև նորա ոտքի քայլերը։ Քայլափոխի պատմուլթիւնն աւելի պարզ է և շատերուն հասկանալի։ Նոր ոտքի երթող մանուկը երբ կսկսի վազել, ամեն ոք գիտէ, թէ ահա ընկնելն սկսեց։ Անգործ մարդուն ոտքերը՝ դէպ ի դատարկապորտներու յաճախած տեղերը կուղղուին. գործող մարդուն քայլերըն ամենայն օր դէպ ի գործատուն կուղղուին։ Երբեմն կը պատահի, որ մշտապրպտ մարդը՝ անէն դուրս կուգայ զբօսավայր երթալու մտօք և գործարանի դուռը կը հասնի. նոյնպէս և անգործ մարդը մի հրամանի կատարելու համար դուրս կուգայ անէն, և դատարկ զուարճուլթեանց սենեակը կը հասնի, խսպառ մոռացած, թէ ուր պիտի երթար, և ինչ բանի հրամայուած էր։ Հարբեցողները կասեն. թէ շատ ախորժ կը բուրէ գինետան հոտը։ Պաղտնագործ մարդը՝ գիշերները միայն կելլէ շրջագայելու։ Գողեր կան, որ ցերեկը կը կողոպտեն, որոց վարպետուլթիւնն այն է, որ քայլերնին կը փոխեն, ամենատզնիւ կերպարանքներու տակ կը ծածկուին։ «Շունը՝ տէրոջը չճաչնար» կասէ հին առակը. և այս՝ միայն խիստ քաղմաթիւ խաժամուժի մէջ, (որ գիշերուայ մի կերպարանք է)։

Շներն իրենց տէրոջ ոտնաձայնը կը ճանաչեն, և ըստ

այնմ կը հաջեն. այնպէս որ տունն եղողները կ'ըմանան, թէ ով կուգայ։ Մինչեւոյն չունը օտարաձեւ կը հաջէ երբեմն. լսող ընտանիքը կը կարծեն, թէ օտարական մտաւ նեբս. և կսպասեն, որ չունը՝ նեբս մտնող օտարականին մուտքն արգելելու ձեւով չհաջեր, կ'ելլեն, կը տեսնեն, որ տան տէրն է եկողը, բայց քալուածքը տարբեր. չունն էլ կասես թէ տէրոջը վերայ լաց կը լինի։

Պարսից Կիւրոս Թագաւորի մանկութեան օրերէն՝ Մարաց Աժդահակ Թագաւորին պատահած մի դէպք կը պատմուի. «Աժդահակ սեղանի վերայ մի Թաս գինի ձեռքին, կը դառնայ իւր Թոռին Կիւրոսին՝ որ մանուկ էր, և կը հարցնէ.

—Կը համբս այս կարմիը ջուրէն։

—Չէ, չեմ համեր։

— Ինչո՞ւ չես համեր։

—Կը խմեմ, կընկնիմ, տահա։

—Մինթէ գինի համողը կը խմեմ։

—Հապա երէկ որ Արքան խմել էր, ոտքերը ծուռ ծուռ կը քալէին. և մինչև վերջը ընկնելու պէս կը լինէր, հէնց հայրս կը գրկէր, ու չէր Թողուր, որ ընկնիս. ես վախեցայ, Թէ Արքան կը մեռնէր ու լաց եղայ։

Կիւրոս ընդամենը վեց կամ եօԹը տարեկան մանուկ էր, երբ այս քայլերը կը դիտէր։ Ուրիշ քայլ է լուրջ մարդունը, ուրիշ է և հարբածինը. ուրիշ քայլ է կտրիճինը, ուրիշ և վատինը. ուրիշ քայլ է առողջինը, ուրիշ և հիւանդինը։ Արիասերտ երիտասարդին Թէ ոտնաձայնը, և Թէ քայլափոխն հաճոյ են գործունեայ անձին աչքին ու ականջին. անարի և վատ երիտասարդն յետ կը մնայ ամեն գնացքում։ Թեթև ու արագ և շարունակ միակերպ ընԹացող ոտքերն՝ ուրիշ անձնաւորութիւն կը քալցնեն, եաև նայող գլխուն ոտքերն անսայԹաք առաջ գնալու երաշխաւորութիւն չունին։

ՄաՀկալն եաև նայելով կը չեղլ գծէն, խոպան կը Թողու հերկը, կը խանգարէ ուղիղ ու լման վարը, անօսրաբեր կանէ անդը, տեղի կուտայ փշերուն և որոմին, որ կաճին ցորենին մէջ, և կը դառնացնեն հացին սակնան։ Շեղ մտածող գլխուն և շիլ նայող աչքին կառավարած ոտքերն յաճախ կը գայԹակղին, և կը գլորին. երիտասարդը՝ որոյ ոտքերն մեշտ ուղիղ Ճանապարհումն անխոտոր քայլելու վարժուած են՝ ԹեԹևընԹաց և անսայԹաք կօշիկ կը յօրինէ, և հանգիստ կը քայլէ։ Փայլունին հետևողն՝ ուղիղ Ճանապարհէն կը խոտորի, և աչքին կը վնասէ. պզտիկ կօշիկ սերողը՝ ոտքը կը ցաւցնէ. կարճահասակը՝ կրունկները և տապանը կը բարձրացնէ։ Ոչ Թէ կօշիկի պատերուն Ճայնը, այլ՝ կըտրիճ երիտասարդին ոտնաձայնն է, որ ներգաշնակի ոՃով կը քաղցրանայ ականջի, ուղիղ ու հաւասար կշռով՝ կը գեղեցկանայ աչքերու։ Շատերը կան, որ լրենց ոտնաձայնը կարուկ անելու համար երկաԹատակ կօշիկներ կը հագնին, բայց դարձեալ ջանասէր հոգիէ ԹելադրուԹած արիասիրտ երիտասարդի ոտքում պարզ տրեխն աւելի հս կը պայծառանայ. և հաճոյ է հասկացողին։

Հայաստանումն ընդհանրացած տանդաւական խըրատներումն հետևեալ դէպքը շատ անգամ կը լսեն երիտասարդները.

«Պարսիկ ազնուականին մէկը իւր ծառաներէն մէկուն արիական քալուածքը կը գովէր, և իւր Թիկնատպահներուն գլխաւորն արած էր. Խիկար՝ այս ընտրուԹիւնին չէր հաւներ։ Մի օր դրան հրապարակում՝ մի պարզատեսիլ երիտասարդ կանչեց Խիկար. հրամայեց, որ երԹայ լրենց (Խիկարին) տունը, և մի տեղեկուԹիւն բերէ, Թէ արդեօք հիւր եկած է լրենց։ Մի փոքր ժամանակ լռելէ ետքն ասաց Խիկար, Թէ երիտասարդն հասաւ արդէն այս ինչ փողոցի գլուխը. մի փոքր ժամանակ յետոյ աւելցուց, Թէ երիտասարդն

հասաւ տունը. բախեց դուռը . . . . տեղեկացաւ, ու չետ կը դառնայ . . . . հասաւ այս լինչ փողոցի գլուխը. մի փոքր ժամանակ ետքը՝ ասաց. Թէ հասաւ երիտասարդը. որոնք որ մտաբերեցին որ ասեն Թէ դեռ չհասաւ, խօսքերնին բերաննին մնաց. ըստ որում խկլոյն երևեցաւ երիտասարդը: Խկլաը վճռեց. Թէ այս երիտասարդն. ուղիղ և արևական քայլեր ունի: Կտրիճին քայլափոխը չափաւոր կը լինի, կտրիճին ոտքն է արժանաւոր, և ոչ գեղեցիկ կօշիկը:

«Ագնուականը՝ հրաւիրեց շատ մարդիկ իւր տունը, և իւր ծառայի քաջոտն քալուածքը նոցա առջև ալետի հանդիսացնէր: Երբ դահլիճում նստեցան, կանչեց ագնուականը՝ իւր ծառային. որ չուկայ երթայ, և մի քաշ կեռաս գնէ, բերէ. հնազանդեցաւ ծառայն ու մեկնեցաւ: Ագնուականը վստահացաւ, ու խկլաբին չափը ձեռք առաւ. և մէջ ընդ մէջ լռելով սկսեց ասել.—ահա սանդուխքէն իջաւ. . . . բակէն դուրս եկաւ. . . . փողոցի գլուխն հասաւ. . . . չուկան մտաւ. . . . խանութն հասաւ. . . . սակարկութիւնն արաւ, կը կշռեն, սպասը լեցուց, վերցուց ու կը դառնայ. . . . փողոցը մտաւ. . . . բակը մտաւ.... ներս մտաւ, սանդուխքէն եկաւ. . . . Ահմէտ—ձայն տուաւ. ծառայն խկլոյն դահլիճումն երևեցաւ. որոնք որ «ՔՀէ՞ չանչեցին, ամաչեցին. ըստ որում Ահմէտի ձեռքում սպասը դեռ դատարկ էր: Ագնուականի բարկութեան դէմ պատասխան չունէր, քթին տակը կը քրթմնջէր, ու կօշիկին կը հայհոյէր, Թէ դեժուռքաւ կը մտնէ ոտքը: Խկլաբն այն տեղ չէր, բայց խմաստութիւնը գովեցաւ:»

Պատմական խիստ շատ հատուածներ կան, որ կը հաստատեն, Թէ մարդուն կատարելութիւնն է, որ կը պատշաճեցնէ կատարեալ գործիքը, և Թէ կատարեալ գործիքը՝ կատարեալ գործ կարտադրէ Ճարտարի ձեռքումն, և ոչ Թէ լաւ կօշիկը՝ Ահմէտի ոտքումն:

Վերջապէս Թէ պատմութիւնները, և Թէ կատարեալ

մարդկանց սրատես աչքերու անվրէպ փորձառութիւնները՝ մեզի կը հաստատեն, Թէ կատարեալ ողջախոհութեան Ճանապարհումն անխոտոր ընթացքով յառաջ գնացող երիտասարդին՝ Թէ հագուստը, Թէ երեսին ծիծաղը, և Թէ ոտքին քայլերն՝ իրենց բնական պարզ երևոյթներուն՝ այն երիտասարդին անթերի կատարելութիւնները կը պատմեն մեզի. իսկ ողջախոհութեան Ճանապարհէն խոտորած երիտասարդին թերութիւնները կը պատմեն ամեն դիպուածում, Թէպէտ և մեծ խորամանկութեամբ ու Ճոխ զարդարանքներով զգուշանան ու զարդարուին: Մաքրասէր երիտասարդին ոտքերն աւելի քիչ կը ցեխոտին Ճմեռնային եղանակներում, քանզի անմաքուր երիտասարդին ոտքերն ամառնային եղանակում. մանկատած մայրերն՝ ամեն տեղ ունին այս փորձը:

Ի. ՋԱՐԴԱՐԱՆՔԻ ՊԱՏՃԱՌՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ—

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ.

Անյիշատակ ժամանակներէ ի վեր՝ ամեն ազգաց մէջ զարդարանքներ կան. նոյնպէս և մեր ազգին մէջ զարդարանքի առանձին Ճաշակ կան, որոց ամեն մի մասնը մասնը տարբերութիւններն անգամ իրենց սեպհական որոշ նշանակութիւնն ունին: Մեր պատմութիւններում՝ շատ անօսր կերևին զարդարանաց մասին տեղեկութիւնները. բայց շատ հին ժամանակի կռապաշտական սովորութիւններուն հետ խառն մինչև այսօր այս զարդարանաց իւրաքանչիւրն ըստ տեղւոյն գործածելու սովորական աւանդութիւն մի կայ, և որ շատ հայերու մօտ տակաւին իրրև պարտականութիւն կը գործածուի Հայաստանի և գաղթական հայերու գիւղերում՝ Ծննդեան, անուանակոչութեան հարսնիքոցներուն, պրոբոպոլիտոս-

ընտանեկան հանդէսներուն, և կրօնական տօներուն կատարուած ցոյցերուն. որոց եթէ մի անգամ կատարեալ մտադրութիւն դարձնենք, նախամուտ կը լինինք, թէ իւրաքանչիւր զարդարանք ինչ մտքով սկսուած են նաև մեր ազգին մէջ: Այս աւանդական գործողութիւններն ամենքն էլ իրենց յատուկ գոհացողական և գուսանական (գովաբանական) երգերն ունին. որ այժմս աղաւաղուած են Թրքական բառերով, և բուն իսկ հայ բառերու խառնուածով, իմաստներու և տողերու պակասութիւններով: Որոնք զարձեալ բաւական լոյս կուտան և նախամուտ կանեն հետազօտողին. (որոց մի մի տեսակը կը դնեմք այս տեղ իրենց գուսանականովը միասին, ինչ որ ի ձեռին ունեմք):

Ծննդեան աւուր աւանդական արարողութիւններն են.

Նորածին մանկան վերայ մի կտոր ձեղմայ ։թա-, և մի կտոր ։ըմիը ։թա- կը ծածկեն, զոր կը պատրաստէ նոյն իսկ նորածին մանկան մայրը՝ առաջին անգամ իւր արգանդի կենդանութեան խաղալն զգացած օրէն: Մայրական այս առաջին ընծայն՝ ամենապարզ տեսակէն մինչև ամենաթանկագինը կը պատրաստեն մայրերն՝ իրենց ձեռքի ընդարձակութեան չափով: Ամենապարզ տեսակն է բամբակէ մաքուր կտաւ՝ եզերքն ոլորած կերպասի թելով, և կարմիրը զարձեալ պարզ բամբակէ կտաւ՝ որդանով ներկած, եզերքն ոլորած կերպասի կանաչ թելով, և կեզրոնում մի խաչ բոլորակի մէջ բանած նոյն կերպասի կանաչ թելով: Այս երկու տեսակ ընծաներուն ձերմակն՝ իրրև ռուռա կամ շոռի՝ կը նշանակէ ներչին պրոտեան, իսկ կարմիրն՝ իրրև պոփոճան՝ կը նշանակէ արտաքին մոխրելիա:

Մանկաբարձը՝ երբ առաջին անգամ կը նկատէ այս զաւակն՝ իրեն հօրը, մանուկին վերայ ձգուած կը լինին այն ձեղմայ ու ։ըմիըներն, և մանկան գլուխը մի ։որ հայ պրած: Մանկան հայրը կընդունի այն հայն համբուրելով, և Աստուծմէ գոհանալով: Հայրական այս առա-

ջին գոհութեան գուսանականէն չորս տող միայն մնացած է, որ շատ հայերու բերանումն սովորական է մինչև այսօր Անոյ և Շիրակայ գաղթականներէն շատ ժողովուրդներումս. մասնաւորապէս Կէյվէյ մէջագիւղի հայերումս. որոց բերնի վրիժվրիժոցէն առած եմք այս չորս տողը.

«Ծառայիմ Աստըծու (1) վիճաքին,
Որ ինձի (2) հայս աւելցուց.
Մեռնիմ Աստըծու խոմքին (3),
Որ աչ (4) ձեռքս երկնցուց»:

Ծանօթութիւններ. (1) Կէյվէյ մէջագիւղի Հայոց և Հայ-Հոռոմներու խօսած լեզուն՝ մօտիկ նմանութիւն ունի Կապղուաներէն, Բաղեշի, Մալղարայի, Ակնայ և գիւղերի, և նոր Նախիջևանի Հայոց մէջ խօսուած լեզուներուն: Հայերուն և Հայ-Հոռոմներու լեզուին մէջ եւս մանր տարբերութիւններ կերևին: Այս տեղ կը ծանօթացնեմք միայն այն նշանաւոր տարբերութեանցը՝ որովք որ կը խոտորի գրաբարի օրէնքէն ու հնչիւնէն: Զորօրինակ Աստըծու կասեն փոխանակ Աստուծոյ ասելու. լեզուի ընդհանուր արտաբերութեանց մէջ ոչ երկբարբառ ամենևին չերևիր՝ ոչ բառին վերջը, և ոչ մէջը, այլ նորա փոխանակ միշտ ու երկբարբառը կերևի: Ու ը փոխանակ՝ շատ անգամ է:

(2) Ես գերանուն այսպէս կը հոլովի. ես, իմ, ինձի, կամ ինձ, ինձմէ, ինձով, ինձում: Մենք, մեր, մեզի, մեզ, մեզմէ, մեզով, մեզնում:

(3) Ս և Ն տառերուն նախադաս ինկած ո երն առհասարակ ո կը հնչին. այս օրէնքով, խոմքին բառը պիտի կարդանք խոմքին. որուն ինչպէս կերևի ե գիրն ինկել է բերնի բերան ազաւաղմանց մէջ, ինչպէս ամենայն բառերու վերջումն եղող բացառեալ հետևորդ ե երն. զորօրինակ փոխանակ ասելու. նուռն, դուռն, գառն, մատն, մատն, ամառն . . . կասեն. նուռ, դուռ, գառ, մատ, մատ, ամառ. այս աղաւաղման բնական մուտքովն ինկած է, և խոմքին բառին միջին ե գիրը. որ պիտի

Հօր բերնի այս գոհացողականը պարզ կերպով կը յայտնէ, թէ նա ինչ ակնկալութեամբ կը նայի նորածնին արուն վերայ. և թէ ինչ մտքով դայեկն այն հացը կը մատուցանէ մանկան գլխուն: Հայրական ակնկալութիւնն է նէ արու զաւակէն, որ հօր հացին առաւելութեան բուն միտքը դառնայ մի օր. և հօր աջ ձեռքը—գործող ձեռքն աւելի զօրաւոր հանդիսացնէ այս աշխարհի մարդկային կատարելութեան կեանքումն:

Եթէ նորածինն աղջիկ զաւակ լինի՝ մանկաբարձը կը դնէ նորա գլխիկը՝ ձեռքն ու թաշկինակը վերայ՝ մի ձեռքն ընչինակ—երեսսրբէլ, և մէ թոռ պահէր, (կամ ի–ղ, կամ ի–պ, կամ պո–ի, և կամ մէ փոքր ի–պոյ բաշխ, կամ որևիցէ ո–ռէլ պա–շար յիշատակ համար պարտաւոր). և այնպէս կընծայէ հօրը. և հայրը կը գոհանայ այն պանիրն համբուրելով ու հետևեալ սովորական գոհացողականն ասելով.

«Ծաւալիմ (1) Աստծու վիճակին,
Որ հացիս իւղ քսեց (2).
Մեռնիմ Աստծու խոսքին,
Որ իմ քրտինքս սրբեց»:

կարգացուիլը խնամքն:

(1) Ս չծորդութեան է ձանաւորն է և փոխուած է սահմանական ներկայի Թէ հզակի և Թէ յոքնակի առաջին դիմքերում. զօրօրինակ ծաւալիմ, ծաւալինք. գիտիմ, գիտինք. (ներգործական): (2) Եա հրկիրբրբառը՝ է ձայնաւորն է և փոխուած է. զօրօրինակ սրբեաց—սրբեց. քսեաց—քսեց:

Հօր բերնի այս գոհացողականէն ևս պարզապէս կիմանանամք, Թէ ինչ ակնկալութիւն ունի նա զաւակին: Ծնողական ակնկալութիւնն է. Թէ աղջիկ զաւակն՝ երեսց հացը՝ իւղով և որ և իցէ հերակուրով ալիսի համեմէ. և աշխատանաց քրտինքը սրբէ հանգստացնէ: (Մինչև այսօր իսկ Հայոց տներում նորահաս աղջկանց պաշտօնն է աշխատութենէ դարձող հօրն ու եղբարներուն տաքերը լուանալ, սրբել, և ձեռքերուն ու գլուխներուն ջուր լեցնել. և երեսսրբիչները միշտ մատուր պահել: Եթէ երբէք հերակուրն անալի լինի, աղջկիները միայն կը յանդիմանուին):

Ծիննդեան օրը՝ նորածինն մանուկն՝ ինչպէս հօրը՝ նոյնպէս և մեծ մօրը, կամ տանտիկինն ևս կընծայէ մանկաբարձը միևնոյն եղանակով. և այս պատճառ՝ մի երկար գուսանական կը կարդայ արու մանուկին վերայ նորա գալուստը ողջունելու օրհնենքներով, և կը գովէ նորա տեսիլն այսպիսի բառերով.

«Կլոր գլոխը (1), լոն (2) ճակատը, կամար ունքերը (3), բակլայ քներակը (4), շուշմայ (5) բերնակը (6), նշխուն (7) աչքերը, սիրուն ընկոյզը (8), սիգարիկ (9) բլթակը, ոմուր(10) կռնակը (11), բարձր ճուռը (12), երկոն (13) պայտերը»:

---

(1) Գլուխ բառին ո– հրկիրբրբառը՝ ո ձայնաւորի փոխուած է. և այս ո ձայնաւորն աւելի ո– հրկիրբրբառի ձայն ունի զարձեալ:

(2) Լոյն բառին այ հրկիրբրբառը՝ ո ձայնաւորի փոխուած է, ինչպէս ամեն բառերում. այս, այդ, այն, հայր, մայր, գայլ, վայր, վայտ, ոտ, ոտք, ան, և այլն. հայ. տղ. գալ. վայ. գիտ. ոտ: Այս ընդհանուր օրէնքէն զատ ուրիշ ընդհանուր օրէնք մի ևս կայ նոյն լեզուի հնչիւնա-

Այս մխեհնոյն խօքերն յատուկ գուսանականով կերգեն և դայեկներն ու մայրերն, երբ որ մանուկին կը լողացնեն. որոյ գուսանականը չեմ յիշեր իւր օտքերովն. միայն բովանդակ միտքն է՝ մանուկին ապագայ կատարելութեան տարիքներուն յառաջ բերելիք արդիւնքներն ու քայլ քայլ գործերն ու արարքներն, արուեստից

ներուն, որ ՛ և ՝ գրերուն նախադաս ա ներն առհասարակ ո կը հնչուին. այս պատճառաւ և յայն, ձայն բառերը կրկին վոխակերպուելով կասուին. լեն, յոն. այսպէս և այն դերանունը, ան, ոն դարձեր է։

(3) Ցօղք բառը՝ ոռնէ կասեն. (յ տառի բնական հնչուածքն)։

(4) Քիթ՝ ասելու վոխանակ, կասեն ֆինդ. որմէ և քընթակ։

(5) Շուշայ՝ որ է հինգնեթն, էյարմարիը բէրան գոյականէն վերայ երբև ածական։ Գուցէ շուշոն (շուշան) բառն է աղաւաղուած։

(6) Բէրնալը. ոմանք կասեն շուշմայ բերոնակ, որ միևնոյն է։

(7) Նշոռն. ոմանք և կասեն նոխշառն կամ նեշռն, Թուքքերէնէ նոխուշէն խառնուած ու յօդած։

(8) Ընդոձը, ընդոլը, կամ Թէ անդը, անդոլը. կը նշանակէ ականջը. որ պիտի լինէր միայն անդը. բայց միւս ձևերն ևս կը գործածուին շաուերու բերանուամ։ Բաղեշեցիք կասեն. Էնդէձ. ակնցիք՝ ակոնջ, ոնկոռ։ Որմէ կը հետևի, Թէ այլ և այլ տեղացիներէ խառն է։

(9) Պէղուի —փոքրիկ. գուցէ առնուած է պիսաւ, բառէն. և ոմանց բերնուամ կասուի պոպի. կամ պղպի. կամ պոպ։

(10) Ոմոբ—ամուր։ (11)Լոնոյ—Թիկունք. և երբեմն նոռոն—բազուկ։ (12) Ճոռ—ազդր. երբեմն՝ ճոռնէր (յօքնակի է)։

(13) Երկոռ՝—երկայն (ըստ լայն բառին)։

Հարտարութիւնն ու առևտուրն յաջ դութիւնը. այս վերջին մխտքը բովանդակող տողերն են

«Մէկ է տղաս (1), ըլէ (2) հազար.
Պարզի (3) օրերն երթայ (4) պազար.
Երթայ, դառնայ, քայ ու արի (5),
Հետը բերէ հազար բարի (6)»։

Այս ոճով կօրհնեն, կը գովեն և աղջիկ տղաներն. որոց բովանդակ միտքն է ապագայն ապագային փառա-

---

(1) Տղայ—արու երեխայ. գրաբարի մէջ այ երկբարբառը՝ աղմկանկ բառերու վերջաւորի կը կարդացուի սովորական. այլ ընդհանուր կանոնով կը վարուի և այս գաւառական լեզուին, զանց անելով գրաբարի բոլոր բացառութիւնները. այսինքն այ երկբարբառը գարձած է կը կարդայ նաև դիմորոշ յօդի և յոքնակիի յանգերու յաւելուածուամ. մինչդեռ գրաբարն այս վերջին դէպքերուամ այ երկրարբառն երբեն բնական հնչմամբ կը կարդայ։ ո դիմորոշը՝ գրաբարի իմաստէն հեռի, էմ սահմանական իմաստն ունի։

(2) Ըլլէ—լեզի. լէնիմ էական խոնարհուածն է. սկ. ներկ. կըլլամ, կըլլաս, կըլլէ. կըլլենք, կըլլեք, կըլլեն։ Ապառնի. ըլլամ, ըլլաս ըլլէ. ըլլենք, ըլլեք, ըլլեն։ Ը մանրիկն՝ ահա, ահաոռիկ բառերու իմաստն ունի։ Ապառնի ժամանակը կը գործածուի նաև պըլլէ, պըլլէս, պըլլէ. պըլլենք, պըլլէք, պըլլեն։ Որ աւելի հաստատուն լինելիքը կը նշանակէ. պը մանրիկը պիտի բայիս վերջին մասն է։ Կան ուրիշ գաւառական ձևեր, որոց մէջ պի պիտի են առաջին վանկը կը գործածուի այս մտքով ապառնիներուամ. (պիգամ, պիգաս, պիգայ. պիգանք, պիգաք, պիգան—պիտի գամ... և այլն)։

(3) Պարզի օրերն—պազարի օրերն. պազար, պազարի, հետևաբար պիտի լինի պազրի. բայց հնչիւնի զժուարութիւնն՝ տեղի է տուել դիւրահնչիւնին, և կասեն պոզրի, և ոչ պոզրի։

(4) Երթայ. այս բայը շաուերու բերնուամ էլայ կը լսուի։

ւոր ակնկալութիւն, զոր ի՛ակնկալէն ծնողք իրենց զաւակներէն, և նախնիքն՝ իրենց ամբողջ սերունդէն։

Ծննդեան օրը կատարուած այս արարողութենէն կը խելամտինք, թէ ճերմակ ծածկոցը մարդուն ներքին սրբութիւնը կը ցուցնէ, և զարդարանքն է մանկանց. նոյնպէս ւորմէր ծածկոցը՝ արտաքին ճոխութիւնը, իշխանութիւնը կը ցուցնէ, որ զարճեալ զարդարանք է մանկանց։

Անցնինք այժմ անուանակոչութեան աւուր աւանդական արարողութեանց։

Անուանակոչութեան օրը, որ այժմ սովորաբար մկրտութեան օրն է, մանկաբարձը կառնու մանուկին, և կը վաթսաթէ մօրն ընծայած ճերմակ ու կարմիր կոտաւներուն մէջ. և գրկումը մի բաղալջ զրած, Ճանապարհ կելլէ դէպ եկեղեցին. Ճանապարհին ով որ պատահի առաջին անգամ, նորան կը մատուցանէ մանկաբարձը՝ մանկան գրկի բաղալջը. եթէ ոչ ոք չպատահի Ճանապարհում, եկեղեցի որ հասնի, կը մատուցանէ ժամկոչին, կամ քահանային, որը որ նախ պատահի։ Եկեղեցւոյ գաւթում կսպասէ մանկաբարձը՝ մանուկը գրկումն առած. մինչև քահանայն կուգայ զգեստաւորուած, մաշտոցը կամ ծխարանը ձեռքումն. կընքահայրը ևս կուգայ քահանային ետևէն, և մանուկին վերայ կը տարածէ մի ճերմակ շապիկ, և մի կարմիր կապայ կամ պատմուճան, և ապա կառնու մանուկին լուցեալ ջահերով. քահանայն կսկսի մկրտութեան խորհուրդը. և աւարտումէն ետքը մանկաբարձը կը հագցնէ մանուկին՝ կնքահօր ընծայած շապկին ու կապան, որոց անուն կուտան Ֆեռնելը։

(5) Ֆոջ ու պրէ. ոմանք կասեն ֆաջավաբէ, կամ ֆոջուպրէ։

(6) Բարէ—պէրտանէ պարտէ. այս բառն ընդհանրապէս պարտէի նշանակութեամբ գործածող զաւառականները շատ են։

Մկրտութենէն ետքը քահանայն՝ բուրվառը ձեռքումը, և երկու մոմակալ երկու կողքումն Յովհաննէս Մկրտչի շարականն երգելով կերթան դէպի տուն. կնքահայրն էլ նոցա ետևէն մանուկը գրկումն առած։ Մկրտութեան օրը՝ նոյն ընտանիքում տօն է սովորաբար, և բոլոր եկեղեցւոյն, կամ գրացի աղքատներուն մեայն ագապ կուտան մկրտելոյն ծնողքն. երբ մկրտեալը տուն կը հասնի, բոլոր բազմութիւնը կը դիմաւորեն մինչև բակի դուռը, և հանդիսիւ կելլեն վեր, «Լոյս ի լոյսոյ» շարականն երգելով. այնտեղ քահանային արարողութիւնն աւարտելէ ետքը, մկրտելոյն հայրը կուգայ կը համբուրէ իւր որդւոյն, և մի ընծայ կընուիրէ. բոլոր բազմութիւնը կը համբուրեն մկրտեալին՝ կնքահօր գրկումն, և ապա կնքահայրը կը յանձնէ մօրը։ Ագապի սեղանումն մատաղին և հերկսայէն ետքը կը մատուցանեն մի մի թաս գինի. որոց առաջինը կը խմեն տունն ու ծնողքն օրհնելով.

«Սուրբ մեռոնը տներնիդ անպակաս լինի.
«Շատ զաւակներու ծնող դառնայք.
«Ձեր զաւակներուն պսակը պագնէք»։

Այս մաղթողական խօսքերը կասեն ու կը կրկնեն քահանայի օրինակին հետևելով։ Եւ երկրորդ թասը կը խմեն կնքահօրն ու մկրտեալին օրհնելով.

«Կնքահայրը, վարձդ կատար.
«Աստուծոյ շնորհքովը մեծնայ, զարգանայ.
«Հնազանդ զաւակ լինի.
«Ծնողքն իրմով ուրախանան.
«Իւր ազգին փառք ու պարծանք լինի»։

Այս մաղթողական խօսքերը կասեն ու կը կրկնեն քահանայի օրինակին հետևելով։

Այս Թասերու սովորական օրհնենքներն են՝ նորածնի վերայ հաստատուող կամ ծագումն առնող ծնողական ակնկալութիւնները կը պարզեն։

Անուանակոչութեան օրը՝ հայրը մանուկին հանդուրելով կընծայէ մի փոքրիկ գործիք (ընդհանրապէս երկրագործական).—խոփ, քար, ըհոլ, մանգաղ, նռան, նռնկի, ոռոփ, լուր, նիզակի քուն, պտուտակաքար, հէծանոց, եղան, փօռ . . . որոց ամենքն էլ միևնոյն իրենց սեպհական արհեստի Հարստութիւնը կը նշանակեն. և գօտին կը նշանակէ պատրաստականութիւն անձին և ժրութիւն. այսպիսի ընծայով, մանկան հայրը՝ իւր նշանաբանը դրած կը լինի նորա վերայ, թէ այն մանկան ինչ տեսակ արհեստ կամ զարգացումն կը ցանկանայ։ Միևնոյն կերպով և աղջիկ երեխային կընծայէ հայրը մի փոքրիկ ընծայ.—մանգաղ, ասղոց, մահիճ, չէռ, հրի պռոստ, նռնկիր, տմիր կամ մաղ, փղբոսկի չռ . . . և պտրաստական ժրութիւն և բազմազբաղ արիութիւն։

Մանկութեան այս ընծաները կը պատրաստուէին՝ երկաթէ, պղնձէ, արծաթէ, ոսկիէ, կաւէ, գայլախազէ, կապուտաքարէ, հագիգէ, ուլունքէ, ծնողաց ձեռքի ընդարձակութեան չափով։ Այս ընծաները կը կախէին օրօրոցին վերայ իբրև զարդարանք. երբ մանուկը կը մեծանար և օրօրոցէն կը հրաժարեցնէին, այնուհետև վիզը կը կախէին ոսկի կամ արծաթի շղթայով, և կամ նարօտով (կարմիր ու Հերմակ, կամ թէ կարմիր ու կանաչ ոլորած թելով). որով մանուկն ի նկատի ունենար այն գործիքը, և հետզհետէ քանի մեծանար, կը սովորէր այն գործիքին նշանակութիւնը, և ինքն էս մասնաւոր աշխուժիւ նոյն նշանաբանին պատրաստականութիւնն զգայ կսկսէր, և շատ անգամ կը հարցնէր հօրն

ու մօրը, թէ ես գաւառ պիտի պահեմ, գինւոր պիտի լինիմ, էջ պիտի հեծնեմ, կամ պիտի կասում, ցորէն պիտի ցանեմ, սայլ պիտի շինեմ . . . . : Այս հարցմունքներուն կը պատասխանէին ծնողական բերաններն՝ իրենց ակնկալութիւնն արդիւնաւորող խօսքերով, և օրինակական ձևերու խաղերով, մինչև որ մանուկն ինքնին կսկսէր աւելի մեծ գործիքները չինել իրեն համար, և մանկութեան առաջին խելահասութենէն՝ նոյն արհեստի տեսութիւններովը կը վարժուէր, ու փորձերու կելլէր։

Հեթանոսութեան ժամանակ այս զարդարանքներն՝ յուռութի փոխուեցան, այսինքն փղոսկր պատկերներ, որոց մէջ կը պահէին բարեպաշտական ազօթքները, կամ կախարդական գրուածները, ընծաէրէր, փոշտաէրէր. և թէ երիտասարդները և թէ կոյսերը վզերնին կը կախէին այն յուռութները մինչև ի մահ, կամ արմունկէն վեր թևին վերայ կը կապէին։ Յուռութները՝ միևնոյն հայրական ընծային ձևով կը յօրինուէին. զրօրինակ. եթէ հօր ընծայն մի մանգաղ էր, յուռութն ևս Հինգ մանգաղ էր, և բունին մէջ պահարան ունէր, յորում թալիսմանները կը ծրարուէին. նոյնպէս՝ մահիկներու մէջը պարապ էր, և թալիսման կը դրուէր, ու սոցա փականքներն ևս գաղտնի փականք էին, և ամեն ոամիկ՝ չէր կարող բանալ։ Յուռութի գործածութիւնը կերևի մինչև ցայսօր ասիական գաւառներումն, մանաւանդ Թիւրք ժողովրդոց մէջ։ Յաճախ երևցած յուռութներն՝ եռանկիւն արկղի ձև ունին, բայց նոցա երեսին վերայ, մի գործիք, և մի կենդանի քանդակուած կայ տակաւին. կայ նաև զամբիւղաձև էջոր (օդ), որոյ մէջ ևս ինչպէս մահիկին մէջ կը պահեն փոքրիկ թալիսմաններ։

Այս յուռութները կրող Թիւրք երիտասարդները՝ կը պարծենան, երբոնց յուռութը ցուցնելով, և կը պնդեն, թէ իրենք նորա գօրութիւնովն անպարտելի կան

և կը մնան։ Այս պարծանաց դէմ հայ երիտասարդը կը հանէ ծոյէն մի խաչ, որ վզէն կախած է, և ցոյց տալով ու զինքը խաչակնքելով, կը նգովէ նորա յուսուլթը. վէճի կը փոխուի պարծանքը, և կռիւ կ'ելլէ. արդարև Հայը՝ իւր խաչի զօրութեամբ Թուրքին յուսուլթը կը խորտակէ, մեհնամարտութեան մէջ նորան կը յաղթէ։ Քրիստոնէութեան խաչը կը բարձրանայ, և Սուրբ Կարապետի հռչակաւոր մականունին Թիւրքն ուխտ կ'երթայ, յուսուլթը կը ձգէ, և կուժովնայ բոլոր Թիւրքերուն դէմ։

Այս յուսուլթներն էին, որ քրիստոնէական Աստուածպաշտութեան՝ Հայաստանում ընդհանրացած ժամանակներն՝ նոյն իսկ Գրիգոր Լուսաւորչի հրահանգներուն և խրատներուն ազդեցութեամբն Հալուեցան, Ջուլուեցան, և երիտասարդաց ու կուսանաց կուրծքերումն Խաչի զարդարանքի փոխուեցան։ Խաչը քրիստոնէի դրօշմն ու Վահանն էր, և Սուրբ Կարապետի ուխտաւորութիւնը՝ երիտասարդական կատարեալ լուսթեան տանող անխոտոր առաջնորդութիւնն էր. հաւատքը զօրացաւ, առաքինութիւնները արմատացան, երիտասարդները աճեցան, ու զարգացան, և իրենց ազգի կատարելութիւնները իրենց երեսներուն վերայ բնութեան գրչովն ու վրձինով ծաղկած նկարած՝ Հայկեան, Արամեան, Վահունեան, Պարթևեան, Մամիկոնեան ու Բագրատեան, Գեղեան ու Անդեղեան տեսիլները պատկերացուցին. որոց իւրաքանչիւրի ուրոյն ու սեպհական գոյներումն՝ իրենց անձին և Թագուն հոգւոյն ոյժն ու լոյսը կը ցոլայնն ամեն հանդէսներում։

Հայ մանուկին, պատանիին և երիտասարդին՝ առաջին զարդարանքն է Հերմակ ու կարմիր Հալաւն, ու ծնողական նախընծայ արուեստականութեան գլխաւոր գործիքն։ Հալաւներն՝ մինչև այսօր սովորական են այն ամեն Հայոց ընտանիքներում, որոց մէջ տակաւին մուտ գործած չէ եւրոպական սնոտի պէրանքներն ու փետուր-

ները։ Իսկ արուեստականութեան գործիքն՝ ընդարձակ դարերու բազմամեայ փոփոխութիւններումն փոփոխեցան, սնահաւատ հեթանոսութեան գաղափարներով յուսուլթի փոխուեցան՝ արուեստականութեան երևոյթն ու տեսիլը պահպանելով, և Քրիստոնէական Աստուածպաշտութեան գաղափարներով Խաչի փոխուեցան՝ իրենց տեսիլը ձգելով. Խաչի՝ որոյ նշանաբանն է յաղթել ամենայն դժուարութեանց՝ Թէ քաղցի, Թէ մերկութեան, և Թէ զրկանաց. Խաչի փոխուեցան, որ ծայրագոյն ոյժն է մեծիմաստ արուեստականութեան, Թէ՛ք է՝ բարձրաթռիչ և խորագնին իմացականութեան, հնքն է Հմմարիա հաւատոց, և պատուն է առաքինութեանց։ Այս արուեստականութեան գործիքները՝ Խաչի փոխուեցան ընդհանուր ոգւով, բայց տակաւին նոյն հին ձևով կերևին երբև օրօրոցի զարդ՝ Հայաստանի շատ ժողովուրդներումն. որոց խիստ մեծագոյն մասն ուշադիր, հափէէ, և ֆոտօ էօե Թրծած են. որոց վերայ պարզ և պարզոյ կերևին ընտանի ամենատեսակ արուեստներու բազմազան գործիքները. որոց չատերն ամեն մարդ կարող չէ նմանեցնել, Թէ ինչ արհեստի՝ ինչ գործիքները են. բայց գուցէ մի օր հնախուզութեան ադրող ջանքերն կը պարզեն նոցա անհետացած արհեստները։

Ահաւասիկ այսչափ մնացորդ միայն ունինք Հայաստանի հին զարդերէն՝ և ծննդեան ու անուանակոչութեան հանդիսական արարողութեանց սովորութիւններէն, որոնք հերիք են մեր իմացականութեան առաջն այսչափ պարզելու, Թէ Մանուկներու և աղջիկներու, պատանիներու և երիտասարդներու և հոգեորդներու զարդ ու զարդարանքն՝ ուրիշ ոչինչ պատճառ չունին, եթէ ոչ ծնողական սրտերին գանկութեանց և յուսուլիք ակնկալութեանց յայտարարութիւնը։ Ծնողք՝ իրենց արուզաւակին արևը կողջունեն առաջին անգամ հացով, և կը գոհանան Աստուծմէ, որ իրենց հոգւո թաղցրոյ. և իրենց սիրոյն ու ակնկալութեանն իրրև յայտարար՝ իրենց մա-

նուիրեն կընծայեն՝ հայց աւելցնող որևիցէ մի ցանկալի արհեստի մի գլխաւոր գործիք. և որուն՝ նախկին դարերուն՝ հայ մանուկներն ու պատանիները և երիտասարդները՝ համարեր են իրենց փառքն ու կեանքը. և իրենց խելահասութեան առաջին օրերէն երբ այլ ևս սկսել են հասկանալ իրենց մօր օրոցական երգերէն, ծնողական խրատներէն, յորդորներէն, յանդիմանութիւններէն ու օրհնութիւններէն՝ հէնց այն ժամանակներէն սկսած, կրկին և կրկին ուխտել են հաւատարիմ մնալ ծնողական սիրոյ և ակնկալութեան նշանաբանին, և միշտ անպակաս ունեցել են իրենց սրտին կամ բազկին վերայ, որ անմոռաց յիշեն իրենց վախճանական նպատակն այս աշխարհի կեանքումն: Ծնողք՝ իրենց աղջիկ զաւակին արևն առաջին անգամ կողջունեն երեսուբիլով, և իրենց հայր հայնեալ պահիկ իերուսով, և կը գոհանան Աստուծմէ, որ իրենց հայրն էր, և երեսոյն դրկինը պրեց. և իրենց սիրոյն ու ակնկալութեանն երբև յայտարար քրքինք սրբոյ կամ հայ համեմող որևիցէ ցանկալի արհեստի մի գլխաւոր գործիք կընծայեն իրենց դստրիկին, և նախնեաց աղջիկներն, օրիորդներն ու կոյսերն առհասարակ իրենց փառքն համարած են ծնողական այն նախընծայ նուէրն, ու իրև զարդ՝ մինչև ի մահ իրենց գլխուն և բազկին վերայ կրել են, որ միշտ անմոռաց յիշեն իրենց ուխտը, զոր ուխտել են իրենց ծնողաց աչքն ու ակնկալութիւնն իրենց կենաց վախճանական նպատակ ունենալու: Ծնողք՝ իրենց նորածին զաւակին առաջին անգամ կը գրկեն սրբութեան պատառով և աղքայութեան գոյնով ներկած պատմուճանով, և այնպէս մաքուր անձն և սուրբ սիրտ տեսնել կուխտեն իրենց զաւակի առաջին օրէն: Ծնողք՝ իրենց անխոս ու լալկան զաւակին՝ նոր բաղաքիով կը հանեն ժողովրդական հրապարակը, որ իւր հացը՝ քաղցելոց բրդելու պատրաստական ուխտաւորութեան ապացոյցով երթայ մանէ հաւատացելոց

եկեղեցին, և գրուի Աստուծոյ որդեգրեալներու արձանագրութեան մատենում: Ծնողական սիրոյ և ակնկալութեան երաշխաւոր կնքահայրը՝ մեծ վստահութեամբ կերաշխաւորէ նոցա՝ կատարելութեան չափղներումն աճելու և զարգանալու անմռունչ ուխտին, և այն օրէն լսկ կը խելայէ նոցա թիկունքն՝ աշխարհի ամենապատուական մեծանձնութիւնն ու համեստութիւնը փայլեցնող կրկնոցով: Բովանդակ երեղեցին՝ հաւատան ու աղքատը կօրհնեն նոցա արևը, որ խնդութիւն բերեն իրենց ծնողաց, ազին, զարգանան Աստուծոյ չնորհքովն. ու սուրբ Պսակի արժանանան:

Ահա այս է հայ մանուկի, աղջկան, պատանիի, օրիորդի, երիտասարդի և կոյսի առաջնակարգ զարդի զարդարանքի նշանակութիւնը: Անցնինք այժմ հարսնախօսութեան հանդիսում կատարուած սովորական արարողութիւններուն և զարդերուն:

Ազգային աւանդական սովորութիւնները պահպանող ժողովուրդներում՝ հարսնախօսութեան արարողութիւնն են.

Հրու զաւակ ունեցող մայրը՝ իւր միամեայ մանուկը գիրկն առած՝ այցելութեան կերթայ մի օր՝ որ իրմէն ետքն աղջիկ զաւակ ծնած է իրենց գիւղում կամ քաղաքում. երկու մայրերն իրարու հետ կը խօսակցին. այս խօսակցութիւնն երկար կը տևէ, եթէ նոր պիտի ծանօթանան իրարու հետ. իսկ եթէ կանխաւ ծանօթ են, իսկոյն կը բացուի իրենց մէջ հարսնախօսութեան խորհուրդը. և երկու մանուկներն իրարու կը նային, կը ծիծաղին, ուրախութեան ձայներ, ճիչեր կը հանեն, և իրարու կը մօտենան: Երբ մայրերն այլ ևս խօսք կուտան, երկու մանուկներն կերկինցնեն, և մէկզմէկ կը հանրուրեն. մանկան մայրն աղջկայ ականջը կը ծակէ, և աղջկան մայրը՝ մանկան ականջը. մանուկները կը կանչեն, լաց կը լինին, ու իւրաքանչիւր իւր մօր գիրկը կչտապեն: Այնուհետև աղջկան մայրը կելլէ

սեղան պատրաստելու, որ իւր կնամիկին պատուէր. այս մկրտոցին՝ մանկան մայրն երբեմն ի վկայութիւն այս առանձին հարսնախօսութեան՝ աղջկայ օրօրոցին վերայ կը խազէ. այս օրօրոց խազելու գործողութիւնը՝ տաճկաստանի Հայերում Պէշիք-էօ-ըմէ կանուանեն, որ կը նշանակէ օրօրոց խազել։

Կը պատահի երբեմն, որ Պէշիք-էօ-ըմէ անելու տարիսին՝ մինչեւնոյն գիւղում նոյն տարին ծնած աղջիկ չգտնուելը, կամ արդէն ծնածները բոլոր նշանած կը լինին. այս նշանակ է, թէ աղջկանց թիւը պակաս է եղել այն տարին. այսպէս առնուան մնացած մանուկները կը նշանեն տարւոր հասակէն վերջը՝ ուրիշ գիւղի աղջկայ հետ, միայն մանկան ու աղջկան ականջները ծակելով. այս արարողութիւնը կանուանեն Էնէճ էօրտ, որ կը նշանակէ ականջը երկու տեղերում կասեն նաև ականջօրհնէք. որ դարձեալ ականջ կորել կը նշանակէ։

Պէշիք-էօ-ըմէն և Էնէճ էօրտ արարողութեամբ ականջները ծակած մանուկն ու աղջիկն երբեմն կանգնած հասութեան առաջին օրերէն միամտութեամբ կը տեղեկանան, որ երբ մեծնան, մէկմէկու հարսն ու փեսայն պիտի լինին։ Տատրակի կամ աղաւնի բնական զուգութեան նմանելու դրութիւն մի է, զոր սկսել են ծնողք նախնի դարերում. և այս՝ շատ ազգաց մէջ սովորական է արդէն, (զոր շատ ոմանք՝ պախարակելի հրատարակեցին քանիցս անգամ այս վերջին ժամանակներում, և այն՝ միայն մի քանի ցուցակաց պատանիներու ոչ պարկեշտ վարուց հետևանքն արդարացնելու նպատակաւ)։

Պէշիկքէրթմէներն երբ եօթը տարեկան հասակը կը լրացնեն, աշնանային վարուցանքէն ետքը (նախընթաց գարնան շաբաթներումն սովորաբար) մանկան ծնողքն երբեմն ծխատէր քահանայի և կնքահօր ընկերութեամբ մի կիրակուն աղջկան ծնողացն այցելութեան կերթան և մի զոյգ էչպ—ըչբ կը տանին հարսնացուի նշան։ Քահանայն գինդերը կը դնէ աղջկան ականջը, և կօրհնէ սովորական կարատական մի կօսկելով, որոյ ընդհանուր իմաստն է.

> «Որովհետև այլ ևս մեծացել ես, ու լաւ կը սովորես տան գործերը, և ծնողացդ հնազանդ ես ու օգտակար, կնամի հայրն ու կնամի մայրն հաւանել են քեզ. ահաւասիկ կը նշանեմ քեզ՝ ականջներդ զարդարելով։ Աստուած օրհնէ քեզի, քանի մեծանաս, այնքան զօրանաս, և ծնողացդ հնազանդութեան մէջ աւելի և աւելի պարկեշտանաս. չնորհալի և պայծառ լինիս. հայց ու հարսէ ձեռքդ անպակաս լինին. ձեռքիդ գործովն ու մատներուդ (պաղունցիդ) Ճարտարութեամբն ընկերներուդ մէջ փառաւորուիս. երկայնամիտ ու համբերող լինիս, թուրը ձեռքումդ ոչխար լինի, ազոխն՝ հէյվայ. քեզմէ մեծերուն բարի բարի կարատին ունկնդիր լինիս, և լաւ օրինակին հետևող. քեզմէ փոքրներուն միշտ բարի օրինակ լինիս. մեծանաս, զօրանաս, փառաւոր թագուհի՝ թագուհի դառնաս, սուրբ Պասկի արժանանաս, ծնողդ ու կնամիները, ու կնքահայրը պսակդ պագնեն»։

Ներկայ եղողներն ամենքը միաբերան կասեն բարձրաձայն.

«Ամէն. Աստուած օրհնէ, Տէրտէրը պսակէ». և սկսին գինի խմել, սեղան բազմել և ուրախ լինել։ Հարսնացուն՝ քահանային սկսած բոլոր բազմականաց ձեռքը կը պագնէ, և նոյն սեղանին սպասաւորութիւն կանէ։

Մի քանի օր անցնելէ ետքը՝ կամ յաջորդ եօթնեկուսմ աղջկան ծնողքն ևս իրենց ծխատէր քահանային և հինգհօր ընկերակցութեամբ այցելութեան կերթան մանկան ծնողացը, և մի զոյգ գինդ կը տանին ընծայ. զոր մանկան ականջները կանցունէ քահանային օրհնելով, և սովորական խրատական մի խօսելով, ուրոյ ընդհանուր նմաստն է.

«Որովհետև այլ ևս մեծացել ես, տան գործերուն հմուտ ես, և ծնողացդ հնազանդ, և խնամի հայրն ու խնամի մայրն հաւանել են քեզի, ահաւասիկ կը նշանեմ քեզի ականջները զարդարելով: Աստուած օրհնէ քեզի, մեծանաս, Աստուծոյ շնորհաց մէջ զարգանաս, ձոյլ պաշտօնէն ու ուսուցչութենէն չդուխս ու չյետանաս (1). Ժրաջան հոգւով,

(1) Նախնիքն՝ այսպէս կորհնէին նորահաս պատանիներին, որ առհասարակ պարտաւոր կը համարուէին չեռ չհալ ձոյլ (ե-ղեցոյ) պաշտօնէն ու ծառայութենէն: Ա. յս հինաւուրց ազգային սովորութիւնն կը մնը ազգին, որ մանուկներն առհասարակ միակեալ կը կրթէը եկեղեցւոյ պաշտօններուամ ու արարողութիւններուամ. և այս սկզբունքով շարունակուած է մնը եկեղեցւոյ մեայն ազատ ընտրութիւնը, որով ամենայն ոք չափահաս՝ ընտրելի է ուսուցչութեան, վարդապետութեան. նոյնպէս և ամենայն ոք ողջախոհ և որդեվեհամ հայր՝ անխտիր ընտրելի կը քահանայութեան և առաջնորդութեան: Այժմ մոռնալով ազգին ամեն օրինքներն ու կրթութիւնը, մոլորած ազգային ողջախոհութեան հանապարհէն և բարեպաշտութեան շաւիղներէն, ունեցանք այնպիսի անուսում ուսուցիչականներ, որոնք օտարի ցուցամոլութեան արտաքին երևոյթներուն միայն սիրահար, ուսուցչական աթոռ նստան մեր զարգացնելու, և միայն Թատերական երգոց և խաղուց մոլեալ, անոնց աչքն եկեղեցւոյ երգերն ու ալելուն. ծաղրելին զարթութիւնն ու պաշտօնէութիւն, Թովմափեցին խոպան բարեպաշտութեան բարքն, ու արձանախրութեամբ միայն մոլեալ, հոգևորացուցչին մեր մանուկները, աղքատացուցչին ծնողներն ու ընտանիքները, սատակացուցին շնայլութիւնն ու հիւանդութիւնը՝ ազատեղ վկաեղրու և անպարիշտ վարդապետութիւններու ընթերցասիրութեամբ, մի անգամ բարի ու քաւաստուն անգամ անբարի Թատերական տեսիլներու և արարուածներու անժամանակ ու անտեղի ներկայացութիւններով. ծերոց պակասութիւնը մանուկին գրեթէ օրինակ տալու անդգուշութիւններով: Անլուր՝ ժամակոչի կոչնակին, անպէտ և անզգայ՝ եկեղեցւոյ միութեան ազդարն, օտար ու խորթացած՝ եկեղեցւոյ բարոյականէն, զերը կարդալու շնորհքը չունի, քանին խօսելու իրաւունք կուզէ, կը վատաբանէ: Ուննեցանք և առաւել ևս քանդող ու խորտակող հրապարակախօսներ ու գրողներ, սկսելքը Շերոպ, Թումանեանէն Գէլեմեզաղ, Չարօրենակ ու Չարախօս Պետահ, մերթ Հայախօս՝ մերթ օտարլեզու՝ ամենօրեայ մամուլը Կաշմ բարելացել, կեղծ աստուածասէր՝ սերոյ ազատազոյ՝ մոլիներու խոր գերեզմանին պատրաստ դանապան, արեզակնատիպ աչքով շլացած՝ շպարի խարուած՝ բանաստեղծութեան յարգոյ ոճոց ու նատպած որոց ու Զայներ, մերթ գուշնաւոր՝ մերթ անգոյն՝ սեմափած ու քնած՝ ծաղկաքաղ ասես, Թէ ծաղկախոհ, ամենքը մէկ բերան՝ կամաց խօսել ուսուցին, ուղիղ տեսութիւն պայմանեցին, պետանի ուսում ու գիտելիք խոտացան ու սատրագրեցին. սկսեցին ու խոտորեցան, նզովքներու դիմեցին, քնած տեղերնին պատին եռեւն նայող կոյր ու անմիտ երևակայութիւնները ձեռք առին, փոքրիկ շիւղերն հատ գերանները կարծեցին, ու կարծեցուցին. մեր աղքատու-

ատատ աչքով ու գործօն ձեռքով աշխատասիրութեան մէջ արիանաս ու կատարեալ լինես. ցանած սերմդ՝ մէկին երեսուն, վաթսուն ու հարիւրապատիկն հնձես. ազգիդ ու տակիդ պարծանքը լինես. ընկեր-

ներուդ մէջ՝ պարկեշտ ու ողջախոհ, Հաբատարմուհետ ու չառաջադէմ լինիս. բարի օրինակ առնուս, բարի օրինակ լինիս. մեծանաս, ու Աստուծով զօրանաս. սուրբ Պսակին արժանանաս, ծնողդդ, կնքահայրդ ու խնամիները՝ պսակդ պագնեն . . .»:

Ներկայ եղողները ամենքն միաբերան կասեն բարեբաձայն.

«Ամէն. Աստուած օրհնէ, Տէրտէրը պսակէ». և սկսին գինի խմել, սեղան բազմիլ, և ուրախանալ. և վեհայացուն՝ քահանայքն սկսած՝ բոլոր բազմականաց ձեռքը կը պագնէ, ու սեղանին կոպասաւորէ:

Եւ որպէս դի նշանած մանկան և աղջկան նշաններն եբևեին, այնուհետև սովորութիւն է գլխարկ դնել մանուկներուն, և ծամիկալ՝ աղջիկներուն: Որ կանխագոյն ազդարարութիւն է բոլոր ժողովուրդին աչքին, թէ այս ինչ մանուկն ու այս ինչ աղջիկը՝ նշանած են արդէն, և ոչ ոք երաւունք չունի բաժնելու: (Ծամերու սովորութիւնը՝ հայ պատանիներու և երիտասարդներու գլխուն՝ կերևի մինչև Գրիգոր Լուսաւորչի օրերուն չարունակուած, և Լուսաւորիչ ինքն արգելած է մանկանց ծամերն. ըստ որում մանկանց ծամերը՝ Տարօնոյ Գիսանեան կուռ ձօնուածներուն նշանը կը համարուէին):

Թիւնը դեռ ևս չզգացին, ամենքը միաշար՝ մերթ հակաւակի, մերթ վարկպարակի կը Նահապահին կցկտուր յորդոր, չափէ դուրս անձև բանախօսութիւն, աներաւ պահանջ, անգիտի դատումնք, վնասակար լուր, չարադոյժ համբաւ, աննիւթ, անմիտ, կխաա յօդուածներ: Աղքատութեան գոհ, աշխատութեան ծոյլ, շինքի անծանօթ, հնոյն անտեղեակ, նորին անձնաշակ, երևակայող մեծ Հարտարապետ, խօսելով միայն չքնաղ հրաշակերտ, չեն հասնիր հնոյն, կը ցանկան նորին. կանչեցին, ու կը կանչեն—քակեցէք, քակեցէք, մինչև հիմքը հասուցէք—: Կամա՞ց, բարեկամ, մինչև ո՞ր:

Ահաւասիկ այսչափ լինչ աւանդական մնացորդ ունինք նախնեաց Հարսնախօսութեան արարողութենէն մնացած, որով կ'ապացուցուի, թէ հայ մանկանց և աղջկանց երկրորդ զարդն է ականջի գինդը, և գլխու ծամկալը, երբև նշան ամուսնացնելու արժանաւորութեան, և զուգութեան խոստման՝ զոր կը խոստանան ծնողք քահանայի և ինքահօր ներկայութեանը: Այս գինդերը կը լինեն՝ ուլունքէ, կապուտաքարէ, հագիգէ, արծաթէ, ոսկիէ, մարգարտէ, և ամենատեսակ գոհարներէ՝ աղջիկներու ականջումն, ըստ մեծի մասի ողիուզաձև և նռնաձև, իսկ մանկանց ականջներումն՝ մեչտ արծաթեայ, և ընդհանրապէս՝ պարզ օղաձև կամ զամբիւղաձև: Նոյնպէս և ծամկալը՝ կը լինի պարզ կարմիր ու կանաչ թելերու ոլորքէն սկսած՝ մինչև արծաթագոծ ու ոսկեթել և ոսկեձամուկ ժապաւէններ, արծաթագեղն սանտերք, խեցեգարդ, մարգարտաձև և ականակուռ կապեր, երիզներ. որոնց նպատակն է միայն ցոյց տալ, թէ գինդ ու ծամկալ կրող աղջիկն այլ ևս նշանած է:

Գրեթէ ամեն կողմերում գտնուող Հայոց բերանումն միաւեսակ աւանդական սպառնալիք մ'է հետեւեալ խօսքը. «Տէրտէրն ականջդ կը կտրէ». զոր սովորաբար անհնազանդ պատանիներուն կասեն, ի հնազանդութիւն և ի պարկեշտութիւն հրաւիրելով: Կերևի, թէ հին ժամանակներումն ողջախոհութեան Հանապարհէն խոտորող պատանիներին և երիտասարդներին նշանն յետ արած ժամանակ՝ քահանայն նոցա ականջէն գինդն հանելու համար նոցա ականջը կը խզտէը, երբև ի պատիժ. ապա թէ ոչ աւելի յարմար էր, որ ասէին, թէ «խոստան ականջդ կը կտրէ»: Դարձեալ միևնոյն մտքով՝ անհաւատարիմ ու խաբեբայ բնութիւն ունեցող մարդկանց կ'ասեն, թէ «ականջը կտրած մարդ է»:

Անցնենք այժմ հարսանեաց աւանդական արարողութիւններուն։

Փեսայացուն երբ արհեստը կատարած, ու վարպետաց ժողովէն պարգև կստանայ, և եկեղեցւոյ առաջ կը տրուի (բոլոր նոր վկայուած արհեստաւորաց կողմէն). և բոլոր ժողովուրդը կօրհնեն նորա ձեռագործը, կը ձառեն, թէ արհեստն ոսկի ապարանջան է, անարհեստ մարդը չատ անգամ կարօտ պիտի մնայ. ժրաջանութիւնն՝ ամեն բանի առատութիւնն է, ժրաջան հոգին՝ դատարկ ժամանակ անցունել չէ կարող. աշխատասիրութեան տէրութիւնն՝ արիութիւն ու առողջութիւն կը տայ կոչնչին։ Այս մտքովն ուրիշ երկար ճառեր կարտաբերեն մեծերն ու խելահասները և մնացեալ բազմութիւնը կը շնորհաւորեն երիտասարդին մըցանակն ու լմնելու ժամանակ կասեն. «Այս լաւքերն՝ ախանջդ օղ արա». որմէ կերևի, թէ բոլոր ժողովուրդը՝ տակաւին արհեստը չատարած՝ նշանի արժանաւորութիւնը չվկայեր։ Այնուհետև փեսայացուն՝ գարնան օրերումն Սուրբ Կարապետ ուխտաւոր կերթայ ու կը դառնայ փաղչի ու ռնգոտի կը բերէ ընծայ։

Փեսայացուն Սուրբ Կարապետէն որ դառնայ, և հարսանեաց տարին գայ, այգեգործի և հնձանի օրերում փեսայացուն տանէն ընծայ կը խրկեն հարսնացուին՝ երբև փեսայացուն ձեռքն արդիւնքը՝ մի կամար գօտի—կուտ գօտի, և գոգնոց, որոյ չորս կողմը կարմիր գործած է (գուցէ հրէից մէջ յիշուած եզրածիրանին լինի), որ կը նշանակէ, թէ այլ ևս հարսնացուին կայծ լինած կը տեսնեն խնամիները։

Մի քանի ժամանակ ևս անցնել է հարկ՝ հարսնացուի տանէն ևս ընծայ կը խրկեն փեսայացուին. մի գօտի անկուածագործ, մի խոնջան Ճամփաւոր, և մի աման ծալք իւղով զանգած, ամենքն էլ հարսնացուի ձեռքովն պատրաստած։

Այս տարուբերներն՝ երկու կողման ևս հարսանեաց պատրաստուած լինելու նշաններն են։ Գօտիները կը նշանակեն գործունէութիւն և ժրութիւն. խոնջանը կը նշանակէ սուրբ ամուսնութեան ժուժկալութիւն, իսկ ծալքը՝ կը նշանակէ, թէ հարսնացուն ձեռնհաս է փեսային և նորա ընտանեաց հացը իւղով զանգելու։ Եւ հետևորդ հօթնեկումն կը լինի հարսանեաց հանդէսն, եկեղեցում կիրակի օրն հալաւ օրհնէքէն սկսելով, և ժողովրդական վոյն ու թմբուկը հնչեցնելով։

Շաբաթէն կիրակի լուսնալու գիշերը՝ փեսաէրները կը խմբուին, որոց պարագլուխ է կնքահայրը, և փեսային ձեռքը հինայ կը դնեն. ու գիշերելու կերթան ամենքը մնասին կնքահօր տունը, և այսպէս փեսային ու փեսաէրներն՝ մինչև առաւօտուն երկուքնը կնքահօր տունը կը գիշերեն։ Կիրակի լուսացած գիշերն հարսնքոյրերը ևս կը խմբուին, որոց պարագլուխ է հարսնացուի կնքամայրը, և հարսնացուին ձեռքը հինայ կը դնեն, ու նորա մօտ կը գիշերեն։

Կիրակի առաւօտ ժամապաշտօնէն ետքն եկեղեցում կօրհնեն հալաւները, փեսայացուին, ու նորա կնքահօր և հարսնացուի կնքահօր ներքայ առաջնակայութեամբ. որոյ սկզբնաւորութիւնը կը լինի քահանայն հայր Տէրով հարսնացուի կընքահայրն՝ յանուն հոր և որդւոյ և Հոգւոյն Սրբոյ ասելով, փեսայի դէմքը կը խաչակնքէ, և ուսերուն կը ձգէ եռանիշեան [illegible], որ Հնոց տեսարաններումն երևացած թագաւորական պատմուճանի օձիքին հինգ նմանութիւնը կը բերէ, կարմրի մէջ սպիտակափայլ Ճառագայթաւոր. (Կաթոլիկներու գիւղերում մի շուրջառ կը ձգեն փեսայացուի վրայ). և փեսայացուի կնքահայրը կը կապէ փեսայի մէջքին կարմիր կամ ոսկեթել երիզով՝ ոսկի վաղակաւոր։ Նկեղեցւոյ պաշտօնը կատարելուն ըստ Ծիսարանին. հարսնացուի կնքահայրը՝ փեսային հալաւը կառնու և փեսային ու փեսաէրներուն ընկե-

բացած կերթան դէպ ի տուն՝ վող ու թմբուկ առջևնէն, յատուկ պարերգ երգելով(1): Իսկ փեսային կնքահայրը՝ կառնու հարսնացուն հալաւը, և կը տանի հարսնացուն տունը, զոր կընդունին հարսնաքորք յատուկ պարերգով՝ կնքահօր և հարսնացուին չորս կողմն երկար պարելով:

Փեսային հալաւը՝ և ուսին ձգելիք եռանկիւնի կարմիր Ճամկաւորն հարսնացուն ձեռքին գործերն են մինչ: Իսկ Թուրն ու կարմիր կօշիկները՝ փեսային իր վաստակոց և արդեանց արժանիքն են հօրմէն նուիրուած: Հարսին հալաւը՝ մինչ կարմրերանգ ու Ճամկաւոր՝ փեսի քոյրերուն ձեռագործն է մինչ: Այս հարսանեաց պաշտօնական ձևի հալաւները կը պատրաստեն Թէ հարսն և Թէ փեսի կողմանէ իրենց ձեռքի ընդարձակութեան չափով: Հալաւներուն մէջ պսակները աւելի նշանաւոր զարդարանք են Թէ հարսին և Թէ փեսին գլուխն, զոր կը պատրաստեն մայրերն՝ պարզ անթառամի բոլորակէն՝ մինչև ամենաթանկագին ականակուռ Թագերը, ծնողաց ձեռնհասութեան չափով. եթէ ծնողք բոլորովին անձեռնհաս լինին պսակ կամ

(1) Ուշկ Հայոց Թուականին (1717 Քրիստոսի Թուականին) Փիլիպէում գրուած մի ձեռագիր մաշտոցի (որ այժմ կը գտնուի Նախիջևանայ Ս. Լուսաւորչի Եկեղեցւոյն) հալաւօրհնէքի կարգին վերջը այսպիսի մի խրատ կը տեսնենք. «Ապա կօրնհորայքն բակ առեալ պարիր տան ուրախութեամբ, և ղհալաւն տղուցանեն զփեսային, և յետոյ քահանայն զԹագաւորքն օրհնէ: Այն Մաշտոցը հալաւօրհնէքին յառաջ և նշանօրհնէքին նաքը՝ մի վերնագիրը ունի այսպէս. «Շաբաթանս զայս՝ փեսի շապիք տանիս, կամ տ՛նորէն տանս»: Մինարեզ՝ տղաւաղուած բառ մի է, որ փեսայի տօրտը նորել նորփաւորել պիտի նշանակէ, ինչպէս շատ տեղեր կանուն. կամ գուցէ ուրիշ խմաստ ունենայ:

Թագ պատրաստելու, Եկեղեցին կը կապէ նոցա գլխուն Թագ, ամենապարզ նարօտով՝ կանաչագոյն և կարմրագոյն կերպասի ոլորով. որ կը նշանակէ կանաչացեալ գարուն և ծաղկեալ վայելչութիւն, ակնկալութիւն որդեծնութեան ըստ Աստուծոյ օրհնութեանն աՀելու:

Պսակի կամ Թագի բուն նշանակութիւնը կը մեկնեն մեզ, եթէ միայն նոցա կազմուածոց նիւթն ու գործուածները ուշադրութեամբ ու խորհրդով դիտենք: Ընդհանրապէս մեծ բազմութիւն մի կը բաւականանան եկեղեցւոյ պսակովն, այսինքն նարօտով, որոյ նշանակութիւնն արդէն իսկ նմանցուցինք գարնանային կենդանութեան. այս պսակով կը պսակուին այն երիտասարդներն ու կոյսերը՝ որ երկուքն էլ որբ են ի ծնողաց: Ծնողաց յօրինած պսակի պարզ տեսակն է անթառամ կոչուած ծաղկի ոլորքն, յորում խիստ բազմաթիւ են ծաղիկները, ու նոցա Թերերը, ու պարունակած սերմերն, որոց անոյշ բուրմունքը՝ կը լեցնէ եկեղեցին:—Ա.հաւասիկ յոլովածին ու բազմասեր աՀելութեան՝ յուսալիը ակնկալութեան նշանակութիւն: Երկրորդ տեսակն է. ծաղկեալ ձիթենւոյ մի ղրուագ՝ ոսկեգործ անգուածագործ, առատնաւոր յօրինած պինդ երիզի վերայ, որպէս Թէ անառիկ բերդի կլոր գլուխը ներկայացնէ նը աշտարակներովը զարդարուած: Ա.հաւասիկ պարարտութեամբ աՀեցուն մի անթառամ ծառ, որ զարերով պտղաբեր լինելու ամուր և անփուտ արմատներովն ու առատ ծաղիկներու ողկոյզներովն կատարեալ նշանակ է միևնոյն ծնողական բազմասեռն սերնդոց ակնկալութեան. սորա հետ միասին և երևոյթ ու տեսիլ անառիկ դղեկի բարձր գագաթին, որ նշանակ է Թշնամեներէ ապահովութեան: Երրորդ տեսակն է Ճկուղ երկրորդին ձևովն արծաԹեայ պսակ, որոյ վերայ ոսկւով դրուագած է ծաղկալից ձիթենին: Ա.հաւասիկ կաւելանայ այս տեղ ՝ի՛ղձ կամ աւրաց չվերցնող և հրով սրբոտղ արծաԹի և ոսկւոյ սրբութեան ապահովութիւնը: Չորրորդ

տեսակն է մեւնոյն ձեւով արծաթեայ կամ ոսկեայ պսակ, որոյ վերայ ծաղկալից ձիթենին դրուագած է մարգարտայեռ և ականակուռ. որ նշան է Ճոխութեան։ (Կան և լաչակաձև գլխանոցներ, որոց վերայ կը նախշեն սովորաբար լուսին և շուրջը որթ խաղողի. կամ նռնաձևերը, որ ծամկալի փոխանակ կը գործածեն հարսները)։

Երկուշաբթի առաւօտ արշալուսին կանուխ հարսնառ կերթան փեսի ծնողքն ու ազգականներն իրենց տունէն մեծ բազմութիւն՝ ջահերով, լապտերներով կը հասնին հարսնացուի բակի դուռն ու փակ կը գտնեն. տան դռնապաններն ու հարսնեղբայրները ներսէն հարցուփորձ ձեր կանեն, պարգև, նուէր կը պահանջեն, հազիւ դուռը կը բանան Թագւորահօր ու Թագւորամօր ընծայն ընդունելով մի մի Թաղկինակ հարսնաւորութեան բազմագունեան անգուաճով։ Ներս կը մտնեն խնամիները խաղով պարով, հարսին մէջ կառնուն ու կը պարեն։

Հարսնառ. կուգան և քահանայն ու փեսայն կընքահօր տունէն նոյնպէս բազմութեամբ ու ջահերով. փեսայն հագուած է արդէն Թագւորական վզնոցով, և կարմերանգ հարսանեկան հանդերձով, ու կօշիկով։ Բակի դռնէն մինչև տան դուռը գալարինները կը փռեն Թագւորի Ճանապարհում, և տան դռնէն մինչև սանդուխքն ու մեծ դահլիճը կը սփռեն գորգեր՝ կանաչ ու կարմրագոյն. Թագւորահայրն ու Թագւորամայրն հարսին կառնուն ու սանդուխքի գլխում կամ դահլիճի մուտքումն կը դիմաւորեն Թագւորին խաղով, տաղով, ու կանչով։ Փող ու Թմբուկ խսկոյն կը լռեն, երբ քահանայն ներս կերթի. քահանայն կառնու հարսին աջն կուտայ Թագւորի աջն, և մեսսին ներս կը դառնան, յողջոյն հարսին ծնողաց։ Թագւորը ու Թագուհի մեսսին քահանայի առաջնորդելով կերթան կը պագնեն հարսի հօր և մօր ձեռքերն, և կը կանգնին։ Քահանայն՝ Տէր ողորմեա՛ մաղթանքը կը կարդայ. և երգով ու պարով փողոցներով կերթան յեկեղեցի։ Եկեղեցւոյ կոչնակն երբ կը հնչէ, կը լռէ փողարն ու պարը, և կը մտնեն յեկեղեցի։ Առաւօտեան ժամերգութիւնը կը պաշտէ քահանայն և ժողովուրդն. ապա կը դառնայ գաւիթը, և Թագւորին ու հարսին կը հրաժարեցնէ, կը դաւանեցնէ, և ուրոյն կը խոստովանցնէ. ապա ներս կը մտցունէ ի տաճարն, հարսանեաց շարականներով և Սուրբ սեղանի առջևն ամուսնութեան պայմաններն կառաջարկէ աշխարհիկ ոճով, որ բովանդակ բազմութեան հասկանալի է. և երբ կը լսէ Թագւորի ուխտն—Տինձ ի տէ ոնբոծոն որը լինել, և Թագուհւոյն ուխտն—Տինձ ի տէ ոնբոծոն հնազանդ լինել, ա յս ուխտին վկայ կը կոչէ քահանայն՝ զԱստուած՝ որ սուրբ տաճարում կը բնակի աներևութապէս, և սուրբ սեղանում կը բազմի, նոյնպէս վկայ կը կոչէ քահանայից դասը, ժողովրդեան երամը, և Թագւորը ու Թագուհի կընդունին նոցա վկայ լինելը։ Ապա հարսին և փեսայի զուգութեան խորհուրդը կասէ քահանայն. «Այսուհետև ոչ են երկու, այլ մի մարմին. արդ զոր Աստուած զուգեաց՝ մարդ մի մեկնեսցէ». և ամբողջ եկեղեցւոյ ժողովուրդը մխաբերան կը կանչեն «Աստուած շնորհաւոր անէ»։

Ապա կը կարդան հին ու նոր կտակարանի՝ ամուսնութեան պայմաններուն վերաբերեալ ընթերցուածները, և ապա քահանայն կօրհնէ Թագուհին ու Թագւորը, նոցա ամուսնութեան ուխտն ու նպատակը – որդեծնութիւնը. և կաւարտի պսակի խորհուրդը։ Քահանային կարգացած այս օրհնութիւնը՝ բոլոր կենդանի եկեղեցւոյ բերնէն կը կարդացուի։

Ապա կուգան կնքահայրերն, ու ծնողաց պատրաստած պսակները կամ Թագերը կը դնեն նորապսակներու գլուխը. ծնողաց բերնէն առանձին մի բարեմաղթութիւն ևս կասէ քահանայն եկեղեցւոյ գաւթում (տաճարին դուրս)։ Այս մաղթանքին օրինակը՝ վերոյիշեալ մաշտոցի մէջէն, որ կը կարգադրէ նախ

հարսանեաց խորհուրդն օրհնութենէն ետքն երգել «Ուրախացիը պսակ կուսից տիրամայր» շարականը. և ապա ծնողական պսակի մաղթանքին խրատը կսկսի այսպէս.

«Ցետոյ, շարականիս հետ պսակ դնեն զգլուխն փեսին և հարսին, և ասեն զքարոզս:

«Խնդրեսցուք հաւատով միաբանութեամբ ի տեառնէ . . . :

«Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա.

«Փառք քեզ Թագաւոր յաւիտենից, որ աՀեցուցանես զժողովուրդ քո, և յղուցանես զեկեղեցի հաւատովք (հաւատացելովք) յանուն քո սուրբ. Հաստատեա զսոսա ողորմութեամբ քով, և աՀեցո՛ զսոսա բարեգործութեամբ ի կեանս խրատանց. ի բաց արա՛ ի սոցանէ զչարին խորամանկութիւն. ուսո՛ սոցա Հնազանդել միմեանց սիրով, հաւատով գնալ ի ՃանապարՀս քո. ամրանալ Հաստատութեամբ ի սրբութիւնն ամուսնութեանն՝ ի սէր վիճակի քո. ի բաց մերժեա ի սոցանէ զամենայն աղտեղութիւն. Հրեշտակ խաղաղութեան քո պահպանեսցէ զսոսա ի տուէ և ի գիշերի: Տուր, Տէր, սոցա՝ որք առին զպսակ վայելչութեան ի գլուխս իւրեանց՝ առանց գայթակղութեան Հասանել ի Հանդերձեալն օր՝ անամաչելի աչալրջութեամբ, անաղաւ, անբիծ, անսայթաք, անկռուելիք (անկռիւք) յաներեւութիցն, Հոգւով և մարմնով զքեզ (քեզ) ծառայել. և տեսցեն զորդիս որդւոց իւրեանց, և գոհութեամբ փառս մատուսցեն Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ այժմ և . . . :

«Սուրբ Հաչիւս: Պահպանիչ և յոյս . . . պահպանեա զնոր Թագաւորս և զԹագուհիս՝ ընդ Հովանեաւ . . . :

«Եւ ապա քահանայքն և ժողովուրդքն՝ զնոր Թագաւորին պսակն Համբուրեն, և ասեն «Աստուած չնորՀաւոր անէ»:

Եկեղեցւոյ սուրբ խորհուրդներու կարգը դասուած Պ՚՚:ի սուրբ խորհուրդին արժանացած Հարսն ու փեսայն՝ վեր ի վերոյ ուշադրութեամբ անցնելու չեն այս մաղթանքի մտքէն. այլ յատուկ և խորին ուշադրութեամբ պիտի լսեն Հետեւեալ խօսքերն, ու ՃշդուԹեամբ պիտի քմբռնեն նոցա միտքն ու իմաստը, և ԹէՀ որպիսի ի Եկեղեցւոյ օրհնած զոյգ ամուսիններէն պահանջուած զուգութեան կեանքը. ահա Համառօտիւ կայ այս մաղթանքին մէջ ծնողաց Ճշմարիտ բաղձանքն ու եկեղեցւոյ պահանջը. զոր բառ առ բառ Թարգմանելով այսպէս կը կարգանք.

«Փառք քեզ, յաւիտենական Թագաւոր (Աստուած), որ քո ժողովուրդը կաՀեցնես, և եկեղեցիդ կը լեցնես՝ քո սուրբ անունիդ Հաւատացողներով. քո ողորմութիւնովն Հաստատէ՛ սոցան, և աՀեցո՛ւր սոցան բարեգործութիւնով՝ իբրեւ Էութ կեանքումը. սոցայմէն մէկզի արա՛ չարին (սատանայի, մոլորութեան) խաբէութիւնը. սորվեցո՛ւր սոցա՝ սիրով Հնազանդել մէկ մէկու, Հաւատքով գնալ քո ՃանապարՀներումդ, Հաստատութեամբ Հաստատուել ամուսնութեան սրբութեան մէջ, քո վիճակդ սիրելով, Հեռի Հեռացո՛ւր սոցայմէն ամեն մի կեղտոտութիւն. քո խաղաղութեան Հրեշտակը Թո՛ղ պահէ սոցան գիշեր ու ցերեկ: Տէր շնորՀ տուր սոցա՝ որ իբրեւ գլուխները վայելչութեան պսակ առնի՝ (Թագուորին, Թագուհիին), որ առանց գայթակղելու (առանց ուղիղ ՃանապարՀէն մոլորելու կամ գլորելու) Հասնին վերջին օրին, չամչնալու (պարզ երեսով) զգաստութիւնով, անաղտ, անբիծ, անխոտոր (ողջախոհութեան շաւիղներէն), աներեւոյթ ոգիներու կռիւէն ազատ, ԹէՀ Հոգւով, ԹէՀ մարմնով ծառայեն քեզ, և իբրեւ որդւոց որդիները տեսնեն. և գոՀանալով փառք տան Հօր, Որդւոյ և սուրբ Հոգւոյդ այժմ ու յաւիտեան»:

Այս Համառօտ մաղթանքի՝ եկեղեցւոյ սորվեցուցած կատարեալ ողջմտութեան բուն պահանջներուն

բացատրութիւնն է, հանդերձ խնդրելով Աստուծմէ, որ պարգևէ իւր շնորհքը՝ ամուսնացեալներուն, որով զօրանան ողջախոհութեան և որդեծնութեան սուրբ Խանապարհումն։

Քահանայն այս մաղթանքը վերջացնելէ ետքը՝ բոլոր բազմութիւնը կուգան կարգաւ կը համբուրեն Թագուորի պսակն Եկեղեցւոյ գաւթումն եկեղեցւոյ գանձանակին առջև. ուր քահանայն նախ կը համբուրէ Թագուորի պսակն, ու Թագուորը կը համբուրէ քահանայի ձեռքը, և գանձանակն ալ կը ձգէ. նոյնպէս և բոլոր ժողովուրդը՝ որ պսակ կը պագնեն, գանձանակը նուէր կը ձգեն. այս նուէրը ⁝ԷԲՈՆ կանուանէին։ ԿԷՔՈՆԸ՝ կը հասկանան ⁝ԷԲ ՊՈՄ (քահանային). և արդարև ՔՈՆ ձայնը միևնոյն կերպով հնչուելով ՊՈՄ կը նշանակէ նոյն գաւառական բարբառում։ Բայց միևնոյն ժամանակ՝ աւելի հին կերևի այս բառը, և պիտի լինի ⁝ԷԼՈՆ, որ գաւառական բարբառի ընդհանուր օրէնքով պիտի հնչուէր ⁝ԷԼՈՆ. բայց ժամանակի հնութեամբ հնչումն այլայլուեր է։ Այս կրթանքը՝ կը նշանակէ ⁝ԷՒ ⁝ԷԼՈՒՔՆԵՈՆ. ըստ որում ազգային սովորութեամբ՝ նորահաս մանուկներու կրթութեան պարտական էր և եկեղեցին. այս կրթութեան ծախքը գուցէ կսկսէին գանձել եկեղեցւոյ՝ որդեծնութեան խորհրդոյն արժանացած Թագուորներէն ու Թագուհիներէն, որ իրրև Թոշակ լինի իրենց ունենալիք որդւոց կրթութեան։ Արդէն իսկ նոյն ժողովրդեան մանուկները անթոշակ կը կրթուին եկեղեցւոյ դպրոցումն անյիշատակ ժամանակներէ սկսած, ինչպէս որ նախնական սովորութիւնն է եղել, և եկեղեցւոյ արդիւնքին կը վճարուի դպրոցին ամեն մի ծախքը։ (Այս կրթանքը՝ կը վճարուի այժմ ՆՇՆ ՕՐՀՆԵՒ օրը)։

Պսակի պագնելը վերջանալէն ետքը երգով և շարականով կը հանեն եկեղեցիէն Թագուորին ու Թագուհւոյն մինչև եկեղեցւոյ բակին դուրսը, և էի կը հեծցնեն, ու կերթան դէպ ի Թագուորի տունն. հարսնքոյրերն երբ հարսէն կը բաժնուին, մի երգ կսկսին եկեղեցւոյ հրապարակումն, մինչև որ աչքերնէն կանհետին հարսն ու փեսայն։ Որոց երգին վերջին տողերն են.

«Մէկ մէկ էիք, զուգ եղիք.
«Զուգ ըլլիք, հազար ըլլիք»։

Որուն նմաստն է. «մինակ մինակ (Թէք Թէք— կէնտ կէնտ) էիք, զոյգ եղիք. զոյգ որ լինիք, հազար կը լինիք»։

Հանդէսը կը հասնի Թագուորի տուն, ձիաւորած Թագուորն ու Թագուհին մէջ կառնուն պարաւորք, ու կը պարեն, մինչև Թագուորահայրը դուրս կելլէ տնէն, և կը խոնարհին Թագուորն ու Թագուհին և կիջնեն. Թագուորահայրը՝ բռունցով մանը փող, ցորեն, գարի, սիսեռի խորովու, չամիչ, և ուրիշ արմտիք կը նետէ Թագուորի և Թագուհւոյ գլխուն, և բազմութիւնը միաձայն կը կանչեն. «Ոտքը բարի ըլլի, տարտը լիք ըլլի.» և ուրիշ այսպիսի նմաստները, աւելի Թիւրք բառերով խառնած։

Կը լռեն փողարն ու պարաւորը, և կը մտնեն տուն՝ ուր որ զոյգ աԹոռ (տախտ) պատրաստած է Թագուորին ու Թագուհւոյն. դրան ներսի կողմէն շեմքի վերայ կսպասէ Թագուորամայրը՝ խնկանոցը ձեռքին. կը համբուրէ Թագուոր որդւոյն՝ որ Թուրն իսկոյն կը յանձնէ Թիկնապահին և կը խոնարհի մօր ձեռքն համբուրելու. այս խոնարհման վիճակին մէջ կը բռնէ մայրը որդւոյն և խնկանոցը գլխուն վերայ պտտցնելով, ուրախանալով ու արտասուելով կը կարդայ որդւոյն գլխուն.

«Բարով եկար դուն Թագուոր փառաւոր,
Բարին հետդ, նըստիս տախտդ (1) զուգաւոր.
Աստուած վերէն, երկինքէն քեզ պահապան (2),
Սուրբ Կարապետ Սուրբ սարերէն (3) օգնական (4).

(1) Գահաւորակ։ (2) Պահապան։ (3) Հեթանոսական ձև։ (4) Օգ-

Երկինք ծաղիէ (1) գլխիդ (2), կեռնքիդ (3) նոր արև,
Լիք ոմպերէն (4) ցօղուի ցոնքիդ (5) յորդ որչեվ (6).
Թուրդդ ըլլի քեզ Թուր կտրուկ, խօսքդ ոնցուկ (7),
Խովիդ ու արօր ոնդումի (8) ըլլին ժիր բոնուկ (9).
Ոմին (10) գործիդ աջողուԹիւն Թող ըլլի,
Հող որ բռնես, հէմէն (11) Թաժայ (12) հաց ըլլի.
Կոնաչ կոնաչ (13) ծըլիս (14), ծաղկիս, կոնըչիս (15),
Որդեգդ հասնին տէօլ ու տէօղով (16) լիք լցուիս.
Սուրբ պսակնին պագնես ուրախ ու զուարԹ,
Ջաւկի ցաւը Թող չտեսնայ (17) ոչ ոք մարդ.
Թագուկիդ (18) հետ հասնիս մինչուկ (19) ծերուԹիւն,
Մկկ բարձի վրայ ոխտը պորտիդ (20) տեսնաս
հազար բազմուԹիւն»:

Թագուորը ծօր ձեռքը կը պագնէ և կողքի կը կանգնի. Թագուորամայրը կառնու հարսին ձեռքէն և կը կարդայ նորա գլխուն.

«Բարով եկար մեզ ոսկի հարս տիրուհի,
Մենծ Թագուորի կին ու ընկեր Թագուհի .

Նական: (1) Ծաղիկ. ինչպէս և արևծաղկին՝ կասեն աչքածաղիկ: (2) Գլխիդ առնդ: (3) Կնանքիդ, հարսին կակնարկէ: (4) Ամպերէն: (5) Ցանքիդ, վարուցանքիդ: (6) Անձրև: (7) Անձուկ, այսինքն կակոյն կատարուող ներգործող. Թավ անցնող: (8) Ցանդումի: (9) Բանուկ: (10) Ամեն, երբեմն կասեն և ըմեն կամ ըմմեն: (11) Իսկոյն: (12) Թարմ, Թուրքերէնի Թազէ ձ: (13) Կանաչ կանաչ: (14) Բողբոջիս: (15) կանաչիս, չչորնաս: (16) Մանր ու խոշոր որդիք, Թոռունք, և սերունդ: (17) Ձահանէ. անոր լծորդուԹիւնը նոյ է վոխուած ձ: (18) Թագուհիդ: (19) Մինչի: (20) ԵօԹը սերունդդ, ազգդ:

Ոտքդ բարով կոխես աս չեմ բարով լի,
Ծեռքդ խնկով պէրէքէԹով (1) լիուլի.
Դաշտում, ձորում նախիը, գառներդ շատնայ,
ԿաԹոմոնդ (2) ու ծավիերդ (3) բերնընայ (4).
Գուբ ու կարաս լցուին ճօշղուն (5) ոմպարները (6)
Եղ ու մեղրով լցուին կեղրի (7) եխալները (8).
Էգի (9) պատրէզ ոնտառի (10) պէս կոնըչած (11),
Ոսկի ձեռքովդ ու պաղունցով շատ քաղած.
Պտուղներով, բարիներով (12) Թող լցուին
Չնճոն (13), տագար, ու կարսընները (14) ճօշուին (15).
Բարով եկար հարս Թագուհի, տիրուհի,
Չնազոնդ (16) ոնուն (17), ոնուշ բերոն (18) չնորհալի.
Ոսկի Խոմուկ (19) Ճըլտրը մըլտրը (20) ապրըչոնք (21)
Կը վիայեն կտրուկ հոգուդ, սըրտիդ ջոնք (22).
Տաշտն ոնպակաս (23) լիք կը լցուին չօԹերով
Թոնիրն ու փուռն Աստուծու օրն լօշերով,
Ոնուշ հոտով ներս տի բերեն շատ հիւրեր,
Մենծ Թէնճերէ պզտի պտուկ խալկիննեը,
Եփած Թափած խոնչայ (24) սուփրադ (25) զարդարեն.
Չոմով (26) հոտով ոմեն (27) հիւրի բերոնն (28) հոմեն: (29):

---

(1) Անկասկած առատութիւն. Թուրքերէնն է: 2) կաԹնամանդ: (3) կիսակարաս, յորում պանիր կամ մածուն կը մակարդեն: (4) Բերանանայ, մինչ է բերանը լցուի: (5) Ջրպուն: (6) Ամպարներ: (7) կեղրի, քիւրդի, մառանի, (8) կրեզան, կէռէզ, իւղի ամանները. վանցիք ու մշեցիք կ'ասեն էխմէնէ կամ էղէչնէր: (9) Այգի. միայն այս բառումն է, որ այ երկրարբառն է ի կը փոխուի. Թերևս ափէ—պոչ բառէն զանազանելու համար: (10) Անտառի, (11) կանաչած: (12) Բարիքներով, ապրանքներով: (13) Չնճան: (14) կարասները: (15) Դուբ վազեն: (16) Չնազանդ: (17) Անուն: (18) Անուշ բերան, խօսքը քաղցր: (19) Ոսկեհամուկ: (20) Գուշակ ձպրպը մպրպը պիտի լինի: (21) Ապարանջանք: (22) Ջանք: 23) Անպակաս: (24) Սեղան, տրապէզ: (25) Սեղան, Թիւրքերէն է: (26) Համով: (27) Ամենայն: 28) Բերանն: 29) Համեմն:

Ծուխն ոնպակաս Թող ծառընայ (1) քու եր-
դուն (2).
Խապար (3) տոնին (4) բոլոր աշխարհք դաս ու
տոն (5).
Բարով եկար, մեր վարդևաթուն (6) տիրուհի,
Կարմիր փուլլու (7) մէջ աշխըրքին գեղուհի.
Տերընտասի (8) սուրբ կրակովն օրհնուած,
Ջատիկ (9) լուսով կոնաչ (10) մումով նչոնած (11).
Սուրբ կարապետ Հայ ազգին մեծ բարեխոս,
Ընծայ խոկեր քեզ ոնթառոմ (12) աս (13) նարդոս.
Ծըլիս ծաղկիս Խոր Սպերին ոսկի ծառ (14)
Բերես պտուղ ոմենահոմ ոսկի զառ (15)։

---

1) Ծառանայ, ծխայ։ 2) Ձո երգին։ 3) Համբաւ։ 4) Տանին։ 5) Ընդ այս ընդ այն, դէս ու դէն։ 6) Աղջկանց անուն էլ է սովորական։ 7) Հարսանեկան շղաշառեալ՝ սովորաբար զարդարած կըլլնի ոսկեզոյն և կարմիր փուլերով։ 8) Տէրընդաս—Տեառնընդառաջ. սուրբ կրակն է նախաօնակի երեկոյին վառուած կրակը. (Թերևս Քհրական ծոներէն մնացած, որոյ բոցերուն մէջէն ու վերայէն կը Թռչեին կանցնին պատանիներն ու աղջիկները. և որոնց ոք վիշերը այրի կրակէն՝ կուսութեան դէմ մեղանչած կը համարուին։ Իսկ անվնաս անցնողները բազմածին, յօդուածին կը համարուին։ 9) Զատիկ — Մաղկազարդ. այս տոնին օրը լուսաւորնայքն առանձին մոմ կուտան հարսնացուին վեսացուի քոյրերը կամ մայրը։ 10) Կանաչ։ 11) Նշանած։ 12) Անթառամ։ 13) Այս։ 14) Խոր Սպերն ոսկի ծառ. այս խօսքը՝ սովորաբար կարտասանեն «Խոր Խապերին ոսկի ծառ». և կը հասկանան նոյ խոսքին ոսկի ծառ. խոսքէ՝ սովորաբար գիւղացւոց բառանում կը նշանակէ փուշ գլուխ, էջել գլուխ, և այսպէսներուն երբեմն փոխաբերաբար կը կանչեն աբծաքգլուխ։ Ինձ այսպէս կը Թուի, Թէ Կողբէսի առասպելեալ ոսկեգեղմ ծառերն և կամ Սպերի վերին և ստորին ոսկեհատները կակնարկեն այստեղ։ Ձոր բառը՝ տեղական հայ-հնութիներու բնբանում կը գործածուի էքքև էոյր։ 15) Ամենահամ, ոսկի կձևպ, ոսկեգոյն կեղև։

Աստուած օրհնէ, ոնցաւ (1) աչխս բազմոնաս(2).
Հարիրաւոր (3) որդւոց Թոռոնց (4) մաբ (5) դառնաս.
Պոյ պոյ (6) որդւոց գուն գուն (7) հալաւէ(8)
մէջ նաչխին.
Ոսկի մատներդ վառաւորուին մենծ զատկին.
Ու ոմեն ժուռ (9) բարկենդոնքին (10), տօներին,
Տէօղ ու տէօղդ քեզ մէջ առնոն (11) պար բռնին (12)։
Բարով եկար մեզ ոսկի հարս պատուակոն (13),
Բարով եկար, հազար բարով, սիրակոն. (14)
Ոնցիր (15) նստիր Թագւորին գուգ նագլու հարս»։

Թագւորամայրն հարսին օրհնութիւնը վերջացնելով, կը տանի ներս Թագւորի հետ միասին և հարսին կը նստեցնէ Թագւորին հետ գոյգ գահաւորակի վերայ. բազմութիւնը կը կանչէն մեծաձայն.

«Կեցցէ Թագւորը, կեցցէ Թագուհին,
Սիրով ապրին, շատ ապրին»։

Ապա ծափ կը զարնեն ու կը խաղան։
Այս միջոցին տան երդիքէն ներս մի աքաղաղ կը

---

1) Անցաւ, առանց ցաւոց։ 2) Բազմանաս։ 3) Երբեմն ևս հարուբաւոր։ 4) Թոռանց։ 5) Մայր։ 6) կարգ ըստ կարգի, կամ աստիճան առաստիճան։ 7) Գոյնզգոյն։ 8) Կը հնչէն հալաւ. ա ձայնաւորը առաստիճան։ 9) Ամեն ժամ, ժամանակ. այս տեղ փոխանակ ծոմ կըձատնելով։ 9) Ամեն ժամ, ժամանակ. այս տեղ փոխանակ ծոմ ասելու ըստ ընդհանուր օրինքին բացառութեամբ կասեն ծոմ. գուցէ ծոմ—եղեղիկ—ծոմոպոպոչ բառէն զանազանելու մտօք։ 10) Բոլն բարեկենդանը — վերջին շաբաթի օրերը։ 11) Առնուն. այս անկանոն բայը՝ նախ փոխուել է առնամ, յետոյ առնում. ըստ ոքում կը խոնարհուի. առնում, առնաս, առնայ. առնունք, առնաք, առնան. 12) Պար բռնեն։ 13) Պատուական։ 14) Սիրական։ 15) Անցիր։

Թողուն. կը ցատկէ Թագուորը, կը քաշէ Թուրը, և աքաղաղին գլուխը կը կտրէ։ Եթէ Թագուորի Թուրէն ազատի աքաղաղը, Թիկնապահը կը քաշէ Թուրը, եթէ այս անգամ ևս ազատի, պարաւորները կը կոխեն աքաղաղին՝ ոտքի տակ. և Թագուորն իսկոյն կարգադրութեան կսկսի, տաճարապետ, մատռուակ ու մատակարար կը նշանակէ. և գինի կը բաշխեն։ Հարսանեաց հանդէս է այնուհետև։

Կէս աւուր ժամերուն Հարսին քոյրերը և ծնողքը մեծ պարաւոր՝ կուգան Հարսանիք, Թագուորը կընդունի Հարսի ազգականներուն Հարսին տունը, որոց հետ միասին ամենատեսակ մրգեղէնն կը փռուի տան մէջ Հարսին ծնողաց կողմէն ընծայուած, իբրև Հարսին ժրբութեան պատրաստութիւնները։ Բոլոր Հարսնաւորները կը մասնակցեն այս մրգեղէնէն, ապա սեղան կը ձգեն և կը բազմեն Թագուորի ճաշին։

Հարսանեաց եկրորդ օրը կը վերցնէ քահանայն Թագուորի և Հարսի Թագերն, և Հարսին գլխուն ծամկալի վերայէն կը ձգեն շղաշատեռը, ականջին կառնուն գինդերը, և ականջները ծածկելու չափով կը կտրեն հիւսկէն խոպոպները։ Կը վերցնեն նոյնպէս և Թագուորի Թուրն ու կարմիր վզնոցը. զի առագաստի օր է այնուհետև։

Ահաւասիկ Հայ ազգին մէջ սովորական եղած զարդերուն բուն նշանակութիւնը, պատճառն ու նպատակը, և գործածութեան ժամանակները՝ բաւականաչափ յայտնի եղան. որոց ըստ օրինի գործածութիւնը՝ վայելչութիւն է, և պարտաւորիչ ազգային աւանդութեանց նայելով. իսկ ժամանակէ դուրս և աննշան յաւելուածներու զեղծումն արդէն կը նսեմացնէ զարդի փառքն, և կը պատմէ հասարակաց հրապարակներուն, Թէ ինչպիսի անտեղի խորհուրդներ ու միտումներ կը սնուցանեն մարդիկ սովորական ու բնական պարտաւորութիւններէ դուրս։ Այսպիսի այլ և այլ երևոյթներու՝ օրէնքէ դուրս երևոյթներու պատմութիւնը սրտէ ի սիրտ

կը կարդան ամենայն կատարեալ մարդիկ։ Կատարեալ մարդուն Հագուստը՝ մերկութիւնը ծածկելու, և ցուրտէն ու տաքէն պատսպարելու Համար միայն կը պատրաստուի և ոչ երբէք ուրիշ մտքով։ Իսկ մանուկին, պատանիին և երիտասարդին զարդարանքն՝ իբրեն որոշ տեսակն ու ձևն ունին, Հանդերձ իմաստալից նշանակութեամբ։

Այժմ անցնինք տեսնելու, Թէ ինչպէս կազատի կատարեալ մարդը՝ սովի բնական պատահարէն։

ԻԱ. ԹԷ ԿԱՏԱՐԵԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԶՎՆԱՍՈՒԻՐ ՍՈՎԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՏԱՀԱՐԻՆ.

Տիեզերքի անդադար շրջանառութեան անհուն և անսահման ժամանակներուն՝ բնական վիսիսնութեանց մի կարգ սահմանած է Աստուած—Տիեզերքի արարիչն ու կառավարը. և այս վիսիսնութեանց մէջ կը պատահին սաստկասաստուց ցրտեր, յորդ անձրևաց չափազանց ջրհեղեղները, կիզիչ խորշակները, ոսին ու տապալառն Հողմերը. և այսպիսի տարիներուն մարդկային ուտելեաց բնական բերքերը՝ սովորական չափով չեն աճիր։ Կան մարդիկ (այժմու քաղաքավարութեան նայելով՝ մարդկանց խիստ մեծագոյն մասը), որ այսպիսի պատահարներուն իբրեն ուտելիքը բաւականաչափ չեն կարողանար ճարել, և սովէն կը տանջուին, գազանաց և սողուններու կերակուրին կը զիջանին, դարձեալ չեն գտներ. և այսպիսի անճարակ կարօտութեան տագնապներուն առ Աստուած կը դառնան նորա գթութիւնը չարժելու ողորմ աղաղակներով ու Հառաչանքներով. և երբ պատուհասին կերկարի, կը տեսէ, կը տրտնջան իբրեն մտքումն ու բերանում, Թէ Աս-

տուած չենամբը իրենց: Բայց կանիրաւին Աստուծոյ նախախնամութեան դէմ. վասն զի Աստուած միշտ կը խնամէ Հիմարիտ ողջախոհին: Աստուծոյ գործոց պատմութեան մէջ կը կարդանք ու խելամուտ կը լինինք, թէ աշխարհի ընդհանուր չարութեան՝ ընդհանուր պատիժէն—համայնապինդ ջրհեղեղէն ազատեց ու ապրեցուց ողջախոհ Նոյին՝ հաւիւրաւոր տարիներու պատրաստութեամբ: Դիցամոլը, բղջախոհութեան անբռնական գազանութենէն ապրեցուց ողջախոհ Աբրահամին. Քանանու երկրին համայնատանջ սովերէն ապրեցոյց. Փղշտացւոց տագնապներումն՝ ողջախոհ Իսահակին ջրհորները կենդանի ջրով լեցուց, գարնի՝ մէկին հարիւր աճեցուց:

Սոդոմայ հովտին ընդհանուր հրայրեացէն՝ ողջախոհ Ղովտին ապրեցուց: Եօթնամեայ սաստիկ սովոյ ընդհանուր տագնապներէն՝ ողջախոհ Յովսէփին ձեռքովն ամբողջ Եգիպտոսն ապրեցուց: Անթեր անապատում քառասուն տարի Իսրայէլի անմեղ որդիքն ապրեցուց երկինքէն հաց տալով, ծովէն կերակուր: Քառասնօրեայ սովի տանջանքէն ազատեց ողջախոհ Եղիային՝ ագռաւներու ձեռքով կերակրելով: Սարեփթացի այրիին տունը լեցնելով Պաղեստինէն ի Բաբելոն ապուր հասցուց, ու ողջախոհ Դանիէլին կերակրեց: Իր մխածինն աշխարհ խրկեց անկորուստ և աննուազ կերակուրի խրատեց. որ մինչև ի կատարած ապրին ողջախոհներն անտանջանք՝ նաև առանց հացի սովերում: Զսորվեցան անբան մարդիկն ապրել Աստուծոյ խօսքով, ագահացան, ժլատացան՝ մամոնայի փառքերով, քաղցած, ծարաւ կը տանջուին, իրենց որդւոց մարմինը կուտեն, որ կշտանան, և չեն ապրիր. չեն Հանապարհը Աստուծոյ խնամքն, չեն գնար նորա Հանապարհը, և կը տրտնջան: Անզգամը կասկ իւր սրտում, թէ Աստուած չկայ. կանօրինի, կանիրաւի, սովէն աւելի մահ կը գործէ, յետ կենալով ուղիղ գործի ուղիղ Համբէն: Անօրէն որդիքն են, որ տարաժամ կը կորսուին, և իրենց ընկերին ևս իրենց հետ կը կորսնցնեն:

Ողջախոհին կրթութեան և գիտութեան կատարեալ ուշիմութիւնը՝ քալ կը տեսնէ կը Հանդիպի Աստուծոյ նախախնամութիւնը, և ողջախոհութեան հոգւոյն հանդէսը: Աստուած ողջախոհին միտքը կը բանայ Հիմարիտ պիտոյից Հանապարհին մէջ, նա միշտ լուրենէ և լուրիւն կը յառաջէ, իւր հաւատքը կը հաստատէ: Ողջախոհը կը տեսնէ առաւելագանց լուրեան շատ տարիները, և կը գուշակէ պատահական սովի տարիները, նա չկորցներ ու վհատներ լուրեան աւելորդը, և կարօտութիւն բնաւ չտեսներ: Անմիտ ու անգործ բանական մարդը՝ միշտ պիտի տանջուի սովի տագնապէն, լմաստուն և Հանասկր մրջիւնը՝ թէև անբան, բայց միշտ ապահովուած է սովի վտանգէն:

Անզգամը լուրիւն տեսաւ, մոռացաւ իւր արարչէն, խոտորեցաւ նորա Հանապարհէն, գալարտացաւ, բարկացաւ, ծուլացաւ, ագահացաւ, լուրեան մէջ անկուշտ կը տանջուի. Հասաւ սովը, Հարկաւ կը մեռնի. վասն զի պահածները վատեցան, գողերը տարին: Անզգամը կը Հալարտանայ, գեղխութեան ու չգայլութեան մէջ կընկղմի, կը ծանրաբեռնի աւելորդ ծախքերով, ու սնոտի փառքերով, սովը կը փութացնէ:

Սուրբ Գրոց պատգամները, պատմութիւնները. կը Հաստատեն, թէ Աստուած կը պահէ ողջախոհի կեանքը սովին վտանգէն. Սուրբ Առաքեալը, լմաստասիրութիւնը, և ուրիշ ազգաց մէջ յատնուած լմաստնոց Հառերն ու սահմանները կը վերցնեն մարդկներէն սովի ոՀիը. բայց մարդկանց անզգամութիւնն է, որ կը սաստկացնէ սովը, որ պարզ կը տեսնենք և մեր կեանքի տագնապներու խելամտութեանց ամենօրեայ Հաստատութիւններով. Տեսնենք մեր շինականին կեանքը, երկտասարդին ջանքը, նոյնպէս և քաղաքացւոյն գործն ու ապրուստը, վաստակն ու ծախքը: Երկտասարդին

նիստ ու կացը, ոտքին քալուածքը, ձեռքին կրօնաստը, դեղարանին կազմուածքը. օրհոդին հագուածը, աքիս պոչը, աքաղաղի փետուրը։

Մեր շինականը ամառնային և ձմեռնային աշխատութեան վաստակներով պանիր կը պատրաստէ, կը հասցնէ. քաղաք կը բերէ, պազար կը հանէ, փունտը հինգ կոպէկի կը վաճառէ, և հարիւր ութսուն կոպէկի մի փունտ խաւեար կը գնէ. այս՝ մեր շինականին արարքն է։ Համեմատենք այս արարքը՝ մարդկային պիտոյքներու անհրաժեշտ պայմաններուն հետ, և բանականութեան վարմանց հետ։ Իսկանդակ աշխարհին յայտնի է, թէ և՛ պանիրը, և՛ խաւեարը մարդկային ուտելեաց տեսակներն են, և հացը կը համեմեն. պանիրը գնողը իւր հացը կը համեմէ պանիրով, խաւեար գնողը՝ խաւեարով, և այս՝ այսպէս միայն է, ուրիշ որևիցէ առաւելութիւն կամ տարբերութիւն չունի։ Բանականութեան դատաստանում, երեսուն և վեց փունտ պանիրը ձեռքէ հանել, և փոխանակը մի փունտ խաւեար ստանալ, այն էլ ձիով ու սայլով քաղաք գալով ու գնալով, և անդառնալի ժամանակին այս անմիտ առևտուրին զոհելով. այս արարքն, այս ուտելն՝ ամենևին տեղի չունին բանականութեան ցուցակներում։

Շինականը՝ իւր վաստակի բարիքը կը վաճառէ ամառը, անգործ կը մնայ ձմեռը, քաղաքացիի կերպարանք կը մտնէ պարտքով, հարստանիքի շռայլ կերուխումով, նախնեաց սովորական տարազէն դուրս թանկագնի հագուելով. կը նեղուի վաշխառուին ձեռքումը, կը փոխէ մուրհակը ծանրատախտուկ տոկոսի բարդութեամբ և յաւելուածով. շինականը կը հասնի նոր արդիւնքին, կը հատուցանէ պարտատէրին, պարտք կը մնայ տակաւին, պաշար չունի աշնանէ, ձմեռը կուգայ, սաստիկ կը նեղէ. գարձեալ պարք կանէ, որ մի չունչ առնէ, և այսպէս շարունակ քանի որ կենդանի է, հանգիստ կեանքին՝ դառնութիւնը կը փոխանակէ.

լիութեան ամպարներուն՝ դատարկութիւն կը տիրապետէ. տան մկներն էլ քաղցած են, տանուտէրն ինչ անէ, դարձեալ պարտք կանէ, որ եղներին կերակրէ. պարտք կանէ, որ սերմն ու գործիք գնէ. պարտք կանէ, որ մշակ վարձէ, ինքն արդէն հիւանդ է. ուր ուրեմն տունը կը ծախէ, որ պարտքէն ազատի, առանց հացի, առանց հագուստի կարօտ է և առողջութեան, փողոց կընկնի կը քալէ. և ինչու համար այս ամենը. վասն զի քաղաքացւոյ սէս կերաւ նրբ պաշարը, վասն զի քաղաքացւոյ կերպարանքով հագուեցաւ, արհամարհեց նրբ նախնեաց տարազը։ Շինականին այս ընթացքն է, որ բնական առատութեանց ու լիութեանց դէպքերում էս սովի երեսէն հիւանդութեանց կը տանի, և ապաժաման մահ կը հրաւիրէ։

Շինականին երիտասարդը՝ առոյղ ու բարեձև ի ծնէ, հասուն հասակաւ, ամբողջ ձմեռն անգործ կանցունէ, գինետուները կը յաճախէ, և չարաչար կը խմէ, անկարգ ընկերութեանց անկարգ խօսքերով, խորհուրդներովն՝ ներքին հոգւով վիրաւորուած կամ լրբացած, ոտքն անակառակութեան Ճանապարհները կը գարձնէ, չարն չարով ետուր առակին Ճշմարտութիւնը վերան կը կատարէ, հօրմէն գաղածը, տունէն տարածը, մօրմէն առածը՝ մի բոպէում կը կորսնցնէ, չարիքում կը բռնուի, բանտում կը տանջուի, մինչև կը հիւանդանայ՝ տուն կը խրկուի, կամ թէ ծնողքն աղի արտասունքով լացով ու թացով, տուներնին կը ծախեն, փաստաբանները կը վարձեն, որ իրենց որդին ազատեն. ինչու համար այս կորուստները.—վասն զի երիտասարդը դատարկապորտ է, ձմեռն անգործ է, ոչ ողջախոհ ընկերութեանց մատնուած է։ Աղքատութիւնը նորա ծոցը մտած բոյն դրած է, նրան ձվ ածէ ժրացնէ։

Հաստ ու երկայն սրունքները, հաստատուն ձեռները՝ բայց ուղիղ Ճանապարհէ մոլորուած՝ դատարկութեան ունայնավաստակ Ճանապարհներում միայն կը քայլէ.

եղկայն Թևերը, հաստ բազուկները, կաշեկուռն Թաթերը, կռանազօր բռունցքները, բայց՝ գործէ դադարած, մերկ կերակուրը պատառն ու դգալը կը գործածէ. Թեկնաւէտ ու լայնալանջ, արիակերպ իրանունք, բայց՝ մեղա նստած ու պառկած է անգործ, անվաստակ։ Աւօրը՝ կոտրած, խոփը՝ մաշուած, Թուրը՝ կորսուած, գերանդին՝ գուլցած, մանգաղն՝ ոլորած, կացինը՝ ժանգոտած, սղոցն՝ ատամնազուրկ, ուրագը բուն չունի, սայլն անիւ չունի, եզն ու ձիան նալ չունին։ Երիտասարդը պառկած, վարձկանին ձեռքը՝ սերմին մէջ, վարձկանի ձեռքով կը քալէ մաճը, արտը կ'իսալաբ, սերմը կ'իսացան, գետինը՝ խոպան, օտար մշակները կը հնձեն հունձքը, կ'իսը կը Թափեն, կ'իսը կը ժողովեն, կալէն բերք չելլեր, կալսողն վարձին չբաւեր.— ինչո՞ւ այս ամեն ձախորդութիւնը.—վասնզի երիտասարդին գլուխն անկիրթ է. նա կը տեսնէ, ու չճանաչեր, կը լսէ, ու չհասկանար, կը հասկանայ, ու չհմանար, Թէ հացն աշխատութեամբ կը պատրաստուի. նորա ուղեղն արդէն իսկ սնացել է, և կը կարծէ, Թէ անգործ կեանքը՝ մեծութիւն է, վարձկանի հրամայելը՝ ճոխութիւն։ Որոց կանուխ կը հասնի աղքատութեան խստութիւնն, ու կը պատկերացնէ սովի բռնութիւնն, ու նորա ընկերը մահատարաժամն։ Այս սովն Աստուած տուած կամ սահմանած չէ, այլ անգործ մարդկին իրենք կ'ստեղծեն, կը փութացնեն, և իրենց վերայ կը հրաւիրեն։ Բայց անդգամներն՝ այս իսկ իրենց չարիքը պատճառ կը բռնեն, և Աստուծոյ ամենախնամ ողորմութեան դէմ անիրաւի կը տրտնջեն, Թէ նորա խնամքն ընդհանուր չէ։

Շինական երիտասարդը՝ կը հպարտանայ, կը նախանձի, վասն որոյ և անպատիւ կը լինի իրեն ընտանիքում, և տեղի՝ հասակակիցներում։ Կը բարկանայ, կը ծուլանայ, վասնորոյ և տեղի կուտայ Թշնամութիւններու, և սուրհանդակի պէս կը հասնի աղքատութիւնը։ Աղահութեան վորձ կը վորձէ, ընկերներէն բաժնուած,

հոգիէն ևս կը բաժնուի, որկրամոլութեան կը զոհուի, գեղխութիւն, չուայտութիւն՝ անբաժան ընկերացած նորա ներսումն, կատաղութիւն կուգայ կրնց, կը յագենայ կերբ ելէն, կը հիւծի, կը խոպոպի, կը հիւանդանայ մահիճ կը ընկնի, և տարաժամ ձեռ կը քաշէ իւր կեանքէն. վերջին շունչը շուտ կը փչէ։ Կը նմանի ծաղկած ծառին, որ աշնատաւխլ կործանած, և կը չորնայ։

Շինական օրիորդն՝ այլ ևս մոռացել է բոլորովին՝ մանելն ու գործելը, հիւսելն ու անկուածելը, կարելն ու կարկատելը, ներկելն ու Թափելը. բաւական կը համարի միայն հագնելն ու մաշելը. բայց Թէ որո՞ւ ձեռքեն գործն է. այն հարցնելու ամենևին պէտք չզգար։ Օրը մի անգամ ապուր կեփէ, տասն օրը մի անգամ մի փութ հաց կեփէ, քառասուն օրը միանգամ մէկ շապիկ կը լուանայ առանց աճառի կամ օշնանի. վասն զի ինքն աճառ պատրաստել չգիտէ, մայրն էլ մեռեր է, հայրը՝ աղքատացած, սնանկացած, բրենձ գնելու փող հազիւ կը ճարէ, աճառն ինչո՞վ պիտի գնէ։ Զարհուրելի օրիորդ՝ խօսքի մէջ կը յայտնէ, Թէ ճաւարէ վերյաւը՝ բրենձենէն համով է, և կարօտը կը քաշէ։ Փեսակինն եփածն կերել, ախորժել է, բայց Թէ ճաւարն ինչպէս կը պատրաստեն, այն՝ բնաւ հարցուցած չէ։

Վերջապէս՝ շինականի ամբողջ պատկերը՝ դիտող աչքին այսպիսի մի տեսարան կը հանդիսացնէ.

—Կայտառ մանուկ, կայտառ աղջիկ, ժիր պատանի, շաղկապուն օրիորդ, պերճ երիտասարդ, Հեմական տեռատես. որկրամոլ արամբը, չուայտոտ կանամբը. ծննդոց այլակերպութիւն, մանկանց հիւանդութիւն. ծուխի նուագումն, աքաղաղի լռութիւն. անմշակ արտորայ, խոպանացած այգեստան. ծակ ծակ ամպարները, ջուր կոխած խորերը. ստերջ ոչխարներ, վատուժացած կովերը. պառներն անգործման, կը սատկեն հորթեր. կ'իսացանի չափութիւն. սիրոյ սպառուած, կենաց վատու-

թիւն. մոլոր Հանապարհ, խաւարային գահավիժ. ամեն տեղ առատութիւն, գեղերումն է թանկութիւն. ամեն օր քաղցածութիւն, ամեն Ձմեռ սով. անտանելի աղքատութիւն, աղեխարշ կարօտութիւն, գարուն ու ամառ, աշուն ու Ձմեռ, չկայ երբէք դուարթ սիրտ. երեկոյ և առաւօտ, կեանք է՝ որ կանցնի. չորաչոր դադաղ, յուսահատութ մահարձան լռնարհաճ, լիճաճ, անյայտ մահաթոումբ:

Անցնենք, տեսնենք և քաղաքացւոյն տունը: Մեջակ ու վայելուչ տուն. կահ կարասին Հոխ՝ քան թէ անթերի. փորթոպիանին՝ մէկ կամ երկուքն աւելի. պատուական հիւրընկալութիւն, ու պատուական մեճարանք. հացը պազարէն, նախաճաշը պազարէն, ամեն պաշար պազարէն, կաթը մեայն է անէն, կովին խոտը՝ պազարէն. վարձկան խոհարար, վարձկան լուացարար, անվաստակ կերակուր, համեմն անպակաս, ախորժակ չկայ, պատուղն օտար երկրի բերք: Ճոխ հագուստ, աւելորդ զարդարանք, անձին նեղութիւն, դիւրաշարժութեան արգելք: Հայր ու մայր լի տարիքով, երեք արու, երկու աղջիկ զաւակներ, հասակով հասուն, մեծը՝ քսանըչորս տարու է, փոքրը՝ տասնեւվեց: Մի ծառայ, և երկու աղախին. մի կառապան, երկու ձի. մէկ, երկու, երեք . . . . մինչև վեց տեսակ կառքեր:

Ցօրենի ամպրը ու կշիռք, առևտրական սենեակ. մի հայր և երեք որդիք, մինը սենեկուն, մինը ամպարտուն, երկուքն այս կողմն այն կողմ գեղերումն. շաբունակ կը շրջին, սակարկութիւն կանեն, կը գնեն, կը բարձընեն, կը խրկեն. գինը մեշտ կը հատուցանեն: Կայերը կը վերջանան, աշունը կընդմիջի, ամպարը կը լեցուի: Կը նստին հաշուի, ծախքն ու դրամագլուխը կը մեացնեն, գինը կորոշեն. օտար վաճառականին փորձ կառաջարկեն. վաճառականին մէկը կը պնդէ կոտրել հարիւրին տասը, մեւսը կը պնդէ կոտրել տասնին՝ մէկ ու կէս: Կսպասէ ապրանքը. եթէ նոր վաճառականներ

յաւելնան, և մեծաքանակ ապսպարանք ունենան, կը վաճառէ քաղաքացին որոշեալ գնով, գուցէ երբեմն հարիւրին մէկ կամ երկու աւելի: Իսկ եթէ չպատահեն նոր վաճառականներ, և նոր ապսպարանք, հաշիւը ծուռ կը վերջանայ: Նորը կը հասնի, գործը կսկսի, պատրաստ ապրանքը կը վաճառուի օտարին գնահատութեամբ. այսինքն հարիւրին՝ տասը վնասով: Եթէ այս վնասը չպատահէր, հարիւրին տասը՝ տարեւոր աշխատութեան վաստակն էր, որով տունը կը տնտեսէր:

Մեւնոյն կարգի ուրիշ մի տանուտէր. բաւականաչափ դրամագլուխ, ընդարձակ խանութ, կանոնաւոր գրասենեակ ու հաշիւ, քսանի չափ գործակատարներ: Քաղաքէ քաղաք, տօնավաճառէ տօնավաճառ կը քալեն հայր և որդի, կը գնեն ապրանք ու կը փոխադրեն մեծաքանակ հակեր կտաւի և ասուի, ամենագոյն կերպասներ: Բերքերու առատութիւնն ու առուտուրի աջողութիւնն յաճախորդը կը բազմացնեն. մի կանգուն, երկու կանգուն, մինչև քսան, երեսուն, յիսուն կանգուն գնողներ. լջեցնել ու բանալ, չափել ու կտրել, ծրարել ու հաշուել, այսպէս ամեն օր և մինչև երկիրն, տարին կը լրանայ. հարիւրին տասը վաստակ կը գոյանայ. որով տունը կը տնտեսուի: Բերքերու նուազութիւնը, կամ առևտուրի ձախողութիւնն յաճախորդին նուազութիւն է. ամբողջ խանութը պարապ. գործակատարներն ոտքի վերայ պատրաստ, գնող կսպասեն, գուռը չբացուիր. հազիւ թէ մի երկու հոգի մինչև երկրէն կը մտնեն, գին չեն տար կելլեն, մէկը՝ որ պարապ չելլեր, այն էլ ապառիկ կը տանի, տարին կը դառնայ. ծախք ու դրամագլուխ մեասին հաշուի կառնուին. հարիւրին տասնեհինգ, հարիւրին քսան բաց կերևի:

Հազար ռուբլի դրամատան մէջ՝ պատրաստ հաւատարմագին, որ մինչև տասն հազարի փոխառութիւն կը թոյլատրէ նեղջերին. առաջին անաջողութեան դէպքը՝ առանց վերաւորելու կանցնի այս մեջոցով. երկ-

ըորդն՝ որ պատահի, ինչով պիտի անցնի. գործը փոքրացնելը ձեռնտու չէ, վաստակ չբերեր. ծախքը թեթևացնելը՝ տնտնկուրեան երևոյթ է, վասն որոյ և առելի։ Մեծ վաստակի դէպքին սկսած յայն ծախք, անաջող տարիսումն՝ վաստակի նուազուրիւն կամ չքուրիւն. ծախքը թեթևացնելու անհնարուրիւն։ Սրտի տըրտմուրիւն, մտքի տագնապներ. մտերմի խորհրդակցուրիւն, երկու կողմէն էլ անճարուրիւն։ Ձկայ մտածել, թէ պէտք է աշխատել։

Բաղդատը երիտասարդը՝ խանուրիւն կամ կը գործէ, կամ կսպասէ, վարձու օրին յոյս ունի. անբաղդ երիտասարդը՝ խանուրիէն արձակուած, խանուրիներում գործ ու պաշտօն կը փնտռէ, և ունայն տեղը կը քալէ. աղքատ երիտասարդը՝ փողոցում պարապ, չարաչար յուսահատուրենէն մարդավարի խօսելն անգամ մոռացել է։ Տաբուն անաջողուրիւնը, տան տնտեսական պակասուրիւնը, անգործուրեան ձանձրուրիւնը, և դատարկաշրջիկ վատուրիւնը մեսին կը խորհեն, որ զբաղմունք յօրինեն. տաղտուկ վերցնելու խորհրդով, տաղտկալի և վնասակար խաղերու յաճախուրիւն։

Արհեստն՝ արհամարհուած, արհեստաւորը՝ օտար. գործ չկայ, վաստակ չկայ, սնունդն ու հագուստը անհրաժեշտ են, տան նորոգուրիւնը՝ չուտ վերայ հասած. ամեն կողմն պակասուրիւն ու կարօտուրիւն, անհամբոյր ընկերուրիւն. գործել չգիտէ, մուրանալն ամօթ է։ Պղերգուրեան տիպար, ծուլուրեան գերի, այսչափ ժամանակ անվաստակ, դեռ ջուրը փողով կը գնէ. կրակ վառողը վարձկան է, օրական ամեն անխափան վարձերն ու վաստակներն օտարները կառնուն, կը կըշտանան, կզգեստաւորուրին, տուն կը գնեն, տան տէր կը լինին. մեծ ու փոքր գործի են։

Օրիորդները որ ասես, ալողուրեան տարիսումն է կարծես. տան մէջ կը հագուին, զբօսավայրերում կըզբօսնուն, նուագարաններու կը վարժուին. պարահանդէսներէն անպակաս, երեկոյեանակում ըներում և նուագներում ևս պատրաստական։ Լրագրական լուրերու անօգուտ խօսակցուրիւնները, ընտիր յօդուածներու և տնտեսական կենայողուրեանց խորհուրդներու անհաւանուրիւն. լեզուագիտուրեան սնապարծուրիւն, անկանոն ու անվմաստ շարադրուրիւն։ Հագուստի պէսպիսուրիւն. ամեռուայ օրերում կերպասի հագուստ, կը հագնի ու կը մրսի, մուշտակին էլ վերայէն կը հագնի, այն բաւական չէ, մէկ էլ տասնուչորս աղուէսի պոչ երբոռ հետ կապեր է, երկայն բարակ ու թաւ օձի պէս մի բան շիներ է, երկու անգամ վիզին փաթթեր է, մէկ ծայրը կուրծքէն և միւսը կռնակէն ներքև թողուեր է։ Կը գարմանաս, ու կը հարցնես, թէ այս երկրի երիտասարդներքը՝ թէ մանուկերը կորսան աքիսներ, այս ինչքան աքիսի ու աղուէսի պոչեր են քաղաքի հրապարակում.— Ձի, տահա ինչ, այն պոչերն այս տեղի աղուէսի չեն, Սիպիրիայի աքիսի պոչ են, թանկագոյ բան են շատ։

Վերջապէս քաղաքը կայ, և ըստ մեծի մասին՝ քաղքըցին չկայ. որդին հօրը չհաւնիր, աղջիկը մօրը. մայրը կերակուր կեփի, աղջիկը ձեմելու կերթայ (ամառ ու ձմեռ ձեռնոցը ձեռքին). հայրը՝ խանուրիում, գրասենեկում կաշխատի, որդին հարսանիքներում կաշխատի։ Մինչև առաւօտեան չորս ու հինգը միայն կը կաքաւէ։ Մինչև առաւօտեան չորս ու հինգը պարահանդէս ու թղթախաղ, մինչև կէս օրէն վերջ՝ մէկը երկուքը, ննջարան, ժամուկէս էլ չայ առնուլ. կէս ժամ հագուիլ սանտրուելլ. մի ժամու չափ ելլել պարտիզում քալել. ընկերները տեսնել ու չճանաչել։ Դառնալ ճաշել ու քնել. արդէն իրիկուն է ինչ կանես, հայտ է կլուր հասիր չուտ։ Օդին շիշը, չայնն գաւաթը, ձուկին տապակը, բարեկամին երկուքը, կերակուրին վերջինը, և առաջինը. խօսքին դարտակը, գլուխներու տաքնալը, հարուստին պարծանքը, աղքատին արհամարհանքը, աղքատին անցեալը, հարուստին ապագան, երջ-

Խանազուն ու նոր զարգացածը . . . ամենօրեայ խօսքեր, անգործածական կզակներ. հետզհետէ կը յաճախեն ընկերներ ... Հայ տէր Թուղթ, անմեղ զբօսանք—(ժամերու կորուստ).—այս էլ հարկաւոր է, որ ուրիշ չարիք չեղլէ։

Դիտեցէք մեր քաղաքի տեսարանը։ Ուղիղ չափած փողոցներ. կարգաւոր բռնած տներ, քարուածք պատահիներ, ցեխոտ պատահիներ. կայտառ մանուկներ, ժիր պատանիներ, երկու տարիէն դէպի հիւանդներ, երկու օր ուսումնասրան, երեք օր զբօսարան, խաղ, անպիտան խաղեր, փողոցի խօսքեր, աղտեղի խօսքեր. Ծոյլ երիտասարդներ, դատարկապորտ օրիորդներ. անտեղի և անվայել հանդերձներ. օտար երկրի գործուածներ, երկրին ու բնկին՝ պարծանք լինելու ոչինչ բան չկայ։

Աշուեսաէ դուրկ քաղաքացի, առևտուրի սպասաւոր, աջողակ տարին՝ բոլոր վաստակը ծախսող, ձախողակ տարին և զուր մտածող, երկրէն կը չահի, օտարին կը չահեցնէ, երկրին չահը միտք անել՝ որոնց պարտքն է, ալ խելօք է Թող նա մտածէ։ Աջողութեան արդիւնքն ուսալի է, երիտասարդն երբէք չգիտէ. ծախքին անհրաժեշտը, պէտքին կարևորը՝ նա գիտնալ չուզէ. քանի կը շահի, նա միշտ գիտուն է, ամեն բան գիտէ. նորա մտքումն ու կշռքումն՝ խելօքը միշտ կը շահի, վաստակողը խելօք է, փող ունեցողն՝ անկարօտ է։ Երկրի բերքն լինչ է, կերածն հաց է, արծաթ է, նորա ինչ փոյթն է. քանի արծաթ կայ, հաց էլ կայ, նա այս լաւ գիտէ։ Ոզուր կը կարդայ նա պատմութիւն, կամ տնտեսութիւն, նորա գլխում տեղ չկայ, որ տեղաւորուի, Թէ բուն կենաց պլուսյքը՝ երկրի բերքն է, և նորա գործն ու արհեստն են, որ սնունդ կուտան. և Թէ առուտուրն՝ այս բուն կենաց գործին խիստ սակաւ ժամեայ և յետին գործն է։ Թէ հացին ցանելն ու հընձելն՝ առաջին գործն է, աղօրիք ձգել ու աղօնելն

երկրորդ կարգին է, Թխել հաց անելն՝ երրորդ կարգին է, փուռէն գնել դուրսը ծախելը՝ չորրորդ կարգին է։ Թէ վաճառականը՝ բուրդ կը գործանէ, քիման կը մշակէ իւր ագարագում. մի ուրիշ վաճառական Թել կը քաշէ, ասուի, կտաւ կը կործէ իւր գործարանում, մի ուրիշ վաճառական ու արհեստաւորը՝ կտաւ կը ներկէ, ասուի կը խաւէ իւր գործարանում, կը նախշէ, ու կանուանէ և առևտրականը կառնու գործարանէն ու կը վաճառէ հրապարակներում, խանութներում և տներում։ Թէ վաճառականը՝ կաշխատի բնական օրէնքով, առողջութիւնը պահելով ու աճելով, և կը վաճառէ բոլորական չահով. և ոչ երբէք վնասով. գործաւորը կամ արհեստաւորը կաշխատի և կը չահի ամրողջ չահ, օրական վաստակ. իսկ առևտրականն լինչ որ կառնու, նա մեծ մասն արդէն տուել է վաճառականին ու արհեստաւորին. բոլորական չէ նորա չահը։ Այս ամեն փորձեր, աշխարհական համաշխարհական փորձառութիւնները՝ «Թէ երկրին բերքը և բնկին ձեռագործն է բուն հարստութիւնը» որոնց հասկանալի է. քանի հազար բնակիչներէն՝ միայն հինգ հազար հոգի ձեռք կերկինցնեն երկրի բերքի դարմանին ու մշակութեան, և այն՝ բոլորովին անարուեստ և անհանճար գործաւորութեամբ, և անհանդուրժելի պղերգութեամբ, հազիւ Թէ օրըստօրէ կէս կէս ժամու աշխատութեամբ։ Մարդկային մտքի անհաւատալի ձգմարտութիւնները, երջանկութիւնները.—երկրագործը՝ մի փուռ ցորեն կը վաճառէ լինուն կռպէկի. նոյն երկրագործը՝ մի փուռ ցորենէն գոյացած երկու փուռ հացը՝ կը գնէ իւր վաճառածին երեքպատիկ ու չորեկպատիկ գնովը։ Մի փուռ բուրդ կը վաճառէ վեց մանէթի՝ օտար վաճառականի կամ արհեստաւորի, և մի կանգուն բրդեղէն կը գնէ չորս կամ հինգ մանէթի։ Մեսին փուռը կը վաճառէ մի մանէթի, ձուկին ֆունտը կը գնէ կէս մանէթի։ Տասնևվեց ժամ ունջինային և ութ ժամ գիշերային եղանակներում՝

ցերեկը քուն կը լինի, գիշերը հանդէս կանէ, և զուր անցուցած արեւու լուսոյն փոխանակ հազարաւոր ճրագ ու ջահ կը վառէ, քսակը կը դատարկէ, աչքերը կը հիւանդացնէ։—Ինչու՛ այսպէս ի զուր ծախք.—Պատճառ ունի՛, որ խորհիս, գտնես. դեկտեմբերի կէսերուն հիւսիսայլն մի քաղաքում զանազան հարուստ ապարանները այսպիսի գիշերները տեսել է, և հրաշացել. իւր հայրենակիցներուն հրաշացնել կուզէ մայիսի ամսում, հազիւ վեց ժամեան տակը գիշերում. չգիտեմ, թէ զուցէ մի երկու գոհարի փառըտոյն էլ մի պատճառ տուած է։

Վերջապէս ողջախոհութեան ճանապարհէն զուրս անվաստակ օրեր, ապարդիւն կեանք։ Ձմարիտ կենաց ապահով ճանապարհէն խոտորած, անզգայ սրտի ցանկացած ու քնոտ աչքերու երեւակայած նոր մոգանեերու կորստական ու վնասակար ճանապարհորդութիւնները, անբանական սկզբնաւորութիւն, մարդախոշոր չարայարութիւն, բղջախոհական եղկելի կատարած։ Հըպարտութեան անպատուութիւն ու անկումները, նախանձու հրդեհները ու խանձողները. բարկութեան ոճիրները ու արիւնհեղութիւնները, ծուլութեան վատութիւն, աղքատութիւն, մերկութիւն ու մուրոդութիւն. ագահութեան նենգութիւնները, խաբեբայութիւնները, գողութիւն ու յափշտակութիւն. որկրամոլութեան յղիութիւն, գեղսութիւն, շռայլութիւնները ու արբեցութիւնները. բղջախոհութեան բորբոքումները, ագտեղի կենաց արատները, հիւանդութիւնները, ծննդոց նուազումն, ու աճելութեան խանգարումն. համագամայն անկարգ կեանք, անբնական հիւանդութիւնները, պէսպէս բժիշկները, դեղարանաց շատութիւն, դեղերու անօգուտ գործածութիւն ու դառնութիւն, կորուստ ուժի, աշխուժի, պակասութիւն հացի և տնանկութիւն, կարօտակից հրաւէր սովու, հրաւէր մահուն, զոր կը բերէ մարդ ինքը իւր վերայ, և եզուր կանզգամի, կը սրսըռնջայ, թէ չկայ մեր վերայ աստուածպետական նախա-

խնամութիւն։ Այս՝ անզգամին վիճակն է, և բաժինը. ողջախոհին աչքը կը տեսնէ Աստուծոյ բիւր բարիքը. ձեռքը կը գործէ նորա պատուէրը. միտքը կիմանայ, թէ ամենակարող Աստուծոյ նախախնամութիւնն է, որ բազմապատիկ հիւանդութեանց մէջ առողջութիւնը կը պահէ ողջախոհին. Եգիպտոսի կառորածում կը պահպանէ Իսրայէլին, ողջախոհին միտքը կիմաստասիրէ, թէ Աստուած կայ, և աստուածպետական նախախնամութիւն, որ կը վարէ տիեզերքը, կը զարդարէ երկրագունդը, և մահակոտոր բազմութեան մէջ կեանքը կը պահէ ողջախոհին, և կաճեցնէ, կը լեցնէ լինչպէս որ սկիզբէն օրհնել է։ Աներեւակայելի կեանք, որ կուգայ Աստուծմէ։ Քանի՛ կանզգամին մարդիկ, որ երեւակայութիւն կսպասեն ցուի աչքերու ծակ գլուխներէն։

ԻԲ. ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԱՌ ՋՈՒՏ ԵՐԻՏԱՍԱՐԴՍ.

Երիտասարդները, Պարոնացած կարիճները, Հասուն ուսանողները, երկու խօսք ունիմ Ձեզ, կը խնդրեմ, լաւ ականջ դրէք։

Ուսումը՝ որ գիտութիւն ունի՛ սիրելի է. վասն զի պետանի է, վասն զի հոգին կը պարարէ. բայց մինչեւոյն ժամանակ՝ գիտութիւն ունեցող ուսումը՝ դալկացած ու հիւանդոտ մարմնի մէջ՝ հոգւոյ տանջանք է և մահաբեր։ Այս՝ մէկ։

—Ագնուութիւնը կամ Պարոնութիւնը՝ նախանձելի է. վասն զի վայելչութիւն ունի ազատ ժամերում. վասըն զի իրաւունքը կը պահէ, չկորսնցներ. բայց՝ մինչ նոյն ժամանակ Ագնուութիւնը կամ Պարոնութիւնը՝ վատառողջ անձին մէջ՝ դեղարանի գերին է, բժշկին տագարն ու գանձարանը. նա և բոլոր գողերու աչքերը՝ նորա վերայ կը բացուին, նորա վերայ յոյս ունին, թէ իրենց բաժին ունին։ Այս՝ երկու։

—Երկրագործութիւնը՝ լոնարհ արհեստ է. բայց մինչեւոյն ժամանակ մարդկային սննդեան լիութիւնն է. թէ ազնուականին, և թէ գիտունին անկարօտութիւնն է. բուն երկրագործին առողջութիւնն է. գիտութիւն ունի, որ հոգեպարար է. սնունդի առատութիւն ու լիութիւն ունի, որ անկարօտութիւն է. գործունէութիւն ունի, որ ուժոյ դիեցումն է, մարմնոյ կազդուրիչ է, և առողջութեան ամբողջ լրութիւն։ Այս՝ երեք։

—Այգեգործութիւնը՝ լոնարհ արհեստ է. բայց մինչեւոյն ժամանակ՝ մարդկային սննդեան պարարտութիւնն է, կենդանական գործարաններու մաքրութիւնն ու զուարթութիւնն է. թէ ազնուականին, թէ գիտունին, և թէ երկրագործին ու ամեն մարդու կը զուարթացնէ. իւր գիտութիւնն ունի, որ հոգեպարար է. երկրագործութեան լիութեան նուագելու դէպքերում՝ նորա պակասը կը լեցնէ, կատարեալ սնունդ է. հիւանդութեանց նշաններուն՝ խափա հալածող դեղ ու դարմանն է. գործունէութիւն ունի, որ ուժոյ դիեցումն է, մարմնոյ կազդուրիչ, ամբողջ հանակը՝ պարարող, և առողջութեան ամբողջ լրութիւնն է։ Այս՝ չորս։

—Հովուութիւնը՝ լոնարհ արհեստ է. բայց ամեն կարգի մարդկանց սննդեան համեմն է, և մերկութեան ծածկոյթի հիւթը. հացի պակասութեան, և մրգերու նուազութեան, ու առհասարակ բուսականաց սակաւութեան դէպքերում՝ նոցա պակասը կը լեցնէ, կեանք կը սնուցանէ. գիտութիւն ունի, որ հոգեպարար է. գործունէութիւն ունի, որ ուժոյ դիեցումն է, շնչոց առատութիւն, արեան մաքրութիւն, ներքին գործարանաց ու ամբողջ մարմնոյ միանգամայն կազդուրիչ, առողջութեան անթերի պայմանը, երկայնակեաց ողջութիւն։ Այս՝ հինգ։

—Ոստայնանկութիւնն ու ջուլհակութիւնը՝ լոնարհ արհեստ են. բայց մինչեւոյն ժամանակ՝ ամեն մարդու լիստ կարեւոր ծածկոյթը կը նիւթեն. մարմնոյ

առողջութիւնը՝ ցուրտ և խոշնակի պատահարներէն կը պատսպարեն. գիտութիւն ունին, որ հոգեպարար է, և կատարեալ ժուժկալութեան մեծ արդիւնք. գործունէութիւն ունին, որ ուժոյ դիեցումն է, և մտաց նըրբութիւն, գեղարուեստի չափն ու ձեւը, ուղիղ գծագրութիւն. երկրագործին արդեացն առաջին փոխարէն։ Այս՝ վեց։

—Աստղագործութիւնը՝ լոնարհ արհեստ է. բայց մինչեւոյն ժամանակ մարդու կեանքը կապահովէ լիստ կարեւոր շինուածներով, կը վերցնէ աստիճաստուոյց ցրտի և տապախառն խոշնակի վտանգները. գիտութիւն ունի, ու կատարեալ ճարտարութիւն է և պայծառ փայլ լմաստուն հոգւոյ. գործունէութիւն ունի, որ դիեցումն է ուժոյ, արագութիւն մարմնոյ. երկրագործին արդեացն երկրորդ փոխարէն։ Այս՝ եօթը։

—Մետաղագործութիւնն ու մեքենագործութիւնը՝ վոշխոտ, մրոտ լոնարհ արհեստ են. բայց մինչեւոյն ժամանակ՝ ամեն մի կարեւոր արհեստներու գործիքները կը նիւթեն, կը շինեն, կը կատարելագործեն. մարդկային ամեն կարեւոր վաստակներում՝ ճանրութիւնը կը թեթեւցնեն, զժուարութիւնը կը դիւրացնեն, տաղտուկը կը վերցնեն, հոգւոյ պարարելու ժամերը կերկարացնեն. գիտութիւն ունին, որ ճարտարութիւն է հոգւոյ, և կատարելութիւն լմացականութեան. գործունէութիւն ունին, որ կատարեալ արհութիւն է երկտասարդութեան, և կազդուրիչ մարմնոյ. և առողջութիւն եփուն ու հասուն. ամենայն արհեստի ճանապարհներու հարթութիւնը և աջողութիւն. ու ամեն տեսակ արդիւնքներու և բնական պիտոյքներու լիստ կարեւոր փոխարինելի։ Այս՝ ութը։

—Ամեն մի արհեստ ու ձեռագործ, որ պիտանի է սնունդի, հագուստի, պատսպարանի, և ընդհանրապէս առողջութեան՝ լոնարհ արհեստ է, և սոսկ երե-

ւակայող գլուխներու աչքերուն՝ նուաստ կերևին. բայց՝ մինչեւոյն ժամանակ պետանի են և առողջարար, և փոխարինելի ամեն մի բարեաց, պետանի բարեաց։ Այս էլ՝ լինը։

Երիտասարդներ, Պարոններ, Ուսանողներ, սիրեցէք ուսումը և գիտութիւնը, որ ուսեալ ու գիտուն լինիք. ուսումը՝ գիտութեան հմտութիւնն է, որ կատարեալ գործ ունի. ուսումնարանի ելևմուտը և սոսկ վկայականը՝ ուսումն կենդանագրեն, բայց գիտութիւն ամենևին ոչ։ Գիտութեան վկայութիւնը գործունէութիւնն է, որ ճանրութիւնը կը թեթևացնէ, զժուարութիւնը կը դիւրացնէ. հիւանդութիւնէ չհեռանար։ Գիտութիւն սիրեցէք, և գիտուն եղէք, որ իմանայք Հոգւոյ առաւելութիւնը, Աստուծոյ նախախնամութիւնը, և կարողանայք ընտրել բարին ու չարը, և գործել բարին՝ քանի որ կանք այս կեանքում։ Գիտութիւնը սիրեցէք, և բնութեան հրաշալի արհեստներուն գիտութիւնը, այն արհեստներուն՝ որ մարդուն հացն ու հագուստը, տունն ու դրախտը կը պատրաստեն, առողջութիւնը կը պահպանեն, հոգւոյ բնական ջանասիրութիւնը՝ մարմնոյն կը հաղորդեն, կը ժրացնեն. դատարկութենէ հեռի կը պահեն, քունը կը քաղցրացնեն, հացն՝ ախորժելի կանեն, գիշերային խաւարաձնացութիւններէ կը պահեն կը պահպանեն, ու տարաժամ մահէն կապահովեն։

Սիրեցէք ազնուութիւնը, և իրաւագէտ ու իրաւարար եղէք. արհամարհեցէք գիտութեան գործերում, որ օգտակար կեանք վարէք. սիրեցէք աշխատութիւնն ու իրական գործունէութիւնը, որ հիւանդութենէ հեռի, առողջ կեանքում ապրիք, և երկիրը վայելէք։ Սիրեցէք Աստուծոյ խօսքը, և հոգւոյ իմացականութեամբն ունկնդիր եղէք, և ոչ սոսկ երևակայութեամբ, որ սոսկ մարմնոյ ապականացու տեսիլներէն ուրիշ ոչ մի էութիւն չտեսնը, և չիմանար։ Սիրեցէք բարին, և բա-

րերար ու բարեգործ եղէք։ Սիրեցէք մեծութիւնը, բարերարութեան մեծութիւնը, յորում Աստուած կառաջնորդէ՝ իշխանութեանց և պետութեանց սրտերն ու հոգին ուղղելով։ Սիրեցէք Աստուծոյ խօսքը, և յաւիտենական կեանքը, որոյ մխիթարն Հանապազորն է Հմտարիտ ընկերակցութիւնը։

Երիտասարդներ, սիրեցէք երկրագործութիւնը՝ սիրեցէք այգեգործութիւնը, հովութիւնը, և ամեն մի ձեռագործ արհեստ, որ մարդուն սնունդը կահեցնեն ու կը դիւրացնեն, հանդերձը կը նիւթեն ու կը պայծառացնեն։ Սիրեցէք այս մայր արհեստները, որ միայն են գիտութեան որոնանքն ու խորհուրդները։ Սիրեցէք այս փոշոտ մրոտ ու խոնաւ արհեստները, որ սիրելի և պետանի են մարդկային ընդհանուր ընկերութեան, և կատարելապէս երջանիկ կանեն մարմնական արդիւնքով, և թաքուն գաղտնեաց՝ հոգեկան իմացականութեամբ։

Երիտասարդներ, սիրեցէք գիտութիւնը, որ ձեզի հանապէպ, և կատարելութեան հանապարհն ընտրեցէք. սիրեցէք ազնուութիւնը, որ ձեր պարտքն ու իրաւունքը հանապէպ, և վայելչութիւն ունենայք. սիրեցէք երկրագործութիւնը, որ ձեր սնունդը կը մատակարարէ. սիրեցէք այգեգործութիւնը, որ ձեր կենդանութիւնը կը գուարթացնէ։ Սիրեցէք հովութիւնը, որ ձեր սնունդը կը համեմէ։ Սիրեցէք ոստայնանկութիւնը, որ ձեր հանդերձը կը նիւթէ, ձեր մերկութիւնը կը ծածկէ։ Սիրեցէք հիւսնութիւնը, որ ձեր կեանքը կապահովէ։ Սիրեցէք երկաթագործութիւնը, որ ձեր ամեն արհեստները կը դիւրացնէ, կը թեթևացնէ։ Սիրեցէք այս խոնաւ արհեստները, որ իրենց ուժովն ու արիութեամբ՝ մարմինն առողջ ու զօրաւոր կահեցնեն։ Սիրեցէք հմտարիտ ընկերակցութիւնը, որ իմաստութեամբ ու սիրով՝ հոգին կը պարարէ։ Սիրեցէք այս ամենը հմտարիտ սիրով և անդադար գործով, որ ողջախոհ կեանք

ունենայք. մարմնով առողջանայք, լմացականութեամբ՝ զուարճանայք, աչքով առատանայք, ձեռքով ժրանայք. ոտքով արկանայք. բոլոր անձով՝ լի կատարեալ հասուն ու աճեցուն լինիք. որդւոց և Թոռանց անգին ու անգնելի երամներու հարստութեամբ Ճոխանայք—Աստուծոյ օրհնութեան արդիւնքը տեսնիք ձեր վերայ, հաւատայք նորա ամենակալ ամենազօր մեծութեանը, և նորա անանցանելի արքայութեան ժառանգորդ գըտուիք, կանխաւ մանելով բարեպաշտութեան անիսկի Ճանապարհն նեղ դռնէն, անսայթաք ու անխոտոր յառաջելով երկայն Ճանապարհն անձկութենէն, և անջնջելի արձանագրուելով կենաց գալստեան մատենումն արդարներու և բարեգործներու շարքում: Ողջախոհ եղիք: Ձեր ընկերը ձեր անձին պէս սիրեցէք: Եթէ կարելի է, ամեն մարդու օգտակար եղիք, և ոչ երբէք վնասակար և ոչ ոքի. մինչև որ կատարածի արշալուսոյն արուսեակը ծագի, և տիւը պայծառանայ. և Աստուած գատաւորն՝ արդարանայ: Սիրեցէք ողջախոհութիւնը, որ բարի ծառին ամբողջական և լրական բարութիւնն է, նորա ծաղկն նեղքին ողջութիւնն է, և արմատին կենդրոնական զօրութիւնը. սիրեցէք ողջախոհութիւնը՝ որ ամբողջ ծառին պարարտութիւնն է, և բարեվարեան նիւթ կը ծծէ. սիրեցէք ողջախոհութիւնը, որով մնայն բարի ծառը՝ բարի պտուղ կը բերէ, և կարող տապալն հարուածէն զերծ կը մնայ: Սիրեցէք ողջախոհութիւնը, բանական մարդուն հոգւոյն ու մարմնոյն պարզ ու յստակ պայմանները. մտաց լրջութիւն, պատմութեանց հմտութիւն, արդի կեանքին կատարեալ ծանօթութիւն, մարմնոյ արիութիւն, վաստակոց անդադար չարչարութիւն, արհեստից կատարելագործութիւն. յորում մնայն բարի մարդը կարող է գործել միշտ բարութիւն, կատարեալ մարդու կատարեալ բարեգործութիւն. որոյ աջողութիւնն անսպառ կը դայ մեզ երկնքէն, բացէք ձեր գիրկն, ու ընդգրկեցէք,

լայնեցէք ձեր քաղցքը, և ամփոփեցէք, մի կոխէք ոտքի տակ այն ամեն շնորհքը, որ Աստուածմէ կուգան երիտասարդին—մարդկային կատարելութեան առաջին հասակին, պղտոբերութեան առաջին գարունին. մի նըմանիք այն ծառերուն, որ երբենց ծաղիկը կը թոթափեն և երբէք պտուղ չեն բերեր, և տապալն սպառնալեաց կը հրամայուին, այլ նմանեցէք այն ծառին, որ ջրերու ափերում կաճի, կամ թէ քարաժայռի ծերպերումն իսկ ջրի երակներ կը ծծէ, միշտ կը ծաղկի, միշտ կը պտղաբերէ, բարի բարի պտուղներ նորա վերան անպակաս են ամեն աշնան, օրհնուած Աստուածմէ, գովուած մարդկներէն, սիրուած այգեպանէն, և բարի ծառերու հաշուեմատեանումն անջինջ արձանագրուած այգետերէն: Նմանեցէք բարի ծառին, որ իւր պտուղն կը Ճանաչուի, և ոչ երբէք տերևներէն կամ ծաղկիկն, որ շատ անգամ խաբուսիկ են, և կը խաբեն նոյն իսկ ծառին, և՛ անկողին, և՛ տան տէրին: Սիրեցէք ողջախոհութիւնը, որ հայր գառնայք օրհնութեամբ, և Ճոխանայք գաւակներով, և օժտուիք Թոռանց ու Թոռնորդւոց երամներով:

ԻԳ. ՈՂՋԱԽՈՀ ԵՒ ԿԱՏԱՐԵԱԼ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ԵՒ ԿՈՒՍԻ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ—ԱՆԿԱՊՏԵԼԻ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆԴԻՆ ՕԺԻՏ՝ ԱՍՏՈՒԾՄԷ ՓԱՐԳԵՒՈՒԱԾ.

Ողջախոհութիւնն անթերի, և հասակը լի կատարեալ աճած ու զարգացած երիտասարդի տնտեսավարելու աճած ու զարգացած երիտասարդի տնտեսավարելու աճած ու զարգացած երիտասարդի տնտեսավարելու

տուիչն, և գոհուիչն միշտ անքաժան նորա սրտէն ու տունէն. որոյ միմիայն պարտազգացուիչնը կը մնայ ընկերին սէրը։

Այս անտեսավարուիչնը՝ Պօղոս առաքելոյ հրահանգածին նման՝ անհերքի կը վճարէ իւր պարտքն՝ ամեն տեսակ աշխարհական հանգամանքներուն. և ընկերասիրուհեան պարտուց հատուցման զգացմունքը միայն անվերջանալի կը տևէ նորա սրտուն, և հանապազօր կը հատուցանէ ըստ իւր ոլորանն. ու միևնոյն սիրով ու ջանքով վառուած, կը խորհի իմաստուհեամբ, կը խօսի ճշմարտուհեամբ, և կը գործէ արդարուհեամբ ու ողորմուհեամբ։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդի ուղիղ տեսակցուհեան իմաստուն կանոններուն առաջինն է, Անբառնալի ծամածոյն ի բաց չանցուիլը։

Նա՝ իմաստուն երիտասարդն՝ այն կանոնի իմաստը ճշդիւ կըմբռնէ, և ամենայն պարզուհեամբ ու դիւրուհեամբ՝ անհերքի կը գործադրէ. այսինքն մարդկային ընկերուհեան ամեն շրջաններուն՝ իրմէն մեծերուն և փոքրաւորներուն կատարեալ խորհուրդներուն ու խրատին ունկնդիր կը լինի ամենայն մտադրուհեամբ. և կը զարգանայ մտքով, ու կը սովորի ուղիղ խորհել, ուղիղ ու ճշմարիտ խօսել, և արդարն, արժանն ու պիտանին գործել։ Նոյնպէս և իրմէն փոքրներուն ընկերուհեան մէջ կառաջնորդէ փոքրներուն դէպ ի կատարեալ խորհելու խնդիրներն ու ճշմարիտ խօսելու ճառերն ու պատմուհիւնները, և պիտանի գործելու կը քաջալերէ հին և նոր մեծագործներու արարքներու արձանագրականներու պատմուհիւններով։ Եւ այսպէս՝ զբօսանքի ամբողջ ժամերն կը շահի սովորելով ու սովորցնելով, որոց երկու կերպն ևս կատարեալ զարգացումն կը բերեն մտաւոր կարողուհիւններուն։ Միշտ կը սովորի և կը սովորեցնէ կատարեալ մարդը, քանի որ կենդանուհիւն կը շնչէ. նա կը դարձի այս աշխարհի ընկերակցուհիւններէն՝ միայն գերեզմանի լռելով։ Նոյնպէս լռութիւնները և գործոց ժամերն. որուն համար միշտ կանխաւ ի նկատի կունենայ հանապազօր և առօրեայ գործերն, և ըստ այնմ կարգաւ կատարէ իւր բոլոր գործերն, առանց ի զուր կորսնցնելու և ոչ մի վայրկեան։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդի հանապազօր կեանքը կը լինի.—Առաւօտուն տուն ժողովուելէ, իւր ընտանեաց ընկերակցուհեան մէջ իւր պարտքը կատարել. իւր գործն ու արարքը պատմել. իրմէն մեծերուն արարքը լսել. փոքրներուն արարքը տեսնել, և ուղղելու խորհուրդ տալ. նոյնպէս և ընթրիքէն ետքը՝ ընկերուհեան ընթերցուածին կամ մեծամեծաց ճառին ունկնդիր լինել. փոքրներուն ընթերցուն ուղղել, և քաջ կարատել։ Անասնոց դարմանի գործերուն՝ հատակակիցներուն ընկերանալ, գոհուհեան աղօթքին՝ բովանդակ ընտանեաց հետ միասին ծունր դնել. և գիշերային հանգստեան անկողին մտնել։ Հանգստեան համար նշանակուած ութ ժամը լրանալուն պէս ելլել, հագուել, անասունները դարմանել, գործիքները կարգադրել, արշալոյսի ժամահարին եկեղեցի հասնել, բովանդակ ժողովրդեան հետ միասին՝ փառաբանական աղօթքին ծունր դնել. հասարակաց գործոց մասին եղած առօրեայ անօրէնուհիւնը կամ կարգադրուհիւնը լսել. տուն դառնալ, նախաճաշի սպասը լսել, և իւր որոշեալ գործին գլուխն անցնել. մինչև ի կէսօր անձանձրոյթ արիւնհեամբ գործել. սրեգական մինչօրէին ճաշել. և դարձեալ գործին սկսել. աշխատուհեան ութ ժամերը լրանալուն պէս, եկեղեցւոյ գաւիթը ժողովել, հասարակաց գործոց խորհուրդներուն խորհրդակցել, կամ ունկնդիր լինել. երեկոյեան ժամակարգին հասարակաց միաբանուհեամբ ծունր դնել ու սաղմոսել. արեւմտեան ժամարձակին տուն դառնալ։

Կիւրակի և տօն օրերուն, զբօսանքի և գործոց ամ-

բողջ տասնեւվեց ժամ ժամանակն ընթերցասիրութեամբ, և ողջախոհական ընկերակցութեամբ զբօսնուլ և խեւլամուտ լինել. ազգակիցներուն ու մտերիմներուն այցելութեան երթալ և նոցա այցելութիւնն ընդունել. և այս այցելութեանց ժամերուն՝ վեցօրեայ գործոց աղօղ կամ անաղօղ դէպքերը մէջ ձգել, և նոցա դիւրութեան կամ թեթեւութեան մասին խորհել, խօսել, գիտական յիշողութիւններով ու պատմական հմտութիւններով լուսաւորուել և լուսաւորել։ Եկեղեցւոյ գաւթում հասարակաց ժողովին ներկայ լինել. չաբաթական գործերումն՝ իրենց կարգին և օրին տեղեկանալ, և ըստ ժամանակի վճարել։ Ճանապարհի, կամուրջի, ջրագործի, չինութեան կամ նորոգութեան և կամ մաքրութեան գործերումն՝ նշանակուած օրերուն անպատճառ ներկայ և գործակից լինել. նոյնպէս եկեղեցւոյն ու դպրոցին գործերումն. նոյնպէս և խաչներու և նախիրի գործերումն հասարակաց սովորական կարգով ընկերանալ և անպակաս գտնուել. նոյնպէս և հուձքի օրական կարգերումն կանչի օրին ու ժամին հասարակաց կարգադրութեամբն արձակուն կենալ. վերջապէս փախչող ժամը վատնակել, և անձին, ընտանիքին, զբացիին ու ժողովրդին օգտակար անել։

Կատարեալ երիտասարդը՝ օրական գործերը կարգաւ գործելէն զատ իւր փորձառութեամբն՝ ուղիղ ու ճշդիւ կը բաժնէ նաև տարւոր գործոց ժամանակը. տեղական կլիմայի յարմարութիւններուն կը պատշաճեցնէ իւր գործերը, որ բոլոր ժամանակները չահի անկորուստ. նա տեսնելով ձմեռուայ սաստիկ բքաբերը, և բոլոր արտորանները ծածկող թանձր ու պաղած ձիւնը, ձմեռնային գործոց օրերում կը գործէ տան մէջ ծածքի տակ, այն գործերը, որոնք թէև ամառուայ գործերում մեայն հարկաւոր են, բայց ամառուայ չտապողական գործերումն շատ անգամ մեծավաստակ ժամանակը կը կորսնցնեն. վասնորոյ և կսկ սեձմեռուայ օրե-

րումն պատրաստել երկրագործական ամէն վայելեայ գործիքները՝—արօր, թիակ, հոսելի, եղան, երկու մատ, երեք մատ, տափան, աւել, լողփայտ, լուծ, սամի, սայլ, կամնասայլ, լոսան, թեզան, կառք, անիւ, և ուրիշ ամենատեսակ փայտեայ գործիքներ, որ ընտանեկան գործերում պէտք կը լինին. այս փայտեղէններն աւարտել է ետքը կսկսի պատրաստելու կամ նորոգելու բոլոր երկաթեղէն գործիքները՝—խոփ, թուր, բահ, բրիչ, փայտատ, կացին, տապար, ուրագ, դանակ, պրկու, սեպ, զոմբ, լծակ (լիճկ), գերանդի, մանգաղ, յօտոց, սղոց, այս ամենը և ուրիշ ընտանեկան գործերում պէտք եղած երկաթէ գործիքները կը կռէ, կը զօդէ, կը սրէ, և պատրաստի կը դնէ. մինչդոյն ժամանակ տան մէջ երկու երկանը սարքած, տան տարեւոր ալիւրը, ձաւարը, կորկոտը, կը լոսէ, կազայ, կը լմնցնէ։ Խոլոգ կը գործէ, Թաղիք կը ձգէ. մագ կը մանէ, ջուլ կը գործէ, կաշի կը բանի, Թամբ կը շինէ, կը նորոգէ, կօշիկ ու սրեխներ կը պատրաստէ բնական պարզութեամբ, և տակին ծառայեցնելու կատարեալ յարմարութեամբ։ Աչնանէ կոփած ու ներսը դիզած քարերը կը տաշէ, կը սրբէ, շինութեան կը պատրաստէ. ամառուայ տաքերումն պէտք լինելիք վրանները կը նորոգէ. փայտը կը ձեղէ տախտակ կը տաշէ. արեւային և տաք օրերում որսորդութեան կելլէ, ձկնորսութեան կերթայ. մինչև գարնան հալքը կը վերջանայ, գետինն իւր գոլորշին ու հոտը, բուրմունքը կը ծախէ։

Երիտասարդն խսկոյն անդաստան կելլէ, քանի գետինը կակուղ է, գոյգ արօրով, վեցկեներով ամբողջ հերկերն կը շրջէ. ցանքի արտերն ամբողջապէս կը վարէ. երկինքի տակ սրտին եռը մէջքին ուժը կսկնապատիկ կաւելացնէ. նոր հերկերուն ձեռք կը զարնէ, մինչև անձրևին սկիզբն անէ։ Սերմերն խսկոյն կը ցանէ տերն ամեն կը տափանէ, խսկոյն այգին կը մանէ.

ծառերու տակն կը դարձանէ, նոր տնկիները պարապ տեղերումն կաւելցնէ. կը յօտէ, կը սրբէ, կրկուտ ու փայտ բարձած սայլին՝ տուն կը դառնայ. առաւօտուն աղը ու մոխիրը բարձած սայլին՝ այգի կերթայ: Աղը ու մոխիրը հողին խառնած պարարտ գետին կը պատրաստէ, սոխ ու սխտոր, գետնախնձոր, բողկ ու բողկիկ, և ճակնդեղ, նեխուր, պրաս, սմբուկ, կաղամբ, ծաղկակաղամբ, ամենազգի խաւարտեղէն, կը սերմանէ, կը սատերէ (սածիլ, չեղել աներ՝ բաժնել, տնկել): Սեխ, ձմերուկ, դդում, վարունգ, դոսդ ու բակլայ, սիսեռ, լոպի, ամեն տեսակ հնտեղէնները կը սերմանէ, հետզհետէ կը մշակէ: Արտ չորս կողմն ու այգիին խչէնտիկները կը նորոգէ. գարնան շտապ շտապ գործերն՝ անձաձոյլի ու անդանդաղ մէկ մէկ՝ կարգաւ կաւարտէ: Շէնքերու, պարիսպներու նորոգութեանց ձեռք կը զարնէ: Աղը ու մոխիրը բարձած՝ այգի և անդաստան կերթայ, գործոց ժամերն անխոնջ կաշխատի, կրկուտ ու խոտ և այլ լինչ պէտք բարձած՝ տուն կը դառնայ: Այսպէս չարունակ գարնան գործերումն կարիանայ ամենայն օր մխակերպ, հասարակաց գործերումն և առաջնին է, ջրանցքները բանալու աշխատութեան մէջ, կամուրջներու նորոգութեան գործերուն մէջ, ճանապարհներու հարթութեան դէպքերումն, խաչանց կտուրնեերումն, մինչև ամառը կուգայ, ու կերևի պտղոց խայծերով, հասկերու ալիքներով, խաւարտներու և սեխերու գետնասիւռ ծաւալներով, կանխոց տօնին [1]) կը

[1]) Կանխոց տօնը Հայոց մէջ հինաւուրց աւանդութիւն է. զոր կը տօնեն բովանդակ Հայաստանեաց՝ Համբարձման տօնեն, վեհափէն օրը, Գրիգոր Լուսաւորչի վերապէն երևելու տօնեն, կաթուղիկէ էջմիածնի նահատակութեան, Լուսաւորչի նշխարաց գիւտի տօնին, ամենէն ուշ՝ Վարդավառին: Կանխոց տօնին օրինէն է.—ամեն ոք մարդ՝ իւր ձեռքի վաստակով հասուցած

Հոխանայ մեր երիտասարդը ժողովրդական ընդհանուր Հանդէսումն, եկեղեցւոյ հրապարակումն:

Գարնան վերջումն ու ամարան սկզբումն քանի հուձքն իննլած չէ դեռ՝ կը չարունակէ ու կաւարտէ նոր չինութիւնները, անձրևային օրերումն անտառ կերթայ, փայտ կը կոտրէ, ածուխ կայրէ, տունն ու ախոռը կը մաքրէ. խոտ կը հնձէ ու կը դիզէ, բոլոր հօտին ու նախիրին ձմեռան պաշար կը պատրաստէ: Ամբողջ գարնան զբօսանքում կը չարունակէ սերմանացանութեան ուայգեգործութեան նոր նոր փորձեր ու գիւտեր, և պատուաստի կրկնութիւնները: Մրջնի պէս աշխատասէր և կամապարտ, մեղուի պէս փոյթ ջանասէր անուշ պտուղ կը պատրաստէ կը հասցնէ:

պտուղներուն առաջին երախայրին կը տանին եկեղեցի. քահանայն կը ծանուցանէ բոլոր եկեղեցւոյն, թէ որոյ ձեռքի գործն սկսէ է պտուղ լինել, և այն երախայրին՝ Աստուծոյ կընծայէ օրհնելով մշակի վաստակը. նոյն երախայրին ժամարձակի ժամանակ կը բաժնեն բոլոր ժողովրդին. և եկեղեցւոյ հրապարակում քաջայ հանդէս կը յօրինեն. երիտասարդները՝ նշաւակի (նշան բռնելու) հանդէս կանեն, հեզհեզիկ ձիարշաւի, կառարշաւի կը փոխուի. վերջը՝ ոտանաւոր սրարշաւի, բռնամարտիկ ու գօտեմարտիկ մինամարտութեամբ՝ հանդէսը կաւարտի: Պատանիներն ու մանուկներն ևս ինքնայօրդոր կերպին հանդէս սրարշաւի, և մինամարտի: Յալթող երիտասարդը՝ մեծ գովեստի կարժանանայ ծերերէն, պառաւներէն, և առհասարակ ծնողքներէն: Աղջիկ ծերերէն, պառաւներէն, և առհասարակ ծնողքներէն: Աղջիկ և կանանց մեծ բազմութիւնը՝ ձաշէն նաքը պար կը բռնեն, վաստակաւոր ու զօրաւոր և աջողակ երիտասարդին գովելով, և ի բերանց մէջ պարփակելով: Երեկոյեան ժամակարգութեամբ կը վերջանայ հանդէսը: Ամուսնութեան հասած երիտասարդներն այս հանդէսին կը ներկայանան կամ գաւառէ վանքում, և կամ Մշու Սուրբ Կարապետի վանքում վարդավառին, առանձին ուխտով Աշխէշատում Սահակ Պարթև հայրապետի գերեզմանին:

Կը սաստկանայ ամրան տաքը, կը հասնի հունձքին. գիշերը ցերեկին կ'ելլայ՝ կընկերանայ ժողովրդին, ուրախ խաղով ու գոհութեան երգերով հասած արտերը կը հնձէ, կը կապէ, դէգ կը դնէ, աւարտումին կառանձնանայ լուր կալումն, ընտանիքին պարագլուխ փոյթ կը կալսէ, արև ու քամին ըստ պատշաճի կը գործածէ. ցորեն, գարին, ամենայն հունտ ու սերմեր ներս կամպարէ, յարդն ու գարման մարագներում կը զետեղէ. պղտաքաղին, այգեկութին և խաւարտկ ժողովումին փոյթ կը հասնի ժամանակին։ Լիուլի ու բեռնարարձ տուն կը կրէ ամեն կողմէն առատ արդիւնք, արդար վաստակ՝ գետնի բերքէն, Աստուծոյ մեծ պարգևէն։ Հնձած արտերն չուտ կը հերկէ, եկեղեցւոյ և դպրոցի պատարագներն առատ սրտով, գեղուն չափով կընծայէ, Աստուծոյ շնորհած բիւր բարիքէն կը գոհանայ, կը փոխարինէ։

Աշնան օրերուն, գէթունի քաղն, խաղողի կութքըն ու հնձանը կաւարտէ. բամպակի քաղն ու նեբս առնուշն յետ չթողուր ձմրան գալուն. անձրևներու սկզբումն՝ աշնանավարը կը ցանէ, կը տափանէ։ Աւելորդ արդիւնքը կը վաճառէ, երկաթ, պղինձ, ինչ որ պէտք կը գնէ, կը պատրաստէ, տուն կը քաշուի. ձմրան գործին ձեռք կը զարնէ։ Ամբողջ տարւոյն չորս եղանակումն անխոնջ ու ժիր կը գործէ. կը լինայ բարիքներով, կառատանայ սրտով, հոգւով. ընտանիքում խաղաղութիւն, վայելչութիւն, սէր ու գգուանք, ու համարում կը վայելէ։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդն՝ ուղիղ տնտեսավարութեան առաջին կանոնն—Անպառնալի ժամանակին է ըստ չպղտոնելը՝ այսպէս լրիւ կը պահպանէ, լրջութեամբ, ժրութեամբ, և արագութեամբ արիանալով իւր հանապազը և տարւոյ գործերումն ու վաստակում. և ի մասնութեամբ բաժանելով իւր գործերու տեսակները՝ տարւոյն եղանակներուն պատշաճեցնելով, որով միայն

կամբողջանայ գործերն անթերի ըստ ժամանակի, և կառատանայ արդիւնքն աստուածաբաշխ։

Ողջախոհ երիտասարդին ուղիղ տնտեսավարութեան երկրորդ կանոնն է՝—Ի՞ր վատթին ծախ տալ չափով իրիտ պէտոյէ, նամ օգտակար պատահի համար մէջն։

Կատարեալ տնտեսավարութեան այս երկրորդ կանոնն այնչափ սովորական և ընդհանուր է ողջախոհ ընտանիքներում, որ կարելի է ասել, թէ արդէն բնութիւն է դարձել։ Ողջախոհ երիտասարդը՝ պանդխտութեան վայրերումն անգամ՝ հայրենի երկրին և ընտանիքին սովորական կերակուրը կը փնտռէ. ուրիշ որևէ ցէ համադամ կամ քաղցրաւենի՝ նորա ձաշակը չեն գոհացներ, նա կը կարծէ, թէ քաղցած կը մնայ օտար և անսովոր կերակուրով։ Կատարեալ երիտասարդի բերնէն ամենևին չկորչի իւր ամբողջ կենաց մէջ, թէ այս կամ կերակուրն ուտելու միշտ կախարժէ, նա անսովոր կերակուրով չկշտանայ, և հայրենի կերակուրին ու հացին յագուրդը միայն կը յիշէ. որովհետև կուտէ՝ միայն կշտանալու համար, և ոչ երբէք կերածն լինելու համար։ Կատարեալ երիտասարդը՝ կշտանալէ ետքը՝ բնաւ չուտեր, և ոչ մի պատառ. և կերակուրին ու հացին վերջին մնացորդը՝ ոտքի տակ չձգեր. միշտ զգոյշ է, որ սեղանի փշրանքին վերայ չկոխէ. եթէ երբեմն գետնին ընկած հացի կտոր մի տեսնէ, կը խոնարհի, կը վերցնէ. գիտէ, թէ պետանի կերակուր է հատատարիմ շան, ածուղ հաւի, կճուն կովի. աւելի ևս հեռուոր հաշուով խելամուտ է, թէ սովի գէպքում այն կտոր հացը կը փնտռեն, ու չեն գտներ. վատնորոյ և կը խոնարհի, ու ոտքի տակէն մէկզմէ կառնու, և մի անկիւն կը դնէ, չթողուր, որ ցեխին ու փոշիին խառնուի, և կոխան դառնայ։ Եթէ երբեմն յանդգնաբար կոխէ հացին կամ փշրանքին, խոհոյն կսպրդանայ իւր սխալին, կառնու կը համբուրէ, և անկոխ տեղ կը պահպանէ. կը մտաբերէ, թէ հացն՝ Աստուծոյ

պարգևն է, վերան կոխելը՝ Թէ պարգևին և Թէ պարգևողին արհամարհանք է։

Կատարեալ երևութասերդը՝ բնական ոճով մեայն կը խմէ իւր ջուրը. այսինքն ամառ ժամանակում սառոյց չխառներ իւր ջրին, ձմեռն էլ չտաքցներ. կը զովանայ, կը լուացուի պարզ ջրով, անտառներում զովագին, տաք դաշտերում ջերմագին, վարժուած է ամեն դէպքին. անձամբ առողջ բոլորովին։ Գինի կառնու՝ հասարակաց հանդէսներում, և մեռելոց ազապներում. ամենևին չմեր ընտանիքումն՝ երբ ուրախ է ու զուարթ. կուրախանայ երգերով, մանկանց խաղով ու կայտառով, կը բաւականանայ հովուական սրինգով, ոչխարաց կայթիւններով, և գառներու ոստոստիւնով, Թռչուններու դայլայլիկով ու բլուրազգի ձուռողիւնով, դաշնակաւոր նուագներով. սակաւագի ու բազմազի քնարներով, և տաւիերով, որոց չէնքում ու նուագում կը հրաշանայ իւր մատներով։ Փսխելն լինչ է.—նա չգիտէ ամբողջ կեանքում. Թէ մի անգամ աբբշիռ տեսնէ, խելացնոր, դիւահարած՝ նա կը կարծէ։ Օղի, ցգի և ոգելից ամեն տեսակ ըմպելիները՝ սառած, Թմրած ու նուազած անձանց մարմնոյն դեղ գիտէ։

Կատարեալ երևութասերդը՝ հայրենի զգեստուց տարազէն դուրս օտար զգեստն ամօթ կը համարի. նա քանչ գիտէ, Թէ հագուստն լինչ է. և լինչ նպատակաւ կը հագնի. այլատարազ զգեստով նա իւր քալուածքը կը կորսնցնէ, ժրութիւն և արագութիւն արգելող զգեստի ամենևին համբերող չէ։ Նա մինչև անգամ հարստանեաց հանդէսում՝ վեհայութեան նոր հագուստին —պատմուճանին ու կօշիկին՝ որ կը հասնի դեռ չհագած կը շառագնի. նորա համար՝ հայրենի սովորական տարազէն զատ վայելչութիւն չկայ ոչ մի տեսակ հագուստում. նա հագուստէն կը ճանաչէ օտարներին, Թէ լինչ ազգ են. և կը ճանչցուի օտարին։ Նորա սովորական հագուստն է—ճերմակ շապիկ, ճերմակ վարտիք՝

իւր մօր կամ քրոջ ձեռքի գործը՝ իւր մշակած արտի բերքէն և իւր յօրինած ու շինած գործիքներու, գործարանի՝ ոստայնանկէն։ Նորա կրկնոցն է Թեթև ու պերկ, վոքր բաճկոն, ճկուն Թևով, բազպաններով, լայն ու ամփոփ անդրավարտիք, պաճուճաւոր զանկապանով՝ առհասարակ իւր մօր, կամ քրոջ և կամ նուէն ձեռքին գործը՝ իւր զարմանած ոչխարներու կամ գառներու կակուղ բրդէն։ Նորա ոտնամանն է Թեթևընթաց տրեխ կամ դիւրասահ սօլեր, ամրակուռ, երկաթկրունկ կօշիկները.—տան կովերու կաշիէն, իւր ձեռքովն աղած, կոկած, և խաղաղած ու կարած։

Նա սովոր է բնակել գետնափոր վոքր օրջում՝ երբ տուն չունի որբ օրերում, կը բնակի սեխաստանում՝ խեղճ հիւղում, և արտերումն ու դաշտերումն եղեգնահիւս խեղճ խրճիթում, անտառներումն՝ ծառի չուքում. մակաղատեղ հովիտներումն՝ անշրջավակ խեղճ վրանում. կալօրէում՝ որաներու և դէգերու խոռոչներում. այգեստանումն՝ հնձաններու անդուռ ծածքում, կտուրներում, իսկ ձմեռը՝ պատսպարուած իւր հայրենի տան սենեկում։ Նա կը նստի գետնի վերայ՝ ոտքի ճկուն անդամներուն ամենակերպ ծալուածքներով, և կը հանգչի. կը նստի ամեն տեսակ բազմոցներումն ամեն կերպով. նորա համար՝ վայրէ, յարդէ, խոտէ, բրդէ, բամպակէ և մագէ կամ փետուրէ բազմոցները՝ մեատեսակ նստարան են, և կը բազմի մեշտ հանգիստ՝ որ բազմոցի որ պատահի։ Նա կը պառկի ցամաք գետնի վերայ, և չոր տախտակի, տաք Թաղիքի և կակուղ բազմոցի վերայ մեատես, ու կը հանգչի քաղցր քնով։ Նորա բարձը՝ գործի օրում կամ ճանապարհի երկար նուումն՝ կամ մի քար է, կամ փայտի կոճ. և մեշտ հանգիստ կը քնէ լինչպես Թէ կակուղ բարձում։ Նա՝ կրկնոցին կը փաթաթուի և կը քնէ ձիւնի վերայ՝ վտանգաւոր դէպքերում, ծածկած գլուխն առատ շրնչովն կը տաքանայ ջերմագին, և անվնաս կը լուսցնէ։

Իւր ժիր ձեռքով կը շինէ տուն հողէ պատով, ցանկապատով, եղեգնահիւս շրջապատով, քարէ պատով, տախտակամած յօրինուածով, կամարակապ ծածկով, յարկով, ներսէն դրսէն բռնած կրով, կաւով, կաւիճով, սերսով, և ամենագոյն սիմնդ հողերով։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդը՝ կատարեալ տնտեսավարութեան երիցուդ յանձն—Իւր չէնքի վարձքին շուկով ծախ անել յարմար պիտոյի համ օգտակար նպատակի համար ինչն, այսպէս ճշդիւ կը պահպանէ, օտար ապրանք կամ օտար ձեռագործ չգործածելով, ու հայրենի երկրի բերքերուն մէջ չգանուած խիստ կարևոր պիտոյքները՝ գնելով, և այն ըստ ժամանակի մեայն մերձակայ տօնավաճառներուն պէտք եղածին չափ գնելով, կամ իւր արդիւնքին փոխանակելով. որ միայն է անսպառութիւն արդիւնքի և հարստութեան, և անկարօտ լինեան։

Կատարեալ տնտեսավարութեան երրորդ կանոնն է.
—Զգուշաւոր էնամ վարձքի և արդիւնի. այսինքն չէ՛ծգնել։

Կատարեալ երիտասարդը՝ տնտեսավարութեան այս կանոնին փոյթ կունենայ անշուշտ. և որ վկայութիւն է, թէ երիտասարդը գիտէ իւր վաստակին կամ աշխատութեան արժէքը։ Նա՝ պարտիզում հաստնացած պղտուղը՝ կը վաճառէ կամ ամրողջ երեսով, և կամ կիսփոփ երես և կը չորացնէ ի պաշար ձմրան առանց մի հատը փճացնելու։ Այգիին պտուղը կը կիթէ ժամանակին, և բազմատեսակ կերակուրի նիւթ կառնու քաղցուն իւր ընտանեաց տարեւոր սնունդին. չափով միայն կը դնէ գինի, որչափ որ պէտք պիտի լինի իրենց տանը՝ մկրտութեան, հարսանիքի, և մեռելոցի ազգականեբում։ Հունձքին, կալին մէջտ արմնուն, կը ջանայ մէջտ փոյթեռանդն, որ հասկերէն և ոչ մինը կոխան չընկնի օտքերու. գիշեր ցերեկ կը տքնի, կը պահպանէ անձրեւէն, մինչև կշտամարանէ ցամաք ու ողջ ամպարում, կամ խորում, ամեն զգուշութիւն գործ կը դնէ, որ

ապահովէ ոջիլ, ցեցի, և մկանց վնասներէն։ Նոյնպէս կզգուշանայ անասնոց պահպանութեանն զգուշաւոր, գառներ, հորթեր ու քուռակներ կառնու շրջանաւոր ժամանակում, կը լնամէ, կը պահպանէ զգուշանալով գազաններու վնասին դէմ։ Իւր փայտեղէն, երկաթեղէն գործիքներն զգուշութեամբ կը գործածէ և աւելի երկար ժամանակ արդիւնաւոր կանէ. փայտէ գործիքի կոտրածները կամփոփէ, և առաջիկայ գործող միջոցին աւելի փոքր դէպքերում կը գործածէ կը յարմարցնէ. և երկաթէ գործիքներուն ամենափոքր բեկորըն անգամ անտես չաներ, այլ կամփոփէ. մինչև անգամ պայտի բևեռն հաշիւ կանէ, թէ գին ունի, նորա շինուածքն էլ ձեռքի աշխատութեան և բաւական ժամանակի կարօտ է։ Ձանազարհում որ կը տեսնէ սայլէ իննկած մի փայտեայ սեպ, կամ երկաթի մի բևեռ, պայտի կտոր, կամ որ և է մի բեկոր, իսկոյն կառնու իւր մախաղը կը ձգէ. նոյնպէս փոկի և չուանի կտորները՝ զանց չաներ. նորա մախաղը՝ վերեզակի մի արկղ է. և այն ամեն մի բեկորը՝ մի կարևոր դէպքում կը գործածէ։ Ըստ որում գիտէ, թէ մի երկաթի բևեռը՝ որքան էլ որ արժանագին լինի, դարձեայ մեծ աշխատութիւն կայ նորա վերայ մարդոց ձեռքի. նա գիտէ, թէ ինչ է երկաթի հանքը, ինչ է բոլքը, նորա հալքը, և կռանը, և թէ որչափ քարէ, կամ կոշկոռէ դուրս կը գայ մի բևեռի երկաթը, և թէ քանի ձեռքէ ու գործիքէ կանցնի, կը ձեծուի, մինչև որ պատրաստուի մի բևեռ։ Ամենայն բան պիտանի է նորա աչքում՝ թէ արտերում, թէ այգում, պարտիզում, թէ անտառում, թէ մարիում, և թէ տան մէջ՝ ամեն կտոր ու բեկոր, և ամեն մի մնացորդ պիտանի են իրենց տեղում։ Նա գիտէ քաջ, թէ բուռն պէտքը՝ երբէք բերան է, և տանի է, չունն ապաւէն է գայլերէն ոչխարի մինը կերակուր է մարդուն, ոսկորը՝ ուժ չներուն։ Զկան պո-

չը և Թևերը՝ կատուի արդար բաժինքն են, որ շատ որսայ մկներին։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդը՝ կատարեալ տնտեսավարութեան այս երրորդ կանոնին—չէ-ին պղծութին և վատութին ղեկուցող խնամին և այս կզգուշանայ ամենայն աչալրջութեամբ, և չվատները ու չվճացները և ոչ մի բեկոր կամ մնացորդ, որ չարայարութիւն է անսպառ լեւութեան և անկարօտութեան։

Ուղիղ և կատարեալ տնտեսավարութեան այս երեք յատուկ կանոններու գործածութեան հմուտ ու սովոր երիտասարդը՝ մշտ հարուստ է, և անհատնում հարստութեան տէր, թէև մերկ երևայ, և անպաշար, դարձեալ նա օժտուած է Աստուծմէ երկրի ամեն բարիքներու և պարարտութեան վայելչութիւններով։

Անդադանալի ժամանակին լզուր չանցունելու չափ խելահաս երիտասարդը՝ կենցաղական կարևոր պետութեներու ամեն գործերում և արհեստներում կատարելապէս ժիր ու արի երիտասարդը՝ տարևոր ժամանակում երկրի եղանակի ամեն բարիքները մշակող, գարմանող, և ներս լեցնող երիտասարդը՝ պետանիին և կարևորին չափաւորութեամբը բաւականացող ու չդռայլող երիտասարդը՝ ձեռագործի կամ վաստակի ամենաւիրքը խնշերանքին ու բեկորին արժանիքը Ճանաչող ու գնահատող և պետանի անելու համար խնայող երիտասարդը՝ ողջախոհ ու կատարեալ տնտեսավար երիտասարդը կասեմ, նա՝ ըստինքեան Թանկագին է, և անկարօտութիւն կենաց, փառաւորուած ամեն մարդէ եկեղեցւոյ հրապարակում, գաւառի ժողովներում, և որոյ չնորհքն՝ սոսկ իւր անձն է, իւր օժիտը, փառքը, պարծանքը, անկապտելի ամենի լին գողերին, զրկողներին։

Ինչպէս կատարեալ երիտասարդին, այնպէս է և ողջախոհ ու կատարեալ օրիորդի կամ կուսանի տնտեսավարութիւնը. միևնոյն ժրութիւնը, արիութիւնը, և անխոնջ տոկունութիւնը կը վայլի նորա հանապազօր

գործերում։ Նա ևս անթերի և կատարեալ խելամտութեամբ ամբողջ տարին կզգուշանայ ուղիղ տնտեսավարութեան երեք գլխաւոր կանոններուն ճիշդ պահպանութեան։

Ողջախոհութիւնն անթերի, և հասակին աճած լի կատարեալ, արի և ժիր օրիորդի կամ կուսանի հանապազօր կեանքն է. Արևմուտքն տան մէջ պատրաստ գտնուել, հետզհետէ եկողներուն—մեծին ու փոքրին՝ ոտքին, ձեռքին ու գլխուն ջուր տալ լուացուեցնել, հանգչեցնել. ընտանիքի ընկերակցութեան մէջ ունկընդրել լինել, և մեևնոյն ժամանակում ընթրիքի Թանը կամ վլլաւը պատրաստել, սեղան դնել ու ժողովել, ամանները մաքրել ու զետեղել, վառարանին կրակը ճամկել, առաւօտեան վառելիքը, կրկուան ու լուցկին շարել, սարքել, անկողիններն յարդարել, հասարակաց հանգստեան գոհացողականին մասնակցել, ծունը դնել, մանուկներին՝ իւր հետ մարզել, պահպանել, ու ննջել. գիշերային ութ ժամերու լրմանն անմիջապէս ելլել. հագուել, վառարանը լուցել, նախաճաշին սպասը՝ Թոնիրը դնել, մանուկներին արթնցնել, հագուեցնել, անկողիններն ժողովել, կրակը կթել, նախիր խրկել, ջուր բերել, արևագալի աղօթքն երգել, ու գործերը չարունակել. նախաճաշին սեղան դնել, ժողովել, Ճաշի պատրաստութիւն տեսնել, կաթ տաքցնել, մածուն մակարդել, խնոցի զարնել, ցցուն հարել, լուզ հանել, պանիր դնել. Թանը քամել, չորթան կազմել. և նստել զբօսանքի, կարդալ, պատմել. նստել գործի, Թել քաշել, մանել, գործել, հիւսել. ածու լցնել բանջարները մշակել. Ճաշի ժամուն սեղան դնել, կերակուր տալ չանդն ու այգին Ճաշ հասցնել, ժողովել, մաքրել, ու վերստին գործի նստել, ոստայնանկել, կարել, կարկատել, չափել, ձևել, հինել ու անկուածել, ներկել ու Թափել. կեզտոտները լուանալ, մաքրել, ցամքեցնել, կարկատել, նորոգել, կոկել, ծալլել, չաբաթ օրին հասցնել։

Կատարեալ օրհոդին կամ կուսանի ԼՁ տարևոր և ԼՁ հանապազօր գործերն այնչափ շատ են ու յաճախ, որ անկարելի կը լինի առանց խելքի և կանոնի անոնց աւարտել։ Հայ կուսանը՝ ժիր մօր արևկան օրինակովն լմաստանացած՝ մեծ ճշդութեամբ կը բաշխէ իւր ժամերը բազմազիմի գործերուն, և ժիր ձեռքով, արի ու պինդ կրանունքով, արագ շարժուածքով, ճարպիկ մտաներով ու հանճարեղ կոհեմութեամբ միշտ անոնց կատարած բազմազիմի իւր գործերը. և շնորհալի ու պարկեշտ կը կրնէ մանուկները, կօսքով, կրատով, չանդիմանութեամբ ու գործնական օրինակով, ու յաճախակի ընկերանալով, ընկերացնելով՝ ԼՁ գործում, ԼՁ զբօսանքում։

Ողջախոհ և ժիր օրհոդին հանապազօր բազմազիմի գործերու օրական ժամանակի բաշխումը՝ կարժէ կարդալ։—Երեկոյեան ժամահարին երեսը կը խաչակընքէ, իսկոյն գործը կը ձրարէ կը վերջացնէ. մանուկներին կը ժողովէ, եղանակաւ երգել կուտայ «Հայր մեր, որ յերկինս՝ սուրբ եղիցի անուն քո . . . » Հետերնին կերգէ, ծունը կը դնէ, ծունը դնել կուտայ. Սուրբ Աստուած երեքսրբեանն էլ կերգէ, երգել կուտայ. «Համբարձի զաչս իմ ի լերինս . . .» կը սաղմոսէ, երգել կուտայ և ծունը կրկնել. և վերջոյ կերգէ և երգել կուտայ մեծին Մեսրովպայ հրաշալի տաղը, շարականը «Զօրհներգութիւնըս բանաւոր պատարագ քեզ ի մբռանել արեգականըս վեր առաքեմք Թագաւոր յաւիտենից . . .» ազօթքը կատարէ, մանուկներուն ամեն մէկին ձեռքը մանը մունը փարջ ու դորակ կուտայ առաջը կը խառնէ, ինքն էլ կուժերը վերցուցած կերթայ աղբիւր, մանրը-ներուն քթի ու բերանը, ձեռքն ու ոտքը և գլուխը կը լուանայ, մեծկակներին կը լուացուեցնէ, կը լուացուի, ջուր կառնու կը գառնայ, կրկին կերթայ կը գառնայ, իրակուան ջուրն ամբողջապէս կը պատրաստէ. մանուկ-

ներուն կը վազցնէ դէպ ի նախերն, որ կովերն ու ոչխարները տուն կը բերեն, մինչև հասնին, ինքն էլ կրակարանը կը լուծէ ընթրիքի թանը կամ փլաւը կը դնէ. կինջնի կովերն ու ոչխարները կը կթէ, կաւարտէ, հորթերը կովերու մօտ կը թողու, տունը կաւլէ, ննջարանները կը մաքրէ, անկողիններն կը յարդարէ։ Կովղներուն ձեռքին, ոտքին ու գլուխին ջուր կուտայ կը լուացուեցնէ, ընտանեաց ընկերութեան ունկնդիր կը լինի, մանուկներին լաւ սորվածը, հնազանդութիւնն, ու աշխատութիւնը կը գովէ. և մինչդոյն ժամանակ ընթրիքի պատրաստութիւնը կաւարտէ. սեղան կը դնէ, կերակուրը կրակէն կառնու, տեղը մի աման ջուր կը դնէ. սեղանը կը ժողովէ, ամաններն կը մաքրէ կը զետեղէ, կրակարանի կրակը կը ժողովէ, կը ծածկէ, առաւօտեան վառելիքը—կրկուս, լուծկին շուտ կը շարէ կը սարքէ. հանգստեան գոհացողական աղօթքին կը մասնակցի, կընկերանայ ընտանիքին, կը ժողովէ մանուկներին, կը տանի ննջարան կը պառկեցնէ. ամենէն եաքը՝ ձրագը կը փչէ. կերթայ մանկանց մօտ կը ննջէ. Հանգստեան ուրի ժամերու լրմանն անմիջապէս տեղէն կելլէ, կը հագուի, կրակարանը կը լուծէ, նախաճաշի ապուրն իսկոյն կրակը կը դնէ. կինջնէ կովերը կը կթէ ու հորթերուն կը խառնէ, ոչխարները կը կթէ, գառներին կը խառնէ, կաթերը կը քամէ կը մակարդէ, մանուկներին կը զարթեցնէ կը հագուեցնէ, ամանները ձեռքերնին կուտայ դէպ ի աղբիւր կը ճամբէ, որ լուացուին ու ջուր բերեն, կուժեր կառնու ճամբէ, որ լուացուին ու ջուր բերեն, կուժեր կառնու կը հասնի եաներէն. կը լուանայ կը սրբէ, առաջը կը հասնի եաներէն. կը լուանայ կը սրբէ, առաջը խառնած տուն կը բերէ. ձեռքերնին մի մի վարոց ու խարազան կուտայ, կովերն ու ոչխարները դէպ ի հօտը դէպ ի նախիր կը խրկէ, պատուիրելով, որ նախիրէն դէպ ի նախիր կը խրկէ, պատուիրելով, որ նախիրէն դէպ ի եկեղեցի մեծ հօր, մեծ մօր հետ աղօթքին, ու գառնան. (մանուկները փայտէ ձիերնին հեծած այս կարևոր գործն անթերի կը կատարեն. եկեղեցի

կերթան ու կը դառնան։ Եկեղեցւոմ լսածնին՝ երգերն ու սաղմոսները կեղանակեն, կերգեն, ու կը պարծենան)։ Ժիը օրհորդն խոյոյն կելլէ անկողիններէը կը հաւաքէ. մակարդն առած պանիրը կը չաղուէ, պարկը կը լեցնէ, քամոց կը դնէ, հին քամուածը կը կոտորէ, կաղէ, կամանէ. Ճաշն կերակուրին նիւթը կը պատրաստէ. արեւածագին կերգէ արեւագալն երգն—Լոյս արարիչ լուսոյ...» և «Առաւօտ լուսոյն» կը կցորդէ, կերգէ ու կը գործէ. իւր վարդապանութեան լրմանը ծունը կը կրկնէ, և նախաճաշն պատրաստութիւնները կը դնէ։ Նախաճաշն ապուրը կրակէ կառնու, Ճաշն նիւթը կը դնէ, և մի խալկին ջուր միշտ մնասին. ժամարձակին նախաճաշը կը մատակարարէ, սեղանը կը ժողովէ, ամաններէը կը մաքրէ կը գետեղէ, մանուկներին ածու կը խրկէ, կը պատուիրէ որ սոխ ու սխտոր, ու համեմներ քաղեն բերեն։ Կիջնէ ածու բանջարներէը կը մշակէ, մանկանց պակասորդը կը լմընէ, կը քաղանէ, քաղանել կուտայ. քաղած խոտերն ամեն մէկին իրենց հորթին ու գառներին ձգել կուտայ։ Բանջարն առած տուն կը դառնայ, կը պատրաստէ։ Գործի կը նստի բամպակ կը գզէ, կը պատրուգէ, մօրն ու մեծ մօր գուլաններէը կը հասցնէ. խաչել կանէ, մանածներէը կը շաղախէ, կամ կը հինէ, կամ կը կարէ, կամ կանկուածէ, կամ կը նախշէ. կամ կը գործէ, կամ կը նիւթէ, կամ կը հիւսէ, կամ կը ձևէ, և կամ թէ հաց կը թխէ, մինչև ի Ճաշ անխոնջ, անդադար կը ժրանայ կաշխատի, Ճաշի ծրար կը պատրաստէ, յանդ կամ այգին կը խրկէ, մանուկներին կը կառավարէ. Ճաշէն վերջը կսկսի մանուկներին կրթել, հասկացնել, թէ այն Ճաշն ինչ տուել է, ինչ աշխատել, վաստակել է. և ինչ եւիել պատրաստել է, կը հասկացնէ, թէ ինչ տղան ինչ մասն ունէը այն Ճաշուն, հետը մէկ տեղ ինչ կը բերէ, թէ վազուան Ճաշին ինչ աւելի պիտի գործէ, աշխատի, թէ տոլմայի տերևն ինչ պիտի բանայ, ինչ պիտի պատատի, և թէ ամեն մէկ

կը՝ քանիկին հատ. մի մի հատ՝ իրենց համար, մի մի հատ էլ մեծ հօր համար, մի մի հատ մեծ մօր համար, մի մի հատ իրենց հօրը, իրենց մօրը, հօրաքոյրին, մեծ քրոջը, մեծ եղբօրը, հօրեղբօրը, վերջապէս մի մի հատ ամեն մէկի անունին. և կպատրի հետերնին, ու կզբաղեցնէ. նոցա խաղերն ու կայտիուը՝ մանը մանը տան գործերուն կը դարձնէ, օգտակար կանէ, կարձակէ դէպ ի բակը, որ խաղան։

Այս փոքը զբօսանքէն ետքը դարձեալ ձեռք կը զարնէ իւր գործին, կը շարունակէ. երբ մանուկները դրսի տաքէն կամ ցրտէն Ճանճրանան, ներս կը գիմեն, խսկոյն գործի կը հրամայէ. հինք ձգելու ցիցերը զարնել կուտայ ամեն մէկին, յորդորելով, ու խոստումով, թէ ամենուն պիտի չինէ նոր գօտի, նախշուն գօտի, որ երբ մեծնան, քաջագօտի պատանիներ դառնան, ու ժիր անխոնջ ձիաւորներ, մէջքերնին պինդ՝ կորիճ լինին, թէ չոյն, թէ թիւրք կորիճներին գետին զարնեն, չաղթեն, ջանջանեն, և չթողուն, որ նոքա միշտ գոզերու պէս իրենց այգին ծածուկ մտնեն, ուտեն, կոխեն ու կոխկոխեն, և խանգարեն։ Այս ու այսպիսի ինքնաբսեղծ, ինքնայարմար գովեստները՝ նորա բերնում չզադայաշար կերկարին խօսքով, կանչով, արխաուն ու մեղմաձայն եղանակով, և կը գրաւեն մանուկին ուշքն ու միտքը, աչքն ու ականջը, ամբողջ անձն ու ժրութիւնը. և կզբաղեցնէ հինք ձգելու իւր ձեռքին տակ, աչքին առաջը. որոնք մեծ գործ կանեն, կաւարտեն, կաժ քանդելով, ու մասուրայ կաժրելով, ոմանք ևս գոյն գոյն թելի և թելուածքի համրանքներուն աչք բանալով, ցից ի ցից երկայնութեան տարուբերով, գնալ գալով, ուղիղն ու ծուռն ընտրելով, մէկը միւսին կանչելով, թէ ծուռ անցուց, ծուռ ձգեց և սա՝ նորան դարձնելով, թէ ուղիղ է իւր արածը, ինք չգիտէ ուղիղը, երկու կողմէն պինդ պնդումները, թէ ուղիղ է իմ արածը, և միւսը՝ թէ ուղիղ է իմ արածը. պզտիկ վէճը, ու նոր ծագած

Խակ կարծելքը, տարակոյսը՝ կը փարատին, կը լուծուին օրհոդին լուրջ հայեացքովն կամ ակնարկով, և կամ փափուկ մի խօսքով, կամ ուղղելու մի փորձական օրինակով։ Զարմանալի մի դասարան. փոքր մանուկները, ուշադրութիւնին լարուած, կը դադրին վէճէն՝ սխալնին ճանչցած. ինչպէս կայտառ կը խաղան, այնպէս կայտառ կաշխատին, առանց երբէք կոտրուելու, կը հմտանան, կը սովորին։ Շարժմունքնին առողջ ու կենդանի, կը յօրինեն առատ աչքի սուր տեսութիւն, ոտքի, ձեռքի արագութիւն, ժրութիւն, ուսումնին պարզ, ու պիտանի, վարժութիւննին բազմադիմի. նուրբ թելերի երկայն ու պինդ ձգուածք ու հէնք, և մէջ ընդ մէջ մխատողի, փոխ ընդ փոխի, փոխիփոխան էջ ելևէջի եղումուտներ. ամեն աչքի գործ չէ տեսնել ու ըմբռնել, բայց միայն թէ նմաստուն ու ժրաջան օրիորդի հոգւոյն ագդած մեքենական ուղղութեան մէջ։ Այսպիսի մեծ հանճարով կը գործէ օրիորդն, և կը կրթէ մանուկներին, նոցա խաղն ու կայտառը՝ կամաց կամաց փուփոխակի օգտակար կանէ գործի. այս ևսկ է մեծ հանճարը, որով կը դիւրանայ ծանր գործը, կը հմտանայ մանուկը, կը խաղաղի տան շփոթը, ամեն կողմէն էլ օգտակար գործ ու չարժում. որոյ պատուղն է՝ ողջախոհ անմեղութիւն, հոգեկան սիրոյ քաղցր զգացմանց վայելչութիւն՝ ամենայն օր, ամեն իրկուն։

Զբօսանքի ժամերն նոյնպէս ամենևին պուր չանցուներ, այլ ընկերացած մօրը, և մեծ մօրը, կամ ազգականից աղջկներուն ու հարսներուն՝ այգին կիջնէ, մանուկներու խումբն առաջէն ու ետևէն կը կայտան ու կը խայտան. ժիր, նմաստուն օրիորդը՝ միշտ մտախոհ այս կողմն այն կողմն ամենայն բան կը դիտէ. մանկանց ամեն մի չփոթէն, աղաղակէն պատեհ կառնու, ու բուսական մի գիտութիւն, տեղեկութիւն կը հաղորդէ, մանիշակներ կամ թէ ուրիշ կանաչիներ ժողովելու, փունջ կապելու կառաջնորդէ. նոր նոր խոտեր ու ծաղիկներ երբ երևին, անուններըը կուտայ իսկոյն, և թէ ինչ դեղ ու գործման են, և ինչ գոյն ներկ կը նկարեն, այս ամենը՝ մանուկներըը կը սովորեն հէնց նոյն օրին, մէկ լսելով ու տասն անգամ կրկնելով։ Ծառերու բողջոջներուն, ծաղիկներուն, պտուղներուն մասին կաս, տեղեակ կանէ կը հմտացնէ. թէ ամեն մի բողբոջներում շատ տերևներ ու ծաղիկներ կը պահպանուին Աստուծմէ. և ամեն մի ծաղկի ծոցում մի մի պտուղ՝ կօրհնէ Աստուած, կաճեցնէ. որ մանուկներն քաղեն, ուտեն, հասուն հասուն ու գրկալիր տուն տանին հօրն ու մօրը և մեծ հօրը ու մեծ մօրը՝ երախայրի մատուցանեն։ Դիտել կուտայ յուշիկ յուշիկ մրջիւններու հարթ Ճանապարհն, ու բեռնաբարձ կարաւանը. և թէ ինչպէս ժիր, ժրաջան արևի տակ՝ հաց, կերակուր կը ժողովեն, ներս կամպարեն. կը պատմէ մանր մանր, թէ ինչպէս շատ նմաստուն են բոլոր փոքրիկ մրջիւնները, ինչպէս շուտով կը գուշակեն անձրևի գալն, ու շուտափոյթ ներս կը վազեն, որ ոտքերնին չցեխոտեն, չկեղտոտեն։ Շատ կարևոր մեծ նմաստներ, պարզ պարզ խօսքով, դիւրին ոճով, մանուկներուն ըմբռնելի և դիւրմատ ու դիւրալուր կը յօրինէ առակներ, նմաստալից ասացուածներ, ժրացնող, քաջալերող նրատակներ, արիւրմեան զգացումներ, խնայումներ, ու փութաջան հոգւոյ սնունդ, սրտի եռանդն, հալեցուցած արձիճի պէս կը լեցնէ առականջնուն մէջ, թէ «Բարեբար մեր Աստուածը՝ որ երկինքն է, շատ աւելի կը սիրէ փոքրիկ ու ժիր, աշխատասէր մրջիւնին, քան թէ մեծ մեծ, պղերգացած, անգործ նստած ու լաց եղող մանուկներին»։ Թէ «Բարեբար, երկնաւոր Հայր մեր Աստուածը՝ շատ աւելի չնորհք կուտայ պզտիկ սարդին, ու խելք կուտայ, որ կը գառնայ մի ժիր կտրիճ, կը բարձրանայ ծառերու վերայ, կը սովորի իւր մօրմէն և կը լինի մի քաջ վարպետ ոստայնանկ, կը հենու, և կը գործէ իւր ոստայնը բարձր բարձր տեղերում, արագ արագ վազվզելով, զգոյշ զգոյշ շուրջ դառնալով կը կապկապէ ու կօրսայ գող գոռե-

խին, չար ձանձերին, չարախայթող մժեխներին, մլակներին, դատարկ անգործ թռչող խոշոր թիթեռներին։ Աստուած այնպէս չնորհք կուտայ ժիր մանուկին, որ աշխատել կը սիրէ, խելք, միտք կուտայ, որ սովորի ոստայնանկել, հինել, գործել, ճաշկանկար հիւսել նախշել»։ Թէ «Բարերար մեր Աստուածը՝ որ երկինքն է՝ միշտ կը տեսնէ մանուկներին, թէ նոցա որն է չանասէրը՝ մրջիւնի պէս, վարպետ գործող՝ սարդի պէս, ժիր, ճաշկաքաղ՝ մեղուի պէս, արագ վագող՝ թռչունի պէս, ու հնազանդ՝ գառնուկի պէս։ Եւ կը խրկէ իւր հրեշտակը, որ շուտ հասնի, ու պահպանէ լաւ մանուկին, աշխատասէրը ու հնազանդ մանուկին, խայթող օձին գըլխուն զարնէ, կատաղած շունին դունչը կապէ, որ չխածնեն, չվնասեն չնորհալի մանուկներին։

Կիրակի օրերու զբօսանքն ևս խիստ վայելուչ կերպով կը կատարէ. կաթի և կերակուրի գործերը կը կատարէ՝ ինչպէս ամեն օր. արևագալին եկեղեցի կը հասնի՝ մօրը կամ մեծ մօրն ընկերացած. ժամարձակին նախաճաշը կը մատակարարէ, ու կը նստի կը կարդայ սուրբ գիրք. սրբոց վարք, եկեղեցւոյ պատմութիւն, սուրբ կուսանաց նահատակութիւնները. շատ անգամ կը կարդայ նոր կտակարանի վարդապետական ու բարոյական օրէնքները ու հրահանգները. գերազանց կը պայծառանայ ընկերսիրութեան ամեն օրէնքներուն, պարզութեան սիրահար, վիրքներուն՝ կատարեալ դաստիարակ ու խրատող, վարպետ արհեստաւոր, բարին՝ չարէն, ու պիտանին՝ անպիտանէն ճիշդ ընտրող։

Ողջախոհ և կատարեալ օրիորդն՝ ինչպէս հանապազօր գործերուն, այնպէս կարիանայ և տարեւոր գործերուն, և ոչ մի եղանակ ու ժամանակն ի գուր չանցուներ։

Գարնան առաջին դռները բացուելուն՝ կսկսի իւր ածուն մշակել, սերմանել, սատերել, ու դարմանել. երբ

թութերը կը կանաչին՝ ձեռք կառնու և շերամը, կը դարմանէ, մինչև մետաքսը կը հասցնէ. իւր գործերուն, տագնապներուն՝ օգտակար ու օգնական առնելով մանկանց ոյժն ու աշխոյժը։

Ամառնային եղանակում յետ չթողուը բամպակի քաղհանքն, ու արմատի դարմանը, ջրելը. նոյնպէս և սեխաստանի և խաւարտի ընդարձակ ու շատ գործերուն ու դարմանումն ժիր ու արագ օգնական է իւր եղբօրը, հօրը, հօրեղբօրը. իւր ածուէն կը հասցնէ համեմներու (անանուխ, մանանուխ, ազատգեղ, գինձ, ծորիլին, շահասպրամ, թարխուն, սամիթ, չաման) ձմեռնային պաշարը. նոյնպէս ամեն պատճառը ընդեղէնի կանաչիներն չորացուցածը, դեղձի, ծիրանի, և ղորի չիրերը։ Հունձքի գործերուն՝ արի ու ժիր կաշխատի գիշեր ցերեկ եղբօրը հետ, նոյնպէս արագութեամբ ու ժրութեամբ կաշխատակցի կալորէում, մաղելով, մաքրելով, քրձելով, ամպարելով։ Պտղաքաղի գործերուն ևս կը ժրանայ պատրաստում, քաղելով, ամանելով, եփելով, քաղցրաւենեաց տեսակները պատրաստելով, բղուղներ, ու տակառներ լեցնելով։

Աշնանային օրերուն կը ժրանայ այգեկութիւն, ու հնձանում, և քաղցուի ամեն տեսակ գործերում.—գինի քամել, պէքմէզ եփել, պաստեղ բանալ, կտրօն դնել, շարոց շարել ու թաթխել՝ ամեն տեսակ կոլիգներով. ամեն տեսակ պտուղներով ըմչէլ եփել—խաղողէ, խընձորէ, սերկևիլէ, դդումէ, վարդէ, մանիշակէ, տանձէ, քարճինէ։ Հնձանի ամսօրեայ անվերջանալի գործերէն ետքն անմիջապէս կսկսի բամպակի գործերն, քաղել, ժողովել, ներս առնուլ, փեճեկել, կօրզել։ Նոյնպէս և կանեփը քաղել, կեղևել, ոլորել թափել։ Բուրդ լուանալ, չորցնել։

Աշնանային վերջին գործերը կը լինին միս ազել, տապակել, ապխտել, երշիկ ծեծել, լեցնել։ Ձաւար խաշել, թեփը հանել. կօրկոտ ընտրել, թեփը հանել. ցորել թրջել,

գերմակ հանել։ Խմոր բռնել, մածունէ, ու պամատորկ Թաբլանայ պատրաստել, չորացնել, մանրացնել։ Խմոր դնել, ԹերԹեր բանալ և երիշտակ կտրատել։ Ձկները մաքրել, աղել, ամանել։ Ձրագու հալել, մոմ Թաւիել. օճառ եփել, օշնան քաղել պատրաստել։

Ձմեռնայինն գործերն են. բուրդ ու բամպակ գզել, մանել, հինել, ազբել, գործել, ձևել, կտրել, կարել, կարկատել, նախշել, անկուածել. մետաքս քաղել, ոլորել. կերպաս գործել, գոյն գոյն ներկել, հարսի, փեսայի պատմուճաններ պատրաստել, հանդերձել։

Այսչափ բազմատեսակ գործերը՝ տարւոյ ժամանակի արդիւնական եղանակում անԹերի կերպով կատարէ ժիր օրիորդը՝ մինչև իւր ժամանակի իզուր չանցունելու նպաստուն զգուշաւորութեամբ։ Եւ այսպէս՝ ուղիղ անտեսավարութեան առաջին կանոնն անԹերի կը կատարէ ամենայն օր, տարի բոլոր։ Որոյ ուղիղ տնտեսութիւնն է որ կերևի տան մէջ անպակաս լինութիւն ուտելեաց, և բազմութիւն հանդերձներու. որոց շարաշար սպառտները՝ ամեն տեսակ հագուստինն առանձին կը վկայեն ժիր օրիորդի կատարեալ ողջախոհութեանը, և նպաստուն տնտեսութեան։

Աշխատասիրութեան մէջ կատարեալ եղող օրիորդը՝ չափաւորութեան մէջ ևս անԹերի է ամենևին. ըստորում քաջ գիտէ աշխատութեան արժէքը, և ժամանակի Թանկութիւնը. նա ամենևին աւելորդ ծախս չունի, կեցէք կը պատրաստէ, կը կերցնէ, որ կշտանան. կը մանէ, կը գործէ, կը հիւսէ, կը կարէ, կը հագնէ, կը հագուի, որ մերկութիւնը ծածկէ ընտանիքին, և կըռնակինին տաքցնէ, մէջքերնին պնդէ, բազուկներն՝ արագաշարժ, ու սրունքներն՝ արագընԹաց ու սրարշաւ յօրինէ։ Մինչ պետանին ու օգտակարն ունի ի նկատի. աւելորդ և եղուր խոսքէ ու զրոյցէ անգամ հեռի է։ Նորա վերայ չերևիր ամենևին որևիցէ աւելորդ հագուստ, օտար և աննշան տարազի կերպ. կը զարդարուի նա միշտ պարզապաճոյճ հագուստով, կը վայելի պարկեշտութեան ու պատկառանքի հրաշալի գոյնով. նորա բոլոր հանդերձի նիւթն հայրենի երկրի բերքէն նիւԹուած է, և իւր ճարտար ձեռքովն ու մատներով հիւսած, գործած, նախշած ու անկուածած։

Հրաշալի կը ճոխանայ իւր ընկերներումն՝ բոլոր երկրի ժողովրդի կանանց սեռի ժողովումն՝ վկճակի տօնի երախայրեաց հանդէսում։ Նորա հագին կը պատրաստայ բրդեայ շալի նուրբ գործուածքը, և նկարչին անկուածքը. ձիւնի նման ճերմակ շապիկը՝ կամ բամպակի կամ կտաւի. ամեն ծալքի (վարդի, նարդէսի, մանիշակի, մեխակի, և Թաւիշի) բնական գոյներով հինած գործած ճամկաւորի պատմուճանը, և կրկնոցը. համակ իւր ձեռքին գործը։ Նորա մատներու այս յայտնի շնորհքը կը գովուի ամեն կողմանէ պատուներու և մայրերու յատուկ յատուկ գուսանական հատուածներով, առանց վկճակի յայտնութեանն սպասելու (1). ամեն աղջիկներն

---

1) Վկճակի հանդէսը կը կատարեն Հայերը՝ Համբարձման ամսին ուրԹերորդ օրը. այս հանդէսին կը ժողովին բոլոր կանայք ու աղջիկները մի հրապարակում. հասած օրիորդները՝ մի մի ման ամենափերպ ամենազան ծալիկներ կը բերեն երեսից հեռ՝ նախընԹաց օրուանէ պատրաստած։ Այս ծալիկներն ամենը միասին մի մեծ խալիկեն կամ հրապարակական սեղի մէջ կը լեցնեն. նորա մէջ ամեն ոք մի մի մատնի, ապարանջան, օղակ, ճարմանդ, կամ կոձակ, և այլ նոր սեպհական ըան կը ձգեն ի ծածուկ. և մի մեծաղ փորը օրիորդ՝ կամ մանուկ կը նայեցնեն մէջ տեղ, խլորը ու գիտուն պատանները, մի մի փոքր ոսանաւոր կը զուրցեն, մինչ գովասանական բովանդակութեամբ. ապա մեն մի ղոյցի վերջը՝ մի մի ըան կը հանեն վկճակի խալիկներէն, որով կը հայտնուի, Թէ ո՛ր օրիորդի վիճակն՝ կամ կեանքն ինչպէս պիտի լինի։ Այս վկճակի տարեկան հանդէսումն՝ այժմու միամիտ ու բարեմիտ պատանիներն՝ իրենց որդւոյն կամ

ու օրիորդները՝ նորա չուրջը կը վազեն, և նորա ձեռագործը կը գննեն, կը գործանան, կը հիանան, ու կը գովեն. նորա բերնին լռիկ մնջիկ Թուռնդ ուշադիր, ձեռագործի ճարտարութեան գաղնիքներուն ունկնդիր, կը սովորին, կը հմտանան, փորձեր կանեն, կը վարժուին, նորա օրհնակին ու շնորհքին հասնելու նախանձայոյզ՝ այնուհետև կը հեռանին։

Ողջախոհ և կատարեալ օրիորդին կամ կուսանին՝ աչքի հայեացքն ուղիղ չափ ու քանոն է, նորա ձեռքը խիստ շատ անգամ ճիշդ կշիռք է. նորա կտրածը՝ չափաւորը է, և կարածը՝ ոչ լայն ոչ նեղ, այլ միշտ համեմատ ու զուգադէպ։ Նա՝ մխմիայն աչքի չափով ու ձեռքի կշռադրով կը ձգէ կերակուրի աղն ու համեմն, և ոչ երբէք կշռադրով, բայց միշտ չափաւոր՝ թէ ամանին և թէ նուրբին համեմատ։

Թուռին՝ հարսնացու կընարին այն օրիորդին, որուն որ վիճակին կը հասանին։ Մինչև այսօր տևող այս աւանդութիւնը, և սորա զուարճանքներուն երկցած ու յաճախ կրկնուած բառերն— Հնոցանոց, պոլիչա, ոսկրիայ (աղաւաղմամբ է ոսկրիած), չաղպռոտ, տէղրածորան, ճարպարարուեոտ (հանճարոտ, հիւնդրաւոր—պիտի կարդալ— հանճարաւոր, հնարաւոր) կոտուկ տիրտ, անթեռ կիտ, անփուշ ոտէղ, ճորտոտ (հազարաձիկնտ) պղտուկոտ, մատաղ փոփնոտ, մատաղ փուլտոտ, վայելուչ փլոխ, ղէլուն-նի ծառ, խաղողի որթ, և ուրիշ այսպիսի բառեր՝ կը ցուցնեն, թէ օրիորդաց և առհասարակ մանկամարդ կանանց տնարարութեան և կատարեալ տնտեսավարութեան շնորհքներուն կը ցանկանան, և որ օրիորդի վիճակին՝ որ պատահմանէ իրենց ցանկութեան, զայն կընարեն հարսնացու։ Իսկ եթէ ներկայացած օրիորդը՝ իւր հագուստի ձեռագործովն արդէն յայտնի կը ձևթանայ, նորա բաղդին վիճակ հանել հարկ չեն տեսներ, և կը գովեն, ու կօրհնեն ըերթանալիք ու սրտալից։

Ողջախոհ և կատարեալ կուսանը՝ ուղիղ տնտեսավարութեան երբորդ կանոնն ևս անթերի կը պահպանէ ամենայն օր ամեն դէպքում. նորա ձեռքում չիբճանար և ոչ մի ցրենահատ։ Նա մինչև իսկ կերակուրի մնացորդը, կամ ամաններու լուացուկն, յատուկ կերակուր (լակ) կը պատրաստէ, կաթնատու կովին, ձու ածող հաւին։ Նորա տնտեսութեան օրէնքներու կարգումն որոշ տեղ կը բռնէ մայրենի այն սլատուէրը, թէ «Հացի փշրանքին կոխելը՝ մեծ մեղք է»։ Նորա լայն ու մաքուր—միշտ մաքուր գոգնոցը՝ չկորսնցներ ոչ մի հատիկ ուտելեաց նիւթէն, երբ ընտիր կանէ խառնուածներն մէկը միւսէն։ Սեղանի տակի սփռոցը, աւելը մաղի մեծ փոռոցը՝ մեծ նշան են գգուշութեան, որ ոչ մի հատիկն և ոչ իսկ փոշին չվճացնէ, ոտքի կոխան չանէ։

Նորա մկրատի բերնուն աւելցած պաստառի կտորներն՝ չանկարծ նորօրինակ մի ամբողջ կը գառնան, գլուերային բարձի երես, մանուկներուն կուժքի կապոց, վերմակի կամ անկողնի չարմար երես։ Նորա ձեռքէն գետին չընկներ ոչ մի թեւի կտոր, կամ բրդի մազ, այլ ամեն լինչ չնչին մասունք կը ժողովէ իւր ծրարումն կամ սլարկումն, և ժամանակ առ ժամանակ մանր պէտքի կը գործածէ, կոճակ, օղակ կը կազմէ, հիւսկէններու նորոգութեան կը գործածէ։

Ողջախոհ ու կատարեալ օրիորդը կամ կուսանը՝ անդառնալի ժամանակն ի զուր չանցունելով, և ընտանի գործերում միշտ ժրաջան արհեստալով, ձեռագործի և վաստակի դէգեր կը հանդերձէ. չափաւորը մատակարարութեամբ, ու զգուշաւորը խնայողութեամբ՝ իւր հօր և եղբօր վաստակն ու արդիւնքն տարուէ տարի անսպառ ու անհատնում կը պահպանէ։ Կատարեալ տնտեսավարութեան այս ուղիղ ու հանճարալի տնտարարութեան շնորհքը՝ ողջախոհ կուսանին անկապտելի ճոխութիւնն ու հարստութիւնն է, օժտուած նմա՝ Աստուծմէ։ Ողջա-

խոհ և կատարեալ կուսանի վերայ երևցած այս անգին շնորհաց համար՝ Սուրբ Գրոց—Աստուածաշունչ մատենի խորագնին լմաստասիրականութեան վճռուած է լմաստունի գրչով, թէ «Կին ժրագլուխ՝ պսակ է առն իւրում»։

Ողջախոհ և կատարեալ երիտասարդն ու կուսաքը՝ այսպիսի երկնաձիր աստուածատուր պարգևներով օժտուած են. նոցա մտաւոր կատարելութիւնը՝—հին ու նոր պատմութեանց հմտութիւնն՝ է նոցա վիճակը, նոցա անձին առողջութիւնն, ու ժրութիւնը, և ձեռքի ճարտարութիւնն է նոցա հարստութիւնն ու գարդարանքը։ Նոցա չափաւորութիւնն ու պարզութիւնն է նոցա անկարօտութիւնը։ Նոցա կատարեալ խնայողութիւնն է նոցա ամենօրեայ ընկերսիրութեան աննախանձ առատաձեռնութիւնը։ Նոցա զուգութիւնը՝ թէ պատահին՝ է միմիայն երջանկութիւնն այս աշխարհում, և հաստատ յոյս երջանկութեան՝ հանդերձեալումն։

ԻԴ. ԱՐԲՈՒՆԲԸ ԿԱՏԱՐԵԱԼ՝ ԿՈՑՍ ԵՐԻՏԱՍԱՐԴԻ

ՊԱՏԿԵՐ.

Կատարեալ արբունքը երիտասարդին վերայ դիւրին է տեսնել և ճանաչել. այլ երիտասարդին կուսութիւնը՝ դժուարին է ճանաչել. Աստուած կընարէ կոյս և կատարեալ ողջախոհ երիտասարդին։ Աստուածաշունչ գրոց պատմական յայտնութիւններէն՝ Դաւթի երիտասարդութեան պատկերը կը դնենք այստեղ, յորում՝ հոգւոյ և մարմնոյ միանգամայն ողջախոհ կը հանդիպա-

նայ Դաւիթ, և Աստուած կընարէ նորան՝ հովուական խոնարհ վիճակին։

«Սաւուղ՝ խորայելի թագաւորն այնչափ հպարտացաւ, որ այլ ևս սկսեց Աստուծոյ հրամաններէն ճշդութեամբ չկատարել. Սամուէլ մարգարէն՝ որ Աստուծոյ պատգամները կը բերէր Սաւուղին, նորա այս հպարտութիւնը և անհնազանդութիւնը տեսնելով, տխրեցաւ, և սուգ կանէր Սաւուղի կորստեան վերայ։

«Աստուած կը յայտնէ Սամուէլին, որ այլևս չպտայ Սաւուղին վերայ, քան որում կասէ—ես անարգեցի Սաւուղին, որ այլ ևս թագաւորութիւն չանէ խորայելի վերայ.—և կը հրամայէ Սամուէլին, որ լեցունէ եղջիւրը օծութեան իւղով, և երթայ Յեսսէի տունը.—ես կըցուցնեմ կասէ Աստուած, թէ ինչ պիտի անես, և որին որ ասեմ, նորան կօծես։

«Սամուէլ ապաշխարեցոյց Յեսսէին և նորա որդւոցը, և հրամայեց, որ զոհ անելու ելլեն իրեն հետ. և երբ նոքա ներս կմտնէին, տեսաւ Սամուէլ Յեսսէի անդրանիկ որդւոյն Եղիաբին, և ասաց իւր մտքումը, թէ ահա սա լինելու է Աստուծոյ օծեալը։ Աստուած ասաց Սամուէլին, մի նայիր դորա տեսքին, և մեծ հասակին, անարգեցի (չընտրեցի) դորան։ Քան որում Աստուած այնպէս չընտրեր, ինչպէս որ մարդիկ կընտրեն. մարդը՝ մարդոց երեսները կը տեսնէ (կը քննէ), իսկ Աստուած սրտերուն կը նայի։

«Սամուէլի առաջն ելաւ Ամենադաբ՝ Յեսսէի երկրորդ որդին, և ասաց Սամուէլ, և ոչ դորան ընտրեց Աստուած։ Ելաւ և Սամայա որդին, և ասաց Սամուէլ, և ոչ դորան ընտրեց Աստուած։ Այսպէս Սամուէլի առաջն ելան Յեսսէի եօթն որդիները, և ասաց Սամուէլ, դոցա և ոչ մէկին ընտրեց Աստուած։

«Եւ հարցուց Սամուէլ Յեսսէին.—Ա՞յդչափ են որդեք։ Պատասխան տուեց Յեսսէ.—մի փոքրիկն էւ կայ, ոչխար կարածէ։—Ասաց Սամուէլ.—խրկէ, բեր նո-

բան, մինչև նորա գալը սեղան նստելու չենք։ Մարդ խրկեց Յեսսէ, և բերաւ Կարմիրը էր նա, աչքով գեղեցիկ, և Աստուծոյ տեսնելովը՝ բարւոք։

«Ասաց Աստուած Սամուէլին.—վերը կաց, օծէ Դաւիթին։ Սամուէլ ուղին եղջիւրն առաւ, և օծեց Դաւիթին՝ իւր եղբայրներուն մէջ։ Եւ Աստուծոյ Հոգին լաւզաց Դաւիթին վերայ այն օրէն, և յետոյ ևս։

«Սաւուղ սկսեց դիւահարել. և չար այսը նորան կը խեղդէր. նորա ծառաները՝ խորհուրդ տուին, որ հրամայէ մի վարպետ քնարերգակ բերեն. և դիւահարած ժամանակը՝ քնարով հանգստացնէ։ Հրամայեց Սաւուղ, որ մի վարպետ քնարերգակ բերեն։ Պալատի երիտասարդներէն մին պատմեց, թէ տեսայ ես բեթղահեմացի Յեսսէի որդւոյն, որ սաղմոս էր գիտէ. լմաստուն մարդ է, պատերազմող մարդ է, հանճարեղ մարդ է, ճարտարախօս մարդ է, տեսքով գեղեցիկ մարդ է. և Աստուած նորա հետ է։

«Սաւուղ մարդ խրկեց Յեսսէին, և ասացուց, թէ քո Դաւիթ որդին՝ որ ոչխարներուդ մէջն է, խրկէ ինձ։ Յեսսէն մի արդու հաց տուաւ Դաւիթին, և մի տիկ գինի, և մի ուլ, որ տանի Սաւուղին։ Դաւիթ մտաւ Սաւուղի մօտ. և նորա առջևն սպասաւորութեան կը կենար։ և նորա կապարճակիրն եղաւ, Սաւուղ շատ սիրեց նորան։ Սաւուղ մարդ խրկեց Յեսսէին, և ասաց. թէ Դաւիթ իմ մօտ պիտի կենայ, որովհետև նորան հաւնեցայ։

«Եւ երբ չար այսը կը խեղդէր Սաւուղին, Դաւիթ կառնէր քնարը, և իւր ձեռքով կը նուագէր, Սաւուղին կը քնացնէր, դիւը կուգար նորան, ու չար այսը կը մեկնէր անորմէն։

«Այլազգիներն իրենց բանակները ժողովեցին Հրէից Սոկքովումն, ու պատերազմի պատրաստուեցան. Սաւուղ պատերազմի ելաւ իսրայէլի կարճներով. և Դաւիթ մանուկը գնաց իւր հօր ոչխարներն արածելու։

«Այլազգիներու բանակէն դուրս կուգար Գողիաթ անուն գեթացին, որոյ հասակը՝ վեց կանգուն ու մի թիզ էր, կառաջարկէր իսրայէլի բանակին, որ մի մարդ հանեն մէջ տեղը, և երկուքնին միայն մենամարտին. և յաղթողին կողմը տանի յաղթանակը։ Երկու բանակները՝ քառասուն օր մնացին, և իսրայէլի թագաւորը՝ իւր աղջիկը տալ կը խոստանար այն իսրայէլացի կըտրիճին, որ համարձակի և մենամարտի Գողիաթ այլազգիին հետ, և նորան յաղթէ։ Այսպէս քառասուն օրեր դուրս կուգար Գողիաթ գեթացին, և իսրայէլի բանակը կը նախատէր. և ոչ ոք չկար, որ նորա հետ մենամարտէր։

«Յեսսէի երեք մեծ որդիքը՝ պատերազմի գնացել էին, Սաւուղի բանակին մէջ էին. Յեսսէ պատուիրեց Դաւիթին, որ երթայ բանակ, և մի համբաւ բերէ եղբայրներէն, թէ ողջ են. և լմանայ, թէ մի պէտք ունին։ Դաւիթ առաւ հաց ու վոխինդ՝ եղբայրներուն համար, և տասը գլուխ թարմ պանիր հազարապետին համար։ Առաւօտուն կանուխ ելաւ, իւր ոչխարներն յանձնեց ուրիշ արածողներու, և ինքը պնդեցաւ, հասաւ բանակը։ Դաւիթ՝ իւր բերածներն յանձնեց պահապանին, և հասաւ ճակատամարտին, ու կը հարցանէր եղբարցը մասին։

«Ահա յանկարծ դուրս ելաւ Գողիաթ, և իւր ամենօրեայ առաջարկութիւնը կրկնեց նախատանօք. և հայհոյեց իսրայէլի բանակին Աստուծուն։ Իսրայէլացիք ամենքը կը փախչէին Գողիաթէ տեսնելէն. և կասէին. «եթէ լինի մէկը, որ սպանէ այն այլ ազգին, թագաւորը՝ նորան պիտի մեծացնէ. իւր աղջիկը նորան կնութեան պիտի տայ, և իսրայէլի մէջ նորա հօր տունը՝ ազատ պիտի անէ։

«Խօսեցաւ Դաւիթ իւր չորս կողմն եղող մարդկանց հետ, ու կ'ասէր.—ինչ պիտի լինի այն անթլփատ այլազգին՝ կսպանեմ ես նորան. նա ով է, որ կենդանի

Աստուծոյ այս ձակատը հայհոյեց։—Եղնաբ՝ նորա մեծ եղբայրը՝ լսեց նորա խօսածը, բարկացաւ վերան. ասեյով.—Ինչո՞ւ եկար այս տեղ, որու ձեռքը Թոդուցիը այն մեքիչ ոչխարն՝ այն անապատումն, ես գիտեմ քո հպարտութիւնը, քո սրտի չարութիւնը, դուն այս տեղ պատերազմ տեսնելու եկար։— Եւ Դաւիթ ասաց. այժմ ինչ սրի. չէ՞ որ կը խօսինք, և դարձուց երեսը դէպ ի միւս կողմն. ու առաջին խօսքը կրկնեց։

«Դաւիթի խօսածը պատմեցին Թագաւորին առջևը, որ նախոյն հրամայեց հանել իւր առաջ։ Եւ Դաւիթ ասաց Սաուղին։—Տէրոջս սիրտը Թող չձուլնայ. քո ծառայն կերթայ կը մենամարտի այն այլազգիին հետ—։ Սաուղ պատասխանեց Դաւիթին.— Դուցէ չկարողանաս երթալ կռուել այն այլազգւոյն հետ. որովհետև դուն մանուկ ես, և նա իւր մանկութենէն ի վեր պատերազմող (հսկայ) մարդ—։ Դաւիթ պատասխանեց Սաուղին.

«Ծառայդ իւր հօր ոչխարները կարածէր, և երբ կը պատահէր, որ առիւծ կամ արջ կուգար, և ոչխար կը վերցնէր, եահէն կընկնէի, կը զարնէին, և նորա բերնէն կը խլէի. և եթէ վերաս յարձակուէր, փողերէն (պողազէն) կը բռնէի, կը զարնէի, կսպանէի։ Քո ծառայդ առիւծ ու արջ կը սատկեցնէր, նոցա մէկին պէս Թող լինի այն անթլփատ այլազգին էլ։ Այժմ կերթամ, սատկեցնեմ նորան, ու այսը վերցնեմ իսրայէլէն այս նախատինքը։

«Սաուղ ասաց.—Գնա, Աստուած քեզ հետ.—և երկաթէ զրահները հագցուց Դաւիթին։ Դաւիթ չկարողացաւ քայլել այն անսովոր զգեստներով, և խնդրեց Սաուղէն, որ հրամայեց հանել։ Առաւ իւր հովուական ցուպը, և լճաւ սարէն դէպ ի հովիտը՝ ուր որ Գողիադը կը կանգնէր. ձորէն անցած ժամանակն հինգ հատ ողորկ քար ընտրեց, դրաւ իւր մախաղին մէջ, և պարսատիկը՝ ձեռքումը, յառաջ գնաց դէպ ի Գողիադ։

«Գողիադ կերթար կուգար, ու Դաւիթին կը մօտենար, առջևէն էլ մի հատ վահանակիր. Գողիադ երբ նորան տեսաւ, բանի տեղ չդրաւ ամենևին. չի մի խարտեաշ մանուկ էր, աչքով գեղեցիկ. և ասաց.—Ես շո՞ւն եմ, ինչէ, որ փայտով ու քարով կուգաս իմ վերայ—։ Պատասխանեց Դաւիթ. Թէ շունէն էլ ցած ես։ Եւ Գողիադ իւր կուռքերովը նզովեց (քրքեց) Դաւիթին, և կասէր. մօտ եկ, որ մարմինդ երկնքի Թռչուններին, և երկրի գազաններին կերակուր ձգեմ այսօր։

«Գողիադին պատասխանեց Դաւիթ.—Դու իմ վերայ կուգաս՝ սուրով, գեղարդով, ու ասպարով, իսկ ես կուգամ Իսրայէլի այս բանակին զօրաւոր Աստուծոյն անունովն, որուն դուն նախատեցիր այս օր։ Աստուած զքեզ ձեռքերուս մէջ պիտի փակէ այսօր, և պիտի սպանեմ քեզ, ու հէնց այսօր քո էշն ու այլազգիներուդ բանակի բազմութեան լեշերը՝ երկինքի Թռչուններուն և վայրի գազաններուն կերակուր պիտի ձգեմ, և պիտի գիտնայ բոլոր աշխարհ, Թէ Իսրայէլի մէջ Աստուած կայ, և պիտի գիտնայ այս ժողովուրդն էլ՝ Թէ Աստուած սուրով ու գեղարդով չփրկեր. գի Աստուծոյ է այս պատերազմը, և այսօր մեր ձեռքը պիտի մատնէ զձեզ։

«Այս խօսքերն ասաց ու նզովեց այլազգիի կուռքերը. երբ Գողիադ մօտեցաւ, աճապարեց Դաւիթ, և մի անգամ պարսատիկը. զարկաւ Գողիադի ճակատին. և քարը՝ ծակելով Գողիադին սազաւարտը՝ մտաւ ճակատին մէջ, և ահագին Գողիադը փլաւ, երեսին վրայ գետինն իննկաւ։ Վազեց Դաւիթ, վերան եկաւ, նորա սուրը մէկէքէն հանեց (ինքը սուր չունէր), և նորա գլուխը կտրեց։ Այլազգիները երբ տեսան, Թէ իրենց զօրաւորն իննկաւ, յաղթուեցաւ, փախաւ, փախաւ. իսրայէլացիք էլ նոցա ետևէն ազաղակեցին, ու պնդեցան. մինչև Ասկաղոնի դռները հասան, զարկին, ջարդեցին։

«Սաուղայ զօրապետը՝ Սաուղին ներկայացուց

գԴաւիթ, որ Գողիադին գլուխը ձեռքին բռնել էր։ Սաուղայ Թագաժառանգ որդին այնքան սիրահարեցաւ Դաւիթին. որ իսկոյն հանեց իւր սուրը, գօտին, և աստլարները, ու հագցուց Դաւիթին։ Երբ պատերազմէն կը դառնային, իսրայէլի պարաւորները կերգէին.

«Սաուղ հազար սպաննեց.
Դաւիթ տասն հազար»։

Դաւիթ իւր այս մանկութիւնը կերգէ հետևեալ պարզութեամբ, զոր արժանէ կարդալ ամեն կատարեալ պատանիի, և բերան գիտնալ. որպէս զի գիտնան. Թէ ընտասարդը՝ որչափ էլ որ մարմնով կատարեալ լինի, և կտրիճ, դարձեալ Աստուծով զօրացած հոգին է, որ անպարտելի կարիանայ ահագին Թշնամիի դէմ. և երբէք երես չդարձնեը Թշնամիէն, Թէ և նա երևայ կարի զօրաւոր, սպառազինուած զրահներով, աստլարներով, ու ամեն տեսակ երկաթապատ հանդերձներով. բայց Աստուծոյ անուան զօրութեանը յուսացող անմեղ հովիւը՝ իւր պարզ քարով ու պարսով կը զօրանայ նորա վերայ. և կը փրկէ մի ամբողջ բանակ։

ԴԱԻԹԻ ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ԵՐԳԸ.

«Փոքր էի ես եղբարցըս մէջ,
Ամենէն փոքր հօրըս տան մէջ.
Կարածէի հօրըս խաշնեը։
Ձեռքըս շինեց սաղմոսարան,
Մատըս կազմեց ինձ չաղրը—
Ա՛յս օրհնութեանն գործիքը,
Բայց այժմ այս բանն ո՞վ Թող պատմէ,
Ո՞վ Թող պատմէ իմ Տէրոջը.
Նա՝ ինքն է տէր ամեն գոյի.
Թող ամեն բան լըսէ լինքը,
Ինք, որ լսրկեց իւր Հրեշտակը,
Զիս բարձրացուց հօրս ոչխարէն,
Եւ օծեց զիս իւր օծումով—
Իւր սուրբ լուղի օծումով։
Եղբայրներըս՝ խոշոր խոշոր,
Խոշոր խոշոր, ու գեղեցիկ.
Սակայն Աստուած չհաւնեցաւ
Նոցա տեսքին, և ոչ մէկին։
Ե՛ս համարձակ ելայ ընդդէմ
Այլազգիին—Գողիադին,
Նորա կուռքերն անիծեցի—
Անարգեցի. և յաղթեցի.
Ձենց Աստուծով իմ սոսկ քարը
Դահ Հակատին չքնշտ պարսեցի.
Գետինն լինկաւ, փուուեցաւ.
Վերայ հասայ մէջքէն իսկոյն
Սուրն հանեցի, գլխատեցի.

—Իսրայէլի որդիներէն
Նախատիճնքը վերցուցի»։

Դաւիթի ողջախոհութեան նկարագիրը զարմանալի է բոլորովին. որուն բովանդակութիւնը՝ կարելի է ըմբռնել Սուրբ Գրոց հետեւեալ հատուածներէն.

«Դաւիթ կերթար ամեն տեղ՝ ուր որ խրկեր զինքը՝ Սաւուղ. և հեռվէրեն կիմաստնանար։ Սաւուղ՝ պատերազմի մարդկանց վերայ նշանակեց զԴաւիթ, և հաճոյ եղաւ բոլոր ժողովրդեան աչքին, Սաւուղայ ծառաներուն առաջն ևս». Ա. Թագ. Ժը. 5։

«Սաւուղ տեսաւ (Դաւիթի գործը) և ձանչցաւ, թէ Աստուած նորա հետ է. և բոլոր իսրայէլ՝ նորան կը սիրէին. աւելի ևս կը վախնար Դաւիթէն»։ Ա. Թագ. Ժը. 28. 29։

Թէ Հայոց նախնիքը՝ երկաստուածպաշտական ողջախոհութեան անթերի պահպանութեան՝ մեծ բաղձանք և մեծ հետևութիւն են ունեցել. այս կերևի պատմական շատ դէպքերում. որոց հետ միասին մի ընդհանուր և տևական երևոյթ ևս կերևի, որ բացորոշ կանխ մեզ նախնեաց այս եռանդուն բաղձանքը։ Այն է.—Քրիստոնէութեան հաստատութիւննէն մինչև այսօր՝ Հայաստան ժողովրդոց մէջ կառուցուած եկեղեցիներէն շատերը նուիրուած են, Սուրբ Աստուածածնին, Սուրբ Կարապետի, Սուրբ Սահմանոսի, Սուրբ Գէորգայ, Սուրբ Մինասայ, Սուրբ Սարգսի, Սուրբ Թորոսի, և Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին՝ անուններուն։ Եւ այս՝ այն նպատակաւ միայն, որ ամեն ժողովուրդ՝ երբեմն մտքում առաջին օրինակ ունէին այն Սրբոց վարք ու ողջախոհութիւնը, որու անուան որ իրենց եկեղեցիները նուիրած էին. և եկեղեցւոյ նպատակատեաց տօներում, ամսագլուխներում, և ուրիշ հանրական ժողովներում, սովոր էին՝ նոյն Սրբոց վարքը կարդալ, խմաստասիրել, հմտանալ, և օրինակ առնուլ։ Եւ

մինչև այսօր մեր ժողովուրդը՝ մոռանալով ամենայն սրբոց վարքն ու նահատակութիւնը՝ զոր յառաջ գետէին առհասարակ՝ մոռացած չեն իւրաքանչիւրն իրենց եկեղեցոյն անունն ունեցող առաջին նահատակին վարքը, որոնք հրաշալի ողջախոհութեան և հոգեկան ճշմարիտ զօրութեան նկարագիրներ են, և դեռ կընթերցասիրուին նախնեաց սովորութեան յարգը ճանաչող ժողովուրդներու մօտ։

ԻՆ. ԱՐԻ ԵԻ ՈՂՋԱԽՈՀ ԿԻՍԱՆԱՆՑ ՊԱՏԿԵՐը.

Քրիստոնէութեան Գ. դարու սկիզբներումն՝ Հայաստանում նահատակուեցան Հռիփսիմեանք՝ որոնք կրթուած էին քրիստոնէութեան վարդապետութեան բուն իսկ աստուածային պատուիրանաց հրահանգներով. որոց պատկերը՝ կը ներկայացնէ Քրիստոնէութեան բուն ոգին կրող օրիորդ կուսանաց ողջախոհութիւնը—թէ մտաւոր և թէ մարմնաւոր գարգացումն։ Այս կուսանաց կեանքը՝ կը համառօտենք այս տեղ Ագաթանգեղոսի (ականատես վկայի) պատմագրութենէն։

Գիոկղետիանոսի կայսերութեան վերջին տարիներումն՝ մինչդեռ քրիստոնէութիւնը սաստիկ հալածման մէջ էր՝ բովանդակ Հռոմէական պետութեան սահմաններումն, Հռիփսիմեան կուսանքն՝ Հռոմում երբեմն առանձին կուսանոցում կը պարկեշտանային. և Սուրբ Գրոց մշտական ընթերցասիրութեամբն՝ այս աշխարհի հոգե-

ւոր կենաց Ճանապարհի առաքինութիւններուն կը պերճանայինն։ Սոցա կեանքն այսպէս կը նկարագրէ Ագաթանգեղոս։

«Հռովմայեցւոց քաղաքումն մի արգելականք ի կուսանաց. միանձնական (անամուսին), լեռնական, ընդակեր, զգաստացած, պարկեշտացած, սրբամատոյց կնիկներ՝ քրիստոնէական հաւատով, որ գիշեր ցերեկ և ամեն ժամանակ՝ փառք տալով և օրհնելով՝ իրենց աղօթքներն յերկինս խրկելու կարժանանային։ Որոյ գլխաւորին անունն էր Գայիանէ, և նորա սանը՝ Հռիփսիմէ անուն՝ Թագաւորական տոհմէն՝ մի աստուածապաշտ մարդու աղջկներեքն»։

Այս համմառօտ նկարագրումն յիշուած լռանալու, և ընթերցողը՝ կը ցուցնեն, թէ այս վանքի կուսանքն աշխարհի և քաղաքի կեանքէն հեռի էին, և իրենց կերակուր՝ հնտեղէններն իրենք կը մշակէին։

Դիոկղետիանոս կայսրը նկարիչներ հանած էր, որ բոլոր երկրի սահմաններում գտնուող գեղեցիկ աղջկանց նկարները կը հանէին և կը ներկայացնէին կայսեր. այս նկարիչները բռնի մտան և նոցա կուսանոցը, և Հռիփսիմէի գեղեցկութիւնը նկարեցին։ Դիոկղետիանոս խելացնոր եղաւ, երբ սորա նկարը տեսաւ, և իսկոյն հարսանեաց օր նշանակեց ու պատրաստութիւնները հրամայեց, և Հռիփսիմէին կին պիտի առնուր։

Ոչ քրիստոնեայ կայսեր տուփական կրից Թելադրած այս հրամանը՝ տագնապեցոյց բոլոր կուսանքն, որ Սուրբ աւետարանի մարգարիտը որոնող և գտնող վաճառականին նման՝ ինքզինքնին նուիրած էին միայն այն մարգարիտի պահպանութեան. և իսպառ կատէին հեթանոսական տգմաթաթաւ գիճութեան ախտաւորութիւնը։ Բոլոր կուսանքն՝ առանց բնաւ չվոհմելու առ Աստուած ամենակալ դարձուցին իրենց աղօթքը, և նորա ամենազօր Աջոյն օգնականութիւնն ու հովանին պաղատեցան։ Կուսանաց այս աղօթքն՝ ամբողջապէս՝

Աստուածայէն յայտնութեանց իմաստութիւններու չարայարութիւն մի է. կը յիշեն Աստուծոյ արարչագործ բանի զօրութիւնը, և թէ մարգուն ստեղծեց, ու իմաստնացոյց, և թէ ամեն գարերում՝ իրեն ապաւինողներուն փրկեց։ Կը յիշեն նոյնպէս նոր կտակարանի իմաստուն առակները—Աստուծոյ եկեղեցւոյն յաղթանակը, իմաստուն կուսանաց պատրաստ լապտերը, Ճշմարտութեան գուարթաբար Ճառագայթները. սերմանացանի առակին բուն իմաստը, սուրբ հօտի զգաստութիւնը խանգարող ապստամբ գազանը, գառները ցրուող ապականիչ գայլը, հաւատացելոց հալածանքը, և քաղաքէ ի քաղաք երթալն և անսպառ իմաստները, եկեղեցւոյ հաստատուն շինուածը, նորա անկեան վէմը—Քրիստոս, Քրիստոսի արիւնը, խաչը, յարութիւնը, համբարձումը, վերջին գալուստը. խաղաղութեան աւետարանի Ճշմարտութեան հաստատութիւնը, գիշերային հարսանեաց լոյսը՝ որ կը լուսաւորի Աստուծոյ երեսէն ծագած Ճառագայթներով, Աստուծոյ կամաց նաւահանգիստը, նահատակութեան բաժակը, դատաստանի աւուր փառաց յայտնութեան ժամանակի խոստացուած պսակը։

Այս իմաստալից աղօթքէն ետքն ոգևորուած, կը թողուն իրենց վանքը, իրենց երկիրը, և յոյսերնին Աստուծոյ վերայ դրած, կը փախչին, որ ազատեն իրենց կուսութիւնը՝ տգմաթաթաւ, խոզաբարոյ և անառակ ու մոլի գիճացեալներէն։

«Այն ժամանակը կուգային կը հասնէին Հայոց երկիրը, Այրարատ գաւառը, Վաղարշապատ քաղաքը, (զոր և Նոր քաղաք կը կոչեն) Թագաւորաց նստած տեղը։ Այնուհետև կուգան կը մտնեն այգեստանի հնձատեղը։ Այնուհետև կուգան կը մտնեն այգեստանի հնձանի տեղը՝ որ շինուած կը կենան Հիւսիսային արևելեան կողմէն, և կը կերակրուէին իրենց ունեցածովը՝ քաղաքի վաճառքներէն։ Եւ ոչինչ Թոշակ չունէին իրենց հետ. բայց միայն նոցա մէնը ապակեգործութեան արհեստ ունէր, ապակիէ ուլունքներ շինելու, զոր կուտային օրական կերակրոյ գին»։

Խնդրակները կը հանէ Դիոկղետիանոս պետութեան քոլոր սահմաններէն, որ գտնեն այս վախճտականներին և վերադարձնեն. առանձին հրովարտակ մի ևս կը խրկէ առ Տրդատ Հայոց, յորում կը գանգատի քրիստոնէից բազմանալէն, և նոցա ողջախոհութեան օրէնքներէն, և թէ «Բթեցան կասկ մեր սուրերը, և նոքա մեռանելէն չվախցան»։ Եւ կը յաւելու գտնել դՀռիփսիմէ, և խրկել, կամ եթէ հաճոյ թուի Տրդատին՝ իրեն մօտ պահել։

Տրդատ՝ առանձին հրովարտակով խնդրակները հանեց իւր տէրութեան ամեն կողմերէն, որ ամեն ճանապարհներու անցքերը բռնած, կը քննէին, կը խուզէին։ Ահա տեսողներէն մին կը պատմէր պալատում, թէ մի խումբ կուսանք կերևին այգեստանում։ Եկան, ստուգեցին և նոցա չորս կողմն ասպարատիակ լեգէոն կանգնեցուցին մինչև երկու օր. և տեսողները՝ բերնէ բերան կը հռչակէին Հռիփսիմէի աննման գեղեցկութիւնը. և քաղաքի բազմութիւնն իշխանները ու սոսկականները առհասարակ կշտամբէին այն չքնաղ գեղեցկութիւնը տեսնելու, և մէկ մէկէ առաջ անցնելու և տեսնելու համար մէկմէկու վերայ կելլէին կասկ Ագաթանգեղոս՝ իրենց հեթանոսաբարոյ ցոփութեանց ցոյցերով։

«Իսկ երանելի կուսանքն երբ լմացան այն անմիտ ու չղւարարոյ մարդկանց յոռութիւնը, լացով ու արտասուքով, և լի աղօթքով ձեռքերնին դէպ յերկինս վերցուցած փրկութիւն կը խնդրէին ամենազօր ամենակալ Աստուածմէն, որ առաջին անգամ ապրեցուց՝ հեթանոսաց չարութեան, ու զազրութեան անօրէն պղծութենէն, կը խնդրէին, որ տայ Աստուած միևնոյն մարտի յաղթանակը, և հաւատոյ լուսաւորութիւնը. և երեսնին ծածկած՝ գետինը կը դնէին, ամչնալով այն լիակ տեսնողներէն՝ որ ժողոված էին տեսնելու»։

Տեսնողներէն մեծամեծները՝ զարմացուցին Թագաւորին՝ պատմելով ու նկարագրելով Հռիփսիմէի գեղեցկութիւնը. և Թագաւորը խրկեց Թագաւորական ոսկի գահաւորակները, որ Հռիփսիմէին բերեն Թագաւորական պալատը, և միւս կուսանքը պահեն իրենց տեղումն։

Արհամարհեց Հռիփսիմէ, և չընդունեց Թագաւորական շքեղ ընծաներն ու հանդերձանքը, և ձեռքերը խաչաձև տարածած կը պաղատէր առ Քրիստոս՝ որ ինչպէս հին դարերումն շղւարարոյ մարդկանց մէջ պահպանեց ու ապրեցոյց ողջախոհներին, նոյնպէս և այժմ իւր խաչին նշանաւը պահէ իւր զգաստութիւնը. նոյնպէս և միւս կուսանքը կազօթէին։ Որոց խօսքերն ու պաղատանքը լսեց Աստուած, և որոտաց երկինքէն հեթանոս իշխաններուն վերայ, որոնք խելացնոր եղան, և նոցա ձիերն իրենց ոտքերուն տակ կոխոտեցին շատ մարդիկ։ Քաջալերեց Աստուած իւր ուխտաւոր կուսանքն ու զօրացոյց, երկնային արքայութեան հրաւիրելով զնոսա։

Թագաւորին լմացուցին կուսանաց միտումը, թէ չհաճիը Հռիփսիմէն՝ հարսնանալ Թագաւորին. որ իսկոյն հրամայեց, բռնութեամբ բերել։ Արքունի սպասաւորներն առին զՀռիփսիմէ, և մերթ վերցնելով, ու մերթ քաշքշելով կը տանէին, և բոլոր ամբոխն եաւէն, որոց բազմութենէն՝ երկիրը կը թնդար. և Հռիփսիմէ կաղաղակէր. «Տէր Յիսուս Քրիստոս օգնեա ինձ»։ Երբեն Թագաւորի պալատը, և արքունի սենեկում փակեցին։ Ուր սկսաւ կասկ՝ այսպէս աղօթել Հռիփսիմէ։

«Զօրութեանց Աստուած, Տէր, դուն ես Հզմարիտ Աստուած։ Դուն պատուեցիր կարմիր ծովը, և քո ժողովուրդն անցուցիր։ Դուն ամուլ վէմը՝ ջրի առուներու ծնող դարձուցիր, ու ծարաւած ժողովրդին խմցուցիր։ Դուն քո ծառային Յովնանին ծովու անդունդն իջուցիր, որ քո զօրութեան չափն ըմբռնէ, . . . ու նորէն ողջ ողջ բերիր կենդանի կանգնեցուցիր, առանց մազ մի կորսնցնելու նորածամերէն։ Դուն ես Հզմարիտ Աստուած,

որ երբ Դանիէլին ձգեցին գազանաց առջև, այն ահագին ժանիքներէն ազատեցիր, և զբպարտեալը (զԴանիէլ) իւր նեղչիներուն առաջը փառաւոր կանգնեցուցիր։ Դուն՝ երեք մանկունքն ևս՝ զորս երելու ձգել էին՝ կրակէն հանեցիր ոչ անարատ. այնպէս որ սքանչելիքդ տեսնողները քեզի փառաւորեցին։ Դուն՝ Բաբելացւոց խիստ ու անօրէն թագաւորը խոտաճարակ արիր. ըստ որում չհնացար զքեզ և չփառաւորեց քո սքանչելիքներով, փոխեցիր նորան անասուններու կերպարանքին, անասլատի գազաններուն հետ բնակեցուցիր, և անապատի վայրի էշերուն հետ արօտ տուիր։ Դուն քո աղախին Շուշանին երկու անգամ մահէ փրկեցիր, և անօրէն Թշնամին խայտառակամահ սատկեցուցիր։ Դուն՝ միևնոյնն ես, քո տարիներն անանցանելի են։ Էէր, դուն քոյ փառքն՝ ուրիշի չես տար։ Դուն ես, որ բոլոր տիեզերքի վերայ փառաւորուած ես. քո սուրբ անունը Թոզ չպղծեն հեթանոսները։ Դուն՝ կարող ես փրկել զիս այս պղծութենէն, այնպէս որ քո մեծ անուանդ համար սրբութեամբ մեռնիմ, վախճանիմ»։

Մինչդեռ այս աղօթքի մէջ էր, ահա ներս կը մըտնէ Տրդատ, և դուրսը ամբողջ քաղաքի բազմութիւնը՝ հարսանիքի փող ու թմբուկ կը զարնեն, ու հարսնիքի պար կը բռնեն։ Թագաւորը ձեռք կը զարնէր նորան, իւր կամքը կատարելու մտքով, բայց նա պատերազմեցաւ նորա հետ երրորդ ժամէն մինչև տասներորդ ժամը, և չոգնեցուց, տկարացուց Թագաւորին, որ ոչինչ չկարողանալով անել, բերել տուաւ Դանիէլին, որ դրսէն չորդորէ Հռիփսիմէին, որ կատարէ Թագաւորին կամքը։ Տրդատ նորէն ներս մտաւ, և հինգ ժամու չափ ևս անդադար կռուեցաւ մենամարտեցաւ, և խպատ դաղրած, յուսահատած դուրս ելաւ՝ ամօթահար, ու վաստակաբեկ։ Այս այն Տրդատն է, որ Յունաստանի մէջ ամուր ու զօրաւոր ոսկորներու ուժով ու զօրութեամբ մեծ հանդիսներում փառաւորուած էր, և որ Ասիայում

Պարսից զօրաւորներուն դէմ միշտ յաղթող ու անընկճելի հանդիսացած էր, որուն համար առակ եղած էր.

«Իբրև զսէգն Տրդատ, որ սիգալովն առերեաց զթուխսըս գետոց, և ցամաքեցոյց խոկ ի սիգալ իւրում զյորձանս ծովուց»։

Տրդատայ պատմութիւնն, ու Հռիփսիմէի յաղթանակն, այսպէս կը նկարագրէ Ագաթանգեղոս, որ կարժէ այստեղ կարդալ։

«Գայիանէն սենեկի դռնէն կը խօսէր իւր սանին Հռիփսիմէին. Որդեակ, այդ պղծութենէն Թող պահէ զքեզ Քրիստոս, և զօրաւիգ լինի քեզ. չլինի որ Աստուծոյ այն կենաց ժառանգութենէն ելլես, և այս անցաւորը ժառանգես, որ ոչինչ է, այսօր կայ, վաղը կը կորսուի»։ Երբ այս լսացան, քարեր բերին, նորա բերանը ծեծեցին. մինչև ատամները Թափեցին, և կստիպէին, որ յորդորէ զՀռիփսիմէ լսել Թագաւորին։ Նա աւելի ևս կը պնդէր, ու կասէր. «Քաջալերուէ, պինդ կաց, այժմ կը տեսնես զՔրիստոս, որուն որ փափաքել ես։ Միտգ բեր, որդեակ, այն հոգեխառն սնունդը, որով զքեզ սնուցի. միտգ բեր այն աստուածեղէն խրատը, որով զքեզ պարարեցի. միտգ բեր Հալածանքիս. միտգ բեր մահու բաժակը, զոր միկտեղ խմելու ենք. միտգ բեր բոլոր տիեզերքի յարութիւնը. միտգ բեր մեծատունին յանդիմանութիւնը. միտգ բեր տանջանաց գեհենին յաւիտենական այրումը. միտգ բեր արդարներուն անապական պարգևները, որ մեզի էլ պատրաստած է. միտգ բեր այն աստուածեղէն երկնաւոր բարբառը, զոր այսօր լսեցիր քո ականջով, որ քաջալերեց ու զօրացոյց զքեզ և զմեզ միասին. նոյն ինքն արժանի կանէ խոստացած պսակին ու հանգստեանը....։ Ըստ որում նա՝ անարգները մեծարող Աստուած է, նա՝ ինքը կը պահէ զմեզ իւր աղախիններս՝ ամեն մեղքերէ. ինչպէս որ այսօր լսեցինք, որ պահել էր զմեզ նորա ամենազօր աջը, և կը պահէ մինչև յաւիտեան, միայն Թէ մենք

նորա սէրէն չբաժնուինք»։ . . . . . : Իսկ նա (Հռիփսիմէ) պատերազմեցաւ Տրդատայ հետ՝ տասներորդ ժամէն մինչև գիշերուայ մի պահը (հինգ, վեց ժամ)՝ յաղթեց Թագաւորին։ Սուրբ հոգիէն կը զօրանար աղջիկը, կը զարնէր, կը քշէր, կը յաղթէր, կը յոգնեցնէր, կը Թուլացնէր Թագաւորին ու գետին կը ձգէր. հանդերձներէն մերկ, կողոպտած կը Թողուր, պատմուճանը կը պատռէր, Թագաւորական նշանը կը ցրուէր, կը կողոպտէր, ամօԹասպառ կը Թողուր։ Թէպէտ և իւր զգեստիին էլ նորամէն պատառոտած դուրս կը բերէր, իւր անձին սրբուԹեամբն յաղԹող կը պահէր։ Եւ տան դուռը բռնաբար բանալով մարդկանց բազմուԹիւնը կը ճեղքէր, և ո՛չ մէկը չէր կարողանար արգելել։ Եւ քաղաքամէջէն վազելով, արևելեան կողմէն Աբեգ դռնեն դուրս կելլէր. և կերԹար հնձաններուն մօտ ընկերներուն աւետիս կուտար։

Հաւատով արևացած, ու Աստուծով զօրացած Հռիփսիմեանց այս չքնաղ յաղԹուԹիւնը՝ այսպէս կերգէ Կոմիտաս ԿաԹուղիկոս չքնաղապէս, զոր կերգեն ամեն տեղ հայազն պարկեշտ կուսանք՝ Հռիփսիմենաց և Գայիանեանց տօներուն. և ամեն ոք իրենց ձայնն եկեղեցւոյ օրհնուԹեանց մէջ կը խառնեն կը միանան ընդհանուր եկեղեցւոյ փառաբանուԹեանը չքնահատէս.

«Է՜ զարմացումն, և ի վեր քան զհրաշս՝
Խորհրդոց և բանից հրեշտակաց և մարդկան.
Ւանզի Ինն Աստուած ամենազօր զօրուԹեամբն՝
Խոնարհեալ տեսանէր զգհանդէս կուսանացն։

«Ընկերըք միամիտք մարմնական կենցաղոյս,
Նահատակք հաւատովք, և հոգւով միացեալք,
Միաբան ընԹացեալք ի տեղի ճակատուն,
Ձինեցան հաւատով, և կացին յանդիման։

«Թուլացան կորովիք հաստատիգ աղեղանց,

Եւ տըկար կանայքըն վառեցան զինու.
Թագաւորըն պերճացեալ զօրուԹեամբ և փառօք,
Ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր։

«Ժողովեալ բազմուԹեանն ազգաց և ազանց
Ոչ զօրէին առ մի նահատակ.
Ւանզի հասեալ ի Թիկունս աներևոյԹ օգնուԹիւն,
Խորտակեաց յայտնապէս զգաղտնի պատերազմ (1)։

Հռիփսիմեանց հաւատքն, միաբան ու միախորհուրդ անբաժան ընկերուԹիւնը՝ միակերպ սիրով վառուած, Սուրբ Գրոց հմտուԹիւնը, Աստուածայնն պատուիրանաց պահպանուԹեան սէրը, բորբոքումը, իրենց աղօԹքին սրտաբուղխ ու սրտագին հոգիջահ ճառագայԹը, ի ծնողաց սովորած չափաւորը կեցուԹիւնն, ու մարդկայնին բնական ուսեալեաց ամենապարզ ընդակերուս-

---

1) Այս տեղ կը դնենք միայն երգիս ԹարգմանուԹիւնը, չհասկացողներուն առաջնորդելու։

«Թնդըմ և մաքի զարմանալի՛ է, հրաշիք վրը, Թէ հրեշտակներուն, և Թէ մարդկիներուն։ Վասն զի Ինն Աստուած իւր ամենազօր զօրուԹեամբն իջեր, ու կուսանաց հանդիսն աչքէ կանցուներ։ Այս մարմնական կենաց՝ միամիտ ընկերներ, հաւատոք քաջ, և հոգւով միացած. մէկ տեղ վազեցին պատերազմի տեղը, հաւատքով զինուեցան, և ընդդէմ կեցան։ Ամուր ձգուած աղեղներու կորովիները՝ Թուլացան, և տկար էնիկները զէնքով զինուեցան, զօրահաւորուեցան. ուժով ու վառքով պերճացած Թագաւորը՝ մանուկ կոյսէն յաղԹահարուած՝ կամչնար, ամօԹապարտ կը լինէր։ Ազգերու և ցեղերու բազմուԹիւնն հաւաքուած, ուժ չէին հասցներ մէկ կուսի դէմ. քանզի աներեւոյԹ օգնուԹիւնն հասած էր եաԹէն, և գաղտնի պատերազմն՝ աշխարհս խորտակեց»։ (Տես Շարակնոցում Հռիփսիմեանց տօնի կանոնումն ամբողջապէս ըստ այբուբենի Հայոց)։

Թեան սովորութիւնով բաւականանալը. ի բնէ արհեստասէրը եղածին, և նոյն միակ արհեստի արդիւնքովն այնչափ հեռաւոր օտարութեան մէջ գործեալ գոհ վիճակով ապրելնին. այս ամենը՝ կուսական ողջախոհութեան սկզբնական ու կատարեալ պայմաններ ու անթերի պահպանութեան արդիւնքները են, որոնք անթերի կերևին Հռիփսիմեանց կուսանաց վերայ։

Ամեն օրիորդ կուսան՝ որ այլևս չափահաս կը լինի, Հռիփսիմեանց կուսանաց շնորհքին նախանձախնդիրը, և նոցա յուսովն վառուած լինելու է, հաստատուն հաւատքով, յուսով, ու ճշմարիտ սիրով փարելու է Քրիստոսի Աստուծոյ Սուրբ Խաչին, ուսանելու է նորա պատուիրանները, որ լոյս են մարդկային ճանապարհներում. և կատարեալ ողջախոհութեան կը տանեն, կարիացնեն, կը զօրացնեն մինչև ի մահ իսկ։

Ողջախոհ կուսանաց պատմութիւնները ու կատարեալ նկարագիրները չատ ունի քրիստոնէական սուրբ եկեղեցին իւր ընդարձակ պատմութեան բազմաթիւ էջերում. որոց մեծագոյն մասադրութիւնն իսկ կատարեալ սնունդ է հոգւոյ, և մէկէն ի մէկ աստուածային խանդով կը զարթեցնեն ամեն կուսանաց հոգւոյ ջանասիրութիւնը, կաճեցնեն ու կը բազմապատկեն մարմնոյ ուժն ու առողջութիւնը, և անկշռելի գանձ կը յօրինեն։

ԻԶ. ՈՂՋԱԽՈՒ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ.

Մանկութենէն մինչև սրբունքի տարիքը՝ մղձ հոգւով, ու մղձ մարմնով սնած, զարգացած ու աճած երիտասարդն ու կոյսն որ կ'ամուսնանան, այլ և կին կը լինին՝ միայն զաւակ ծնելու, խնամելու, և կատարեալ սերունդ աճելու սուրբ նպատակաւ, այն ամուսնութիւնն է ՏԻՐՈՋ ողջախոհ։

Առաջին գլուխներումն արդէն յայտնի եղաւ՝ որ հոգւոյ ողջութիւնը կը պատրաստուի իմացականութեան զարգացմամբ, որոյ սնունդն է, կատարեալ մարդկային խորհուրդ, կատարեալ Հաւ, կատարելութեան օրինակ, և ընդարձակ պատմութեան կատարեալ հմտութիւն. որով միայն կարելի է գիտնալ, թէ ինչ է մարդը։ Նոյնպէս յայտնի եղաւ, թէ մարմնոյ ողջութիւնը կը պահպանուի ու կը պատրաստուի բնական ուտելիքի և ըմպելիքի չափաւորութեամբ, և անդադար գործունէութեամբ՝ երկնքի տակ աշխատելով։ Թէ հոգւոյ և թէ մարմնոյ ողջութեան այս պայմաններումն է մանկութենէ մինչև սրբունքն՝ անխոտոր աճեցած ու զարգացած երիտասարդին և կուսին ամուսնութիւնը՝ ողջախոհ է, եթէ նպատակ ունենայ միայն որդեծնութիւնը՝ —սերնդեան աճելութիւնը։

Երիտասարդութեան և կուսութեան անվթար սրբունքի իւրաքանչիւր գուգութիւնը՝ կատարեալ յղութիւն է։ Եւ ինչպէս ծառը կը ծաղկի, կը պտղաբերի, կը հասունացնէ, և շրջանաւոր ժամանակը լրանալէ ետքը դարձեալ կը ծաղկի, այնպէս ևս կատարեալ յղութենէ ետքը մինչև նորածինին կաթէ կտրելը, կամ ակ-

ռայ հանելը՝ չրջանաւոր ժամանակին է ծննելութեան։ Այնուհետեւ կսկսի նոր չրջան զաւակասեր զուգութեան։ Զուգութեան այս չրջանի ճիշդ պահպանութիւնը՝ կասուի ծնողական ողջախոհութիւն, որոյ սերունդը կը լինի անաբած, առոյգ, անթերի, բազմաթիւ և աննուազ աճեցական՝ որդւոց յորդի, և ազգէ յազգ։

Ծնողական ողջախոհութենէն խոտորուած զուգութիւնն՝ սկիզբն է զաւակաց արատաւորութեան, տկարութեան, թերատութեան, նուազութեան, անգաւակութեան—սերունդի բարձման և չնչուելուն։ Ծնողական ողջախոհութենէն խոտորուած զուգութեան արատը, տկարութիւնը կամ հիւանդութիւնը և թերատութիւնը՝ կաճին հետզհետէ, և գարձեալ անգաւակութեան կը յանգին մի քանի ազգէ ետքն. ինչպէս կը տեսնենք բուսական սերմանեաց վերայ, որ ընտիր սերմէն կաճի ընտիր հունտ, իսկ ցամաք սերմէն՝ նիհար ու ոսկի հունտեր միայն, հետզհետէ աւելի ևս վատթարանալով։

Կատարեալ ողջախոհութիւն ծնողական, չրջանաւոր ժամանակի մէջ միանուագ զուգութիւն բնական, որոց միմիայն հետեւանքն է կատարեալ յղութիւն և անթերի ծնունդ ըստ ժամանակի, և կատարեալ սնունդ ըստ ժամանակի։ Այս է բնական օրէնքը՝ մարդկային ծնելութեան։ Այս բնական օրինաց որևիցէ խոտորումն ծնելութեան։ Այս բնական օրինաց որևիցէ խոտորումն սկիզբն է ծննդոց հիւանդութեան. հիւանդութեան՝ որ հաւասարապէս կաճի սերնդեան շարայարութեան մէջ։

Որ և իցէ ծառ՝ իւր արմատներէն մինչև գագաթի բողբոջն՝ այնպիսի մի կազմուած ունի իւր ամբողջութեան մէջ, որ ներմութեան և խոնաւութեան հաւասար մատակարարութեամբ կը ծաղկի, կը պտղաբերի, կը հասուցանէ. և այս ամենը՝ չրջանաւոր ժամանակի չրման ընթացքումն միայն։ Ծառին թէ բնական կազմութիւնը, թէ արտաքին ներմութեան և խոնաւութեան չափաւոր մատակարարութիւնը՝ Աստուծոյ գաղտնի տնօրինութեան մի հարստարութեան արդիւնքն է. վասնորոյ և ծառը՝ կը պտղաբերէ Աստուծով։ Այսպէս և մարդկային ծննդականութեան սերմանական կատարելութիւնը, և սերմնաւորութեան պատրաստականութիւնն՝ իրենց չրջանաւոր ժամանակումն միայն կատարեալ կը լինին, և այն՝ Աստուածային գաղտնի տնօրինութեամբ. վասնորոյ և մարդ՝ կը ծնանի և կաճի Աստուծով։ Որպէս զի մարդկային ծնելութիւնը չվերնայ Աստուածային տնօրինութեան գաղտնի չափերէն, մեծ պատասխանութիւն կայ ծնողաց վերայ, որ զգուշանան ծննդականութեան բնական օրէնքին պահանջած կատարեալ ողջախոհութեան չափերուն։

Թէ ինչ է մարդը, և ինչ օրէնք ունի մարդկային ծննդականութիւնը՝ գիտցող ծնողներն՝ Աստուծոյ ամենազօր պահպանութեան կը յանձնեն իրենց անձը՝ առանց մեղսանութեան առաջին օրէն. իսկ չգիտցող ծնողք՝ առ Աստուած կը դառնան միայն երկանց սաստկութեան տագնապներուն։ Ողջախոհ ծնողաց հաւատքն է. «Աստուած է, որ ամուլին եօթն զաւակները կը պարգևէ, և բազմածինին՝ ծնունդէ կը դադրեցնէ»։

Այսպէս ուրեմն ծնողական ողջախոհութեան հաւաքական պայմանն է, որ ծնողք՝ ծնողութեան առաջին օրէն սկսելով, իրենց ծնելութեան բովանդակ ընթացքին յոյսը՝ Աստուծոյ վերայ պիտի դնեն. այս յոյսը՝ թելադիր պիտի լինի ծնողաց՝ ճանաչելու ծննդականութեան այն բնական օրէնքներն ու սահմանը՝ որ յայտնի են, և զգաստացնէ միանգամայն չխոտորել այն բնական չափերէն։ Այս զգաստութիւնն ունեցող ծնողաց կը խոստանայ Աստուած՝ իւր յայտնութեան խոստումներուն՝ բազմատեսակ աճելութիւն ծննդոց՝ որդւոց յորդի, ազգէ յազգ, առանց թուոյ։ Ծնողական ողջախոհութեան այս պայմանն է, զոր կուսէն քրիստոնէական եկեղեցին Պսակի սուրբ խորհրդումն միաբանական բարեխօսութեամբ առ Աստուած դառնալով, և այսպէս ուխտել կուտայ իւր ընծայեցուցած թագուորին ու թագուհւոյն։ Այս խորհրդը-

դոյ ոգւոյն—պատճառին ու նպատակին՝ անհմուտ ծնողները՝ դժուար է, թէ ազատ լինին երբեմն գաւակաց վերայ սգալու դժբաղդութենէն։

Դարբինը՝ փուքսէն լինկած կրակը ձեռքով կառնու, տեղը կը ձգէ, և ձեռքը չերեը. մի գրագիը կը տեսնէ, լինքն ևս լինկած կրակը՝ ձեռքով կը վերցնէ, և ձեռքը կերկի. կիմանայ, թէ դարբնի ձեռքին և իւր ձեռքին մէջ մի տարբերութիւն կայ. թէև երկուքն էլ մարդու ձեռք են։ Եթէ գրագրին ձեռքը մէկէն ի մէկ չերէը, և մի օր եաքն երէը, նա պիտի չիմանար՝ թէ կրակ բռնելուն հետևանքն էր. ինչպէս որ մի շաբաթ եաքը՝ երբ կը տեսնէ, թէ այն երած տեղին կաշին կը փշտի, և կընկնի, և չիմանար, թէ այն երածին հետևանքն է. իսկ եթէ երածը սաստիկ լինէը, և վէրքին ցաւն երկարէը, այն ժամանակ կը գիտնար, թէ այն կաշինն լինկածը՝ երածին հետևանքն էր։ Այսպէս՝ խիստ շատ մարդիկ, որոնք որ արթուն հոգի չունին՝ հետևւոր հետևանքին կանխագոյն պատճառը չեն հասկանար։ Շատ երկրագործներ կը տրտընջեն, թէ երենց ցորենը՝ ոսին հասկերը բերած է. չեն գիտեր, թէ ոսին սերմը, ոսին հասկ կը պտղաբերէ. ամէն սերմը՝ պարարտ երկրի մէջ ամէն հասկ կը հասունցնէ։ Երկիրը՝ պարարտ է, սերմը ոսին, հասունցած հասկը գոհ չաներ երկրագործին։ Սերմն՝ ամէն է, և երկիրն անպատրաստ, հասունցած հասկը դարձեալ գոհ չաներ երկրագործին։ Սերմն ամէն է, երկիրը՝ պարարտ ու պատրաստ, հասունցած հասկը՝ գոհ կանէ երկրագործին՝ Աստուծով։

Ձիշդ այսպէս է մարդկային ծննդականութեան սերմնատուութիւնն ու սերմնառութիւնը. ողջախոհ փեսայ, հասուն արբունք, ողջախոհ հարսն ու հասուն արգանդ, ծնունդը՝ կատարեալ է Աստուծով։ Հարբած գլուխ, հասուն արբունք, հասուն արգանդ՝—բնաւ մի ծնունդ, գատարկուղեղ զաւակ, աստուածային օրէնքներէ հեռի՝ ծնողական ողջա-

խոհութեան խոտորմունքի հետևանք. որն է այն ծնողքը, որ մինք բերէ իւր յանցանքը՝ զոր գործել է իւր զաւակի մարմնաւորութեան սկզբումն՝ յղութեան զուգութեան վայրկենուն։ Խակ արբունք, անպատրաստ արգանդ՝ ծննդականութեան ներքին զօրութիւններն սպառող վնասակար հոսումներ, յաճախութիւն անպտուղ զուգութեան, բորբոքումն կրծից, հիւանդութիւն ներքին գործարանաց. ամենատեսակ թշուառութիւն, և անօգուտ տրտունջ կամ հառաչանք։

Մանկութեան տարիքում՝ պատանեկութեան հասակում՝ երիտասարդական նախանձայոյզ եռումներում՝ ծննդականութեան մասին չար խորհուրդները, չար խօսակցութիւնները և խակութեան գործեր՝ որ տեղի կունենան ընդդէմ ողջախոհութեան պայմաններուն, այն ամեն խոտորումներն են, որ կը պատճառեն անպտուղ ներքինները, անծին ամուլները, ապաժաման վիժումնքները, չարչարատանջ երկունքները, կիսակենդան ծնունդները, սակաւակեաց զաւակները, տարաժամ մահերը, տրամութիւն ընտանեաց, սուգ ազգի, նուազութիւն ազգատոհմի։ Այս ամեն չարիքներն՝ ողջախոհութեան խոտորմունքներէն ծագումն կառնուն։

Ողջախոհութիւնն՝ աչերութեան ուղիղ Ճանապարհն է. որոյ կատարեալ զգուշութիւնը՝ մարդկային բանականութեան կատարելութեան յատուկ է։ Ողջախոհութեան չափղներէն դուրս ամենափոքր խոտորումն՝ բանականութեան նուազութեան յանցանքն է, մարդուն վերայ ապաժաման մահերը կը հրաւիրէ։ Պատմութիւնները առհասարակ կը հաստատեն, թէ մարդիկ երկայնակեաց էին հին դարերումն, և հետզհետէ սակաւակեաց եղան, նուազեցան։ Աստուածային յայտնութիւնները կը հաստատեն, թէ Աստուած մահ չդրաւ, մարդիկ երենց ձեռքով հրաւիրեցին մահն երենց վերայ։ Ողջախոհութեան բնական չափղներու ամենափոքր խոտորումն էլ մահարեր է։

Աստուծոյ սահմանն է մարդկային ա՛հեղուԹեան համար՝ որ այր և կին երբե՛ւ մի մարմին ալիտե ընկերանան, և ցմահ անբաժան պիտի մնանան։ Այս օրէնքն ընդունուած է ու պահպանուած է ընդհանուր քրիստոնեայ ազգաց մէջ. որ իսկապէս բարոյականն է աՀեղուԹեան։ Այս օրէնքն՝ խոպա՛ռ կը մերժէ լուռնակեցուԹիւնը, որ ամենամեծ վտանգն է ծննդոց։ Աստուածաչեն օրէնքները՝ մարդուն կատարելուԹեան և աննուազ աՀեղուԹեանը մեայն կուզեն մարդուս կեանքը, և ամեն կենսական չարժմունքը։

ՄահմէտականուԹիւնը՝ բազմակնուԹիւն կը Թոյլատրէ իւր հաւատացեալներուն։ Եթէ աչքէ անցունենք մի անգամ մահմէտական մի ժողովրդի աՀեղուԹիւնը՝ համեմատելով մի քրիստոնեայ ժողովրդի աՀեղուԹեան հետ, ակներև կը տեսնենք բազմակնուԹեան գործած մահերը, և աւելի պայծառ տեսլուԹեամբ խելամուտ կը լինինք Թէ քանի կենարար է մեակնուԹեան աստուածադիր օրէնքը։

Մեևնոյն գիւղի մէջ տեսել եմ մի հայ տանուտէր լիսուն տարեկան հասակում, և մի Թիւրք տանուտէր՝ դարձեալ նոյն տարիքում։ Հայն ունի ուԹ հատ արու զաւակ, վեց հատ աղջիկ զաւակ. որոց երկու արուն և երեք աղջիկներն ամուսնացուցած է արդէն և Թուռները ոսք ելած կը քալեն, կը խաղան, կը վազվզեն։ Իսկ Թիւրքն ունի մեայն մի հատիկ արու զաւակ, այն էլ անդրանիկը։ Թիւրքը՝ չորս կին ունի և չորս կնիկներէն զաւակներ ունեցեր է երեսունէն աւելի։ Այս Թիւրքն այսպէս կը չիշատակէր իւր սերունդը.

—Երեսուն երկու անգամ այքալոյս տուի, տասն ուԹ անգամ անուն դրի, տասն անգամ ԹլփատուԹիւն տուեցի, մի անգամ մեայն զաւակ կարգեցի, հարսանիք արի։

—Ասել է, Թէ երեսուներկու զաւակ ունեցել է, որոցմէ տասնեւուԹ հատը մեայն ապրել են մինչև անուն դնելու օրը, և որոց տասն հատը մեայն հասել են ԹլփատուԹեան

(եօԹը տարեկան հասակի). և այս տասնէն մի հատը մեայն ապրեր է մինչև տասնեւեօԹը տարեկան հասակը, զոր ամուսնացուցեր է, զաւկի հարստանիք տեսած լինելու ցանկուԹեամբ։ Այսպիսի օրինակները՝ խիստ շատ են Թիւրք բնակիչներու մէջ։ Մեևնոյն ժամանակ աղքատ վիճակի Թիւրքերն, որ մեակին կապրին՝ իրենց որդիքը կարգաւ կը տեսնեն իրենց կենդանուԹեանը, և նոցա հարսանիքի ուրախուԹեանը կը հասնին։

Կանցնիս Թիւրք ժողովրդի գերեզմանէն, և կը համարես որ մանուկներու և երեխաներու գերեզմաննեըը՝ տասնապատիկ անգամ աւելի են քան չափահասներու գերեզմաններըը. մինչդեռ քիչ մը անդին հայու գերեզմանատունը կը դիտես, և խիստ քիչ կը գտնես մանուկներու գերեզման։ Մահմէտական Թիւրքի գերեզմանատան վիճակած այս ճակատագրը՝ բազմակնուԹեան հետևանքն է մեայն։ Պատճառ լինել մահու՝ և այն՝ ինչևիցէ չարժուածքով, կամ անգիտուԹեան օրինադրած վարմունքով, կամ խոտորնակ բարքով՝ դարձեալ մարդասպանուԹիւն է, և վնաս է մարդկային աՀեղուԹեան։

Որչափ որ կը մեզանէ բազմակնուԹիւնը՝ անյայտ մահեր պատճառելով, նոյնչափ ևս կը կը մեզանէ խառնակեցուԹիւնը՝ մեևնոյն ձանապարհով մահեր գործելով։ Աստուածային պատուիրանները մեապէս կարգելուն բազմակնուԹիւնը, խառնակեցուԹիւնը, կին արձակելը (առանց բանական յայտնի պատճառի), արձակելը վերայ կին առնելը, այս ամենն էլ չնուԹիւն կը ծին վերայ կին առնելը, այս ամենն էլ չնուԹիւն կը համարուին. Աստուած կօրհնէ մեայն ողջախոհ ամուսինները, և կաՀեն, ու կը բազմանան Աստուծով, և երկիրը կը լեցնեն։

Ողջախոհ ամուսիններու սիրը և սիրոյ կեանքը՝ ամեն կարգի ընկերուԹեան կեանքէն գերագոյն է. նոքա կապրին ինչպէս երկու հոգի՝ մի մարմնում, կամ ինչպէս մի հոգի՝ երկու մարմնում։ Նոքա՝ սերմանահատի

անբաժան երկուորեակներն են այնուհետև. հոգեկան սիրով բազմաբեղուն, աճեցուն, սքանչելի ինչպես այգի Աստուծոյ. ցօղն անալական ամպերէն, արև, անձրև երկինքէն, յորդ աղբիւրները լեռներէն, կենդանութեան վճիտ վտակ երկրի ծոցէն: Ամենաքոյր ծաղիկները, ամենազան պտուղները, ամենահամ հաստունութիւն. քմաց պարարում, կենաց քաղցրութիւն, առողջ հոգի, առողջ մխաք, Ճշմարտութեան սէր, բանական հոգւոյ՝ կատարելութիւն. զգաստ զուգութիւն, անվրէպ ծնունդ, շարշաւը որդիք, բազմաթիւ թոռունք, կայտառ թոռնորդիք, չղթայաշարք սերնդոց, անմահութեան օրինակ, Աստուծոյ պարգև. Ճշմարիտ հաւատք, յարութեան յոյս, յաւիտենական կենաց՝ և անմահ կենաց՝ բուռն բաղձանք. խաղաղ մահաքուն՝ և այն՝ հազարաւոր լուր սերունդէն պարփակուած:

«Կինդ՝ երբև վայելուչ այգի՝ տանդ այս անկիւնում. զաւակներդ՝ ինչպէս նոր տնկած ձիթենի՝ սեղանիդ չորս կողմումն»: Սաղմոս:

ԻԲ. ՈՂՋԱԽՕՀ ՏԱՆ ՓԱՌՔԸ.

Ողջախոհ ծնողաց, ողջախոհ եղբարց և ողջախոհ զաւակաց երանց տան մէջ վայելելիք փառքը, կամ փառաց նկարագիրը կը դնենք այս տեղ Դաւթի այն սաղմոսներէն—երգերէն, զոր կերգէին սովորաբար Աստուծոյ տաճարի ուխտաւորները՝ երբ որ տաճարի—Աստուծոյ նուիրուած տան՝ սանդուղքներէն վեր կելլէին դէպ ի տաճարը, որ ըստ հաւատոց՝ միաբանութեամբ երկրպագեն երանց Տէր Աստուծոյն: Ողջախոհ տան բազմութիւնն արդէն իսկ կը նմանի՝ Աստուծոյ տունը ժողովուած հաւատացելոց բազմութեան: Դաւթի այս երգէն ետքը կը յաւելումք նաև Եսայի մարգարէի գուշակութիւններէն մի կտոր, յորում՝ Քրիստոնէութեան

վարդապետութեան սահմանները Ճշմարտութեամբ պահպանող, Ճշմարիտ աստուածապաշտ—Ճշմարիտ ողջախոհ ժողովրդեան կեանքը կը նկարագրէ: Այս երկու գլուխ մարգարէականներով, կը յուսամ, թէ մի կատարեալ հոգեկան կերակուր ջամբած կը լինիմք Հայ-քրիստոնեայ ժողովրդոց, որ Ճշմարիտ կարօտ ենք արդէն՝ հոգեկան կերակուրի, հոգեկան տեսութեան, հոգեկան զգացմանց, և Ճշմարիտ աստուածպաշտութեան կատարեալ լմացման, զգաստութեան, Ճշմարիտ հաւատոց, և զաւակաց ու սերնդեան կատարեալ սիրոյ:

Նբ՞ «ՈՂՋԱԽՕՀԵՐԷՆ ԵԼԼԷԼ».

«Եթէ Աստուած չլինէ տունը, ի զուր կաշխատին նորա շինողքը: Ցաւոց հայ ուսողներ, ի զուր է ձեզ կանուխ ելլելը. ելէք, քանի որ դեռ քուն եղած չէք: Ժամանակին կը տրուի քուն Աստուծմէ՝ իրեն սիրողներուն. որդիքն են մարդուն ժառանգութիւնը, նորա վարձքը. այսինքն իւր որովայնին պտուղը: Ինչպէս նետերը՝ կարկէհ ձեռքումն, այնպէս են զգաստ մարդուն, սթափեալին որդիքը: Երանի այն մարդուն՝ որ հասաւ իւր բաղձանքին՝ իւր զաւակներով: Եւ ամչնալու տեղիք պիտի չունենան երբ թշնամիները խօսին նոցա հետ հրապարակումն: (Սաղմոս. ՃԻԷ.):

«Երանի՛ այն ամենուն, որ կը վախնան Աստուծմէ, և նորա ճանապարհը կը գնան: Քո ձեռքի վաստակը պիտի ուտես· երանի՛ է քեզ, և բարի պիտի լինի: Կինդ՝ իբրև մի վայելուչ այգի (խաղողի ծառ) տանդ անկիւնումն. զաւակներդ ինչպէս նոր տնկած ձիթենիները քո սեղանի չորս կողմումն: Այսպէս կ՛օրհնուի այն ամեն մարդ (այր, կանամբի), որ կը վախնայ Աստուծմէ: (Սաղմոս. ՃԻԷ.):

«Ի՞նչպէս բարի, ինչ վայելուչ է, որ եղբայրները և միասին կը բնակին: Ինչպէս այն իւղը, որ կը թափի Ահարոնի գլխին ու մուրուքին, և մօրուքէն կը վազէ

Նորա զգեստն գրասանակին։ Նման այն ցօղին, որ կը ցօղի Հերմոնէն՝ Սիոնի լեռան վերայ։ Անդ տա-
րաստեց տէր Աստուած՝ օրհնութիւնն ու անվերջ կեանքը։ (Սաղմոս. ՃԼԳ.)։

Ճշմարիտ Քրիստոնէութեան նշանաւոր նկարագիրը.

«Իմ ծառաներուս պիտի դնեմ նոր անուն, և այն անունը երկրի վերայ պիտի օրհնուի. վասն զի Ճշմարիտ Աստուծոն պիտի օրհնեն, և երդուողները՝ Ճշմարիտ Աստուծոյ վերայ պիտի երդուին. պիտի մոռնան առաջին նեղութիւնները, և այլ ևս մտքերնին պիտի չբնկնի։ Վասն զի նոր երկինք պիտի լինի, ու նոր երկիր. և առաջիններն (նեղութիւնները) պիտի չյիշեն այլ ևս, և մտքերնին պիտի չբնկնի. այլ ուրախութիւն ու ցնծութիւն պիտի գտնեն այն երկրում։ Ահաւասիկ ես երուսաղէմն՝ ուրախութիւն կը դարձնեմ, և իմ ժողովուրդս՝ ցնծութիւն. և ժողովրդիս վերայ պիտի ուրախանամ. և երուսաղէմի վերայ պիտի ցնծամ. նորա մէջ այլ ևս չպիտի լսուի լալու ձայն, և ոչ գուժի (մահու համբաւ) ձայն։ Այնտեղ չպիտի լինի տարաժամ (կանուխ մեռնող) կեանք, չափն չլեցի ծեր, որ տարիքն առած չլինի. այնպէս, որ ամենափոքրը որդին՝ հարիւր տարեկան պիտի լինի. և հարիւր տարեկան հասակում մեռնող եթէ լինի, անիծեալ պիտի կոչուի, և մեզաւոր։ Տներ պիտի շինեն, և բնակ պիտի բնակին. այգիներ պիտի տնկեն, և նորա պտուղն՝ բնակ պիտի ուտեն։ Այլ ևս պիտի չշինեն, որ նորա շինեն՝ և ուրիշները բնակին, նորա տնկեն՝ և ուրիշներն ուտեն։ Կենաց վայրին (կենաց ծառին) օրերուն համեմատ (1) պիտի լինին ժողո-

1 «Ըստ աւուրց փայտին կենաց՝ եղեկին աւուրք ժողովրդեան իմոյ»։ Ա.բարչագործութեան մէջ յիշուած կենաց ծառը կ'ակնարկէ, որոյ պտուղին ուտելով պիտի ապրէին Ադամ և Եւայ. և եթէ բարոյ և չարի գիտութեան ծառէն ուտէին, պիտի

վրդիս օրերը. նորա ձեռքի գործերը պիտի հինանան (երկար տարիներ դիմանան, գործածուին)։ Ի զուր պիտի չվատտակին իմ ընտրածներս, և այլ ևս անիծուելու զաւակներ չպիտի ծնին. այնպէս որ Աստուծմէ օրհնուած զաւակներ են, և իրենց սերունդն էլ իրենց հետ օրհնուած։ Անդնպէս պիտի լինի, որ նորա դեռ չկանչած, պիտի լսեմ նորա. և խօսելնին չվերջացուցած, պիտի հարցնեմ, թէ ինչ կուզէք։ Այն ժամանակը՝ գայլերն ու գառները միասին պիտի արածեն. առիւծն էլ եզի պէս յարդ պիտի ուտէ, օձն էլ հողը պիտի ուտէ ինչպէս հաց. պիտի չմեղանչեն, կասէ Աստուած, և չպիտի վնասեն իմ սուրբ լեռանս վերայ։ (Եսայի կե. 15—25)։

«Տէր, դուն՝ որ լեռան մէջ քարէն ջուր վազցուցիր,
«Տէր, ապաշխարելու արտասուք հանիր ինձ իմ սրտէն,
«Որ ապրիմ, և ապաշխարեմ, ազատիմ քո հանդերձեալ դատաստանէն»։

(Մեծն Մեսրովպ, ի Շարականս)։

Ճշմարիտ ծնողները՝ Թող միշտ ամուսնութիւնը մեծին Մեսրովպայ այս սրտագին ապաշխարութիւնը, որով մինչև Աստուծոյ կենաց չաւիղներուն կը դառնան ծնողք՝ իրենց անգիտութեան խոտորմունքներէն։ Թող դարձուն Աստուած Ճշմարիտ աստուածապաշտ ծնողաց սրտերն՝ իրենց զաւակաց վերայ, և կատարեալ զգաստութեամբ զգուշանան իրենց որդւոց և սերնդեան անմեղ կենացը, և արժանի լինին ողջախոհ սերունդ թողելու իրենց հետևէն։

մեռնէին, ինչպէս որ փորձեցին, ու մեռան. որուն վրկութիւնը Քրիստոսի Աստուծոյ խաչելը կատարելէ ետքը՝ Ճշմարիտ քրիստոնեայ կը խոստանայ այն կենաքը, զոր ունէին մինչու ծառին պտուղը ճաշակելէ յառաջ։

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ.

Վերջացնելով ողջախոհութեան ճառը, երկու խօսք ևս կուզեմք բարեպաշտ ծնողաց ականջին, կատարեալ բանականութեամբ զարգացած երիտասարդաց հասուն դատողութեանը, գօտեպնդ պատանեաց եռանդուն սրտին, և ողջախոհ կուսանաց ու օրիորդաց ջանասէր հոգւոյն և լմաստուն տնարարութեանը:

Անհաւասիկ կարելի եղածին չափով յանդիմանեցի այն ամեն խոտորմունքներն, զորս յանգէաս կը խոտորին մարդիկ՝ կատարեալ բանականութեան պահանջած ճշմարիտ ողջախոհութեան ուղիղ ճանապարհէն, և նոյն խոտորմունքներուն հետևանքն եղող հիւանդութիւնները, ախտերն, աղքատութիւնները ու տեսակ տեսակ հոգեկան և մարմնական տագնապները կարգաւ յանդիմանի ու աշկերտայ զուրցեցի. նոյնպէս և ողջախոհութեան ուղիղ չափղներուն անխոտոր ընթացող մարդկան և ընտանեաց բովանդակ կենաց աստուածապարգև աջողութիւնն ու հոգեպարար զուարճութիւնը մի առ մի պատկերացուցի. նկարագրեցի ողջախոհ մանկութեան անմեղութեան կայտիռը, պատանեաց եռանդը, երիտասարդաց արիութիւնը, կանամբեաց այրութիւնը, հայրերու ժառանգութիւնը, ծերոց՝ անկապուտ վարձքն, ու համայն ընտանեաց փառքը. նկարագրեցի մի առ մի աղջկանց պարկեշտութիւնը, օրիորդաց Հարտարարուեստ հանճարը, կուսանաց տնարարութիւնը, մայրերու լմաստուն տնտեսավարութիւնը, ողջախոհ կանանց բազմաթիւ սերունդը, պառաւներու մխիթարութիւնը:

Ամենայն ոք չափահաս մարդ՝ բանական հոգւոյ լրջմտութեամբ աչքէ անցունելով Աստուծոյ սահմանած աճելութիւնն ու կեանքը, առհասարակ բոյսերու, տունկերու և կենդանիներու բազմաթիւ ու անթուելի աճելութիւնն ու զարաւոր կեանքը, պայծառապէս կը

տեսնէ իսկոյն մարդկային աճելութեան համեմատական նուազութիւնն, ու կենաց կարճութիւնը:

Կատարեալ բանականի լրջմտութիւնը՝ կը հետազոտէ գտնել կատարեալ մարդու սահմանն ու ուղիղ չափը. կսկսի անձին ծանօթութենէն, կանցնի իւր նախնեաց, և կը նշմարէ անհուն անցեալի անյատակ խորութիւնը. կը գառնայ իւր հետևանքին, կանցնի իւր որդւոց, ու թոռներուն, և կը նշմարէ անծայր ապագան, կը դիմէ իւր ծնողաց խելամտութեանը, լմաստուն ծերոց փորձառութեանը, վիպասփաներու լմաստասիրութեանը, ձեռք կերկնցունէ ամենածեր և ամենափորձառու պատմութեանը: Կսկսի արարչագործութենէն, և խելամտութեամբ կընթերցասիրէ կատարեալ մարդու, նախկին մարդու կեանքը՝ կենաց ծառի պատուիրանի օրերէն:

Կը շարունակէ ընթերցասիրել մարդուն պատուիրանազանցութիւնը, մաշկեղէն հանդերձը. գրաստաքսումը, կենաց ծառի պահպանութիւնը, երկիրը գործելու պատուիրանը. առաջին մահը, մահագործնի պատիժը. մարդկան երկայնակեցութիւնը, Սեթի սերընդեան խառնակեցութիւնը, ընդհանուր ջհնեղեղը, ողջախոհ Նոյին վիպութիւնը: Աստուծոյ պատուիրանն ու օրհնութիւնը. Նոյի որդւոց աճելութիւնը, աշխարհի բաժանումը, Բաբելոնի աշտարակին խորհուրդը, գիտպաշտութեան մոլորութիւնը: Աստուածավախ Աբրահամին կոչումը, խոստումը, փրկութիւնը, որդւոց աճելութիւնը. Նգիպտոսի գերութեան փրկութիւնը: Սինայի պատգամը, Աստուածատես մարգարէութիւնը—Թէ հանդերձելոց իշխանը պիտի գայ: Քրիստոսի գալստեան ուխտն ու նշանները, Նորա ծնունդը, վարդապետութիւնը, մարդուն կատարածը, Ճշմարիտ քրիստոնէի աստուածանօթութեան կատարեալ հաւատքը, նեղ գրան մուտքը և անձուկ Ճանապարհն վերջին կեանքը, արձակ գրան և համարձակ Ճանապարհն կատարածին կորուստը

տը, երկրի գանձերուն ապականութիւնը, երկինքում գանձուած Հոխութեան անապականութիւնն ու ապահովութիւնը, ընկերսիրութեան երջանկութիւնը, խոնարհութեան բարձրութիւնը, հպարտութեան անկումը, հեզութեան խաղաղութիւնը, նախանձու կրակը, եղբայրսիրութեան կեանքն ու երկայնմտութիւնը, բարկութեան ոչխրը. արիութեան լուութիւնը, ծուլութեան նուազումը. առատասրտութեան աննուազութիւնը, ագահութեան կարօտութիւնը, չափաւորութեան առողջութիւնը, որկրամոլութեան անասնաբարոյութիւնը, պարկեշտութեան սէրն ու աննեղծութիւնը, բղջախոհութեան կոտորածները. ողջախոհութեան երջանիկ կեանքը, մանկանց խնամքը, պատանեաց եռանդը, երկրագործութեան սիրտը, երիտասարդին արիութիւնը, անկորուստ ժամանակը, ուսումնական զբօսանքը, մտաւոր զարգացումը, հագուստի և զարդարանքի նշանակութիւնը, նախնեաց աւանդութիւնը, Պսակին նշանակութիւնը, երիտասարդութեան գերագոյն վաճառքը, նորա ձեռքին անսպառ արդիւնքը, խելացի տնտեսավարութիւնը, իմաստուն կուսանի բազմագիմի գործերն ու զբաղմունքը, մանկատածութիւնն ու կրթութիւնը, իմաստուն և արագաւարտ տնարարութիւնը, կատարեալ երիտասարդի և կատարեալ կուսանի վաճառց հանդէսը, ողջախոհ ամուսնութիւնը, սերունդի աճելութիւնը, այլեւ նման պատարեր կինը, չքենիի նման պարարտութեան որդիքը, անարատ ընտանեաց Հոգևոր կեանքը, մեծին ու փոքրին Հոգեկան ջանասիրութիւնը. տարաժամ մահու բարձումը, հասկերամեայ կրտսեր որդին, և բազմամեայ ծերունին. կատարեալ և Հիմարիա քրիստոնէութեան՝ այս աշխարհում կատարեալ վարձը, յաւիտենականին կարօտութիւնը, կարողաձեռն ընկերսիրութիւնը, Աստուծոյ երկիւղը, յաջութեան յոյսը, և առ Աստուած հասնելու յուսալիր Հանապարհորդութիւնը:

Այս ամենուն խելամտութիւնը՝ կը լրջացնեն բա-

նականին տեսութիւնը, և կիմանան աշխարհիս ունայնութիւնը, Հանդերձեալին յաւիտենականութիւնը: Լուրջ Հոգին կիմանայ Աստուծոյ կարողութիւնը և ամենազօր տէրութիւնը: Թէ նա կը պահանջէ մարդկէն կատարեալ ողջախոհութիւն, ողջութիւն, յորում միայն կը բնակի աստուածասէր Հոգի:

Հոգեկան բանականութիւն, մարմնոյ ամբիծ ու անարատ ողջութիւն՝ կը յորինեն Տրբէյո Լոպոբեալ ողջախոհութիւն. որ է ուղիղ կեանքը մարդուն՝ այս աշխարհում. և որ առհասատչեայ է Հանդերձեալ աշխարհի և Աստուծոյ արքայութեանը ժառանգ գրուելու: Որուն կը Հասնի միայն Հիմարիա Աստուածասէր Հոգին, եթէ Հիմարութեամբ ուխտէ գործել Հիմարիա ընկերսիրութեան գործերը՝ քանի որ կարող է: «Հոգին՝ մարմինէն աւելի է, մարմինը՝ Հանդերձէն»: Այս Հիմարութեամբ՝ տկար են այն Հոգիները՝ որ միայն մարմնոյ յօժարութիւնները կը խորհին, և կը տեսնեն. նոյնպէս տկար են այն մարմինները՝ որ միայն Հանդերձէն վաճառք ու պատիւ ստանալ կը Համարեն: Կատարեալ Հոգին՝ նախ կը տեսնէ Հոգւոյ պիտոյքը, ապա մարմնոյ պիտոյքը. և բանականութեան ուղիղ դատողութեամբ կը Հասկանայ, թէ Հանդերձը կամ զգեստը՝ միայն մի ծածկոյթ է. և ոչ երբէք վաճառք կամ պատիւ. և թէ Հոգւով կուրացած մարդիկն են միայն՝ որ Հանդերձով վաճառոր կամ պատուաւոր լինել կերազեն:

«Աստուծոյ խօսքերն են մարդուն Հրագը, և յոյս կուտան նորա Հանապարհին—կեանքին»:

Ա. ՅՈՒՅԱԿ ԱՃԵԼՈՒԹԵԱՆ ՍՏՈՐԻՆ ԿԱՐԳԻ ԲԱԶՄԱՏԻՆ ԾՆՈՂԱՅ.

Յուցակիս մէջ ա. բ. գ... գրերով նշանակուած Թուերը՝ Ստորին կարգի ծնողաց հասակի տարիքը կը ցուցնեն. որոց իւրաքանչիւրին դիմաց կը գրուին որդւոց և Թոռանց ծնունդը. Թէ նոցա քանիերորդ տարիսն ծնած են: [1])

Ծնողաց տարիք.	Որդւոց ծն.		Որդւոց տարիք.	Թոռանց ծնունդ. կամ Դուստր.	Ծնողաց տարիք.	Թոռն. Թոռնից ծն.		Ծնողաց տարիք.	Թոռն. Թոռնից ծն.
ի.	1		ի.	1	ԿԳ.	1		ՃԳ.	1
ԻԳ.	1		ԻԲ.	2	ԿԴ.	3		Ճ.	4
ԻԴ.	1		ԻԳ.	3	ԿԶ.	6		Ճ.	10
ԻԶ.	1		Ծ.	4	ԿԹ.	10		Ղ.	20
ԻԷ.	1		Ծ.	5	Հ.	15		ՂԲ.	35
ԻԹ.	1		Ծ.	6	ՀԳ.	21		ՂԳ.	56
Լ.	1		Ծ.	7	ՀԴ.	28		ՂԴ.	84
ԼԳ.	1		Ծ.	8	ՀԵ.	36		ՂԵ.	120
ԼԴ.	1		Ծ.	9	ՀԹ.	45		Ռ.	165
ԼԵ.	1		Կ.	10	Ճ	55			
ԼԷ.	1		ԿԲ.	11	ՃԳ	66			495
ԼԹ.	1		ԿԳ.	12	ՃԴ	78			
ԽԱ.	1		ԿԴ.	13	ՃԵ	91			
ԽԳ.	1		ԿԵ.	14	ՃԹ	105			
ԽԴ.	1		ԿԶ.	15	ՂԱ	120			
ԽԵ.	1		Ն.	14	ՂԳ	133			
ԽԹ.	1		ՀԲ.	13	ՂԴ	144			
	15		ՀԳ.	12	ՂԵ	153			
			ՀԴ.	11	ՂԹ	160			
			ՀԵ.	10					
			ՀԶ.	9		1270			
			ՀԷ.	8					
			ՀԹ.	7					
			ՃԲ.	6					
			Ղ.	5					
			ՂԲ.	4					
			ՂԳ.	3					
			ՂԴ.	2					
			ՂԵ.	1					
			Ռ.	0					
				225					

Բ. ՅՈՒՅԱԿ ԱՃԵԼՈՒԹԵԱՆ ՄԻՋԻՆ ԿԱՐԳԻ ԲԱԶՄԱՏԻՆ ԾՆՈՂԱՅ. [2])

Ծնողաց տարիք.	Որդւոց ծն.		Որդւոց տարիք.	Թոռանց ծնունդ. կամ Դուստր.	Ծնողաց տարիք.	Թոռն. Թոռնից ծն.		Ծնողաց տարիք.	Թոռն. Թոռնից ծն.
ի.	1		ԼԲ.	1	ԿԳ	1		ՃԳ.	1
ԼԱ.	1		ԼԳ.	2	ԿԵ	3		Ճ.	4
ԼԳ.	1		ԼԴ.	3	ԿԶ	6		ՃԲ.	10
ԼԵ.	1		ԽԲ.	4	ԿԹ	10		Ղ.	20
ԼԶ.	1		Ծ.	5	Հ	15		ՂԲ.	35
ԼԹ.	1		Ծ.	6	ՀԳ	21		ՂԳ.	56
ԽԱ.	1		Ծ.	7	ՀԵ	28		ՂԴ.	84
ԽԳ.	1		Ծ.	8	ՀԶ	36		ՂԲ.	120
ԽԵ.	1		Ծ.	9	ՀԹ.	45		Ռ.	165
ԽԶ.	1		Կ.	10	Ճ	55			
ԽԹ.	1		ԿԲ.	11	ՃԳ	66			495
ԾԱ.	1		ԿԳ.	12	ՃԵ	78			
ԾԳ.	1		ԿԴ.	13	ՃԶ	91			
ԾԵ.	1		ԿԵ.	14	ՃԹ	105			
ԾԶ.	1		Ն.	15	ՂԱ	120			
ԾԹ.	1		ՀԲ.	14	ՂԳ	133			
	15		ՀԳ.	13	ՂԵ	144			
			ՀԴ.	12	ՂԶ	153			
			ՀԵ.	11	ՂԹ	160			
			Ն.	10					
			ՃԲ.	9		1270			
			ՃԳ.	8					
			ՃԴ.	7					
			ՃԵ.	6					
			Ղ.	5					
			ՂԲ.	4					
			ՂԳ.	3					
			ՂԴ.	2					
			ՂԵ.	1					
			Ռ.	0					
				225					

ՍԻՆ ՏՆՈՂԱՑ. [3])

Տնտեսաց տարիքը.	Որդւոց Տնուհիք.	Տղաքաց քանակը.	Թոռանց Տնտեսութ.	Տղաքաց քանակը.	Թոռանց տարիքը.	Տնտեսաց տարիքը.	Թոռանց Տնտեսութ.		Տնտեսաց տարիքը.	Թոռանց Տնտեսութ.	Ընդհանուր քանակը.	Տարի.
ի.	1	ի.	1	ա	1	ա	1		ի	29	ղդ	493
ի.	1	ի.	2	ա	3	ա	4		ի	28	ղդ	518
ի.	1	ի.	3	ա	6	ա	10		ի	27	ղ	539
ի.	1	ի.	4	ա	10	ա	20		ի	26	ղդ	555
ի.	1	ի.	5	ա	15	ա	35		ի	25	ղ	565
ի.	1	ի.	6	ա	21	ա	56		ի	24	ղ	568
ի.	1	ի.	7	ա	28	ղ.	84		ի	23	ղ	563
ի.	1	ի.	8	ի	36	ղ	120		ի	22	ա.	549
ի.	1	ի	9	ի	45	ղ	186		ա,	21		4350
ի.	1	ա.	10	ի	55	ղդ	220		ա	20		4960
ի.	1	ա.	11	ի	66	ղդ	286		ա	19		9310
ի.	1	ա.	12	ի	78	ղ	364		ա	18		
ի.	1	ա.	13	ի	91	ղդ	455		ա	17		
ի.	1	ա.	14	ի	105	ղ	560		ա	16		
ի.	1	ա.	15	ի	120	ղ	680		ա	15		
ի.	1	ա.	16	ի	136	ղ	816		ա	14		
ի.	1	ա.	17	ի	153	ա.	969		ա	13		
ի.	1	ա	18	ա	171		4845		ա	12		
ի.	1	ի.	19	ա	190				ղ.	11		
ի.	1	ի.	20	ա	210				ղ	10		
ի.	1	ի.	21	ա	231				ղ	9		
ի.	1	ի.	22	ա	253				ղ	8		
ի.	1	ի.	23	ա	276				ղ	7		
ի.	1	ի.	24	ա	300				ղ	6		
ի.	1	ի.	25	ա	325				ղ	5		
ի.	1	ի.	26	ա	351				ղ	4		
ի.	1	ի.	27	ա	378				ղ	3		
ի.	1	ի.	28	ղ	406				ղ	2		
ի.	1	ի.	29	ղ	435				ա.	1		
ա.	1	ի.	30	ղ	465					435		
	30		465		4960					465		
										900		

[1]) Որդւոց Տնուհիք՝ մին մին յառաջ կերթայ. Թոռներու Տնուհիք՝ 1-էն կսկսի, և ամեն մի շրջանումն մին մին կաւելնայ. մինչև որ անդրանիկ որդին Տնուհիէ կը դադարի 10-րդ շրջանումն՝ իւր Տնողաց կթ. տարեկան հասակում. մինչդեռ տարին՝ վերջին որդին ևս Տնած է իւր անդրանիկը. և հետզհետէ ամեն շրջանում մին մին կը պակասի Թոռանց Տնուհիք. մինչև որ Տնողաց ղդ (96) տարեկան հասակում՝ վերջին որդին ևս կը Տնանի իւր տասներորդ զաւակը և Տնուհիէ կը դադարի։

Այս Թոռներէն առաջին մի հատը՝ որ Տնողաց խբ. (42) տարեկան հասակում Տնած է, կսկսի զաւակ ունենալ՝ նոցա կգ (63) տարեկան հասակումն, և մինչև Տնողաց (ղ.) 90-րդ տարիքումն ամեն մի շրջանին կունենայ մի մի զաւակ, և կը դադարի. սորա յաջորդ 2 Թոռները կգ.-ին կսկսին Տնանիլ, կը դադարին ղբ-րդ տարիքումն։

Այս Թոռնորդիներէն մինչև 6 շրջան զաւակները կը Տնանին՝ մինչև Տնողաց ղթ. տարեկան հասակը. հետևաբար Սորին կարգի բազմածին Տնողք՝ իրենց 100 տարեկան հասակումն տեսած կը լինին. 10 որդի, 100 Թոռներ, 425 Թոռնորդիներ, և 126 Թոռանց Թոռներ. ընդամենը=661 Հետ սերնդոց։

[2]) Մինչև կարգի բազմածին Տնողք՝ իրենց 100 տարեկան հասակում տեսած կը լինին՝ 15 որդիք, 225 Թոռներ, 1270 Թոռնորդիք, 495 Թոռանց Թոռներ ընդամենը= 2005 Հետ սերնդոց։

[3]) Հետևորդ ցուցակները՝ ևս մինչև առաջինն ոՀովը գրուած են. որոց վերայ ուշադրութեամբ նայող հետաքրքիրները արդէն կը տեղեկանան լիովին՝ բազմածին Տնողաց սերունդի յառաջադիմութեան յառաջատութեանը։ Վերին կարգի բազմածին Տնողքն՝ եթէ ապրին 100 տարի, տեսած պիտի լինին իրենց սերունդը. 30 որդիք, 900 Թոռներ, 9310 Թոռնորդիներ, և 4845 Թոռանց Թոռներ. ընդամենը=15085 Հետ։

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Է.	ՏՈՂ.		ՎՐԻՊԱԿ	ՈՒՂԻՂ
3	11	Ներքևից	բազմասիւն	բազմասեռն
35	4	վերևից	չէը կարողանայ	չէը կարողանաը
67	10-11	»	տեսիլքէն	տեսիլքէն
»	19	»	գօրութիւն	գօրութեան
72	11	»	և շատ	և պիտի
73	9-10	»	ուննենանք ու	ուննենալով
74	5	Ներ.	խաղաղարներուն	խաղաղարարներուն,
77	14	»	Թէ երկրորդ էլ	Թէ երկրորդն էլ
79	9	»	օրինակը՝	օրինականը՝
85	13-14	»	ԵՐՋԱՆԹԻՒՆ	ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ
86	10	վեր.	է)։	են)։
»	13	»	չինելու	լինելու
92	9-01	»	Թէ լինչով կապահովի մահերը	Թէ լինչով կապահովի մարդու կեանքը, կամ Թէ ինչ ձանապարհով կը վերնան տարաժամ մահերը։
95	15	»	չդառնանք,	չդառնայք,
97	13-14	»	հաւասար չեն նախանձեր ընկերին,	հաւասար ընկերին չեն նախանձեր
99	13	»	պարքդ	պարտքդ
101	13	վեր.	լինելու	լինելով
102	7	Ներ.	արդիւնք	արդիւնքս
106	9	վեր.	նեղութիւնին	նեղութիւններին
»	11	Ներ.	կը հոգուէը.	կը հագուէը.

ՀՀ Ազգային գրադարան
NL0341277